

ISSN 0135-0536

ՊԱՏՄԱԲՆՆԱՄԻՐԱԿԱՆ  
ՆԱԿԴԵՍ  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

1  
2019

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РА

Պ Ա Տ Մ Ա Բ Մ Ն Ա Ս Ի Ր Ա Կ Մ Ն  
Տ Ա Ն Դ Ե Ս  
ИСТОРИКО-ФИЛОЛОГИЧЕСКИЙ ЖУРНАЛ

2019, 1 (210)

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА

ԵՐԵՎԱՆ

2019

ЕРЕВАН

Հանդեսը լույս է տեսնում 1958 թվականից  
Հիմնադիր խմբագիր՝ Մ. Գ. Ներսիսյան

Журнал выходит с 1958 года  
Редактор-основоположник М. Г. Нерсисян

Գ Լ Խ Վ Ն Ր Խ Մ Բ Պ Ի Ր ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ

Խ Մ Բ Պ Պ Ի Վ Ն Խ Ն Ր Ի Ն Ի Ր Պ

ՄԵԼԹՈՆՅԱՆ ԱՇՈՏ (նախագահ), ԱԲՐԱՆՆԱՅԱՆ ԼԵՎՈՆ, ԱՎԵՏԻՍՅԱՆ ՊԱՎԵԼ,  
ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ ԱԵԼԻՏԱ, ՀԱՍՏԱԹՅԱՆ ՄՈՒՐԱԴ, ՀՈՎԱԿԻՄՅԱՆ ՎԱՉԵ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ  
ԼԱՎՐԵՆՏԻ, ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԵՆՐԻԿ, ՄՈՒՐԱԴՅԱՆ ՍԱՄՎԵԼ, ՍԱՖՐԱՍՏՅԱՆ ՌՈՒԲԵՆ

Г л а в н ы й р е д а к т о р АНУШАВАН ЗАКАРЯН

Р е д а к ц и о н н а я к о л л е г и я

МЕЛКОНЯН АШОТ (председатель), АБРАМЯН ЛЕВОН, АВETИСЯН ПАВЕЛ, АСРАТЯН  
МУРАД, ДОЛУХАНЫ АЭЛИТА, ИОАННИСЯН ГЕНРИК, МУРАДЯН САМВЕЛ, ОВАКИМЯН  
ВАЧЕ, ОВАНЕСЯН ЛАВРЕНТИЙ, САФРАСТЯН РУБЕН

---

---

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

I

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆՆՐՅԱՆ  
150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

<b>Աելիտա Դոլուխանյան</b> – Հովհաննես Թումանյանը հայ ժողովրդի ազգային ոգին է ....3	
<b>Եվա Մնացականյան</b> – XX դարասկզբի գրական քննադատության մեթոդաբանական տարբերությունները և Հովհաննես Թումանյանը .....30	
<b>Աննա Ասատրյան</b> – Էջեր երաժշտական թումանյանապատումից .....51	

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԾՆՆՐՅԱՆ  
140-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

<b>Արմեն Ասրյան</b> – Արամ Մանուկյան. ազգային-պետական գործիչը.....76	
--	--

ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆՐՅԱՆ  
150-ԱՄՅԱԿԻՆ ԸՆԴԱՌԱՋ

<b>Աշոտ Մանուկյան</b> – Էթնոմանկավարժական գաղափարների արտացոլումը Կոմիտաս վարդապետի մշակութային ժառանգության մեջ .....92	
--	--

II

<b>Արև Սամուելյան</b> – Հայաստանի պատմական բնակավայրերի պահպանության և թանգարանացման խնդիրները ժամանակակից թանգարանագիտության համատեքստում .....99	
<b>Լիլիթ Հովհաննիսյան</b> – Հայկական հարցի պատմության 1917–1918 թթ. հիմնախնդիրների լուսաբանումը Հայաստանի պատմագրության մեջ (1991–2018 թթ.) .....107	
<b>Լիլիթ Սաֆրաստյան</b> – Լեոնարդո Ալիշանի արձակը .....126	
<b>Մերգել Մանվելյան</b> – Օսմանյան խորհրդարանի 1914 թ. ընտրությունները և Կ. Պոլսի հայոց պատրիարքարանը .....135	
<b>Սիրանուշ Տահրադյան</b> – Կաթողիկոսական կնիքներն արխիվային վավերագրերում .....144	
<b>Գուրգեն Խաչատրյան, Տաթևիկ Ազիզբեկյան</b> – Վերածման բայերը միջին գրական հայերենում .....163	

**Ռուսան Հովսեփյան, Իրենա Քալանթարյան** – Խաղողի գտածոներ Գետահովիտ - 2 քարայրի (Իջևան) պղնձիքարիդարյան շերտերից (մ. թ. ա. V հազարամյակի կես) .....171

**ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

**Լավրենտի Հովհաննիսյան** – Ղարաբաղի (Արցախի) բարբառի մի քանի բառերի ստուգաբանություն .....177

**Ռոբերտ Ղազարյան** – Խեթական միջին թագավորության պատմության որոշ հարցերի շուրջ .....184

**ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ**

**Անուշավան Զաքարյան** – Թիֆլիսում կայացած Հովհաննես Թումանյանի 50-ամյակի տոնակատարությունների մասին (ռուս.) .....205

**Համո Սուքիասյան** – Հայ հայրենակցական միությունների միության հորեյանական միջոցառումները՝ նվիրված Հովհաննես Թումանյանի 50-ամյակին ...227

**ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**Ավագ Հարությունյան** – Լիլիթ Մակարյան. Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը (1921–1937 թթ.) .....236

**Ռուբեն Մահակյան** – Վանիկ Վիրաբյան. Տիգրան Դեղյանցի հետախուզական գործունեությունը .....245

**Արմեն Մարության** – Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու), հատոր առաջին .....249

**Հովհաննես Խորիկյան** – Ռուսլան Ցականյան. Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VII–VI դդ. ....255

**ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ**

**Վանո Եղիազարյան** – Պողոս Մկրտչի Խաչատրյան – 90 .....260

**ՄԵՐ ՀՈՒՅՆՆԵՐԸ**

**Աշոտ Մելքոնյան, Համո Սուքիասյան** – Կարեն Համլետի Խաչատրյան (ծննդյան 50-ամյակի առթիվ) .....265

**ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ**

**Քնարիկ Ավագյան, Համո Սուքիասյան** – Հորեյանական միջոցառումներ՝ նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հիմնադրման 75-ամյակին.....269

Համաժողով՝ նվիրված Հովհաննես Թումանյանի 150-ամյա հորեյանին .....274

## ՀԼՄՏՈՒ

ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը .....	275
Մարզիս Հարությունյան .....	290

## СОДЕРЖАНИЕ

## СТАТЬИ, СООБЩЕНИЯ

## I

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ  
РОЖДЕНИЯ ОВ. ТУМАНЯНА

<b>Աննա Դոլուխանյան</b> – Ованес Туманян – национальный дух армянского народа.....	3
<b>Եվա Մնացականյան</b> – Методологические различия литературной критики начала XX века и Ов. Туманян.....	30
<b>Աննա Ասատրյան</b> – Страницы музыкальной туманянианы.....	51

К 140-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ  
АРАМА МАНУКЯНА

<b>Արմեն Ասրյան</b> – Арам Манукян: национально-государственный деятель.....	76
--	----

К 150-ЛЕТИЮ СО ДНЯ  
РОЖДЕНИЯ КОМИТАСА

<b>Ափոտ Մանուկյան</b> – Отражение этнопедагогических идей в культурном наследии Комитаса Вардапетя.....	92
--	----

## II

<b>Արև Տամուզյան</b> – Вопросы охраны и музеефикации исторических поселений Армении в контексте современного музееведения.....	99
<b>Լիլիտ Օգանեսյան</b> – Освещение проблем 1917–1918 гг. истории Армянского вопроса в историографии Армении (1991–2018 гг.).....	107
<b>Լիլիտ Տաֆրասթյան</b> – Проза Леонардо Алишана .....	126
<b>Տերգյուր Մանվելյան</b> – Выборы в османский парламент 1914 г. и Армянский патриархат Константинополя.....	135
<b>Տիրանուշ Փառազյան</b> – Печати католиков в архивных документах .....	144
<b>Գրիգոր Խաչատրյան, Կարեն Կապույան</b> – Конверсионные глаголы в среднеармянском литературном языке.....	163
<b>Ռոման Օվսեպյան, Իրենա Կալանտարյան</b> – Находки винограда из энеолитических слоев пещеры Гетаовит - 2 (Иджеван) (середина V тысячелетия до н. э.).....	171

## ОБСУЖДЕНИЯ

- Лаврентий Оганесян** – Этимология некоторых слов карабахского (арцахского) диалекта.....177
- Роберт Казарян** – О некоторых вопросах истории Хеттского Среднего царства.....184

## ПУБЛИКАЦИИ

- Анушаван Закарян** – О праздновании 50-летия Ованеса Туманяна в Тифлисе (на русск. яз.) .....205
- Амо Сукиасян** – Юбилейные мероприятия Союза армянских земляческих союзов, посвященные 50-летию Ованеса Туманяна.....227

## РЕЦЕНЗИИ

- Аваг Арутюнян** – Лилит Макарян. Деятельность Комитета помощи Армении (1921–1937 гг.) .....236
- Рубен Саакян** – Ваник Вирабян. Разведывательная деятельность Тиграна Девоянца ..245
- Армен Марукян** – Отражение Геноцида армян на страницах прессы 1915 года (сборник материалов армяноязычных и зарубежных газет), том первый.....249
- Ованес Хорикян** – Руслан Цаканян. Этнополитические сдвиги на Ближнем Востоке и Армянском нагорье VII–VI вв. до. н. э.....255

## НАШИ ЗАСЛУЖЕННЫЕ ДЕЯТЕЛИ

- Вано Егизарян** – Погос Мкртычевич Хачатрян – 90 .....260

## НАШИ ЮБИЛЯРЫ

- Ашот Мелконян, Амо Сукиасян** – Карен Гамлетович Хачатрян (к 50-летию со дня рождения).....265

## НАУЧНАЯ ЖИЗНЬ

- Кнрик Авагян, Амо Сукиасян** – Юбилейные мероприятия, посвященные 75-летию основания Института истории НАН РА.....269
- Конференция, посвященная 150-летию Ованеса Туманяна.....274

## ХРОНИКА

- Общее годовое собрание НАН РА.....275
- Саргис Арутюнян** .....290

## CONTENTS

## ARTICLES, REPORTS

## I

TO THE 150TH BIRTH ANNIVERSARY  
OF HOVH. TUMANYAN

- Aelita Dolukhanyan** – Hovhannes Tumanyan – the national spirit of the Armenian People.....3  
**Eva Mnatsakanyan** – The methodological differences of literary criticism of the early 20th century and Hovh. Tumanyan.....30  
**Anna Asatryan** – From the pages of musical Tumanyaniana.....51

TO THE 140TH BIRTH ANNIVERSARY  
OF ARAM MANUKYAN

- Armen Asryan** – Aram Manukyan: a national-state figure.....76

TO THE 150TH BIRTH ANNIVERSARY  
OF KOMITAS

- Ashot Manukyan** – Reflection of ethnopedagogical ideas in the cultural heritage of Komitas Vardapet .....92

## II

- Arev Samuelyan** – Issues of protection and museification of historical settlements in Armenia in the context of modern museology.....99  
**Lilit Hovhannisyan** – The elucidation of the 1917-1918 main issues of the history of the Armenian Question in historiography of Armenia (1991-2018).....107  
**Lilit Safrastyan** – The prose of Leonardo Alishan .....126  
**Sergey Manvelyan** – The 1914 Ottoman parliament elections and the Armenian Patriarchate of Constantinople.....135  
**Siranush Fahradyan** – Catholicos seals in the archival documents.....144  
**Gurgen Khachatryan, Tatevik Azizbekyan** – Inchoative verbs in Middle Literary Armenian.....163  
**Roman Hovsepyan, Irena Kalantaryan** – Findings of grape from the eneolithic layers of the Getahovit-2 cave (Ijevan) (mid 5th millennium BC).....171



DISCUSSIONS

- Lavrenti Hovhannisyan** – The etymology of some words of Karabakh (Artsakh) dialect.....177  
**Robert Ghazaryan** – On some issues of the history of the Hittite Middle Kingdom.....184

PUBLICATIONS

- Anushavan Zakaryan** – On the celebrations of the 50th anniversary of Hovhannes Tumanyan in Tiflis (Russ.).....205  
**Hamo Sukiasyan** – The jubilee events of the Armenian compatriotic unions dedicated to the 50th anniversary of Hovhannes Tumanyan.....227

BOOK REVIEWS

- Avag Harutyunyan** – Lilit Makaryan; Activities of Committee to Aid Armenia (1921–1937) .....236  
**Ruben Sahakyan** – Vanik Virabyan; the intelligence activity of Tigran Devoyants.....245  
**Armen Marukyan** – Reflection of the Armenian Genocide on the pages of the 1915 press (Collection of materials of Armenian and foreign newspapers), Volume 1.....249  
**Hovhannes Khorikyan** – Ruslan Tsakanyan; “Ethnopolitical shifts in the Near East and the Armenian Highland in the VII-VI centuries BC” .....255

OUR HONOURED SCHOLARS

- Vano Yeghiazaryan** – Poghos Mkrtych Khachatryan – 90.....260

OUR JUBILEES

- Ashot Melkonyan, Hamo Sukiasyan** – Karen Hamlet Khachatryan (to the 50th birth anniversary) .....265

SCIENTIFIC LIFE

- Knarik Avagyan, Hamo Sukiasyan** – Jubilee events dedicated to the 75th anniversary of the foundation of NAS RA Institute of History.....269  
 A conference dedicated to the 150th jubilee of Hovhannes Tumanyan.....274

NEWS

- NAS RA annual general meeting.....275  
**Sargis Harutyunyan** .....290

## I

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԾՆԴՅԱՆ  
150-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ՈԳԻՆ Է\*

... Բայց – Թումանյանն է անհաս Արարատը  
մեր նոր քերթության:  
Եղիշե Չարենց

## ԱԵԼԻՏԱ ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհաննես Թումանյան, բազմաժանր, բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, գրականագետ, թարգմանիչ, հասարակական գործիչ, բանահյուսություն, բալլադ, քառյակ, պոեմ:

*Հովհաննես Թումանյանն այն գրողն է, որն ուղեկցում է հային մանկությունից մինչև խոր ծերություն: Նա ծնվել է հայի ազգային ոգին ամրացնելու և նրա էության մեջ քրիստոնեական մարդասիրությունը սերմանելու, ազգի նկարագիրը հետագա դարերում պայծառ պահելու համար: Նա իմաստուն ու մարգարե է, որից սովորելու անհրաժեշտություն ունեն ոչ միայն հայերը, այլև աշխարհի քաղաքակիրթ բոլոր ազգերը:*

*Հովհ. Թումանյանի ոչ երկարատև կյանքի պատմությունը լի է լուսավոր էջերով: Նա ծնվել է 1869-ին գեղատեսիլ Լոռու Դսեղ գյուղում՝ քահանայի ընտանիքում: Գրողի «Ինքնակենսագրությունը», որը սեղմ է, սակայն փաստահարուստ, գրվել է 1905-ին: Դրանում են կյանքի ու ստեղծագործության հիմնական բանալիները: Իր հոր մասին խոսում է խորին սիրով. «Իմ հայրը՝ Տեր-Թադևոսը, նույն գյուղի քահանան էր: Ամենալավ և ամենամեծ բանը, որ ես ունեցել եմ կյանքում, այդ եղել է իմ հայրը: Նա ազնիվ մարդ էր և ազնվական՝ բառի բովանդակ մտքով: Չափազանց մարդասեր ու առատաձեռն, առակախոս ու զվարճաբան, սակայն ուներ մի խոր լրջություն: Թեև քահանա, բայց նշանավոր հրացանաձիգ էր և ձի նստող<sup>1</sup>: Թումանյանագետ Արամ Ինճիկյանը վկայում է, թե ուշ միջնադարյան որոշ վավերագրերում Թումանյան և Մամիկոնյան ազգանունները հիշատակվում են որպես միևնույն տոհմանուններ<sup>2</sup>:*

<sup>1</sup> Հո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տ ի թ եր կ եր, հ. II, Երևան, 1985, էջ 243:

<sup>2</sup> Ա. Ի ն ճ ի կ յ ա ն. Հովհաննես Թումանյան, Կյանքի և ստեղծագործության պատմությունը, 1869–1899, Երևան, 1969, էջ 15:

Ապագա Ամենայն հայոց բանաստեղծը սկզբնական կրթությունը ստացել է Դսեղում՝ Մահակ վարժապետի մոտ, որը երեխաներին սովորեցնում էր ծեծով՝ «գաւազանաւ երկաթեաւ»: Տասը տարեկանում Թումանյանը մեկնել է Ջալալօղլի (այժմ՝ Ստեփանավան) և սովորել Տիգրան վարժապետի դպրոցում: Հետո մեկնել է Թիֆլիս ու կրթությունը շարունակել Ներսիսյան դպրոցում, որը չի ավարտել նյութական պայմաններ չունենալու պատճառով: Ոտանավորներ է սկսել գրել 10–11 տարեկանից: Դրանք երգիծական էին, հայրենասիրական ու սիրային: 1881 կամ 1882 թ. է գրել մի սիրային ոտանավոր, որը միշտ հիշատակվում է բանաստեղծի կենսագրության մեջ.

Հոգո՛ւս հատոր,  
 Սըրտի՛ս կըտոր,  
 Դասիս համար  
 Դու մի՛ հոգար.  
 Թե կա՛ն դասեր,  
 Կա՛նան սեր,  
 Եվ ի՛նչ զարմանք,  
 Ի՛մ աղավնյակ,  
 Որ կենդանի  
 Մի պատանի  
 Սերը սըրտում՝  
 Դաս է սերտում<sup>3</sup>:

Թումանյանը խոստովանում է, թե իր տպած ոտանավորներից ամենավաղ գրածը «Շունն ու կատուն» է: Սկզբնական շրջանում սիրել է ռուս բանաստեղծ Յու. Լերմոնտովին, սակայն, երբ ծանոթացել է եվրոպական բանաստեղծներին ու համաշխարհային գրականությանը, «... այն օրվանից ինձ համար ամենասիրելին մնում է Շեքսպիրը»<sup>4</sup>:

Բանաստեղծը վաղ է ամուսնացել՝ 1888 թ., Օլգա Մաճկալյանի (Թումանյան) հետ: Նրանք ունեցել են 10 զավակ՝ 4 տղաներ (Մուշեղ, Համիկ, Արտավազդ, Արեգ), 6 աղ-

<sup>3</sup> Հո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տ ի Ր եր կ եր, հ. II, էջ 245: Հո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն ը ծ ա ն թ ա գր ու մ է, թե առաջին և երկրորդ տողերը ընդունված տողեր էին սիրահարական բոլոր նամակների սկզբում, այսինքն՝ ինչպես միջնադարյան յուրօրինակ գրառաջքները XIX դ. վերջում:

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 246:

ջիկ (Աշխեն, Արփիկ, Նվարդ, Թամար, Սեդա, Անուշ)<sup>5</sup>: Օլգա Թումանյանը երկար է ապրել (1871–1971):

Ի դեպ, 1963-ին պրոֆեսոր Արշալույս Բաբայանը տողերիս հեղինակին և 3 այլ ուսանողների տարավ Երևանի Թումանյանի թանգարանը՝ Օլգա Թումանյանի հետ հանդիպելու: Բանաստեղծի կնոջն ուղեկցում էր դուստրը՝ Աշխեն Թումանյանը: Հանդիպումը կարճատև էր. Օլգա Թումանյանն ասաց, որ Թումանյանը միշտ իր հետ կապոցի մեջ տանում էր 2 գիրք՝ Շեքսպիր ու Աստվածաշունչ, նաև ավելացրեց. “Եթե Հովհաննեսը կենդանի լիներ, Սևանա լիճը չէր չորանա, նա այդ հարցը կլուծեր”:

Թումանյանի բոլոր զավակները եղել են մտավորականներ: Արտավազը որպես կամավոր մասնակցել է Արևմտահայաստանի ազատագրմանը և զոհվել է 1918 թ. Վանի վերջին նահանջի ժամանակ: Մյուս երեք որդիները՝ Մուշեղը, Հակոբը, Արեգը, 1937–1938 թթ. դարձել են ստալինյան բռնությունների զոհեր:

Աղջիկներից ամենից շատ Թումանյանի ստեղծագործությամբ զբաղվել է Նվարդը: Նա կարևոր դեր է կատարել գրողի երկերի գիտական հրատարակության գործում: Գործուն մասնակցություն է ունեցել նրա՝ Դսեղի տուն-թանգարանի և Երևանի թանգարանի ստեղծման հարցում: Բազմաթիվ գրքեր է գրել իր սիրելի հոր մասին<sup>6</sup>:

Թումանյանի կյանքի և ստեղծագործության վերաբերյալ բազում գրականագետներ գրել են ծավալուն հետազոտություններ: Հատկապես ակնառու է ակադեմիկոս Էդվարդ Ջրբաշյանի մեծ ավանդը Թումանյանի կյանքն ու ստեղծագործությունը բազմակողմանի, մանրակրկիտ, համաշխարհային ու հայ գրականության տեսադաշտում հետազոտելու և գնահատելու խնդրում: Նրա շնորհիվ է ՀՀ ԳԱԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը իրականացրել Թումանյանի երկերի լիակատար ժողովածուի տասը հատորների հրատարակումը, որոնց մի մասի ներածական հոդվածները և ծանոթագրությունները պատկանում են նրան: Էդ. Ջրբաշյանն իր ստեղծագործական կյանքի ողջ ընթացքում ուշադրության կենտրոնում է պահել Թումանյանի կյանքի և թողած գրական ժառանգության ուսումնասիրման բնագավառը, որի արդյունքում ստեղծվել են մեծարժեք գրքեր<sup>7</sup> ու հոդվածներ:

<sup>5</sup> Հովհ. Թումանյանի զավակների համառոտ կենսագրությունը տե՛ս Թումանյանի ընտանիքի նամականին, Կազմեց և ծանոթագրեց Իրմա Սաֆրազբեկյան, Խմբագիրներ՝ Լուսիկ Կարապետյան, Ազատ Եղիազարյան, Երևան, 2002, էջ 184–188:

<sup>6</sup> Տե՛ս “Թումանյանի մանկությունն ու պատանեկությունը”, Երևան, 1938, “Հովհաննես Թումանյան (ծննդյան 70-ամյակի առթիվ)”, Երևան, 1939, “Թումանյանը քննադատ”, Երևան, 1939, “Հովհ. Թումանյան. Մանկություն և պատանեկություն”, Երևան, 1955, “Հովհաննես Թումանյանը և ռուս գրականությունը”, Երևան, 1956, “Հուշեր և գրույցներ”, Երևան, 1969, “Թումանյանի մանկությունը”, Երևան, 1983:

<sup>7</sup> “Թումանյանի պոեմները”, Երևան, 1964, 1986, “Թումանյանի բալլադները”, Երևան, 1969, 2004, “Թումանյան: Ստեղծագործության պրոբլեմներ”, Երևան, 1988, “Թումանյանը և հայ

Թումանյանի ստեղծագործությանն առանձին գրքերով անդրադարձել են նշանավոր գրականագետներ Ա. Տերտերյանը<sup>8</sup>, Ա. Ինճիկյանը<sup>9</sup>, Լ. Հախվերդյանը<sup>10</sup>, Մ. Մկրյանը<sup>11</sup>, Հ. Թամրազյանը<sup>12</sup>: Գրականագետ Լ. Կարապետյանը<sup>13</sup> գրել է Թումանյանի հասարակական գործունեության մասին, Թումանյանի անձին բազմաթիվ գրքեր է նվիրել ճարտարապետ Գառնիկ Շախկյանը<sup>14</sup>: Թումանյանի և ռուս գրողների սերտ կապերին է անդրադարձել գրականագետ Անուշավան Չաքարյանը<sup>15</sup>, իսկ թումանյանագետ Սուսաննա Հովհաննիսյանը<sup>16</sup> մեծ գրողի 100-ամյա հոբելյանին ընդառաջ հրատարակել է 3 ծավալուն մենագրություն: Այս ցանկը կարելի է լրացնել բազում նոր անուններով. Հովհ. Թումանյանի թանգարանի տնօրեն Նարինե Թուխիկյան-Խաչատուրյանը<sup>17</sup> կազմել է Թումանյանի “Մտքեր” ժողովածուն:

Հովհ. Թումանյանի կյանքի ընթացքը լայնորեն լուսաբանված է Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի հրատարակած “Հայ նոր գրականության պատմության” հինգերորդ հատորում: Հողվածի հեղինակն է Էդ. Ջրբաշյանը<sup>18</sup>: Նա և Ա. Ինճիկյանն են խմբագրել 1964-ից լույս տեսնող “Թումանյան” Ուսումնասիրություններ և հրապարակումներ ժողովածուի հատորները:

Ներսիսյան դպրոցից հեռանալուց հետո Թումանյանը կեցության կարիքները հոգալու համար կատարել է զանազան աշխատանքներ. դարձել է տնային ուսուցիչ, մի կարճ ժամանակ՝ գործակատար, որպես գրագիր աշխատել է Թիֆլիսի հայոց հոգևոր կոնսիստորիայում: Հինգ տարի այդ ձանձրալի պաշտոնում տառապելուց հետո ըմբոստ ձևով հեռացել է: Աստված Թումանյանի ճակատին դրել էր մեծ բանաստեղծ ու մտածող դառնալու նշանը, և նա սկսում է գրական կյանքի իր որոնումները:

---

գրականության ավանդույթները”, Երևան, 1994, “Թումանյանի գրական ժառանգությունը”, Երևան, 2000:

<sup>8</sup> “Յովհաննէս Թումանեան, Հայրենի եզերքի քնարերգուն”, Վաղարշապատ, 1911:

<sup>9</sup> “Հովհաննէս Թումանյան: Կյանքի և ստեղծագործության պատմությունը”, Երևան, 1969:

<sup>10</sup> “Թումանյանի աշխարհը”, Երևան, 1966, “Թումանյանը և հայոց պատմական ճակատագիրը”, Երևան, 2000:

<sup>11</sup> “Հովհաննէս Թումանյանի ստեղծագործությունը”, Երևան, 1981:

<sup>12</sup> “Հովհաննէս Թումանյան, Բանաստեղծը և մտածողը”, Երևան, 1995:

<sup>13</sup> “Հովհաննէս Թումանյանի հասարակական գործունեությունը”, Երևան, 1992:

<sup>14</sup> “Թումանյանի ընտանեկան աշխարհը”, Երևան, 2010, “Ժպտադեմ, զվարճախոս ու զարմանահրաշ մեր Թումանյանը”, Երևան, 2015:

<sup>15</sup> “Ռուս գրողները Անդրկովկասում և հայ գրական կյանքը (1914–1920)”, Երևան, 1984, “Սերգեյ Գորոդեցկիի Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում”, Երևան, 2010:

<sup>16</sup> “Ованес Туманян в годы Первой мировой войны”. Ереван, 2018; “Վերնատուն”, Երևան, 2018, “Հովհաննէս Թումանյանը մանկագրության խաչմերուկներում”, Երևան, 2018:

<sup>17</sup> “Հովհաննէս Թումանյան. Մտքեր”, Երևան, 2011:

<sup>18</sup> Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, Երևան, 1979, էջ 246–260:

1890-ին Մոսկվայում լույս է տեսնում Թումանյանի անդրանիկ գիրքը՝ «Բանաստեղծություններ» խորագրով: Հասարակությունը ջերմորեն է ընդունում այն: 1892-ին լույս է տեսնում բանաստեղծությունների մի նոր գիրք, որում զետեղված էին «Անուշ», «Մարտ», «Մերժված օրենք» պոեմները, «Շունն ու կատուն», «Ախթամար» բալլադները:

Վահան Թոթովենցը Թումանյանին նվիրված իր հուշագրության մեջ հետաքրքիր դրվագ է պատմում «Շունն ու կատուն» բալլադի մասին. «Մի օր, էլի սեղանի շուրջը, Թումանյանն առաջարկեց խմել Անդրանիկի կենացը, և ինքը վերցրեց առաջին խոսքը:

– Մրանից 20 տարի առաջ,– սկսեց Թումանյանը,– կար երկու նշանավոր բան Խրիմյան Հայրիկը և իմ «Շունն ու կատուն», քսան տարի է անցել, բայց էլի երկու նշանավոր բան կա՝ իմ «Շունն ու կատուն» և Անդրանիկը. խմում եմ երկու նշանավորներից մեկի, Անդրանիկի կենացը:

Բոլորն էլ սկսեցին ծիծաղել: Անդրանիկն էլ ծիծաղեց: Անդրանիկը Թումանյանին պատասխանեց.

– Կանցնեն տարիներ, ո՛չ ես կլինեմ, ոչ էլ Թումանյանը, բայց կլինի մի նշանավոր բան՝ «Շունն ու կատուն», խմենք նրա կենացը»<sup>19</sup>:

Թումանյանի առաջընթացը գրականության ասպարեզում իր հիմքում ուներ ինքնակրթության ջրնդհատվող եռանդը: Նա մեծ գրքասեր էր և հայ գրողների մեջ եղել է առաջինը, որ շուրջ 10.000 տարալեզու գրքեր է ունեցել իր գրադարանում: Այժմ այդ գրքերից 8000-ից ավելին գտնվում են մեծ գրողի Երևանի թանգարանում: Գիրքը Թումանյանի համար պաշտամունք էր. նա գիտեր, որ հայ ժողովրդի մտքի առաջընթացն ապահովել են միջնադարյան մատյանները: Նա կարծես Դերենիկ Դեմիրճյանի հրաշք «Գիրք ծաղկանցի» հերոսներից էր, որոնց համար գիրքը հացից էլ թանկ էր: Օլգա Թումանյանը հիշում է. «Անկարելի է մոռանալ, թե ինչպես էր փայփայում իր գրադարանը: Երբ դեռ նոր էինք ամուսնացել, շարունակ նոր գրքեր էր առնում, թեև փողի պակասություն ունեինք: Հիշում եմ, ինչ դժվարությամբ էր ձարում «Հյուսիսափայլի» համարները, ամեն մի համարը հինգ ռուբլով: Տանից բացակայելիս, նամակներում գրում էր լավ նայիր երեխաներին ու գրադարանին»<sup>20</sup>:

Թումանյանը 1990-ականներին եռանդուն հանդես է գալիս «Մուրճ», «Աղբյուր», «Տարագ», «Թատրոն» պարբերականներում, հետագայում նա դառնալու էր «Հասկեր» մանկական հանդեսի հիմնական հեղինակներից:

Հայ գրական կյանքի առաջընթացն ապահովելու համար իր բնակարանում կազմակերպում է «Վերնատուն» (1899 թ.) գրական խմբակը, որի մշտական անդամներն էին Ղ. Աղայանը, Լ. Շանթը, Ավ. Բասահայանը, Դ. Դեմիրճյանը և Ն. Աղբալյանը: «Վերնատան» վերաբերյալ մեծարժեք հուշեր են թողել Ավ. Բասահայանն ու Դ. Դեմիրճյանը:

<sup>19</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2009, էջ 142:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 341:

“Վերնատանը” հաճախակի հյուրեր են եղել Պ. Պոռժյանը, Մուրացանը, Վ. Փափազյանը, Կոմիտասը, Գ. Բաշինջաղյանը, Փ. Թերլեմեզյանը և ուրիշ մտավորականներ: “Ընթերցում էինք մեր նոր գրած բաները, քննադատում, կարծիքներ փոխանակում: Խոսում էինք հայ, ռուս և օտար գրական նորությունների մասին, հաղորդում իրար մեր սպավորությունները”<sup>21</sup>, – գրում է Իսահակյանը:

“Վերնատունը” եղել է արվեստի ու գրականության հայ նվիրյալների ներշնչման Պատնասը: Նրա հավաքների ժամանակ քննվել են տեսական հարցեր, արվել ճշգրիտ եզրահանգումներ, որոնց մի մասի հեղինակը հենց ինքը՝ Թումանյանն էր. “Բանաստեղծությունը չի գրվի հանգով ու վանկով, այլ սիրով ու զգացմունքով”, “Գրականությունը հայրենիք չունի, բայց յուրաքանչյուր հայրենիք իր գրականությունն ունի”, “Իզուր ջանք է՝ անտաղանդ մարդկանց օգնել՝ գրող դառնալու համար: Իր եղջյուրները պախրան ինքը պիտի շինե”<sup>22</sup>:

Ինչպես Խ. Աբովյանն է “Վերք Հայաստանի” վեպում նկարագրում հայ Բագրատունիների մայրաքաղաք Անիի հիասքանչ ճարտարապետությունը, այնպես էլ Թումանյանն էր սքանչազած Անիի ավերակների հրաշագեղությունից ու նպատակ ուներ մի դրամա գրել Անիի կյանքից: Թումանյանն ասել է. “Մի թե այս գեղեցկությունը պիտի մեռնի առանց հետք թողնելու հայկական և ուրիշ ժողովուրդների արվեստի վրա: Այսօր զարգացման ի նչ աստիճանի հասած կլինեն մեր արվեստը, եթե թուրք-թաթար ցեղերը չքայքայեին մեր ժողովրդին”<sup>23</sup>:

Դ. Դեմիրճյանը հիշում է, թե ինչպես էր Թումանյանը ծրագրում ողբերգություն գրել Արտաշես Բ-ի և նրա որդի Արտավազդի մասին<sup>24</sup>: Գրողի կարծիքով նա ստեղծագործական գաղտնիքները վերցնում էր Շեքսպիրից և գործադրում Պուշկինի նման<sup>25</sup>:

“Վերնատունը” դարձել է Հայ գրողների կովկասյան ընկերության հիմնաքարը: Թումանյանը 1912–1921-ը եղել է Հայ գրողների տան, 1921–1922-ը համատեղել է Հայաստանի օգնության կոմիտեի և Թիֆլիսի Հայ արվեստի տան նախագահի պաշտոնները: Ինչ պաշտոն էլ նա վարել է, ունեցել է ազգային և քաղաքացիական պարտքի մեծ պատասխանատվություն:

Անհնար է առանց հիացմունքի ծանոթանալ այն փաստաթղթին, որով Թումանյանը 1921 թ. դիմում է Հայաստանի լուսժողկոմին.

“Հայաստանի Խորհրդային Հանրապետության  
ընկեր լուսժողկոմին

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 11:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 14–15:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 26:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 27:

Իր ժամանակին Հայ գրողների ընկերությունը Թիֆլիզում Սայաթ-Նովայի ժառանգներից ձեռք էր բերել Սայաթ-Նովայի ձեռագիր տետրակը: Էդ տետրակը վարչության որոշումով պահվում էր ինձ մոտ: Հայ գրողների ընկերության անունը փոխվեց էս տարվա սկզբներում՝ դարձավ Հայ գրչի մշակների միություն: Այժմ հայ գրչի մշակների միության վարչության համաձայնությամբ հիշյալ տետրակը ուղարկում եմ Ձեզ՝ դնելու Հայաստանի թանգարանում: Տետրակը բաղկացած է 140 էջից և թվահամարված է հետագայում՝ իմ ձեռքով: Հայերեն երգերը գրված են վրացական տառերով, թուրքերեն երգերը՝ հայկական տառերով:

19/X 1921 Հայ գրչի մշակների միության  
Թիֆլիզ նախագահ՝ Հոսի. Թումանյան<sup>26</sup>:

Թումանյանը բազմաժանր գրող է՝ բանաստեղծ, արձակագիր, հրապարակախոս, գրաքննադատ, թարգմանիչ, բանագետ, գրականագետ: Նա եզակի է որպես հասարակական գործիչ:

Թումանյանի գրական ժառանգության պատկերից են նրա անմոռաց և թեմատիկ բազմազանությունն ունեցող պոեմները: Դրանք Էդ. Ջրբաշյանը զետեղել է “Երկերի լիակատար ժողովածուի” III և IV հատորներում:

Առաջին պոեմը “Մարոն” է՝ գրված 1888-ին: Պոեմում պատկերված է իննամյա Մարոյի բռնի ամուսնությունը և նրա ողբերգական ինքնասպանությունը: Բանաստեղծը քննադատում է հայ նահապետական գյուղում տեղ գտած վաղ ամուսնության սովորությունը և դրա տխուր հետևանքները: Ի դեպ, նման մի պատմության հանդիպում ենք նաև Ա. Պուշկինի “Եվգենի Օնեգին” վեպ-պոեմում: Երբ պոեմի գլխավոր հերոսուհին՝ Տատյանան, իր դայակին հարցնում է, թե նա երիտասարդ ժամանակ արդյոք սիրահարված եղե՞լ է, դայակը ցավով հիշում է, որ իրեն բռնի ամուսնացրել են տասներեք տարեկանում, իսկ իր ամուսինը՝ Վանյան, իրենից էլ տարիքով փոքր էր<sup>27</sup>:

<sup>26</sup> Սայաթ-Նովա. Խաղեր, Նմանահանություն, Երևան, 1963, էջ VIII:

<sup>27</sup> “Да как же ты венчалась, няня?” –

“Так, видно, Бог велел. Мой Ваня

Моложе был меня, мой свет,

А было мне тринадцать лет.

Недели две ходила сваха

К моей родне, и наконец

Благословил меня отец.

Я горько плакала со страха,

Мне с плачем косу расплели

Да с пенъем в церковь повели” (տե՛ս Ա. Ս. Սուսկին. Евгений Онегин. М., 1981, с. 87).



Նահապետական հայ գյուղի մեկ այլ թերությունը՝ սնահավատությունն է քննադատված «Լոռեցի Սաքոն» (1889–1902 թթ.) պոեմում, որը բանաստեղծի մտապատկերում մնացել է դեռ որպես մշակման ենթակա նյութ<sup>28</sup>:

Արդեն առաջին երկու պոեմից պարզ է դառնում բանաստեղծի խոր մտահոգությունն իր ապրած ժամանակի հայ գյուղական կյանքի ներկայի ու ապագայի համար: Այդ մտահոգությունը շարունակվում է հաջորդ տարիներին՝ ներառելով թեմատիկ նոր շրջանակներ: 1889-ին գրված «Ալեք» պոեմում նկարագրվում են թուրքերի ավազակային հարձակումները հայկական գյուղերի վրա՝ ավարառություններ ու սպանություններ: Դրանց դեմ ըմբոստանում է խիզախ Ալեքը, որը սպանում է հայերին տանջող ավազակ Ալիին և ստանում հայ տերտերի օրհնանքը: Ալեքը տեր հորն ասում է.

Այն թուրք Ալին հենց այսօր  
Մամադի դրախտը գնաց,  
Իսկ զենքերն ինձ մնաց<sup>29</sup>:

Թուրքերի գազանություններն են պատկերված «Մեհրի» պոեմում՝ գրված 1890-ին: Բանաստեղծը պոեմն սկսում է հակադրելով քաղաքակիրթ աշխարհը և թուրքական լծի տակ գտնվող Արևմտահայաստանը.

– Սիրելի Մեհրի, չէ՛, ամեն երկրում  
Մարդիկ այսպիսի նեղություն չեն կրում.  
Այս ի՞նչ երկիր է, տեր չըկա կարգին,  
Ամեն ավազակ տեր է մեր գլխին...  
Կնոջս տանից կառնեն – կըտանեն,  
Որդիս կըխլեն կամ ինձ կըսպանեն...  
Հալալ հաց չունենք թուրքիցն անկշտում,  
Դառն աշխատում ենք ու դատարկ նստում<sup>30</sup>:

Պոեմում պատկերված է նազելի ու խոնարհ հարս Մեհրին, որի պանդխտության մեկնած ամուսնուն սպանում է թուրք Օսմանն ու հետո առևանգում Մեհրիին ու պարծենում գյավուրին սպանելու համար: Պոեմն ավարտվում է հայ կնոջ վրեժխնդրությամբ՝ նա դաշունահարում է ամուսնուն սպանած Օսմանին, և վերջինս էլ սպանում է Մեհրիին:

<sup>28</sup> Տե՛ս Հովհ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով (այսուհետև՝ ԵԼԺ), հ. III, Երևան, 1989, էջ 500–501:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>30</sup> Նույն տեղում, էջ 37:

“Մերժված օրենքը” (1890 թ.) հեշտ նկատելի կրում է Յու. Լերմոնտովի “Մծիրի” պոեմի ազդեցությունը: Պոեմն աշխարհիկի և հոգևորի մշտական պայքարի դրսևորումն է: Երիտասարդ աբեղան ընդվզում է ճգնակյաց կյանքի դեմ և վանահորից պահանջում՝ “մի աղջկա սեր ...”<sup>31</sup>: Պոեմն ավարտվում է վանահոր նզովքով և աբեղայի վանքից հեռանալով:

“Հառաչանք” (1890-ական թվականներ) պոեմն անավարտ է: Նրանում Թումանյանը քննել է Ռուսական կայսրության կազմում գտնվող արևելահայ գյուղի ցավոտ խնդիրները: Անմեղ չորան Չատիին սպառնում է Սիրիք քշվելու սարսափելի դատավճիռը: Պոեմի նախերգանքը հակադրում է բանաստեղծի հայրենի երկրի բնության գեղեցկությունը, որն իր վրա է կրում աստվածային արարչագործության հետքը, նույն երկրում առկա տիրոջների հառաչանք առաջացնող ցավալի դաժան իրականությանը: Պոեմում պատկերված է Լոռու գեղեցիկ բնության գրկում ապրող ութսունամյա ծերունու և քաղաքից եկած ուսանողի հանդիպումը, որը վերածվում է ծերունու խիստ մերկացնող մենախոսության. դրանում պատկերված է հայ գյուղի իրական կյանքը: Ութսունամյա ծերունին, կյանքով իմաստնացած, պահանջում է անհատի իրավունքների պաշտպանություն: Բշխանության ներկայացուցիչները գողերին գողակից են, թավադները՝ անբան ու դաժան: Գյուղացիներից ոմանք դիմում են տարերային ապստամբության:

Դարձել է աշխարքն, ախպե՛ր, առ ու փախ,  
Մերը դարձել սուր ու ջուրը՝ արին,  
Ոչ ամոթ ունի ուժեղը, ոչ վախ,  
Վայը եկել է տարել տրկարին<sup>32</sup>:

Թումանյանի գլուխգործոցներից է “Անուշ” պոեմը, որի վերամշակման վրա բանաստեղծն աշխատել է ողջ ստեղծագործական կյանքի ընթացքում: “Անուշ” պոեմում, ավելի քան մյուս պոեմներում, առկա է հայ ժողովրդի բանահյուսության ազդեցությունը: Ժողովրդական բնության, սիրո, վիճակի, սգո երգերը որոշակի ազդեցություն են թողել պոեմի շարադրանքի վրա: Այն ունի երաժշտական հնչողություն թե՛ քնարական հատվածներում և թե՛ պատմողական մասերում: “Անուշը” հավերժական սիրո փառաբանումն է, որը հաճախ իրական կյանքում չկա, բայց պետք է լինի: Մյուսների ընթացքը խիստ տպավորիչ է: Պատահական չէ, որ այդ պոեմն է ընկած Արմեն Տիգրանյանի գլուխգործոցի “Անուշ” օպերայի հիմքում, որը 1912 թ. Ալեքսանդրապոլում բեմադրվելուց հետո առ այսօր չի իջնում Հայաստանի պետական օպերայի բեմահար-

<sup>31</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>32</sup> Նույն տեղում, էջ 73:

*թակից: Թումանյանի պոեմի գլխավոր կերպարները՝ Անուշն ու Սարոն, հուզում են իրենց մաքուր ու անկեղծ սիրով: Նրանց համար սերը սեփական կյանքից էլ թանկ է.*

Ա՛խ, կըմեռնեմ՝ ամա նա  
Վա՛յ թե հանկարծ իմանա,  
Ես ազատվեմ էս ցավից,  
Աչքը լալով նա մընա<sup>33</sup>:

*Հուզիչ է Անուշի սիրո տազնապը. նա Սարոյից հավերժ սիրելու հավաստիացումներ է պահանջում.*

Վաղո՛ւց, վաղուց ես դու ինձ մոռացել...  
Ես ե՛րբ եմ եկել էստեղ քարացել  
Ու մընում եմ քեզ, մընո՛ւմ, անիրավ,  
Էնքան մընացի՝ աչքըս ջուր դառավ<sup>34</sup>:

*Փոխադարձ սերն էլ ունի տվայտանքներ՝ այն կորցնելու վտանգը, որովհետև ճշմարիտ սերն առանց կորստի վախի չի լինում: Այս ճշմարտության մասին Թումանյանը գրել է Նաղաշ Հովնաթանի սիրո երգերը վերլուծելիս: Ուշագրավ է բանաստեղծի եզրահանգումը. «Ազահ է սերը, անվերջ են նրա պահանջներն ու տրտունջները և տարորինակ»<sup>35</sup>:*

*«Անուշ» պոեմում բոլոր կերպարները տեսանելի են, հայ գյուղի կյանքի տոնախմբություններն ու սովորությունները՝ հետաքրքիր: Ամեն ինչ թվում է խաղաղ ու երազային մինչև հարսանքի չարաբաստիկ միջադեպը, երբ աղաթը մոռացած Սարոն Անուշի սիրառատ հայացքի տակ գետնում է Մոսիին: Թումանյանը սիրով է լցված դեպի պոեմի բոլոր հերոսները: Եթե ողբերգական վախճան ունեցան Անուշն ու Սարոն, ապա մեծագույն դժբախտն է նաև ընկերասպան Մոսին: Մեծարժեք են հատկապես Համբարձման առավոտի և ձմռան հարսանիքի նկարագրերը. սրանք ազգագրական գոհարներ են, որոնցում բանահավաքն ու հանձարեղ բանաստեղծը հանդես են գալիս միասնական: Վ. Բրյուսովը, որը «Հայաստանի պոեզիան» ժողովածուում մեծ տեղ է հատկացրել Թումանյանի ստեղծագործությանը, եզրակացնում է, թե Թումանյանը հենց ինքը Հայաստանն է՝ հին ու նոր, նաև վերածնված մեծ վարպետի գրչով<sup>36</sup>:*

<sup>33</sup> Նույն տեղում, էջ 101:

<sup>34</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>35</sup> Հո վ ի հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. VI, Երևան, 1994, էջ 324:

<sup>36</sup> Поэзия Армении с древнейших времен до наших дней, в переводах русских поэтов. Редакция, вступительный очерк и примечания Валерия Брюсова. Ереван, 1987, с. 79.

XX դ. առաջին կեսի համաշխարհային գրականության մեծերից էր իսպանացի բանաստեղծ և դրամատուրգ Ֆեդերիկո Գարսիա Լորկան (1899–1936), որի լավագույն ողբերգությունը՝ «Արյունոտ հարսանիք» («Blood Wedding») թարգմանված է աշխարհի բազմաթիվ լեզուներով: Գարսիա Լորկան իր այս երկում շատ մեծ տեղ է տվել իսպանական ժողովրդական ծիսական երգերին<sup>37</sup>, մի իրողություն, որն առկա է Թումանյանի «Անուշ» պոեմում:

«Հայաստանի պոեզիան» ժողովածուում «Անուշ» պոեմը թարգմանել է Վյաչեսլավ Իվանովը<sup>38</sup>:

«Դեպի անհունը» պոեմի վրա Թումանյանը երկար է աշխատել՝ 1894–1903 թթ.: Նրանում կյանքի ու մահվան փոխհարաբերությունները քննված են քրիստոնեական վարդապետության դիրքերից: Պոեմն ամբողջովին այլաբանություն է. սիրելի վաղամեռիկ աղջկա կերպարում Թումանյանի հայրն է. Դեմիրճյանը վկայում է. «Հոր մասին գրույցը Թումանյանի նվիրական նյութերից էր: Վերջում ինձ մի օր էլ նա հասկացրեց, որ «Դեպի անհունը» պոեմի մեռած կինը նրա համար արտաքին, հնարովի պատկեր է միայն, որ նա այդ կնոջ մեջ դրել է իր որդիական սերը դեպի հայրը»<sup>39</sup>:

«Պոետն ու մուսան» (1894–1903 թթ.) պոեմը երգիծական շեշտերով քննադատում է իրենց քնարին դավաճանած բանաստեղծներին, որոնք կարող են հանուն փողի «դավաճանել իրենց քնարին»: Այս պոեմի որոշ հատվածներ մի անգամ կարդալով՝ կարելի է անգիր արտասանել, և հաճախ դրանք կրկնվում են մտավորականների բանավոր խոսքում՝ որպես բանաձև մամոնայի ավերիչ ուժի.

Փողի քրսակը, փողի քրսակը,  
Բարձրացընում է մարդու հասակը,  
Գեղեցկացնում է հրրեշ տրգեղին,  
Սըրբագործում է գարշն ու աղտեղին:  
...Պըճնում ճակատը լիրբ ավազակի,  
Կանգնեցնում արձան անվախճան փառքի:  
...Նըրա վըրա է աշխարքը կանգնած.  
Նա մեր հոգին է, մեր երկրորդ աստված<sup>40</sup>:

Թումանյանի ստեղծագործության փառահեղ էջերից է «Սասունցի Դավիթ» պոեմը՝ գրված 1902-ին, երբ բանաստեղծը ձեռք էր բերել անվիճելի հեղինակություն հայ գրական կյանքում: Էդ. Ջրբաշյանը նշում է, թե «նույնիսկ իր այս ամենակատարյալ տար-

<sup>37</sup> Տե՛ս The Reader's Companion to World Literature, Second edition, London, 2002, p. 282.

<sup>38</sup> «Поэзия Армении», с. 334–359.

<sup>39</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 26:

<sup>40</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. III, էջ 139:

բերակով, պոեմը չէր բավարարում ժողովրդական վիպերգության գեղարվեստական մշակման թումանյանական իդեալին<sup>41</sup>: Բանաստեղծը վկայում է, թե “Մասունցի Դավիթ” էպոսը գրելիս օգտվել է այն ժամանակ արդեն տպագրված 5 պատումներից, որոնց մեջ առաջին հերթին՝

ա) “Մասունցի Դավիթ կամ Մհերի դուռ”, Սրվանձտյանցի, Կ. Պոլիս, 1874,

բ) “Դավիթ և Մհեր”, Մ. Աբեղյան, Շուշի, 1889<sup>42</sup>:

Անվերապահ կարելի է ասել, որ հայկական էպոսի թումանյանական մշակումը ցարդ չգերազանցված է: Թումանյանը գիտեր, որ ամեն ժողովուրդ իր էպոսի գլխավոր հերոսի մեջ դնում է ազգային բնավորության լավագույն գծերը: Այդպիսին է հենց նրա կերտած Մասունցի Դավիթը, որը նույնական է ժողովրդական բանահյուսների նկարագրած կերպարի հետ: Բանաստեղծը հարազատ է մնացել ժողովրդական էպոսի սյուժետային ընթացքին, բովանդակային մանրամասներին ու ոճերին՝ դրանք համաբերելով գերազանց: Նրա մշակումը շատ հատվածներով նույնն է 1939-ին հրատարակված համահավաք բնագրում եղածներին:

Թումանյան “Մասունցի Դավիթ”

“Ով քրնած է՝ արթուն կացե՛ք,  
Ով արթուն է՝ էլե՛ք, կեցե՛ք,  
Ով կեցել էք՝ զենք կապեցե՛ք,  
Չենք եք կապել՝ ձի թամբեցե՛ք,  
Ձի եք թամբել՝ էլե՛ք, հեծե՛ք.  
Հետո չասեք՝ թե մենք քրնած՝  
Դավիթ գող-գող եկավ, զրնաց...”<sup>43</sup>

“Մասունցի Դավիթ” համահավաք բնագիր

“Ով քրնած է՝ արթուն կացեք,  
Ով արթուն է՝ ձիե՛ր թամբեք,  
Ով թամբեր է՝ զենքե՛ր կապեք,  
Ով կապեր է՝ էլե՛ք, հեծե՛ք,  
Չասեք Դավիթ գող-գող եկավ,  
Գող-գող զրնաց”<sup>44</sup>:

<sup>41</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ե Լ Շ, հ. IV, Երևան, 1991, էջ 528:

<sup>42</sup> Նույն տեղում, էջ 521:

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>44</sup> Մասունցի Դավիթ. Հայկական ժողովրդական էպոս, Երևան, 1961, էջ 234:

“Մասունցի Դավիթ” պոեմի վրա Թումանյանը երկար է աշխատել՝ փորձելով այն կատարելագործել: Այս հերոսական պոեմը բանաստեղծը գրում էր մանուկների համար, այդ պատճառով ժողովրդական պատումից չի ներառել բավականին մանրամասներ, որոնք նրա կարծիքով ճիշտ չէին երեխայի հայրենասիրական դաստիարակության համար<sup>45</sup>:

“Թմկաբերդի առումը” (1902–1904 թթ.) ունի բանահյուսական հիմք. այուժեի հիմնական տարրերը Երվանդ Լալայանի “Ջավախքի բուրմունք” ժողովածուից են: Պոեմի գլխավոր միտքն արտահայտված է “Նախերգանքում”: Գործի անմահության գաղափարը շեշտվել է վաղնջական ժամանակներից.

Գործն է անմահ, լա՛վ իմացեք,  
Որ խոսվում է դարեդար,  
Երնե՛կ նըրան, որ իր գործով  
Կապրի անվերջ, անդադար<sup>46</sup>:

Պոեմի “Նախերգանքի” որոշ տողեր դարձել են թևավոր խոսքեր: Նշանավոր բյուզանդագետ, հայագետ Նիկողայոս Ադոնցը Ամենայն հայոց կաթողիկոս Խորեն Ա-ի հիշատակին ասված խոսքում նախ կարևորում է հայոց եկեղեցու դերը. “Հայոց եկեղեցին մեր գոյության խարիսխն է, մի օղակ և կապ, ցան ու ցրիվ հայության”<sup>47</sup>: Ապա վերհիշում է, թե չար մարդիկ ինչպես են բացեփրաց անարգանք տեղացել ընտրյալ Հայրապետի գլխին. “Վատ բանը, չարագործությունը թանձր ամպի նման մթազնում է հորիզոնը, տեսության ոլորտները: Անեծք վատ մարդու վատ արարքին, պետք է կրկնել բանաստեղծին և անցնել մոտեն”<sup>48</sup>:

Ադոնցը չի կրկնում “Թմկաբերդի առումը” պոեմի հետևյալ խոսքերը՝ վստահ լինելով, որ բոլորը դրանք գիտեն.

Չարն էլ է միշտ ապրում անմեռ,  
Անե՛ծք նըրա չար գործին ...<sup>49</sup>

Թումանյանը հիանալի գիտեր հայ ժողովրդի պատմությունը: Նա բնագրով կարդացել էր միջնադարի պատմիչներին, ծանոթ էր Միքայել Չամչյանցի “Հայոց պատմության” երեք հատորներին և քաջատեղյակ էր իր հայրենիքի պատմության դժվար ըն-

<sup>45</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. IV, էջ 542–543:

<sup>46</sup> Նույն տեղում, էջ 47:

<sup>47</sup> Ն. Ադոնց. Երկեր, հ. Զ, Հրատարակության պատրաստեց Պ. Հ. Հովհաննիսյանը, Երևան, 2012, էջ 482:

<sup>48</sup> Նույն տեղում, էջ 284:

<sup>49</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. IV, էջ 47:

թացքին ու մաքառումներին: Նա երագում էր տառապած երկրի համար “մի ազգային, մեծ պոեմա ձևել”<sup>50</sup>: Էդ. Ջրբաշյանի կարծիքով “Հին կռիվը” հենց այդ պոեմն է, որի որոշ հատվածներ անդարձ կորել են 1911 թ. “Հորիզոնի” խմբագրությունում և բանաստեղծի տանն իրականացված խուզարկության ժամանակ:

“Հին կռիվը” պոեմի վրա Թումանյանն աշխատել է 1902–1906 թթ.: Պոեմի երկրորդ երգի “Նախերգանքը” “Հայոց լեռներում” հանճարեղ բանաստեղծությունն է, որը ներկա օրերում տպագրվում է պոեմից անջատ: Արևմտահայության ճակատագիրը Թումանյանի անամոք ցավն էր. նա զգում էր, որ դարեր ի վեր, դաժան ճակատագրին դիմակայելով, արևմտահայերը հասել են XX դ., սակայն թուրքական հայաջինջ քաղաքականությունը ստիպում է իրեն հեծեճալ իր հայրենակիցների ճակատագրի համար: Պոեմն ունի գլխավոր հերոս Վահան անունով, որն իր կյանքը պատրաստ է նվիրել հայրենիքի ազատագրմանը: Վահանը մենակ չէ. նրա հետ են կտրիճ հայ տղաները, որոնց երգում են նույն է ազատության համար պատրաստ մարտիկի երդումը.

Ազատության որդիքն ենք մենք՝  
Թրոած դեպի ապագան:  
Էսպես խըմբով սըլանում ենք,  
Ո՞վ կըփակի մեր ճամփան.  
...Հե՛յ, գալիս ենք, ո՛վ տանջվածներ,  
Գալիս ենք մենք զինավառ,  
Ե՛վ ազատ օր, և՛ կյանք, և՛ սեր՝  
Ողջ բերում ենք ձեզ համար<sup>51</sup>:

Պոեմն անավարտ է. վերջին հատվածում Կովկասից եկած հայ կտրիճները հայտնվում են արևմտահայի տանը՝ պատրաստ նրանց ազատություն բերելու: Պոեմը վերստին հաստատում է Թումանյանի ազգային միասնության գաղափարը:

“Հազարան բլբուլ” պոեմը (1898–1914 թթ.) Թումանյանի գրական կյանքի գերագույն նպատակն է եղել: Ժողովրդական հեքիաթները, որոնք ձևավորվել են վաղնջական ժամանակներում, շարունակել են իրենց նորանոր դրսևորումներով զարգանալ մինչև մեր ժամանակները: Ավելին, հիմա, երբ մարդը կարող է տիեզերանավով իջնել լուսնի վրա, երբ տեխնիկական առաջընթացի հետևանքով գնացքները, ռազմական ինքնաթիռները թռչում են առանց մեքենավարի և օդաչուի, Հռիփլուղը նկարահանում է մարտաֆիլմեր, որոնք համահունչ են վաղնջական ժամանակների հրաշապատում հեքիաթներին: Թումանյանը գիտեր, որ հեքիաթում մարդը հասնում է իր նպատակին, բարին հաղթում է չարին: Նա մի զրույցի ժամանակ իր դստերը՝ Նվարդին, ասել է. “Հե-

<sup>50</sup> Նույն տեղում, էջ 555:

<sup>51</sup> Նույն տեղում, էջ 68:

քիաթը ամենաբարձր ստեղծագործությունն է. նույնիսկ հանճարները հեքիաթ չեն կարողանում ստեղծել, բայց հեքիաթների են ձգտում<sup>52</sup>:

“Հազարան բլբուլ” հեքիաթը կա և՛ ռուս, և՛ եվրոպական բանահյուսության մեջ: Այն առկա է նաև Արևելքի ժողովուրդների մոտ: Հեքիաթը պատմում է հազարան բլբուլի հրաշագործ հատկության մասին: Թռչունը կարող է վերակենդանացնել անդարձ չորացած այգին, վերակենդանացնել մեռած մարդուն<sup>53</sup>: Սա մարդկության հավերժական երազանքն է, իրական կյանքից ծնված երազանք, որ ուղեկցում է մարդկությանը: Թումանյանին մշտապես հուզել են գոյի խնդիրները. նա ցավով տեսնում էր, թե մարդիկ որքան են հեռանում աստվածային պատվիրաններից: Մեծ գրողը հավատում էր գրականության՝ կյանքի վրա ունեցած ներգործությանը: “Հազարան բլբուլը” սյուժետային բովանդակությամբ համապատասխանում էր գրողի նպատակադրմանը՝ հասնել մարդկությանը չար ուժերից փրկելու վիճակին: Ինչպես փաստում է Էդ. Ջրբաշյանը, բանաստեղծը շուրջ երեսուն տարի “Հազարան բլբուլ” պոեմի վրա աշխատել է: Եվ քանի որ չի հասցրել իրականացնել իր երազանքը, ապա 1923 թ. հունվարի 13-ին ասել է. “Ա՛խ, երանի “Հազարան բլբուլս” գրած լինեի ... ի՛նչ լավ կլինեի ...”<sup>54</sup>:

Թումանյանը նաև պատմվածքի վարպետ էր: Ընթերցողը, եթե կարդում է գրողի պատմվածքները, դրանք նրա մտապատկերում և հիշողության մեջ մնում են ընդմիջտ:

Պատմվածքները գյուղական կյանքն են պատկերում. դրանցում հայ ազնիվ գյուղացին է իր բազում հոգսերով, կյանքի սեփական փիլիսոփայությամբ: Երկար տարիներ հայ ընթերցողի սիրելի պատմվածքներն են եղել “Գիքորը”, “Գաբո բիձու շերամապահությունը”, “Երկաթուղու շինությունը”, “Գրագը”, “Մայրը”, “Եղջերուն”, “Նետյի քարաբաղնիսը”, “Քեռի Խեչանը”, “Գելը”, “Իմ ընկեր Նետն”:

“Գիքորը” պատմվածքը (1895 թ.) բեմադրվել է և՛ տիկնիկային թատրոնում, և՛ վերածվել գեղարվեստական կինոնկարի ու ոչ մեկ անգամ: Պատմվածքն աչքի է ընկնում խոր ռեալիզմով: Գյուղացի Համբոն իր տասներկու տարեկան որդուն՝ Գիքորին, քաղաք է տանում, որ մարդ դառնա և իր ընտանիքի բազում հոգսերը թեթևացնի: Համբոն իր պարզամտությամբ պատկերացում չունի քաղաքային կյանքի իրական պատկերի մասին: Գիքորը կործանվում է քաղաքում: Պատմվածքում կա այն ճշմարիտ միտքը, թե քաղաքը չի կարող փրկել գյուղը ու նրա բնակիչներին: Պատումի մեջ առկա է մի խորհրդանիշային տեսարան: Քուռ գետում ձկնորսները ձուկ էին որսում: Գիքորը կամրջից նայում է և ամեն անգամ ուռկանը ջրից հանելիս փորձում է իր, քրոջ՝ Չանիի, եղբոր՝ Գալոյի բախտը: Սակայն ուռկանը միջտ էլ դատարկ է դուրս գալիս<sup>55</sup>: Դժբախտ

<sup>52</sup> Հայ նոր գրականության պատմություն, հ. 5, էջ 327:

<sup>53</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. IV, էջ 566:

<sup>54</sup> Նույն տեղում, էջ 569:

<sup>55</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տ ի ի ռ եր կ եր, հ. II, էջ 25:



էր ոչ միայն Գիքորը, այլև նրա ողջ ընտանիքը: Դա երևում է նաև Համբոյի նամակից. «Մեր սիրելի որդի Գիքոր. ահա իմացած լինես, որ տեղներս շատ նեղ ա, և խարջը սաստիկ ուզում են և փող չենք ճարում, և նանն ու Զանին տկլոր են, և տեղներս շատ նեղ ա»<sup>56</sup>: Պատմվածքը գրված է ցնցող ռեալիզմով, այն հավասարապես տակնուվրա է անում թե՛ երեխաների և թե՛ մեծերի ներաշխարհը:

Կրթված մարդու և նահապետական հայ գյուղացու կենսաճանաչողության տարբերությունն է պատկերված «Գաբո բիձու շերամապահությունը» պատմվածքում (1899 թ.): Շերամապահության մասին տարրական գիտելիքներ չունեցող Գաբո բիձան հետևում է քաղաքում կրթված մարդկանց, որոնք ուզում են գյուղի կյանքը փոխել՝ հուշելով, թե կարելի է ավելի լավ ապրել, եթե զարկ տան շերամապահությանն ու մեղվապահությանը:

«Երկաթուղու շինությունը» պատմվածքը (1897–1908 թթ.) նկարագրում է գյուղացու ընդդիմանալը տեխնիկական առաջընթացին: Միաժամանակ հայ հյուրընկալ գյուղացին չի պատկերացնում, թե ինչու երկաթուղու վրա աշխատող մարդիկ, երբ այնուր կամ մաձուն են վերցնում, հարցնում են, թե ինչ արժե, որ վճարեն.

«– Ոչինչ, ուստա, ոչինչ չի հարկավոր, քեզ փեշքեշ, մեր աշխարքումը դարիբից հացի փող չեն առնիլ, էդ տեսակ ադաթ չկա ...»<sup>57</sup>, – ասավ Ուհանես բիձեն ու շարունակեց իր չիրուխը ծխել:

«Մայրը» պատմվածքը (1908 թ.) ներկայացնում է, թե կենդանական աշխարհի ներկայացուցիչների մոտ նույնպես ուժեղ է մայրական բնագործ: Ծիծեռնակը բնից դուրս ընկած ճուտին, որին կատուն ուտում է, չկարողանալով ազատել կատվի ճանկերից, ինքնասպան է լինում: Զգայուն գրողը պատմվածքն ավարտում է այսպես. «Մի գարնան իրիկուն էր, որ այս դեպքը պատահեց: Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանում ոչ այս դեպքը, ոչ այն գարնան իրիկունը, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է, ու սիրտն էլ սիրտ է, ինչպես մերը»<sup>58</sup>:

1914-ին է գրվել «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքը, որը յուրօրինակ զգուշացում է մարդկությանը, թե տաղանդավոր երեխան հասարակական ու տնտեսական դժվար պայմանների հետևանքով կարող է կորցնել աստվածաշնորհ ձիրքը և վերածվել բթացած գողի: Նեսոն, ըստ պատմվածքի, հեղինակի մանկության ընկերն էր. ուշիմ, ընդունակ, վառ երևակայության տեր: Գյուղում ուսումնարան է բացվում, որի վարձը տարեկան 3 տուրլի էր: Շատ քիչ երեխաներ գնացին ուսումնարան: Ընդունակ Նեսոն դուրս մնացած ընկերների մեջ էր: Նեսոն իրեն գետնին խփելով լալիս էր, որ հայրն իրեն էլ ուղարկի ուսումնարան: Հոր պատասխանն էր. «Կա ո՛չ, կա ո՛չ, ա՛յ ոչ ու փուչ, որտե-

<sup>56</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 41:

<sup>58</sup> Նույն տեղում, էջ 50:

դի՞ց տամ... Երեք մանեթ ունենամ՝ կտանեմ հացի կտամ, կբերեմ կուտեք, հրես մնացել էք սոված նստած. կա ո՛չ...<sup>59</sup>:

Պերճ Պոռոջյանի հոբելյանին նվիրված բանաստեղծության մեջ Թումանյանը գրել է.

Հայ գյուղացին ցավեր ուներ  
Խեղդված իրան խուլ խրճիթում,  
Այն ցավերին լեզու տրվիր  
Ու խոսեցիր ամեն սրտում<sup>60</sup>:

Այս բնութագիրը լիովին համապատասխան է Թումանյանի պատմվածքներին, միայն մի հավելումով. նա դասականության անհամեմատ բարձր մակարդակ է:

Թումանյանը ժողովրդական բանահյուսության բացառիկ սիրահար էր: Այդ իսկ պատճառով նա բանահյուսությունից վերցնում էր ժանրեր, թեմաներ, ոճեր, նույնիսկ ամբողջական նույնական հատվածներ: Դա հիանալի երևում է նրա բալլադներում, լեզենդներում, հեքիաթներում, աշխատանքի երգերում, մանկական ոտանավորներում: “Հայոց դրամբյանիզմն ու էս” մեծարժեք հոդվածում բանաստեղծը գրում է. “Իսկ մի բանաստեղծ Պուշկին նույն ժողովրդից վերցնում է նույն հեքիաթը և գրում է. “Сказка о рыбке и рыбаке”:

Գրում է ու ստորագրում Ալեքսանդր Պուշկին: Եվ որովհետև երբ ասում են հեքիաթ, առակ, լեզենդ, ամեն մի գրականությունից տարրական հասկացողություն ունեցող մարդ, մինչև իսկ ռամիկը, գիտեն, որ էդ կնշանակի ընդհանուր, ժողովրդական ստեղծագործություն, որ ամեն մարդ էլ կարող է նյութ առնել ու գրել, պատմելով, փոփոխելով, ավելացնելով ու պակասեցնելով, հեռանալով կամ մոտիկ մնալով<sup>61</sup>:

Թումանյանի ժողովրդական ծագում ունեցող բալլադները շատ-շատ են: Դրանցից են “Շունն ու կատուն”, “Ախթամար”, “Փարվանա”, “Լուսավորչի կանթեղը”, “Չարի վերջը”, “Մի կաթիլ մեղրը”, “Աղավնու վանքը”, “Թագավորն ու չարչին” և ուրիշներ: Բանաստեղծը ոչ միայն օգտվում էր հայ և օտար ազգերի բանահավաքների նյութերից, այլև հայ միջնադարյան պատմիչներից ու տաղասացներից:

“Փարվանա” լեզենդում (1902 թ.) Փարվանա ամրոցի արքայի չնաշխարհիկ գեղեցկություն ունեցող աղջիկը իր փեսացուներից պահանջում է անշեջ հուր, սակայն վերջիններս չգտնելով անշեջ հուրը՝ վերածվում են թիթեռների ու վագում են դեպի հուրը և այրվում:

Նկատենք, որ XV դ. տաղասաց Հովհաննես Թլկուրանցու սիրո երկու տարբեր տաղերում կան սիրահար թիթեռի՝ կրակի մեջ այրվելու համեմատությունները.

<sup>59</sup> Նույն տեղում, էջ 90:

<sup>60</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. I, Երևան, 2018, էջ 196:

<sup>61</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տր ա ն ի, Հրանտ Մայթնոսյանի ընտրությամբ, Երևան, 2001, էջ 597:

Զետ ըզթիթեղն ի մումն ի մօտ,  
Այրումն եկեր եմ, չկայ ճար...<sup>62</sup>

*Մեկ այլ տաղում՝*

Քան զթիթեխն ի հուրն որ է վառման,  
Եկայ, որ այրիմ և մոծիր դառնամ ...<sup>63</sup>

*Հրաշալի մշակում է “Լուսավորչի կանթեղը”։ Հայ ժողովուրդը հավատում է, թե քանի Արագածի գլխին վառվում է Լուսավորչի կանթեղը, ինքը հարատևելու է։ Այս հավատն ամեն հայի մեջ ամրապնդում է Թումանյանը, որովհետև ինչպես անհատը, այնպես էլ ամեն ազգ ուժ է ստանում հավատով.*

Ով անմեղ է, լիքը սիրով  
Ու հավատով անսասան,  
Ով նայում է վառ հույսերով  
Դեպի հայոց ապագան ...<sup>64</sup>

*“Աղավնու վանքը” (1912 թ.) բանաստեղծը ներկայացնում է որպես ազգային ավանդություն։ Արևելքի դաժան տիրակալներից էր Լենկ Թեմուրը, որն ավերել է նաև ողջ Հայաստանը։ Օհաննավանքի ծերուկ վանական Օհանը, երբ տեսնում է բռնակալի անօրինություններն իր հայրենակիցների գլխին, վրդովված դուրս է գալիս վանքից ու քայլում Սևանի ջինջ ջրերի վրա։ Տեսնելով այդ հրաշքը՝ Լենկ Թեմուրը հասկանում է, որ ծերուկն Աստծու ընտրյալն է, և նրան խոստանում գանձ, իշխանություն, փառք։ Ծերունին բռնակալից խնդրում է ազատ արձակել հայ գերյալներն։ Լենկ Թեմուրը համաձայնվում է ազատել այնքան մարդու, որքան կտեղավորի վանքը։ Սակայն սուրբ ծերունու աղոթքով և Աստծու կամքով գերիները դառնում են աղավնիներ և իրենց լեռներում կրկին մարդու վերածվում.*

Իր սուրբ աղոթքով, կամքով Վերինի,  
Փոխել է իսկույն դարձրել աղավնի,  
Բաց պատուհանից թողել ամենքին,  
Թըռցրել դեպ իրենց լեռները կրկին,  
Ու հիմի վանքում էլ չըկա ոչ ոք,

<sup>62</sup> Հ ն վ հ. Թ լ կ ու ր ա ն ց ի. Տաղեր, Աշխատասիրությանը Էմ. Պիվազյանի, Երևան, 1960, էջ 132:

<sup>63</sup> Նույն տեղում, էջ 155:

<sup>64</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ընտրանի, էջ 116:

Ինքն է աղոթում մենակ, ծընկաչոք<sup>65</sup>:

Թումանյանը հիանալի հեքիաթասաց է ու ավելի շատ մշակել է իրապատում հեքիաթներ, որոնց պսակը «Քաջ Նազարն» է: Ինքը՝ գրողը, շատ է հավանել Գ. Սրվանձտյանցի «Դժիկոն» հեքիաթի սեփական մշակումը, որում պահպանել է հեքիաթի հիմնական բովանդակությունը ու այն հարստացրել նորանոր էական մանրամասներով: Քաջնազարականությունը գրողը համարում է հավերժական երևույթ ու չարիք.

– Ի՛նչ քաջություն, ի՛նչ խելք, ի՛նչ հանճար. դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդու բախտն է: Բախտ ունե՛ս՝ քե՛ֆ արա ...

Եվ ասում են՝ մինչև էսօր էլ քե՛ֆ է անում Քաջ Նազարը ու ծիծաղում աշխարհիքի վրա<sup>66</sup>:

Հիացական գնահատական տալով Թումանյանի «Քաջ Նազար» հեքիաթին՝ Նիկոլ Աղբալյանը շեշտում է. «Հեղինակը այս գրվածքի մեջ ևս օգտագործում է մեր ժողովրդական անգիր բանահյուսության անհատնում շտեմարանը՝ իր ընտրած նյութը մշակելով հայ ժողովրդի ոգով ու ոճով»<sup>67</sup>:

Հատկապես իրապատում հեքիաթներում գրողը հարազատ է մնացել ժողովրդական պատումներին: Այդպիսի հեքիաթներից են «Տերն ու ծառան», «Սուտլիկ որսկանը», «Անբան Հուրին», «Բարեկենդանը», «Կիկոսի մահը», «Սուտասանը» և ուրիշներ:

«Տերն ու ծառան» հեքիաթը ժողովրդական «Էրոն ու Տերոն» հեքիաթի մշակումն է, որում հեքիաթի վերջում առկա է բանահյուսական պատումի մի կարևոր շեղում: «Էրոն ու Տերոն» հեքիաթում փոքր եղբայրը սպանում է ազահ հարուստին, ամուսնանում նրա կնոջ հետ և տիրանում ողջ հարստությանը: Թումանյանի մշակած հեքիաթի ավարտում տեսնում ենք փոքր եղբոր բարոյական գերազանցությունը հարուստից. «Էսպես հարուստը խելոքանում է, իսկ փոքր ախպերը մեծ ախպոր տված պարտքի թուղթը պատռում է, հազար մանեթ տուգանքն էլ առնում ու վերադառնում տուն»<sup>68</sup>:

Թումանյանը հայ երեխաների համար թարգմանել է հնդկական, ռուսական, արաբական հեքիաթներ: Եվրոպացի գրողներից հայերենի փոխադրել Գրիմս եղբայրների, Շառլ Պերոյի հանրահայտ հեքիաթները: Շ. Պերոյի «Կարմիր գլխարկը» ավարտի մասում լիովին տարբեր է բնագրից: Բնագրում գայլն ուտում է և՛ տատիկին, և՛ Կարմիր գլխարկին. «Այս չար գայլը հարձակվեց Կարմիր գլխարկի վրա և կերավ նրան»<sup>69</sup>: Իսկ Թումանյանի մոտ որսորդը փրկում է և՛ տատիկին, և՛ Կարմիր գլխարկին: Թումանյա-

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 151:

<sup>66</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տ ի իր երկեր, հ. II, էջ 162:

<sup>67</sup> Ն. Աղբալյան. Ը ն տրանի, Երևան, 2005, էջ 59:

<sup>68</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տ ի իր երկեր, հ. II, էջ 119:

<sup>69</sup> Charles Perrault: Conte de ma Mère, l'Oye, Flammarion, 1996, p. 24.

նր խնայում է հեքիաթը լսող կամ կարդացող երեխաներին ու պատումն ավարտում է բարու հաղթանակով:

Թումանյանն առաջին հերթին բանաստեղծ է, և նրա բանաստեղծությունները սիրո, հայրենիքի մասին են: Որպես սիրերգակ՝ հիշեցնում է Մայաթ-Նովային. նրա սերը պատանեկական սիրո մաքրությունն ունի: “Ա՛խ, ի՛նչ լավ են սարի վրրա” սկսվածքով բանաստեղծությունը “Անուշ” պոեմի հատվածներից է, սակայն հետո հանվել է պոեմից և դարձել առանձին սիրո երգ, որի համար Թումանյանը հորինել է նաև մեղեդի.

Ա՛խ, ի՛նչ հեշտ են սարի վրրա  
Սահում ժամերն անո՛ւշ, անո՛ւշ,  
Շըվին փըչեց հովիվն ահա՛  
Աղջիկն ու սերն անո՛ւշ, անո՛ւշ<sup>70</sup>:

Հայրենասիրական երգերից՝ “Հայոց վիշտը”, “Հայրենիքիս հետ”, “Հայոց լեռներում”, “Հոգեհանգիստ” ներքին հզոր խոսվքի և մտքի հանճարեղ դրսևորումներ են: Դրանք բոլորն էլ սեղմ ծավալ ունեն, սակայն մեծ տարողություն:

“Հայոց լեռներում” բանաստեղծությունը հայ ժողովրդի անցած ուղու անխարդախ ու հանճարեղ բնութագիրն է. ամեն հայ պարտադիր այն պետք է անգիր իմանա՝ աշխարհի որ երկրում էլ նա ապրի: Բանաստեղծությունն ավարտվում է պայծառ լավատեսությամբ.

Ու մեր աչքերը նայում են կարոտ  
Հեռու աստղերին,  
Երկրնքի ծերին,  
Թե երբ կբբացվի պայծառ առավոտ  
Հայոց լեռներում,  
Կանաչ լեռներում<sup>71</sup>:

Թումանյանը լայն հայացքով էր նայում հայ գրականության, մշակույթի վրա. նա շարունակ հետամուտ էր համաշխարհային գրական մեծերի գրվածքները յուրացնելու գործին՝ թե՛ արևմտյան և թե՛ արևելյան: Բանաստեղծություններ է նվիրել Պ. Պռոշյանին, Դ. Աղայանին, Ն. Բարաթաշվիլուն, Պ. Աղամյանին, Դ. Ալիշանին, տիկին Նիմֆա Գորոդեցկուն, Վ. Բրյուսովին, Հ. Այվազովսկուն և ուրիշների: Առանձին սեր ուներ դեպի Վրաստանը, որի մայրաքաղաք Թիֆլիսը դարձել էր մշտական բնակատեղին, և որտեղ հանգչում է նրա մարմինը, իսկ սիրտը՝ Դսեղում: Նրա երազանքն էր, որ հայ ու վրաց ժողովուրդները եղբայրական ջերմության մեջ լինեն: 1919-ին է գրված “Նվեր

<sup>70</sup> Հո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. I, էջ 226:

<sup>71</sup> Նույն տեղում, էջ 224–225:

Վրաստանի բանաստեղծներին՝ քերթվածք, որը համընկնում է Կովկասի ժողովուրդների կյանքի այն ժամանակահատվածին, երբ նրանք այլևս Ռուսական կայսրության կազմում չէին ու փորձում էին ստեղծել իրենց պետականությունները: Թումանյանը մեր ազգային էպոսի գլխավոր հերոսի շիտակությամբ Վրաստանին է մեկնում հայի բարեգործ ձեռքը և անխարդախ հոգին.

Ողջո՛ւյն, ողջո՛ւյն Աստվածային  
Արի, բարի ընկերներ,  
Արարատի կողմից էն հին՝  
Եղբայրական երգ ու սեր<sup>72</sup>:

Թումանյանը լայնորեն օգտվել է հայ շինականի աշխատանքի երգերից, և ինչպես Յուրի Վեսելովսկին է նկատել, այդօրինակ երգերը թվում են ասված հայ գեղջուկի կողմից<sup>73</sup>:

Փիլիսոփայական խորությամբ է հնչում “Հին օրհնությունը”: Մեր պապերը նոր սերնդին մաղթում են բարեկեցիկ ու խաղաղ կյանք.

Ու մեզ օրհնեցին. “Ապրե՛ք, երեխե՛ք,  
Բայց մեզ պես չապրեք ...”<sup>74</sup>:

Ամենայն հայոց բանաստեղծը նաև առաջնակարգ մանկագիր է: Նրա մանկական ոտանավորներն ունեն դաստիարակչական ու ճանաչողական նպատակ: Մանկական ոտանավորների մեծ մասը դարձյալ կապվում են ժողովրդական բանահյուսության հետ՝ “Փոքրիկ երկրագործ”, “Արտուտիկ”, “Կաքավի գովքը”, “Արագիլ”, “Փիսիկի գանգատը”, “Փիսոն”, “Ծույլ աղջիկը” և ուրիշ ոտանավորներ: Հայոց այբուբենը սովորեցնելու օրինակելի ոտանավոր է “Բզեզի դպրոցը”, որն առ այսօր բեմադրվում է հայկական դպրոցներում:

Թումանյանի գրական ժառանգության մեջ նշանակալի տեղ են զբաղեցնում գրականագիտական, բանագիտական, գրաքննադատական ու հրապարակախոսական հոդվածներն ու էլույթները:

Հայ ժողովրդի ճակատագիրը սեփականը համարող գրողը, ցնցված երիտթուրքերի կազմակերպած ցեղասպանության փաստից, 1914 թ. մինչև կյանքի վերջն ամեն ջանք գործադրել է օգնելու Արևմտահայաստանի վերապրածներին: Հասարակ հայի համար Թումանյանն Աստուծուց ուղարկված փրկիչ էր. այդ մասին պահպանվել են ժամանակակիցների բազում վկայություններ: 1918-ի մարտի 28-ին թուրքական բանակները

<sup>72</sup> Նույն տեղում, էջ 325–326:

<sup>73</sup> Ю. А. Веселовский. Очерки армянской литературы и культуры. Ереван, 1972, с. 155.

<sup>74</sup> Հ ն վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. I, էջ 36:

հայտնվել էին Ղարաքիլիսայի մատույցներում: Քաղաքի բնակիչները սարսափահար փախչում են, և մի մեծ խումբ հասնում է Դսեղ՝ ապաստանում Թումանյանի հայրական տան բակում: Նա հանգստացնում է փախստականներին, հիշեցնում, թե հայերը փորձություններով անցած ժողովուրդ են և երբեք չեն հուսալքվել, որովհետև «անկործան ժողովուրդ է»<sup>75</sup>: Գրողը փախստականներին հավաքում է խարույկի շուրջը ու սկսում պատմել առակն առակի հետևից՝ մինչև կեսգիշեր, ու բոլորը հանգստացած քնում են: Գրականագետ Տիգրան Հախումյանը գիշերվա ուշ ժամին հանկարծ բացում է աչքերը ու տեսնում. Թումանյանը խառնում էր ածխացած խարույկի ածուխները և «լուռումունջ արտասվում»<sup>76</sup>:

Նկատենք, որ բանաստեղծը 1914 թ. վերջին մեկնում է Կովկասյան ռազմաճակատ՝ Արևմտյան Հայաստան՝ ծանոթանալու համար ռուսական զորքերի հետ կողք կողքի թշնամու դեմ կռվող հայ կամավորական ջոկատների գործունեությանն ու առօրյային, հանդիպելու ռուսական բանակի հրամանատարությանը: Շրջագայելով Արևմտյան Հայաստանում՝ նա լինում է Բայազետի, Ալաշկերտի շրջաններում, Արծափում, Բասենում, Դիադինում, Ջեթկանում, Ղարաքիլիսայում, Թաղիչայում, Վանում, Սարիղամիշում, ականատես է լինում արևմտահայության ողբերգական վիճակին, պարզում է ռուս հրամանատարության վերաբերմունքը հայ կամավորական խմբերի ու հայ բնակչության նկատմամբ<sup>77</sup>:

1917 թ. դեկտեմբերի 23-ին գորավար Անդրանիկին ուղղված նամակում Թումանյանը գրում է, թե իր չորս տղաները գորավարի տրամադրության տակ են, իսկ չորս աղջիկները կկատարեն թիկունքի աշխատանքներ: Նա հավատում էր Անդրանիկի մարդասիրությանը, ազատասիրությանը և հայրենասիրությանը ու համբուրում նրա հերոսական ճակատը<sup>78</sup>: Ռուս բանաստեղծ Սերգեյ Գորոդեցկին վկայում է. «Վանում Կ. Համբարձումյանի գլխավորությամբ մնացել էին մի խումբ հերոսներ, որոնք հույս ունեին դիմանալ այնտեղ: Նրանց մեջ էր Արտավազը Թումանյանը: Նրանք բոլորն էլ սպանվեցին քաջի մահով՝ քրդական ջոկատների դեմ ձեռնամարտելիս»<sup>79</sup>:

Թումանյանին մեծապես հետաքրքրել են հայ դպրոցն ու հայ ուսուցիչը: Նա համոզված էր, որ հայ ուսուցիչն առաջին հերթին պետք է փայլուն իմանա իր լեզուն ու գրա-

<sup>75</sup> Տ. Հ ա խ ու մ յ ա ն. Հուշեր, Երևան, 1987, էջ 11:

<sup>76</sup> Նույն տեղում, էջ 12:

<sup>77</sup> Այդ մասին մանրամասն տե՛ս Ալ. Շիրվանզադե. Երկեր հինգ հատորով, հ. 5, Երևան, 1988, էջ 457–535, Լ. Կարապետյան. նշվ. աշխ., էջ 113–135, Ա. Ջաքարյան. Շիրվանզադեի հրապարակախոսական ժառանգությունից (1914–1919 թթ.), Երևան, 2008, էջ 29–72, Ս. Օվանեսյան. Встречи Ов. Туманяна с военачальниками русской армии (ноябрь–декабрь 1914 г.).– ИФЖ, 2014, № 3, с. 21–47.

<sup>78</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տր ա ն ի, էջ 861:

<sup>79</sup> Թումանյանը ժամանակակիցների հուշերում, էջ 886:

կանությունը: 1910 թ. հունիսի 17-ին “Հորիզոն”-ում տպագրվում է քանաստեղծի “Հայերեն չգիտեն” հոդվածը, որին Մանուկ Աբեղյանը նույն պարբերականի տարբեր համարներում պատասխանում է ծավալուն հոդվածաշարով<sup>80</sup> և բացատրում, թե հայ ուսուցիչներին ինչն է խանգարում ընտիր հայերեն իմանալու համար:

Թումանյանն ունեցել է գրական հակառակորդներ, որոնք քննադատել են գրողի լեզուն, ոճը, քանահյուսական նյութերին հարազատ մնալը: Գրողը վարպետ գրաքննադատի հետադարձ պաշտպանել է լեզվի և գրական սկզբունքների իր տեսակետները: Նրան քննադատել են էս, էդ, էն գործածելու համար, դրան պատասխանել է և՛ ինքը<sup>81</sup>, և՛ Վահան Տերյանը.

Թումանյանի երգերում  
Կա և “էս”, և “էն”,  
Բայց իզո՛ւր ես դու սրում  
Ատամներդ քեն<sup>82</sup>:

Տերյանը գրողի լեզվի մասին ասել է. “Այսօր Թումանյանը իր լեզուն հասցրել է այն բյուրեղանման պարզության, որը մոտեցնում է նրան Պուշկինին, և որը նրա գերագույն արժանիքներից մեկը պիտի համարվի”<sup>83</sup>:

Թումանյանը մեծ դեր է կատարել հայ միջնադարը նոր օրերին ճշգրիտ ներկայացնելու համար. “Բայց մեր ուժերից վեր հո չի՝ նայել, քննել, ճանաչել մեր երեկն ու էսօրը”<sup>84</sup>: Եվ նա քննում է Սովսես Խորենացուն, Գրիգոր Նարեկացուն, Նահապետ Քուչակին, Նադաշ Հովնաթանին ու անգուգական Սայաթ-Նովային: Անսահման գնահատելով Վ. Բրյուսովի կազմած “Հայաստանի պոեզիան” ժողովածուն՝ Թումանյանը շեշտում է. “... ամեն թյուրիմացություն փարատելու համար, էստեղ պետք է ասեմ, որ միշտ մեր միջնադարյան քանաստեղծությունն է եղած հիացման գլխավոր առարկան”<sup>85</sup>:

Քանաստեղծի խոր հիացման առարկան են եղել Արևելքի և Արևմուտքի հանճարեղ գրողները՝ Ֆիրդուսին, Օմար Խայամը, Շեքսպիրը, Սերվանտեսը, Բայրոնը, Գյոթեն, Շիլլերը, Տոլստոյը, Պուշկինը, Լերմոնտովը, որոնցից սովորել է և որոնց գրականագիտորեն գնահատել է:

<sup>80</sup> Տե՛ս Մ. Աբեղյան. Մեր դպրոցական կյանքից, Երևան, 1915:

<sup>81</sup> Հոսի. Թումանյան. Ընտիր երկեր, հ. II, էջ 280–283:

<sup>82</sup> Վ. Տերյան. Երկերի ժողովածու երեք հատորով, հ. II, Կազմեց և ծանոթագրեց Վ. Պարտիզունի, Երևան, 1961, էջ 98:

<sup>83</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>84</sup> Հոսի. Թումանյան. Ընտրանի, էջ 461:

<sup>85</sup> Հոսի. Թումանյան. ԵԼԺ, հ. VII, Երևան, 1995, էջ 470:



Թումանյանն առաջնակարգ թարգմանիչ է: Հատկապես գերազանց են ռուս գրողներից կատարված թարգմանությունները: Բավական է ռուսական բնօրինակներին համեմատել Պուշկինի «Չմոռան իրիկունը», Լերմոնտովի «Մծիրին»: Նա թարգմանել է տարբեր ժողովուրդների հերոսական էպոսներից հաստատվածներ: Մեծ սիրով է թարգմանել սերբական էպոսից: Բացատրել է, թե ինչու է սերբ արքայազն Մարկոն անհաշտ կռիվ հայտարարում թուրքերին. «Էպոսի մեջ դա արքայազուն Մարկոն է, իսկ հետագայում էն սերբ հայդուկներն էին, որոնք, իրենց սեփական ուժերի վրա դրած իրենց փրկության հույսը, դուրս եկան իրենց լեռներն ու հայտարարեցին միանգամայն ընդամիշտ թուրքի դեմ»<sup>86</sup>:

Թումանյանի եզակի հասարակական գործչի ունակություններն առավել ամբողջական դրսևորվեցին Առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդող տարիներին: Գերմարդկային ջանքերով փորձում էր օգնել հայ գաղթականներին, գումարներ հավաքում նրանց սովամահությունից փրկելու համար: Նա եռանդուն ձևով ուղղորդել է Ազգային բյուրոյի աշխատանքները, որի նպատակն էր Արևմտահայաստանի և նրա բնիկ տերերի ողբերգական վիճակի կարգավորումը: Իրատեսորեն է վերաբերել ազգային խնդիրներին և հաճախ հիասթափվել բյուրոյի անդամների արկածախնդրությունից:

Հեռանալով Ազգային բյուրոյից՝ 1917-ին Թումանյանը ձեռնամուխ է լինում Հայկազյան ընկերության կազմակերպման աշխատանքներին: Ազգանպաստ մեծ գործունեություն է ծավալում Հայ հայրենակցական միությունների միության նախագահի պաշտոնում: 1918 թ. աշնանից մինչև 1919 թ. ամառը գլխավորում է «Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» աշխատանքները<sup>87</sup>: Հիմնում է Հայ Օգնության Կոմիտեն (ՀՕԿ), սակայն հետո հրաժարվում է այն ղեկավարելուց: Երևանի փողոցում ընկած սովամահ ու ցնցոտիապատ մարդու դիակն այնպես է ազդում նրա վրա, որ ՀՕԿ-ի ժողովում նա հայտարարում է. «Երբ մի ժողովուրդ սովամահ է լինում փողոցներում, պետք է թողնել ամեն ինչ, մոռանալ ամեն բան և գնալ նրան փրկելու»<sup>88</sup>: Թումանյանն ամիսուկես Կ. Պոլսում ծավալում է ազգագուտ գործունեություն, որի շնորհիվ միավորվում են աշխարհասփյուռ հայ մտավորականները, տարբեր կուսակցությունները, աշխուժանում է ՀՕԿ-ի գործունեությունը:

Թումանյանի ողջ ստեղծագործության պսակը եղել և մնում են քառյակները. դրանք համաշխարհային գրականության գլուխգործոցներ են: 1919 թ. փետրվար-մարտին

<sup>86</sup> Նույն տեղում, էջ 271:

<sup>87</sup> Մանրամասն տե՛ս Հայ ժողովրդի կորուստները Առաջին աշխարհամարտի տարիներին («Համաշխարհային պատերազմից հայ ժողովրդի կրած վնասների քննիչ հանձնաժողովի» փաստաթղթերի և նյութերի ժողովածու): Կազմող, առաջ. և ծանոթ. հեղինակ Անուշավան Զաքարյան, Երևան, 2005:

<sup>88</sup> Լ. Կ ա ր ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 253:

Թիֆլիսում մեծ հանդիսավորությամբ նշվում է գրողի ծննդյան 50-ամյակը: Ս. Գորոդեցկու գլխավորած Թիֆլիսի “Բանաստեղծների համաքարության” ուղերձում Թումանյանը բնորոշվում է որպես “տիեզերքի քուրմ և մարդկության խիղճ”<sup>89</sup>: Սրանք ճշգրիտ գնահատականներ են: Բանաստեղծի քառյակներն ունեն փիլիսոփայական խորք, դրանք հանճարեղ են ինչպես Դավիթ Մարգարեի սաղմոսները, ու մարդը դրանք կարդալով՝ հոգեպես հարստանում է: Թումանյանի քառյակները նրա քրիստոնեական մարդասիրության դրսևորումներն են. դրանք յուրօրինակ աստվածային պատվիրաններ են, հավերժական ճշմարտություններ: Այդ քառյակներում չկան ազգեր, պետական սահմաններ, կա մարդն անցավոր, և կա հավերժական Ոգին: Բանաստեղծի քառյակներն ուղղված են ապագայի բոլոր մարդկանց: Մի թե արդիական չի հնչում այսօր.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան  
 Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.  
 Ձեռքերն արնոտ գրնում է նա դեռ կամկար,  
 Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան<sup>90</sup>:

*Քառյակներում Գր. Նարեկացու նման Թումանյանը շարունակ մտածում է Տիեզերական Ոգու մասին և փորձում է հաղորդակցվել նրա հետ.*

Ամեն անգամ Քո տըվածից երբ մի բան ես Դու տանում,  
 Ամեն անգամ, երբ նայում եմ, թե ինչքա՛ն է դեռ մընում,-  
 Չարմանում եմ, թե՛ ո՛վ Շոայլ, ինչքա՛ն շատ ես տըվել ինձ,  
 Ինչքա՛ն շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից<sup>91</sup>:

*Քառյակներում բանաստեղծը խոստովանում է, որ ինքը լույս տալով է սպառվել և իր համար անցավոր երկրի փառքը չի եղել կարևորը, այլ հավերժականն է գերազույնը.*

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին.  
 Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ է իմ հոգին.  
 Հեռացել է ու վերացել մինչ աստղերը հեռավոր,  
 Վար մնացած մարդու համար արդեն խորթ է իմ հոգին<sup>92</sup>:

<sup>89</sup> А. Закарян. Тифлисский “Цех поэтов” Сергея Городецкого и сборник “Акме”. Ереван, 2011, с. 17.

<sup>90</sup> Հոսի. Թումանյան. ԵԼԺ, հ. II, Երևան, 1990, էջ 24:

<sup>91</sup> Նույն տեղում, էջ 50:

<sup>92</sup> Նույն տեղում, էջ 61:

*Տեղին է հիշել նույնպես գեղատեսիլ Լոռու զավակ Հրանտ Մաթևոսյանի խոսքերը. «Թումանյանով մենք կանք: Առանց Թումանյանի՝ մենք չկանք»<sup>93</sup>:*

*Արևմտահայաստանի կորուստը, մեկուկես միլիոն հայերի ցեղասպանությունը, Արտավազդ որդու ողբերգական մահը ցնցում են զգայուն բանաստեղծի ներաշխարհը և պատճառ դառնում անբուժելի հիվանդության:*

*Հովհ. Թումանյանը վախճանվում է 1923 թ. մարտի 23-ին Մոսկվայի հիվանդանոցներից մեկում: Արեգ որդու խնդրանքով մեծ մարդասերի սիրտը հատուկ հեղուկի մեջ դրված հանձնում են որդուն: Բանաստեղծի սիրտը Ավ. Իսահակյանի խորհրդով է թաղված հայրենի Դսեղում:*

*Թումանյանը հանգչում է Թբիլիսիի հայ գրողների պանթեոնում: Նա մենակ չէ. նրա կողքին են Բաֆֆին ու Սունդուկյանը՝ ինքը մեջտեղում: Այդ երեք մեծերը և նրանց շրջապատում եղած հայ գրողների միանման շիրիմները լուռ վկայում են, թե որքան հարուստ է եղել հայ հոգևոր կյանքը XIX դարի վերջին և XX դարի առաջին կեսին Թիֆլիսում: Ամեն հայ Թբիլիսի այցելելիս ուղղակի պարտավոր է այցելել հայ ժողովրդի ոգին մարմնավորող Հովհ. Թումանյանի սուրբ շիրիմին և ծաղիկներ դնել:*

## ОВАНЕС ТУМАНЯН – НАЦИОНАЛЬНЫЙ ДУХ АРМЯНСКОГО НАРОДА

АЭЛИТА ДОЛУХАНЯН

### Резюме

*Ключевые слова: Ованес Туманян, многожанровый, поэт, прозаик, публицист, литературовед, переводчик, общественный деятель, фольклор, баллада, четверостишие, поэма.*

Ованес Туманян (1869–1923) является тем писателем, который сопровождает армянина с детства до глубокой старости. Он родился, чтобы укрепить национальный дух армянина и внедрить в его сущность христианское человеколюбие, чтобы сохранить ярким образ армянского народа в грядущих веках. Туманян – мудрый пророк, у которого должны учиться не только армяне, но и все цивилизованные нации мира.

Многочисленные литературоведы посвящали объемистые исследования его жизни и творчеству. Следует особо выделить большой вклад академика Эдварда Джрбашяна в деле многостороннего, подробного исследования жизни и творчества Туманяна и оценки его места в перспективе армянской и всемирной литературы.

<sup>93</sup> Հ ո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. Ը ն տր ա ն ի, էջ 8:

Ов. Туманян – многожанровый писатель: поэт, прозаик, публицист, литературный критик, переводчик, фольклорист и литературовед. Среди венцов его литературного наследия следует отметить незабываемые и тематически разнообразные поэмы и четверостишия. Он также был единственным в своем роде как общественный деятель.

Ов. Туманян покоится в Пантеоне армянских писателей в Тбилиси. Посещая Тбилиси, каждый армянин просто обязан посетить святую могилу воплотившего дух армянского народа Ованеса Туманяна и возложить цветы.

## HOVHANNES TUMANYAN – THE NATIONAL SPIRIT OF THE ARMENIAN PEOPLE

AELITA DOLUKHANYAN

### S u m m a r y

*Key words: Hovhannes Tumanyan, multi-genre, poet, prosaist, publicist, literary critic, translator, public figure, folklore, ballad, quatrain, poem.*

Hovhannes Tumanyan (1869–1923) is the writer who accompanies an Armenian from his childhood to his old age. He was born to strengthen the national spirit of the Armenians and introduce Christian philanthropy into their essence, in order to preserve a vivid image of the Armenian people in the coming centuries.

Numerous literary scholars devoted voluminous studies to his life and oeuvre. Particular mention should be made of the great contribution of Academician Edward Jrbashyan to a comprehensive, detailed study of the life and work of Tumanyan and the appreciation of his place in the perspective of Armenian and world literature.

Tumanian is a multi-genre writer: poet, prose writer, publicist, literary critic, translator, folklorist and literary scholar. One of the crowns of his literary heritage is his unforgettable and thematically varied poems and quatrains. He was also unique as a public figure.

Tumanyan rests in the Pantheon of Armenian writers in Tbilisi. Visiting Tbilisi, every Armenian is simply obliged to visit the holy grave of Hovhannes Tumanyan, who embodied the spirit of the Armenian people, and to lay flowers.

---

---

XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ԳՐԱԿԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ  
ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԸ\*

ԵՎԱ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

Բանալի բառեր՝ Հովհ. Թումանյան, գրաքննադատություն, գեղագիտական սկզբունքներ, գնահատում, Լեոն, միտումնավորություն, կողմնակալություն, նոր չափանիշներ:

*1900-ական թվականների սկզբին հասարակական-քաղաքական խառնակ իրադրության, գաղափարական իրարամերժ հոսանքների միջավայրում ձևավորվում են գեղագիտական նոր տեսություններ, որոնցից ազդեցիկը շարունակում էր մնալ կուլտուր-պատմական դպրոցը, որ հայ իրականության մեջ ձևավորվել էր XIX դ. վերջերին, բայց XX դ. առաջին տասնամյակում նրա սկզբունքները դեռևս ընդունելի ու հոգեհարազատ էին հայ քննադատներից շատերին: Բհարկե, սա չի նշանակում, թե նրանք անվերապահորեն ընդունում էին փիլիսոփա, գեղագետ, գրաքննադատ Հ. Տենի տեսության հիմքում ընկած դրույթները: “Շատերը, – ինչպես նկատում է Մ. Քալանթարյանը, – յուրացնելով կուլտուր-պատմական դպրոցի այս կամ այն հատկանիշը, ունեցել են այլ ազդեցություններ և առնչություններ ուրիշ ուսմունքների հետ: Գրեթե բոլոր հայ տեսաբանները չեն բաժանել Տենի կրավորական հայացքները գրականության և արվեստի դերի վերաբերյալ”<sup>1</sup>: Ուստի զարմանալի չէ, որ ոչ միայն այլախոհ քննադատների, այլև նույն այդ դպրոցի հետևորդների միջև երբեմն ծագում էին գաղափարական, մեթոդաբանական անհամաձայնություններ, որոնք հաճախ տեղիք էին տալիս հրապարակային բանավեճերի<sup>2</sup>:*

*Գրապատմական այդ իրողության ամենասկնառու արտահայտություններից է Լեոյի “Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը” ուսումնասիրությ-*

---

<sup>1</sup> Մ. Քալանթարյան. Հայ գրականագիտության պատմություն (V–XIX դարեր), Երևան, 1986, էջ 404:

<sup>2</sup> XX դարակզբի գրական բանավեճերի պատմությունը տե՛ս Դավիթ Պետրոսյան. Գրական բանավեճերը 20-րդ դարի սկզբի հայ մամուլում, Երևան, 2007:

յունը<sup>3</sup>, որի հարուցած բանավեճերին մեկ անգամ չէ՝ անդրադարձել են ուսումնասիրողները: Այստեղ դրանք մեզ հետաքրքրում են իբրև ժամանակի գրաքննադատական միջավայրի, գեղագիտական-տեսական սկզբունքների ու բարքերի բնորոշ արտահայտություն և այդ շրջանակներում Թումանյանի ստեղծագործության արժևորում՝ իբրև տիպական օրինակ:

XX դարասկզբին հայ գրաքննադատության ասպարեզում Լեոն ճանաչված դեմք էր: Նրա ուսումնասիրություններն ու գրախոսությունները քննադատների մշտական ուշադրության կենտրոնում էին: Ամենատարբեր թեմաներով գրված հոդվածներում ծանոթ ու անծանոթ հեղինակները հիշատակում էին նրա անունն ու աշխատանքները. այլախոհները և հակառակորդները քարկոծում էին, համախոհները՝ վկայակոչում նրան՝ իբրև անառարկելի հեղինակության: Քննադատի գեղագիտական ըմբռնումներին, տեսակետներին հակադրվում էին հատկապես նոր սերնդի ներկայացուցիչները:

Հայտնի է՝ Լեոյի գեղագիտական հայացքների հիմքում ընկած է սկզբունքային այն դրույթը, թե կյանքն ու գրականությունն անբաժանելիորեն կապված են միմյանց: “Կյանքը իր հույզերը, իր խմորումներն ունի, – գրում է նա, – և գրականությունը, իբրև նրա հայելի, պիտի ցուցնե իր մեջ նրա շունչը, նրա ձգտումները, պիտի արձագանք տա նրա կոչերին ... Այստեղից ահա այն հանգամանքը, որ գրողը պիտի ականջ դնե կյանքին, հասարակական զարկերակին: Եվ մեր բոլոր լավագույն գրողները այդպես են եղել”<sup>4</sup>: Առաջնորդվելով այս հիմնական սկզբունքով՝ Լեոն աստիճանաբար որոշակիացնում է արժեքների գնահատման իր մեթոդաբանությունը:

Դեռևս 1880-ական թվականների հոդվածներում քննադատը գրականության առաքելությունը տեսնում էր ժողովրդին կրթելու, նրան բարոյական անկումից հետ պահելու, կյանքի աղետերից մաքրելու մեջ: “Գրիտիկան մեր մամուլի մեջ” հոդվածում Լեոն զարգացնում է տեսական դրույթներ կյանք-գրականություն-քննադատություն եռամիասնության վերաբերյալ, ձևակերպում հստակ չափանիշներ, որոնք պետք է պահանջել գրողից և նրա քննադատից: “Քննադատելով մի որևէ ժողովրդական գիրք, – նկատում է նա, – հարկավոր է առաջ ուսումնասիրել ժողովրդի կյանքը, նրա կազմվածքը, ոգին և սա անշուշտ հարկավոր է համ գրողի, համ էլ կրիտիկոսի համար”<sup>5</sup>: Ըստ Լեոյի՝ վերջինիս կոչումը “սուրբ է”, նա իրավունք չունի առաջնորդվելու բուրձի ազդեցությամբ և կուսակցական շահախնդրությամբ: Սակայն

<sup>3</sup> Լեոյի այս ուսումնասիրությունը մինչև առանձին գրքով լույս տեսնելը (1904, Վենետիկ, Սուրբ Ղազար) տպագրվել է 1903, 1904 թթ. Մխիթարյանների հրատարակած “Գեղունի” և “Բազմավեպ” հանդեսներում:

<sup>4</sup> “Գեղունի” (Վենետիկ, Սբ Ղազար), թիվ 1–10, 1903, էջ 51:

<sup>5</sup> “Մշակ” (Թիֆլիս), 30. VIII. 1883:

նկատենք, որ հատկապես Թումանյանի երկերին անդրադառնալիս նա հաճախ էր մոռանում իր այս “պատգամը” քննադատներին:

Իբրև սկզբունքային ուղենիշ Լեոն զարգացնում է այն միտքը, թե “մարդկային բոլոր գործերը պետք է ծառայեն մարդու օգտին, եթե չեն կամենում լինել դատարկ և անբովանդակ պարապմունք”<sup>6</sup>, ընդհանրապես՝ գրականությունը ևս պետք է ծառայի “որևէ էական օգտի”, այսինքն՝ պետք է ունենա որոշակի գաղափարական միտվածություն, որ, ինչպես ճշգրտում է քննադատը, հեղինակի գիտակցական դիտավորությունն է՝ ընթերցողին կարևոր մի միտք հայտնելու և դրանով որոշակի նպատակի հասնելու: Դժվար չէ նկատել, որ գրական միտումնավորության մասին Լեոնի դատողություններն այդպես էլ չեն ամբողջանում իբրև ավարտուն համակարգ: Մերթ այն համոզմունքն է հայտնում, թե գրողը մերկապարանոց գաղափարների քարոզիչ չէ, մերթ պնդում է, թե արվեստում առաջնայինը հասարակական օգտակարության խնդիրն է, մերթ փորձում է համատեղել դրանք այն մտքով, թե միտումնավորությունը չպետք է խանգարի գեղարվեստականությանը և այլն: Դատողությունների այս թերավարտությունը, դրան գումարած նաև մշակական միտումնավորությունը, ինչպես կտեսնենք, որոշակիորեն զգացվում են հատկապես Թումանյանի ստեղծագործության մասին նրա դիտողություններում:

Իր աշխատության մեջ Լեոն այս դիրքերից է փորձում արժևորել նաև ժամանակակից ու մոտ անցյալի հայ հեղինակների գործերը: Հիմնական հարցադրումն է՝ արդյոք գրողն ականջալուր եղել է կյանքի հասարակական ձայնին: Այս շրջանակում նրա դատողություններում որոշակի արժեք ներկայացնող շատ կողմեր կան, որ սկզբունքային նշանակությամբ գործնական կիրառություն են գտնում Լեոնի քննադատական գնահատականներում: Առհասարակ, վերջինիս ուսումնասիրությունն արժեքավոր փորձ էր այն իմաստով, որ առաջին անգամ հայ նոր շրջանի գրականության կենդանի ընթացքը ներկայացվում էր քննադատական որոշակի մոտեցումների ու հայացքների համատեքստում: Գրականություն–կյանք փոխառնչության, գեղարվեստի հասարակական դերի և դրանց հետ կապված խնդիրները կարևորում էին քննադատներից շատերը: Նրանցից, օրինակ, Ն. Աղբալյանը, Ա. Չոպանյանը, Մ. Բերբերյանը, Կ. Կուսիկյանը, Ս. Հակոբյանը և ուրիշներ, ինչ-ինչ տարբերություններով հանդերձ, ընդհանուր առմամբ նույնպես պաշտպանում էին գեղարվեստական գրականության ու ազգային-հասարակական կյանքի անտրոհելիության սկզբունքը: Սակայն Լեոն, որ տեսականորեն առաջնորդվում էր գեղագիտական այս սկզբունքներով, այնուամենայնիվ, որոշ գրողների գործերը վերլուծելիս հասնում է ձայրահեղության՝ թույլ տալով ակնհայտ սխալներ: Դա ընդունված է բացատրել “Մշակի” կուսակցական կողմնակալ դիրքորոշմամբ, որն իր ուղղակի

<sup>6</sup> “Գեղունի”, թիվ 1–10, 1903, էջ 51:

ազդեցությունն է թողնում թերթի աշխատակից Լեոյի քննադատական հայացքների և կողմնորոշումների վրա՝ կանխակալ մտեցում պարտադրելով իր համակիրների խմբին չպատկանող այս կամ այն գրողի ստեղծագործության հանդեպ: Մա, իհարկե, գրական-պատմական հայտնի իրողություն է: Բայց Լեո քննադատի թույլ տված ծայրահեղություններն ու վրիպումները բացատրվում են ամենից առաջ գրական “տենդենցիայի” մասին նրա պատկերացումների՝ վերնում ակնարկված թերավարտությամբ:

Լեոյի քննադատական հայացքներում դեռևս նստվածքներ էին մնում XIX դ. 60-ական թվականների “նախ քաղաքացի և ապա պոետ” կարգախոսից: Հենց այս հանգամանքով է պայմանավորված, որ Լեոն, բարձր գնահատելով Պատկանյան-Նալբանդյան-Շահազիզ սերնդի բանաստեղծական պաթոսը և ստեղծագործության հասարակական արժեքը, դրան հակառակ՝ թույլ, միանման ու ձանձրալի է համարում այդ սերնդին հաջորդած հեղինակների գործերը: Նրա համոզմամբ՝ ժամանակակից բանաստեղծն անհաղորդ է մնում հասարակական տրամադրություններին՝ երգելով սեր, գարուն, թախիծ և այլն: Հ. Հովհաննիսյանին, Ա. Ծատուրյանին, Լեոենցին, Լ. Մանվելյանին համարում է “սենյակի” բանաստեղծներ, որոնց գործերում, ըստ քննադատի, պակասում են վեհ բնությունը և այդ բնության մեջ ապրող մարդը:

Հովհ. Թումանյանին անվանելով “լերան երգիչ”՝ գրում է, թե նրա բանաստեղծական “բեղմնավոր թափը” կանգ է առել բանաստեղծությունների երկրորդ գրքից (1892) հետո. “Այն ժամանակից պ. Թումանյան անշարժ է, առաջ չէ գնում, այլ զբաղված է մի ծանր գործով – բռնաբարում է իր շնորհքը՝ հարկադրելով իրան գրել ոտանավորներ: Գրել ինչ էլ լինի, ինչպես էլ լինի, գրել առանց աջ ու ձախ նայելու”<sup>7</sup>: Այս անվերապահ հայտարարությունը Լեոն փորձում է հիմնավորել յուրօրինակ տրամաբանությամբ. լեռնաստանում ծնված, բնության հրաշքներով ներշնչված բանաստեղծը “համով-հոտով” երգեր է գրել այնքան ժամանակ, քանի դեռ կապված է եղել իր մանկության օրրանին, հարազատ ժողովրդին. քաղաքային կյանքը, սակայն, շնորհագուրկ է արել նրան:

Անկախ արտահայտության ձևից՝ Լեոյի դիտողություններում իրավացիության որոշ բաժին, այնուամենայնիվ, կա. իրոք, “Շունն ու Կատվից”, “Գութանի երգից”, “Հին օրհնությունից” հետո առժամանակ Թումանյանի քնարերգության մեջ զգալի որակ են կազմում 1880-ական թվականների քաղաքացիական մոտիվները, որոնք այնքան էլ չէին համատեղվում նրա բանաստեղծական բուն նկարագրի հետ, թեև թումանյանական տաղանդի ցոլքերն այստեղ էլ դուրս էին ցայտում տողերի արանքից, ինչը չի նկատում կամ չի ուզում նկատել քննադատը: Նա չի զգում նաև, որ հա-

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 62:



կասում է ինքն իրեն՝ իր քամահրած ոտանավորներում չնկատելով այն “տենդենցիան”, որ ինքն առաջնային էր համարում ամեն մի բանաստեղծի համար:

Բայց քննադատը հակված չէ իր վերլուծությունները տանելու այդ ուղով: Նա ունի գեղագիտական “տենդենցիայի” սեփական ըմբռնումը, որը՝ իբրև սևեռուն գաղափար, ուղղություն է տալիս նրա քննադատական բոլոր դիտարկումներին: Դա երևում է նաև քննադատի հետագա դատողություններից, որոնք ոչ միայն հակասում են միմյանց, այլև տեղ-տեղ աչքի են ընկնում ընդգծված միտումնավորությամբ: Մերթ նա անուղղակիորեն հաստատում է՝ Թումանյանը տաղանդ է, որ մարգարիտներ են “Շունն ու Կատուն”, “Գութանի երգը”, “Ախթամարը”, նաև “բնության նկարագրությունների մեջ” չունի իրեն հավասարը, մերթ էլ նկատում՝ նա “եղել է միակողմանի, սահմանափակ”: “Բայց մարդը, մարդը – ահա ինչը չէ հաջողվում պ. Թումանյանցին, – համոզված պնդում է քննադատը:– Լեռների նկարագրության մեջ ամեն մի բարձր թռիչք, ամեն մի չափազանց գունավորում ներելի է, որովհետև բնությունը, այնուամենայնիվ, այդ նկարագրություններից էլ բարձր ու վեհ, խորհրդավոր, կախարդիչ է: Բայց ահա գալիս են մարդիկ: Սրանց էլ պ. Թումանյանց նկարագրում է լեռների պես. ամեն տեղ հսկաներ, ամեն տեղ “աժդահաներ”, հասարակ, սովորական մարդիկ չկան”<sup>8</sup>:

Այս վերջին դիտողությունն առնչվում է թումանյանական գեղագիտության հիմնական հասկացություններին. ինչո՞ւ նրա հերոսները “աժդահաներ”, “հսկաներ” են, ինչո՞ւ “հասարակ”, “սովորական” մարդիկ էլ նրա ստեղծագործական աշխարհում իրոք բացառիկ գեղագիտական կշիռ ունեն. սրանք տարողունակ հարցեր են, որոնք այսօր էլ հատուկ ուշադրություն են պահանջում: Դա Թումանյանի բանաստեղծական մտածողության յուրահատկությունն էր, որով ձևավորվում էր նրա ստեղծագործական մեթոդը և լիովին չէր համատեղվում տեսությանը հայտնի որևէ մեթոդի հետ: Գրականագիտության մեջ նկատվել է<sup>9</sup>, որ նա իր ողջ ստեղծագործությամբ հյուսում էր իր երկրի ու ժողովրդի բանաստեղծական էպոսը. հերոսները, սովորական մարդիկ լինելով, նրա էպիկական համակարգում ձեռք են բերում արտասովոր հատկություններ: Սա հատուկ քննության խնդիր է, որ չի մտնում ներկա հոդվածի նպատակների մեջ: Նշենք միայն, որ նրա ստեղծագործական մտածողության էպիկական տարերքը ժամանակին նկատել և ըստ արժանվույն գնահատել

<sup>8</sup> Նույն տեղում:

<sup>9</sup> Հ. Օշակյան. Ռուսահայ գրականություն. քննադատությունը անոնց մեջ. Գ. “Գարուն” ալմանախ. – “Հայ գրականություն” (Զմյուռնիա), № 4, 1/14 նոյեմբեր, 1912, Է. Ջրբաշյան. Թումանյանի պոեմները, Երևան, 1980, Հ. Թամրազյան. Հովհաննես Թումանյան. բանաստեղծը և մտածողը, Երևան, 1995:

է Հակոբ Օշականը<sup>10</sup>, թեև առանց խորանալու իր դիպուկ կոռահման մանրամասների մեջ: Լեոյին հասու չեղավ Թումանյանի ստեղծագործական նկարագրի այդ յուրահատկությունը: Եթե քննադատը բանաստեղծի ստեղծագործության հանդեպ իր ընդգծված ժխտողական պահվածքը փորձեր հիմնավորել իր նախընտրած օգտապաշտական գեղագիտության տեսակետից, դա կարելի էր ընդունել իբրև սկզբունքային տարաձայնություն: Բայց նա Թումանյանի հերոսների և նրանց շրջապատող աշխարհի մասին ուղղակի գրում է, թե այդ հերոսները “անհեթեթության հասնող” հսկաներ են, ոչ հասարակ մարդիկ, իսկ նրանց միջավայրը՝ ոչ համապատասխան իրանց հերոսական բնավորությանը: “Այդպիսի կյանք չկա, – եզրակացնում է քննադատը, – և դա պ. Թումանյանի դժբախտությունն է ... Եվ դուրս է գալիս այն, ինչ անվանում են “լեռքը որոտաց և մուկ ծնեց”<sup>11</sup>:

Իր այս “դիտարկումները” հիմնավորելու համար Լեոն օրինակ է բերում “Անուշը”: Քննադատի կարծիքը զարմանք է հարուցում. պոեմի հիմքում ընկած Սարո-Անուշ-Մոսի պուժետային գծի զարգացումը նա համարում է սովորական մի պատմություն, որի ներկայացման համար իբր կարիք չկար դիմելու “երկնահույ լեռներին”, ժողովրդի վիճակի երկարուձիգ նկարագրությունների: Իհարկե, չնոռանանք, որ քննադատության թիրախում պոեմի հին տարբերակն էր (1892, Մոսկվա), իսկ նոր տարբերակը, հավանաբար, դեռևս ծանոթ չէր Լեոյին: Սակայն սա չի նշանակում, թե պոեմը զուրկ էր գեղարվեստական արժանիքներից, որոնց մասին քննադատը լռում է: Այնուամենայնիվ, հանուն արդարության պիտի ասել, որ բնության ձգձգված նկարագրությունները, իրոք, թուլացնում էին պոեմի գեղարվեստական անթերի կառույցը, որին բանաստեղծը պիտի հասներ վերջին տարբերակում: Առաջին տարբերակում այդ բացը նկատել էին նաև ուրիշ քննադատներ, և հեղինակը, անկասկած, աչքի առաջ է ունեցել այդ վերջին տարբերակը մշակելիս:

Առհասարակ, անհասկանալի, եթե չասենք հնարովի են այն չափանիշները, որոնցով Լեոն փորձում է գնահատել Թումանյանի պոեմները: Նա համառորեն չի ուզում նկատել այն, ինչ առանձնահատուկ էր դարձնում թումանյանական պոեմներում վերստեղծված աշխարհը: Այսպես՝ “Լոռեցի Սաքոն” պոեմի մասին կրկնում է տարիներ առաջ հնչեցրած ծանոթ տեսակետը. “Բանաստեղծը չէ նկատում, որ Սաքոն իսկապես մի ողորմելի վախկոտ է, որ ծիծաղ է հարուցանում: Հոգեբանություն չկա, վիթխարի հերոսի այդքան խղճուկ վերջը բավականաչափ բացատրված չէ, արդարացրած չէ: Գոնե պ. Թումանյանց հիշեր, որ ժողովրդական առասպելների մեջ հերոսները կոնիվ են սկսում դեռի դեմ, երկար մրցությունից հետո են ընկճվում: Ոչ մի աշխատանք՝ սեփական ձեռքով նկարած հերոսին պատշաճ հոգեկան աշ-

<sup>10</sup> Հ. Օշական. Ռուսահայ գրականություն. քննադատությունը անոնց մեջ. Գ. “Գարուն” ամսանախ. – “Հայ գրականություն”, № 4, 1/14 նոյեմբեր, 1912, էջ 16–23:

<sup>11</sup> “Գեղունի”, թիվ 1–10, 1903, էջ 62:

խարհի մեջ զետեղելու համար: Մի խոսքով, պ. Թումանյանց մարդ է տեսել լեռներում և չգիտե, թե ինչ անե նրան<sup>12</sup>: Մաքոյի խելագարության՝ հոգեբանորեն պատճառաբանված չլինելու մասին շատերն էին խոսում՝ սկսած Ղ. Աղայանից<sup>13</sup>, տեսակետ, որ վաղուց արդեն հիմնավորապես հերքվել է գրականագիտության կողմից: Ուշադրություն պետք է դարձնել միայն մի դիտողության վրա: Լեոյին, քննադատներից նաև մի քանիսին թվացել է, թե Թումանյանը, հանձին իր “ածղահա” հերոսի, կամեցել է կերտել բանահյուսական պատումների ոճով էպիկական կերպար, բայց չի կարողացել նրան դնել համապատասխան արարքների կամ հոգեբանական վիճակների մեջ, մի բան, որը, ինչպես հայտնի է, կապ չունի թումանյանական մտահղացման հետ: Այս թյուրիմացությունից է գալիս Լեոյի վերջին հեզնական դիտարկումը, թե “պ. Թումանյանց մարդ է տեսել լեռներում և չգիտե, թե ինչ անե նրան”<sup>14</sup>:

“Հոգի նկարելու անկարողության մի օրինակն էլ” Լեոն համարում է “Մերժած օրենքը”: Պոեմի նյութը որակում է “լավ”, սակայն “բավական հին ու քաշքշուկ”, որ, ինչպես խոստովանում է նաև հեղինակը, ներշնչված է Լերմոնտովի “Մծիրիից”: Քննադատի կարծիքով՝ Թումանյանը երկի սկիզբը “շատ լավ է տանում”, պատմելի լավ գեղեցիկ է, սակայն երիտասարդ արեղայի և ծեր վանահոր զրույցը ներկայացնելիս “ընկնում է ինչ-որ մութ փիլիսոփայությունների, դատողությունների մեջ և չէ կարողանում սիրով վառված արեղայի տիպը ամբողջացնել”<sup>15</sup>:

Լեոն Թումանյանի պոեմը համեմատում է “Մուրճում” տպագրվող մի ուրիշ բանաստեղծի՝ Արշալույս Մխիթարյանի “Աբեղա” պոեմի հետ և նախապատվությունը տալիս վերջինիս: “Մենք տեսանք պ. Թումանյանի արեղային, – բացատրում է քննադատը, – որ վանքում սիրահարվում է և թողնելով իր սքեմը, գնում է իր անձնական երջանկությունը գտնելու: Պ. Մխիթարյանն էլ ունի “Աբեղա” անունով մի ոտանավոր: Բայց ի՞նչ տեսակ արեղա է դա: Մի երիտասարդ մարդ, որ ունի իր սիրած կույսը: Նա շրջում է աշխարհում, տեսնում է մարդկանց դժբախտությունը և փոխվում է. եսական սերը խլանում է, երիտասարդը մոռանում է կույսին, զգում է, որ ավելի վեհ, ավելի մեծ է սերը դեպի տանջված մարդիկ և գնում է արեղա դառնալու, որպեսզի իր ուժերը նվիրե հարստահարվածին, անարզվածին, որպեսզի աշխարհի անարդարության զոհերին սիրե: Որքա՞ն տարբերություն ...”<sup>16</sup>: Կարծում ենք՝ մեկնա-

<sup>12</sup> Նույն տեղում:

<sup>13</sup> Հո վ. հ. Թումանյան. Երկերի լիակատար ժողովածու (այսուհետև՝ ԵԼԺ) տասը հատորով, հ. 9, Երևան, 1997, էջ 23–24: Տե՛ս Ե. Մնացականյան. Թումանյանի “Լոռեցի Մաքոն” ժամանակի գնահատմամբ. – “Հայկազեան հայագիտական հանդես” (Պեյրութ), 2016, էջ 431–444:

<sup>14</sup> “Գեղունի”, թիվ 1–10, 1903, էջ 62:

<sup>15</sup> Նույն տեղում:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 65:

բանություններն ավելորդ են: Խնդիրն այն չէ, որ “Մերժած օրենքը”, իրոք, Թումանյանի լավագույն ստեղծագործություններից չէ, և նա իր երկրորդ ժողովածուում առաջին անգամ տպագրելուց հետո այդ գործին այլևս չի անդրադարձել, այլ այն, որ Լեոն բանաստեղծի այս բոլորովին այլ կարգի մտահղացումը դիտում ու գնահատում է օգտապաշտական գեղագիտության իր անփոփոխ մեկնակետից:

Այս հայեցակետի մի այլ շրջվածքով է դիտարկում “Մարոն” (1892)՝ հեղինակին մեղադրելով իր դժբախտ հերոսուհու ճակատագրի հանդեպ անտարբերության մեջ: “Տանջվեց մեռավ: Պատրաստ է ամեն ինչ և շատ հեշտ է վերջակետ դնել: Ահա թե որքան խակ ու տհաս է լերան երգիչը”<sup>17</sup>, – իր որդեգրած ոճով եզրակացնում է քննադատը: Լեոն չնկատելու է տալիս, որ՝ ա) Թումանյանը բոլորովին էլ անտարբեր փաստագրող չէ. նա պոեմի առաջին տողերից իսկ էպիկական ոճով պատկերում է օբյեկտիվ իրականությունը, սակայն “անտարբեր” թվացող այդ տողերում ակնհայտ երևում են հեղինակի խոր վիշտն ու կորստի ցավը Մարոյի ճակատագրի հանդեպ, բ) ստեղծագործության գաղափարը չի պարստադրում հերոսուհու հոգեկան աշխարհի մանրակրկիտ նկարագրություն, գ) իննամյա Մարոյի ներաշխարհի հոգեբանական հնարավոր դրսևորումները Թումանյանը տալիս է ոչ թե մերկապարանոց նկարագրությունների, այլ գեղարվեստական պարզ, բայց և անօրինակ պատկերների միջոցով: Լեոն ակնկալում է Մարոյի հալածական կյանքի մանրամասների, հոգեկան աշխարհի բարդ տեղաշարժերի նկարագրություն, որն ամենևին էլ բնորոշ չէր լինի իննամյա մի աղջնակի. դժբախտ Մարոն ընդամենը երկու կարճ նախադասությամբ բացում է իր մանկական հոգին. “Ես սիրում եմ մայրիկին, Ես չեմ ուզում լինել կին”<sup>18</sup>:

Պոեմների “մեղադրականներից” հետո Լեոն անցնում է Թումանյանի “ձախ ձեռքով գրած” բանաստեղծություններին: Թիրախում հայտնվում է “Կուրծքս երբեմն ետ է գալիս” բանաստեղծությունը, որի մասին խմբագիր, հրապարակախոս Գրիգոր Արծրունու՝ դեռևս 11 տարի առաջ գրած ֆելիետոնային տրամադրությունը դեռ ուղեկցում էր մշակական քննադատին:

“Ոտանավորների” շարքին դասելով նաև “Պոետն ու Մուսան”՝ Լեոն այս պոեմը բնութագրում է համաձայն իր այն կանխադրույթի, թե քաղաքային միջավայրում սպառովել են պոետի ստեղծագործական հնարավորությունները: “Դա քաղքենի բանաստեղծության ամենաանհաջող մի նմուշ է, – գրում է նա, – թեև ունի լավ մշակված արտաքին ձև: Ձևը, սակայն, ոչինչ է. ոչ մի փայլ, ոչ մի շպար չէ կարող փոխարինել բովանդակությունը: Պ. Թումանյանց այդտեղ երագում է բանաստեղծի երջանկությունը կատարյալ անգործության մեջ: Բանաստեղծը ոչ մի պարապմունք չպիտի ու-

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 64:

<sup>18</sup> Հո վ հ. Թ ու մ ա ն յ ա ն. ԵԼԺ, հ. 8, Երևան, 1989, էջ 12:

նենա, նա երկնքի բնակիչ է, նա արև է մարդկության համար”<sup>19</sup>: Դարձյալ մի կողմ թողնելով շարադրանքի հեզնական տոնը՝ եթե ըստ էության քննենք Լեոյի դիտողությունները, ապա տարբեր երանգափոխումներով դրանցում կարելի է հայտնաբերել քննադատի նույն սկզբունքային պատկերացումը գրական “տենդենցիայի” օգտապաշտական միտումնավորության վերաբերյալ:

Նախ գեղարվեստական ձևի խնդիրը: Լեոյի ժամանակներում վաղուց արդեն հայտնի էր, որ արվեստում բովանդակություն և ձև հասկացություններն առանձին-առանձին անհիմաստ են. դրանց անբաժանելի միասնությունն է բնորոշում նաև գեղարվեստական գրականության յուրահատկությունը. այստեղ ձևը միաժամանակ բովանդակություն է, ինչպես և բովանդակությունը՝ ձև: Այս իրողությանը Լեոն չէր կարող անտեղյակ լինել: Բայց այդ տարիներին նրա հակաթումանյանական մտասնեռումը և օգտապաշտ գրականագետի աշխարհատեսությունը նրան թույլ չէին տալիս տեսնել, որ գեղարվեստականության այդ բարձրագույն պայմանը հետևողականորեն իրականացնում էր հենց Թումանյանը: Իսկ արվեստագետի ստեղծագործական ազատության խնդիրը, որը նաև բանաստեղծի պոեմի առանցքային գաղափարներից մեկն է, պարզապես զոռեկացվում է քննադատի կողմից: Եվ իր վերջին դիտողությամբ Լեոն տասնամյակների հեռվից ձայնակցում է նատուրալիստներին ու առաջին ռեալիստներին, որոնք հենց այդպես էին հիմնավորում՝ ումանտիզմն ապրել է իր դարը: Բնչպես նրանց, այնպես էլ նոր ժամանակների քննադատի մոտեցումը միակողմանի էր, որովհետև անկախ ժամանակից, մարդկանց՝ գեղեցիկ գաղափարներով ու բարձր իդեալներով առաջնորդելը միշտ էլ արվեստագետի առաքելական կոչումն է:

“Պ. Թումանյանցին ամեն մեկը շատ լավ է տեսնում,– շարունակում է Լեոն իր “վերլուծությունները”.– գյուղում, լեռան վրա լավ երգիչ, բնության երգիչ. միշտ հրճվող, միշտ լավատես, միշտ չափազանցնող: Չէք գտնի նրա մեջ որևէ դժգոհություն գյուղական կյանքից, թեև այդ կյանքը խավար է, թեև նախապաշարմունքները, սոցիալությունը տանջանքների աշխարհ են դարձնում այդ կյանքը: Իսկ քաղաքում՝ իր սենյակի մեջ, նույն երգիչը ոտանավոր գրող է, պառնասական շինծու և անհիմն գոռոզության բանաստեղծ, առանց իդեալի, առանց առաջնորդող աստղի, միշտ ճնշված այն ճշմարտության տակ, որ ինքն էլ չգիտե, թե ինչ է ցանկանում”<sup>20</sup>:

Նախ ամեննին էլ իրավացի չէ քննադատը, թե գյուղական կյանքի, միջավայրի, կենցաղի տխուր կողմերը ներկայացնելիս անգամ “չէք գտնի նրա մեջ որևէ դժգոհություն”: Տարիներ անց այսպես պիտի դատեին Թումանյանի մասին մարքսիստ

<sup>19</sup> “Գեղունի”, թիվ. 1–10, 1903, էջ 64:

<sup>20</sup> Նույն տեղում:

քննադատները<sup>21</sup> նրա ողջ ստեղծագործությունը բնութագրելով որպես «անցյալի մեծարանք» կամ իդեալականացում: Իհարկե, Լեոյի դիտողության իմաստն այլ էր՝ ամեն կերպ սրել հակադրությունը գյուղաշխարհի երգչի և, իր բառով ասած, «քաղքենի» բանաստեղծի միջև: Իրական «շինծուն», ինչպես Լեոն որակում է Թումանյանի, այսպես կոչված, «քաղաքային» ոտանավորները, հենց իր քննադատի վարկածն է. այժմ ոչ ոք չի կասկածում, որ Թումանյանի բազմաժանր ու բազմաշերտ ստեղծագործությունն ամենից առաջ բնութագրվում է իր բացառիկ միասնականությամբ: Ինչ վերաբերում է այն դիտողությանը, թե գյուղից ու բնությունից իբր հեռացած բանաստեղծը գրում է պառնասական «շինծու ոտանավորներ»՝ «առանց իդեալի, առանց առաջնորդող աստղի», պետք է ասել, որ հենց իդեալի աստղն է առաջնորդել Թումանյանին առաջին ոտանավորներից մինչև քառյակները: Դա թումանյանագիտության կենտրոնական հարցերից է, որին անդրադարձել են գրեթե բոլոր ուսումնասիրողները՝ յուրաքանչյուրն իր մեկնաբանությամբ, և այն վերջավոր ու միանշանակ լուծում չունի, քանի որ արվեստի կատարյալ ստեղծագործությունը նորովի է բացվում ամեն նոր ուսումնասիրողի համար:

Ուշագրավ է, որ 1883 թ., դեռևս աննախապաշար երիտասարդ քննադատ Լեոն, առարկելով ամեն ինչ սև գույնով տեսնելու հակամետ քննադատներին, գրում էր. «Ինչ շարժառիթ կա խեղդել, ոչնչացնել այդ տեսակ հեղինակությունները, ծաղրելով նրանց հասարակության առջև, իսկել հեղինակի եռանդն ու ճիգը ծառայել մեր գրականության օգտին, երբ այդ հեղինակությունները չունեն ոչ մի շոշափելի պակասություն: Նրանց դեմ ծաղրական կրիտիկան իզուր է, ունի միակ նպատակ – ծառայել կուսակցության, իսկ սա մեծ անարդարություն է»<sup>22</sup>: Այսպիսի ողջամիտ պահվածքը հեղինակի գործնական-քննադատական ելույթներում աստիճանաբար տեղի է տալիս կողմնակալ միտումնավորությանը: Դրա վկայություններից է նրա «Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը» ուսումնասիրությունը, որ գրվել է մինչև «Բանաստեղծություններ» երրորդ (1903) ժողովածուի լույսընծայումը, այսինքն՝ դիտողությունները վերաբերում էին բանաստեղծությունների առաջին (1890) և երկրորդ հատորներին:

Թումանյանագիտության մեջ բազմիցս նշվել է, որ թե՛ առաջին և թե՛ երկրորդ ժողովածուներում բանաստեղծը դեռ որոնումների մեջ էր, լիովին չէր գտել իրեն. պատահական չէ, որ եթե երկրորդ ժողովածուն լույս տեսավ առաջինից ընդամենը երկու տարի հետո, ապա երրորդ ժողովածուն հրատարակվեց ավելի քան մեկ տասնամյակ անց: Բայց դա չի նշանակում, թե նախորդ երկու ժողովածուները թուման-

<sup>21</sup> Դ ավ ի թ Ա ն ա ն ու ն. Անցյալի մեծարանքը. – «Գարուն» գրական-քննադատական շաբաթաթերթ, գիրք III, Մոսկվա, 1912, Հ. Մ ու Ր ի ս ա թ յ ա ն. Դարձյալ գրական քննադատության առիթով. – «Մշակ», 15. V. 1913, 16. V. 1913:

<sup>22</sup> «Մշակ», 31. VIII. 1883:

յանական հանճարի խորթ պտուղներ էին: Դրանք, անխուսափելի պակասություններով հանդերձ, վկայում էին՝ հրապարակ է եկել արտասովոր ձիրքերով օժտված մի բանաստեղծ, ում անմիջապես նկատեցին և ըստ արժանվույն գնահատեցին հասկապես առաջին գրքի քննադատները՝ Մ. Աբեղյանը և Լ. Մանվելյանը: Լեոն իր ուսումնասիրության մեջ բոլորովին անտեսում է դա: Հայացքների կարծրատիպը, կողմնակալությունը խանգարում են նրան լինել ավելի շրջահայաց ու ողջամիտ, իսկ նախաբանում նա խոստովանության պես գրում է, որ քննադատությունն ամենուր անհատական բնույթ ունի և հենվում է անձնական տպավորությունների վրա, իսկ դրանք կարող են լինել բազմատեսակ ու ոչ օբյեկտիվ:

Կանխակալությունը, իրոք, տարածված էր XX դարասկզբի գրական կյանքում: Շիրվանզադեն «Ներկա հայ մամուլը» խորագրով հողվածում (ստորագրել է՝ Մենավոր) ցավով արձանագրում է հայ իրականության մեջ հաճախ հանդիպող այնպիսի երևույթներ, ինչպիսիք են գրավոր խոսքի, մամուլի անկումը, հրապարակախոսության և քննադատության կուսակցականացված կամ անհատականացված բնույթը. «“Մերն է, կպաշտպանենք, մերը չէ, կցեխոտենք”, սհա այն եղկելի սկզբունքը, որով դեկավարվում են բոլոր մեր հանդեսները գրեթե առանց բացառության»<sup>23</sup>: Խոսքը, սակայն, ավարտում է հուսադրական շեշտով. «Բարեբախտաբար մեր գուտ գրականությունը այնքան էլ սերտ կապ չունի մեր ակնարկած մամուլի հետ: Նրա կարևոր ուժերը գրեթե առանց բացառության հեռու են գորտերի ճահճից ...»<sup>24</sup>:

Պատկերը գրեթե նույնն է 1903 թ.: «Գրական անտերություն» հողվածում Գ. Լուսինյանց ստորագրությամբ հեղինակը հայտարարում է, որ հայ իրականության մեջ տիրում է գրական անարխիան, երբ «օղի բարձր խավերում սավառնող արծվի մեջքին կպած ճանճը իրեն արծիվ է երևակայում, երբ գորտն ուզում է հավասարվել ցուլին, երբ քոթոթն անպատիժ հաչում է փղի վրա ...»<sup>25</sup>: Ըստ հողվածագրի՝ մտահոգիչն այն է, որ այդ երևույթները շղթայակապ են, մեկի գոյությունը պայմանավորվում է մյուսի առկայությամբ: Մնկի պես աճող ինքնակոչ բանաստեղծների գրվածքները մինչև գրքույկով տպագրվելն անցնում են այս կամ այն հանդեսի կամ թերթի խմբագրության բովով: Վերջինս պատասխանատվություն է կրում իր տպագրած յուրաքանչյուր նյութի համար, ուստի և մեծ եռանդով պաշտպանում ու գովազդում է այն: Գ. Լուսինյանցը չի ժխտում, որ գրական տաղանդները ևս, օրինակ՝ Նեկրասովը, այդ ճանապարհով են ի հայտ եկել, բայց և նրա կողքին հանդես են եկել բազմաթիվ անտաղանդ Նեկրասովներ, որոնք հեռացվել են ասպարեզից՝ շնորհիվ լուրջ կրիտիկայի: Ուրեմն լուրջ խնդիր կա. տպագրված յուրաքանչյուր բառախաղ, վերաշարադրանք, հայհոյանք չպետք է ընկալել իբրև քննադատություն. «Դրանք (խոսքս

<sup>23</sup> «Լուսնա» (Թիֆլիս), 1902, № 6, էջ 277:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 279:

<sup>25</sup> «Լուսնա», 1903, № 3, էջ 248:

բացատրությունների մասին չէ) քննադատներ չեն, այլ գրական ստահակներ, քինադատներ, արձագանք տվող դատարկ կարասներ: Մատենախոսություն վերնագրի տակ կարդալով անմիտ բացականչություններ, հանդուգն դատավճիռներ, գողացած նախշուն ֆրագներ ու հայհոյանքներ, մի թե դրանց հեղինակների տեղ դուք չեք կարմրում ... Տպագրական խոսքը իրենց ոչնչությունը տարբեր դիմակների տակ թաքցրածների ձեռքում մանրացույցի դեր է կատարում. նրանք մանրացնում, ոչնչացնում են ամենքին, որպեսզի խոշորանա իրենց ամբարտավան եսը<sup>26</sup>:

Ժամանակի “կադապարային” քննադատության դեմ է բարձրաձայնում Վ. Փափագյանը “Մեր կադապարային քննադատները (“Բանբեր հայ գրականության և արվեստի” հանդեսի թիվ 1-ի առիթով)” հոդվածում: Դարձյալ մատնանշվում է “թայֆայական” այն հոգեբանությունը, որ թույլ չի տալիս ազատ և արդարամիտ վերաբերմունք դրսևորել բոլոր նրանց նկատմամբ, ովքեր գերծ են կադապարային մտածողությունից: “Անշարժ մնացող գրականությունը տարիների ընթացքում ստեղծում է նաև իր նման ընթերցողներ ...,- բացատրում է հեղինակը:- Այդ տեսակ ընթերցող հասարակությունը շրջանակ է դնում իր հասկացողությունների և մտավոր պաշարի շուրջը՝ շնորհիվ ընթերցանության նյութ տվող լրագիրների և գրքերի. շրջանակ դնելուց հետո, ունենում է իր պատգամախոս դրագոնը<sup>27</sup>, որի ամեն մի խոսքը նվիրական է. ունենում է կադապարային արտահայտություններ, մտածություններ և միայն կադապարած գրականության պահանջ. որից դուրս որևէ նոր բան սուկացնում է նրան<sup>28</sup>:

Վ. Փափագյանը վրդովվում է հատկապես այն քննադատների մտածողությունից, որոնք չզիտեն, թե որտեղ և ինչպե՛ս պիտի գործադրեն պարզ, ժողովրդին մատչելի լեզվով գրելու պահանջը: Կադապարային միակողմանիությամբ էլ քննադատները, մասնավորապես, Միամանթոյի ստեղծագործություններում փայլող արևմտահայերենի “խորունկ ու վսեմ”, “բարձր” արտահայտությունները համարում են բառերի կուտակում: Նրա արվեստը բարձրացնելու և արժևորելու արդարացված մղումով տարված՝ Փափագյանն ինքն էլ հասնում է ծայրահեղության՝ անհարկի համեմատության մեջ դնելով երկու անհամատեղելի գեղարվեստական աշխարհներ՝ Միամանթոյի և Թումանյանի: Վերջինիս “Պանդուխտ եմ, քույրիկ” բանաստեղծությունը, կարծես ձայնակցելով Լեոյին, համարում է “սովորական”, “միալար ջութակի պես հնչող ձայնով”, “կադապարած” լեզվով գրված մի ոտանավոր: Այս առումով քննա-

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 252:

<sup>27</sup> Ամենայն հավանականությամբ, Փափագյանը դրագոն/դրակոն բառը կիրառում է փոխաբերաբար՝ նկատի ունենալով մարդկանց, ովքեր առասպելական թևավոր վիշապների պես բերաններից կրակ են ժայթքում և անհիմն ու անողորմաբար քննադատում այն, ինչ չեն կարողանում ըմբռնել:

<sup>28</sup> “Տարագ” (Թիֆլիս), 1903, № 34, էջ 302–303:



դատը նույն հարթության վրա է դնում նաև Ալ. Ծատուրյանի, Ավ. Բսահակյանի գործերը: “Բացառություն շատ քիչ կա, – բացատրում է նա. – կադապարը անփոփոխ է, թեթև ծոմումներով, բայց նույն ձևերով”<sup>29</sup>: Ժամանակի գրական արևելահայերենը համարելով “աղքատիկ, ողորմելի” դրան հակադրում է արևմտահայերենի լեզվական ճոխությունը, արտահայտությունների ու պատկերների հարստությունը՝ իբրև հակադիր բևեռ ընդգծելով հատկապես Թումանյանի լեզուն: Ահա այսպիսի դեպքերում է, որ ինչպես բացասման, այնպես էլ հաստատման կիրքը, երբ հասնում է ծայրահեղ աստիճանի, կարող է հանգեցնել անհեթեթությունների: Իրականում հանգիստ ու հավասարակշռված դատող Վ. Փափագյանը շատ վկայություններ է թողել, որ ինքը բարձր է գնահատում Թումանյանին, ազգային պատկերները պարզ ու վսեմ ձևերի մեջ ներկայացնելու նրա արվեստը:

Գործող քննադատներից դարասկզբի գրական կյանքի նոր տեղաշարժերը լավ էր նկատում ու բնութագրում հատկապես գրականագետ, քննադատ Մինաս Բերբերյանը՝ ինչպես գրական-պատմական, այնպես էլ տեսական պլանով: “Գրականություն և կյանք” հոդվածի 1-ին մասում հեղինակը բարձրացնում է քննադատության մեջ գեղարվեստական արժեքների գնահատման լուրջ չափանիշների խնդիրը: Ողջունելով մամուլում նկատվող առանձին աշխուժությունը՝ միաժամանակ արձանագրում է, որ ընթերցասեր հասարակությանը պատշաճ ձևով ու չափով չի մատուցվում իրական գեղարվեստ: Ավելին, հաճախ եղած ներուժն էլ ներկայացվում է իբրև ոչ բարձրարժեք, խոտելի: Իբրև օրինակ հիշում է “Մշակի” գրական քաղաքականությունը, հատկապես Լեոյին, ով գեղարվեստական արժեքների գնահատման բարձրագույն չափանիշ էր ընդունում “տենդենցիան”: Վիճարկում է դրանից բխող նրա այն տեսակետը, թե գեղարվեստական երկն անպայման պետք է հասարակական խնդիրներ արժարժի: Քննադատի մտահոգությունն է հարուցում այն, որ ընթերցողը սխալ կարծիք կարող է կազմել ժամանակակից գրականության մասին, և դեռևս չկա մեկ այլ ծանրակշիռ կարծիք, “որ ցրեր նրա միակողմանի, շատ անգամ միտումական դատողությունները և վճիռները այս ու այն գրվածքի, այս ու այն հեղինակի մասին”<sup>30</sup>:

Հոդվածի երկրորդ մասում Բերբերյանը, ի թիվս այլ հարցերի, ցավով նկատում է, որ քննադատությունը շատ դեպքերում դեռ շարունակում է առաջնորդվել անձնական “ճաշակով” և ոչ հիմնավոր գնահատումներ տալ այս կամ այն հեղինակի այս կամ այն ստեղծագործությանը: Խոսքը մասնավորեցնելով “բազմավեպցիների” շուրջ՝ նկատում է նրանց կողմնակալ և աչառու վերաբերմունքը, օրինակ՝ Հովհ. Թումանյանի բանաստեղծությունների երրորդ ժողովածուի նկատմամբ: Քննադատ-

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 303:

<sup>30</sup> “Լուսն”, 1904, № 2, էջ 186:

տր տարակուսանք և զարմանք է հայտնում բանասեր, խմբագիր, Մխիթարյան միաբանության անդամ Մկրտիչ Պոտուրյանի գրախոսականի կապակցությամբ. «Լույս տեսավ Հովհ. Թումանյանի բանաստեղծությունների ժողովածուն, որի մեջ այնքան տաղանդ է զգացվում, որքան բոլոր տարիների «Բազմավեպի» բանաստեղծությունների մեջ չկա: Հովհ. Թումանյանի տաղանդը ուրանալ անկարելի է: Ճաշակ չպետք է ունենաս, որ Հ. Թումանյանի բանաստեղծությունները (չեմ ասում բոլորը, այլ ընդհանուր առմամբ, լավ է ասենք նրա «քնարը»-ը) չհավանես: Բայց «Բազմավեպը» առանձին կարծիք է հայտնում»<sup>31</sup>: Համապատասխան քաղվածքներ կատարելով Պոտուրյանի հոդվածից՝ քննադատը վիճարկում է նրա մի շարք, իր կարծիքով, անհիմն դիտարկումներ՝ դրանք համարելով ոչ լուրջ քննական մտեցման, բանաստեղծի ստեղծագործությանը լավ ծանոթ չլինելու հետևանք: «Ու այս կիսաձադրական, կիսահեզնական ոճով գրված է ամբողջ հոդվածիկը,– արձանագրում է Բերբերյանը և դիմելով հեղինակին՝ ավելացնում:– Այ խելոք Դավիթներ. մենք ուրախացել ենք, որ Հովհ. Թումանյանը՝ չեզեղաներ», «հեքիաթներ» և «պոեմներ» է գրում և այն էլ շատ հաջող, իսկ դրանք բողոքում են»<sup>32</sup>:

Մ. Բերբերյանի կարևորագույն պահանջն է լուրջ վերաբերմունք դրսևորել դեպի քննադատությունը, գեղարվեստը, ըստ էության և խորքային մտեցմամբ հասկանալ ու գնահատել գեղեցիկը, սպա նոր գեղագիտության դասեր տալ ընթերցողին:

Մխիթարյանների քննադատական կողմնակալության մասին Բերբերյանի ոգով գրում է նաև գրականագետ Գարեգին Ենգիբարյանը: «Գրականական ակնարկներ» հոդվածում անդրադառնալով «Բազմավեպ» և «Գեղունի» հանդեսներին՝ հեղինակն անընդունելի է համարում, որ «մի շարք տաղտկալի և անհամ հոդվածներում» «մեր Շիվանգադեն, Հովհաննես Հովհաննիսյանը, Հովհաննես Թումանյանը, Մուրացանը, Փափագյանը, Մանվելյանը և ուրիշները ենթարկված են շատ թեթևսուլիկ խժբժանքի»<sup>33</sup>: Այդ հոդվածները, ըստ քննադատի, անարժեք են, քանի որ բնույթով քննական չեն, չունեն առաջնորդող գաղափարներ, խոր ընդհանրացումներ, արված նկատողություններն էլ մեծ մասամբ զուրկ են փաստարկումներից ու հիմնապատճառներից: Մի քանի թռուցիկ ճշմարիտ դիտողություններն անգամ գրական արժեք չեն հաղորդում հոդվածներին:

XX դարասկզբին հրապարակված լավագույն հոդվածները, հատկապես Լեոյի ուսումնասիրության առիթով գրվածները, ցույց են տալիս՝ քննադատական միտքը նշանակալի չափով առաջադիմել էր ինքնաճանաչման և ինքնահաստատման ուղղությամբ, բայց ներսում դեռ շարունակում էին քննադատների փոխադարձ մեղադրանքներն ու «մերկացումները», երևույթ, որ ուղղորդվում ու խրախուսվում էր մա-

<sup>31</sup> «Լուսն», 1904, № 3, էջ 215:

<sup>32</sup> Նույն տեղում:

<sup>33</sup> «Տարագ», 1904, № 14, էջ 128:

մուլի կողմից: “Լուսան” հանդես էր գալիս “Մշակի” և “Մուրճի” դեմ, “Տարազը”՝ “Մուրճի”, “Մշակը”՝ “Հորիզոնի”, “Նոր-Դարի” և այլն: Կուսակցական և թայֆայական կապերը դարձյալ որոշիչ դեր էին խաղում և հաճախ խլացնում իսկական քննադատության ձայնը: Դրանից օգտվում էին “քննադատները”՝ իրենց անձնական հաշիվներն առաջ մղելու համար:

1906 թ. “Հույս” պատկերազարդ շաբաթաթերթում տպագրվում է բանասեր, գրող, մանկավարժ Գրիգոր Բալասանյանի գրախոսականը՝ գրաքննադատ, մանկավարժ Գրիգոր Վանցյանի “Հայ հեղինակներ” դասագրքի մասին: Գրախոսը ճգնում է ապացուցել, թե “ո՞րքան անճաշակ, ո՞րքան անպետք” դասագիրք է այն: “Դժվար է երևակայել մի այսպիսի կուսակցամոլ ախտերով մկրտված դասագիրք, – գրում է Բալասանյանը, – աշակերտները հնարավորություն չպետք է ունենան որոշ գաղափար կազմելու որևէ հեղինակի մասին ճիշտ տեղեկություններով, որովհետև հարգելի կազմողը մեկին արել է ավար, մյուսին խավար. սիրած մարդկանց դուրս է բերել ուռցրած, իսկ ատած մարդկանց՝ անգույն, խղճալի...”<sup>84</sup>: Շարունակության մեջ աստիճանաբար բացվում է Բալասանյանի անթաքույց գայրույթի իրական պատճառը: Գրականության ընդհանուր շահերից խոսողի անշահախնդիր կեցվածքի հետևում թաքնվող քննադատի “հաշիվները”, պարզվում է, Հովհ. Թումանյանի հետ են: Անհանդուրժելի համարելով, որ դասագրքում նրանից բերված են բավական թվով “կտորներ”, իսկ մանկավարժ, բանաստեղծ Հարություն Թումանյանից միայն մեկը՝ դա բացատրում է բանաստեղծի և նրա երբեմնի դպրոցական դասընկեր Վանցյանի շարունակվող մտերմությամբ: Ինչպես միտումնավորությամբ ու կողմնակալությամբ հայտնի մյուս քննադատները, այնպես էլ Բալասանյանը դա հետևանք է համարում, իր կարծիքով, գրական հրապարակում ընդհանրական “այն տխուր հանգամանքի”, որ “մեր անտեր ու անտիրական գրականության խավարում ավելի դեր կատարողը և բան տեսնողը սրանք են՝ պրոտեկցիան, թայֆայությունը, խաթրապահությունը և երեսպաշտությունը ...”<sup>85</sup>:

Դրան հակառակ քննադատն ընդգծված հակում ունի ամեն կերպ բարձրացնելու Հար. Թումանյանի գրական կշիռը, և դա ուներ իր որոշակի դրդապատճառը: Վերջինս նույնպես “Նոր-Դարում” բացասական գրախոսական էր գրել Վանցյանի դասագրքի մասին, որտեղ կազմողը ներկայացրել է “Սասունցի Դավթի” “փոխադրության” իր տարբերակը: Գրախոսն այն անհաջող է համարում՝ գերադասելով “լիակատար և ավելի հաջող փոխադրությունը, որ գրել է պ. Գ. Բալասանյանը”, և որը, ինչպես ենթադրում է գրախոսը, “անհայտ է մնացել պ. Վանցյանին”<sup>86</sup>: Սա վկայում է,

<sup>84</sup> “Հույս” (Թիֆլիս), 1906, № 14, էջ 210–211:

<sup>85</sup> Նույն տեղում, էջ 211:

<sup>86</sup> “Նոր-Դար” (Թիֆլիս), 12. III. 1906:

որ Բալասանյանը ևս առաջնորդվում էր տարածված “Ես՝ քեզ, դու՝ ինձ” սկզբունքով:

Բալասանյանին դուր չի եկել, որ դասագրքում Վանցյանը “հազիվ մի երկտող չոր ու ցամաք ու ոչ մի բան չներկայացնող” ծանուցման մեջ առանց ապացույցի, առաձգական խոսքով պ. Հովհ. Թումանյանի պոեմը “հրաշալի” է համարել և միևնույն ժամանակ մոռացության է տվել Մ. Աբեղյանին, Բ. Խալաթյանին, Ս. Հայկունուն, Ս. Մանդինյանին, Հ. Ճաղարբեկյանին, Ն. Տեր-Ղևոնդյանին, Լ. Մանվելյանին, և նրանց գրած Սասնա փահիլիվանների պատմության բոլոր վարիանտները<sup>37</sup>: Քննադատն անտեղյակ է ձևանում, թե էպոսի գրի առնված տարբերակները և դրանց գրական մշակումները տարբեր բաներ են. փույթ չէ. նրան առիթ է պետք ամեն կերպ նվազեցնելու Հովհ. Թումանյանի պոեմի արժեքը: Պատահական չէ հավելումը, թե “հետաքրքիր է կարդալ պ. Վանցյանի հավանած “Սասունցի Դավիթ” գրվածքի մասին ավելի հեղինակավոր մարդկանց հայտնած կարծիքները”<sup>38</sup>: Ինչպես երևում է հետագա շարադրանքից, Բալասանյանը նկատի ունի Ս. Մանդինյանին և Լեոյին<sup>39</sup>:

Գրախոսը նպատակահարմար չի գտնում աշակերտներին հանձնարարել Թումանյանի պոեմը, “որի մեջ բացակայում են Դավթի կյանքի գլխավոր արկածները, նրա մանկությունը Մուսուլ աշխարհում, այնտեղից վերադարձը Սասուն, հետաքրքիր կռիվները և արած քաջագործությունները զանազան անվանի հերոսների դեմ, Խանդուղթ Խաթենի սերը, Դավթի մահը և այլն ...”<sup>40</sup>: Այս քաղվածքը պերճախոս ցույց է տալիս, որ գրախոսն ամեն կերպ աշխատում է ցույց տալ իր “գիտելիքները” էպոսի մասին, մինչդեռ պատկերացում չունի դրա գրական մշակման սկզբունքների, խնդիրների և հեղինակային նպատակների մասին:

Առհասարակ քննադատի ակտիվություն ցուցաբերող Գր. Բալասանյանը 1900-ական թվականների մամուլում հաճախ հանդիպող անուններից էր, որի հոդվածներն ու գրախոսությունները երբեմն հակասում էին միմյանց: Նրա քննադատության թիրախներն ու հայեցակետերը կարող էին փոխվել պահի տրամադրվածությամբ և իրավիճակի թելադրանքով: Այսպես՝ 1907 թ. “Մեր “քննադատական գրականությունը”՝ հոդվածում Գր. Բալասանյանը, ընդհանուր հայացք նետելով ժամանակակից քննադատությանը, վիճակը ներկայացնում է այնպես, թե սկսած 1890-ականներից՝ տարիների ընթացքում գրեթե ոչինչ չի փոխվել. “Է՛լ արժանավոր, անարժան չեն հարցնում. գործողը կուսակցությունն է, ամեն մի բանի կուսակցական դրոշմ և գույն է տրված: Եթե իրենց մարդն ես, ինչքան էլ գրվածքը գուրկ լինի գրա-

<sup>37</sup> “Հուլիս”, 1906, № 16, էջ 244:

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Հիշատակված կարծիքները հրապարակվել են Հովհ. Թումանյանի “Բանաստեղծությունների” երրորդ ժողովածուի առթիվ և առանձին քննության առարկա են:

<sup>40</sup> “Հուլիս”, 1906, № 16, էջ 245:

կան արժանիքներից, անշուշտ, կփառաբանվի և կտարածվի, իսկ եթե հակառակ կուսակից բանակին պատկանող՝ այն ժամանակ քո դեմ պատրաստ է հայիոյանքի բառարանը”<sup>41</sup>: Այս միտքը համարյա նույն ձևակերպումներով արդեն կար Բալասանյանի “Հայ հեղինակներ”. Գրիգոր Վանցյան, երկրորդ տպագրություն” հոդվածում: Կրկնությունը պատահական չէ. ընդունված ավանդույթ էր դարձել, որ ամեն ոք, ով քննադատի հավակնությամբ գրիչ էր վերցնում ձեռքը, ամենից առաջ քննադատության դատավորի կեցվածք պիտի ընդուներ, ընդ որում “հանցավորն” ու “դատավորը” հաճախ փոխում էին տեղերը:

Բալասանյանի ներկայացմամբ՝ “ամուլ և ամայի” է նաև “մեր գրական ասպարեզը”, որովհետև իսկական քննադատության չգոյության պայմաններում, ինչպես տրամաբանում է նա, չի կարող բարգավաճել նաև գրականությունը: Բնորոշ այս նիհիլիզմը տարածված էր հատկապես քննադատության անունով մամուլը ողողված այն հոդվածներում, որոնք հրապարակային բնույթ էին տալիս հեղինակների անձնական շահագրգռություններին: Դա, գուցե և ակամա, հաստատում է նաև Բալասանյանը՝ հայտնելով իր երբեմնի “համոզմունքներին” հակասող կարծիքներ: Քննադատության մեջ ընդունելով երկու հեղինակության՝ Ս. Բերբերյանին և Լեոյին, վերջինիս հանդեպ կտրուկ փոխում է վերաբերմունքը՝ մասնավորապես Թումանյանին անդրադառնալիս: Եթե իր նախորդ հոդվածում, ինչպես տեսանք, վկայակոչում էր Լեոյին՝ հաստատելու համար իր ամեննին էլ ոչ նպաստավոր կարծիքը Թումանյանի և նրա ստեղծագործության մասին, ապա այս դեպքում վերապահությամբ է ընդունում Լեոյի ընդգծված միտումնավորությունը ոչ միայն Թումանյանի, այլև մեր մի քանի անվանի գրողների վաստակը գնահատելիս: “Օրինակ,– հիմնավորում է Բալասանյանն իր նոր վերաբերմունքը Լեոյի “քննադատության” հանդեպ,– նա դուրս է բերում շնորհալի Մուրացանին “պասկվիլանտ գրող” (որովհետև Գր. Արծրունու դեմ գրել է “Լուսա”-ում “Պսակների բողոքը”), տաղանդավոր Շիրվանզադեին “հասարակության անբարոյականացնող վիպագիր” (որովհետև հետք բանակոխի է ունեցել մամուլի էջերում), ժողովրդական բանաստեղծ Հովհ. Թումանյանին “ոտանավորչի, տհաս և անհիմն գոռոզության բանաստեղծ” և այսպես ամեն մեկին ծաղրելով զանազան պոչեր է կպցրել: Բայց մի թե այս է պահանջվում անկեղծ քննադատից”<sup>42</sup>: Մանավանդ անհասկանալի և անընդունելի է համարում, որ Լեոն տարբերություն չի տեսնում Հովհ. Թումանյանի և “Մուրճում” տպագրվող “օրվա բանաստեղծներից” Ա. Մխիթարյանի միջև, նույնիսկ՝ նախապատվությունը տալիս է վերջինիս:

<sup>41</sup> “Հովիվ” (Թիֆլիս), 1907, № 42, էջ 662:

<sup>42</sup> Նույն տեղում:

Այսպիսի դիմափոխությունը սովորական երևույթ էր այդ օրերի քննադատական բարքերում: «Քննադատության» այդ տեսակը, որ կարելի է «բալասանյանական» անվանել, առհասարակ գուրկ էր ինքնագնության և ինքնաքննության շնորհից. ամեն ինչ տեսնում ու «արժեքավորում» էր միայն իրենից դուրս՝ հաճախ ամենիմաց տեսաբանի և ուսուցչի կեցվածք ընդունելով ու հանրահայտ, ինքնըստինքյան հասկանալի իրողությունները հրամցնելով իբրև սեփական հայտնագործություն: «Քննադատը պետք է ունենա լուսավոր և սուր միտք, – ուսուցանում է Բալասանյանը, – կիրթ ճաշակ, հանճարեղ դատողություն, խորաթափանց աշխարհայացք, լայն մտավոր հորիզոն իրերի և երևույթների վրա, բազմակողմանի կրթություն, իր ազգի և հայրենիքի պատմական կյանքի, անցյալի և ներկայի, նույնպես և օտարազգի գրական մտավորականների մասին քաջածանոթ ուսումնասիրություն, մի խոսքով՝ մտքին և գրչին բոլորովին տիրապետող և անկախ մտածող առանց պայմանական շրջանակների»<sup>43</sup>: Ամեն մի այդպիսի «ուսուցիչ քննադատ», բնականաբար, միայն իրեն էր ընդունում այդ առաքինությունների կրող: Ստացվում էր, որ բոլորն էին առաքյալ, միաժամանակ՝ ոչ մեկը: Այս պարադոքսը շատ լավ էին տեսնում լուրջ գրողներն ու գրականության շահերով իրոք մտահոգված քննադատները (Մ. Աբեղյան, Մ. Բերբերյան, Շիրվանզադե և այլք): Այդ պատճառով էլ հազվադեպ էր պատահում, որ այդ կարգի քննադատությունն արժանանար նրանց ուշադրությանը:

Այս ամենով հանդերձ՝ XX դարասկզբի գրական կյանքը շարունակում էր զարգանալ իր բնականոն հունով՝ աշխատելով համեմատաբար կարճ ժամանակում յուրացնել այն, ինչ եվրոպական միտքը ձեռք էր բերել տասնամյակների ընթացքում: Նոր միտումներ էին ձևավորվում նաև քննադատության մեջ: «Եթե 19-րդ դարի գրականագիտական-քննադատական միտքը գերազանցապես նախընտրում էր գրական երևույթների մեկնաբանության պատմական կամ կուլտուր-պատմական մեթոդը, – արձանագրում է Մ. Սարինյանը, – ապա 20-րդ դարասկզբին ձևավորվում են մի շարք ուղղություններ՝ գեղարվեստական, հոգեբանական, սոցիոլոգիական, մարքսիստական և այլն, որոնք առաջադրում են հետազոտական ուրույն մեթոդներ, քննական հայացքի տակ առնելով կուլտուր-պատմական մեթոդի ավանդական չափանիշները»<sup>44</sup>:

Նորոգության այս միտումները նոր դարի առաջին տարիներին դանդաղ, բայց հետևողական ընթացքով հաստատվում էին ժամանակի գեղարվեստական գիտակցության, մասնավորապես, գրական քննադատության մեջ: Հայ մտավորականությունը, որի մի մասը ստացել էր եվրոպական կրթություն, մեծապես հասու էր համաաշխարհային մտքի շարժընթացներին, գրականության տեսությանն ու պատ-

<sup>43</sup> Նույն տեղում, էջ 663:

<sup>44</sup> Մ. Սարինյան. Հայոց գրականության երկու դարը, գիրք երկրորդ, Երևան, 1989, էջ 173:

մությանը, քննադատության նոր չափանիշներին: Ամենատարբեր հանդեսներում հաճախ թարգմանաբար ներկայացվում էին համաշխարհային ճանաչում գտած ստեղծագործություններ և ուսումնասիրություններ, որոնք ոչ միայն ձևավորում էին գեղագիտական ճաշակ, այլև քննադատությանը զինում էին գիտագործնական հարուստ գիտելիքներով:

1900-ական թվականների հայ քննադատությունը, որքան էլ ծանոթ համաշխարհային քննադատության փորձին, դեռևս չէր կարողանում ձեռքագատվել աշխարհայացքային և մեթոդաբանական սահմանափակումներից, խուսափել ծայրահեղություններից: Ձևավորվել էր քննադատության երկու շերտ: Մեկը, որ ավելի տեսանելի էր հաճախակի ելույթներով, դեկավարվում էր պահի անցողիկ տպավորություններով կամ անձնական շահագրգռություններով, մյուսը, առիթից առիթ հայտնվելով հրապարակում, նախընտրում էր օբյեկտիվ վերլուծական հայացքով մոտենալ գրական կյանքի նորանշան երևույթներին՝ արժևորելով դրանք զարգացման հեռանկարի դիտակետից: Այս երկրորդ շերտում էր կանխանշվում առաջընթացի գլխավոր ուղղությունը, որ առարկայական է դառնում 1910-ական թվականներին:

1900-ական թվականների քննադատությունը, կրելով ոչ համակարգված ու տարբերային, հաճախ էլ կողմնակալ բնույթ, վերջնականորեն չի կարողանում սահմանագատել իր պահանջներն ու չափորոշիչները. ուստի պատահական չէ, որ այս ժամանակահատվածում Թումանյանի ստեղծագործությանը տրված գնահատականները միանգամայն տարբեր էին, հակասական, առաջ քաշած հարցադրումները՝ վիճելի, որոշ դեպքերում էլ՝ անընդունելի:

Դարասկզբի առաջին տասնամյակը Թումանյանի համար դառնում է բավական բեղմնավոր ժամանակահատված: Հատկապես 1901–1905 թթ. թումանյանագիտության մեջ ընդունված է համարել բանաստեղծի ստեղծագործական ուժերի բուռն ծաղկման շրջան. էական վերամշակման են ենթարկվում մի քանի գործեր, առաջին անգամ տպագրվում են “Պոետն ու Մուսան”, “Մասունցի Դավիթը”, “Դեպի Անհունը”, “Փարվանան”, “Թմկաբերդի առումը”, մի շարք բանաստեղծություններ: Դրանց մեծ մասը տեղ է գտնում 1903 թ. տպագրված “Բանաստեղծություններ” երրորդ ժողովածուի մեջ, որն իր բովանդակությամբ աննախադեպ էր: 1905 թ. սկսում է տպագրվել “Հասկեր” մանկական ամսագիրը, 1907 թ.՝ “Լուսաբեր” դասագիրքը: Թումանյանը մեծ թափով հայ գրականությունը հարստացնում է մանկական մի շարք ստեղծագործություններով, որոնք դառնում են հայ մանկական գրականության գոհարները: 1908 թ. Բաքվում տպագրվում է բանաստեղծի “Բանաստեղծությունների” ժողովածուն, որը ամփոփում էր նրա քսանամյա ստեղծագործական ճանապարհի լավագույն էջերը:

*Բավական հարուստ է եղել այս ժամանակահատվածում Թումանյանի ծավալած թե՛ ստեղծագործական, թե՛ հասարակական գործունեությունը՝ առիթ տալով բազմաթիվ արձագանքների: Լինելով հայ մտավոր ներուժի կենտրոնաձիգ ուժերից՝ բանաստեղծը հաճախ է հայտնվում քննադատության թիրախում: Բազմաբղետ կարծիքների և բանավեճերի արդյունքում բացահայտվում են ոչ միայն Հովհ. Թումանյանի, այլև ժամանակի քննադատական մտքի հիմնական միտումներն ու գեղագիտական չափանիշները:*

## МЕТОДОЛОГИЧЕСКИЕ РАЗЛИЧИЯ ЛИТЕРАТУРНОЙ КРИТИКИ НАЧАЛА XX ВЕКА И ОВ. ТУМАНЯН

ЕВА МНАЦАКАНЯН

### Резюме

*Ключевые слова: Ов. Туманян, литературная критика, эстетические принципы, оценка, Лео, тенденциозность, пристрастность, новые критерии.*

В начале 1900-ых годов литературная критика становится одним из неотъемлемых и влиятельных элементов художественного процесса, выступает как самостоятельная область литературной жизни. Однако, несмотря на очевидные сдвиги, армянская критика не смогла полностью освободиться от мировоззренческих и методологических ограничений, избежать крайностей. Формируется два слоя критики. Один, более видимый благодаря частым выступлениям (Лео, Г. Баласанян, Л. Манвелян и др.), руководствовался сиeminутными впечатлениями или личной заинтересованностью; другой, который проявлялся от случая к случаю, подходил с объективным аналитическим взглядом к необычным явлениям литературной жизни, оценивая их с точки зрения перспективы их развития (М. Абебян, М. Берберян, А. Чопанян и др.).

В первом десятилетии XX века Ов. Туманян развернул довольно активную как творческую, так и общественную деятельность. Будучи одним из притягательных центров армянского интеллектуального потенциала, поэт часто становился мишенью для критики – еще не систематизированной, стихийной, зачастую руководствующейся партийной пристрастностью, не определившей окончательно свои требования и критерии. Поэтому не случайно, что данные в этот период оценки творчеству Туманяна были совершенно разными, порой противоречивыми, выдвигаемые вопросы – спорными, в некоторых случаях – неприемлемыми. В результате дискуссий, разнообразных мнений выявляются основные тенденции и эстетические критерии не только творчества Туманяна, но и критической мысли того времени.



## THE METHODOLOGICAL DIFFERENCES OF LITERARY CRITICISM OF THE EARLY 20TH CENTURY AND HOVH. TUMANYAN

EVA MNATSAKANYAN

## Summary

*Key words: Hovh. Tumanyan, literary criticism, fine art principles, evaluation, Leo, bias, partiality, new criteria.*

At the beginning of the 1900s, literary criticism became one of the quintessential parts in fiction movements. It appeared in a confident role as an independent area of literary life. However, in spite of obvious movements, the Armenian literary criticism could not get rid of the limitations in methodology and worldview as well as avoid extremism. Two levels of criticism appeared. One, which was more obvious because of frequent speeches (Leo, G. Balasanyan, L. Manvelyan, et al.), was controlled by spontaneous impressions and personal motives. The other one, with an objective and analytical view, which appeared occasionally, approached the unusual phenomena in literature evaluating it in light of development perspectives (M. Abeghyan, M. Berberyan, A. Chopanyan, et al.).

At the first decade of the 20th century, Tumanyan's literary and social life was very rich. Being an Armenian thinker, one of the central forces of Armenian intelligentsia, the poet very often appeared in the target of criticism, which was mostly not systematic, and very often party-biased. Thus, it is not accidental that the appraisals on Tumanyan's works at that time were completely different, sometimes controversial, and the raised questions were arguable, very often not acceptable. In the result of various opinions and debates, one can understand not only Tumanyan's, but also other critics on basic aesthetic tendencies and artistic criteria of the time.

---

---

ԷԶԵՐ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԹՈՒՄԱՆՅԱՆԱՊԱՏՈՒՄԻՑ\*

ԱՆՆԱ ԱՍԱՏՐՅԱՆ

Բանալի բառեր՝ երաժշտական թումանյանապատում, “Անուշ”, “Ալմաստ” օպերաներ, “Ախթամար”, “Ուռենի”, “Լոռեցի Սաքոն” բալետներ, “Ախթամար”, “Լոռեցի Սաքոն” սիմֆոնիկ պոեմներ, “Հայոց լեռներում”, “Հայրենիքիս հետ” կանտատներ, ռոմանսներ, մեներգեր ու խմբերգեր:

*“Երաժշտությունը արվեստների մեջ էն կախարդ ուժն է, որ անմարմին արտահայտություններով կարողանում է անմիջականորեն ու միանգամայն տիրել մարդու բովանդակ գոյությունը, նրա մարմնին ու հոգուն՝ և տիրաբար տանել, ուր որ կամենա: Էսպեսով էլ նա, արվեստների մեջ ամենազգայականն ու ամենավերացականը միաժամանակ, հանդիսանում է ամենաուժեղ արտահայտությունը ժողովուրդների ոգեկան կյանքի և՛ բարձրագույն հաճույքներ տալով հանդերձ՝ դառնում է բարձրագույն կրթության միջոց”, – նկատել է Հովհաննես Թումանյանը:*

*Ամենայն հայոց բանաստեղծի գրական հարուստ ժառանգությունը ստեղծագործական ներշնչանքի աղբյուր է ծառայել հայ կոմպոզիտորներից շատ-շատերի համար<sup>2</sup>:*

*Երկար ու բեղմնավոր ուղի է անցել հայ երաժշտական թումանյանապատումը: Հովհ. Թումանյանն այն եզակի հայ բանաստեղծներից է, ում ստեղծագործությունը մի կողմից՝ մեծապես նպաստել է հայ երաժշտության առաջընթացին, մյուս կողմից՝ իթանել հայ կատարողական արվեստի զարգացումը՝ շրջադարձային նշանակություն ունենալով հայ կատարողական արվեստի ներկայացուցիչներից շատերի ստեղծագործական ճակատագրում:*

*Թումանյանն իր գործունեության ընթացքում շփվել է հայ երաժիշտներից շատերի, այդ թվում՝ Կոմիտասի, Ալեքսանդր Սպենդիարյանի, Արմեն Տիգրանյանի,*

---

<sup>1</sup> Թումանյանն ասում է... – “Սովետական արվեստ” (Երևան), 1969, № 9, էջ 23:

<sup>2</sup> Թումանյանի ստեղծագործությունների հիման վրա գրված երաժշտական երկերի ցանկը տե՛ս Հովհաննես Թումանյանը երաժշտության մեջ: Կազմողներ՝ Լ. Թաշճյան, Դ. Թաշճյան, Երևան, 1999: Հովհաննես Թումանյանը երաժշտության մեջ: Կազմողներ՝ Լ. Թաշճյան, Դ. Թաշճյան, Երևան, 2012:

Անտոն Մայիլյանի, Ռոմանոս Մելիքյանի, Մուշեղ Աղայանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Սարգիս Բարխուդարյանի, Վահան Տեր-Առաքելյանի և այլոց հետ:

Թումանյանի պոեզիայի հիման վրա ստեղծված ստեղծագործությունները վաղուց արդեն ձևավորել են երաժշտական թումանյանապատումը, և ստեղծված հարուստ երաժշտական գրականությունն ըստ ժանրերի կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

1. Թումանյանի ստեղծագործությունը հայ երաժշտական թատրոնում (օպերաներ և բալետներ),

2. Թումանյանի ստեղծագործությունը հայ սիմֆոնիկ և վոկալ-սիմֆոնիկ երաժշտության մեջ (սիմֆոնիկ պոեմ, սիմֆոնիկ պատկեր, կանտատ, կինոերաժշտություն և այլն),

3. Թումանյանի պոեզիան հայ վոկալ երաժշտության մեջ (մեներգեր, ռոմանսներ և խմբերգեր),

4. Թումանյանը՝ մանուկներին (մանկական օպերաներ և երգեր, մուլտֆիլմերի համար գրված երաժշտություն և այլն):

Թումանյանի ստեղծագործությունն ամենախոր հետքը թողել է օպերային թատրոնում:

Սրանից ուղիղ հարյուր տարի առաջ՝ 1919 թ. Հովհ. Թումանյանի ծննդյան 50-ամյակին Թիֆլիսի Արտիստական թատրոնում ներկայացվել է «Անուշ» օպերան՝ լրիվ նվագախմբով, պրոֆեսիոնալ կատարողներով և հեղինակի՝ Արմեն Տիգրանյանի ղեկավարությամբ:

Բսկ մինչ այդ՝ տակավին 1908 թ., ծանոթանալով Թումանյանի պոեզիային, Ա. Տիգրանյանը հափշտակվում է «Անուշ» պոեմով: Հնարավորինս պահպանելով տեքստը՝ կոմպոզիտորը կազմում է օպերայի լիբրետտոն: «Առաջին ընթերցումից հետո գրեցի «Համբարձում յայլան»,– հետագայում կիսոստովանի կոմպոզիտորը,– օպերայի առաջին մեղեդին, որը հնչում է նրանում որպես լայթմոտիվ, անցնում կարմիր թելի պես օպերայի միջով: Սկզբից էլ ինձ պարզ էր, որ «Անուշը» օպերայի հոյակապ նյութ է: Այն լիովին հափշտակեց ինձ, և ես գրեցի օպերան»<sup>3</sup>:

1912 թ. հունիսի սկզբներին Ա. Տիգրանյանը նամակ է հղում Գ. Լևոնյանին՝ իր գրած «Անուշ» օպերան բեմադրելու ցանկության մասին և հարցնում, թե Մարտի դերակատարման համար Թիֆլիսի երգիչներից ու՞մ կարելի է հրավիրել: Միևնույն ժամանակ նա գրում է, թե լսել է Շարա Տայյանի մասին, արդյոք չ լավն են նրա ձայնական տվյալներն ու արտաքինը:

Գ. Լևոնյանի խորհրդով Շ. Տայյանը գալիս է Ալեքսանդրապոլ և հանդիպում Տիգրանյանին: Մի թոռուցիկ հայացք նետելով երիտասարդ երգչի վրա՝ կոմպոզի-

<sup>3</sup> Տե՛ս Գ. Թիգրանով. Օպերա Արմենա Թիգրանյան «Անուշ».– Գ. Թիգրանով. Արմենական մուսիկալային թատր, տ. 1. Երևան, 1956, ս. 226.

տորն ասում է. “– Շատ ուրախ եմ, բարձրահասակ էք, իսկն իմ ուզած Սարոն: Մոսին և Անուշը նույնպես պետք է խոշոր լինեն, իսկական լոռեցու նման ...”<sup>4</sup>:

Դասեր-պարապմունքները տեղի են ունենում Տիգրանյանի բնակարանում: Ներկայացման ռեժիսորը, նկարիչը, պարերի բեմադրողը ինքն էր՝ օպերայի հեղինակը:

1912 թ. օգոստոսի 4-ին Ալեքսանդրապոլի Ժողովրդական տանն առաջին անգամ բեմադրվում է Ա. Տիգրանյանի “Անուշ” օպերան՝ ըստ Հովհ. Թումանյանի “Անուշ” պոեմի<sup>5</sup> (ռեժիսոր՝ Ա. Տիգրանյան, դիրիժոր՝ Գ. Յա. Բուրկովիչ), որը պատմական կարևոր նշանակություն ունեցավ՝ դրանով սկիզբ դրվեց Հայաստանում օպերային արվեստի զարգացմանը:

Ներկայացման համար Ա. Տիգրանյանի կողմից Թիֆլիսից հրավիրված Ներսիսյան դպրոցի աշակերտ Շ. Տալյանը հետագայում դարձավ Սարոյի դերերգի լավագույն մեկնաբաններից մեկը: Անուշի դերերգը կատարեց Թիֆլիսից Աստղիկ Մարիկյանը, Մոսին՝ Թիֆլիսի Ներսիսյան դպրոցի սան, քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցու տիրացուի որդին՝ Վարդան Մարտիրոսյանն էր: Անուշի մոր դերերգով հանդես եկավ գուսան Շերամի դուստրը՝ Արևհատ Տալյանը<sup>6</sup>: Երգչախումբում մասնակցում էին Հայկանուշ Մինասյանը, Արմենուհի Հախումյանը, Աստղիկ Գաբրիելյանը, Աղավնի Գրիգորյանը, Աշխեն Ենգոյանը:

Երաժշտագետ Ալ. Շահվերդյանի դիպուկ բնորոշմամբ՝ դասական օպերան ծնվեց ցնցոտիների մեջ: “Բավական է ասել, որ նվագախումբը կազմված էր միայն 12 երաժշտից: Կատարողների մեջ, թե՛ բեմում և թե՛ մենակատարների մեջ, գերակշռում էր դպրոցական հասակի երիտասարդությունը, որը երգում էր անկեղծ ոգևորությամբ և ջանասիրությամբ, բայց գուրկ էր անհրաժեշտ փորձառությունից և պրոֆեսիոնալ վարպետությունից: Շենքի անհարմարություն, միջոցների ծայրահեղ սահմանափակություն, հագուստների և դեկորների աղքատություն – ահա այսպիսի պայմաններում իրագործվեց “Անուշի” առաջին բեմադրությունը: Եվ այնուամենայնիվ ներկայացումն ունեցավ անօրինակ հաջողություն: Հասարակությո-

<sup>4</sup> Շ. Տալյան. Արմեն Տիգրանյանի հետ.– Ա. Տիգրանյան. Հողվածներ, նամակներ, հուշեր (կազմեց՝ Ալ. Թադևոսյանը), Երևան, 1981, էջ 151:

<sup>5</sup> Մինչ այդ տարբեր առիթներով կատարվել էին օպերայից առանձին հատվածներ. 1908-ին “Աղբյուր-Տարագ” ամսագրի 25-ամյա հորեյանի առիթով Թբիլիսիում բեմադրվել է “Անուշ”-ի երկրորդ գործողության առաջին պատկերը, 1911-ին՝ Ալեքսանդրապոլի օրիորդաց միջնակարգ դպրոցում, որտեղ պաշտոնավարում էր Ա. Տիգրանյանը, աշակերտական երեկույթներից մեկում կատարվել էին օպերայից երկու պատկեր: Ի դեպ՝ Սարոյի “Աղջի անաստված” սերենադը բեմի հետևից կատարել է ինքը՝ հեղինակը (տե՛ս Ա. Աթայան, Մ. Մուրադյան. Ա. Տիգրանյան. Կյանքը, երաժշտական-հասարակական գործունեությունը և ստեղծագործությունը, Երևան, 1955, էջ 28):

<sup>6</sup> Տե՛ս Ա. Տիգրանյան. Հողվածներ, նամակներ, հուշեր, էջ 150–151:

յունը, ցրվելով, իր հետ տանում էր հիշողության մեջ տպավորված և սիրված մելոդիաները, որոնք այնքան օրգանապես միաձուլվել էին Թումանյանի հերոսների կերպարներին: Հայկական կուլտուրական կյանքում որպես այքի ընկնող իրադարձություն ճանաչված այդ նոր ստեղծագործության համբավը տարածվեց Ալեքսանդրապոլի սահմաններից դուրս<sup>7</sup>:

Շուտով “Անուշը” հասավ Երևան: 1913 թ. փետրվարի 9–10-ին օպերան հեղինակի ղեկավարությամբ ներկայացվեց Երևանի Ջանփոլադյանների թատրոնում (Անուշ՝ Ա. Մարիկյան, Սարո՝ Ս. Տեր-Նիկողոսյան, Մոսի՝ Վ. Մարտիրոսյան): Երևանում “Անուշ”-ը բեմադրվել է տեղական ուժերով, “ավելի քան 50 հոգուց բաղկացած մի կոլեկտիվով, որին ներկայացման համար ընդամենը մի քանի օրվա ընթացքում նախապատրաստել էր օպերայի հեղինակն ինքը՝ Ա. Տիգրանյանը: Խմբի բոլոր անդամները, բացառությամբ Ա. Մարիկյանի (լիրիկական դրամատիկ սոպրանո), համարվել էին աշակերտ-աշակերտուհիներից, բանվորուհիներից և առանձին մարդկանցից: Պատրաստված էին հատուկ դեկորացիաներ, կար համապատասխան հանդերձանք:

Ժամանակակից մամուլն ակտիվորեն արձագանքել է “Անուշ”-ի երևանյան ներկայացումներին: Մամուլում տպագրվել են բավական ծավալուն գրախոսականներ, որոնցում անփորձ սկսնակների դերակատարման թերությունները նշելու հետ միաժամանակ շատ բարձր են գնահատել “Անուշ” օպերան, և այն Երևանում բեմադրելու համար Ա. Տիգրանյանի կատարած շնորհակալ աշխատանքը: Տպավորությունն ընդհանրապես եղել է շատ լավ: Բուռն ծափահարությունների տակ մի քանի անգամ բեմ է հրավիրվել Անուշի դերակատարը: Ծափերի տարափի տակ բեմ է հրավիրվել նաև օպերայի հեղինակն ու բեմադրողը: Գրախոսողի հաղորդումով հասարակությունը “Անուշ” օպերան համարել է մեր արվեստի դարագլուխ կազմող գործերից մեկը, վստահ լինելով, որ այն դառնալու է “հայ բեմի ամենագեղեցիկ զարդերից մեկը”<sup>8</sup>:

Երևանյան հանդիսատեսն առիթներ ունեցել է կրկին հանդիպելու “Անուշ”-ին: 1916 թ. ապրիլի 18–19-ին “Անուշ”-ը ներկայացվել է Երևանի քաղաքային ժողովարանի դահլիճում (Անուշ՝ Ս. Գրիգորյան, Սարո՝ Հ. Մինասյան, Մոսի՝ Պ. Դևոնյան, Նանի՝ Վ. Արագյան)<sup>9</sup>, իսկ 1917 թ. ապրիլի 6–8-ը՝ Երևանի քաղաքային ակումբում (ռեժիսոր՝ Հ. Մինասյան, դերակատարներ՝ Անուշ՝ Ս. Գրիգորյան, Սարո՝ Հ. Մինասյան, Մոսի՝ Պ. Դևոնյան, Նանի՝ Շ. Տեր-Հակոբյան, վիճակ հանող կին՝ Շ. Տեր-

<sup>7</sup> Ռ. Աթաբեյան, Մ. Մուրադյան. նշվ. աշխ., էջ 29:

<sup>8</sup> Թ. Հակոբյան, Ա. Սիմոնյան. Երևան 2750, Երևան, 1968, էջ 181:

<sup>9</sup> Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), երաժշտական բաժին, Ա. Տիգրանյանի ֆ., № 196:

Հակոբյան)<sup>10</sup>:

1920 թ. հունիսի 25-ին և 28-ին “Անուշ”-ը հեղինակի ղեկավարությամբ ներկայացվել է Երևանի Ջանփոլադյանների թատրոնում (ռեժիսոր՝ Պ. Փիչխալյան, Անուշ՝ Ս. Գրիգորյան, Սարո՝ Հ. Մինասյան, Մոսի՝ Պ. Բորոզյան)<sup>11</sup>:

Շուտով օպերան ընդլայնում է իր աշխարհագրությունը. մինչև 1920 թ. քանիցս հնչում է Դիլիջանում, Թիֆլիսում, Բաքվում, Կ. Պոլսում, Գորիում, Ախալցխայում, Գանձակում, Նոր Նախիջևանում, Գրոզնիում, Բաթումում, Եկատերինոդարում, Կիսլովոդսկում, Պյատիգորսկում, Շուշիում և այլուր:

“Անուշ”-ի բեմական իսկական տարեգրությունը, սակայն, սկիզբ առավ 1935 թ. մարտի 27-ին, երբ ստեղծագործությունն առաջին անգամ բեմ բարձրացավ Երևանի օպերային թատրոնում. բեմադրող ռեժիսորն էր Ա. Գուլակյանը, դիրիժորը՝ Ս. Շաթիրյանը, ապա՝ Կ. Սարաջևը, բեմանկարիչը՝ Ս. Արուստյանը: Անուշի դերերը կատարեց հայ բեմի այն ժամանակվա սոխակ Հ. Դանիելյանը, իսկ Սարոյինը՝ այդ կերպարի առաջին մարմնավորող Շ. Տայանը:

Ժամանակակիցների վկայությամբ՝ “... ամեն անգամ հանդիսականը օպերայի սրահը թողնում էր վիշտն ու կսկիծը սրտում, շատերն էլ ... խոնավ աչքերով: Հայկանուշ Դանիելյանին և Շարա Տայանին “Անուշ”-ում միատեղ լսելը գերագույն, անկրկնելի հաճույք էր: Հայկանուշ Դանիելյան - Անուշ, Շարա Տայան - Սարո - անմոռանալի, անջնջելի էջեր հայկական օպերային արվեստի պատմության”<sup>12</sup>:

“Անուշ”-ի այս բեմադրության առթիվ Ռ. Մելիքյանը գրեց. “Այսօր պատմական օր է: Այսօր հայկական օպերայի մեջ մուտք գործեց հայկական ժողովրդական երաժշտությունը”<sup>13</sup>: Այդ օրվանից էլ օպերան իր հաստատուն տեղն է գրավում թատրոնի խաղացանկում՝ երբեք չհեռանալով բեմից:

1939 թ. Ա. Գուլակյանն իրականացնում է օպերայի երկրորդ բեմադրությունը (դիրիժոր՝ Ս. Թավրիզյան): Օպերան հնչում է Մոսկվայում՝ Հայ արվեստի տասնօրյակի ժամանակ և փայլուն ընդունելություն գտնում: Գլխավոր դերերը կատարում են Հ. Դանիելյանն ու Շ. Տայանը: Մոսիի դերերգով հանդես է գալիս երիտասարդ Պ. Լիսիցյանը:

1950 թ. ապրիլի 30-ին բեմադրվելու էր “Անուշ”-ի 400-րդ ներկայացումը: Այդ իրադարձությանն է նվիրվում օպերայի երրորդ բեմադրությունը՝ դիրիժոր Ս. Թավրիզյան, ռեժիսոր՝ Ա. Գուլակյան<sup>14</sup>: Այստեղ առաջին անգամ ի հայտ է գալիս Գոհար

<sup>10</sup> Նույն տեղում, № 197:

<sup>11</sup> Նույն տեղում, № 224:

<sup>12</sup> Կ. Սարկոսյան. “Անուշի” բեմական կերպարները. – “Սովետական արվեստ”, 1969, № 9, էջ 32:

<sup>13</sup> Г. Тигранов. Նշվ. հոդվ., էջ 221:

<sup>14</sup> Ա. Գուլակյանը Երևանի օպերային թատրոնում “Անուշ”-ը բեմադրել է նաև 1956-ին:

Գասպարյանի Անուշը՝ դառնալով չգերազանցված գազաթ ու չափանիշ: Մարոյի դերերգը կատարում է «Անուշի» հասակակից Ավագ Պետրոսյանը, ով դառնալու էր հայ բեմի լավագույն Մարոն: Մոսիի դերերգով հանդես է գալիս Միհրան Երկաթը:

Հայ օպերային թատրոնի պատմության մեջ իսկական լեգենդ դարձավ Գոհար Գասպարյան՝ Անուշ ու Ավագ Պետրոսյան՝ Մարո գույգր: «Գոհար Գասպարյան - Ավագ Պետրոսյան գույգր, Միքայել Թավրիզյանի ղեկավարությամբ, համարվել է անկրկնելի, իսկ 1953 թ. «Մելոդիա» ֆիրմայի «Անուշ» օպերայի ձայնագրությունը մինչ օրս համարվում է լավագույնն ու անգերազանցելի»<sup>15</sup>:

1969 թ. սեպտեմբերի 13-ին. Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնն որոշում է վերաբեմադրել «Անուշ»-ը: Օպերային թատրոնում շուրջ 900 անգամ ներկայացված «Անուշ»-ի նոր բեմադրությունը հանձնարարվեց ռեժիսոր, ՄՍՀՄ ժողովրդական արտիստ Վարդան Աճեմյանին և դիրիժոր, ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Օհան Դուրյանին, հրավիրվում է նկարիչ Ռոբերտ Նալբանդյանը:

Մինչ «Անուշ»-ի աճեմյանական բեմադրությունը օպերան, ինչպես տեսանք, արդեն 4 անգամ բեմադրել էր Ա. Գուլակյանը, և թվում էր, թե այլևս սպառված են օպերայի բեմադրական հնարավորությունները: Մանավանդ, որ Գուլակյանի բեմադրությունները մեծ հետաքրքրություն առաջացրեցին երաժշտասեր հասարակայնության շրջանում, և օպերան դարձավ ժողովրդին հոգեհարազատ: Գուլակյանական բեմադրություններում խիստ ընդգծված էր ողբերգականությունը, Անուշի և Մարոյի սիրո ճակատագրական դատապարտվածությունը: Ներկայացման ողբերգական հնչողության խորացմանը մեծապես նպաստեց նաև դիրիժոր Մ. Թավրիզյանը:

Աճեմյանը հրաժարվեց օպերայի նման մեկնաբանությունից, ներկայացումը ձերբազատեց ավելորդ ողբերգականությունից. սրանում ողբերգականությունը ծնվում է աստիճանաբար և բնականորեն: «Վարդան Աճեմյանը, - գրում է Մ. Ռիզանը, - ներկայացման դիրիժոր Օհան Դուրյանի հետ մեկտեղ, բեմական պատումն ազատեց կանխակալ ողբերգականության ինտոնացիաներից, ներկայացման դրամատուրգիան ծավալեց այնպես, որ ողբերգականը ծնվեր բնական ու օրինաչափ»<sup>16</sup>:

Երաժշտական պարտիտուրում արվում են որոշ կրճատումներ և միաժամանակ վերականգնվում են նախկինում կատարված մի շարք կուպյուրները (երաժշտական խմբագրումը՝ Բ. Մակկիլարիի): Օպերան 5 գործողությունների փոխարեն ամփոփվեց 3 գործողության մեջ և ավարտվեց նախորդ բեմադրություններում

<sup>15</sup> Մ. Տեր - Սիմոնյան. Ավագ Պետրոսյան (1912-2000), անտիպ, Ա. Պերոսյանի անձնական արխիվ:

<sup>16</sup> Վ. Աճեմյան. Կյանքն ու ստեղծագործությունը լուսանկարներում և ժամանակակիցների գնահատմամբ, Երևան, 1978, էջ 179:

կրճատված վերջերգով: Աճեմյանը կոնկրետացնում է գործողության վայրը՝ ոչ թե Հայաստանն առհասարակ, այլ Թումանյանի պաշտած Լոռին:

“Ե՛վ օպերայի, և՛ քալետի համար անսպառ նյութ է տալիս Թումանյանը, որ դրամատուրգ էր ոչ միայն իր ներքին համառ համոզմամբ և ըստ իր հավաստիացումների: Նա դրամատուրգ էր իր էությունը, և այդ էությունը շոայլորեն արտահայտվել էր նրա ամբողջ ստեղծագործության մեջ ու թերևս ամենից ավելի “Անուշ” պոեմում, թեև այն գրված չէ բեմի համար: Թեև ոչ մի երկ նա չի թողել բեմի համար: Ուրեմն՝ նրա չարածը մե՛նք պիտի անենք”<sup>17</sup>:

“Անուշ”-ի աճեմյանական բեմադրության<sup>18</sup> առաջին տեսարանները գերծ են ճակատագրական դատապարտվածության ողբերգականությունից. սրանք, ինչպես պոեմում, անամպ են ու լուսավոր: Տիգրանյանի մոտ Համբարձման տոնը ներկայացնող երկրորդ գործողությունն աճեմյանական բեմադրության մեջ եզրափակում է առաջին արարը: Նման փոփոխությունը պատահական չէր, քանի որ հենց այստեղ, վիճակահանության տեսարանում է կատարվում բեկումը: Անուշին բաժին ընկած վիճակը՝ “ջիգարին գյուլա դիպչի, ով որ քեզ սիրի աղջիկ”, կանխագուշակում է իրադարձությունների ողբերգական ավարտը. Անուշի և Սարոյի սերն այլևս դատապարտված է: Դրամատիկ գագաթի ստեղծման համար բեմում քարանում է ամեն ինչ. աղջիկներն աստիճանաբար ուշքի են գալիս՝ հաջորդող “Համբարձում յայլա” a cappella խմբերգում, սակայն նախընթաց ուրախ մթնոլորտն այլևս կորսված է անվերադարձ: Բեմադրության հաջորդ կուլմինացիոն պահին՝ հարսանիքի ժամանակ Սարոյի և Մոսիի կոխի տեսարանում, ռեժիսորը կիրառում է նույն հնարքը. “սարսափից քար կտրած ամբոխին փորձում է հետզհետե ուշքի բերել Քոխվան”<sup>19</sup>:

Բեմադրության երրորդ և ամենատպալուրիչ դրամատուրգիական շեշտը Սարոյի մոր ողբն է: Աճեմյանի մտահղացման համաձայն Անուշը չպիտի հավատա, որ Սարոն սպանվել է, քանի դեռ չի տեսել դիակը, հոգեկան ցնցում պետք է ստանա դիակը տեսնելուց հետո, ասես, կաթվածահար լինի: Անուշը հաստատուն քայլերով մոտենում է սգակիր համագյուղացիներով շրջապատված Սարոյի դիակին, տեսնում է, քարանում տեղում, քանդում հյուսքերն ու միանգամից տապալվում գետնին՝ Սարոյի կողքին:

Աճեմյանի բեմադրության ընթացքում վերականգնվում է Ա. Տիգրանյանի օպե-

<sup>17</sup> Վ. Աճեմյան. Որ հարազատ լինի պոեմի ոգուն.– “Սովետական արվեստ”, 1969, № 9, էջ 33:

<sup>18</sup> “Անուշ”-ի աճեմյանական բեմադրության մասին առավել մանրամասն տե՛ս С. Р и з а е в. Вардан Аджемян. М., 178, с. 229–235.

<sup>19</sup> Վ. Աճեմյան. Կյանքն ու ստեղծագործությունը լուսանկարներում և ժամանակակիցների գնահատմամբ, էջ 178:



րայի ամենահուզիչ էջերից մեկը՝ թափառական անցորդի՝ «անցվոր ախպոր» ու Անուշի՝ նախկինում հանված տեսարանն օպերայի հինգերորդ գործողության երկրորդ պատկերից: Ինչպես հիշում է Անուշի դերակատար Ե. Վարդանյանը. «Ես ծաղիկներ էի քաղում այդ տեսարանում ու երգում: Աճեմյանն ասաց. «Ծաղիկ մի՛ քաղիր, չի համոզում, պետք չէ, ուրիշ կերպ արտահայտիր Անուշի հոգեկան վիճակը»: Եվ տեսարանը դարձավ ավելի զուսպ ու ազդեցիկ»<sup>20</sup>:

Պրեմիերայից մի քանի օր անց՝ Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված՝ Ալ. Սպենդիարյանի անվան թատրոնի հյուրախաղերի ընթացքում՝ հոկտեմբերի 4-ին և 5-ին, աճեմյանական «Անուշը» ներկայացվում է Մոսկվայի Մեծ թատրոնում՝ արժանանալով հանդիսատեսի ջերմ ընդունելությանը:

Պատահական չէ, որ բազմաթիվ բարձր կոչումների արժանացած, կառավարական մի շարք պարզների ասպետ Վ. Աճեմյանին ՀՍՍՀ Պետական մրցանակ բերեց հենց «Անուշ»-ը. օպերայի պրեմիերայից մեկ տարի անց՝ 1970 թ. նոյեմբերի 28-ին, «Անուշ»-ի բեմադրության համար ռեժիսորն արժանացավ այդ մրցանակին:

Բանաստեղծի ծննդյան 125-ամյակը նշանավորվեց «Անուշ»-ի նոր՝ վեցերորդ բեմադրությամբ, որը 1994-ին իրականացրեց Տ. Լևոնյանը (դիրիժոր՝ Յու. Դավթյան, նկարիչ՝ Ե. Սաֆրոնով): Պրեմիերան տեղի ունեցավ հոկտեմբերի 22-ին՝ առաջ բերելով իրարամերժ կարծիքներ: Ըստ բեմադրող-ռեժիսորի՝ հանդիսատեսն այդ ներկայացման մեջ չի տեսնի ոչ Լոռվա լեռները, ոչ էլ Լոռվա ավանդական տարազը, այլ՝ «հայոց տարազի համաձուլվածք»: Մինչդեռ «Մարոյին և Մոսուն տեսնել սասունցու տարազով, նույնն է, թե Սասունցի Դավթին հազցնել լոռեցու չուխա»<sup>21</sup>, նկատեց Լ. Հախվերդյանը:

««Անուշի» նոր բեմադրությունը մեկ անգամ ևս ցուցադրեց, թե ինչ ժողովուրդ ենք, ինչ մշակույթի տեր, – գրել է Ս. Կապուտիկյանը, – ժողովուրդ, որ այս նեղ օրերին մութ ու խավարից կարող է երկնել այսպիսի ներկայացում, այսքան լույս ու ջերմություն, պահպանելով ամենազվախափորը՝ ոգին, շունչը»<sup>22</sup>:

Օպերայի առայժմ վերջին՝ յոթերորդ բեմադրությունը 2003-ին իրականացրել է Գ. Գրիգորյանը (դիրիժոր՝ Կ. Դուրգարյան):

«Անուշ» օպերան բավական բարդ է ժանրային առումով: Ինչպես նկատել է երաժշտագետ Գ. Տիգրանովը՝ սա, անկասկած, լիրիկական օպերա է՝ դա են վկայում

<sup>20</sup> Վարդան Աճեմյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 1997, էջ 109:

<sup>21</sup> Լ. Հախվերդյան. «Անուշի» հետ կատակ անել չի կարելի. դիտողություններ «Անուշ» օպերայի նոր բեմադրության վերաբերյալ. – «Ազգ» (Երևան), 17. XI. 1994:

<sup>22</sup> «Անուշ». Նորի ինքնահաստատումը, էջ 9:

բովանդակության բացահայտման բանաստեղծական ասպեկտը, սիրո թեմային հասկացված մեծ տեղը, ռոմանտիկական անկեղծությունը<sup>23</sup>:

“Անուշ”-ը դարձավ հայկական առաջին ժողովրդական ռեալիստական ավարտուն օպերան, ուր արտացոլված են հայ գյուղացիության կենցաղն ու բարքերը, մեծագույն ուժով ցուցադրված աղաթի սպանիչ ուժն ու հասարակ մարդկանց ողբերգական ճակատագիրը:

Եվ պատահական չէ, որ օպերայում էական դեր է կատարում աղաթի ահարկու լայթմոտիվը՝ դրանով է սկսվում օպերայի նախերգանքը, այն երկու անգամ հնչում է Երկրորդ գործողությունից Մոսիի “Աղաթ կա հնուց մեր մութ ձորերում իգիթն իր օրում, ընկեր իգիթին գետին չի գցիլ ամբոխի առաջ” պատասխանում: Սրա հետ է կապված “Մոսիի պարտության” լայթմոտիվը, որը ծնվում է կոխի տեսարանում՝ “Ամոթ, քեզ, Մոսի. թուք ու նախատինք” (Երրորդ գործողություն), հայտնվում Մոսիի միակ արիայում (Չորրորդ գործողություն), Մոսիի և Անուշի զուգերգում (Չորրորդ գործողություն):

Եվ իսկապես՝ օպերայի երաժշտական-դրամատուրգիական զարգացման գործում մեծ դեր են կատարում լայթմոտիվները: Իրար հետ սերտորեն կապված են Անուշի դժբախտ սիրո և Սարոյի տառապանքների լայթմոտիվները, որոնք առաջին անգամ հնչում են նախերգանքում, կոնտրապունկտային անցկացմամբ և հակադրվում աղաթի թեմային: Լայթմոտիվների նշանակություն են ստանում “Համբարձում յայլա” և “Չան գյուլում” երգերը, որոնք գործողության զարգացմանը զուգընթաց կերպարանափոխվում են:

Անուշի և Սարոյի քնարական կերպարներին է հակադրվում Մոսիի դրամատիկ կերպարը: Սա միջավայրի զոհերից է: Նահապետական գյուղի բարոյական նորմերը նրան դարձնում են մարդասպան՝ միայն այդ ճանապարհով նա կարող է թոթափել իր անվան վրա ծանրացած անպատվության բեռը: Նրա առաջին իսկ մուտքն ուղեկցվում է աղաթի թեմայով:

Տիգրանյանն օպերայում գրեթե չի օգտագործել ժողովրդական մեղեդիներ՝ բացառություն են չորանների պարը՝ Քոչարին, հարսի պարը՝ Նունուֆար: Եվ չնայած դրան՝ օպերայի ողջ երաժշտությունը ներթափանցված է ժողովրդական շնչով: Օպերայի երաժշտական լեզուն, ինտոնացիոն կառուցվածքը հարազատ է հայ ժողովրդական երգին, կենդանի ժողովրդական խոսքին:

Օպերայի երաժշտական լեզվի կարևոր առանձնահատկությունն է երգայնությունը: Երգը դառնում է երաժշտական դրամատուրգիայի գորեղ միջոց, որը ձևակազմավորում է ամբողջական երաժշտական-դրամատիկ տեսարաններ:

<sup>23</sup> “Անուշ” օպերայի մանրամասն վերլուծությունը տե՛ս Գ. Կոչարյան. Նշվ. հոդվ., էջ 221–269:

\* \* \*

Ժամանակի անհիվը ետ պտտելով նշենք, որ “Անուշ”-ն օպերայի վերածելու առաջին փորձը կատարեց Կոմիտասը: Նրա և Թումանյանի ստեղծագործական համագործակցությամբ ստեղծված “Անուշ” օպերան, թեև անավարտ, սակայն կարևոր դեր ունեցավ հայ երաժշտական թատրոնի պատմության մեջ:

1903-ին լույս է տեսնում Թումանյանի “Բանաստեղծություններ” ժողովածուն, որտեղ առաջին անգամ տպագրվում է “Անուշ”-ի ավարտված տարբերակը: Շուտով՝ նույն թվականի վերջերին, իշխանուհի, հասարակական և մշակութային գործիչ Մարիամ Թումանյանը դեռևս իրեն անձնապես անձանոթ Կոմիտասին է ուղարկում “Բանաստեղծությունների” գրքի մեկ օրինակ և ցանկություն հայտնում, որպեսզի նա պոեմի հիման վրա օպերա ստեղծի: “Չեմ հիշում, թե որտեղ և երբ ծանոթացա Կոմիտաս վարդապետի հետ, բայց իբրև երաժշտի, ես շատ վաղուց ճանաչում էի նրան և բարձր գնահատում էի, – իր հուշագրության մեջ կգրի Մ. Թումանյանը:– Ես միշտ երազել եմ լսել մի հայկական օպերա, այսինքն՝ որ թե՛ բովանդակությունը և թե՛ երաժշտությունը լիներ զուտ ժողովրդական: Հավատացած էի, որ Կոմիտասի գրչի տակից դուրս կգար մի հրաշալի բան, և իմ մեջ միտք հղացավ առաջարկել նրան Թումանյանի “Անուշը” օպերա դարձնելու ու այդ դիտավորությամբ ես նրան ուղարկեցի իմ հրատարակած ժողովածուն”<sup>24</sup>:

Արձագանքելով Մ. Թումանյանի առաջարկին՝ 1904 թ. հունվարի 22-ին Կոմիտասն Էջմիածնից գրում է. “Շնորհափայլ իշխանուհի, Ուրախութեամբ կարդացի պ. Յ. Թումանյանի “Անուշը” և շատ անուշ գտայ. պատրաստ եմ Ձեր փափագն իրագործելու”<sup>25</sup>: Կոմիտասը շարունակում է. “ա/ խնդրեցեք, իմ կողմից, պ. Բանաստեղծին 1) կարճէ՛ ծերուկի խոսքերը (երես 113 – 114). 2) լրացնե՛ “Հալալ է տրդին” (երես 115, վեր). 3) կանանց կոճը պակաս է (120), կարող է օգտուել վերջին “Ազգագրական հանդեսից”. 4) նոր գրել՝ սարերի ոգիների ու ջրերի ալքերի երգը, որ գրաւում է Անուշին և ջուրն է ընկնում (միայն 3 տուն լինի, վերջին տունն արդէն կայ “Վուշ-վուշ”) (126 – 127): Լրացնելուց յետոյ արտագրե՛ ինքը և ինձ ուղարկե՛, եթէ երաժշտութեան բարեձայնութեան համար փոխելու բառեր լինեն՝ նշանակել: Իւրաքանչիւր դերակատարի անունը նշանակել իր երգելիքից առաջ՝ տողասկզբին: Որքան կարելի է խոյս տայ թուրքերէն բառերից, երգի ոգին պահելու համար: Ամբողջութեան կապն իբրև երաժշտական երկ թերի է, կխնդրեմ՝ լրացնե՛. օրինակ. մայրը ձորն ի վայր ձայն է տալի (100), իսկ աղջիկն ու հովիւր խօսակցում են, ուրեմն բեմի վրայ չեն երևայ, որ անյարմար է:

<sup>24</sup> Մ. Թումանյան. Իմ համառոտ կենսագրությունը և իմ հիշողությունները, Երևան, 2003, էջ 137:

<sup>25</sup> Կոմիտաս. Նամակներ, Երևան, 2000, էջ 48:

բ) Գրուածքը շուտ պատրաստէ, որ ես էլ ուսումնասիրել կարողանամ ու երաժշտութեան ծրագիրը մշակեմ: Չեմ կարող որոշ ասել, թէ երբ պատրաստ կլինի, որովհետեւ ես մենակ եմ, և բոլոր գործերն ինձ վրայ են ծանրացած”<sup>26</sup>:

Մ. Թումանյանը, ի կատարումն Կոմիտասի հանձնարարության, նամակը ցույց է տալիս բանաստեղծին, որի հետ Կոմիտասը ծանոթ չէր: “Հետագայում նրանք շատ ընկերացան իրար հետ, և երբ Կոմիտասը Թիֆլիզ էր գալիս, միշտ այցելում էր Թումանյանին”<sup>27</sup>:

Կոմիտասը բազմիցս առաջարկել է Հովհ. Թումանյանին, որպէսզի նա վերամշակի տեքստը և հարմարեցնի երաժշտության պահանջներին: Մակայն բանաստեղծը հնարավորություն չի ունեցել գրել օպերայի լիբրետոն. հետագայում նա չգրեց նաև Մպենդիարյանի “Ալմաստ” օպերայի լիբրետոն՝ ըստ իր “Թմկաբերդի առումը” պոեմի: 1931 թ. “Անահիտ” հանդեսում տպագրված “Կոմիտասը և հայ երաժշտությունը” հոդվածում Արշակ Չոպանյանը կգրի. “Թիֆլիս գտնուած միջոցիս, Կոմիտասի հետ Թումանեանի տունն էինք օր մը, Կոմիտաս նորէն խնդրեց որ փութացնէ լիպրէթօին խմբագրումը. Թումանեան զգացուց, որ ասիկա իր ընելիք բանը չէր, “ես պոէմը գրեր եմ, ըսաւ խնդալով, լիպրէթօն էլ թող ուրիշը հանէ”<sup>28</sup>: Մպասելով այդ լիպրէթօին, Կոմիտաս արդէն Անուշի քանի մը մեներգերու եւ խմբերգերու եղանակը յօրինած էր (ինքնահնար եղանակներ՝ ժողովրդական երգերու ոճով), աստոնք ինծի երգեց Էջմիածին, եւ շատ սիրուն գտայ (մանաւանդ Ասել եւ ուռին սիրոյ ողբերգին եղանակը). Բարեբաղդաբար իր ձեռագրաց մէջ գտանք Անուշի համար գրած այդ եղանակները որոնք (թէեւ անոնց դաշնակումը դեռ չէ շարադրած) նոյնութեամբ հրատարկուի, կ’արժեն”<sup>28</sup>:

Թումանյանը, ինքը չգրելով լիբրետոն, սակայն թույլ է տվել, որ դա ուրիշն անի: Տեսնելով, որ լիբրետոն Թումանյանի հետ մշակելու գործը տեղից չի շարժվում՝ Կոմիտասն ինքն է կազմում լիբրետոն: Դա է վկայում “Անուշ”-ի 1903-ին տպագրված օրինակը, որի լուսանցքներում և ազատ տեղերում համապատասխան նշումներով Կոմիտասն ուրվագծել է օպերայի սկզբի թատերատեսրը: Օպերայի հիմնական աշխատանքները Կոմիտասը կատարում է 1904-ին: 1905 թ. մարտի 3-ին Մ. Թումանյանը գրում է Կոմիտասին. “Ես շատ ուրախ եմ, որ հնարավորություն կունենամ Ձեզ հետ ծանոթանալու և խոսելու “Անուշ” օպերայի մասին: Եթէ կարելի է Ձեզ հետ բերեք ձայնագրած կտորները, ասում են շատ հաջող բան է դուրս եկել”<sup>29</sup>:

<sup>26</sup> Նույն տեղում, էջ 49:

<sup>27</sup> Մ. Թումանյան. նշվ. աշխ., էջ 138:

<sup>28</sup> Ա. Չոպանյան. Կոմիտաս Վարդապետ եւ հայ երաժշտութիւնը.– “Անահիտ”, Գ Տարի, թիւ 1–2, 1931, մայիս-օգոստոս, Փարիզ, էջ 118:

<sup>29</sup> Բ. Հովակիմյան. Կոմիտասի թատերական աշխարհը.– Կոմիտասական, հ. 2, Երևան, 1982, էջ 247:

1905 թ. մարտի 31-ին Էջմիածնի Գևորգյան ճեմարանի 60 հոգուց բաղկացած քառաձայն երգեցիկ խումբը՝ Կոմիտասի ղեկավարությամբ, ուղևորվում է Թիֆլիս՝ համերգներ տալու<sup>30</sup>: Թիֆլիսյան այս ուղևորության ընթացքում տեղի են ունենում Կոմիտասի և Հովհ. Թումանյանի հանդիպումները: Մ. Թումանյանին և բանաստեղծին Կոմիտասը ցույց է տալիս իր կատարած աշխատանքը՝ նրանց բնակարաններում կատարում հատվածներ «Անուշ»-ից: Այդ են վկայում Մ. Թումանյանը՝ «բավական բան էր գրել Կոմիտասը իր օպերայից և մի քանի կտոր նույնիսկ նվագել էր իմ տանը և հիացրել էր ինձ»<sup>31</sup>, և բանաստեղծի դուստրը՝ Ն. Թումանյանը. ըստ նրա՝ իրենց տանը Կոմիտասը ոգևորությամբ նվագել է հատվածներ «Անուշ»-ից<sup>32</sup>:

Նույն՝ 1905 թ. մայիսին Թումանյանն այցելում է Էջմիածին, հանդիպում Կոմիտասի հետ և նրան նվիրում իր լուսանկարը՝ «Կոմիտաս հայր սուրբին՝ իր բարեկամը Հ. Թումանյան» մակագրությամբ: Ամենայն հավանականությամբ, այստեղ Կոմիտասը բանաստեղծին ցուցադրել է հատվածներ իր օպերայից<sup>33</sup>, և Թումանյանը Կոմիտասի կատարմամբ լսել է «Բարձր սարեր», «Ասում են ուռին», «Աղջի անաստված» երգերը<sup>34</sup>:

«Անուշ»-ի վերաբերյալ տեղեկություններ ենք գտնում բանաստեղծին 1908 թ. մայիսի 24-ին հղված Կոմիտասի նամակում. «Աղբեր, վաղուց է սկսել եմ և բաւական բան գրել քո «Անուշից», բայց դեռ պակասաւոր բաներ շատ կան, որպէսզի մի ամբողջութիւն դառնայ: Այս գիրս առնելուն պէս գրիչդ կառնես և ինձ մի դրական բան կգրես: Այս ամառուան արձակուրդին պէտք է զբաղուեմ առաւելապէս «Անուշ»-ով: Գրի ը թէ ե՞րբ կարող ես մի քանի օրով ինձ մօտ հիւր գալ, և այստեղ միասին վերջացնենք, և ես հանգիստ շարունակեմ. ամեն անգամ, երբ տրամադրութիւնս տեղն է, ձեռքերս թուլանում են, որովհետև երգի յարմարացրած չեն դեռ բաներ, և պակասներ էլ կան»<sup>35</sup>:

Սակայն հանդիպումը տեղի չի ունենում. այդ է վկայում Կոմիտասի հունիսի 8-ի նամակը. «Միրելի Յովհաննէս, Էջմիածին չեկար, մոծակից վախեցար. էդ պիծի մոծակն ի՞նչ է, որ մարդս նորանէն վախենայ, ես քեզ այնպիսի տեղ տայի, որ մոծակ չէ, մոծակի աղբերն իր ճտերով չէր կարող մուտք գործել: Բան չունեմ ասելու: Ու-

<sup>30</sup> Ռ. Մ ա զ մ ա ն յ ա ն. Հայ երաժշտական կյանքի տարեգրություն. 1901–1910, Երևան, 2006, էջ 97:

<sup>31</sup> Մ. Թ ու մ ա ն յ ա ն. նշվ աշխ., էջ 138:

<sup>32</sup> Ռ. Ա թ ա յ ա ն. Կոմիտասի «Անուշ» անավարտ օպերայի ուրվագրերը.– Կոմիտասական, հ. 2, էջ 56:

<sup>33</sup> Նույն տեղում:

<sup>34</sup> Բ. Հ ո վ ա կ ի մ յ ա ն. նշվ. հոդվ., էջ 246:

<sup>35</sup> Կ ո մ ի տ ա ս. Նամակներ, էջ 53:

գում ես Դիլիջան, բարի՛. դաշնամուրի մասին հոգ մի՛ անիր. իմ գալու կամ քո գալուդ նպատակն է լինելու միայն նեթ բառերը՝ բանաստեղծությունը լրացնել դերակատարներով և երգերով, մի խոսքով՝ կազմել լիբրեթոն: Իսկ միւս բաները՝ երաժշտականը, կկազմեն ես Էջմիածնում, ուր իմ սենեակում հարկաւոր յարմարություններն էլ կան ինձ համար: Մանրամասն ծրագիրներս կպատմեմ, երբ տեսնուենք, շատ դժուար է երաժշտութեան մասին գրով խօսել-բացատրուելը: Ես որոշել եմ այս ամառն անցնել Էջմիածնում, բայց մի 10 օրով կգամ Դիլիջան, մինչև “Անուշը” լրացնենք”<sup>36</sup>:

1909 թ. փետրվարի 14-ին Մ. Թումանյանին Կոմիտասը գրում է. “Մեր Յովհաննէսի չարձակուելը շատ վատ տպավորություն թողեց վերաս, որքան զրկում է մեր գրական-բանաստեղծական կեանքը նորա անգործ բանտումն ընկած մնալով: Ի հարկէ, երևի դեռ երկար պահեն, մինչև ամբողջ կծիկը բաց անեն: Լսում է, որ շատ խիստ որոնում են զանազան տեղերում մի շարք անձանց: Այս խմորը դեռ շատ ջուր կառնի: “Անուշն” առաջ է գնում, էլի մի շարք նոր բաներ գրեցի: Մնացել եմ մոլորուած, Յովհաննէսի բանտարկությունն էր պակաս, էլի կիսատ մնաց “Անուշ”ի երգական խմբագրությունը. յոյս ունէի, որ կգար այս տօներին, և վերջ կտայինք, այդ էլ այդպէս մնաց”<sup>37</sup>: “Անուշ”-ի հետ կապված աշխատանքները տնեցին մինչև 1909 թ.:

1910-ին Կոմիտասը տեղափոխվում է Կ. Պոլիս և այլևս չի հանդիպում Թումանյանին. դրանով իսկ ի դերն եղավ համատեղ աշխատելու հնարավորությունը:

Ցավոք, Կոմիտասի “Անուշ” օպերան մնաց անավարտ: Գրվել են առանձին երգեր ու խմբերգեր, այդ թվում՝ փերիների երգը՝ “Եկեք քույրեր” խմբերգը, “Վուշվուշ, Անուշ” խմբերգը, Սարոյի խոստովանությունը՝ “Աղջի անաստվածը” (սրա մեղեդու համար հիմք է ծառայել “քրդական “Լուր-դա-լուր”-ի՝ հովվական սրնգի այն եղանակը, որը Էջմիածնում Կոմիտասի համար ջութակով նվագել է Վրթանէս Փափագյանը, և Կոմիտասը տեղն ու տեղը գրի է առել դա)<sup>38</sup>, Անուշի երգը՝ “Ասում են ուրին”, Սարոյի “Աի, Անուշ, Անուշ” ասերգը, Անուշի մենախոսությունը՝ “Ասում են մի օր” կենտրոնական հատվածով, “Աղջիկ բախտավոր” երգը՝ “Համբարձում յայլա” կրկներգով, Սարոյի երրորդ երգը՝ “Բարձր սարերը”, “Քաղվորի”<sup>39</sup> “Միրուն աղջիկ” երգը և այլն: Կոմպոզիտորը չհասցրեց ավարտել օպերան: “...այդ մեղեդիները ավարտված օպերա չեն, – նշում է Ռ. Աթայանը, – այլ են միայն օպերայի երգային մասի մեղեդիական թեմաներ, ուրվագրեր: Հարցն այն է, որ իրենց այդպիսի վիճակում էլ նույն նյութերը գեղարվեստական նշանակալից շահեկանություն

<sup>36</sup> Նույն տեղում, էջ 53–54:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 51–52:

<sup>38</sup> Ռ. Աթայան. նշվ. հոդվ., էջ 59:

<sup>39</sup> Կոմիտասն այսպէս է անվանել պոեմի հերոսներից մեկին՝ “Անցվոր ախպերին”:

ունեն<sup>40</sup>:

Հայտնի է, որ “Անուշ” պոեմի վերջում կորցնելով Սարոյին, Անուշի մտաշխարհը խախտվում է. նա “խելակորույս” է ու “խելագար”: Այդպես հետագայում կմեկնաբանվի Անուշի հոգեվիճակը Ա. Տիգրանյանի օպերայի վերջնամասում, երբեմն այդ տեսարանի համերգային կատարման ժամանակ դա հենց անվանում են “խելագարության տեսարանը “Անուշ” օպերայից”: Սակայն Կոմիտասի Անուշը օպերայի ավարտամասում ամեննին էլ խելակորույս չէ: Ինչպես նկատում է Ռ. Աթայանը, “Թեև Անուշի Դեբետ նետվելը Կոմիտասը ևս բանաստեղծականորեն կապում է այլերի դյուրանքի հետ, բայց տպավորությունն այն է, որ լինելով “Մեծ սիրո կրող”, գտնվելով հոգեկան ծանր ապրումների մեջ, ապրելով ամենախոր վշտի զգացում, նրա Անուշը գիտակցաբար է վերջ տալիս իր կյանքին, վախճանը գտնելով այնտեղ (“Չորում, գետի եզերքին”), ուր “կանչում է մենակ շիրիմն իգիթի”: Այսպիսի դեպքում ճիշտ կլինի ասել, որ Կոմիտասի պատկերմամբ ևս այդ ակտը պետք է հնչեր որպես սիրո բռնադատման դեմ ըմբոստացման արտահայտություն, ինչպես նույն այդ ակտը մեկնաբանել են “Անուշ” պոեմի այլ ուսումնասիրողներ<sup>41</sup>:

Կոմիտասյան “Անուշ”-ի պահպանված հատվածների ուսումնասիրման գործում ծանրակշիռ է Գ. Տիգրանովի<sup>42</sup> և Ռ. Աթայանի<sup>43</sup> ներդրումը: Ձեռնարկելով օպերայի երաժշտության ուսումնասիրությունը՝ Աթայանը կազմակերպում է երաժշտական հատվածների ցուցադրումը: Պահպանված հատվածների համերգային կատարումը տեղի ունեցավ նախ՝ հեռուստատեսությամբ, ապա՝ Թումանյանի տուն-թանգարանում՝ բանաստեղծի մահվան 50-ամյակի օրը հրավիրված գիտական նստաշրջանի շրջանակներում: “1973 թ. մարտի 23-ին, օպերան գրվելուց վեց-յոթ տասնամյակ անց, Թումանյանի հարկի տակ, առաջին անգամ, հուրախություն ներկա գտնվողների, հնչեցին Անուշի և Սարոյի մեներգերը և մի շարք խմբերգեր: Ռ. Աթայանի հանգամանալից ծանոթությունից հետո հանդես եկան ուսանողներ Արաքս Մանսուրյանը (Անուշ), Արգաս Ոսկանյանը (Սարո), Լ. Աբրահամյանը, Ս. Ադյանը. Ջ. Մանուկյանը և Շ. Մկրտչյանը (երգեցիկ խումբ): Ներկաները սիրով ընդունեցին կոմիտասյան մեղմ, թրթռուն, հոգեհարազատ մեղեդիները”<sup>44</sup>:

Օպերայի անավարտության պատճառները շատ են, սակայն հիմնականը Կոմիտասի գերծանրաբեռնվածությունն էր: Մի կողմից՝ Էջմիածնի Գևորգյան ճեմարանի դասերը, Մայր աթոռի երգեցիկ խմբի ղեկավարումը, Միջազգային երաժշտական ընկերության գիտական ժողովածուի համար ուսումնասիրությունները,

<sup>40</sup> Ռ. Աթայան. նշվ. հոդվ., էջ 56:

<sup>41</sup> Նույն տեղում, էջ 55:

<sup>42</sup> Տե՛ս Գ. Թիգրանով. նշվ. հոդվ., էջ 193–217:

<sup>43</sup> Տե՛ս Ռ. Աթայան. նշվ. հոդվ., էջ 42–82:

<sup>44</sup> Բ. Հովակիմյան. նշվ. հոդվ., էջ 252:

դասագրքերի պատրաստումը, Մ. Աբեղյանի հետ ժողովրդական երգերի բառերի խմբագրումը, մյուս կողմից՝ երաժշտական գործիքներ չունենալու հանգամանքը: “... խցումս մի շատ փոքրիկ (4 ութնեակ) երգեհոն ունեմ. ինչ արած. անճարը կերել է բանջարը”<sup>45</sup>, – կգրի Մ.Թումանյանին: Մյուս կողմից՝ դեր խաղացին նաև սիմֆոնիկ երաժշտություն գրելու Կոմիտասի փորձի պակասը, ինչպես նաև մասնագիտորեն մշակված լիբրետոյի բացակայությունը:

Թումանյանի “Անուշ”-ին է անդրադարձել նաև իրանահայ կոմպոզիտոր, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Նիկոլ Գալանդեթյանը: Խոսքը “Նախերգանք “Անուշ”-ի” վերնագրով վոկալ-գործիքային անսամբլի մասին է, որը գրվել է նախ որպես խմբերգ՝ 1929-ին, այնուհետև տարբեր հատվածներ են ավելացվել, իսկ “1943 թվականին գործիքային բաժիններով խմբերգային հատուածները միացվել են մեկ ամբողջութեան մէջ”<sup>46</sup>: Արդյունքում՝ ստացվել է անսամբլ սուպրանոյի, ալտի, տենորի, բասի, թավջութակի և դաշնամուրի համար: Անսամբլի ստեղծումից մեկ տարի անց՝ 1944-ի մարտի 2-ին, մեկ ամիս տևած ծանր հիվանդությունից հետո Գալանդեթյանը հրաժեշտ է տալիս երկրային կյանքին: “Գերեզման են իջեցնում արևեստագետին արևի ոսկի շողերի և “Գալանդեթեան” երգչախմբի երգի մելամաղձոտ հնչյունների ներքոյ, որ թէ՛ սգո հանդեսի և թէ՛ թաղման ժամանակ հնչեցնում է նրա ձայնագրած “Անուշի” քառաձայն նախերգանքը – “Վուշ, վուշ, Անուշ”...”<sup>47</sup>:

\* \* \*

Ն. Ա. Ռիմսկի-Կորսակովն Ալ. Սպենդիարյանին խորհուրդ էր տվել գրել “արևելյան” օպերա: Կոմպոզիտորին առաջարկում են օպերան գրել “Արա Գեղեցիկ և Շամիրամ” լեգենդի հիման վրա. առաջարկը պաշտպանում է Վ. Մուրենյանցը: Ալ. Սպենդիարյանը 1915 թ. Մոսկվայում ծանոթանում է Մ. Մարյանի հետ, ով նրան խորհուրդ է տալիս օպերայի համար հիմք վերցնել Թումանյանի “Անուշ” պոեմը:

1916-ի գարնանը Հայոց երաժշտական ընկերության հրավերով Սպենդիարյանն այցելում է Թիֆլիս. մարտի 27-ին Արքունական թատրոնում նա տալիս է իր առաջին համերգը՝ բացառապես իր ստեղծագործություններից և իր ղեկավարությամբ: Համերգը մեծ հաջողություն է ունենում, կոմպոզիտորը՝ ջերմ ընդունելություն գտնում:

<sup>45</sup> Կոմիտասի Նամակներ, էջ 50:

<sup>46</sup> Մ. Մուշեղեան. Նիկոլ Գալանդեթեանի գուգերգերը. – Ն. Գալանդեթեան. Զուգերգեր և անսամբլներ, Լ, Երևան, 2003, էջ 6:

<sup>47</sup> Ա. Երեմեան. Երգահան Նիկոլ Գալանդեթեան (նրա կեանքի և երաժշտական արևեստի հիմնական գծերը), Թեհրան, 1947, էջ 38:



Թումանյանն ակտիվորեն մասնակցում է Հայոց երաժշտական ընկերության կազմակերպած այդ համերգի և հաջորդ օրվա բանկետի նախապատրաստական աշխատանքներին: Համերգին ընդառաջ՝ մամուլում տպագրվում է նրա “Ողջունում ենք” վերնագրով հոդվածը, իսկ բանկետին նա հանդես է գալիս թամադայի դերում: Իր ողջույնի խոսքում բանաստեղծն ասում է. “Ահա էսօր գալիս է եվրոպական երաժշտական աշխարհքում անուն հանած հայ նշանավոր երաժշտագետը, Ալ. Սպենդիարյանը, օտար երկրից դեպի հայրենի մթնոլորտը, արևմտյան երաժշտությունից դեպի արևելյան երաժշտությունը, մեծ ու գեղեցիկ ծրագիրներով, որոնց գործ դառնալուն առհավատյա են իր խոշոր տաղանդն ու փայլուն պատրաստությունը և է՛ն հանգամանքը, որ իր շարժվելու հնարավորությունով կապված ու կախված չի մեր դժբախտ իրականությունից: Առաջին անգամն է մեր տաղանդավոր հայրենակիցը հայտնվում մեր մեջ, առաջին անգամն է դուրս գալիս մեր հասարակության առջև, և առաջին անգամից ողջունում ենք հրճվանքով ու ծափերով”<sup>48</sup>:

Թիֆլիս հասնելու առաջին իսկ օրերից կոմպոզիտորը սկսում է հետաքրքրվել Թումանյանի “Անուշ” պոեմով: Մի երեկո Թումանյանը նրա համար ընթերցում է պոեմը, բայց կոմպոզիտորին երկի նյութն անձանոթ է թվում: Որոշում են ամռանը միասին գնալ Լոռի՝ մոտիկից ծանոթանալու բնությանը, ժողովրդին, նրա կյանքին ու կենցաղին: Այնուհետև անցնում են “Փարվանա” լեզենդին: Սպենդիարյանը հավանում է, նկատում, որ “Լավ բան է, բայց սեղմ է գրված: Ծավալվելու տեղ չկա, լիրիկան շատ է ...”,<sup>49</sup> և խնդրում է Թումանյանին, որպեսզի փոքր-ինչ ընդարձակի, երգեր ավելացնի և դրանով հնարավորություն ստեղծի օպերա գրելու համար: Թումանյանը կարդում է “Թմբկաբերդի առումը” գուգահեռաբար թարգմանելով ռուսերեն, քանի որ կոմպոզիտորը հայերեն չգիտեր: Նա պոեմն ամբողջությամբ, մասնավորապես՝ Նախերգանքը, շատ է հավանում. տեղից վեր է թռչում և գոչում. “Այ, սա ուրիշ բան է, իսկն իմ ուզածն է” ու սկսում ոգևորված քայլել սենյակում<sup>50</sup>: Սպենդիարյանը Թումանյանին խնդրում է տող առ տող թարգմանել պոեմը: Առանձնապես հավանում է Նախերգանքի աշուղական ձևը: “Սպենդիարյանը լսում էր պոեմը, ման էր գալիս սենյակի մի ծայրից մյուսը և արտասանում. “Հեյ, պարոններ...”, բայց չկարողանալով շարունակել, դիմում էր Թումանյանին՝ ասելով. “Դե,

<sup>48</sup> Ն. Թումանյան. Ալ. Սպենդիարյանի և Հովհ. Թումանյան (“Ալմաստ”-ի շուրջ ունեցած նրանց հանդիպումների առթիվ).– “Սովետական արվեստ”, 1941, № 5, էջ 40:

<sup>49</sup> Ն. Թումանյան. Թումանյանն ու Սպենդիարյանը.– “Սովետական արվեստ”, 1958, № 8, էջ 68:

<sup>50</sup> Տե՛ս նույն տեղում:

հետո ինչպես է, պարոն Հովհաննես...”: ... Եվ խնդրում էր նորից ու նորից կարդալ նախերգանքը”<sup>51</sup>:

Եվ այսպես աշխատում են միասին օրեր շարունակ, և ծնվում է “Ալմաստ” օպերան, որի լիբրետոն հետագայում ռուսերեն կազմում է Սոֆյա Պարնոկը՝ 1917–1918-ին:

Սպենդիարյանը “Ալմաստ”-ի՝ հայ ժողովրդի հերոսական-ազատագրական պայքարն արտացոլող հոգեբանական-փիլոսոփայական բնույթի երաժշտական դրամայի կլավիրն ավարտեց 1923-ին, գործիքավորումը՝ 1928-ին (Չորրորդ գործողությունը գործիքավորեց Մ. Շտեյնբերգը): Սակայն կոմպոզիտորն այդպես էլ բեմում չտեսավ “Ալմաստ”-ը. այն առաջին անգամ բեմադրվեց 1930-ին Մոսկվայի Մեծ թատրոնի մասնաճյուղում, ապա Օդեսայում (1930, ուկրաիներեն), Թբիլիսիում (1932, վրացերեն), Տաշքենդում (1953), Նովոսիբիրսկում (1972):

Երևանում “Ալմաստ” օպերայի բեմադրությամբ (ռեժիսոր՝ Ա. Բուրջայան, դիրիժոր՝ Ս. Ստոլերման, ապա՝ Գ. Բուդաղյան, նկարիչ՝ Մ. Սարյան, լիբրետոյի թարգմանությունը՝ Տ. Հախումյանի) 1933-ի հունվարի 20-ին երաժշտասերների առջև իր դրները բացեց Հայկական ԽՍՀ ժողկոմիտրիի 1932թ. մայիսի 13-ի որոշմամբ ստեղծված Երևանի օպերային թատրոնը, որը 1938-ից անվանակոչվեց Ալ. Սպենդիարյանի անունով<sup>52</sup>:

“Ալմաստ”-ի նոր՝ հինգերորդ բեմադրությամբ 1983 թ. բացվեց օպերային թատրոնի հոբելյանական թատերաշրջանը (ռեժիսոր՝ Վ. Բագրատունի, դիրիժոր՝ Յու. Դավթյան, նկարիչ՝ Ս. Արուստյան):

“Ալմաստ”-ը դարձավ Սպենդիարյանի ստեղծագործության գագաթը և բացառիկ տեղ նվաճեց հայկական օպերային արվեստում: Եթե “Արշակ Երկրորդ”-ը հայկական առաջին պատմահայրենասիրական օպերան էր, իսկ “Անուշ”-ը՝ առաջին հայկական լիրիկական-կենցաղային օպերան, ապա “Ալմաստ”-ը հայկական առաջին ռեալիստական հերոսական-հայրենասիրական օպերան է, բազմապլան ստեղծագործություն, որտեղ հայրենասիրական թեմայի կողքին առաջին պլան է մղվում բարոյափիլիսոփայական, սոցիալական և հոգեբանական թեմատիկան<sup>53</sup>:

\*\*\*

Թումանյանի ստեղծագործությանն են անդրադարձել ինչպես իր ժամանակակիցները՝ բանաստեղծի կենդանության օրոք, այնպես էլ երիտասարդ սերնդի կոմպոզիտորները՝ նրա մահից շատ հետո: Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպե-

<sup>51</sup> Տե՛ս նույն տեղում:

<sup>52</sup> Հետագայում “Ալմաստ”-ը վերաբեմադրվեց 1939-ին, 1969-ին, 1971-ին և 2009-ին:

<sup>53</sup> Տե՛ս Գ. Գեոդակյան. Ա. Սպենդիարյանի օպերա «Ալմաստ» (историко-критический этюд.– Գ. Գեոդակյան. Пути формирования армянской музыкальной классики. Ереван, 2006, с. 182.

րայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում 1970-ին բեմադրվել է Էրիկ Հարոյությունյանի «Մի կաթիլ մեղրը» երկու գործողությամբ օպերան՝ հեքիաթը մեծահասակների համար, իսկ 1980 թ. Վ. Աճեմյանի «Կիկոսի մահը» օպերան՝ վերջինիս դիպլոմային աշխատանքը, որը բախտորոշ նշանակություն ունեցավ կոմպոզիտորի հետագա ստեղծագործական կյանքում: Օպերայի թեման նրան հուշել էր պապը՝ Վարդան Աճեմյան-ավագը՝ խորհուրդ տալով դիմել Հովհ. Թումանյանի ստեղծագործությանը, ավելի կոնկրետ՝ «Կիկոսի մահը» հեքիաթին: Լիբրետոն գրեց հենց պապը, ով օպերաների բեմադրման գործում մեծ փորձ ուներ: Այս օպերայով Վ. Աճեմյան-կրտսերը 1978-ին ավարտեց կոնսերվատորիան: Ցավոք, 1977 թ. հունվարի 24-ին հանկարծամահ եղավ Վ. Աճեմյան-ավագը՝ այդպես էլ չտեսնելով օպերան բեմում: Պրեմիերան տեղի ունեցավ Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում 1980 թ. հուլիսի 12-ին, ապա ներկայացվեց 13-ին, 14-ին և 15-ին: «Կիկոսի մահը» օպերան դարձավ ստեղծագործություն, որը ձևավորեց նրան Վ. Աճեմյանին, որպես արվեստագետի<sup>54</sup>:

«Կիկոսի մահը» օպերայի բեմադրության կապակցությամբ երաժշտագետ Կ. Խուդաբաշյանը, նկատի ունենալով Է. Հարությունյանի «Հեքիաթ մեծերի համար» օպերան՝ ըստ Թումանյանի «Մի կաթիլ մեղրի» և Է. Խաղազորձյանի՝ «Շունն ու կատուն» հեքիաթի հիման վրա ստեղծված «Ականջներով գլխարկը» մանկական օպերան, նկատել է, որ Թումանյանի հեքիաթները դարձան հայկական օպերայի ևս մեկ ժանրի՝ օպերա-երգիծանքի սկզբնավորող<sup>55</sup>:

\* \* \*

Թումանյանի ստեղծագործությունը ոգեշնչել է սփյուռքահայ կոմպոզիտորներին ևս: Ն. Գալանդեյանն իր երեք օպերաներից մեկի համար հիմք դարձրեց Թումանյանի «Փարվանա» լեգենդը. հենց այն ստեղծագործությունը, որն առաջարկել էր բանաստեղծը Սպենդիարյանին: 1931–1932 թթ. Գալանդեյանը գրեց «Փարվանա» օպերան՝ երեք գործողությամբ և բալետային տեսարանով, լիբրետոն կազմեց ինքը՝ կոմպոզիտորը: Օպերան, ցավոք, չի բեմադրվել, «որովհետև հսկայ ծախսերի հետ կապուած է եղել եւ բացի այդ էլ արգելադրութ պատճառներ նպաստել են չբեմադրւելուն»<sup>56</sup> և մինչ օրս սպասում է իր բեմելին:

Երաժշտական թատրոնի համար սփյուռքահայ կոմպոզիտոր, խմբավար, մանկավարժ և երաժշտական-հասարակական գործիչ Համբարձում Պերպերյանի

<sup>54</sup> Տե՛ս Մ. Քուրչյան. Թատր շուկա Վարդան Աճեմյան. Երևան, 2015, ս. 27–41.

<sup>55</sup> Տե՛ս Կ. Խուդաբաշյան. Ժանրի պարադոքսներ.– «Սովետական արվեստ», 1982, № 7, էջ 30–37:

<sup>56</sup> Ն. Գալանդեյան. Օպերաներ, հ. Է, Երևան, 2003, էջ 5:

(ԱՄՆ) երեք գործերից երկուսի համար հիմք է դարձել Թունանյանի ստեղծագործությունը: Նրա երկրորդ օպերան երեք արարից բաղկացած “Շողիկ” օպերան է (1939), որի համար հիմք է ծառայել բանաստեղծի “Երկրում” պոեմը: Երրորդ օպերան՝ “Արեգնագան” օպերա-կանտատը, գրել է Թունանյանի “Թմկաբերդի առումը” պոեմի հիման վրա, 1940-ին: Օպերան անվանել է հերոսուհու անունով: Պերպերյանը տեղյակ չի եղել Սպենդիարյանի “Ալմաստ” օպերայի գոյության մասին:

1958-ին Վիեննայում Լորիս Ճգնավորյանն ստեղծել է “Աղավնու վանքը” մեկ գործողությամբ օպերան:

\* \* \*

Թունանյանի ստեղծագործությունը հիմք է դարձել բալետների համար ևս: 1966 թ. Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնում բեմադրվել են Գրիգոր Հախինյանի “Ախթամար”<sup>57</sup>, “Ուռենի” և “Լոռեցի Սաքոն” մեկ գործողությամբ բալետները՝ Ե. Չանգայի բեմադրությամբ: Կոմպոզիտորը հակված էր դեպի երաժշտական պատմողականությունը, քնարականությունը, սիրում էր երաժշտական-բանաստեղծական մտորումներ կյանքի, բարու և չարի, մարդու հոգեկան գեղեցկության մասին: Այդ իսկ պատճառով էլ “քնարական բալետների ստեղծման խնդիրը, Հովհ. Թունանյանի պոեմները երաժշտա-խորեոգրաֆիական լեզվի փոխադրելը նրան հատկապես հոգեհարազատ էր: Եվ շատ բան նրան հաջողվեց: Դա վերաբերում է, մասնավորապես, բնության, ժողովրդական կենցաղի երաժշտական պատկերների ստեղծմանը (հատկապես “Լոռեցի Սաքոն”-ում), ինչպես նաև որոշ գործող անձանց, քնարական ապրումների ուրվանկարներին”<sup>58</sup>:

“Ախթամար” բալետի (1961) լիբրետոյում պահպանվել են հիմնական պուժետային գիծն ու գլխավոր հերոսների բնութագրերը, սակայն ավելացվել է նոր գործող անձ՝ Վրեժը, որը փոխարինում է թունանյանական լեգենդի “կղզու միջի ջահելներին”, ովքեր՝

“... Թամարի ձեռքով վառած  
Լույսը հանգցրին մի գիշեր”<sup>59</sup>:

<sup>57</sup> “Ախթամար”-ին հայ երաժշտության մեջ առաջինն անդրադարձել է Սպ. Մելիքյանը՝ գրելով կանտատ սիմֆոնիկ նվագախմբի ու երգչախմբի համար: Լեգենդին է դիմել նաև Ա. Տեր-Ղևոնդյանը: Սփյուռքահայ կոմպոզիտորներից 1953-ին համանուն դաշնամուրային պիես է ստեղծել ամերիկահայ կոմպոզիտոր Ալան Հովհաննեսը, իսկ Միրվարդ Գարամանուկյանը (Թուրքիա) գրել է Պոեմ երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար:

<sup>58</sup> Г. Т и г р а н о в. Оперное и балетное творчество. – Музыкальная культура Армянской ССР, сборник статей. М., 1985, с. 107.

<sup>59</sup> Հ ո Վ Ի Կ Ի Թ ո Ն Ի մ ա ն յ ա ն. Հատընտիր, Երևան, 1969, էջ 55:

Բալետն սկսվում է վոկալ-սիմֆոնիկ Նախերգանքով, որի մեղեդին գուժում է դժբախտ սիրո պատմությունը:

“Ուռենի” բալետի համար հիմք է ծառայել “Անուշ” պոեմի “Ասում են, ուռին” 16 տողանոց հատվածը: “Բալետը որոշակի սյուժե չունի, սա ավելի շուտ քնարական տրամադրություններ արտահայտող սիմֆոնիկ պատկեր է, որի դրամատուրգիական զարգացումը Ուռենի-աղջկա հոգեբանությունն է, նրա ներաշխարհն ու ապրումները”<sup>60</sup>: Այս սիմֆոնիկ պատկերն արտահայտում է ոչ թե մարդու պայքարը ճակատագրի դեմ, այլ նրա հնազանդությունը ճակատագրին, որով կարծես ավելի է խտանում ողբերգությունը<sup>61</sup>:

“Լոռեցի Սաքոն” չորս պատկերից բաղկացած բալետի (1961) լիբրետոն կազմել է Ա. Ղարիբյանը: Հիմնականում պահպանելով պոեմի բովանդակությունը՝ լիբրետիստը կատարել է որոշ հավելումներ. ավելացրել է մի քանի նոր կերպարներ՝ Սաքոյի նշանածը և գրբացը, որ վերջին պատկերում փորձում է բուժել Սաքոյին:

\* \* \*

Հովհ. Թումանյանի պոեզիան մարմնավորվել է սիմֆոնիկ երաժշտության մեջ՝ ստեղծվել են ծրագրային սիմֆոնիզմի նմուշներ, որոնց համար հիմք են դարձել բանաստեղծի պոեմները, բալլադներն ու լեգենդները:

Թումանյանի պոեզիան հիմք հանդիսացավ հայկական ծրագրային սիմֆոնիզմի անդրանիկ նմուշների ստեղծման համար: “Նվագախմբի համար չորս երգեր”-ից հետո Ա. Տեր-Ղևոնդյանը 1923 թ. “Ախթամար” լեգենդի հիման վրա ստեղծել է ազգային սյուժեով ծրագրային սիմֆոնիկ առաջին երկերից մեկը՝ “Ախթամար” ծրագրային սիմֆոնիկ պատկերը, որը կոմպոզիտորին բերեց այն տարիների հայ սիմֆոնիկ երաժշտության մեջ առաջատար տեղերից մեկը: “Ախթամար”-ում կոմպոզիտորը ինքնատիպորեն մարմնավորեց Մ. Բալակիրևի և Ն. Ռիմսկի-Կորսակովի սիմֆոնիկ ստեղծագործությանը բնորոշ որոշ գծեր ու առանձնահատկություններ: Մինևույն ժամանակ այս ստեղծագործությունը շարունակում է քնարական պատկեր-պոեմի գիծը, որը հայ երաժշտության մեջ ձևավորվեց Սպենդիարյանի “Երեք արմավենի”-ով<sup>62</sup>:

1958-ին ստեղծվում է Գրիգոր Հախինյանի “Աղավնավանք” պոեմը սիմֆոնիկ նվագախմբի համար՝ ըստ Թումանյանի “Աղավնու վանքը” բալլադի, որի պրեմիերան տեղի ունեցավ 1959-ի մայիսի 8-ին, Երևանում, Հայֆիլհարմոնիայի մեծ

<sup>60</sup> Լ. Տեր-Մինասյան. Թումանյանով ոգեշնչված երաժշտություն.– “Սովետական արվեստ”, 1970, № 5, էջ 23:

<sup>61</sup> Նույն տեղում:

<sup>62</sup> Տե՛ս С. Коптев, М. Тэрьян, М. Рухкян. Симфоническая музыка и инструментальный концерт.– Музыкальная культура Армянской ССР, с. 156.

դահլիճում, Մոսկվայի և Հայաստանի երիտասարդ կոմպոզիտորների հանդիպման ընթացքում, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ (դիրիժոր՝ Ա. Քաթանյան):

Սիմֆոնիկ թունանյանապատումից հիշատակության է արժանի Էդվարդ Միրզոյանի դեբյուտը սիմֆոնիկ երաժշտության մեջ. նրա առաջին սիմֆոնիկ ստեղծագործությունը՝ 20-ամյա կոմպոզիտորի դիպլոմային աշխատանքը՝ «Լոռեցի Սաքոն» սիմֆոնիկ պոեմը, որը ստեղծվել է 1941-ին, ընդամենը երեք ամսում, Թումանյանի համանուն պոեմի հիման վրա:

Պոեմի երաժշտությունը կերպարային է, պատկերային և ներթափանցված ժողովրդական կոլորիտով: Սիմֆոնիկ պոեմի հիմքում ընկած է բուն ժողովրդական մեղեդի: Այդ թեման կոմպոզիտորը երկար է որոնել, և նրան օգնել է պատահականությունը: Օրերից մի օր, կոնսերվատորիայի պարապմունքներից ուշ երեկոյան վերադառնալիս նա լսում է, թե ինչպես է կոնսերվատորիայի պահակ Առաքել քեռին քթի տակ ինչ-որ մեղեդի դնոնացնում: Մեղեդին անմիջապես գրավում է երիտասարդ երաժշտին իր պարզությամբ ու ներքին կենտրոնացվածությամբ: Անմիջապես ծնվում է սարերում մոլորված միայնակ մարդու կերպարը, ով հայտնվել է բուռն տարերքի շրջապատում<sup>63</sup>:

«Լոռեցի Սաքոն»-ի պրեմիերան տեղի ունեցավ 1942 թ. մարտի 2-ին, Երևանում, Հայֆիլհարմոնիայի դահլիճում, սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, որը պետական կարգավիճակ էր ստացել Հայրենական մեծ պատերազմի նախօրեին՝ Կոնստանտին Սարաջևի նախաձեռնությամբ և ղեկավարությամբ: Ի դեպ՝ այդ օրերին Երևանում էր գտնվում Սերգեյ Պրոկոֆևը, ով Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և ֆալետի թատրոնի կոլեկտիվին ծանոթացնում էր իր «Պատերազմ և խաղաղություն» օպերային: Պրոկոֆևը ներկա է գտնվում համերգի նախորդ օրը կայացած փորձին և ջերմորեն արտահայտվում երիտասարդ կոմպոզիտորի պոեմի մասին՝ նրա համար կանխագուշակելով ստեղծագործական մեծ հաջողություններ<sup>64</sup>:

1943 թ. «Լոռեցի Սաքոն» հնչում է նաև ՀամԼԿԵՄ 25-ամյակին նվիրված՝ երիտասարդ կոմպոզիտորների և կատարողների ցուցադրական համերգին:

Վերջերս՝ Հայ կոմպոզիտորական արվեստի 10-րդ «Տերտերյան-Ֆեստ» հոբելյանական փառատոնի երրորդ համերգին՝ 2019 թ. մարտի 6-ին, Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ, Ռուբեն Ասատրյանի ղեկավարությամբ կրկին հնչեց Էդ. Միրզոյանի «Լոռեցի Սաքոն»:

<sup>63</sup> Տե՛ս՝ Մ. Т е р - С и м о н я н. Эдвард Мирзоян. М., 1969, с. 44.

<sup>64</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 45:

\* \* \*

Թումանյանի պոեզիայի հիման վրա են ստեղծվել Կոմիտասի, Ռոմանոս Մելիքյանի, Ազատ Մանուկյանի, Դանիել Ղազարյանի, Միքայել Միրզայանի, Երվանդ Սարգսյանի, Ստեփան Դեմուրյանի, Անուշավան Տեր-Ղևոնդյանի, Հարո Ստեփանյանի, Մարտին Մազմանյանի, Մուշեղ Աղայանի, Գեղունի Չթյանի, Տիգրան Մանսուրյանի, Ստեփան Լուսինյանի, Լևոն Աստվածատրյանի, Էրիկ Հարությունյանի, Վաղարշակ Կոտոյանի, սփյուռքահայ կոմպոզիտորներ Նիկոլ Գալանդերյանի, Միրվարդ Գարամանուկյանի, Ալյան Հովհաննեսի, Ժան Ալմուխյանի (Արզենտինա), Էդգար Մանասի (Թուրքիա), Սեզալի (Սեդա Գալանդերյան, Իրան), Համբարձում Պերպերյանի և էլի շատ-շատերի վոկալ ստեղծագործությունները՝ ոմանսները, մեներգերն ու խմբերգերը:

Զարմանալիորեն՝ երաժշտական արվեստի, կամերային լիրիկայի հրաշալի գործեր են ստեղծվել ոչ միայն Թումանյանի ստեղծագործությունների, այլև՝ նրա բարձրարժեք թարգմանությունների հիման վրա: Այդ շարքի ստեղծագործությունների մեջ արժեքավոր է հատկապես Ռ. Մելիքյանի “Վարդը”՝ ստեղծված Գյոթեի հայտնի բանաստեղծության թումանյանական թարգմանության հիման վրա, որը կոմպոզիտորի առաջին ոմանսներից էր (1911 թ., Պետերբուրգ):

\* \* \*

Բազմաթիվ մանկական երգեր և օպերաներ են ստեղծվել Թումանյանի տեքստերով: Շատերին է ծանոթ “Փիսիկի գանգատը” երաժշտական պատկերը, սակայն քչերը գիտեն, որ դրա հեղինակը Դանիել Ղազարյանն է:

Թումանյանական սյուժեներով են գրվել Կարո Զաքարյանի “Գառնիկ ախպեր” (4 գործողությամբ), Դ. Ղազարյանի “Գայլը” (4 գործողությամբ), Դ. Ղազարյանի “Շունն ու կատուն” և Մուրեն Մուրադյանի “Շունն ու կատուն”, Ազատ Մանուկյանի “Չարի վերջը”, Երվանդ Սարգսյանի “Պոչատ աղվեսը”, Միքայել Միրզայանի “Ծիտն ու սագը”, Գևորգ Արմենյանի “Մարո” (2 գործողությամբ, առաջին կատարումը՝ Թբիլիսի, 1938), Արեգ Լուսինյանի “Ծիտը” (1 գործողությամբ, առաջին կատարումը՝ Երևան, 1987) և այլն, ինչպես նաև Նիկոլ Գալանդերյանի “Չարի վերջը”, “Ուլիկը” և “Ծաղիկների երգը”, Աշոտ Պատմագրյանի “Շունն ու կատուն” ու “Տերն ու ծառան” և մանկական այլ օպերաներ, որոնք ժամանակին բեմադրվել են մանուկների ուժերով՝ մեծապես նպաստելով մատաղ սերնդի գեղարվեստական կրթությանն ու գեղագիտական դաստիարակությանը:

“Թումանյանը՝ մանուկներին” թեմայի անբաժան մասն են կազմում թումանյանական սյուժեներով ստեղծված մուլտֆիլմերը, որոնց համար երաժշտություն են գրել Ռոբերտ Ամիրխանյանը (“Մի կաթիլ մեղր”, “Փարվանա”, “Չախորդ Փանոսը”), Սարգիս Բարխուդարյանը (“Շունն ու կատուն”), Տիգրան Մանսուրյանը (“Աղքատի

պատիվը”), Դավիթ Ազարյանը (“Քաջ Նազարը”) և այլն, ինչպես նաև տիկնիկային թատրոնի ներկայացումների համար Ռոբերտ Ամիրխանյանի, Մարտին Վարդազարյանի և այլոց գրած երաժշտությունը:

\* \* \*

1969 թ. հայ և առաջադեմ ողջ մարդկությունը մեծ շուքով նշեց Հովհ. Թումանյանի ծննդյան 100-ամյա հոբելյանը: Այդ կապակցությամբ երաժշտական թումանյանապատումը համալրվեց արժեքավոր նոր ստեղծագործություններով:

Այսպես՝ Էդգար Հովհաննիսյանը երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրում է “Հայոց լեռներում” կանտատը, որը կատարվում է սեպտեմբերին Դսեղում, ապա՝ Երևանում, Հայաստանի երգչախմբային ընկերության երգչախմբի կատարմամբ, Էմմա Ծատուրյանի ղեկավարությամբ<sup>65</sup>: “Սովետական արվեստի” սեպտեմբերյան համարում էլ տպագրվում են բարիտոնի և դաշնամուրի համար կոմպոզիտորի գրած “Հայոց վիշտը” երգի նոտաները<sup>66</sup>:

Թումանյանական տարին Էդ. Հովհաննիսյանը եզրափակում է երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար գրված “Չոն Թումանյանին” ստեղծագործությամբ, որը, ցավոք, մինչ օրս չի հնչել և որի ձեռագիրը գտնվում է կոմպոզիտորի անձնական արխիվում:

Ամենայն հայոց բանաստեղծի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Ալեքսանդր Հարությունյանը գրեց “Հայրենիքիս հետ” ծավալուն երգ-կանտատը մենակատարների, երգչախմբի և սիմֆոնիկ նվագախմբի համար՝ Թումանյանի համանուն բանաստեղծության հիման վրա: “Օպերային թատրոնում կայացած եզրափակիչ համերգին հնչելով՝ այդ երգը, կարծես, հանդիսության վերջաբանը դարձավ: Ելույթ ունեցան հանրահայտ երգիչներ Լուսինե Զաքարյանը և Հենրիկ Ալավերդյանը, Ակադեմիական կապելլան և օպերային թատրոնի նվագախումբը: Կատարումը հրաշալի ղեկավարեց Հովհաննես Չեքիջյանը: Դահլիճում ներկա էին բազմաթիվ հյուրեր միութենական հանրապետություններից և արտասահմանյան երկրներից”<sup>67</sup>:

Նկատենք նաև, որ 2019 թ. մարտի 2-ին Արամ Խաչատրյան համերգասրահում տեղի ունեցավ Հայաստանի ազգային ակադեմիական երգչախմբի համերգը՝ նվիրված Թումանյանի ծննդյան 150-ամյա հոբելյանին: Համերգը, ինչպես և 50 տարի առաջ, եզրափակեց Ալ. Հարությունյանի “Հայրենիքիս հետ” երգ-կանտատը՝ հայկա-

<sup>65</sup> Տե՛ս Էդ. Հովհաննիսյան. Կյանքս հուշերում, տեքստը գրի առավ և կազմեց Ծովինար Սովսիսյանը, Երևան, 1998, էջ 233:

<sup>66</sup> Տե՛ս “Հայոց վիշտը”, երաժշտությունը՝ Էդգար Հովհաննիսյան, խոսք՝ Հովհաննես Թումանյանի.– “Սովետական արվեստ”, 1969, № 9, ներդիր՝ 4 թերթ:

<sup>67</sup> Ալ. Հարությունյան. Հուշեր, Երևան, 2000, էջ 70–71:



կան փառապանծ կապելլայի անգուգական կատարմամբ, մեծանուն մատարոս Հովհաննես Չեքիջյանի անկրկնելի ղեկավարությամբ:

Հավարտ շարադրանքիս մի քանի առաջարկ:

1. Թումանյանական տարվա շրջանակներում (և ոչ միայն) հարկ է կազմակերպել համերգաշար, որի ընթացքում կհնչեն էջեր՝ երաժշտական թումանյանապատումից, իսկ օպերային թատրոնում բեմադրել թումանյանական սյուժեներով օպերաներն ու բալետները:

2. Հրատարակել Թումանյանի ստեղծագործության հիման վրա գրված երգերը, ռոմանսները, խմբերգերը, գործիքային ու վոկալ-սիմֆոնիկ ստեղծագործությունները և այլն:

3. Երաժշտական դպրոցների աշակերտների ուժերով բեմադրել թումանյանական սյուժեներով գրված մանկական օպերաներն ու երաժշտական պատկերները:

4. Կազմակերպել “Թումանյանը երաժշտության մեջ” մրցանակաբաշխություն, որի շնորհիվ ժամանակակից հայ կոմպոզիտորներն իրենց նոր երկերով կհարստացնեն երաժշտական թումանյանապատումը:

## СТРАНИЦЫ МУЗЫКАЛЬНОЙ ТУМАНЯНИАНЫ

АННА АСАТРЯН

### Резюме

*Ключевые слова: музыкальная туманяниана, оперы “Ануш”, “Алмаст”, балеты “Ахтамар”, “Ивушка”, “Лореци Сако”, симфонические поэмы “Ахтамар”, “Лореци Сако”, кантаты “В армянских горах”, “С Отчизной”, романсы, песни и хоры.*

Ованес Туманян – один из тех исключительных армянских поэтов, чье творчество было, есть и будет в центре внимания армянских композиторов. Музыкальные произведения, созданные по туманяновским сюжетам, можно разделить по жанрам следующим образом:

1. Творчество Туманяна в армянском музыкальном театре: оперы “Ануш” Армена Тиграняна, “Алмаст” Александра Спендиаряна, неоконченная “Ануш” Комитаса, “Капля меда” Эрика Арутюняна, “Смерть Кикоса” Вардана Аджемяна, “Парвана” Никола Галандеряна (Иран), «Шогик» и “Арегназан” Амбарцума Перперяна (США) и др., а также одноактные балеты “Ахтамар”, “Ивушка” и “Лореци Сако” Григора Ахиняна.

2. Туманян в армянской симфонической и вокально-симфонической музыке: симфонические поэмы “Ахтамар” Анушавана Тер-Гевондяна и “Лореци Сако” Эдварда Мирзояна, кантаты “С Отчизной” Александра Арутюняна и “В армянских горах” Эдгара Оганесяна, музыка к кинофильмам и др.

3. Творчество Туманяна в армянской вокальной музыке: романсы, песни и хоры Комитаса, Романоса Меликяна, Азата Манукяна, Даниела Казаряна, Микаэла Мирзаяна, Степана Демуряна, Анушавана Тер-Гевондяна, Аро Степаняна, Мартина Мазманяна, Мушега Агаяна, Тиграна Мансуряна, Степана Лусикяна, Левона Аствацатрияна, Вагаршака Котояна, Никола Галандеряна (Иран), Сирвард Гараманукян (Турция), Алана Ованеса (США), Жана Алмухяна (Аргентина), Эдгара Манаса (Турция) и многих других.

4. Произведения Туманяна в музыке для детей: детские оперы, песни, а также музыка к мультфильмам.

## FROM THE PAGES OF MUSICAL TUMANYANIANA

ANNA ASATRYAN

### Summary

*Key words: musical tumanyaniana, the operas “Anush”, “Almast”, ballets “Akhtamar”, “Willow”, “Loretsi Sako”, symphonic poems “Akhtamar”, “Loretsi Sako”, the cantatas “With the Homeland”, “In the Armenian Highlands”, romances, songs and choirs.*

Hovhannes Tumanyan was one of those outstanding Armenian poets, whose oeuvre was, is and will be in the center of attention of Armenian composers. Musical compositions, based on Tumanyan's plots, can be divided by genres as follows:

1. Tumanyan's oeuvre in the Armenian musical theater: the operas “Anush” by Armen Tigranyan, “Almast” by Alexander Spendaryan, unfinished “Anush” by Komitas, “A Drop of Honey” by Erik Harutyunyan, “Kikos's Death” by Vardan Ajemyan, “Parvana” by Nikol Galanderyan (Iran), “Shoghik” and “Aregnazan” by Hambardzum Perperyan (USA), etc., as well as the one-act ballets “Akhtamar”, “Willow” and “Loretsi Sako” by Grigor Hakhinyan.

2. Tumanyan's oeuvre in the Armenian symphonic and vocal-symphonic music: symphonic poems “Akhtamar” by Anushavan Ter-Ghevondyan and “Loretsi Sako” by Edward Mirzoyan, the cantatas “With the Homeland” by Alexander Harutyunyan and “In the Armenian Highlands” by Edgar Hovhannisyan, music for movies, etc.

3. Tumanyan's oeuvre in Armenian vocal music: romances, songs and choirs by Komitas, Romanos Melikyan, Azat Manukyan, Daniel Ghazaryan, Mikael Mirzayan, Stepan Demuryan, Anushavan Ter-Ghevondyan, Haro Stepanyan, Martin Mazmanyanyan, Mushegh Aghayan, Tigran Mansuryan, Stepan Lusikyan, Levon Astvatsatryan, Vagharshak Kotoyan, Nikol Galanderyan, Sirvard Garamanukyan (Turkey), Alan Hovhannes (USA), Jean Almukhyan (Argentina), Edgar Manas (Turkey), and many others.

4. Tumanyan's works in music for children: children's operas, songs, music for cartoons.

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆ. ԱԶԳԱՅԻՆ-ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՉԸ\*

ԱՐՄԵՆ ԱՍՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Արամ Մանուկյան, Արևմտյան Հայաստան, անկախություն, ժողովուրդ, Հայաստանի առաջին Հանրապետություն, ՀՅԴ, միասնություն, պատասխանատվություն, պետական գործիչ, պետական մտածողություն, վճռականություն, քաղաքական գործիչ:

*Հայ նշանավոր ազգային-պետական խոշոր գործիչ, Հայաստանի առաջին Հանրապետության հիմնադիր Արամ Մանուկյանը (Մարգիս Հարությունի Հովհաննիսյան) ծնվել է 1879 թ. մարտի 19-ին Շուշի քաղաքում<sup>1</sup>:*



*Նախ ուսանել է տեղի Ագուլյաց ծխական դպրոցում, ապա՝ 1895 թ. ընդունվել Ղարաբաղի հայոց թեմական դպրոց: Այստեղ ուսանելու շրջանում Ա. Մանուկյանն անդամագրվել է հայ ազատամարտի առաջատար ուժ Հայ հեղափոխական դաշնակցությանը (ՀՅԴ)՝ իր հետագա ողջ կյանքը նվիրելով հայ ժողովրդի ազատության և անկախ պետականության վերականգնման կարևորագույն գործին: Հեղափոխական գործունեությամբ զբաղվելու պատճառով 1901 թ. հեռացվելով Շուշիի թեմական դպրոցից՝ ուսումը շարունակել է Երևանի թեմական դպրոցում, որն ավարտել է 1903 թ.:*

*1903 թ. Ա. Մանուկյանը Բաքվում և Գանձակում ակտիվորեն մասնակցել է հայ եկեղեցու ունեցվածքը բռնագրավելու մասին Ռուսաստանի միապետ Նիկոլայ II-ի հրամանագիրը չեղյալ համարելու համար մղվող պայքարին, այնուհետև անցել է Կարս: Արդեն այս ժամանակից նա գտնում էր, որ ազգային իրավունքները վերականգնելու համար պետք է ապավինել*

<sup>1</sup> Ա. Մանուկյանի կյանքի և գործունեության մասին մանրամասն տե՛ս Ա. Ասրյան. Արամ Մանուկյան. կյանքը և գործը (ազա-տագրական շարժման և անկախ պետականության վերականգնման գործում), Երևան, 2009:

սեփական ուժերին<sup>2</sup>: Կարսում նրա գործունեության մեջ առանցքային տեղ է զբաղեցրել Արևմտյան Հայաստան զենք-զինամթերք փոխադրող խմբերի կազմակերպումը, որոնց միջոցով ՀՅԴ-ն հույս ուներ ուժ հաղորդել ազատագրական զինված պայքարին: Այդ մարտավարությունը շոշափելի արդյունք չտվեց, և 1904 թ. հոկտեմբերին Ա. Մանուկյանը ուղևորվեց Արևմտյան Հայաստան՝ տեղում նպաստելու ազատագրական շարժման ծավալմանը: 1905 թ. փետրվարին նա հաստատվեց Վանում, իսկ մի քանի ամիս անց ստանձնեց ՀՅԴ Վանի կազմակերպության ղեկավարությունը: Թուրքական լծից արևմտահայության ազատագրության համար պայքարի ելած Ա. Մանուկյանը տքնաջան աշխատանք ծավալեց ազատագրական մասնակի գործողություններից ընդհանուր ապստամբությանն անցնելու ուղղությամբ՝ համոզված, որ միայն համազգային միասնական, հուժկու պայքարի միջոցով կարելի է հասնել ազգային նպատակների իրականացմանը: Աննախադեպ հաջողություններ արձանագրվեցին ազատագրական շարժման կազմակերպական հիմքն ամրապնդելու, նահանգի տարածք զենք-զինամթերք ներկրելու, ժողովրդին զինելու ուղղությամբ: 1906 թ. ընթացքում Վան էր ներկրվել ավելի շատ զենք-զինամթերք, քան նախորդ 15 տարիներին: 1907 թ. ՀՅԴ-ն Վանում ուներ մոտ 1000 անդամ, իսկ գյուղերի «մեծ մասը՝ քահանայով, ռեսով և գզիրով՝ դաշնակցական էին ...»<sup>3</sup>: Ա. Մանուկյանի հետևողական գործունեության շնորհիվ ՀՅԴ Վանի կառույցը դարձավ ամենակազմակերպվածն ու մարտունակն Արևմտյան Հայաստանում: 1907 թ. նա, որպես ՀՅԴ Վանի ներկայացուցիչ, մասնակցեց Վիեննայում կատարած ՀՅԴ 4-րդ ընդհանուր ժողովին:

1908 թ. Օսմանյան կայսրությունում իրականացված երիտթուրքական հեղաշրջումից հետո Ա. Մանուկյանն արտահայտվեց նրանց հետ համագործակցելու և արևմտահայության դրության բարելավմանն երկրի շրջանակում, խաղաղ ճանապարհով հասնելու իր կուսակցության քաղաքականության օգտին: Մակայն երիտթուրքերը չընդունեցին ՀՅԴ և հայ քաղաքական մյուս ուժերի խաղաղասիրական դիրքորոշումն ու շարունակեցին սուլթանական վարչակարգի հայաջինջ քաղաքականությունը:

1909–1911 թթ. Ա. Մանուկյանը ստանձնեց սևծովյան ափամերձ Օրդու քաղաքի Ազգային վարժարանի տեսչությունը՝ հաջողությունների հասնելով տեսչական և ուսուցչական գործունեության մեջ<sup>4</sup>: Զուգահեռ քայլեր կատարեց ազատագրական շարժմանն օգնելու համար: Մասնավորապես, նա կազմակերպեց հանգանակություն՝ որպես օժանդակություն Տարոնում մարտական գործին: 1913 և 1914 թթ. Էրզրումում կայացած ՀՅԴ 7-րդ և 8-րդ ընդհանուր ժողովների կողմից Ա. Մանուկ-

<sup>2</sup> Ռ Ն Ի Բ Է ն. Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 1, Երևան, 1990, էջ 187–196:

<sup>3</sup> «Վան-Տոսպ» (Թիֆլիս), 1916, 3. I. 1916:

<sup>4</sup> Ա. Մանուկեան. Նամականի. Ժողովածու (կազմ., խմբ. և ծանոթ.՝ Ե. Փամբուկեան), Երևան, 2018, էջ 530:

յանն ընտրվեց կուսակցության ղեկավար մարմնի՝ Բյուրոյի անդամ: Այս հանգամանքը չխանգարեց, որ նա համազգային խնդիրների լուծման ժամանակ ցուցաբերեր վերկուսակցական մոտեցում:

Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից նեթ Ա. Մանուկյանը և Վանի հայության մյուս առաջնորդները փորձեցին թուրքական իշխանությունների հետ բանակցությունների միջոցով տեղի ժողովրդին փրկել զանգվածային ջարդերից: Մակայն, համոզվելով, որ խաղաղ միջոցներով դա անհնար է, Ա. Մանուկյանը քաղաքական այլ ուժերի հետ ձեռնամուխ եղավ զինված դիմադրության կազմակերպմանը: Այդ առիթով հետագայում նա նշել է. «Մեր կացութիւնը յուսահատական էր այն ատեն: Ընտրելու մէկ բան միայն կը մնար մեզի համար. կամ անձնատուր ըլլալ եւ թողուլ որ խողխողեն մեզ իբր ոչխար, կամ մեռնիլ զէն ի ձեռին կռուելով: Այս վերջինը նախընտրեցինք»<sup>5</sup>: Ա. Մանուկյանը քաջ գիտակցում էր, որ միայն միասնական պայքարի միջոցով կարելի է հաղթել թշնամուն, և ամեն ինչ արեց այդ նպատակին հասնելու համար: 1915 թ. ապրիլի 5-ին նրա նախաձեռնությամբ ստեղծվեց Վանի Հայ ինքնապաշտպանության զինվորական մարմին, որտեղ նրա իսկ առաջարկով ընդգրկվեցին փորձառու զինվորականներ՝ ռամկավար Արմենակ Եկարյանը, դաշնակցականներ Բուլղարացի Գրիգորը, Գայժակ Առաքելը, հնչակյան Հրանտ Գալիկյանը, անկուսակցական Փանոս Թերլեմեզյանը և ուրիշներ: Շուտով ինքը նույնպես ընդգրկվեց այդ մարմնի մեջ և ղեկավարեց Վան-Այգեստանի ինքնապաշտպանությունը<sup>6</sup>: Միաժամանակ, նա Վանի Քաղաքամեջ թաղամասի և գավառների գործիչներին հրահանգեց պատրաստ լինել թուրքերին զինված դիմադրություն ցույց տալու համար: Հայ և օտարազգի բազմաթիվ ժամանակակիցների, իրադարձությունների մասնակիցների վկայությամբ Ա. Մանուկյանը Վանի հերոսամարտի առաջնորդն էր, սիրտն ու հոգին:

Վանի ինքնապաշտպանությունը սկսվեց 1915 թ. ապրիլի 7-ին<sup>7</sup>: Հզոր բռունցք դարձած հայությունը մեկ ամիս շարունակ հետ մղեց ռազմական բազմակի գերակշռություն ունեցող թուրքական զորքերի բոլոր հարձակումները և նույնիսկ նրանցից գրավեց մի շարք ռազմական հենակետեր: Ամենամեծ հաղթանակը 650 զինվոր ունեցող Համուդ աղայի զորանոցի գրավումն էր<sup>8</sup>, որին Ա. Մանուկյանն ունեցել էր անմիջական մասնակցություն<sup>9</sup>: Հայերի խիզախությունն ու կազմակերպվածությունը փաս-

<sup>5</sup> Յ. Լեփսիուս. Գաղտնի տեղեկագիր տոքթ. Եօհաննէս Լեփսիուսի, Հայաստանի ջարդերը (թարգմ.՝ Մ. Շամտանձեան), Կ. Պոլիս, 1919, էջ 106:

<sup>6</sup> Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 242, ց. 1, գ. 74, թ. 39-40:

<sup>7</sup> Ռ. Սահակյան. Արևմտյան Հայաստանի ռազմաքաղաքական և վարչատնտեսական իրավիճակը (1914 թ. հուլիս – 1917 թ. փետրվար), Երևան, 2015, էջ 149:

<sup>8</sup> ՀԱԱ, ֆ. 27, ց. 1, գ. 245, թ. 15:

<sup>9</sup> «Աշխատանք» (Վան), 17. VI. 1915:

տել է նույնիսկ Վանի վրա թուրքական զորքները ղեկավարող գերմանական բանակի սպա Ռաֆայել դը Նոգալեսը: Նա գրել է՝ հարձակվող թուրքերն ամենուր հանդիպում էին հուժկու ու դիպուկ կրակի, և որ հայկական յուրաքանչյուր տուն արագորեն վերածվում էր ամրոցի<sup>10</sup>: 1915 թ. մայիսի 3-ին հայ ինքնապաշտպանները հետ մղեցին թուրքերի վերջին զրոհը, որից հետո թշնամին հեռացավ Բիթլիս: Մայիսի 5–6-ը Վան հասան հայկական կամավորական զնդերն ու ռուսական զորքերը: Վանի ինքնապաշտպանության հաղթանակի շնորհիվ ավելի քան 150.000 հայեր փրկվեցին թուրքական պետության իրականացրած եղեռնից, որին զոհ գնաց 1,5 մլն արևմտահայ: 1915 թ. մայիսի 7-ին ռուսական իշխանությունների կողմից Ա. Մանուկյանը նշանակվեց Վանի նահանգապետ: Նահանգի կառավարությունը ձևավորելիս նա հերթական անգամ դրսևորեց վերկուսակցական մոտեցում՝ նրանում ընդգրկելով միայն բանիմաց գործիչների՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Ա. Մանուկյանի գլխավորությամբ հայությունը ձեռնամուխ եղավ ազատագրված նահանգի վերաշինմանը: Հետևողական աշխատանք ծավալվեց Վանը քրդերի հարձակումներից պաշտպանելու, կարգուկանոն հաստատելու, ավերված տնտեսությունը վերականգնելու, գաղթականությանն աջակցելու, բնակչության շահերը տարաբնույթ ապօրինություններից պաշտպանելու, սովն ու համաճարակային հիվանդությունները կանխելու և այլ ուղղություններով: Հաջողություններն այնքան նշանակալից էին, որ Վանի նահանգապետությունը կարելի է անվանել հայոց նորագույն պետականության նախատիպ: Հանուն ճշմարտության պետք է ասել, որ այն կերտած Ա. Մանուկյանի հասցեին ուղղվել են ոչ միայն դրվատանքի խոսքեր: Տարբեր առիթներով նրան քննադատել են տեղի ռամկավար գործիչներ Ա. Թերզիբաշյանը, Ա. Եկարյանը: Իսկ Ա. Մանուկյանի կողմից նահանգապետարանի վերահսկիչ նշանակված Բ. Տեր-Ղազարյանը մատնանշել է իր ուսումնասիրությունների ընթացքում հայտնաբերված մի շարք թերություններ: Սակայն, կարծում ենք, էականն այն է, որ Ա. Մանուկյանի կողմից ձեռնարկվում էին քայլեր դրանք վերացնելու ուղղությամբ: Դժբախտաբար Վանի նահանգապետությունը երկար չգոյատևեց: Ռուսական բանակի՝ 1915 թ. հուլիսյան նահանջի հետևանքով նահանգի հայությունը հարկադրաբար բռնեց գաղթի ուղին: Ա. Մանուկյանն ամեն կերպ փորձեց կանխել այն, սակայն դա նրա ուժերից վեր էր:

1915–1917 թթ. Ա. Մանուկյանն ակտիվորեն մասնակցեց Արևելյան Հայաստանում և Ռուսական կայսրության հայաշատ կենտրոններում “եռացող” ազգային-քաղաքական գործընթացներին՝ ջանալով հոգալ եղեռնից փրկված արևմտահայ փախստականների կարիքները: 1917 թ. ֆեդայապետ Անդրանիկի ու ռամկավար գործիչ Ա. Դարբինյանի հետ հանդես եկավ արևմտահայերի համագումար հրավիրելու նախաձեռնությամբ և ակտիվորեն մասնակցեց 1917 թ. մայիսի 2–11-ը Երևանում գումար-

<sup>10</sup> Рафаель де Ногалес Мендес. Четыре года под полумесяцем. М., 2006, с. 67.

ված նրա աշխատանքներին<sup>11</sup>: 1917 թ. մայիսի 1-ին Երևանում Ա. Մանուկյանն ամուսնացավ Կատարինե Զայյանի հետ: 1918 թ. հոկտեմբերին ծնվեց նրա միակ ժառանգը՝ Սեդա Մանուկյանը (1918–2005)<sup>12</sup>: Ա. Մանուկյանն իր անմիջական նպաստը բերեց ռուսական բանակի և հայ կամավորականների կողմից թուրքական տիրապետությունից ազատագրված Արևմտյան Հայաստանի վերաշինությանը: Նրա միջոցով 1917 թ. ամռանը երկրագործական գործիքներ էին ուղարկվում Արևմտյան Հայաստան: Ա. Մանուկյանն ակտիվ մասնակցություն ունեցավ նաև 1917 թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 13-ը Թիֆլիսում գումարված Հայոց Ազգային համախորհրդակցությանը, ընտրվեց արևելահայության կյանքը ղեկավարելու նպատակով ստեղծված Թիֆլիսի Հայոց Կենտրոնական Ազգային խորհրդի անդամ: 1917 թ. հոկտեմբերի 21-ից 1918 թ. ապրիլի 14-ն Ա. Մանուկյանը խմբագրեց Երևանի «Աշխատանք» թերթը: Նրա օրոք թերթը հրատապ անդրադառնում էր հայ իրականությանը հուզող կարևոր խնդիրներին, առաջադրում հավասարակշռված տեսակետներ իրադարձությունների զարգացման ընթացքի և հայերի կողմից ձեռնարկվելիք քայլերի մասին:

1917 թ. վերջին ռուսական Կովկասյան ռազմաճակատի կազմալուծումը թուրքական ներխուժման վտանգի տակ դրեց ոչ միայն Արևմտյան, այլև՝ Արևելյան Հայաստանը: Հայ ժողովրդի գլխին կախվում էր 1915 թ. կրկնության վտանգը: Դրությունը բարդանում էր նրանով, որ ինչպես Անդրկովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանի զգալի մասն ընդգրկող Երևանի նահանգում չկային պետական իշխանության կենսունակ մարմիններ:

Այդ իրավիճակում՝ 1917 թ. դեկտեմբերին Թիֆլիսի Հայոց Ազգային և Հայ զինվորական խորհուրդներն Ա. Մանուկյանին արտակարգ լիազորություններով գործուղեցին Երևանի նահանգ: Առաջ անցնելով՝ նշենք, որ 1918 թ. հունվարի վերջերին Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը որոշեց նրան նշանակել նաև հայկական զորամասերի կոմիսար՝ գտնելով՝ «նա միակ մարդն է, որը կարող է զբաղեցնել այդպիսի պատասխանատու պաշտոն»<sup>13</sup>: Սակայն Ա. Մանուկյանը հրաժարվեց ստանձնել այդ պաշտոնը՝ խնդրելով իր փոխարեն նշանակել զինվորականներից որևէ մեկին<sup>14</sup>: Այդ պաշտոնում նշանակվեց Դրոն, ով հրաշալի կատարեց իրեն վստահված առաքելությունը: Երևանում Ա. Մանուկյանն առաջադրեց հայ ժողովրդի պաշտպանությանն ու ազատությանը միտված հստակ քաղաքական ուղեգիծ: Ընդգծելով այն իրողությունը, որ հայ ազգը թուրքական ոչնչացնող պետական մեքենայի դեմ կանգնած է բացարձակապես մենակ՝ Մանուկյանը հայությանը կոչ արեց հույս չկապել արտաքին օգնու-

<sup>11</sup> Ա. Դ ա ր բ ի ն ե ա ն. Հայ ազատագրական շարժման օրերեն (Յուշեր 1890-էն 1940), Փարիզ, 1947, էջ 347:

<sup>12</sup> Ա. Ա ս ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 147, 245:

<sup>13</sup> ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 24, թ. 442:

<sup>14</sup> ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 24, թ. 527:

յան հետ ու ապավինել սեփական ուժերին՝ թե՛ թուրքերից պաշտպանվելու և թե՛ երկրում կարգուկանոն հաստատելու համար. “Ամեն ոք իր մասին է մտածում: Իր երկրի սահմաններից այն կողմ եթե նայող կայ, նայում է միայն յանուն իր շահերի: Ոչ ոք ոչ մի մարդ չի ուղարկի տաճկական ճակատ՝ տուն գնացող ռուսներին փոխարինելու համար: Եթե ընդհանուր ուժերով ճակատ պահելու խօսք էլ է լինում, դա լուկ խօսք է՝ զուրկ իրական հիմքից ու անկեղծությւնից ...: Դրա հակառակը, կայ դաւադրական վերաբերմունք: Մենակ ենք եւ պետք է ապավինենք միայն մեր ուժերին՝ թե՛ ճակատը պաշտպանելու եւ թե՛ երկրի ներսը կարգ հաստատելու համար”<sup>15</sup>:

Ա. Մանուկյանը, օժտված Վանի նահանգապետության շրջանի պետական գործունեության փորձառությամբ, անմիջապես ներկայացրեց գործողությունների խիստ ռոտշակի ծրագիր՝ ցուցաբերելով հեռատեսություն, ռազմավարական մտածողություն, հետևողականություն, անսասան կամք, և քայլ առ քայլ կենսագործեց այն: Գիտակցելով՝ միայն գեղեցիկ կոչերը, մեկ մարդու կամ մի խումբ մարդկանց ուժերը բավարար չեն հայության առջև ծառայած ահեղ խնդիրները լուծելու համար, և, որ դրան կարելի է հասնել լավ կազմակերպված աշխատանքի միջոցով, նա ձեռնամուխ եղավ Երևանի նահանգի իշխանության իրապես գործող մարմինների ստեղծմանը: Դրանցից էր Երևանի նահանգի Հատուկ կոմիտեն, որի առաջ դրվեցին հստակ խնդիրներ: Բացի այդ, շունչ տրվեց արդեն իսկ գոյություն ունեցող, բայց անգործության մատնված իշխանության մարմիններին: Ա. Մանուկյանը Երևանի Հայոց Ազգային խորհրդի և Հատուկ կոմիտեի շուրջ համախմբեց բոլորին՝ անկախ կուսակցական պատկանելությունից: Հետևողական, տքնաջան աշխատանք կատարվեց կանոնավոր բանակի ստեղծման ուղղությամբ: Ժողովրդի շրջանում ծավալվեց քարոզչական լայն աշխատանք՝ թշնամու դեմ կազմակերպված պայքարի հանելու համար: 1917 թ. դեկտեմբերի 23-ին Հատուկ կոմիտեն հրապարակեց Ա. Մանուկյանի հեղինակած “Կոչ հայ զինվորներին” շրջաբերականը, որը հստակ ներկայացնում էր իրավիճակի լրջությունը և բոլորից պահանջում կանգնել հայրենիքի պաշտպանության դիրքերում: Զորակոչվում էին բոլորը, նաև՝ նախկինում ինչ-ինչ պատճառներով ազատվածները: Անզիջում պայքար ծավալվեց դասալիքների, զենք-զինամթերք, պետական գույք հափշտակողների դեմ: Ձեռնարկված քայլերն ապահովեցին զորահավաքի հաջող ընթացքը: Ա. Մանուկյանի գլխավորությամբ շնորհաշատ ու նվիրյալ ռազմական գործիչներ Դրոյի, գեներալ Մովսես Միլիկյանի, գնդապետ Դանիել Բեկ-Փիրումյանի և այլ գործիչների հետևողական աշխատանքը հնարավորություն տվեց 1918 թ. մարտի սկզբներին հիմնականում ավարտել Հայկական կորպուսի երկրորդ՝ Երևանյան դիվիզիայի կազմավորումը<sup>16</sup>, որն առանցքային դերակատարություն էր ունենալու

<sup>15</sup> Ա. Ա ս տ ու ա ծ ա տ ր ե ա ն. Արամը.— “Հայրենիք” (Բոստոն), 1964, № 4, էջ 70:

<sup>16</sup> ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5:



Մայիսյան հերոսամարտերի ընթացքում: Հսկայածավալ աշխատանք կատարվեց նաև Երևանի նահանգում օրինականություն հաստատելու, պարենային խնդիրը կարգավորելու, Թուրքիայի կողմից հրահրվող թաթարական հակապետական խռովությունները ճնշելու ուղղություններով: Կտրուկ և հաշվենկատ գործողությունների արդյունքում հնազանդեցվեցին տասնյակ թաթարական գյուղեր:

Նույն ժամանահատվածում արտաքին ճակատում իրադարձությունները զարգանում էին ՝ ի վնաս հայերի: 1918 թ. հունվարի 30-ին հարձակման անցած թուրքական 50.000-ոց բանակը, հաղթահարելով նոր կազմավորվող հայկական փոքրաքանակ զորամասերի հերոսական դիմադրությունը, առաջ էր շարժվում դեպի Հայաստանի խորքերը: 1918 թ. մարտի 24-ին ՝ թուրքական զորքերի կողմից Մարիդամիշը գրավելու հաջորդ օրը, որն ավելի խորացրեց հայության տագնապը, ժողովրդական զանգվածները, զորքը և Հայոց Ազգային խորհուրդն Ա. Մանուկյանին ընտրեցին Երևանի նահանգի “դիկտատոր”<sup>17</sup>: Ոչ միայն հայոց, այլև համաշխարհային պատմության բացառիկ դեպքերից էր, երբ ժողովուրդը կամովին ընտրեց “դիկտատոր”, որն էլ իր անսահմանափակ իշխանությունը մինչև վերջ օգտագործեց բացառապես հօգուտ ազգային շահերի: Անտեսելով պայմանականություններն ու ժողովրդավարության ժամանակավրեպ պահանջները, ընտրելով կառավարման “դիկտատորական” տվյալ ժամանակաշրջանում միակ ճիշտ ձևը ՝ Ա. Մանուկյանը վճռականորեն շարունակեց հայության ներուժի համախմբման գործը: Սեփական փորձից էլնելով, որ հայրենիքի փրկությունը կախված է ժողովրդի կամքից ու մասնակցության աստիճանից ՝ նա ամեն ինչ արեց այդ գործի մեջ նրան ներգրավելու համար: Ժողովրդի շահերի գերակայությունը մշտապես ընդունող, նրանից երբեք և որևէ կերպ չհեռացող Ա. Մանուկյանը “դիկտատոր” ընտրվելուց հետո հայտարարեց. “... դուք պիտի իմանաք, որ ես անոյժ եմ առանց ձեզ: Հերոսը ինքը ժողովուրդն է և եթե ժողովուրդը պատրաստակամությամբ ունի ... աշխատել ու փրկել հայութիւնը վերահաս կործանումից, ապա իմ ու ինձ նման շատերի աշխատանքը ապարդիւն չի անցնի”<sup>18</sup>: Նա 1918 թ. մարտի 28-ին ժողովրդին դիմեց կոչով, որում հստակորեն սահմանեց պետական և հասարակական կառույցների անելիքները ՝ իրեն վերապահելով դրանց գործունեության ուղղորդումն ու վերահսկումը: Այդ կոչն ավարտվում էր հետևյալ խոսքերով. “Յոյց տանք աշխարհին, որ Հայր ազատ անկախ ապրելու իրաւունք ունի: Այժմ կամ երբեք”<sup>19</sup>: Այսինքն, այն ժամանակ, երբ հայ քաղաքական միտքը չէր էլ խորհում Արևելյան Հայաստանի անկախության մասին, Մանուկյանը, ճիշտ ընկալելով իրադարձությունների զարգացման ընթացքը, աշխատում էր այդ ուղղությամբ: Անկախության գաղափարի գործնականացման ձգտումը խոսում է նրա լայն մտահորիզոնի, պետական մտածո-

<sup>17</sup> “Զանգ” (Երևան), 27. III. 1918:

<sup>18</sup> Նույն տեղում:

<sup>19</sup> ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 9, թ. 1:

դուրսի, ժամանակաշրջանի մարտահրավերներն արագ ընկալելու և աշխատելու ունակության մասին:

1918 թ. մայիսի սկզբներին, երբ թուրքական զորքերը կանգնած էին Ախուրյան գետի աջ ափին, շատերը կարծում էին, թե թուրքերն այլևս չեն շարունակի հարձակումը, որովհետև գրավել էին Բրեստ-Լիտովսկի ռուս-թուրքական հաշտության պայմանագրով իրենց տրված տարածքները: Ա. Մանուկյանը, ընդհակառակը, համոզված էր, որ թուրքերը շարունակելու են զավթումները: Նրա կանխատեսումներն արդարացան: 1918 թ. մայիսի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Ալեքսանդրապոլը (այժմ Գյումրի), մայիսի 21-ին՝ Երևանից 30 կմ հեռու գտնվող Սարդարապատը՝ գլխավոր նպատակ ունենալով զավթել Սբ. Էջմիածինն ու Երևանը: Առավել քան երբևէ, դրվեց հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը, այնինչ հայ քաղաքական շրջանակների, զորքի, զորահրամանատարության ու բնակչության զգալի մի մասը մատնվել էր տազնապի և հուսալքության: Հայկական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Թ. Նազարբեկյանը Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդին հորդորում էր դադարեցնել կռիվները թուրքերի դեմ և հաշտություն կնքել՝ միամտորեն կարծելով, որ այդպես հնարավոր կլինեի փրկել զորքի մի մասն ու բնակչությանը<sup>20</sup>: Երևան շարժվող թուրքերը, որոնք չորս ամիս միայն հաղթանակ էին տարել, վստահ էին, որ առանց լուրջ դժվարության տիրանալու են նաև հայոց հայրենիքի վերջին կտորին: Մակայն նրանք չարաչար սխալվեցին:

1918 թ. մայիսյան ծայրահեղ ծանր ժամանակաշրջանում Ա. Մանուկյանը դրսևորեց թշնամուն հակահարված հասցնելու անսասան կամք, Վարդանանց վայել վճռականություն ու քաջություն: Դեռևս Ալեքսանդրապոլի անկումից առաջ նա ասել էր. «Եթե երբևէ մեր ճակատի վրա թուրքերը սկսեն առաջխաղացումը, մենք անպայման պետք է դիմադրենք զենքով, թնդանոթով, և ոչ թե ստրկորեն անձնատուր լինենք և կոտորվենք»<sup>21</sup>: Նա եղավ այն գործիչը, ով կարողացավ բարձրացնել զորքի, քաղաքական ուժերի ու ժողովրդի ոգու կորույր և նրանց կազմակերպված պայքարի դուրս բերել թշնամու դեմ՝ այդ կերպ ուղի հարթելով դեպի հայոց վերածնունդ, որը սկզբնավորվելու էր հայոց պետականության վերականգնմամբ: Մայիսի 19-ին, երբ թուրքական զորքերը նոր էին ներխուժել Արարատյան դաշտ, Ա. Մանուկյանը գեներալ Մ. Միլիկյանին հրահանգեց կասեցնել հայկական զորքի հետագա նահանջն ու թշնամուն հասցնել վճռական հակահարված: Նա նաև խոստանում էր երկու օրվա ընթացքում զորքին տրամադրել անհրաժեշտ ամեն ինչ՝ մարդկային ուժ, զենք-զինամթերք, ու ապահովել թիկունքի լիակատար աջակցությունը բանակին: Ի դեպ, դեռևս ամիսներ առաջ Ա. Մանուկյանը, ցուցաբերելով հեռատեսություն, հրահանգել էր ռազմա-

<sup>20</sup> ՀԱԱ, ֆ. 1022, ց. 3, գ. 253, թ. 1:

<sup>21</sup> Հ. Կոստան. Հայկական Թերմոպիլե. – «Դրոշակ» (Փարիզ), 1928, № 5, էջ 137:

ճակատի խորքից թիկունք փոխադրել մեծ քանակությամբ զենք-զինամթերք, որն այդ օրերին մեծ օգնություն էր հայոց զորքին:

Առանց տարիքի ու դիրքի խտրականության ռազմաճակատ ուղարկվեցին մեծ թվով զինապարտներ, իստիվ արգելվեց Երևանից հեռանալը<sup>22</sup>: Մանուկյանը, ով սիրում էր ամեն ինչին անձամբ հետևել, բազմապատկել էր եռանդը. նրան կարելի էր տեսնել ամենուր՝ զինվորականության շրջանում, հրապարակներում, շուկայում, եկեղեցիներում: Ա. Մանուկյանի գործընկեր Ա. Աստվածատրյանի վկայությամբ՝ նա “շարունակ ոտքի վրայ էր: Հանգիստն ինչ է՝ մոռացել էր: Ռազմաճակատը նրա մտահոգության միակ առարկան էր ... Անընդհատ յարաբերութեան մեջ էր գլխաւոր շտաբի հետ, որ նստած էր Վաղարշապատում: Արամը իր շնչով վարակում էր ամենքին: Ո՛չ ոք չէր խնայում հնարաւորը”<sup>23</sup>: 1918 թ. մայիսի 19-ին Երևանի Հայոց Ազգային խորհրդի նիստում Ա. Մանուկյանն անառարկելի վճռականությամբ բացառեց Երևանի հանձնումը թշնամուն՝ հայտարարելով հետևյալը. “... ոչ մի նահանջ ոչ մի գծի վրա: Նահանջ Երևանից՝ կնշանակե խաչ քաշել մեր ամբողջ գործունեության եւ մեր ապագա քաղաքական մուրագներուն վրա, բոլորդ պիտի մնաք եւ մեռնիք”<sup>24</sup>: Երևանի Հայոց Ազգային խորհուրդը որոշեց թշնամուն վճռական հակահարված հասցնել Սարդարապատում և Ապարանում: Ա. Մանուկյանի հաշվենկատ ու հետևողական ջանքերի շնորհիվ ժողովրդի շրջանում տիրող խուճապը փոխարինվեց ոգևորության, որի հետևանքը եղավ կամավորների աննախադեպ հոսքը դեպի ռազմաճակատ: Այս առումով ընդգծելի է հասկապես մայիսի 21-ին Երևանում կայացած հանրահավաքում նրա ելույթը. “Կրկնութիւններ անելու այժմ տրամադիր չեմ և ժամանակ էլ չկայ ճառերով զբաղելու: Ես եկել եմ յայտնելու ձեզ, որ թշնամին գրաւել է Սարդարաբադը և շարժում է դեպի Էջմիածին: Մեզ մնում է մի բան, կամ զենք վերցնել ու դուրս գալ թշնամու առաջ և կամ կոտորել... Ով ուզում է ապրել, առանց թոպէ կորցնելու, թող վերցնի զենքը, վերցնի նաև երեք օրւայ պաշար ու իսկոյն և էթ դիմէ ուսուցչական սեմինարիայի շէնքը՝ ցուցակագրւելու և այնտեղից էլ ճակատ ուղարկւելու համար: Ես իմ ասելիքս վերջացրի, այժմ ձեզ է մնում անելիքը”<sup>25</sup>: Մանուկյանի հրահանգով պարտիզանական շարժում ծավալվեց Ապարանի ճակատում, որը կարևոր նշանակություն ունեցավ թուրքերին դիմադրություն կազմակերպելու գործում, մինչև որ Սարդարապատի ռազմաճակատից կանոնավոր զորամասեր ուղարկվեցին այնտեղ:

<sup>22</sup> Միացեալ եւ անկախ Հայաստան: Պատմական քայլը, Էջեր հայ ազատագրութեան պայքարներէն, Կ. Պոլիս, 1919, էջ 23:

<sup>23</sup> Ա. Ա ս տ ու ա ծ ա տ ր ե ա ն. Արամը. – “Հայրենիք”, 1964, № 7, էջ 77:

<sup>24</sup> “Ճակատամարտ” (Կ. Պոլիս), 30. I. 1921, Ա. Ա հ ա ր ո ն յ ա ն. Ավարայրի ոգեկոչումը: Անդրանիկ, Երևան, 1991, էջ 9:

<sup>25</sup> “Հորիզոն” (Թիֆլիս), 6. IX. 1918:

1918 թ. մայիսի 22-ին հայկական ուժերը Սարդարապատի ճակատում անցան հակահարձակման թուրքական մեծաքանակ զորքերի դեմ և երկօրյա մարտերի ընթացքում ազատագրեցին բազմաթիվ բնակավայրեր, այդ թվում՝ Սարդարապատ գյուղն ու կայարանը<sup>26</sup>: Կրելով լուրջ կորուստներ՝ թուրքերը նահանջեցին և ամրացան Արաքս կայարանում ու մերձակա բարձունքներում: Հայկական զորքերի առաջին հաղթանակը բեկումնային նշանակություն ունեցավ Երևանին սպառնացող թուրքական վտանգը չեզոքացնելու և հայոց մեջ մինչ այդ տիրող բարոյահոգեբանական վիճակը փոխելու առումով: Հայկական զորամասերն արագորեն համալրվում էին, բանակի շարքերն էին վերադառնում անգամ դասալիքները: Բնակչությունը՝ անկախ սեռից, տարիքից ու սոցիալական դիրքից, ամեն ինչ զոհաբերում էր հոգուտ ռազմաճակատի կարիքների և հայրենիքի փրկության<sup>27</sup>: 1918 թ. մայիսի 27-ին հայկական զորքերն անցան նոր գրոհի<sup>28</sup> և ջախջախիչ պարտության մատնեցին թշնամուն (թշնամին տվեց 3.500 զոհ): Նույն օրերին հայկական զորքերը՝ Դրոյի գլխավորությամբ, թուրքերին պարտության մատնեց Ապարանի ճակատում, որի շնորհիվ Երևանի շրջափակման վտանգը վերացվեց: Ոգևորվելով Սարդարապատում հայկական զորքերի տարած առաջին հաղթանակն ավետող Ա. Մանուկյանի մայիսի 23-ի հեռագրից՝ հայությունը ոտքի կանգնեց նաև Ղարաքիլիսայում (այժմ՝ Վանաձոր): Հայկական կորպուսի գորամասերը, որոնք մինչ այդ նահանջում էին դեպի Դիլիջան, վերադարձան ու աշխարհագրորային ջոկատների հետ հուժկու դիմադրություն ցույց տվեցին թշնամու գերակշիռ ուժերին՝ նրանց հասցնելով արժանավայել հակահարված:

Մայիսյան հերոսամարտերը, որոնց կազմակերպման գործում առաջնակարգ ու մեծագույն դեր ունեցավ Ա. Մանուկյանը, հայ ժողովրդին փրկեցին վերջնական բնաջնջումից, Արևելյան Հայաստանը բռնազավթումից և հնարավոր դարձրին հայոց անկախ պետականության վերականգնումը: Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդը 1918 թ. մայիսի 28-ին վճռեց հռչակել Հայաստանի Հանրապետության անկախությունը: Ռ. Հովհաննիսյանի իրավացի բնորոշմամբ, դա «զարմանահրաշ նվաճում էր»<sup>29</sup>:

<sup>26</sup> ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 84, թ. 5, Ս. Ա. ֆ. ա ն ա ս յ ա ն. Սարդարապատի հաղթանակը (Հայաստան. Մայիս 1918), Երևան, 1991, էջ 44, Հ. Ավետիսյան. Հայոց ազգային միասնության հաղթանակը. 1918 թվականի մայիս, Երևան, 1998, էջ 95–96:

<sup>27</sup> ՀԱԱ, ֆ. 289, ց. 1, գ. 8, թ. 6:

<sup>28</sup> ՀԱԱ, ֆ. 121, ց. 2, գ. 82, թ. 16, Ս. Մարտիրոսյան. Սարդարապատի ճակատամարտը. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 1969, № 1, էջ 159:

<sup>29</sup> Ռ. Հովհաննիսյան. Հայաստանի Հանրապետություն, հ. I, Առաջին Տարին. 1918–1919, Երևան, 2005, էջ 39:

Մինչև Մայիսյան հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի<sup>30</sup> :

Մինչ Թիֆլիսից Երևան կտեղափոխվեր Հ. Քաջազնունու կողմից ձևավորվող Հայաստանի Հանրապետության անդրանիկ կառավարությունը՝ Ա. Մանուկյանի գլխավորությամբ ստեղծվեց Հայաստանի ժամանակավոր կառավարություն՝ ի դեմս Երևանի Ազգային խորհրդի Վարչության (առավելապես հայտնի է Վարիչների մարմին անունով): Հայաստանի առաջին Հանրապետության պետական գործիչներից Ա. Բարայրյանն այս կապակցությամբ նշել է. «Արամն էր, որ փաստօրեն կառավարում էր երկիրը»<sup>31</sup>: Նրա գլխավորությամբ գնահատելի աշխատանք կատարվեց նորանկախ երկրի անվտանգության, սոցիալ-տնտեսական ու քաղաքական կայունության ապահովման, պետականության հիմքերի ստեղծման ուղղությամբ: 1918 թ. հուլիսի 19-ին Ա. Մանուկյանը Երևանում հանդիսավորությամբ դիմավորեց Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդի և ՀՀ կառավարության անդամներին: Նա հուլիսի 20-ին Երևանի ու Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդների համատեղ նիստում հայտնեց իշխանությունը ՀՀ «օրինաւոր կառավարությանը» հանձնելու, ինչպես նաև «երկրում կարգ ու կանոն և տանելի կեանք ստեղծելու գործում» նրանց աջակցելու պատրաստակամության մասին<sup>32</sup>: Հուլիսի 20–22-ին Երևանում վերջնականապես ձևավորվեց ՀՀ կառավարությունը, որի կազմը հրապարակվեց հուլիսի 24-ին: Մանուկյանին վստահվեցին միաժամանակ Ներքին գործերի, Պարենավորման, Խնամատարության, Կրթության ու Հաղորդակցության նախարարությունները: Այս հանգամանքը, ժողովրդի շրջանում ունեցած անառարկելի հեղինակության հետ միասին, ապահովեցին նրա առանցքային դերը կառավարության մեջ:

Ա. Մանուկյանն անսպառ եռանդով ու բարձր պատասխանատվությամբ իր մասնակցությունը բերեց կառավարության աշխատանքներին՝ մշտապես հանդես գալով նախաձեռնողի և ուղղորդողի դերում, ու մեծապես նպաստեց հայոց պետականության ամրապնդմանը: Նրա կազմակերպչական ջիղի շնորհիվ շոշափելի ձեռքբերումներ արձանագրվեցին ՀՀ վարչական մարմինները ձևավորելու, երկրում ամուր իշխանություն, կարգուկանոն և օրինականություն հաստատելու, թուրք-թաթարական հակապետական խռովությունները ճնշելու, պարենային ճգնաժամը մեղմելու, համաճարակային հիվանդությունների տարածման դեմ պայքարի, պաշտոնական գրա-

<sup>30</sup> Армянский вопрос и геноцид армян в Турции (1913–1919). Материалы Политического архива министерства иностранных дел Кайзеровской Германии. Сборник. Составитель, ответственный редактор, автор предисловия, введения и примечаний В. Микаелян. Ереван, 1995, с. 508.

<sup>31</sup> Ա. Բարայրյան. Էջեր՝ Հայաստանի անկախութեան պատմութիւնից, Կահիրե, 1959, էջ 8:

<sup>32</sup> «Լրատու Երևանի Հայոց Ազգային խորհրդի», 23. VII. 1918:

գրությունները հայացնելու, հարյուր հազարավոր արևմտահայ փախստականների ու որբերի ծանր կացությունը մեղմելու և այլ ուղղություններով:

Նշենք, որ ՆԳ նախարար Ա. Մանուկյանի 1918 թ. սեպտեմբերի 19-ի հրամանով երկրի պետական-կառավարական հիմնարկները պետք է ունենային Հանրապետության դրոշը (ըստ կարգի վերնից ներքև՝ կարմիր, կապույտ, դեղին գույներով)<sup>33</sup>:

Ազգային-պետական մտածողությամբ առաջնորդվող Ա. Մանուկյանի յուրաքանչ-յուր քայլը միտված էր հայոց պետականության կայացման գերնպատակին: Այդ ուղղությամբ նրա նախաձեռնած առաջին քայլերից մեկը մասնավոր գենք-գինամթերքի պետականացումն էր, որի մասին օրենքն ընդունվեց օգոստոսի 29-ին: Ելակետն այն էր, որ ցանկացած գործի հաջողության հիմքում ընկած է կարգուկանոնը, որի պաշտպանությունը պետական իշխանության պարտականությունն է: Պետականության ամրապնդման ճանապարհին Ա. Մանուկյանի համար չկային արտոնյալներ ու արգելքներ: Նա ամեն ինչ անում էր, որ բոլորը՝ անկախ պաշտոնական դիրքից, կուսակցական պատկանելությունից և հայրենիքին մատուցած ծառայություններից, ցուցաբերեն առավելագույն պատասխանատվություն՝ իրենց վստահված գործի նկատմամբ: Ա. Մանուկյանը 1918 թ. սեպտեմբերի 8-ի շրջաբերականով պետական պաշտոնյաներին զգուշացնում էր, որ եթե իրենց նկատմամբ լրագրերում հրապարակված մեղադրանքները չհերքեն, ապա կհեռացվեն աշխատանքից և դատի կտրվեն<sup>34</sup>: Բազմաթիվ են դեպքերը, երբ պատասխանատվության են ենթարկվել օրինազանց և անկարգապահ պաշտոնյաներ:

Ա. Մանուկյանի համար, որպես ժողովրդին անվերապահորեն նվիրված պետական գործչի, խորթ էր պետական պաշտոնյայի գործառույթների, ինչպես նաև օրենքների մեխանիկական կիրառումը, և, ընդհակառակը, առաջնային պետության ու ժողովրդի շահը, եթե նույնիսկ դա օրենքով ամրագրված չէր: Նրա համար անգամ ընդունելի էր օրենքի շրջանցումը, եթե դրա կիրառումը կարող էր հարվածել երկրի ու ժողովրդի շահերին: Ելնելով բացառապես այդ ըմբռնումից՝ նա երբեմն անտեսում էր օրենքն ու կարգը՝ իր վրա վերցնելով ողջ պատասխանատվությունը: Բսկ ուլքե՛ր կարող էին այդ կերպ վարվել: Համոզված ենք՝ միայն մեծ մարդիկ, քանզի միայն նրանց է հաստուկ այդպիսի պատասխանատու գործելակերպը: Նա իրավացիորեն նշում էր, որ «կան դեպքեր ... երբ օրենքն ու իրաւունքը գործադրելով՝ մենք յանցաւորներ կը դառնանք, մանաւանդ այնպիսի ծանր ու անբնական ժամանակներում, երբ դեպքերը տեղի են ունենում գահավեժ արագութեամբ եւ ստեղծում դրոյթիւններ, որոնք օրենքը չէր կարող նախատեսել»<sup>35</sup>: Կարևորն այն է, որ Ա. Մանուկյանի բոլոր արարքները, անխտիր, գերծ էին անձնական շահախնդրությունից: Ունենալով ֆինանսական մի-

<sup>33</sup> ՀԱԱ, ֆ. 214, ց. 3, գ. 24, թ. 19:

<sup>34</sup> ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 1, թ. 79-82:

<sup>35</sup> Արամը. Մահուան յիսնամեակին առթիւ, Երևան, 1991, էջ 140:

ջոցներից օգտվելու լայն հնարավորություններ՝ նա ապրում էր համեստ կյանքով, հասարակ երևանցու նման: Հայրենիքի նկատմամբ ունեցած բարձր պատասխանատվությունն ու ազնվությունը նրան ապահովում էին մեծ հեղինակություն: Ասվածի մասին է վկայում գեներալ Մ. Միլիկյանին և Ա. Մանուկյանին ուղղած Ղարաքիլիսայի բնակչության՝ հոկտեմբերի 20-ի հեռագիրը, որում ասվում էր. «Ուրախ ենք, որ Հայկական զորքի և երկրի ներքին գործերի կառավարության գլուխ կանգնած էք դուք, որ հայկական կեանքի ամենաձանր շրջանում չլքեցիք ձեր ժողովրդին և ցուակից եղաք նրան: Հաւատում ենք, որ ձեր աշխատութեամբ և եռանդի շնորհիւ կը կազմւի ուժեղ բանակ և հաստատուն իշխանութիւն, որը վերջ կը դնի մեր ժողովրդի տանջանքներին»<sup>36</sup>:

Ա. Մանուկյանի գլխավորությամբ իրագործված քայլերից հիշատակելի է հատկապես թուրք-թաթարական խռովությունների ճնշումը, որի միջոցով նա ձգտում էր ապահովել հանրապետության անվտանգությունը և, միաժամանակ, նպաստել արևմտահայ փախստականների տեղավորմանը, երկրի հայացմանը. այն ռազմավարական նշանակության խնդիր էր: ՀՀ առաջին ռազմական նախարար Հ. Հախվերդյանը 1931 թ. նկատել է, որ Ա. Մանուկյանն այդ քաղաքականությունը վարում էր «ինքնուրույն, լռակյաց, հաշվի չնստելով նախարարների խորհրդի կարծիքի հետ, և ասելով մի բան, կատարելով այլ բան, հավանաբար, գտնելով դա օգտակար հայ ժողովրդի շահերի համար»<sup>37</sup>:

Ա. Մանուկյանը խիստ կշռադատված և լիովին պետականամետ մոտեցում էր որդեգրել նաև հայ-թուրքական հարաբերություններում: Ճիշտ է Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտության հարցը 1918 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին կասկած չէր հարուցում, սակայն Ա. Մանուկյանը, գտնելով, որ այն դեռևս իրենից մեծ ուժ է ներկայացնում և կարող է վնասել մեր երկրին, առերևույթ բարեկամական վերաբերմունք էր ցուցաբերում այդ պետության նկատմամբ: Վրաստանում գերմանական առաքելության ղեկավար գեներալ Կրեսն Ա. Մանուկյանին իրավաօրենքներն դասել է Թուրքիայի նկատմամբ սպասողական, ձգձգումների քաղաքականության կողմնակիցների թվին<sup>38</sup>: Մշտապես թուրքական բռնապետության դեմ պայքարի առաջին զժում գտնվող, այդ պահին նրա կողմից հրահրվող թաթարական խռովությունները հետևողականորեն ճնշող Ա. Մանուկյանը ոչ միայն ձեռնպահ մնաց Թուրքիայի հանցագործ կեցվածքը դատապարտող՝ տվյալ պահին ժամանակավրեպ արտահայտություններից, այլև բարձր մակարդակով ընդունելություն կազմակերպեց օգոստոսի 31-ին Երևան ժամանած թուրք զորավար, ոճրագործ Խալիլի համար:

<sup>36</sup> «Զանգ», 27. X. 1918:

<sup>37</sup> ՀԱԱ, ֆ. 45, ց. 1, գ. 28, թ. 44:

<sup>38</sup> Deutschland und Armenien 1914–1918, Sammlung diplomatischer Aktenstücke, Herausgegeben und eingeleitet von Dr. Johannes Lepsius. Potsdam, 1919, S. 423.

Մանուկյանը Երևանի երկաթուղային կայարանում անձամբ դիմավորեց թուրք գործչին, նույնիսկ գրկախառնվեց նրա հետ: Ավելին, հայ-թուրքական բանակցությունն ընթացավ Ա. Մանուկյանի բնակարանում<sup>39</sup>:

Ցավոք, Ա. Մանուկյանին վիճակված չէր երկար ապրել և շարունակել հանրապետության ամրապնդմանն ուղղված իր խիստ օգտակար գործունեությունը: Ժողովրդի հետ անմիջական շփումների մեջ գտնվող գործիչը 1918 թ. դեկտեմբերին վարակվեց երկրում մոլեգնող բժավոր տիֆով և վախճանվեց 1919 թ. հունվարի 29-ին: Ա. Մանուկյանի մահը ցնցեց հայ ժողովրդին, նրա հուղարկավորությունը վերածվեց համաժողովրդական սուգի, որին մասնակցում էր ամբողջ Երևանը, մեծ ու փոքր, որպեսզի վերջին անգամ հարգանքի տուրք մատուցեր մի մարդու, որին վստահել էր իր ճակատագիրն ամենաձանր օրերին: Նրան նվիրված դամբանականում Ն. Աղբալյանը նշում էր. «Երբ գիշերը գայ, մտեք ձեր հոգիի սենեակը և խօսեցեք ձեր խղճի հետ և ըսեք, արդեօք աշխատե՞լ էք հայ ժողովրդի համար, ինչպես Արամը, եղե՞լ էք այնքան անձնագոհ, որքան Արամը, տե՞լ էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպես Արամը...»<sup>40</sup>:

Այսպիսով՝ Ա. Մանուկյանի կյանքն ու գործունեությունն ամբողջական նվիրում էր հայ ժողովրդի ազատության համար մղվող պայքարին: Ամենուր, որտեղ էլ որ գործեց, նա աչքի ընկավ կազմակերպչական բացառիկ ձիրքով, անկոտրում կամքով, քաղաքական հասունությամբ, հեռատեսությամբ, իրատեսությամբ, արդարամտությամբ, համեստ կենցաղով և մեծագույն պատասխանատվությամբ իր ժողովրդի ճակատագրի նկատմամբ: Այդ հատկանիշները նրա համար ապահովեցին անառարկելի հեղինակություն, իսկ գործունեությունը դարձրին խիստ արգասավոր: Նա առաջնակարգ ու հսկայական ներդրում ունեցավ Հայաստանի առաջին Հանրապետության ստեղծման, ապա նաև՝ նրա հիմքերի ամրապնդման գործում, որի համար սերունդների հիշողության մեջ հավերժացավ իբրև Հանրապետության հիմնադիր:

<sup>39</sup> ՀԱԱ, ֆ. 370, ց. 3, գ. 19, թ. 55–56, Վ. Ն ա լ ա ս ա Ր Ղ Է ա ն. Արամի կեանքից. – «Հայրենիք», 1925, № 1, էջ 75–79:

<sup>40</sup> «Աշխատանք» (Երևան), 12. II. 1919:



## АРАМ МАНУКЯН: НАЦИОНАЛЬНО-ГОСУДАРСТВЕННЫЙ ДЕЯТЕЛЬ

АРМЕН АСРЯН

## Резюме

*Ключевые слова: Арам Манукян, Западная Армения, независимость, народ, Первая Республика Армения, АРФД, единство, ответственность, государственный деятель, государственное мышление, решительность, политический деятель.*

Крупный национально-государственный деятель, основатель Первой Республики Армения Арам Манукян (Саркис Ованесян) родился 19 марта 1879 г. в Карабахе, в городе Шуши. В 1890-ых годах, войдя в ряды ведущей силы армянской освободительной борьбы – партии АРФ «Дашнакцутюн», А. Манукян боролся за освобождение Западной Армении. Он был убежден, что поднявший освободительный флаг против турецкого ига армянский народ должен опираться на собственные силы. В начале Первой мировой войны А. Манукян всячески стремился уберечь армян Ванской области Западной Армении от масштабных репрессий турок. В апреле 1915 г., когда турецкие власти начали претворять в жизнь план уничтожения западных армян, А. Манукян, сотрудничая с другими политическими силами, организовал и руководил самооборону Вана, благодаря чему армяне Вана спаслись от резни, которой подверглись полтора миллиона армян других областей Западной Армении.

В 1918 г. А. Манукян объединил в Восточной Армении широкие слои общества, социально-политические круги, талантливых военных во имя сплоченной общенациональной борьбы против турецких завоевателей. В судьбоносные дни мая 1918 г. А. Манукян организовал Сардарapatское и Баш-Апаранское сражения. После восстановления независимости он как первый министр внутренних дел (а также министр продовольствия, социального обеспечения, образования, связи) Республики Армения, всячески способствовал становлению и укреплению армянской государственности. Скончался от тифа 29 января 1919 г. в Ереване. А. Манукян совершенно справедливо удостоился имени основателя Республики Армения.

## ARAM MANUKYAN: A NATIONAL-STATE FIGURE

ARMEN ASRYAN

## Summary

*Key words: Aram Manukyan, Western Armenia, independence, people, Republic of Armenia, ARF Dashnaktsutyun, unity, responsibility, statesman, state thinking, determination, political figure.*

Aram Manukyan (Sargis Hovhannisyan) – a major national-state figure of Armenian history, the founder of the First Republic of Armenia, was born in the city of Shushi, Karabakh, on March 19, 1879. In the 1890's, becoming a member of Armenian Revolutionary Federation Dashnaktsutyun – a leading power in Armenian liberation struggle, A. Manukyan fought for the liberation of Western Armenia. He was sure that Armenians who had raised the liberation flag against Turkish yoke must rely on their own power. At the beginning of the World War I, A. Manukyan tried by all means to save the Armenians of Van province of Western Armenia from the large scale of the Turkish violence. In April 1915, when Turkish government started to realize the extermination of Western Armenians, A. Manukyan, in collaboration with other political forces, organized and led the self-defense of Van, owing to which the Armenians of Van were saved from the genocide to what one and a half million Armenians from other regions of Western Armenia were subjected.

In 1918, A. Manukyan consolidated large social-political strata of the society and military leaders in Eastern Armenia to fight against Turkish conquerors. In fatal days of May 1918, he organized battles of Sardarabad and Bash-Aparan. After regaining the independence, A. Manukyan, as a Minister of Internal Affairs (also a Minister of Provision, Social Care, Education, Communication) of the Republic of Armenia (1918–1920) by all means contributed to the strengthening of the republic. A. Manukyan died of typhus on January 29, 1919 in Yerevan. Hence, A. Manukyan was justly honoured with the name of the founder of the First Republic of Armenia.

ԷԹՆՈՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՂՈՒՄԸ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԵՁ\*

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Բանալի բառեր՝ Կոմիտաս վարդապետ, մշակույթ, երաժշտություն, պար, էթնոմանկավարժություն, էթնոսոցիալական միջավայր, էթնոերաժշտական դաստիարակություն:

*Հայ էթնոմանկավարժական մշակույթում Կոմիտաս (Սողոմոն Սողոմոնյան) վարդապետը (1869–1935 թթ.) իր առանձնակի տեղն ունի: Նա իր կյանքը նվիրել է դարերի ճանապարհ անցած հայ ազգային երաժշտական գանձերը գրառելու, գիտականորեն մեկնաբանելու, հայ ու համաշխարհային հասարակության սեփականություն դարձնելու դժվարին, բայց և նվիրական գործին:*

*Կոմիտասն ապրել ու ստեղծագործել է իր ժողովրդի համար բավական ծանր և ողբերգական ժամանակաշրջանում: Նշենք միայն այն իրողությունը, որ նրա ծննդավայրում՝ Քյոթահիայում բնակվող հայերին պետականորեն արգելված էր մայրենի լեզվով խոսելը: Կոչկակարի ընտանիքում ծնված տաղանդավոր մանուկն ազգային-կրոնական կառույցների հոգատարության շնորհիվ ուսանում է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և 1895 թ. ստանում վարդապետի կոչում: Կոմիտասը հոգևոր դպրոցում սկսում է ուսումնասիրել հայ եկեղեցական երաժշտություն, սակայն չի սահմանափակվել զուտ կրոնական երգչի գործունեությամբ. նա վանքից դուրս է եկել դեպի ժողովուրդը, սովորել նրանից ու հետագայում իր մշակութային որոնումների արդյունքը ներկայացրել աշխարհին:*

*Պրպտուն միտք ունեցող հայրենասեր հոգևորականը բանահավաքչական լայն գործունեություն է ծավալել և գրի առել ավելի քան չորս հազար հայերեն ու այլ լեզուներով հնչող հայկական երգանմուշներ<sup>1</sup>: Կոմիտասի գործունեությունն ուսումնասիրած Սամսոն Գասպարյանը գրում է. “Կոմիտասի ստեղծագործ էության մեջ մարմնավորված է անխոնջ հավաքող ազգագրագետը, ինչպես նաև վերլուծող ու մեկնաբանող գիտնականը”<sup>2</sup>: Երգերն ու պարերը գրի առնելուց զատ նա ուսումնասիրում է դրանք, վերամշակում՝ նպաստելով ազգային երգի և պարի զարգացմանն ու տարածմանը ոչ միայն հայրենիքում, այլև Եվրո-*

<sup>1</sup> Ռ. Թեբրլեմեզյան. Կոմիտաս, Երևան, 1992, էջ 27:

<sup>2</sup> Ս. Գասպարյան. Կոմիտաս, Երևան, 1947, էջ 97:

պայում: Հայ երաժշտական մշակույթը “պատմության և գիտության լույսի տակ” ուսումնասիրած Աշոտ Պատմագրեանը գրում է. “Կոմիտասի գործում, բացի երաժշտականից, կան մի քանի ուրիշ, արտաերաժշտական ազդակներ եւս, որոնք նպաստել են նրա մեծությանը”<sup>3</sup>: Երաժշտագետը նման ազդակներ է համարում պատմականը, ընկերային ու ազգայինը:

Հիմնավորված վերլուծությունների միջոցով Կոմիտաս վարդապետը գործնականում և տեսականորեն ապացուցել է հայ ինքնուրույն հոգևոր ու աշխարհիկ երաժշտության գոյության իրողությունը: “Հայն ունի ինքնուրույն յերաժշտություն” հողվածի մեջ նա քննարկում է ինքնուրույն գիր ու գրականություն ունեցող հայ ազգին ներհատուկ երաժշտության հարցը<sup>4</sup>: Իր ցեղի երգերում Կոմիտասը կարևորել է էթնոհոգեբանական գործոնը. “Ժողովրդական է միայն այն յերգը, վոր բնագղմամբ և անմիջապես է ստեղծում մի ժողովուրդ”<sup>5</sup>:

Վարդապետն իր լուսավորչական գործունեության ընթացքում բարձրացել է ազգային երաժշտության շրջանակներից, վերլուծել և հայ հասարակության ուշադրությանն է ներկայացրել եվրոպացի երաժիշտների գործերը, դրանց ունեցած դերը իրենց ազգի ու մարդկության համար: Այդ առումով հատկապես ուշագրավ է գերմանական երաժշտական մշակույթը բարեփոխած Ռիխարդ Վագներին նրա տված գնահատականը. “Վագները Գերմանիային ազգային յերաժշտություն տվավ, իսկ ռոտարներին՝ դաս”<sup>6</sup>: Ծանոթ լինելով Ռ. Վագների՝ էպիկական թեմաներով գրված գործերին, որոնք ազդել են գերմանական փիլիսոփայության ու գրականության զարգացման ընթացքի վրա և այդպիսով նպաստել գերմանացի ժողովրդի միասնության ամբողջացմանը, Կոմիտասը ձեռնամուխ է լինում “Մասնա ծոեր” օպերայի ստեղծման աշխատանքներին:

Կարելի է վստահաբար ասել, որ հանճարեղ Կոմիտասը մոռացումից փրկել, մշակել և մեզ է նվիրել հայ ազգային երաժշտությունը՝ որպես ինքնաճանաչման միջոց: Այլ. Իսահակյանը գրում է. “Մեր գյուղական ժողովրդից վերցրած երգը Կոմիտասը բյուրեղացրած վերադարձրեց նրան: ... Նրա երգով մեր ժողովուրդը ավելի գիտակցաբար զգաց իրեն, ավելի կապվեց իրար հետ, ինքնաճանաչեց”<sup>7</sup>:

Անդրադառնալով ազգային-հայրենասիրական թեմաներով Կոմիտասի գործունեությանը՝ Ռոբերտ Աթայանը գրում է. “Բայց կարևոր է նշել, որ հայրենասիրական կամ ազատագրական այդ երգերը ևս, իրենց երբեմն սահմանափակ դրսևորումներով անգամ, ժամանակին ժողովրդի ազգային գիտակցությունը կազմակերպելու և բարձրացնելու գործում մեծ նշանակություն են ունեցել, և որ դրանց դիմած լինելն ավելի ևս ընդգծում է Կոմիտաս-

<sup>3</sup> Ա. Պատմագրեան. Հայ երգը դարերի միջից, Պեյրութ, 1973, էջ 297:

<sup>4</sup> Կոմիտաս. Հողվածներ յեվ ուսումնասիրություններ, Յերևան, 1941, էջ 45–50:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 186:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 176:

<sup>7</sup> Այլ. Իսահակյան. Երկերի լիակատար ժողովածու, հ. V, Երևան, 1977, էջ 68:

սի՝ որպես քաղաքացի-արվեստագետ հանդես գալը”<sup>8</sup>: Փաստորեն, աներկբա իրողություն է այն, որ երաժշտության միջոցով Կոմիտաս վարդապետը նպաստել է իր ազգի համախմբմանն ու առաջընթացին: Պահպանելով ու մշակելով ազգայինը՝ նա հարստացրել է համաշխարհային մշակույթը: Ի դեպ, նա երգել է ոչ միայն մայրենի, այլև քրդերեն, թուրքերեն, արաբերեն լեզուներով<sup>9</sup>: Ռ. Աթայանը գրում է. “Կոմիտասի հայտնաբերած և գրի առած երգերը միաժամանակ նշանակալից ավանդ են միջազգային երաժշտական ֆոլկլորում: Դրանք աշխարհի բազմազգ ժողովուրդների երաժշտական ֆոլկլորը լրացնում են ազգային վառ անհատականություն և բարձր գեղարվեստականություն ունեցող մի արժանավոր հատվածով”<sup>10</sup>:

Կոմիտասը ոչ միայն երաժիշտ էր, բանահավաք ու խմբավար, այլև տաղանդավոր մանկավարժ: Հայկական բարեգործական ընդհանուր միության համար գրված “Պանծա՛, դու հայ միություն” երգում նա կոչ է անում խավարով պատված հայ գավառներին լույս տանել ուսման միջոցով<sup>11</sup>:

Նրա մանկավարժական գաղափարներն արտացոլվել են իր նամակներում, դասախոսություններում և հոդվածներում: Հիացմունքով պետք է նշել, որ Կոմիտասը, վեր հանելով հայկական երաժշտության առանձնահատկությունները, նշում է այդ երևույթի ոչ միայն ցեղամտածողության արտացոլման, այլև ուսուցողական գործառույթը. “Մինչդեռ հայ յերաժշտությունը վոչ միայն մեղի ու տխուր չէ, այլ համակ ուժ է և կենդանություն, ու իր ցեղին մեջ կը սնուցանե փիլիսոփայությունն իսկ, վոզին իսկ իր ցեղին, վորովհետև յերաժշտությունը ամենեն մաքուր հայելին է ցեղին”<sup>12</sup>: Փաստորեն, նա էթնոերաժշտությունը դիտում է որպես ժողովրդի կենսափիլիսոփայության աղբյուր:

Կոմիտասը 1895 թ. ծրագիր է կազմում, որով փորձում է բարելավել երաժշտության դասավանդման գործը<sup>13</sup>: 1910 թ. Ամենայն Հայոց կաթողիկոս Ս. Ս. Մատթեոս Բ-ին ուղղված նամակում գրում է, որ պետք է “կորստից փրկել մեր նախնի երաժշտության բեկորները, զարգացնել ազգային գեղարվեստը ...”<sup>14</sup>: Մինչև Կոմիտասը հայ իրականության մեջ արդեն կային երաժշտագետներ, բայց, ըստ էության, նա առանձնանում է հատկապես նրանով, որ, մեր համոզմամբ, առաջինն է խորությամբ անդրադարձել հայ էթնոերաժշտական դաստիարակության հարցերին:

<sup>8</sup> Կոմիտասու. Երկերի ժողովածու, հ. IV, Երևան, 1976, էջ 8:

<sup>9</sup> Մ. Մուրադյան. Կոմիտասը և հայ երաժշտության ցուցադրումը Եվրոպայում. – Կոմիտասական, հ. 2, Երևան, 1981, էջ 17:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 33:

<sup>11</sup> Կոմիտասու. Երկերի ժողովածու, հ. IV, էջ 87:

<sup>12</sup> Կոմիտասու. Հոդվածներ յեվ ուսումնասիրություններ, էջ 195:

<sup>13</sup> Կոմիտասական, հ. 1, Երևան, 1969, էջ 232:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 235:

Խմբավար ու մանկավարժ վարդապետն ուշադրություն է հրավիրում մարդու ձևավորման վրա ազդող էթնոմանկավարժական հետևյալ գործոնների վրա՝ բնություն, բնապատկեր, հասարակական միջավայր ու կենսակերպ: Կոմիտասն ազգային երաժշտության հարցերին նվիրված դասախոսություններից մեկի ընթացքում նշում է, որ ժողովրդական երգերին նյութ են տալիս «հպարտ լեռները, խոր ձորերը, դաշտերը, բազմազան կլիման, պատմական հազար ու մի դեպքերն ու անցքերը, ժողովրդի ներքին և արտաքին կյանքը»<sup>15</sup>: Կոմիտասյան երաժշտության փիլիսոփայության առանցքը նստակյաց կենսակերպ ունեցող արարող մարդն է, ով իր հուզաշխարհում ներառում է բնությունը և արտացոլում այն ըստ իր հոգևոր նկարագրի: Նրա համար աշխարհայացքային մոտեցում է այն, որ մարդը ոչ միայն հետազոտող է, այլև գեղագետ, բնության տվածը ոչ թե պասիվ վայելող, այլ այն ըստ իր հոգեկերտվածքի զարգացնող. «Շինականն այն կախարդ վարպետն է, վոր կարդում է հարազատորեն բնությունը, ստեղծում բազմաբեղուն մտքեր, նոցա փչում է իր հզոր ու պարզ շունչը, դրոշմում է իր բնավորության եղանակով՝ ներքին և արտաքին լրիվ կյանքով և կնքում է բառերով ու յեղանակով իր հարազատ զավակը՝ գութաներգը»<sup>16</sup>:

Վարդապետը կարևորում է անհատի և սոցիալական միջավայրի, ինչպես նաև էթնոսների մշակութային բնականոն զարգացող փոխազդեցությունները: Էթնոերաժշտական դպրոցի հիմնադիր Կոմիտասը սոցիալ-հոգեբանական տեսանկյունից ուշադրություն է հրավիրում նաև երաժշտության՝ մարդկանց կենսակերպով պայմանավորված առանձնահատկություններին: Զարգացնելով իր միտքը՝ նա ժողովրդին համարում է առաջնային էթնոսոցիալական կրթական միջավայր: Նա գրում է. «Ժողովրդի յերգեցողությունն ունի ինքնուրույն դպրոց, ուր դաս են առնում ամենքը, ամեն ժամանակ, յերբ կարիք են զգում: Գեղջուկի դպրոցը, ուսուցիչը և առարկան բնությունն է»<sup>17</sup>:

Երգի ուսուցմանը զուգահեռ Կոմիտաս-մանկավարժը քննարկում է պարի ուսուցման հարցերը: «Զգացումներն ինչ ուղղությամբ վոր ընթանան, յերզն ու պարն ալ նույն արտահայտությամբ յերևան կուգան»<sup>18</sup>: «Հայ գեղջուկ պարը» ուսումնասիրության մեջ նա հոգեբանամանկավարժական տեսանկյունից վերլուծում է հայկական պարը, նշում, որ պարն արտահայտում է յուրաքանչյուր ազգին բնորոշ գծերը, մանավանդ բարքն ու քաղաքակրթության աստիճանը: Այդ երևույթը բացատրում է մարդու ենթագիտակցության առանձնահատկություններով. «... վորովհետև, թեպետ մարդ պարում է ազատ կամքով, բայց մարմնի տեսակ-տեսակ շարժումներն ակամա մատնում են ներքինը»<sup>19</sup>: Երաժշտագետ-մանկավարժը ուշադրություն է հրավիրում մարդու ձևավորման գործընթացում էթնիկական պարի ունեցած առողջ ազդեցության վրա: Նա գրում է. «Հայ գեղջուկ պարը կիրք զար-

<sup>15</sup> Կ ո մ ի տ ա ս. Հոդվածներ յեվ ուսումնասիրություններ, էջ 9:

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 99:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 29:

<sup>18</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>19</sup> Նույն տեղում, էջ 51:

թեցնող շարժումներ չունի, և զգացումներն արտահայտվում են վոչ թե մեղկ, մոլի կատաղի, հրապուրիչ և այլն շարժումներով, այլ պարերգերի միջոցով<sup>20</sup>: 1912 թ. Կ. Պոլսի Եսայան դպրոցում կարդացած “Պարն ու մանուկը” դասախոսության մեջ նա փորձում է պարզաբանել, “թե ինչ նշանակություն ունի մանկական երգեցողությունն ապագա ազգային դաստիարակության գործի մեջ<sup>21</sup>: Ակներևաբար, Կոմիտասը երաժշտական մշակույթը դիտարկել է որպես էթնոդաստիարակչական միջոց՝ ուշադրություն հրավիրելով երեխաների տարիքային-հոգեբանական առանձնահատկություններին. “Շատ հետաքրքրական է յերգի կամ պարի ժամանակ գյուղացի մանուկներին տեսնելը: ... Նոցա դուր է գալիս յերգի կարճ ու պարզ կրկնակը”<sup>22</sup>:

Երգ ու պարի ուսուցման համար Կոմիտաս վարդապետը կարևորում է “մանուկին դաստիարակության մեջ յերգեցողության ընծայվելիք հոգացողությունն ու պարտավորությունը”<sup>23</sup>, այսինքն՝ ուսուցման գործընթացում դաստիարակ-դաստիարակվող փոխհարաբերությունների մարդասիրական բնույթը: Միաժամանակ Կոմիտասը քննարկում է ուսուցման ոչ թե սխոլաստիկ, այլ գիտակցված կազմակերպման հարցը՝ գիտականորեն հիմնավորելով ուսուցման սկզբունքների կիրառումը. “Վորպեսզի յերգեցողությունը դնդերներու միջոցով անոր ուղեղին բարերար ազդեցություն մը ունենա, պետք է գիտակցական ըլլա”<sup>24</sup>: Կարևորելով առողջ ու կենսուրախ սերնդի դաստիարակության հարցը՝ նա մանկավարժներին հորդորում է երեխաներին սովորեցնել ոչ թե տխուր, այլ ուրախ երգեր: Կոմիտաս-մանկավարժն առաջադրում և ինքն էլ պատասխանում է “Ինչպե՞ս ուսուցանել” հարցին<sup>25</sup>:

Անկասկած, հայրենիքն ու երեխան Կոմիտասի համար առաջնային արժեքներ են, և կարևորելով կրթության փոխկապակցվածությունն ազգի ապագայի հետ՝ նա հայ ուսուցչությանը կոչ է անում գիտակցաբար մոտենալ աճող սերնդի ձևավորման հարցին. “Ուսուցիչ պարոններ ու քույրեք, զգուշությամբ և երկյուղածությամբ մոտեցե՛ք դաստիարակության գործին: Դաստիարակելու կոչված եք սերունդ մը, վոր ապագա ազգն է”<sup>26</sup>: Կոմիտասն ուսուցչին համեմատում է ընտանիքի և հասարակության համար կրթություն տարածող մշակի հետ: Նրա մասին երաժշտագետ Ի. Յոլյանը գրում է. “Նա ոչ միայն հակված չէր արվեստը դիտել որպես շրջապատի իրականությունից, ժողովրդի կյանքից կտրված վերացական կատեգորիա, ոչ միայն ընդունում էր արվեստի գործուն դերը, այլև ամեն

<sup>20</sup> Նույն տեղում:

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 31:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 63:

<sup>24</sup> Նույն տեղում, էջ 66:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 67:

<sup>26</sup> Նույն տեղում:

կերպ ձգտում էր արվեստը ծառայեցնել դաստիարակության նպատակներին<sup>27</sup>: Կոմիտասը մանկավարժական գործունեություն է ծավալել ոչ միայն Էջմիածնի Գևորգյան ճեմարանում: Տեղափոխվելով Կ. Պոլիս նա բնակություն է հաստատում նկարիչ Փ. Թերլեմեզյանի տանը և զբաղվում երաժշտության դասավանդմամբ:

Ինչպես տեսնում ենք, Կոմիտաս վարդապետն իր ազգին լուրջ երաժշտություն չի նվիրել, այլն փորձել է լուսաբանել այդ երևույթի դասավանդման մեթոդիկայի և դաստիարակչական նշանակության հարցերը: Նա երաժշտությունը դիտարկել է բազմակողմանիորեն, կարևորել է նրա դերն անհատի, հասարակության և ազգի համար:

Չնայած այն իրողությանը, որ Կոմիտասի գրապահոցի մի մասը, ցավոք, կորել է, այնուամենայնիվ, ըստ պահպանված նյութերի էլ կարող ենք եզրակացնել, որ նա սկզբնավորել է հայ էթնոերաժշտական դաստիարակությունը: Վարդապետը, հիանալի պատկերացնելով, թե ինչպես են ազգային երգն ու պարն իրենց փոխաբերական նրբերանգներով մարդուն տանում դեպի նախնիների հետ նույնականացման, հաջողությամբ շարունակել է զարգացնել Մեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարթևի երգուսուցման էթնոմանկավարժական ավանդները: Նա աճող սերունդների համար հայ երաժշտությունը քոչվոր ցեղերի բացասական ազդեցությունից մաքրելուց բացի հայ երգն ու պարը քարոզել, տարածել է որպես ինքնաճանաչման և էթնոդաստիարակության միջոց: Որպես այդպիսին՝ Կոմիտասի երաժշտությունը դարձել է ազգային ինքնաճանաչման ու հոգեխիտը ինքնապահպանման միջոց, հայ ժողովրդի էթնիկական անվտանգության ապահովման բաղադրիչ:

## ОТРАЖЕНИЕ ЭТНОПЕДАГОГИЧЕСКИХ ИДЕЙ В КУЛЬТУРНОМ НАСЛЕДИИ КОМИТАСА ВАРДАПЕТА

АШОТ МАНУКЯН

Резюме

*Ключевые слова:* Комитас Вардапет, культура, музыка, танец, этнопедагогика, этносоциальная среда, этномузыкальное воспитание.

<sup>27</sup> Բ. Յոլլա ն. Կոմիտաս, Երևան, 1969, էջ 81:



Комитас Вардапет занимает особое место в армянской этнопедагогической культуре. Его педагогические идеи отражены в письмах, лекциях и статьях. Комитас, раскрывая особенности армянской музыки, отмечает не только ее функцию отражения этномышления, но и образовательную функцию. Комитас Вардапет рассматривает этномузыку как источник философии народа и особенно отличается тем, что он первый, кто глубоко затронул вопросы армянского этномузыкального воспитания. Композитор и педагог Комитас выделил следующие этнопедагогические факторы, влияющие на формирование человека: природа, ландшафт, социальная среда и образ жизни. Он подчеркивает важность развития культурных взаимодействий между индивидом и социальной средой, а также между этническими группами. Основатель этномузыкальной школы Комитас также интерпретирует социальные и психологические особенности музыки, их обусловленность образом жизни людей. Развивая свои мысли, Комитас рассматривает народ как основную этносоциальную образовательную среду.

## REFLECTION OF ETHNOPEDAGOGICAL IDEAS IN THE CULTURAL HERITAGE OF KOMITAS VARDAPET

ASHOT MANUKYAN

### Summary

*Key words: culture, music, dance, ethnopedagogy, ethnosocial environment, ethnomusical upbringing.*

Komitas Vardapet has a special place in the Armenian ethno-pedagogical culture. His pedagogical ideas are formulated in his essays, lectures and articles. By drawing attention to the characteristics of Armenian music, Komitas Vardapet highlights not only its artistic and aesthetic values, but also its educational function. Komitas Vardapet views ethnic music as a source of a people's life philosophy and especially stands out because, in our view, he is the first to address issues of Armenian ethnomusical upbringing at depth. Composer and teacher Komitas Vardapet identifies the following influences on the development of a person: nature, landscape, social environment and lifestyle. He highlights the importance of development of cultural interaction between an individual and the social environment as well as ethnic groups. Komitas – the founder of an ethnomusical school, also interpretes social and psychological characteristics of music as defined by people's lifestyles. Developing his thoughts, Komitas considers the people as the foremost ethno-social educational environment.

---

---

## II

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ\*

#### ԱՐԵՎ ՍԱՄՈՒԵԼՅԱՆ

Բանալի բառեր՝ պատմական բնակավայր, պահպանություն, թանգարանացում, ճարտարապետատարածական կազմակերպում, մշակութային ժառանգություն:

*Մշակութային ժառանգության ուսումնասիրման, պահպանության, հանրահռչակման, օգտագործման խնդիրներն անհնար է լուծել առանց պատմական վայրերի ճիշտ արժեքորման: Դրանք տարեցտարի ընդունում են նոր որակներ, հանդես գալիս նոր չափանիշներով, նոր պահանջներով թե՛ հասարակության և թե՛ պետության առջև: Միացյալ համապատկերում շահում է այն երկիրն ու այն հասարակությունը, որն իրականացնում է պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման և արդիականացման համապարփակ ու հայեցակարգային ծրագրեր և ունի դրանց արդյունքների համակողմանի ներկայացմանն ու հանրահռչակմանը նպաստող ծառայությունների զարգացած ցանց:*

*Մշակութային ժառանգության արդիականացումն ինքնին բազմասպեկտ գործունեության մի ոլորտ է, որը միտված է ապահովելու մշակութային (նաև՝ բնության) ժառանգության “ներմուծումը” ժամանակակից մշակույթ՝ իր բաղադրամասերի, առանձին օբյեկտների սոցիալ-մշակութային դերի ու մեկնաբանության ակտիվացման ճանապարհով: Այսինքն՝ ժառանգության ակտուալացումը հնարավոր է այն դեպքում, եթե այն դիտարկվում է որպես ժամանակակից սոցիալ-մշակութային գործընթացներին ինտեգրված սոցիալական, մշակութային, գիտական արժեք: Վերջին տարիներին միջազգային պրակտիկայում պատմամշակութային ժառանգության պահպանման հայեցակարգերում գերիշխող են դառնում առանձին հուշարձանների “կետային” ուսումնասիրությունից դեպի մշակութային լանդշաֆտների, կենսամիջավայրերի կոմպլեքսային պահպանության միտում-*

ները: Միննույն ժամանակ տիրապետող են դառնում մշակույթի հուշարձանների պատմամշակութային և տնտեսական գրավչության շեշտադրումները: Սա իր հերթին պահանջում է՝

ա) մշակութային ժառանգության ինտեգրացում (արդիականացում) սոցիալական և տնտեսական սեկտորների հետ,

բ) մշակութային ժառանգության պահպանության խնդիրներում հանրության, հատկապես տվյալ տարածքի բնակչության ակտիվ ներգրավվածություն:

Պատմա-մշակութային ժառանգության անշարժ օբյեկտների պարագայում նման ինտեգրացումը հնարավոր է այն դեպքում, եթե այդ օբյեկտները կամ դրանց զբաղեցրած տարածքները թանգարանացվում են: Մշակութային ժառանգության անշարժ օբյեկտների պահպանության համար թանգարան ստեղծելու գաղափարն առաջին անգամ կյանքի կոչվեց Շվեդիայում: 1891 թ. լեզվաբան, ազգագրագետ Արթուր Հազելիուսի նախաձեռնությամբ ստեղծվեց առաջին թանգարանը բաց երկնքի տակ՝ հանրահայտ Սկանսենը, որն էլ հետագայում դարձավ ճարտարապետաազգագրական թանգարանների ընդհանրական անվանումը<sup>1</sup>: Ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ, որ հենց այս տիպի թանգարաններն են առավելագույնս օժտված մշակութային անշարժ օբյեկտների պահպանության ապահովման և օգտագործման պոտենցիալով: Հանգամանք, որն էլ մինչ օրս մասնագետների ուշադրության կիզակետում է պահում նմանատիպ թանգարանների միջոցով մշակութային ժառանգության արդիականացման տեսական, մեթոդաբանական հիմնախնդիրները:

Վերջին տասնամյակում Հայաստանի Հանրապետությունում զգալի քայլեր են կատարվում մշակույթի՝ որպես կայուն զարգացման ռեսուրսի գնահատման ու արժևորման ուղղությամբ: Մասնավորապես, ուսումնասիրվում է նրա դերն ազգային ինքնության, քաղաքացիական հասարակության և երկրում սոցիալական կայիտայի ձևավորման, մշակութային բազմազանության պահպանության գործում: Այս ոլորտում պետական մշակութային քաղաքականությունն իրականացվում է մշակութային միջավայրի, ժառանգված տարածքի բնության, պատմամշակութային արժեքների պահպանման համընդհանուր ընդունելություն ստացած սկզբունքներին համապատասխան: Ներդրված մեխանիզմները հնարավորություն են տալիս ապահովելու կայուն զարգացման գաղափարախոսությունն արդյունավետորեն զուգակցել ազգային մշակութային առաջնայնություններին: Միննույն ժամանակ նշված գերակայությունների դերերի հանգամանքի շեշտադրումներով հանդերձ մեր իրականության մեջ

<sup>1</sup> В. Г. Ш м е л е в. Музеи под открытым небом. Киев, 1983, с. 21–23.

դեռևս հրապարակի վրա չունենք մշակութային ժառանգության արդիականացման տարբեր ասպեկտներին նվիրված ակադեմիական ուսումնասիրություններ, որոնց հիմքում ընկած լինեին մշակութային լանդշաֆտների թանգարանացման կոնկրետ առաջարկներ, ճարտարապետատարածական կազմակերպման խնդիրների լուծմանը միտված մշակումներ: Ներկայումս մշակութային լանդշաֆտները դիտարկվում են որպես մշակութային ժառանգության տարածաշրջանային համակարգերի ձևավորման հիմնականիք՝ բաղկացած հատուկ պահպանվող տարածքներից, պատմական քաղաքներից, պատմամշակութային արգելոց թանգարաններից և, հատկապես, մշակութային ու բնության ժառանգության բաղկացուցիչների համադրությամբ ստեղծված տարածաշրջանային և ազգային պարկերից<sup>2</sup>: Վերը նշվածի հետ կապված՝ մեր իրականության մեջ օրապահանջ և լուծման կարոտ հիմնախնդիրներ ունենք հին ու միջնադարյան բնակավայրերի թանգարանացման հարցերում: Բանն այն է, որ մեզանում պատմամշակութային ժառանգությունը՝ «թանգարանացված է», այսպես կոչված, «կոլեկցիոն» և «անսամբլային» թանգարաններում<sup>3</sup>: Անցյալ դարի 80–90-ական թվականներից միջազգային պրակտիկայում արմատավորվեց և ներկայումս առավել մեծ ուշադրություն է հատկացվում պատմամշակութային միջավայրի թանգարանացմանը, այն է՝ «միջավայրային» թանգարանների ստեղծմանը<sup>4</sup>: Տարեցտարի «միջավայրային» թանգարան-

<sup>2</sup> Ю. Л. М а з у р о в. Уникальные территории: концептуальный подход к выявлению, охране и использованию.— В сб.: Уникальные территории в культурном и природном наследии регионов. М., 1994. с. 31–40.

<sup>3</sup> Թանգարանագիտական գրականության մեջ «կոլեկցիոն» թանգարան ասելով հասկացվում է շարժական նյութական առարկաների հավաքածուների հիման վրա գործող թանգարանը (Հայաստանի պատմության թանգարանը, Երևանի պատմության թանգարանը, տարբեր քաղաքներում գործող երկրագիտական թանգարանները և այլն): Հայաստանում պատմական բնակավայրերի (Գառնի, Էրեբունի, Մեծամոր և այլն) թանգարանացումն ընթացել է պատմահնագիտական անշարժ հուշարձանների թանգարանացման ճանապարհով, որոնց տրվել է պատմամշակութային կամ պատմահնագիտական արգելոց-թանգարանների կարգավիճակ: Նման թանգարանները ներկայումս բնութագրվում են որպես «անսամբլային» թանգարաններ:

<sup>4</sup> «Պատմամշակութային միջավայր» եզրն այսօր սահմանվում է, որպես մարդուն շրջապատող լոկալիզացված տարածքով առարկայական-տարածական իրողություն, որն իր մեջ ներառնում է մշակութային և բնության ժառանգության օբյեկտներ: Պատմամշակութային միջավայրի (որպես արդիական մշակույթի իրողության) շրջանակներում ձևավորվում են առանձնահատուկ նյութական և հոգևոր պայմաններ անհատի զարգացման համար: Պատմամշակութային միջավայրի միջավայրա-

ների տեսակարար կշիռը մեծանում է: Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, մշակութային տուրիզմի զարգացման գործում դրանք մեր ժամանակներում առանցքային դերակատարում են ստացել<sup>5</sup>:

Հայրենական ու միջազգային փորձը, “Նոր թանգարանագիտության”, “Քննական թանգարանագիտության” տեսական և մեթոդաբանական պահանջներն ու հնավայրերի թանգարանացման ժամանակակից առանձնահատկությունները նոր մոտեցումների ու վերակազմությունների լայն հնարավորություններ են ընձեռում<sup>6</sup>:

Հարկ է ընդգծել, որ “բաց երկնքի տակ թանգարանների” միջոցով պատմամշակութային ժառանգության արդիականացման ներունակությունն առավելապես պայմանավորված է դրանց տիպերից: Այս տեսակետից թանգարանացվող օբյեկտները կարելի է դասակարգել հետևյալ խմբերում.

1. ճարտարապետության և քաղաքաշինության,
2. հնագիտական,
3. գիտության և տեխնիկայի,
4. լանդշաֆտներ,
5. միջավայր:

Բացի այս, հարկ է նկատի ունենալ, որ “անսամբլային” կամ “միջավայրային” թանգարանները կարող են կյանքի կոչվել որպես “թանգարան հուշարձաններ”, “թանգարաններ՝ բաց երկնքի տակ” կամ որպես “էկոթանգարաններ”:

ստեղծ գործոններ են պատմական բնակավայրերը և դրանց մասերը, պատմամշակութային լանդշաֆտներն ու ժառանգության առանձին արժեքավոր օբյեկտները:

<sup>5</sup> М. Е. Каулен. Музей и наследие.— «Музей» (М.), 2009, № 5, с. 15.

<sup>6</sup> *Site Archaeology for interpreters: a guide to knowledge of the resource* (National Park Service, Archaeology and Ethnography Program, United States) [Электронный ресурс].— Режим доступа :<http://www.nps.gov/archeology/forA/tools4.htm>; Р. Н о w a r d. The Eco-museum: innovation that risks the future.— “International Journal of Heritage Studies”, 2002, vol. 8:1, p. 63–72, Paardekooper, R.P. The value of an Archeological Open Air Museum. / R.P. Paardekooper.— Leiden, 2012; И. В. Андреева. От *tactica conclavium* до новой музеологии.— “Вестник Челябинской государственной академии культуры и искусств”, 2015, № 1, с. 179–185; Д. Каллебаут, Дж. Сандерленд. Энам: новые технологии увековечивают прошлое.— “Museum”, 1998, № 198; О. И. Пруцын. Реставрация и реконструкция архитектурного наследия. Теоретические и методические основы реставраций исторического и архитектурного наследия. М., 1997; Уникальные территории в культурном и природном наследии регионов. М., 1994; “Museum”, 1983, № 138; 1985, № 148; Дж. Харрис. Наша печаль, наше хрупкое мужество: Музеефикация и новая музеология.— “Вопросы музеологии” (М.), 2011, № 1, с. 31–41.

Հնագիտական հուշարձանների, հատկապես՝ քաղաքատեղիների հենքի վրա «միջավայրային» թանգարանների ստեղծմանը միտված տեսական ու մեթոդաբանական մշակումները, պրակտիկ առաջարկները սկզբունքային նշանակություն ունեն և օրապահանջ հիմնախնդիր են: Մասնավորապես՝ հնագիտական օբյեկտների թանգարանացման ժամանակակից մոտեցումներում դրանք, դիտարկվելով որպես մշակութային լանդշաֆտի բաղադրատարր, առաջին հերթին ենթակա են արժևորման՝ որպես բնական միջավայրի հետ անցյալի հասարակությունների ստեղծագործական փոխազդեցության և փոխհարաբերության արդյունք: Կարևոր նախապայման է «միջավայրային» թանգարանների ստեղծումը դիտարկել որպես հնագիտական ժառանգության բացահայտման, ուսումնասիրության, վերականգնման և հանրահռչակման միջոցառումների ամբողջական (միասնական) համակարգ: Սա էլ, իր հերթին, պահանջում է հաշվի առնել ընտրված շրջանի՝ ոլորտին առնչվող հնարավորությունները՝ թանգարանացման ենթակա օբյեկտների և պատմահնագիտական տարածքների հազեցվածության աստիճանը:

Տարբեր դարաշրջանների տարաբնույթ հուշարձանների տեսակարար կշռով, մասնավորապես՝ հին և միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքների՝ պատմական Արմավիրի, Արտաշատի, Դվինի ավերակներով առանձնանում է Արարատյան դաշտը: Հայաստանի պատմամշակութային ժառանգության բացահայտման, պարբերացման և ժամանակագրական համակարգի ձևավորման, լեռնաշխարհին բնորոշ հասարակական զարգացումների առանձնահատկությունների լուսաբանման, պատմամշակութային միջավայրի ուսումնասիրության համար հիմնարար նշանակություն ունեն Հայաստանի հին մայրաքաղաքների (Արմավիր, Արտաշատ, Դվին) առևտրատնտեսական, վարչական և մշակութային խոշոր կենտրոնների պեղումները: Այս ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս գիտության ժամանակակից պահանջներին համապատասխան վերականգնել և ուսումնասիրել հնագույն ու հին Հայաստանի բնակեցման համակարգի, բնաշխարհի յուրացման և տարածքի կազմակերպման կառուցվածքի առանձնահատկությունները:

Վերջին տարիներին Հայաստանում մշակութային զբոսաշրջության ընտրված ուղի է Հայկական լեռնաշխարհում պատմականորեն ձևավորված հարավային առանցքի կամ միջանցքի ուղղությունը (Արարատի, Վայոց ձորի և Սյունիքի մարզեր): ՀՀ կառավարությունը, կարևորելով երկրում զբոսաշրջության զարգացումը, ընդունել է հարավային ուղղության զարգացմանը միտված մի շարք ծրագրեր:

ա) 2011 թ. ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց կառավարական հանձնաժողով և նշվեց պատմական Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման

2200-ամյակը: Միջոցառումների և քննարկումների արդյունքում որոշվեց հանրահռչակել Արտաշատ մայրաքաղաքի պեղման վերաբերյալ ստացված պատմական նյութերը, լայն հասարակությանն առավել մատչելի դարձնել: Հին Արտաշատի պահպանության, օգտագործման և հետագա հանրահռչակման նպատակով ՀՀ կառավարության 2010 թ. մարտի 25-ի (“ՀՀ Արարատի մարզի մշակութային հիմնախնդիրների լուծման միջոցառումների ցանկին հավանություն տալու մասին”) նիստում նախատեսվել է ստեղծել “Արտաշատ մայրաքաղաք” պատմահնագիտական արգելոց-թանգարանը (մինչև 2020 թ.): Արգելոցի հիմնադրումը կարևորվում է հայ ժողովրդի պետականության պատմության նշանավոր հուշարձանի մշակութային շերտերի անխաթար պահպանելու, պեղումների ընթացքը վերահսկելու, հուշարձանի պեղված հատվածների ամրակայումն ու վերականգնումն իրականացնելու, զբոսաշրջիկներին և այցելուներին սպասարկման ծառայություններ մատուցելու, զբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծման ու առաջընթացի առումով: Առաջարկվում է արգելոց-թանգարանին տրամադրել մոտ 80,0 հա տարածք, այդ թվում՝ Խոր վիրապի վանական համալիրի հարավ և հարավարևմտյան մասերը, Արաքս գետի ձախափնյա՝ ներկայումս պեղվող հատվածը, նկատի ունենալով, որ այն պատմական մայրաքաղաքի բուն տարածքն է: Արտաշատ պատմական մայրաքաղաքի տարածքում պետական բյուջեով վերջին տարիներին հնագիտական հետազոտություններին զուգընթաց իրականացվում են ամրակայման աշխատանքներ, մասնավորապես՝ աննախադեպ է անտիկ ժամանակաշրջանի խոշորագույն խճանկարի վերականգնման գործընթացը:

բ) Հայաստանի Հանրապետությունում 2014 թ. պետական բյուջեով իրագործվում են հարավային ուղղում գտնվող “Դվին” հնավայրի պեղումները: Դվին քաղաքատեղին, ի դեպ, ներառված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի՝ համաշխարհային ժառանգության նախնական ցուցակում, ինչը ենթադրում է հնավայրի պատշաճ և նպատակային պահպանությունն ու օգտագործումը:

գ) Տեղական տնտեսության և զբոսաշրջության ենթակառուցվածքի զարգացման ծրագրի (SSՁԵԶԾ) շրջանակներում Համաշխարհային բանկի հետ համագործակցությամբ իրականացվող “Հարավային միջանցք” ծրագրում ընդգրկված է “Արտաշատ մայրաքաղաք” հնավայրը: Ծրագրի նախնական փուլում առաջարկվել է Խոր վիրապին մոտ բարձունքներից մեկում կառուցել դիտակետ, ինչը այցելուներին հնարավորություն կտա հեռվից տեսնելու սահմանային գոտում հայտնված հնագույն մայրաքաղաքի տարածքը: Նախատեսվում է դիտակետի մերձակայքում կազմակերպել հնագիտական նյութերի ցուցադրություն: Ծրագրում ընդգրկվել է նաև Դվին պատմական մայրաքաղաքի

վերականգնման, ամրակայման և զբոսաշրջության համար ներկայանալի դարձնելու բաղադրիչը:

Արգիշտիխինիլի՝ Արմավիրի, Արտաշատի, Դվինի բազմակյա պարբերական պեղումները բացահայտել են արտակարգ հարուստ ու բազմաբնույթ նյութեր Հայաստանի տարբեր ժամանակաշրջանների (շուրջ 1,5 հազ.) ճարտարապետության և քաղաքաշինության վերաբերյալ, սակայն մինչև այժմ փորձ չի արվել վերականգնել դրանց քաղաքաշինական կառուցվածքների պատկերները:

դ) Հայաստանի Հանրապետության հնագիտության զարգացմանը նպաստող միջոցառումների 2017–2025 թթ. ծրագրի 4,7 և 4,8 կետերի համաձայն՝ Հին Արտաշատ մայրաքաղաքի պեղման, ամրակայման ու թանգարանացման աշխատանքներ և Դվին պատմական քաղաքատեղի հնավայրի ուսումնասիրություն, պահպանության պայմանների բարելավում ու թանգարանային ցուցադրության արդիականացում:

Ծրագրով նախատեսված միջոցառումները կնպաստեն հնավայրերի պահպանությանը, զարգացմանն ու հանրահռչակմանը, հանրապետությունում զբոսաշրջային երթուղիների մշակմանը, այդ երթուղիներում հնագիտական հուշարձանների ընդգրկմանը, Հայաստանի զբոսաշրջային ակտիվ սեզոնի երկարաձգմանը, զբոսաշրջային այցելությունների տևական աճին, ներքին զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև մի շարք համայնքների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծմանը, բնակչության որոշակի հատվածի զբաղվածության ապահովմանը:

ВОПРОСЫ ОХРАНЫ И МУЗЕЕФИКАЦИИ  
ИСТОРИЧЕСКИХ ПОСЕЛЕНИЙ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ СОВРЕМЕННОГО  
МУЗЕЕВЕДЕНИЯ

АРЕВ САМУЭЛЯН

Резюме

*Ключевые слова:* историческое поселение, охрана, музеефикация, архитектурно-пространственная организация, культурное наследие.

Изучение, охрана и пропаганда культурного наследия невозможны без точной оценки исторической среды. Данный подход возможен лишь в случае музеефикации исторических поселений и находящихся на них недвижимых объектов историко-культурного наследия.



В общем контексте выигрывают те страны и то общество, которые осуществляют всеобъемлющие и концептуальные программы по изучению и модернизации историко-культурного наследия и имеют развитую сеть услуг, способствующих всестороннему представлению и популяризации их результатов. За последнее десятилетие в Республике Армения были предприняты значительные шаги для оценки культурного наследия как ресурса устойчивого развития.

В последние годы в международной практике охраны историко-культурного наследия преобладают тенденции перехода от «точечного» изучения отдельных памятников к комплексному подходу сохранения культурного ландшафта и среды вокруг памятника.

ISSUES OF PROTECTION AND MUSEIFICATION OF  
HISTORICAL SETTLEMENTS IN ARMENIA IN THE CONTEXT OF MODERN  
MUSEOLOGY

AREV SAMUELYAN

S u m m a r y

*Key words: historical settlement, museification, preservation, architectural spatial organization, cultural heritage.*

The study, protection and propagation of the cultural heritage is impossible without a concrete assessment of the historical environment. This approach is possible only in the case of the museification of historical sites with the immovable objects of historical and cultural heritage located there. In the general context, those countries and societies win, which implement comprehensive and conceptual programs on the study and modernization of historical and cultural heritage and have a developed network of services contributing to the comprehensive presentation and popularization of their results. Over the past decade, significant steps have been taken in the Republic of Armenia to assess culture as a resource for sustainable development.

In recent years, in the international practice of preservation of the historical and cultural heritage, the tendencies of transition from research of separate monuments to an integrated approach for preserving the cultural landscape and environment around the monument have prevailed.

---

---

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ 1917–1918 ԹԹ. ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ  
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
(1991–2018 թթ.)\*

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Հայկական հարց, Արևմտյան Հայաստան, հայկական անկախ պետություն, ինքնավարություն, հովանավորություն, ազգային ինքնորոշում, իրավական կարգավիճակ, Դաշնակիցներ, բանակցություններ, համաձայնագիր, հաշտության պայմանագիր:

*1991 թ. անկախ հռչակված Հայաստանի Հանրապետության պատմագիտական միտքը, անմասն չլինելով նախկին խորհրդային հանրապետություններում ընթացող պատմական անցյալի վերաարժևորման գործընթացից, վերանայման ենթարկեց հայոց պատմության շարադրման մեջ արմատավորված գաղափարաքաղաքական կարծրատիպերը: Մասնավորապես, վերագնահատվեց 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած հոկտեմբերյան իրադարձությունների նշանակությունը հայ ժողովրդի ու Հայկական հարցի պատմության մեջ, վերանայվեց Հայկական հարցում Ռուսաստանի ցարական, Ժամանակավոր և խորհրդային կառավարությունների վարած քաղաքականությանը տրված գնահատականը: Բացի այդ, համակողմանիորեն ներկայացվեցին հայ ազգային-քաղաքական ուժերի կողմից, ինչպես նաև՝ մեծ տերությունների դիվանագիտական շրջանակներում մշակված ծրագրերը Հայկական հարցի լուծման վերաբերյալ՝ վեր հանելով անկախ և միացյալ Հայաստանի գաղափարի բովանդակության առանձնահատկությունները:*

*Հայաստանի Հանրապետության պատմագրության մեջ Հայկական հարցի՝ 1917–1918 թթ. բազմաշերտ պատմությունն առանձին ուսումնասիրության առարկա է դարձել մի շարք պատմաբանների աշխատություններում [Հրանտ Ավետիսյան, Վահան Մելիքյան, Գալուստ Գալոյան, Լիլիթ Հովհաննիսյան, Արմեն Մարուքյան, Ստեփան Պողոսյան, Կարեն (Կարո) Պողոսյան, Սամվել Պողոսյան, Գեղամ Պետրոսյան, Գայանե Մախմուրյան և այլք]: Դրանցում ժամանակահատվածի իրադարձությունները լուսաբանված են միջազգային քաղաքական իրադրության, Հայկական հարցում մեծ տերությունների շահերի ու հակասությունների, Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին քաղաքականության,*

նան Հայոց ցեղասպանության ու դրա հետևանքների վերացման հիմնահարցերի տեսանկյունից: Պատմագիտական վերլուծությունները հիմնված են բազմալեզու արխիվային փաստաթղթերի ուսումնասիրման և համադրման արդյունքների վրա: Նշենք, որ այդ վավերագրերի մեջ մեծ թիվ են կազմում հայաստանյան ու արտասահմանյան արխիվներում հայ պատմաբանների երկարատև պրպտումների արդյունքում հայտնաբերված ու գիտական շրջանառության մեջ դրվածները: Պատմագիտական աշխատություններում նաև հաշվի են առնված Հայկական հարցի վերաբերյալ սփյուռքահայ, եվրոպական, ամերիկյան և թուրքական արդի պատմագրության տեսակետները: Թե՛ փաստերը և թե՛ այդ տեսակետներն արժևորված են գիտական անաչառության դիրքերից:

1917 թ. ապրիլի 25-ի (մայիսի 8-ի) «Պատերազմի իրավունքով նվաճված Թուրքահայաստանի մարզերի կառավարման մասին»<sup>1</sup> Ռուսաստանի Ժամանակավոր կառավարության որոշումը Հայաստանի Հանրապետության պատմագրության մեջ գնահատված է որպես «երկրամասը բնականոն վիճակի բերելուն», այսինքն՝ հայերի ու մահմեդական բնակչության միջև հավասարակշռություն ապահովելուն ուղղված քայլ՝ որպես ցարական իշխանությունների՝ «Հայաստանն առանց հայերի» քաղաքականության շարունակություն: Նշված է, որ ռուսական իշխանությունների համար, անկախ վարչակարգի փոփոխությունից, նախընտրելի էր փոքր, բայց հանգիստ ու անվտանգ Հայաստան ունենալը: Իսկ հայերին իրենց հայրենի օջախները վերադառնալու հնարավորություն ընձեռելը գնահատված է որպես Կովկասյան ռազմաճակատը փրկելու միակ ելք. ռազմաճակատի հոգսերի ծանրությունը փոխադրել տեղաբնակների վրա, քանի որ ռուս զինվորը հոգնել էր և այլևս չէր ուզում կռվել<sup>2</sup>:

Անշուշտ, գիտական անաչառության դրսևորում է քննադատական մոտեցումը Ժամանակավոր կառավարության քաղաքականությանն Արևմտյան Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ: Միաժամանակ 1991–2018 թթ. հայաստանյան պատմագրության մեջ ընդգծված է, որ հայաթափված ու թուրքական բազմադար-

<sup>1</sup> Այդ որոշմամբ Արևմտյան Հայաստանի քաղաքացիական կառավարումը վերցվել է կովկասյան իշխանությունների, ինչպես նաև Կովկասյան ռազմաճակատի զինվորական իշխանությունների իրավասությունից և անմիջականորեն դրվել Ժամանակավոր կառավարության տնօրինության ներքո:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Հ. Մելիքյան. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), Երևան, 1997, էջ 149, 150, Ստ. Պոդոսյան, Կ. Պոդոսյան. Հայկական հարցի և հայոց ցեղասպանության պատմություն, հ. III, գիրք I, մաս Ա (Հայկական հարցը 1917 թ. երկրորդ կեսից մինչև ՀՀ ստեղծումը), Երևան, 2004, էջ 5–6, 23–26, Գ. Գալոսյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Երևան, 1999, էջ 12–13:

յա տիրապետությունից ազատագրված Արևմտյան Հայաստանն այդ քաղաքականության շնորհիվ ստացավ առանձին վարչական միավորի կարգավիճակ ուսական պետության սահմաններում՝ աշխարհասփյուռ հայերի համար ազգահավաքման կենտրոն դառնալու հեռանկարով<sup>3</sup>։ Սակայն ժամանակավոր կառավարության տապալումն արմատապես փոխեց Ռուսաստանի վերաբերմունքը թե՛ Արևմտյան Հայաստանի, թե՛ Կովկասյան ռազմաճակատի և թե՛ Դաշնակիցների<sup>4</sup> նկատմամբ, ինչի հետևանքով ձախողվեց Հայկական հարցի լուծումը<sup>5</sup>։

1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանն աստիճանաբար կորցնում էր իր ազդեցիկ դերն Արևմտյան Հայաստանի իրավական կարգավիճակի վերաբերյալ որոշումներ կայացնելու գործում, ինչի վկայությունն ապրիլի 20-ին Մեն-Շան-դե Մորիենի անգլո-ֆրանս-իտալական համաձայնագրի կնքումն էր առանց Ռուսաստանի մասնակցության<sup>6</sup>։ Դաշնակիցները կարող էին նրան դուրս թողնել նոր աշխարհակարգի ձևավորմանը միտված ռազմաքաղաքական «խաղից», եթե չվերանայեր իր գործողությունների ակտիվությունը ռազմաճակատներում։ Ա. Մարուքյանի համոզմամբ, այս պայմանների ազդեցությամբ է, որ Ռուսաստանի ժամանակավոր կառավարությունը Լեհաստանի, Լիտվայի, Լատվիայի, Էլզաս-Լոթարինգիայի և Արևմտյան Հայաստանի հարցում որդեգրեց «հաշտություն՝ առանց զինագրավումների ու ռազմատուգանքների՝ ժողովուրդների ինքնորոշման հիման վրա» զգուշավոր մոտեցումը՝ նպատակ ունենալով նշված տարածքները վերածել բուֆերային կամ անվտանգության գոտիների Գերմանիայի ու Ռուսաստանի, Գերմանիայի ու Ֆրանսիայի միջև։ Արևմտյան Հայաստանն այդ նույն դերը կարող էր կատարել Ռուսաստանի և Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի ազդեցության գոտիների միջև՝ 1915–1916 թթ. այդ պետութ-

<sup>3</sup> Տե՛ս Ա. Բ. Марукян. Армянский вопрос и политика России (1915–1917 гг.), Ереван, 2003, с. 197–254; նաև՝ Վ. Հ. Մելիքյան. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 154–155, Լ. Հովհաննիսյան. Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, Երևան, 2002, էջ 124–132։

<sup>4</sup> Անտանտի կամ Եռյակ համաձայնության տերությունները՝ Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Ռուսաստանը և Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում նրանց միացած 22 պետությունները, այդ թվում՝ Իտալիան, Ճապոնիան ու ԱՄՆ-ը։

<sup>5</sup> Տե՛ս Լ. Խուրշուդյան. Հայկական հարցը։ Բովանդակությունը, ծագումը, պատմության հիմնական փուլերը, Երևան, 1995, էջ 41, նաև՝ Հ. Կարապետյան. Սևրի պայմանագիրը հայոց ճակատագրում, Երևան, 2004, էջ 8–9։

<sup>6</sup> Այս մասին տե՛ս Լ. Հովհաննիսյան. Հայկական հարցը և մեծ տերությունները 1914–1917 թվականներին, էջ 98, Գ. Գալոյան. Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, 2004, էջ 692–693։

յունների միջև հուշագրերի փոխանակման միջոցով ստորագրված գաղտնի համաձայնագրերի<sup>7</sup> իրագործման դեպքում, իսկ Կոստանդնուպոլիսն ու սևծովյան նեղուցները Ռուսաստանին չտրվելու դեպքում Արևմտյան Հայաստանը կժառանգեր իբրև բուֆեր նրա ու Թուրքիայի միջև<sup>8</sup>: Դա նշանակում էր Ռուսաստանի վերադարձ Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության քաղաքականությանն այն հաշվով, որ նրա դաշնակից տերություններն էլ չկարողանային Ասիական Թուրքիայում իրենց հետաքրքրող տարածքների համար պահանջել ավելին, քան դրանց ինքնավարությունը կայսրության սահմաններում այնքան ժամանակ, քանի դեռ լուծված չէր Կոստանդնուպոլիսի և սևծովյան նեղուցների հարցը<sup>9</sup>: Անգլո-ֆրանս-ռուսական համաձայնագրերի իրագործումը, կախման մեջ դնելով սևծովյան նեղուցներն ու Կոստանդնուպոլիսը Ռուսաստանին հանձնելու պահանջից, Ժամանակավոր կառավարությունը, ըստ էության, ակնարկում էր, որ առանց ստանալու Ռուսաստանի տնտեսության զարգացման և արտաքին անվտանգության ամրապնդման տեսանկյունից կարևոր այդ տարածքները, իմաստ չէր տեսնում պահելու Արևմտյան Հայաստանը: “Օբյեկտիվորեն, Արևմտյան Հայաստանը դարձավ լուրջ միջոց Ռուսաստանի համար՝ հասնելու բաղձալի նպատակին՝ նեղուցների և Կ. Պոլսի տիրապետությանը, իսկ նպատակի բացակայության պայմաններում միջոցը (այսինքն՝ Արևմտյան Հայաստանին տիրելը կամ նրա նկատմամբ Ռուսաստանի վերահսկողությունը հաստատելը – Լ. Հ.) կորցրել էր իր նշանակությունը”<sup>10</sup>, – նկատում է Ա. Մարտիքյանը և հավելում, որ Մեծ Բրիտանիան ու Ֆրանսիան, ակնհայտորեն, մերժելու էին Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը և Ռուսաստանին զրկելու էին այդ տարածքից: Այս իմաստով պատմաբանն իրատեսական ու հեռատես է համարում Ռուսաստանի ռազմական նախարար Ա. Վերխովսկու առաջարկը՝ պահպանել գոնե Արևմտյան Հայաստանի արևելյան շրջանները, որոնք ոչ միայն փաստա-

<sup>7</sup> Ըստ այդ համաձայնագրերի, Օսմանյան կայսրության ասիական տիրույթները բաժանվելու էին Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի միջև: Արևմտյան Հայաստանը մասնատվելու էր Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև: Ֆրանսիային էր անցնելու նաև Կիլիկիան:

<sup>8</sup> Տե՛ս Ա. Ա. Марукян. Նշվ. աշխ., էջ 325–399:

<sup>9</sup> Ըստ ամերիկյան դիվանագիտական փաստաթղթերի, 1917 թ. կեսերին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան և Ռուսաստանը, նահանջելով 1915–1916 թթ. գաղտնի համաձայնագրերի դիրքերից, կրկին առաջարկում էին Արևմտյան Հայաստանը թողնել օսմանյան պետության սահմաններում՝ նրան տալով ինքնավարություն՝ առանց արտաքին վերահսկողության: Այս մասին տե՛ս Գ. Գ. Махмуриян. Армения в политике США 1917–1923 гг. Ереван, 2018, с. 28–29.

<sup>10</sup> Ա. Ա. Марукян. Նշվ. աշխ., էջ 376:

ցիորեն պատկանում էին Ռուսաստանին, այլև նրան էին հանձնվելու պատերազմից հետո, ըստ 1915–1916 թթ. անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի: Ավելին, նա ընդգծում է, որ Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքն իրացվելու պարագայում Հայկական հարցը կլուծվեր հայ ազգային շահերին ու ակնկալիքներին համահունչ. Արևմտյան Հայաստանը կստանար ինքնավարություն Ռուսաստանի հովանավորության ներքո<sup>11</sup>:

Վ. Մելիքյանի դիտարկմամբ՝ արդեն 1916 թ. կեսերին և 1917 թ. սկզբին Հայկական հարցը չուներ իր պատմության նախորդ ժամանակաշրջաններին բնորոշ միջազգային, դիվանագիտական բնույթ. այն դարձել էր ազգային բարդ ու հակասական խնդիրներով պայմանավորված ներքին՝ Հայոց հարց<sup>12</sup>: Հղում կատարելով դիվանագիտական փաստաթղթերին՝ պատմագիտական աշխատություններում նշվում է, որ հայ ազգային-քաղաքական շրջանակներում Հայկական հարցի լավագույն լուծում էր ընդունվում թուրքական տիրապետությունից ազատագրված Արևմտյան Հայաստանի բռնակցումը Դաշնակիցների կողմից: Փաստացիորեն, դա ռուսական բռնակցումն էր, քանի որ Արևմտյան Հայաստանը զինագրավված էր ռուսական պետության կողմից: Սակայն պետք է հաշվի առնել, որ ժամանակավոր կառավարությունը մի կողմից՝ բռնակցման գաղափարին դեմ լինելու ու ժողովուրդների ինքնորոշման սկզբունքը պաշտպանելու, մյուս կողմից՝ զինագրավումները շարունակելու և Արևմտյան Հայաստանի ինքնավարության երաշխիքների կայունացումից խուսափելու իր քաղաքականությամբ վստահություն չէր ներշնչում հայ ազգային-քաղաքական շրջանակներում: Պատահական չէ, որ Հայկական հարցը եվրոպական կառավարող շրջանակներում բարձրացնելու նպատակով 1912 թ. կազմված Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբարը շրջանառության մեջ դրեց Թուրքիայի հայկական բոլոր հողերը Կովկասից մինչև Միջերկրական ծով միավորելու, մեկ պետության կամ համաեվրոպական համագործակցության՝ հայկական պետության ներքին կյանքին սահմանափակ միջամտություն ենթադրող ժամանակավոր հովանավորության ներքո ինքնավար, այնուհետև անկախ և միացյալ Հայաստան ստեղծելու գաղափարը: Դա համապատասխանում էր արևմտահայկական տարածքների իրավական կարգավիճակի հարցն Արևելյան Հայաստանի հարցից առանձին քննարկելու՝ հայ

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 376–378:

<sup>12</sup> Տե՛ս Վ. Հ. Մելիքյան. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ–հոկտեմբեր), էջ 156–157, նույնի՝ Հայաստանը 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո.– Հայոց պատմություն, հ. III [Նոր ժամանակաշրջան (XVII դարի երկրորդ կես–1918 թ.)], գիրք երկրորդ (1901–1918 թթ., հայ գաղթավայրերը, պարբերական մամուլը և մշակույթը XIX դ. և XX դ. սկզբին), Երևան, 2015, էջ 555–556:

հասարակական-քաղաքական ուժերի սկզբունքային դիրքորոշմանը<sup>13</sup>: Միաժամանակ, Պողոս Նուբարի ծրագրում ընդգծվում էր արևմտահայկական հողերի միասնությունը՝ ի հակադրություն անգլո-ֆրանս-ռուսական գաղտնի համաձայնագրերի, որոնք նախատեսում էին Արևմտյան Հայաստանի բաժանում Ռուսաստանի և Ֆրանսիայի միջև<sup>14</sup>: Գ. Մախմուրյանի իրավացի դիտարկմամբ՝ այս ծրագիրը որոշակի վտանգներ էր պարունակում, քանի որ միջազգային առևտրում և համագործակցության մեջ կապող օղակ լինելու փոխարեն ինքնավար Հայաստանը դառնալու էր բուֆեր Ռուսաստանի, Թուրքիայի, Պարսկաստանի, Միջագետքի ու Միրիայի միջև<sup>15</sup>:

Ռուսաստանում 1917 թ. հոկտեմբերի 25-ի (նոյեմբերի 7-ի) հեղաշրջման հաղթանակից մինչև 1918 թ. նոյեմբերի 11-ին Քառյակ միության կամ Կենտրոնական պետությունների՝ Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի ու Օսմանյան կայսրության պարտությամբ և Դաշնակիցների ռազմական հաղթանակով Առաջին համաշխարհային պատերազմի ավարտն ընկած ժամանակահատվածը հայաստանյան պատմագրության մեջ դիտարկվում է որպես Հայկական հարցի պատմության առանձին փուլ, որն իր բովանդակությամբ տարբերվում է հիմնախնդրի պատմության նախորդ ու հաջորդ ժամանակահատվածներից: Ընդգծվում է, որ վերոնշյալ պատմական իրադարձություններն ուղղակիորեն ազդեցին Հայկական հարցի դիվանագիտական քննարկումների ընթացքի վրա, իսկ վերջիններիս արդյունքներն որոշիչ եղան Արևմտյան Հայաստանի ու հայ ժողովրդի արևմտյան հատվածի ճակատագրում: Գիտական այս մոտեցումը հիմնավորվում է նրանով, որ բոլշևիկյան հեղաշրջման հաղթանակն ոչ միայն շեղեց ռուսական բազմազգ պետությունն իր պատմական զարգացման բնականոն ընթացքից, այլև էապես ազդեց թե՛ միջազգային հարաբերությունների նոր՝ Վերսալյան համակարգի ձևավորման և թե՛ նրա գոյության ժամանակաշրջանում ծավալվող միջազգային հարաբերությունների վրա: Այդ պայմաններում հայ ժողովրդի համար օրակարգային դարձան ռուսական բանակի հետ քաշվելու

<sup>13</sup> Տե՛ս Վ. Հ. Մելիքյան. Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ-հոկտեմբեր), էջ 177-180, Հ. Ավետիսյան. Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, էջ 40, Ստ. Պողոսյան, Կ. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 44-45, Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., էջ 15-16, Ս. Պողոսյան. Միացյալ Հայաստանի խնդիրը 1917-1918 թթ.- □Պատմություն և հասարակագիտություն□, 2016, թիվ 2, էջ 8-23:

<sup>14</sup> Տե՛ս Գ. Գ. Махмуриян. նշվ. աշխ., էջ 27-28, Լ. Հովհաննիսյան. Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1917 թվականին.- □Հայոց պատմության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու 11)□, Երևան, 2010, էջ 252-253:

<sup>15</sup> Տե՛ս Գ. Գ. Махмуриян. նշվ. աշխ., էջ 28:

հետևանքով ռուս-թուրքական ռազմաճակատի մերկացումը կանխելու, ազգային գործափափորումներ կազմավորելու, արևմտահայերի անվտանգությունն ապահովելու, Արևմտյան Հայաստանի լիակատար ինքնավարությանը հասնելու, Դաշնակիցներից նյութական ու զինվորական օգնություն ստանալու հիմնախնդիրները:

Պատմագիտական աշխատություններում նաև վերլուծված և ընդհանրացված են 1917 թ. վերջին ու 1918 թ. սկզբին հայ ազգային նպատակների իրագործմանը խոչընդոտող ներքին հանգամանքները՝ հայ հասարակության արևմտահայ և արևելահայ շրջանակներում իշխող ազգային պառակտվածության մտայնությունն ու հայ քաղաքական որոշ ուժերի՝ Անդրկովկասի քաղաքական կյանքին արևմտահայության մասնակցությանը դեմ լինելը, Հայկական հարցում մոտեցումների և կարծիքների իրարամերժությունը<sup>16</sup>: Հայ ազգային կուսակցությունները քննադատվում են անմիաբանության, Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ)՝ ազգային հասարակական-քաղաքական կյանքում մենիշխանության, իսկ գործիչները՝ “ազգայինների” և “ապազգայինների” կամ արևմտահայերի ու արևելահայերի բաժանված լինելու համար: Շեշտվում է, որ այդ պայմաններում ազգային ուժերն անկարող գտնվեցին ինչպես հայ բնակչության ինքնապաշտպանությունը թուրքական գործի հարձակմանը ենթարկվող արևմտահայկական տարածքներում կազմակերպելու, այնպես էլ ռուսական պետության ներքին ու արտաքին կյանքում ընթացող և հայ ժողովրդի համար կենսական նշանակություն ունեցող փոփոխություններին համապատասխան կողմնորոշվելու հարցերում: Թուրքական բանակի հնարավոր ներխուժումից և Արևմտյան Հայաստանում հաստատված թուրք ու քուրդ վերաբնակիչների հարձակումներից հայ բնակչության և հայկական տարածքների պաշտպանությունը կազմակերպելու անկարողության համար քննադատվում է հատկապես ՀՅԴ-ն<sup>17</sup>: Միաժամանակ, գնահատվում է ինչպես հայ ժողովրդի արևելյան հատվածի, այնպես էլ զանգվածային կոտորածների, տեղահանության ու բռնագաղթի հետևանքով հայրենազրկված, աշխարհով մեկ սփռված արևմտահայերի շահերը պաշտպանելու, Հայաստանի երկու մասերի իրավական կարգավիճակը հայ ժողովրդի հետագա անվտանգ զարգացման հրամայականին համապատասխան ապահովելու գործում այդ կուսակցության դիրքորոշման ու գործունեության ունեցած որոշիչ նշանակությունը: Շեշտվում է, որ ՀՅԴ-ն աշխարհասփյուռ հայության մեջ կազմակերպական ցանց ունեցող և Մեծ եղեռնից հետո Արևմտյան Հայաստանում գործունեությունը շարունակող միակ ազգային կուսակցությունն էր, իսկ Անդրկով-

<sup>16</sup> Տե՛ս Ստ. Պոդոբյան, Կ. Պոդոբյան, նշվ. աշխ., էջ 14–15:

<sup>17</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 11–15:



կասում հայ ժողովրդի շահերը ներկայացնող ամենահեղինակավոր ու ազդեցիկ քաղաքական ուժը: Ի վերջո, Հայաստանի երկու մասերից յուրաքանչյուրի ապագա իրավական կարգավիճակի հարցում առանձին մոտեցում ունենալը բխում էր հայ ժողովրդի երկու հատվածներին պատմականորեն պարտադրված տարբերություններից և բնավ չէր նշանակում, թե ՀՅԴ-ն արևելահայերին ու արևմտահայերին իրենց խնդիրներով հանդերձ հակադրում էր միմյանց: Ընդհակառակը, այս դիրքորոշումը բխում էր հայ ժողովրդի երկու հատվածների ու Հայաստանի երկու մասերի առկա կարգավիճակի և շահերի առանձնահատկություններից: ՀՅԴ-ն փորձում էր կարգավորել ու ներդաշնակել այդ շահերն ոչ թե դրանք միմյանց ստորադասելու, այլ՝ ազգային խնդիրները զուգահեռաբար լուծելու ուղիով: Այսպես, Վ. Մելիքյանի դիտարկմամբ, թեև Բրեստի բոլշևիկյան քաղաքականությունը ՀՅԴ-ի համար լիովին պարզ չէր, այնուամենայնիվ, դրա պայմաններում նպատակամղված տարվում էր հայկական գործի գորակոչի աշխատանքը: Ավելին, գիտակցվում էր, որ ռուսական պետականամետ ռազմաքաղաքական ուժերի հետ կայուն դաշինքի ստեղծումն առավելապես բխում էր հայ իրականության շահերից, քանի որ, նախ բացահայտ չէր բարձրացվում ազգային ինքնիշխանության մերժման խնդիրը, ապա և Արևմտյան Հայաստանում դեռ կանգնած Կովկասյան բանակի գորամասերի ներկայությունը երաշխավորում էր նաև ռուսաստանյան կենտրոնամետ ուժերի միջոցով Հայկական հարցի բարենպաստ լուծումը: “Հայությանը ձեռնտու էր ռուսական ներկայությունը Անդրկովկասում և գրավյալ Արևմտյան Հայաստանում անգամ բոլշևիզմի տեսքով, իսկ վրաց-թաթարական դաշինքի համար այդ ներկայությունը գլխավոր խոչընդոտն էր Ռուսաստանից հեռանալու և նոր դաշնակիցների աջակցությամբ անկախության ու այդպես նաև տարածքային ձեռքբերումների ճանապարհին: Այս մարտավարությունը ՀՅԴ - կողմից դրսևորվեց երկու անգամ՝ 1918 թ. մարտին և սեպտեմբերին, երբ ուշացած փորձ արվեց Ս. Շահումյանի և հայանպաստ Բաքվի կոմունայի ուժերով իրականացնելու հեռահար ազգային ծրագիրը”<sup>18</sup>, – նշում է Վ. Մելիքյանը: Պատմաբանի համոզմամբ, Ռուսաստանից առանձին գործելու և Օսմանյան կայսրության հետ անջատ հաշտություն կնքելու՝ Անդրկովկասյան կոմիսարիատի դիրքորոշմանը սկզբունքորեն ընդդիմադիր լինելու՝ Հայ ժողովրդական կուսակցության (ՀԺԿ) դիրքորոշումը բացատրվում էր ոչ միայն և ոչ այնքան երկրամասային իշխանության կազմում կուսակցությունը չընդգրկելու ու ՀՅԴ հանդեպ ունեցած անհանդուրժողականությամբ, որքան տվյալ պահին առավել կշռադատված, սթափ և համազգային շահով մտահոգվելու հանգամանքով: Կուսակցությունում

<sup>18</sup> Տե՛ս Վ. Մելիքյան. Բշխանության հիմնահարցը Անդրկովկասում: Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917 թ. նոյեմբեր–1918 թ. փետրվար), Երևան, 2010, էջ 153–154, 161:

գիտակցում էին, որ անջատ հաշտությունը սպառնալիք էր հայ ժողովրդի երկու հատվածների, “Հայաստան” հասկացության և Հայկական հարցի գոյությանը<sup>19</sup>: Համադրելով պատմական փաստերը և քաղաքական իրողությունները՝ Վ. Մելիքյանը եզրակացնում է. “Շարունակվող պատերազմի պայմաններում անորոշ մի տարածքի վրա պետություն վերագտնելու գաղափարը, փաստորեն, զերակայեց բազմաթիվ ոչ պակաս համազգային կենսական նշանակություն ունեցող հիմնահարցերի վրա, մանավանդ, որ այդ մեծ գործընթացի նախաձեռնությունն ամենին հայ ազգային-դեմոկրատական կուսակցությանը չէր պատկանում: Մեկ դար անց, ՀՅԴ դեմ է իր ընտրած ուղենիշին, որն ի դեպ, սկիզբ էր առել 1907 թվականին, ի դեմս ՀՅԴ – երիտթուրքեր համագործակցությանը”<sup>20</sup>: Պատմաբանը նկատի ունի երիտթուրքերի հեղաշրջման նախօրյակին “Միություն և առաջադիմություն” կուսակցության 1907 թ. փարիզյան երկրորդ համագումարին ՀՅԴ ներկայացուցիչների մասնակցությունը, որով, ըստ էության, գործնական հիմքի վրա էր դրվել քաղաքական այդ ուժերի համագործակցությունն ընդդեմ ընդհանուր թշնամու՝ սուլթանական կառավարության: ՀՅԴ-ն այդ քայլին գնացել էր չստանալով որևէ խոստում կամ երաշխիք առ այն, որ իշխանության հասնելուց հետո երիտթուրքերը պատրաստ էին ճանաչելու Արևմտյան Հայաստանի անկախությունը կամ գոնե բարենորոգումներ անցկացնելու արևմտահայկական վիլայեթներում: Վ. Մելիքյանն իրավացիորեն նշում է՝ մեր օրերում ՀՅԴ գործունեությունը հայոց անկախ պետականության ամրապնդման և Հայոց արդար պահանջատիրության բավարարման ուղղությամբ վկայում է, որ կուսակցությունը հիմնավորապես վերանայել է 1907 թ. ընտրած ուղենիշն ու համարձակորեն կանգնել է սեփական ուժերով հայկական ազգային հիմնախնդիրների լուծման ուղու վրա:

Ուշագրավ է 1917 թ. վերջին Արևմտյան Հայաստանում հայերի ինքնապաշտպանության կազմակերպման հնարավորությունների վերաբերյալ Ստ. Պողոսյանի ու Կ. Պողոսյանի տեսակետը: Նրանք նշում են, որ, երբ դեկտեմբերի 29-ին ընդունվում էր “Թուրքահայաստանի մասին” Խորհրդային Ռուսաստանի Ժողովուհորհի հրովարտակը<sup>21</sup>, Կովկասյան ռազմաճակատում դեռևս կար մոտ 90 հազարանոց ռուսական և հայկական զինուժ՝ թուրքերի 20–25 հազարանոցի դիմաց: Եթե հայերն ինքնակազմակերպվեին, ապա անպայման կկարողանային բարոյալքված թուրքերի դեմ կռվել ու հաղթել, մանավանդ որ Ռուսաստանի խորհրդային կառավարությունը, հենվելով Ժամանակավոր կառավարության փորձի

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 163:

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 166:

<sup>21</sup> □Թուրքահայաստանի մասին□ հրովարտակի ամբողջական տեքստը տե՛ս Декреты советской власти. Сборник материалов и документов. Том I (25 октября 1917 г. –16 марта 1918 г.). М., 1957, док. № 201, с. 298–299.

վրա և շարունակելով տեղերում ռուսական գործն ազգային գործամասերով փոխարինելու քաղաքականությունը, պատրաստ էր հայերին հնարավորություն ընձեռել կազմակերպելու ու սեփական ուժերով պաշտպանելու իրենց երկիրը: Որպես փաստարկ մատնանշվում է հեռացող ռուսական բանակի կողմից երկրամասում զինվորական կադրեր, մեծ քանակությամբ զենք, զինամթերք, պարեն թողնելը: “Դա գուցե պատմական միակ պահն էր, որ հայությունն ի վիճակի էր կռվել ու նաև հաղթել թուրքերին, ... եթե հայ ղեկավարները, սկսած 1917 թ. կեսերից, ժամանակին ու ճիշտ կողմնորոշվեին, հրովարտակի հրապարակումից անմիջապես հետո դուրս գային Անդրկովկասի հանրապետության կազմից և, ինչպես Ս. Շահումյանն էր առաջարկում՝ քանի դեռ աշխարհամարտը չէր ավարտվել, Հայաստանը հռչակեին Խորհրդային Ռուսաստանի անբաժան մաս, որովհետև որքան էլ Ռուսաստանը թուլացած լիներ, թուրքերը նրանից երկնչում էին, հնարավոր էր, որ հայ ժողովրդի ճակատագիրը դասավորվեր շատ ավելի բարեհաջող”<sup>22</sup>, – արդարացիորեն նկատում են Ստ. Պողոսյանը և Կ. Պողոսյանը: Ավելին, մատնանշելով հայկական զինուժի վճռորոշ դերն Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանությանը ենթարկվող ռազմուժի կազմում ու անգամ այդ պայմաններում վերջինիս քաղաքականության հակահայկական ուղղվածությունը, ինչպես նաև վրացիների, թաթարների ու թուրքերի հավակնությունները հայկական տարածքների նկատմամբ՝ նրանք առաջադրում են քննարկման արժանի հետևյալ հարցադրումն ու եզրահանգումը. “Ուրեմն ինչո՞ւ մնալ թշնամի կառույցի կազմում, ինչո՞ւ խաղալիք դառնալ նրա ձեռքում ու ձախողել ինքնապաշտպանության գործը: Միայն այն իրողությունը, որ ռազմական ուժը հայերի ձեռքին էր, իսկ իշխանությունը՝ վրացիների, և այդ իշխանությունը գործում էր հայերի դեմ, ասում էր այն մասին, որ հայ քաղաքական գործիչները պատրաստ չէին ինքնուրույն քաղաքական գործունեության, չկարողացան և փորձ էլ չարեցին սթափ վերլուծելու, քննելու քաղաքական-ռազմական իրավիճակը, օգտագործվեցին վրաց մենշնիկների կողմից և ոչ թե պայքարեցին անկախության համար, այլ նրանց այն թելադրվեց”<sup>23</sup>:

Տեսականորեն կարելի է ենթադրել, որ հայ ազգային-քաղաքական ուժերի կողմից Ստ. Պողոսյանի և Կ. Պողոսյանի մատնանշած կեցվածքի ու գործողությունների արդյունքում հնարավոր կարող էր դառնալ Արևմտյան Հայաստանի ինքնորոշումը: Այս պնդման հետ, սակայն, դժվար է միանշանակ համաձայնելը, քանի որ ՀՅԴ-ն, արդյոք, ավելի մեծ վտանգի չէ՞ր ենթարկի հայ ժողովրդի կենսական շահերը, եթե 1917 թ. վերջերին խզեր կապերն Անդրկովկասյան կոմիսար-

<sup>22</sup> Ստ. Պողոսյան, Կ. Պողոսյան. նշվ. աշխ., էջ 67:

<sup>23</sup> Նույն տեղում, էջ 61, 67:

րիատի հետ ու բացահայտորեն կողմնորոշվեք դեպի Խորհրդային Ռուսաստան: Արդյո՞ք Խորհրդային Ռուսաստանը մտադիր էր պայքարել Արևմտյան Հայաստանի համար, եթե 1917 թ. նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին) “Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին” ուղղված կոչով խորհրդային իշխանությունն իր բացահայտ համերաշխությունն ու համագործակցությունն էր առաջարկել Թուրքիային՝ “պատռված ու ոչնչացված” հայտարարելով “Թուրքիան բաժանելու և նրանից Հայաստանը “խլելու” մասին” անգլո-ֆրանսուսական գաղտնի համաձայնագրերը<sup>24</sup>: Այս հարցերի վերաբերյալ մեր պատմագրության մեջ արտահայտված տեսակետները տարբեր են: Պատմաբանների մի մասը, վկայակոչելով Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական Թուրքահայաստանի մասին” հրովարտակր, որպես Հայկական հարցի լուծման հարցում խորհրդային կառավարության դիրքորոշումը բնութագրող հիմնարար փաստաթուղթ, իրավացիորեն նկատում է, որ դրա ընդունումը նշանակում էր 1915–1916 թթ. Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում թուրքական ոճրագործների իրականացրած հայերի ցեղասպանության դատապարտում: Խորհրդային Ռուսաստանը հայտնում էր իր կամքը օգնել հայրենի տնից բռնի ուժով տեղահանված և աքսորված հայ ժողովրդի տառապյալ բեկորներին վերադառնալ Արևմտյան Հայաստան, հիմնել անկախ ժողովրդավարական հայկական պետականություն: Նրանց համոզմամբ, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը շահագրգռված էր Հարավային Կովկասում ստեղծելու այնպիսի բուֆերային պետություն, որն ունենար 50–60 հազարանոց բանակ և պատրաստակամություն՝ կովելու Անդրկովկաս ներխուժած թուրքերի դեմ<sup>25</sup>: Դրանով էր բացատրվում Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական Կառավարության Վ. Լենինի կողմից միացյալ և անկախ Հայաստանի, այսինքն՝ Արևելյան ու Արևմտյան Հայաստանն անկախ հայկական պետության մեջ միավորելու գաղափարն առաջ քաշելը: Սակայն հայ գործիչները՝ Ս. Լուկաշինը և Վ. Տերյանը, Ռուսաստանի խորհրդային կառավարության պետորոգրադյան նստավայր Սմոլնիում մասնակցելով Հայաստանի իրավական կարգավիճակի հարցի քննարկմանը, առաջարկեցին Արևելյան Հայաստանի ճակատագիրը կապել Ռուսաստա-

<sup>24</sup> Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий, в 2 томах. Сост., отв. ред., авт. предисл. и коммент. Ю. Г. Барсегов. Т. 1. М., 2002, док. № 309, с. 306.

<sup>25</sup> Տե՛ս նաև Վ. Լուկաշինի և Վ. Տերյանի հոդվածները՝ Ս. Լուկաշինի և Վ. Տերյանի հոդվածները, հրատարակված էր 1917 թ. նոյեմբերի 20-ին (դեկտեմբերի 3-ին) “Ռուսաստանի և Արևելքի բոլոր աշխատավոր մահմեդականներին” ուղղված կոչով խորհրդային իշխանությունն իր բացահայտ համերաշխությունն ու համագործակցությունն էր առաջարկել Թուրքիային՝ “պատռված ու ոչնչացված” հայտարարելով “Թուրքիան բաժանելու և նրանից Հայաստանը “խլելու” մասին” անգլո-ֆրանսուսական գաղտնի համաձայնագրերը: Այս հարցերի վերաբերյալ մեր պատմագրության մեջ արտահայտված տեսակետները տարբեր են: Պատմաբանների մի մասը, վկայակոչելով Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական Թուրքահայաստանի մասին” հրովարտակր, որպես Հայկական հարցի լուծման հարցում խորհրդային կառավարության դիրքորոշումը բնութագրող հիմնարար փաստաթուղթ, իրավացիորեն նկատում է, որ դրա ընդունումը նշանակում էր 1915–1916 թթ. Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում և Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում թուրքական ոճրագործների իրականացրած հայերի ցեղասպանության դատապարտում: Խորհրդային Ռուսաստանը հայտնում էր իր կամքը օգնել հայրենի տնից բռնի ուժով տեղահանված և աքսորված հայ ժողովրդի տառապյալ բեկորներին վերադառնալ Արևմտյան Հայաստան, հիմնել անկախ ժողովրդավարական հայկական պետականություն: Նրանց համոզմամբ, Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը շահագրգռված էր Հարավային Կովկասում ստեղծելու այնպիսի բուֆերային պետություն, որն ունենար 50–60 հազարանոց բանակ և պատրաստակամություն՝ կովելու Անդրկովկաս ներխուժած թուրքերի դեմ: Դրանով էր բացատրվում Խորհրդային Ռուսաստանի Ժողովրդական Կառավարության Վ. Լենինի կողմից միացյալ և անկախ Հայաստանի, այսինքն՝ Արևելյան ու Արևմտյան Հայաստանն անկախ հայկական պետության մեջ միավորելու գաղափարն առաջ քաշելը: Սակայն հայ գործիչները՝ Ս. Լուկաշինը և Վ. Տերյանը, Ռուսաստանի խորհրդային կառավարության պետորոգրադյան նստավայր Սմոլնիում մասնակցելով Հայաստանի իրավական կարգավիճակի հարցի քննարկմանը, առաջարկեցին Արևելյան Հայաստանի ճակատագիրը կապել Ռուսաստա-

նի հետ, իսկ Արևմտյան Հայաստանում ստեղծել նախնական երաշխիքներ հայ ժողովրդի իսկական ու ազատ ինքնորոշման համար՝ միաժամանակ կարևորելով ռուսական բանակին Անդրկովկասում պահելու անհրաժեշտությունը: Հայ գործիչների դիրքորոշումը թելադրված էր Արևելյան Հայաստանն իր հարևանների տարածքային հավակնություններից պաշտպանելու անհրաժեշտությամբ: Բացի այդ, ինչպես նշվում է, Ռուսաստանի խորհրդայնացումից հետո ակնկալել, թե Արևմուտքը կհանդուրժեր, որ Թուրքիայից թեկուզ չնչին հողատարածք տրվեր նրան, լուրջ չէր: Արևմտյան Հայաստանը Ռուսաստանին կցելու առաջարկը նշանակում էր Հայկական հարցը դուրս մղել միջազգային դիվանագիտական օրակարգից: Հենց այս հանգամանքն էլ ուղղորդեց խորհրդային կառավարությանը կենտրոնանալու միայն Արևմտյան Հայաստանի ինքնորոշման հարցի շուրջ<sup>26</sup>:

Մեկ այլ տեսակետի համաձայն, խորհրդային Ժողովրդի հրովարտական Արևմտյան Հայաստանին ինքնորոշման հնարավորություն տալը կեղծիք էր, քանի որ ցեղասպանության ենթարկված, հայաթափված երկրում ինքնավար պետություն ստեղծելն անհնարին էր, առավել ևս, որ հրովարտակի առաջին կետով նախատեսվում էր ռուսական զորքի դուրսբերումն այնտեղից: Եթե բոլշևիկներին իրոք մտահոգեր Արևմտյան Հայաստանը զինագրավելու համար իրենց հասցեին Արևմուտքի հնարավոր մեղադրանքների հեռանկարը, ապա ցանկության դեպքում կարող էին հրովարտակում նշել, որ ռուսական զորքը հայ բնակչության խնդրանքով կարող է մնալ Արևմտյան Հայաստանում այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ կլինի ներքին հարցերը համաժողովրդական հանրաքվեի միջոցով լուծելու, ներքին և արտաքին անվտանգությունն ապահովելու նպատակով ժողովրդական միլիցիա ստեղծելու համար: Չէ՞ որ հետագայում Խորհրդային Միությունը դիմեց դիվանագիտական այդ հնարքին Կուբայում, Աֆղանստանում ու այլ երկրներում իր ռազմաքաղաքական ազդեցությունը պահպանելու և ամրապնդելու համար<sup>27</sup>: Մինչդեռ դրա փոխարեն հայաթափված Արևմտյան Հայաստանում վերաբնակեցված թուրքերին ու քրդերին տրվում էր հնարավորություն՝ շարունակելու եղեռնից մազապուրծ փոքրաթիվ հայ բնակչության ֆիզիկական ոչնչացումը: Խորհրդային կառավարության այդ մոտեցումը Հայկական հարցի լուծումը տանում էր փակուղի: Իրականում բոլշևիկները, տեսնելով, որ կորցնում են երկրամասը, հայերին հաճոյանալու համար ընդունեցին այդ հրովարտակը: Պատահական չէ, որ նրանք իրական քայլեր չկատարեցին փաստաթուղթը կենսագործելու ուղղությամբ: Ավելին՝ 1918 թ. մարտի 3-ին Բրեստ-Լիտովսկում կնքված հաշտությամբ Վ. Լենինի կառավարությունը թուրքերին հանձնեց ոչ

<sup>26</sup> Տե՛ս Ստ. Պոդոբայան, Կ. Պոդոբայան. նշվ. աշխ., էջ 56–57:

<sup>27</sup> Տե՛ս Ա. Մ. Марукян. նշվ. աշխ., էջ 396–397:

միայն Արևմտահայաստանը, այլն՝ Կարսի մարզը<sup>28</sup>: Այդուհանդերձ, հայաստանյան պատմաբանների գնահատմամբ, «Թուրքահայաստանի մասին» հրովարտակր միանգամայն նոր որակ էր Հայկական հարցի պատմության մեջ: Այն առաջին դիվանագիտական փաստաթուղթն է, որը հայ ժողովրդի անվտանգության երաշխիք համարում էր անկախ պետականությունը, իսկ ժամանակի ամենամեծ երկրներից մեկը՝ Ռուսաստանը, այդ հրովարտակով ճանաչում էր հայերի օրինական իրավունքներն իրենց հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ<sup>29</sup>:

Հայկական հարցի հայաստանյան պատմագրությունը նաև ամբողջացել է 1917–1918 թթ. խորհրդա-թուրքական, թուրք-գերմանական, թուրք-անդրկովկասյան և, մասնավորապես, հայ-թուրքական բանակցությունների փաստարկված ու համակողմանի վերլուծությամբ: Հ. Ավետիսյանի դիտարկմամբ, Խորհրդային Ռուսաստանի՝ «ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքներից բխող ... մոտեցումը կարող էր առարկայական ուժ ստանալ միայն միջազգային իրավունքի պաշտպանության առկայությամբ: Մակայն Թուրքիան ժողովուրդների ազգային ինքնորոշման հարցը դիտում էր որպես իր պետության ներքին գործ, ժխտելով ազգային հարցի գոյությունը ընդհանրապես»<sup>30</sup>: Դա նշանակում է, որ բոլոր ճնշված ժողովուրդների, մասնավորապես՝ հայ ժողովրդի ինքնորոշման հնարավորությունները պետք է ապահովվեին նախքան Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցությունների ավարտը: Մինչդեռ դրա փոխարեն, Թուրքիան, դաշնակից Գերմանիայի աջակցությամբ, այդ բանակցությունների օրակարգ բերեց իր հանդուգն թալանչիական նախնական պայմանները, իսկ Կովկասյան ռազմաճակատից ռուսական զորքի դուրսբերումը և մասնակի զորացրումը ի չիք դարձրին հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը<sup>31</sup>: Ավելին, գերմանա-ավստրո-թուրքական պատվիրակությունները Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցություններում «երկակի ստանդարտների» դիվանագիտության միջոցով կարողացան հմտորեն

<sup>28</sup> Տե՛ս Գ. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 20–22, Ա. Մելքոնյան. Հայոց պատմություն: Դասախոսությունների ձեռնարկ, Երևան, 1998, էջ 191, Բ. Լ. Դանիելյան, Ա. Ա. Մելքոնյան. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2008, էջ 271, А. П. Марукян. Նշվ. աշխ., էջ 397–398, 399:

<sup>29</sup> Տե՛ս Ա. Մելքոնյան. Հայոց պատմություն, էջ 191, Բ. Լ. Դանիելյան, Ա. Ա. Մելքոնյան. նշվ. աշխ., էջ 271:

<sup>30</sup> Հ. Ավետիսյան. նշվ. աշխ., էջ 51–52:

<sup>31</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 52–53, նաև՝ Հ. Վ. Հակոբյան. Տարագիր հայության հայրենիք վերադառնալու պահանջի պատմական ու իրավական հիմքերը, Երևան, 2002, էջ 277–304, Ա. Մարոբյան. Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014, էջ 89–93:

օգտագործել ազգերի ինքնորոշման միջազգային-իրավական սկզբունքը Խորհրդային Ռուսաստանի դեմ՝ հոգուտ Քառյակ միության երկրների՝ մասնավորապես, Թուրքիայի ծավալապաշտական նպատակների՝ դրանով իսկ ոչ միայն ձախողելով Հայկական հարցի արդարացի լուծումն այդ սկզբունքի հիման վրա, այլև հասնելով թուրքական պետության ցեղասպան քաղաքականության հետևանքով հայաթափված Արևմտյան Հայաստանում թուրքական տիրապետության վերականգնմանը: Դա Առաջին համաշխարհային պատերազմում պարտվող Քառյակ միության պետությունների դիվանագիտական խոշոր հաղթանակն էր Խորհրդային Ռուսաստանի նկատմամբ, որը կործանարար եղավ Հայաստանի և Անդրկովկասի համար:

Հ. Ավետիսյանն ու Գ. Պետրոսյանը թուրքական գործելակերպի մեջ կարևորում են համաթուրքական նվաճողական նպատակների իրագործմանն ուղղված բարոյահոգեբանական ճնշումների դիվանագիտական հնարքի և տարածքային ռազմական զավթումների տրամաբանված ու հետևողական զուգակցումը: Դրանով էլ նրանք բացատրում և հիմնավորում են օսմանյան իշխանությունների կողմից հայերի ցեղասպանությունն ու հայրենագրկումը շարունակելը և քրդական էթնիկ տարրն ամրապնդելը բռնազավթված հայկական տարածքում, թուրքական դիվանագիտության կողմից Արևմտյան Հայաստանի ինքնավարությունը նույնիսկ թուրքական պետության սահմաններում անգիջում կերպով մերժելը, անթույլատրելի ու «իրենց ներքին գործը» համարելը, Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու, անկախ հռչակելու և այն Թուրքիայի ու Ռուսաստանի միջև բուֆերի վերածելու խնդրի լուծմանն անցնելը 1918 թ. մարտ-ապրիլին՝ Տրապիզոնի բանակցություններում<sup>32</sup>:

Դիվանագիտական արժեքավոր փաստաթղթերի, դեպքերին ժամանակակից ու մասնակից պետական բարձրաստիճան գործիչների գրառումների հիման վրա վերլուծելով պատմական իրադարձությունները՝ Հ. Ավետիսյանն ու Գ. Պետրոսյանը հիմնավորում են, որ 1918 թ. մայիս-հունիսին Բաթումի՝ հայ-թուրքական դիվանագիտական բանակցություններում Հայաստանի Հանրապետության անկախության ճանաչման, նրա հետ «բարեկամության, հավերժ խաղաղության» վերաբերյալ թուրքական պատվիրակության ներկայացրած ծրագիրը հայաջինջ քաղաքականության նոր դրսևորում էր, որով երիտթուրքական կառավարությունը, ռազմաքաղաքական նոր իրադրությանը համապատասխան, լուծում էր իր համար կենսական մի քանի խնդիր: Մասնավորապես, Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագրով Արևմտյան Հայաստանում իր գաղութատիրական իրա-

<sup>32</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 126, 128–129, 135, Գ. Պետրոսյան. Անդրկովկասը դիվանագիտական հորձանուտում. հայոց անկախ պետականության կերտումը (1917 թ. փետրվար–1918 թ. հունիս), Երևան, 2018, էջ 52–54, 56–59, 61–62:

վունքները վերականգնած թուրքական կառավարությունը հունիսի 4-ին Հայաստանի Հանրապետության և Օսմանյան Թուրքիայի միջև կնքված Բաթումի հաշտության պայմանագրով ոչ միայն վերահաստատեց այդ փաստը, այլև միջազգային-իրավական ձևակերպում տվեց Արևելյան Հայաստանի տարածքի զգալի մասի՝ Շարուր-Դարալագյազի, Նախիջևանի, Սուրմալուի, Կարսի, Կադզվանի, Սարիղամիշի, Ախալքալաքի, Լոռու գավթմանը, ինչի հետևանքով Հայաստանն ու հայ ժողովուրդը դրվեցին ավելի ծանր պայմանների մեջ, քան պարտադրված էր եղել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով<sup>33</sup>։ Թուրքերի առջև բացվեցին լայն հեռանկարներ դեպի անդրկասպյան թուրք-թաթարական ցեղերը և Կենտրոնական Ասիայի թուրքաբնակ տարածքներ։ Թուրքական կառավարությունը հետևողական էր իր թուրանական հավակնություններում. նա ժամանակ շահեց դեպի Բաքու շարժվելու ծրագրին նախապատրաստվելու համար։ Դրա իրագործումը լիովին հնարավոր էր Հայաստանի անկախ հանրապետության ճանաչման պայմաններում, քանի որ, ինչպես նշում է Հ. Ավետիսյանը, տնտեսապես աղքատ, փոքր տարածք ունեցող Հայաստանը չէր կարող երկյուղ ներշնչել Օսմանյան կայսրությանը։ Ավելին, հեռանկարում թուրքերը տեսնում էին այդ Հայաստանի վերացումը։ Եվ վերջապես, Անդրկովկասում Հայաստանի անկախ հանրապետության հռչակմամբ վերացվում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության՝ թուրքական կառավարությանն անհանգստացնող հարցը, որը կարող էր բարձրացվել Օսմանյան կայսրությանը հակառակորդ պետությունների կողմից՝ համաշխարհային պատերազմում նրա պարտության դեպքում։ Թուրքերը հնարավորություն էին ստանում հայտարարելու, որ Հայկական հարցն արդեն լուծված է և դա հենց իրենց շնորհիվ։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանին, ապա այս դեպքում համաթուրքական գաղափարախոսների հիմնավորումներն էին՝ այդ տարածքը որպես թուրքերի հայրենիքի՝ Անատոլիայի արևելյան մաս ներկայացնելը, Արևմտյան Հայաստանի բնիկ էթնոսի՝ հայերի իրավունքներն իրենց հայրենիքի նկատմամբ չճանաչելը, բռնագաղթից ու կոտորածից մի կերպ խույս տված ու հայաթափված Արևմտյան Հայաստանի իրենց բնակավայրերում ծվարած փոքրաթիվ հայերին «հայադավան օսմանցիներ» անվանելը և իր հայրենիքն ազատ ու անկախ տեսնելու՝ հայ ժողովրդի երազանքի իրականացումը բացառապես Հայաստանի Հանրապետության հետ կապելը<sup>34</sup>։

Հայկական հարցի պատմության 1917–1918 թվականներն ընդգրկող ժամանակահատվածը նաև ներկայացվել է հայության ինքնակազմակերպման, Հայաստանի երկու մասերի իրավական կարգավիճակի հարցի շուրջ հայ հասարակա-

<sup>33</sup> Տե՛ս Հ. Ավետիսյան. նշվ. աշխ., էջ 253, Գ. Պետրոսյան. նշվ. աշխ., էջ 201–243։

<sup>34</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 237–238։



կան-քաղաքական շրջանակներում ընթացող բուռն քննարկումների, արևմտահայ ու արևելահայ հակասությունների համատեքստում: Շեշտվել է, որ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջման հետևանքով Ռուսաստանի փլուզման արդյունքում առաջին անգամ հայ ազգային խնդիրների օրակարգ մտավ Արևելյան Հայաստանում հայկական պետականության վերականգնման հարցը. հայ հասարակական-քաղաքական ուժերը կանգնեցին Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը որպես առանձին հարց դիտարկելու կամ այն Արևելյան Հայաստանի հարցի հետ շաղկապելու երկրնտրանքի առջև: Եթե հետփետրվարյան ժամանակահատվածում Հայաստանի երկու մասերի իրավական կարգավիճակի հարցերի վերաբերյալ մշակվել էր երկու առանձին ծրագիր, ապա Արևելյան Հայաստանում հայկական անկախ պետականության վերականգնումից հետո՝ 1919 թ. փետրվարի 6–13, Երևանում կայացած Արևմտահայերի երկրորդ համագումարում ընդունված ծրագրային որոշման համաձայն Հայաստանը հռչակվեց անկախ և միացյալ: Դա նշանակում էր «Մեկ ժողովուրդ, մեկ հայրենիք» սկզբունքի ընդունում, հայության ինքնակազմակերպման նոր մակարդակի սկիզբ, բայց ոչ բնավ Հայկական հարցի դուրսմղում միջազգային դիվանագիտության օրակարգից, քանի որ համագումարն արտահայտում էր արևմտահայերի՝ Հայաստանի Հանրապետությունում ապաստանած հատվածի շահերը՝ առանց հայկական գաղթօջախների, Արևմտյան Հայաստանի ու Կովկասի հայերի: Պատահական չէ, որ համահայկական խնդիրների նկատմամբ արևելահայության, արևմտահայության և հայկական գաղթօջախների դիրքորոշումներն ի մի բերելու, ազգային պահանջների միասնական ծրագիր մշակելու նպատակով 1918 թ. հոկտեմբերին Պոդոս Նուբարն առաջ քաշեց հայկական ազգային համագումար հրավիրելու գաղափարը, ի կենսագործումն որի 1919 թ. փետրվար-ապրիլին Փարիզում տեղի ունեցավ Համահայկական համագումարը<sup>35</sup>. «1878 թ. Բեռլինի վեհաժողովից յետոյ, Հայկական Հարցն առաջին անգամ յառնեց համահայկական քաղաքական ծրագրի տեսքով ու նաեւ որպէս հետեւանք՝ համատեղ գործունէութեան եւ փոխադարձ զիջումների»<sup>36</sup>, – նկատում է Վ. Մելիքյանը:

1918 թ. մայիսին՝ հայոց պետականության վերականգնումից հետո, Հայկական հարցը ստացավ նոր բովանդակություն՝ վերածվելով նաև միջպետական, առաջին հերթին՝ հայ-թուրքական հիմնահարցի: Մայիսի 30-ին հրապարակված կոչի համաձայն, Թիֆլիսի Հայոց ազգային խորհուրդը ստանձնել էր հայկական բոլոր գավառների միակ և գերագույն իշխանության գործառույթներ՝ շմատնանշելով,

<sup>35</sup> Տե՛ս Ս. Պօդոսեան. Պօդոս նուբար փաշա: Ազգային գործիչը, Երևան, 2004, էջ 162–170:

<sup>36</sup> Այս մասին տե՛ս Վ. Հ. Մելիքյան. Արևմտահայերի համագումարները և Հայկական հարցի փուլերը 1917–1923 թթ., Երևան, 2007, էջ 12:

թե կոնկրետ որ տարածքների մասին է խոսքը: Դա նշանակում է, որ Հայկական հարցն արդեն իր հաստատուն տեղն էր գրավել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության ուղեգծում: Պատահական չէ, որ Հայաստանի խորհրդի (հետագայում՝ խորհրդարան) անդրանիկ նիստում նախագահ Ավ. Սահակյանը, չխորշելով նիստին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Օսմանյան կայսրության ներկայացուցիչների մասնակցությունից, հայտարարեց հետևյալը. «Այո՛, մեր հանրապետությունը փոքր է ու նեղ իր սահմաններով, նա գրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակչությունը և, կարծես թե, պայմաններ չունի անկախ գոյության համար:

Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ. միշտ ես հավատում եմ, որ մեր սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե օրենքի ուժով, մեր արդար և անվիճելի իրավունքների պաշտպանությամբ գրաված հողամասերի վերաբերմամբ և նոր բարեկամական դաշինքով Տաճկաստանի ու նրա դաշնակից պետությունների հետ ... : Մենք ընտրել ենք համաձայնության և խաղաղության ուղին ... »<sup>37</sup>: «Դա նշանակում է, որ Արևմտյան Հայաստանի հիմնահարցն այնքան վճռորոշ էր հայության համար, որ Բաթումի պայմանագրով ծանրագույն վիճակի մեջ դրված Արարատյան Հանրապետությունն իսկ, ինչպես այն ժամանակ հաճախ անվանում էին փոքրիկ Հայաստանը, ենթատեքստով արտահայտում էր իր մտադրությունները Հայկական հարցում»<sup>38</sup>, – իրավացիորեն նկատում է Ա. Մելքոնյանը: Պատմաբանը նկատի ունի այն իրողությունը, որ Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունից հետո Հայաստանի Հանրապետությունում ապաստանած բազմահազար արևմտահայ գաղթականների պահանջով ու ի կատարումն 1919 թ. Արևմտահայերի երկրորդ համագումարի որոշումների, մայիսի 28-ին՝ Հայաստանի անկախության հռչակման առաջին տարեդարձի օրը, վարչապետ Ալ. Խատիսյանի կառավարությունը հանդիսավոր պայմաններում Հայաստանը հայտարարեց միացյալ և անկախ պետություն: Դրանով հանրապետության կառավարությունը, բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության համաձայն, պաշտոնապես հայտարարում էր իրեն նաև Արևմտյան Հայաստանի տեր ու Դաշնակիցների օժանդակությամբ հետամուտ դառնում համազգային այդ նպատակի կենսագործմանը:

<sup>37</sup> Հայաստանի առաջին Հանրապետության խորհրդարանը (կազմել և հրատ. է պատրաստել Ա. Զաքարյանը), Երևան, 2018, էջ 50–51: Հմնտ. Ա. Վրացյան. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 194:

<sup>38</sup> Ա. Մելքոնյան. Յեղասպանություն և հայրենագրկում. ճանաչումից՝ հատուցում (հողվածներ և հարցազրույցներ), Երևան, 2015, էջ 129:

*Այսպիսով, Հայաստանի Հանրապետության պատմագրության մեջ նորովի ուսումնասիրված ու վերաիմաստավորված է Հայկական հարցի 1917–1918 թթ. պատմությունը: Հիմնահարցի վերաբերյալ հայաստանյան պատմագրության ձեռքբերումներն ունեն գիտագործնական նշանակություն: Դրանք նախևառաջ կոչված են “գինելու” Հայաստանի Հանրապետության դիվանագետներին անցյալի պատմության այն դասերով, որոնցում ներկայացված պատմական իրողություններն ունեն կրկնվելու հատկություն:*

ОСВЕЩЕНИЕ ПРОБЛЕМ 1917–1918 ГГ. ИСТОРИИ АРМЯНСКОГО ВОПРОСА В  
ИСТОРИОГРАФИИ АРМЕНИИ (1991–2018 ГГ.)

ЛИЛИТ ОГАНИСЯН

Резюме

*Ключевые слова: Армянский вопрос, Западная Армения, независимое армянское государство, автономия, покровительство, национальное самоопределение, правовой статус, Союзники, переговоры, соглашение, мирный договор.*

После восстановления независимости Армении в 1991 г., в отечественной историографии была проделана ценная работа по приданию целостного вида изучению проблем истории Армянского вопроса и пересмотру оценок исторических фактов того периода.

В научных исследованиях на основе новоявленных разноязычных архивных документов всесторонне представлены дипломатические обсуждения вопроса Западной Армении в мирных переговорах между Советской Россией и государствами Четверного союза в Брест-Литовске в 1917–1918 гг., на турецко-закавказской конференции в Трапезунде и в мирных переговорах между Республикой Армения и Османской Турцией в Батуме в 1918 г. Военно-политические интересы великих держав в Армянском вопросе, а также захватнические планы Османской Турции в отношении Западной и Восточной Армении в 1917–1918 гг. освещены под углом зрения права национального самоопределения армян на собственной родине – в Западной Армении. Пересмотрены историко-правовые и политические оценки, данные как декрету «О Турецкой Армении» Совнаркома Советской России 1917 г., так и Брест-Литовскому и Батумскому мирным договорам 1918 г.

Заслуживающие внимания факты и заключения, представленные в вышедших в свет в 1991–2018 гг. исследованиях армянских историков о проблемах истории Армянского вопроса в 1917–1918 гг., не только являются значительным вкладом в армянскую историографию, но и имеют практическое значение с точки зрения защиты прав армянского народа на отторгнутые Турцией Западную Армению, Карс и Ардаган.

## THE ELUCIDATION OF THE 1917–1918 MAIN ISSUES OF THE HISTORY OF THE ARMENIAN QUESTION IN HISTORIOGRAPHY OF ARMENIA (1991–2018)

LILIT HOVHANNISYAN

## Summary

*Key words: Armenian question, Western Armenia, independent Armenian state, autonomy, protectorship, national self-determination, legal status, Allies, negotiations, agreement, peace treaty.*

After the re-establishment of the independence of Armenia in 1991, a valuable work has been done for giving a holistic form to the study of the problems of the history of the Armenian question and reconsideration of the assessments of the historical facts of that period.

The diplomatic discussions of the question of Western Armenia during the peace negotiations between Soviet Russia and the states of Quadruple Alliance at Brest-Litovsk in 1917–1918; at the Trapezund Turkish–Transcaucasian Conference and during the peace negotiations between the Republic of Armenia and Ottoman Turkey in Batumi, 1918 are presented comprehensively in scientific works on the basis of newly appeared multilingual archive documents. The military-political interests of the Great powers in Armenian question, as well as the Ottoman Turkey's aggressive plans regarding Western and Eastern Armenia in 1917–1918 are elucidated from the perspective of the right of national self-determination of Armenians in their own homeland – in Western Armenia. The historical-legal and political assessments of both the 1917 Decree “On Turkish Armenia” of the Council of People's Commissars of Soviet Russia and the 1918 Brest-Litovsk and Batumi peace treaties are reconsidered.

The noteworthy facts and conclusions presented in the studies of Armenian historians on the problems of the history of the Armenian question in 1917–1918 published in 1991–2018 are not only an important contribution to Armenian historiography, but also have a practical significance from the point of view of protecting the rights of Armenian people to Western Armenia, Kars and Ardahan taken away by Turkey.

---

---

## ԼԵՈՆԱՐԴՈ ԱԼԻՇԱՆԻ ԱՐՁԱԿԸ\*

### ԼԻԼԻԹ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

Բանալի բառեր՝ Սփյուռք, գրականություն, Իրան, Ցեղասպանություն, մեծ մայր, հիշողություն, Ամերիկա, Դրախտի և Դժոխքի այգիներ, գորգ, վտարանդիություն հայրենաբաղձություն, ազգ:

*Մեծ հայագետ Ղևոնդ Ալիշանի պատվին դրված հայորդու անունը պատկանում է Հայոց եղեռնը վերապրած հայերի երրորդ սերնդի տաղանդավոր զավակ, իրանահայ գրող, թարգմանիչ, գրականագետ, ՅուԹայի համալսարանի Մերձավոր և Միջին Արևելքի ուսումնասիրությունների կենտրոնի պրոֆեսոր Լեոնարդո Փոլ Ալիշանին (1951–2005), ով ծնվել և մեծացել էր Թեհրանում: Ընկերները նրան կոչում էին Նարդո: Իր ապրած կարճ ու հախուռն տարիների ընթացքում նա թողեց գիտական, գրական հարուստ ժառանգություն:*

*Եղեռնից մազապուրծ եղած և Թեհրանում վերահաստատված սիրելի տատիկի ահասարսուռ պատմություններն Ալիշանի մանկական հուշերում վառ ու արթմնի են պահում հայկական ինքնությունը: Ճակատագրի տարբեր հանգրվաններում՝ Ջուլֆայի տատիկի պարտեզներում պահմտոցի խաղացող մանկիկից մինչև Լոնդոն և վերջնակետը՝ Ամերիկայում դեզերող Ալիշանը կրողն էր հայկական, իրանական, ամերիկյան մշակույթների: Գրողն իր ստեղծագործությունները բնորոշում է «հայկա-պարսկա-ամերիկյան բանաստեղծություններ և հեքիաթներ»:*

*Ինչպես նշում է ցեղասպանագետ Ռուբինա Փիրումյանը՝ «Նա գրում ու ստեղծագործում էր անզլերեն և պարսկերեն, հիմնականում անզլերեն, սակայն երազում, սիրում և թախծում էր հայերեն: Ալիշանը մշտապես ինքնության բնորոշման խնդիր ուներ: Տեղին է նշել նրա «Փախստական» բանաստեղծության տողերը. «Ես կարիք ունեմ կառուցվածքի: Ձևի կարիք ունեմ, երբ պոետը խենթ հայ*

---

<sup>1</sup> Լ. Ալիշան. Ազատ անկում. Պատմվածքների ընտրանի, թարգ. Գ. Արզումանյան, Կալիֆոռնիա, 2011, էջ 167:

քահանա է, երբ պոետը հարբած իրանական հոգևորական է”<sup>2</sup>: Ահա թե ինչ է մտորում հայտնի իրանագետ Մ. Հիլմանը՝ խոսելով Ալիշանի 1991 թ. գրված “Կոտրված ապակու վրա պարելով ոտաբոբիկ” բանաստեղծությունների ժողովածուի մասին. “Իմ ամերիկյան-փերսիանիստական տպավորությունն այն է, որ “Պարելով ոտաբոբիկ ...”-ի հեղինակն ավելի քան հայ է, և հետևաբար՝ նրա հայկական ժառանգությունը “կոտրված ապակին է ...”<sup>3</sup>:

1973 թ. Ալիշանը հաստատվում է ԱՄՆ-ում<sup>4</sup>: Մի առիթով Արշիլ Գորկին ասել է. “Լինել հայ Ամերիկայում զարմանալի ճակատագիր է”<sup>5</sup>: Իր “Շարժախոս” պատմվածքում Լ. Ալիշանը կերտում է Ամերիկայի գունեղ իրականության դիմանկարը, որտեղ մտավորական օտարականն անկարող է ընտելանալ “շարժախոս” կոչվող անհասկանալի հիվանդությանը: “Ահա նա աճապարող անցորդների բազմության մեջ փորձում է մնալ կայուն: Բոլորը շտապում էին, և եթե մարդիկ հակառակ ուղղություններով չքայլեին, հավանաբար, մտածեր դրախտի տոմս էր վաճառվում ...”<sup>6</sup>, – գրում է նա:

Գրականագետ, տեսաբան Է. Սաիդի դիտարկմամբ՝ “Վտարանդիությունը մտավորականի համար, անհանգստություն է, շարժում, տեղավորված չլինելու մշտական գոյություն”<sup>7</sup>:

ԱՄՆ-ում Ալիշանի գիտամանկավարժական և ստեղծագործական հարուստ կյանքը մշտապես միաձուլված էր: Նա բազմիցս մասնակցում է Իրանի վտարանդի գրողների հավաքներին՝ կիսելով իր դառը կենսափորձը գրչակիցների

<sup>2</sup> R. Peromian. The Restless World of Leonardo Alishan (March 1951– January 2005): A Burnt Offering on the Altar of the Armenian Genocide.– “Genocide Studies and Prevention: An International Journal”, Issue 3, Article 6, Vol. 1, 2006, p. 288.

<sup>3</sup> M. Hillmann. Review Article on Leonardo Alishan’s “Dancing Barefoot on Broken Glass. – “Iranian Studies”, vol. 30, № 1/2, 1997, p. 161.

<sup>4</sup> Լ. Ալիշանը իրանահայերի այն սերնդի ներկայացուցիչ էր, ով ԱՄՆ էր մեկնել մինչ իսլամական հեղափոխությունը: Ըստ հայագետ Ս. Բակայյանի, լճայ ներգաղթյալների նոր հոսք սկսվեց դեպի Ամերիկա 1970 թ. հետո, երբ նորից ազատականացվեց 1965 թ. լքված օրենքը, որը միջինարևելյան երկրներում քաղաքական ցնցումների (1975 թ. Լիբանանի Քաղաքացիական պատերազմ, 1979 թ. իրանական Իսլամական հեղափոխություն) պատճառով տուներ լքած հայերին հնարավորություն ընձեռեց հաստատվելու ԱՄՆ-ում (տե՛ս A. Bakalian. Armenian-Americans: From Being to Feeling Armenian, New Brunswick, London, 1994, p. 11):

<sup>5</sup> M. Bedrosian. The Magical Pine Ring. Culture and the Imagination in Armenian American Literature. Detroit, 1991, p. 31.

<sup>6</sup> Լ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 163:

<sup>7</sup> E. Said. Intellectual Exile: Expatriates and Marginals – Representations of the Intellectual, The 1993 Reith Lectures. New York, 1994, p. 53.

հետ: “Մալումեի սպիները” աշխատության մեջ Ալիշանը գրում է. “Վտարանդիությունը անցյալի շնորհալի վիրաբույժն է: Այն հաստատակամորեն և շարունակաբար ջանում է բարելավել անցյալի ներկայությունը: Մինչև քառորդ դար անց՝ անցյալը կդառնա հեռավորություն և այնքան գայթակղիչ, որքան Դրախտի այգին է”<sup>8</sup>:

Ամերիկյան նոր տուն էր գրողի համար: Թեհրանի իր հայրական օջախից անչափ հեռու, այդ տունը կերտել էր իր ինքնատիպ մշակութային միջավայրը՝ անցյալի հուշերի, ամերիկյան երազանքի և վերջինիս կորստի մեկնությամբ: Պատմաբան Թ. Ադորնոն իր “*Minima Moralia*” (“Արձագանքներ վնասված կյանքից”) աշխատության մեջ (1951 թ.) գրում է. ”Տունը դա անցյալ է ... և բարոյականության մի մասն է, չլինել տանը մեկ ուրիշի տան մեջ ... Այն մարդու համար, որն այլևս չունի հայրենիք, գրելը դառնում է այն տարածքը, որտեղ նա կարող է գոյատևել”<sup>9</sup>: Ամերիկյան սփյուռքում ապրելու և ստեղծագործելու փորձառությունն Ալիշանն անփոփոխ է “Ինչու գրել” պատմվածքում:

Կյանքի վերջին տարիներին Ալիշանի ներանձնական ապրումները և միայնությունը միաձուլվում են դեպի վերջ տանող զգացողություններին: Նրա ընտանեկան կյանքը փշրված էր, տասնինը տարի հետո ավերվել էր նրա “բույնը”. “Մի բարձ իմ անկողնուն տասնինը տարի հետո, միայն մի բարձ իմ անկողնուն լցված տասնինը հազար փետուրներով, տասնինը հազար թռչունների թևերից թափված քո վարսերին”<sup>10</sup>:

Անասելի մահագուշակ կանխատեսում կար Ալիշանի գործերում: Իր պատմվածքներից մեկում՝ “Չատիկը և պարսկական գորգը”, հետմահու երկխոսություն է ծավալվում հեղինակի ու տատիկի միջև, որը սկսվում է հետևյալ հուզիչ նախաբանով. “Տատիկն ուներ չորս թռռնիկ և չէր կարող ինքն իրեն բաժանել չորսի միջև: Եվ նա ընտրեց ինձ: Հետո, երբ տունը բռնկվեց, ամեն ինչ չէ, որ մոխրացավ այնտեղ: Ես այրվեցի, երբ դեռ ինը տարեկան էի”<sup>11</sup>:

2009 թ. հունվարի 9-ին իր տանը բռնկված հրդեհից ընդհատվում է Լ. Ալիշանի կյանքը: Իր հայկու, սենյու, թանկա ճապոնական հանգերով գրված “Շողակաթիլի միջից” (2000 թ.) բանաստեղծության տողերը ճակատագրական վերջա-

<sup>8</sup> R. Perroomian. The Restless World of Leonardo Alishan (March 1951– January 2005), p. 291.

<sup>9</sup> E. Said., Intellectual Exile: Expatriates and Marginals. – “Grand Street”, № 47, 1993, pp. 119–120.

<sup>10</sup> R. Perroomian. The Restless World of Leonardo Alishan (March 1951– January 2005), p. 289.

<sup>11</sup> L. Alishan. The Lady Bug and The Persian Rug. – “Ararat”, vol. 35, № 4, 1994, pp. 30–31.

կետ էին գրողի համար. “Միշտ հարբած, և քնած կողքիս, իմ պահապան հրեշտակ”<sup>12</sup>: Միյուռքահայ թարգմանիչ, գրող Գուրգեն Արզումանյանի դիտարկմամբ՝ գրողի վախճանը կանխատեսված էր նաև “Քչերը” անտիպ բանաստեղծության մեջ. “Ասում են, որ հարբեցողները պատասխանատու են ննջարանի շատ հրդեհների: Ոմանք կարծում են, որ պատճառն այն է, որ նրանք ուշաթափվում են անկողնու մեջ ծխելիս ... սակայն նրանք վառվում են իրենց երազների մեջ”<sup>13</sup>:

Ալիշանը թողել է արդի իրանական պոեզիայի ուսումնասիրությունների հարուստ գիտական ժառանգություն<sup>14</sup>: Հետմահու լույս են տեսնում նրա ստեղծագործությունների ամբողջական հավաքածուները՝ “Մեռած մարդու ստվերը”, “Ազատ անկում” խորագրերով:

Արդի հայ-ամերիկյան գրականության մեջ Ալիշանի արձակն առանձնակի տեղ է գրավում: Այն ամփոփ ներկայանում է “Ազատ անկում” խորագրի ներքո, որի հայերեն թարգմանությունը լույս է տեսնում 2011 թ. Գ. Արզումանյանի կողմից: Իր պատմվածքներում Ալիշանը հոգևոր ու ֆիզիկական ճամփորդություն է կատարում, մանկությունից մինչև հասունություն՝ գծելով սփյուռքում ապրելու իր կենսափորձի աշխարհագրական սահմանները՝ Թեհրանի հայրական և Նոր Ջուղայի պապենական տնից մինչև Ամերիկա՝ Սալթ Լեյք Սիթի:

Նրա ստեղծագործական աշխարհում խաչաձևվում են հայկական, իրանական ու ամերիկյան մշակույթները, որոնք կյանքի են կոչում լեզենդների և առասպելների, երևակայականի ու իրականի հանդերձանք ստացած հերոսների: Դեռ պատանի էր, երբ երկատվեց գրողի “փխրուն իրականությունը” մեծ մոր՝ Գայանեի (Նանիի) ցեղասպանության ահասարսուռ պատմությունների և Ջորջիո դե Կիրիկոյի “Աշնանային հետմիջօրեի առեղծվածը” կտավի մետաֆիզիկական տարածությունների միջև: Ալիշանը շատ վաղ հասակում ապրեց իր երկրորդ ծնունդը:

Կարևորելով արտիստի վերածնունդը՝ Ուիլյամ Սարոյանը գրում է. “Յուրաքանչյուրն է ծնվում. տարբերությունը արտիստի և այլոց միջև այն է, որ արտիստը ծնվում է երկակի ... Երկրորդ ծնունդը երբեմն տեղի է ունենում մինչ արտիստի մահը, հաճախ մինչ իր քսան տարեկանը, երբեմն էլ՝ ավելի

<sup>12</sup> M. Hillmann. Նշվ. հոդվ., էջ 161:

<sup>13</sup> Լ. Ալիշան. նշվ. աշխ., էջ VII:

<sup>14</sup> L. Alishan. Ahmad Shamlu: The Rebel Poet in Search of an Audience.— “Iranian Studies”, № 18, 1985, pp. 375–422; Նույնի՝ “Crucifixion Without “The Cross”, the Impact of Genocide on Armenian literature. — “AR”, 38:1, 1985, pp. 27–50; Նույնի՝ “Forough Farrokhzad and The Forsaken Earth. — “Forough Farrokhzad: A Quarter Century Later”, Texas, 1988, pp. 123–24.



վաղ: Երեսուն տարեկանում արտիստի արվեստը և ինքնությունը անբաժանելի են ... արվեստը շարունակաբար մաքրագործում է ինքնությունը, իսկ ինքնությունը, որպես կանոն, դարձնում է արվեստը ավելի մարդկային<sup>15</sup>:

Լ. Ալիշանի “Ազատ անկում” ժողովածուի մեջ ուշադրության են արժանի գրողի մեծ մորը՝ Նանիին նվիրված պատմվածքները: Յեղասպանությունը վերապրած մեծ մոր զարհուրելի հուշերը խաթարեցին Ալիշանի մանկությունը, երբ նա դեռ ինը տարեկան էր: “Այդ օրը եղևը կորցրեց իր անմեղությունը... Յեղասպանությունը մտավ իմ սրտի և ուղեղի մեջ: Հորդեց արյանս մեջ և պատեց հոգիս”, – գրում է Ալիշանը: “Նանիիս մեռելները իմն են հիմա, նրանք քայլում, ուտում և քնում են ինձ հետ<sup>16</sup>”: Սփյուռքագետ Խ. Թոլոլյանի դիտարկմամբ, “Յեղասպանություն վերապրածների երկրորդ և երրորդ սերունդը, բավարար չտիրապետելով հայերենին, հասու չէր նախորդ սերունդների թողած գրական ժառանգությանը, այդ պատճառով տատիկների և պապիկների կոտրված անզլերենով փոխանցված բանավոր հուշերը կարևոր էին նրանց համար: Յեղասպանության տրավմատիկ հուշերը և ներգաղթյալ լինելու վնասված իրողությունը փոխանցվում էին երիտասարդ սերնդին բանավոր պատմությունների միջոցով<sup>17</sup>”:

Շարունակելով Նանիի ողբերգության թեման՝ Ալիշանը գրում է. “Նանին մահացավ Լոնդոնի մի հիվանդանոցում, նա մտավ մի փոքրիկ գերեզման, շատ փոքր Նանիի բանդավախ հոգու համար ... Մտածեցի՝ իր մահով կյանքիս այս գլուխը փակվեց, բայց ավելի չէի կարող սխալված լինել: Դրանից հետո էր, որ Յեղասպանությունը սկսեց իշխել իմ գրությանը”: Գրականագետ Մ. Հրոնի դիտարկմամբ, “Իրապես, ցավը կարող է հաղորդակցվել լեզվի միջոցով, մասնավորապես, երբ բնորոշում ենք ցավի նման արտահայտումը որպես “թարգմանություն<sup>18</sup>”: Գրական տեքստը նույնպես լեզու է, որով կարելի է թարգմանել ցավը:

Ալիշանի արձակում մշտապես առկա են Դրախտի և Դժոխքի այգիները: Իրենց մետաֆորիկ ներկայությամբ այս այգիները խորհրդանշում են ներկայի և փոխակերպված անցյալի պատկերները, որոնց մեջ ապրում էր մեծ մայրը՝ Նանին: Սակայն մի օր Ալիշանի դրախտը կորցրեց իր անմեղությունը: “Ալիշանը երբեք չկարողացավ շրջանցել կամ երբեք չփորձեց շրջանցել տատիկի ող-

<sup>15</sup> S. K. Theriault. Rethinking Arshile Gorky. Pennsylvania, 2009, pp. 26–27.

<sup>16</sup> Լ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 128–129:

<sup>17</sup> Kh. Tololyan. Armenian American Literature.– “New Immigrant Literatures in the United States: A Sourcebook of Our Multicultural Literary Heritage”, Westport, London, 1996, p. 26.

<sup>18</sup> M. Hron. Translating Pain: Immigrant Suffering in Literature and Culture, Toronto, 2009, pp. 36–37.

բերգությունը, – գրում է Ռ. Փիրումյանը, մեջբերելով Ալիշանի խոսքերը. – “Ես ցանկանում եմ ականատեսը լինել այդ ողբերգությանը, որն իր ավարտին հասավ Լոնդոնի հիվանդանոցային սենյակում 1978 թ., որտեղ Նանին-տատիկը տեսավ թուրք հեծյալին իր մահճակալի շուրջը մինչև մահանալը: Սակայն ես հանդիսատեսը չեմ, ես խճճված կերպարն եմ այդ ներկայացման մեջ, ով այլևս երբեք, երբեք, երբեք չի հասնի իր հավասարակշռությանը”<sup>19</sup>: “Այն, ինչ որդին ցանկանում է մոռանալ, թողը ցանկանում է հիշել”<sup>20</sup>:

Ալիշանի արձակում մեծ մայրը ամենախորհրդավոր ու ողբերգական էակն է, նա մշտապես ներկա է գրողի գրական մտորումներում, որպես տեսանելի կամուրջ, իր հայկական ինքնության, պատմական հայրենիքի, նրա ողբերգական անցյալի ու ներկայի միջև: Նանին մերթ կենդանի է ու իրական, մերթ հայտնվում է որպես զատիկ կամ լուսնի շող, որը գիշերներին կտուրից գլորվում և սողում է թոռան մահճակալի տակ: Նանիի ու թոռան սերը երբեմն փոխակերպվում է ծիսական կտավի, ինչպես, օրինակ՝ Ա. Գորկու “Նկարիչն ու իր մայրը” կամ Միքելանջելոյի “Պիետա” կտավներն են՝ իրենց ողբերգական մեկնությամբ:

Նանիի և թոռան հոգևոր միասնության թեման իր շարունակությունն է գտնում Ալիշանի “Տիրուհին և պարսկական գորգը” պատմվածքում: Գորգը երկրաչափական և ֆիզիկական այն տարածությունն էր, որի վրա միահյուսված էին գրողի հոգևոր ու իրական երեք աշխարհները՝ Հայաստան, Իրան, Ամերիկա: Նանիի դառնաձին պատմությունները թոռան համար հյուսել էին մի կենսաթափանց, որը մինչև մահը իր մեջ պահեց գրողին:

Նանին “փոխակերպվեց” Չատիկի: Տասներեք տարի Չատիկն ապրեց իրանական գորգի վրա: “Երբ պետք է որ գորգը մաքրեմ, Նանիին դնում եմ ուսիս, այնքան որ իր դժոխքը քիչ-ինչ փոշեզերծվի ...”<sup>21</sup>: Նանին որոշեց ապրել պարսկական գորգի վրա՝ թոռան ամերիկյան իրականության մեջ: “Միրելիս, մահը երջանկություն է ինձ համար ... Կարո՞ղ եմ Չատիկի վերածվել և սուսիկ-փուսիկ ապրել պարսկական գորգիդ վրա”<sup>22</sup>: Թողը պատասխանում է. “Անշուշտ, Նանի, ինչ որ կամենաս, բայց ինչու՞ թուրքմենական այս հասարակ գորգն ընտրեցիր”. “Դա իմ Դժոխքի Այգին է”, – ասաց նա, – ուր կտառապեմ վաթսուն տարի առաջ աշխարհը վերջանալուց հետո ապրելու մեղքն իմ”<sup>23</sup>:

<sup>19</sup> R. Perroomian. The Diasporan Armenian Literature, Entering the Second Century of the Continuing Effects of the Genocide, – “AIEA Conference (Draft, August 9–12)”, 2017, Oxford, pp. 21–22.

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 2–3:

<sup>21</sup> Լ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 120:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 120:

<sup>23</sup> Նույն տեղում:

“Պարսկական այգին գորգ է, – գրում է ֆրանսիացի Մ. Ֆուկոն, – որի մեջ ողջ աշխարհը սահմանվում է իր սիմվոլիկ բացարձակությամբ, և գորգը ինքնին այգի է, որը կարող է շարժվել ողջ տիեզերքով”<sup>24</sup>: Սակայն հարկ է ընդգծել, որ “Տիրուհին և պարսկական գորգը” պատմվածքում Ալիշանը վերափոխում է պարսկական այգի-գորգերի պատմական, իմաստային սահմանումը: Ալիշանի պատմվածքում Դրախտը Նոր Ջուղայի հայրական մեծ մոր տասնիններորդ դարի մրգաստանով ու խաղողի այգով ապարանքն էր, որն Ալիշանը կոչեց “Եդեմական այգի”<sup>25</sup>: Նա կորցրեց իր Ամիրանը՝ Դրախտի այգին, երբ դեռ ինը տարեկան էր: Նանին իր Ամիրանի՝ Եդեմական այգու համար մշակութային օտարական էր, ուստի ընտրեց նոր բնակատեղի՝ Դժոխքի այգին:

“Տիրուհին և պարսկական գորգը” պատմվածքում այգու փոխակերպումը դրախտից դժոխքի հատկանշում էր Ամիրանի ավարտը, որի մեջ ամփոփված էին հայրական տունը և Ջուղայի պարտեզները: Հոգեպարար հանգստի վայրը և ներքին ներդաշնակությունը մշտապես պատկերվում են որպես այգի՝ երկրային դրախտ: Այգին միջնադարյան հայեցակարգում մի վայր էր, որտեղ հոգին պետք է ընթերցեր ամենախոր հոգևոր դասերը: Պարսկական այգին նախագծված էր ոչ միայն դրախտի վերիմաստավորմամբ, այլև տիեզերքի վերստեղծմամբ: Նշենք, որ իսլամական այգի-գորգերը նույնպես ստեղծված են նույն սիմվոլիկ կանոնով, որպես իրանական այգիներ, որտեղ նշմարվում է տեսանելիի անտեսանելի գոյությունը<sup>26</sup>:

Ամերիկյան նոր տան մեջ անցյալի պատկերները վերածվում են պատերին ամրացված շրջանակված լուսանկարների, որոնք իրենց մոզական ուժով վտարանդի գրողին հետ են կանչում դեպի տուն, այն տունը, ”որի թեք տանիքին դեռ չէր իջել ծեր արծիվը”, այն տունը, “որը դեռ ողջ էր”<sup>27</sup>: “Աշխարհը և տունը” էսսեում մշակութաբան Թ. Բհաբհան, օգտագործելով Ջ. Ֆրեյդի “Das unheimliche”՝ “անհայրենիք” լինելու հայեցակարգը, հատկանշում է տան և պատկանելության հետարդիական այն հասկացությունը, ըստ որի՝ տուն ունենալով դառնում էս անտուն, և տունն ու աշխարհը զատող սահմանը մնում է խճճված<sup>28</sup>:

Մասամբ ինքնակենսագրական հենք ունեցող “Ազատ անկում” պատմվածքների ընտրանին ամփոփում է մշակութային երեք տարբեր ինքնությունների

<sup>24</sup> M. Foucault. “Of Other Spaces”.– “Architecture /Mouvement/ Continuete., (“Des Espace Autres”, March 1967, tran. J. Miskowiec), October, № 5, 1984, p. 6.

<sup>25</sup> Լ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 124:

<sup>26</sup> P. R. Harrison. Gardens: An Essay on the Human Condition, Chicago, 2008, p. 273.

<sup>27</sup> Լ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 132:

<sup>28</sup> T. Bhabha. The World and the Home.– “Social Text”, № 31/32, Third World and Post-colonial Issues (1992), Duke University Press, pp. 141–150.

կրող, հայ-ամերիկյան գրականության վառ ներկայացուցիչ Լեոնարդո Ալիշանի կյանքի ճակատագրական երթուղիները՝ Իրանից մինչև Ամերիկա, որտեղ անցյալն առավել արթուն էր, քան ներկան: «Իմ ներկան՝ դա օտարն է, անցյալն է, տունը, թեև կորուսյալ տունը՝ կորած քաղաքում, կորած ժամանակների մշուշի մեջ»<sup>29</sup>:

Անփոփելով՝ նշենք, որ իրանահայ գրող Լ. Ալիշանի ստեղծագործությունները կարևոր տեղ են զբաղեցնում հայկական սփյուռքի արդի գրականության մեջ, որոնք անհատի, ազգի պատմական հիշողության գեղարվեստական վկայություններ են:

## ПРОЗА ЛЕОНАРДО АЛИШАНА

### ЛИЛИТ САФРАСТЯН

#### Резюме

*Ключевые слова: Диаспора, литература, Иран, Геноцид, мец майр, память, Америка, сады Рая и Ада, ковер, изгнание, ностальгия, нация.*

Профессор университета Юты, один из известных авторов современной литературы армянской Диаспоры Леонардо Алишан (Нардо), родился и вырос в Тегеране. Алишан – носитель трех культурных идентичностей: армянской, персидской и американской, многоаспектный характер которых ярко отражается в его произведениях.

В сборнике его рассказов «Свободное падение», изданном после смерти автора, отдельное место занимает тема Геноцида армян 1915 года. Главной героиней этих рассказов является бабушка писателя Гаяне (мец майр), которая пережила ужасы Геноцида. Ее образ является связующим звеном между прошлым и настоящим, в котором живет автор. Переехав и поселившись в Америке, Алишан остался привязанным к своему прошлому, которое предстает в сборнике в образе дома его детства в Новой Джуге.

Произведения Л. Алишана играют важную роль в современной литературе армянской Диаспоры.

<sup>29</sup> S. Rushdie. Imaginary Homlands: Essays and Criticism 1981–1991. London, 1992, pp. 20–21.

## THE PROSE OF LEONARDO ALISHAN

LILIT SAFRASTYAN

## S u m m a r y

*Key words: Diaspora, literature, Iran, Genocide, grandmother, memory, America, the gardens of Eden and Hell, rug, exile, nostalgia, nation.*

Professor of the University of Utah Leonardo Alishan (Nardo) – one of the prominent writers of modern Armenian Diasporic literature was born and grew up in Tehran. Author’s Armenian, Persian and American cultural identities were vividly expressed in his poetry and prose works.

Alishan’s collection of short stories “Free Fall” was published posthumously. In these stories the topic of the 1915 Armenian Genocide has an important role, in which the character of his beloved grandmother Gayane, who survived the horrors of genocide is vividly expressed.

Her image is a link between the past and the present, in which the author lives. Having moved and settled in America, Alishan remained attached to his past, which he presented in his collection of short stories as the image of his childhood home in New Julfa.

The compositions of Leonardo Alishan play significant role in modern Armenian Diasporic literature.

---

---

ՕՍՄԱՆՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 1914 Թ. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ  
Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԸ\*

ՍԵՐԳԵՅ ՄԱՆՎԵԼՅԱՆ

Բանալի բառեր՝ օսմանյան խորհրդարան, ընտրություններ, Հայոց ընտրական հանձնաժողով, Կ. Պոլսի Հայոց պատրիարքարան, հայ քաղաքական կուսակցություններ:

*1912–1913 թթ. տեղի ունեցած Բալկանյան պատերազմները մեծ հարված հասցրեցին Օսմանյան կայսրությանը: Եվրոպական տիրույթների կորստից զատ խաթարվեց երկրի տնտեսությունը, կրճատվեց բնակչության թվաքանակը և այլն: Այսպես, օրինակ, 1906–1907 թթ. մարդահամարի տվյալներով Օսմանյան կայսրության բնակչության թիվը կազմում էր 20.884.630 մարդ, իսկ 1914 թ. նվազեց՝ դառնալով 18.520.016<sup>1</sup>:*

*Օսմանյան կայսրության ներքին քաղաքական համակարգը ևս անմասն չմնաց վերաձևումներից: Իշխող “Միություն և առաջադիմություն” ու ընդդիմադիր “Ազատություն և համաձայնություն” կուսակցությունների միջև ընթացող տևական քաղաքական պայքարի արդյունքում հաղթեցին իթթիհատականները, որոնք հնարավորություն ունեցան միանձնյա ղեկավարելու նոր մեջլիսը (խորհրդարան):*

*Դեռևս 1912 թ. ապրիլի 18-ի ընտրություններից հետո ձևավորված երկրորդ օսմանյան խորհրդարանը նույն թվականի օգոստոսի 5-ին լուծարվել էր: Դրան հաջորդել էին ընտրության նախապատրաստական աշխատանքները, որոնք, վերոհիշյալ արտաքին և ներքին քաղաքական գործընթացներով պայմանավորված, անընդմեջ հետաձգվում էին: Ի վերջո, երիտթուրքական կառավարության՝ 1913 թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ տրվեց ընտրական գործընթացի մեկնարկը<sup>2</sup>:*

*Բալկանյան պետությունների տարած հաղթանակը նոր հույս էր ներշնչում դարեր շարունակ օսմանյան բռնապետության ներքո ճնշված ոչ մուսուլման ժողովուրդներին (հայեր, հույներ և այլն)՝ վերականգնելու իրենց իրավունքները: Միջազգային հարաբերությունների օրակարգ բերված Հայկական հարցի գլխավոր կռվանը*

---

<sup>1</sup> F. Demir. Osmanlı Devleti’nde II. Meşrutiyet Dönemi Meclis-i Mebusan Seçimleri (1908–1914), İmge Kitabevi Yayınları, 2007, s. 300.

<sup>2</sup> Ş. Halıcı. Osmanlı Basımına Yansıyan Şekliyle 1914 Meclis-i Mebusan Seçimlerinde Ermeniler.– “Tarih” (İstanbul Üniversitesi), 2015, № 62, s. 135.

օսմանյան վիլայեթներում հայկական բարենորոգումներ իրականացնելու անհրաժեշտությունն էր, ինչը, բնականաբար, չէր կարող իր էական ազդեցությունը չունենալ նոր ձևավորվող օսմանյան խորհրդարանում հայերի ներկայացվածության վրա:

Հարկ է նշել, որ Կ. Պոլսի Հունաց պատրիարքարանը, իր հերթին, վճռական էր խորհրդարանում հույն թեկնածուների ընդգրկման հարցում: Մասնավորապես պատրիարքը հայ պաշտոնակից պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի կատարած այցելության ժամանակ հույս էր հայտնել, որ Հայոց և Հունաց պատրիարքություններն առաջիկա ընտրություններին պետք է դրսևորեն միասնականություն՝ հաշվի առնելով երկու ժողովուրդների ընդհանուր շահերը<sup>3</sup>:

Ի տարբերություն օսմանյան խորհրդարանի՝ 1908 և 1912 թթ. ընտրությունների ժամանակ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ու հայ քաղաքական կուսակցությունների միջև ծագած երկպառակությունների՝ հայկական համայնքը որոշում ընդունեց 1914 թ. օսմանյան խորհրդարանի ընտրություններին ներկայանալ միասնական ձևաչափով: Այդ նպատակով Հայոց պատրիարքարանի գլխավորությամբ ստեղծվեց «ազգային խմբակցական-ընտրական» հանձնաժողով, որն իր շուրջ համախմբեց հայ քաղաքական բոլոր կուսակցություններին (Հայ հեղափոխական դաշակցություն, Հնչակյան, Ռամկավար և Վերակազմյալ Հնչակյան)<sup>4</sup>: Հանձնաժողովի աշխատանքներին միացան նաև հայ կաթոլիկ ու բողոքական համայնքները:

1914 թ. ընտրություններից առաջ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի ու «Միություն և առաջադիմություն» կուսակցության միջև բուռն քննարկման առարկա դարձավ հայ թեկնածուների ընտրության հարցը, որի առնչությամբ Զավեն պատրիարքը քանիցս հանդիպումներ ունեցավ ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի ու երիտթուրք բարձրաստիճան մյուս պաշտոնյաների հետ: Ահավասիկ, Զավեն պատրիարքն իր հուշերում գրում էր. «Պատրիարք, Վարչապետ եւ Գործակատար ամեն օր անոնց դուռները կը բախէին, իսկ Ներքին Գործոց նախարարը՝ Թալեաթ, խոստումներով կ'օրօրէր մեզ եւ Իթթիհաստի պետերէն Միդիաստ Շիւքրին եւ Քէմալը յաճախ Պատրիարքարան գալով երեւութապէս մեզ գոհացնել կը ձեւացնէին»<sup>5</sup>: Ըստ

<sup>3</sup> Օսմ. մէպուսական խնդիրը. – «Ժամանակ» (Կ. Պոլիս), 11. I. 1914: 1914 թ. լույս տեսած «Ժամանակ» օրաթերթի հոդվածում հիշատակված համարների բացառիկ օրինակները պահվում են Ստամբուլի «Բեյազըթ» պետական գրադարանի արխիվում:

<sup>4</sup> Բարենորոգումներու ծրագիրը. Ս. Պատրիարքին այցելութիւնը Ներքին գործերու նախարարին. Ընտրություններու հարցը. Հայերը ի՞նչ առաջարկներ կը ներկայացնեն. Վարչութիւնը պիտի հրաժարի. – «Ժամանակ», 28. I. 1914:

<sup>5</sup> Չ ա ի է ն Ա ը ք ե պ ս. Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 40: Հմմտ. Ս. Պատրիարքին տեսակցութիւնը Ներքին գործոց նախարարին հետ. Թալեաթ պէյ կ'խոստանայ 20 երեսփոխան տալ. Պատրիարքարանի

էության, երիտթուրքական իշխանություններն իրենց ստահող հայտարարություններով փորձում էին ժամանակ շահել և վերջնականապես կանխել հայ համայնքի ու քաղաքական վերնախավի ուղղակի միջամտությունն օսմանյան խորհրդարանի ընտրություններին: Այս կերպ նրանց պետք է հաջողվեր շնչավորել նախորդ օսմանյան խորհրդարանի ընտրության սցենարը և ընտրել այն հայ թեկնածուներին, որոնք “հարմար” կդիտվեին իշխող գաղափարախոսությանն ու պայմաններին:

Ինչպես տեղեկանում ենք պոլսահայ մամուլի, մասնավորապես “Ժամանակ” օրաթերթի հրապարակումներից, օսմանյան խորհրդարանում հայերի ներկայացվածության հարցը լայնորեն քննարկվել է դեռևս Կ. Պոլսի Հայոց պատրիարքի փոխանորդ Գաբրիել արքեպիսկոպոս Ջնահիրջյանի պաշտոնավարության օրոք և երիտթուրքական իշխանությունների կողմից ընտրական գործընթացի հետաձգման պատճառաբանությամբ անընդմեջ մտել է փակուղի:

Ի վերջո, 1914 թ. փետրվարի 9-ին Գալաթայի հայկական եկեղեցում գումարված հայոց ընտրական հանձնաժողովի նիստում որոշվում է արդարադատության նախարար Իբրահիմ բեյին ուղարկել մի պահանջագիր, որի համաձայն հայկական համայնքն Օսմանյան կայսրությունում բնակվող հայության թվաքանակի համեմատությամբ իրավունք պետք է ստանար ընտրելու ազգությամբ հայ 20 պատգամավորի, ըստ որում, հայ թեկնածուների ընտրությունը պետք է կատարվեր հայերի քվեներով: Միաժամանակ, թե՛ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը և թե՛ միջկուսակցական համերաշխության հանձնաժողովը պահանջագրով հայտնում էին նաև, որ պահանջների չբավարարման դեպքում հայությունը պետք է բոյկոտի ենթարկեր ընտրությունները<sup>6</sup>:

Սակայն եթե երիտթուրքական կառավարության որոշմամբ մերժվում էր ազգային ընտրության իրավունքը, ապա հայ թեկնածուների թվի մասին պահանջը բավարարվում էր մասամբ՝ նկատի առնելով այն անհեթեթ հանգամանքը, որ տվյալ դեպքում Օսմանյան կայսրությունում բնակվող յուրաքանչյուր ազգի (թուրք, հայ, հույն, արաբ) համար անհրաժեշտ կլիներ մշակել առանձին ծրագիր<sup>7</sup>: Պարզից էլ պարզ էր, որ իթթիհատականներն ամեն կերպ փորձում էին խլացնել ոչ մուսուլման հանրության ձայնն օսմանյան խորհրդարանում՝ լավագույն դեպքում նախապատվություն տալով հայազգի այն թեկնածուներին, որոնք մասնակցել են նախորդ օսմանյան խորհրդարանի աշխատանքներին: Մյուս կողմից երիտթուրքական կառա-

---

տեսակէտը ընդունուած. Հայերու ո՞ր տեղերէն երեսփոխան պիտի տան.– “Ժամանակ”, 29. II. 1914:

<sup>6</sup> Նիթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, իսր.՝ Ե. Փամպուքեան, հ. ԺԱ, Պէրոթ, 2015, էջ 68:

<sup>7</sup> G. Bozkurt. Alman-İngiliz Belgerinin Ve Siyasi Gelişmelerin Işığında Gayrimüslim Osmanlı Vatandaşlarının Hukuki Durumu (1839–1914), Ankara, 1996, s. 205.



վարությունը, խորհրդարանի ընտրություններին ընդառաջ, նախապես այնպես էր սահմանել նահանգային-վարչական բաժանումները, որ հայերն Օսմանյան կայսրության գրեթե բոլոր վիլայեթներում կազմեին փոքրամասնություն:

Հարկ է նկատել, որ Հայոց պատրիարքարանի և երիտթուրքական կառավարության հարաբերությունները պաշտոնական մակարդակով միառժամանակ «սառեցվեցին»: Այդ իրավիճակը շարունակվեց մինչև այն պահը, երբ երիտթուրքական իշխանությունների կողմից ներկայացվեց փոխզիջումային մի տարբերակ, ըստ որի՝ հայերին տրվում էր 16 պատգամավորական մանդատ, որից 3-ին պետք է ընտրեր իշխող կուսակցությունը, իսկ 13-ը՝ Կ. Պոլսի հայոց ընտրական հանձնաժողովը<sup>8</sup>: Վերջինիս համաձայնությամբ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունն առաջարկեց Կ. Պոլսից ընտրված նախկին պատգամավորներ Գրիգոր Զոհրապի և Պետրոս Հալլաջյանի, իսկ Հալեպից՝ Արթին Բոշգեզենյանի թեկնածությունները:

Միանշանակ չէր, սակայն, Հայոց պատրիարքարանի և հայ քաղաքական կուսակցությունների կողմից առաջադրվելիք հայ թեկնածուների հարցը, քանի որ այստեղ առկա էին լուրջ անհամաձայնություններ: Նախապես պատրիարքարանը հենազրով պատվիրել էր գավառների հայոց առաջնորդարաններին՝ կազմելու հայ պատգամավորական թեկնածուների ցուցակը<sup>9</sup>: Իրենց հերթին, հայ քաղաքական կուսակցությունները համառորեն փորձում էին պատգամավորական ցուցակներում ընդգրկել առավելապես իրենց կուսակցության ներկայացուցիչներին, ինչը, անշուշտ, բացասական ազդեցություն էր թողնում ընտրական գործընթացի արդյունավետ կազմակերպման վրա: Կուսակցությունների միջև չդադարող «այթուցակովի» պայմաններում պոլսահայ մտավորականության շրջանակներում ստեղծվել էր անվստահության մթնոլորտ, հատկապես, երբ ազգասիրության բարձրագույն զգացումի ներքո ի հայտ էին գալիս եսապաշտական նկրտումներ: Ահավասիկ լրագրող Արտաշես Գալփաքճյանի մտահոգությունն այդ մասին. «Օսմ. Խորհրդարանին մեջքսան հայ երեսփոխանի տեղ, տասը հատ, հինգ հատ և նոյն իսկ երկու հատ ունենանք, բայց հայ ազգին օգտակար ու պատուաբեր ներկայացուցիչներ ունենանք»<sup>10</sup>:

<sup>8</sup> R. E. Gölş. Ermeni Sorunu Ve İstanbul Ermeni Patrikhanesi (1878–1923), Türk Tarih Kurumu Yayınları, Ankara, 2015, s. 436–438. Տե՛ս նաև՝ Ս. Պատրիարքը Թալէաթ պէյի մօտ. Իթթիհատը 16 երեսփոխան կուտայ. Անորոշ վիճակ.– «Ժամանակ», 4. II. 1914:

<sup>9</sup> Ընտրական խնդիրը. Հայ պատուիրակների դիմումը. Միտհաթ Շիրքի պէյ 16 երեսփոխան կը խոստանայ. Վարչութեան իրաւասութիւնը.– «Ժամանակ», 30. I. 1914:

<sup>10</sup> Ս. Գալփաքճեան. Տեսութիւն մը երեսփ. ընտրութեան խնդրոյն առթիւ.– «Ժամանակ», 7. II. 1914: Պոլսահայ մտավորականության մտահոգությունների մասին տե՛ս նաև՝ Բդիպոս. Ինչպէս պիտի ընտրուին Հայ մէկուսները.– «Ժամանակ», 30. I. 1914: Վ. Զէյթունցեան. Ընտրութեանց շուրջ մոլորումներ.– «Ժամանակ», 8. II. 1914, Օսմ. Երեսփոխանական հարցը. Կուսակցութիւնները անհամերաշխ. Միտհաթ Շիրքի պէյ Ազգ.

Հաշվի առնելով հայոց ընտրական հանձնաժողովի “չեզոք” դիրքորոշումը երիտթուրքական կառավարության կողմից ազգային ընտրության սկզբունքը մերժելու առնչությամբ և, հետևաբար, բացառելով համազգային բոլկոտի վերաբերյալ նախապես ընդունված որոշումը՝ Հայ հեղափոխական դաշնակցությունը նախընտրեց չեզոք դիրքորոշում դրսևորել առաջիկա ընտրություններին: Այդ մասին են վկայում Դաշնակցության Հայաստանի բյուրոյից (Կարին), Տարոնի, Վասպուրականի, Սեբաստիայի կենտրոնական կոմիտեներից ստացված բազմաթիվ նամակները, որոնցում կուսակցությունը նման “ձախտող” իրավիճակի պատասխանատվությունը փորձում էր բարդել Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի վրա՝ վերջինիս մեղադրելով ինքնահաստատման և դիրքերն ամրապնդելու մեջ<sup>11</sup>:

Այսօրինակ լարված իրադրության պայմաններում ավելի ուշ պոլսահայ մամուլը գուժեց Ջավեն պատրիարքի հրաժարականի լուրը, ինչը հակազդեցության մեծ ալիք բարձրացրեց պոլսահայ մտավորականության շրջանում: Վերահաս պատերազմի վտանգի առջև կանգնած հայության համար այդ իրողությունը վերջնականապես կխորտակեր այն ազգային նպատակները, որոնք երկար ժամանակ ի վեր սպասում էին իրենց օրինական կենսագործմանը: Ուստի, չուշացավ տարբեր համայնքային կառույցների, անհատների և լրագրերի՝ Սրբազան պատրիարքին ուղղված աջակցության խոսքը, ինչը տվեց իր դրական արդյունքը<sup>12</sup>:

Երրորդ օսմանյան խորհրդարանի ընտրությունները սկսվեցին 1914 թ. փետրվարի կեսերից և շարունակվեցին մինչև ապրիլի վերջ: Ընտրությունների առաջին ու գլխավոր կենտրոնը Կ. Պոլսին էր, որտեղ փետրվարի 28-ին կայացած ընտրություններում հաղթած 11 պատգամավորից 2-ը իթթիհատականների կողմից առաջադրված՝ օսմանյան հասարակության մեջ հեղինակություն ունեցող հայ քաղաքական գործիչներ Պետրոս Հալլաջյանն ու Գրիգոր Զոհրապյան էին: Մինչև մարտի վերջ տեղի ունեցան նաև Իզմիրի (Օննիկ Բասան), Դիարբեքիի Էրզանի Մադենի շրջանի (Ստեփան Չրբաջյան), Սեբաստիայի (Տիգրան Պարսամյան), Կեսարիայի [Կարապետ Թումայան (Թումայան)], Միսի (Մատթեոս Նալբանդյան) և Հալեպի [Արթին (Հարություն) Բոշգեզեյան] ընտրությունները:

Ապրիլ ամսին հայտնի դարձան Մուշի, Բիթլիսի և Մարաշի ընտրությունների արդյունքները: Ըստ այդմ, Մուշում ընտրվեց Գեղամ Տեր-Կարապետյանը (Տատրակ-Աստղիկ), Բիթլիսում՝ Մինաս Չերազը (թուրքական աղբյուրներում՝ Քիրազ Էֆենդի), իսկ Մարաշում՝ Հակոբ Խրըլաքյանը: Ինչ վերաբերում է Էրզրումի ու Վանի

Պատրիարքարանի մեջ. Պատրիարքարանը պիտի ստիպէ. – “Ժամանակ”, 25. II. 1914, Ա. Ա ն տ ո ն և ն. Ընտրական զավեշտը. – “Ժամանակ”, 1. III. 1914:

<sup>11</sup> Նիւթեր 2. 3. Դաշնակցութեան պատմութեան համար, էջ 68–93:

<sup>12</sup> Ս. Պատրիարք Հօր հրաժարականին շուրջ. – “Ժամանակ”, 10. IV. 1914, Համակրանք Ս. Պատրիարքին. – “Ժամանակ”, 28. IV. 1914:

հայ թեկնածուներին, ապա նրանք որոշվեցին օսմանյան խորհրդարանի բացումից անմիջապես հետո: Էրզրումից ընտրվեցին Վարդգես (Հովհաննես) Սերենգյուլյանը և Հովսեփ Մեղեթյանը, իսկ Վանից՝ Արշակ Վռամյանն (Օննիկ Դերձակյան) ու Վահան Փափագյանը:

Ինչպես կարելի էր ենթադրել, հայ թեկնածուների թվի վերաբերյալ երիտթուրքական իշխանությունների կողմից տրված խոստումները կրկին ի չիք դարձան: 1914 թ. մայիսի 14-ին բացված օսմանյան երրորդ խորհրդարանում նախապես որոշված 20-ը դարձավ 18, ապա նվազեց 16-ի, սակայն, ի վերջո, խորհրդարան անցան 15 հայ պատգամավոր: Նրանցից ընդամենը 5-ն էին (Գ. Հալլաջյան, Գ. Ջոհրապ, Գ. Տեր-Կարապետյան, Ա. Բոշգեզենյան և Վ. Սերենգյուլյան), ովքեր որպես պատգամավոր մասնակցել էին նախորդ երկու խորհրդարանների աշխատանքներին: Չըրաջյանը և Վռամյանը եղել էին երկրորդ խորհրդարանի, իսկ Փափագյանը՝ առաջին խորհրդարանի պատգամավոր: Մնացած հայ պատգամավորներն առաջին անգամ էին ընտրվում օսմանյան խորհրդարանում:

Գ. Ջոհրապի գլխավորությամբ խորհրդարանի հայ պատգամավորները կարճ ժամանակ անց նիստ գումարեցին՝ հստակեցնելու խորհրդարանում իրենց առաջիկա անելիքները, մասնավորապես՝ Հայկական բարենորոգումների և քրիստոնյաների զինվորագրության հարցերի շուրջ<sup>13</sup>: Հարկ է նշել, որ խորհրդարանում ներկայացված հայ պատգամավորներից առավել ակտիվ գործունեությամբ աչքի էին ընկնում Ա. Բոշգեզենյանը, Գ. Ջոհրապն ու Վ. Սերենգյուլյանը, ովքեր խորհրդարանի ամբիոնից պարբերաբար հանդես էին գալիս տնտեսական, իրավական, զինվորական ու հասարակական բնույթի ելույթներով<sup>14</sup>: Մյուս հայազգի պատգամավորները տարբեր պատճառներով պակաս ներգրավվածություն ունեին խորհրդարանի աշխատանքներին կամ բնավ չէին մասնակցում դրանց: Այսպես, օրինակ, Ա. Վռամյանը 1915 թ. ապրիլից մասնակցում էր Վանի ինքնապաշտպանական կոմիտեին և սպանվել էր Բիթլիսի մոտակայքում: Վ. Փափագյանը ևս ավագակային հարձակման զոհ էր դարձել Մուշում: Հայազգի 2 պատգամավորի սպանության մասին լուրը օսմանյան խորհրդարանը նախընտրեց չբարձրաձայնել՝ բացի պատգամավոր Մեհմեդ Սայիդ էֆենդուց, ով լկտիաբար ամբիոնից հայտարարեց. «Թող կրեն իրենց պատիժը»<sup>15</sup>:

Տարբեր հանգամանքներում հաջորդաբար սպանվեցին նաև Էրզրումի պատգամավոր Վ. Սերենգյուլյանը, Դիարբեքիի պատգամավոր Ստ. Չըրաջյանը և Կ. Պոլսի պատգամավոր Գ. Ջոհրապը: Իսկ Բիթլիսի պատգամավոր Մ. Չերազը և Կեսա-

<sup>13</sup> Օսմանեան խորհրդարանին մէջ հայ մէպուսներու խորհրդակցութիւնը. Բարենորոգմանց եւ զինուորագրութեան հարցերը. – «Ժամանակ», 4. V. 1914:

<sup>14</sup> Տե՛ս <http://turksandarmenians.marmara.edu.tr/tr/1914-meclis-i-mebusan-secimlerinde-ermeniler/>

<sup>15</sup> Նույն տեղում:

րիայի պատգամավոր Կ. Թումայանը մինչև 1915 թ. տեղահանության մասին օրենքի հրապարակումը անդարձ մեկնել էին Եվրոպա:

Նշենք, 1916 թ. դեկտեմբերի 11-ին օսմանյան խորհրդարանը որոշում ընդունեց հայազգի պատգամավորների թափուր տեղերը լրացնել նոր պատգամավորներով, սակայն՝ ոչ հայերից: Մինչև 1918 թ. խորհրդարանի լուծարումը խորհրդարանում իրենց գործունեությունը դեռևս շարունակում էին իրականացնել 8 հայ պատգամավորներ՝ Օննիկ Բհսանը, Պետրոս Հալլաջյանը, Տիգրան Պարսամյանը, Մատթեոս Նալբանդյանը, Հակոբ Խրրլաքյանը, Գեղամ Տեր-Կարապետյանը, Արթին Բոշգեզենյանն ու Հովսեփ Մեդեթյանը: Բոլորովին պատահական չէր 2016 թ. ապրիլի 21-ին Թուրքիայի խորհրդարանում քրդամետ ժողովուրդների դեմոկրատական կուսակցության հայազգի պատգամավոր Կարո Փայլանի հայտարարությունն այն մասին, որ ժամանակն է հետաքննություն սկսելու 1908–1915 թթ. ընթացքում օսմանյան խորհրդարանում պատգամավորի պաշտոն զբաղեցրած, ապա 1915 թ. ապրիլ–մայիս ամիսներին ձերբակալված և սպանված 7 հայ պատգամավորի մասին<sup>16</sup>:

Ամփոփելով նշենք, որ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին՝ ի դեմս նորընտիր պատրիարք Զավեն Տեր-Եղիայանի, ծանրագույն պատասխանատվություն էր վերապահված՝ մի կողմից՝ ապահովելու հայազգի թեկնածուների մանդատները երրորդ օսմանյան խորհրդարանում, մյուս կողմից՝ չխաթարելու երիտթուրքական իշխանությունների հետ ունեցած շատ թե քիչ բարիդրացիական հարաբերությունները: Հայոց պատրիարքարանն ակամա դառնում էր արևմտահայության և երիտթուրքական իշխանությունների միջնորդը կամ քաղաքական ներկայացուցիչը, որն իր ժամանակի արտաքին ու ներքին քաղաքական հանգամանքներով պայմանավորված, այն է՝ երիտթուրքերի վարած հայատյաց քաղաքականությունը, հայ քաղաքական կուսակցությունների և առանձին անհատների շահադիտական նկրտումները և այլն, փորձեց հնարավորինս օգտակար լինել արևմտահայության կենսական պահանջները բավարարելու տեսանկյունից:

Սակայն, ինչպես նախորդ օսմանյան խորհրդարանների ընտրություններին, այս անգամ ևս երիտթուրքական իշխանություններին հաջողվեց խաթարել հայերի և մյուս ոչ թուրք ժողովուրդների՝ օրենսդրությամբ վերապահված իրավունքներն ու «բացարձակ մեծամասնությամբ» ղեկավարել նորընտիր օսմանյան խորհրդարանը:

<sup>16</sup> *Տե՛ս* [www.agos.com.tr/am/hvotvadzi/15090/garvo-bahlani-turkagan-khvorhrtaran-timum-nyergahatsryel](http://www.agos.com.tr/am/hvotvadzi/15090/garvo-bahlani-turkagan-khvorhrtaran-timum-nyergahatsryel).

ВЫБОРЫ В ОСМАНСКИЙ ПАРЛАМЕНТ 1914 Г. И АРМЯНСКИЙ ПАТРИАРХАТ  
КОНСТАНТИНОПОЛЯ

СЕРГЕЙ МАНВЕЛЯН

## Резюме

*Ключевые слова: османский парламент, выборы, Армянская избирательная комиссия, Армянский патриархат Константинополя, армянские политические партии.*

Победа над Османской империей в Балканской войне в начале XX в. вселила новую надежду в немусульманские народы (армян, греков и др.), угнетенные в течение многих столетий, на восстановление своих прав.

В 1914 г., в преддверии третьих османских парламентских выборов, была сформирована избирательная комиссия при Константинопольском патриархате Армянской Апостольской Церкви, которая объединила армянские политические партии и представителей католической и протестантской общин. Патриарх Завен Тер-Егиян, с учетом внешних и внутренних политических обстоятельств того времени, а именно арменофобской политики, проводимой младотурками, а также амбиций и личных интересов армянских политических партий и частных лиц, согласно предоставленному ему законодательством праву, лично возглавил организацию избирательного процесса и выдвижение армянских кандидатов.

Решением избирательной комиссии министру юстиции Ибрагим-бейю было направлено ходатайство о том, что соответственно пропорциональному числу армян, живущих в Османской империи, им должно быть предоставлено право избрать 20 депутатов. После долгих переговоров принцип национального выбора был отвергнут, но окончательное соглашение определило избрание депутатов. Вместо 16-ти всего 15 депутатов прошли в Османский парламент: Петрос Галаджян и Григор Зограб (Константинополь), Онник Ихсан (Измир), Степан Чераджян (Диярбакыр), Тигран Барсамян (Себастья), Карапет Томаян (Кесария), Мэтью Налбандян (Сис), Арутюн Бошгезенян (Алеппо), Гегам Тер-Карапетян (Муш), Минас Чераз (Битлис), Якоб Керлакян (Мараш), Вардкес (Ованнес) Серенгулян и Джозеф Медетян (Эрзурум), Аршак Врамян и Ваган Папазян (Ван).

Стоит отметить, что из армянских депутатов, представленных в парламенте, наибольшую активность проявили А. Бошгезенян, Г. Зограб и В. Серенгулян, которые регулярно выступали с трибуны по экономическим, юридическим, военным и общественным вопросам. Другие армянские парламентарии были меньше вовлечены в работу парламента или вообще не участвовали в ней по разным причинам (были убиты, или эмигрировали и др.).

## THE 1914 OTTOMAN PARLIAMENT ELECTIONS AND THE ARMENIAN PATRIARCHATE OF CONSTANTINOPLE

SERGEY MANVELYAN

## Summary

*Key words: Ottoman Parliament, elections, Armenian Voting Committee, Armenian Patriarchate of Constantinople, Armenian Political Parties.*

The victory of the Balkan states over the Ottoman Empire the beginning of the 20th century inspired new hopes among the non-Muslim nations (Armenians, Greeks, etc.) living in the empire for the restoration of their rights.

In 1914, on the threshold of the Third Ottoman Parliamentary elections, an electoral commission was formed under the Patriarchate of Constantinople, which united the Armenian political parties and representatives of Armenian Catholic and Protestant communities. Personally, Zaven Patriarch Ter-Yeghiyan, based on external and internal political circumstances of his time, tried to implement the functions of the nomination of Armenian candidates and the organization of the electoral process, which is reserved by the legislation, the Armenophobic policy of the Young Turks, the mercenary ambitions of the Armenian political parties and individuals.

According to the decision of the Armenian Electoral Commission, a claim was sent to Justice Minister Ibrahim Bey that Armenians should be given the right to elect 20 Armenian nationals in proportion of the number of Armenians living in the Ottoman Empire. Although the national principle of the election was rejected after long negotiations, 15 MPs – Petros Haladjyan and Grigor Zohrab (Constantinople), Onnik Ihsan (Izmir), Stepan Chrajyan (Diyarbakir), Tigran Parsamyan (Sebastia), Garabed Tomayan (Caesarea), Matthew Nalbandyan (Sis), Harutyun Boshgezenyan (Aleppo), Gegham Der-Garabedian (Mush), Minas Cheraz (Bitlis), Hakob Kerlakyen (Marash), Vardges (Hovhannes) Serengulyan and Hovsep Medetyan (Erzurum), Arshak Vramyan and Vahan Papazyan (Van), were elected.

It is worth mentioning that from the Armenian MPs represented in the parliament, the most intensive activities were realized by A. Boshgezenyan, G. Zohrab and V. Serengulyan, who regularly spoke on economic, legal, military and social issues from the rostrum. The other Armenian MPs were less involved in the work of the parliament for various reasons (were murdered, emigrated, etc.) or did not participate in them at all.

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԿՆԻՔՆԵՐՆ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐՈՒՄ\*

ՍԻՐԱՆՈՒՇ ՖԱՀՐԱԴՅԱՆ

Բանալի բառեր՝ վավերագրական ժառանգություն, հայրապետ, Քրիստոս Ամենակալ, Սբ. Երրորդություն, խաչակնքում, կարմրադեղ, կնքամատանի:

*Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցու հոգևոր և նվիրապետական գերագույն իշխանությունը կրող հայրապետների վավերագրական ժառանգության զգալի մասը, որն ամփոփված է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ) “Կաթողիկոսական դիվան” արխիվային ֆոնդում<sup>1</sup>, հարուստ է կնիքների հաստատումներով<sup>2</sup>, որոնք տարբեր ժամանակներում արժանանալով հայագետների<sup>3</sup> հպանցիկ, բայց արժեքավոր դիտողություններին՝ այդուհանդերձ, չեն դիտարկվել որպես առանձին ուսումնասիրության նյութ՝ առավելապես համարվելով փաստաթղթերի վավերացման նշաններ: Մինչդեռ, ի թիվս վավերագրի հաստատման գործառույթի, դրանք ուշագրավ և կարևոր տե-*

<sup>1</sup> ՄՄ-ի արխիվային փաստաթղթերի ամենահին ֆոնդը ներկայացնող “Կաթողիկոսական դիվանը” (այսուհետև՝ ԿԴ) ներառում է XV–XX դդ. Հայ եկեղեցու վերաբերյալ բազմաթիվ արժեքավոր վավերագրեր, որոնք ամփոփված են 1–262 թղթապանակներում: Սույն հոդվածում անդրադարձել ենք այդ ժառանգության միայն մի փոքր մասի՝ XVII–XIX դդ. առանձին հայրապետների կնիքների արտատպություններին՝ ընդգրկված 1–20 թղթապանակներում:

<sup>2</sup> Ինչպես արձանագիր մյուս կրիչների, այնպես էլ կնքադրոշմների դեպքում ժամանակն իր ազդեցությունն է թողել՝ երբեմն խաթարելով դրանց պահպանվածությունը: Ուստի վնասված, վատ դաջված, ինչպես նաև ուղղագրական սահմանված կանոններից շեղումներով ներկայացված կնիքների արձանագրությունների վերծանման համար օգտագործել ենք հետևյալ պայմանական նշանները.

/- նշվում է տողի սկիզբը,

///- անկախ նիշերի քանակից, նշվում է արձանագրության վնասված մասը,

[]- նշվում են կազմողի վերականգնումները,

()- բացվում են հապավումները,

{}- լրացվում են ջնջված տառերը, որոնք հասկացվում են:

Կապգրություններն ու կցագրություններն ընդգծված են:

<sup>3</sup> Ա. Ադամյան. Վրաց Հերակլ Բ. թագավորի և տպագրիչ Պողոս Հովհաննիսյանի պայմանագիրը. – “Բանբեր Մատենադարանի”, 1956, № 3, էջ 116, Բաբգէն Ա. Աթոռակից կաթողիկոս Մեծի տանն Կիլիկիոյ. Պատմութիւն կաթողիկոսաց Կիլիկիոյ (1441-էն մինչև մեր օրերը), Անթիլիսա, 1939, էջ 1373:

ղեկություններ են պարունակում եկեղեցական իրավունքի, կաթողիկոսների գործունեության ու իրավասության սահմանների ուսումնասիրության տեսանկյունից:

Հնավանդության վավերացնող և սրբազնություն հաղորդող միջոցի կենսունակությամբ՝ կնիքը պահպանվեց նաև քրիստոնյա աշխարհում, առանձնապես Հայաստանյայց եկեղեցում՝ ստանալով բազմագործառությանին դրսևորումներ:

Սուրբգրային տեքստերում կնիքի մասին ուղղակի կամ այլաբանական հիշատակություններից բացի, խաչակնքման ծիսական արտահայտչամիջոցով, որով քրիստոնյան Սբ. Խաչի նշանն իր վրա պատկերելով՝ ապավինում է աստվածային գործությանն ու պահպանությանը, այն իր հաստատուն տեղն է գտել ինչպես հոգևոր բարեպաշտական արարողություններում, այնպես և Հայաստանյայց Առաքելական Սբ. Եկեղեցու յոթ խորհուրդների ծիսակարգում: Մասնավորապես, Հիսուս Քրիստոսի մկրտության և Սբ. Հոգով դրոշմվելու խորհրդին հետևող հայ քրիստոնյան, հավատքով ընդունելով աստվածային անտեսանելի այդ շնորհները, ջրով ու մյուռոնով իրագործվող տեսանելի արտաքին ծեսի միջոցով կնքվում է Սբ. Հոգին ընդունելու անկրկնելի խորհրդով:

Հետայսու՝ հայ հոգևորականը, ձգտելով մերձենալ Աստծուն, աստվածային երևույթներին, մինչև իսկ՝ իրերին, իր հոգու պահպանության և լուսավորության անջնջելի կնիքը փոխակերպելով իրեղեն միջոցի, վավերացնում է իր հեղինակությունն ու խոսքի հավաստիությունը՝ մի կողմից կնքամուտով վարագուրելով տեքստը, ապա՝ կարմրադեղով<sup>4</sup> նրան հաղորդելով անքննելիության և վստահության երաշխիք: Այս նոր բնորոշման մեջ այն և՛ արտոնություն է, և՛ արգելք:

Չանտեսելով կնիքը փաստաթղթի ամբողջականության մեջ դիտարկելու կարևորությունը՝ այդուհանդերձ, այս նյութի շրջանակում առաջնային ենք համարում կնիքի՝ իբրև ինքնուրույն սկզբնաղբյուրի քննությունը, դիտարկելով այն իբրև իրավական հուշարձան՝ կարևորելով վավերագրի հաստատման գործառույթը, ապա որպես իշխանության խորհրդանիշ և, վերջապես, որպես հիշյալ ժամանակաշրջանի գեղարվեստական ստեղծագործության հուշարձան:

Մեզանում փաստաթղթին կնիք կցելու կամ այն դրոշմով հաստատելու ավանդույթը վաղեմի պատմություն ունի: Այդ մասին են վկայում 1961 թ. Դվին քաղաքի պեղումների արդյունքում հայտնաբերված մի քանի տասնյակ կավե կնքադրոշմները, որոնք ժամանակին կցված են եղել մագաղաթներին և թվագրվում են V–VII դդ.: Հայտնաբերված կնիքների մեջ եղել են այնպիսիները, որոնք բազմավաստակ գիտնական Կարո Ղաֆադարյանի “հատուկ” բնորոշմամբ դասվել են “կաթողիկոսականների” շարքին. “... մեծազանգված կնիքները միննույն ձևերն ունեն, հետևապես միայն մի մարդ է ունեցել խաչի նշանով այդ կնիքը, իսկ այդ մարդը կարող էր լինել կաթողիկոսը և ոչ այլ ոք”<sup>5</sup>:

<sup>4</sup> Նույն՝ կարմրաներկ կամ կարմիր թանաք (տե՛ս Է. Աղայան. Արդի հայերենի բացատրական բառարան, հ. I, Երևան, 1976, էջ 710):

<sup>5</sup> Կ. Ղաֆադարյան. Դվին քաղաքը և նրա պեղումները II, Երևան, 1982, էջ 132:



Չնայած եկեղեցական իրավունքի տարբեր հուշարձաններում կնիքի մասին եղած բազմաթիվ հիշատակություններին՝ կանոնական իրավունքի որևէ հեղինակի մոտ չենք հանդիպել ո՛չ կնքադրման իրավունքի և ո՛չ վավերական կնիքի մասին հստակ ձևակերպումների: Բայց և այնպես, VII–VIII դդ. Հայ եկեղեցու պատմությանը, ծեսերի ու դավանանքի ուսումնասիրությանը նվիրված «Գիրք Թղթոց» կրոնադավանական ժողովածուում ընդգրկված փաստաթղթերից մեկում հիշատակվում է վավերական կնքամատանու մասին. «Եւ վաւերական մատանի՝ Մանասէ Բասենոյ եպիսկոպոս, եւ Յովհաննէս Ամատունեաց եպիսկոպոս, եւ Գիգ Դաշտկարանի, եւ Մարգիս Չաւրականեան, եւ Վարդապետ Քչկան [որդի] ի վերայ եղին»<sup>6</sup>:

Բացի այդ, ինչպես Արևմուտքում<sup>7</sup>, այնպես էլ մեզանում եկեղեցական իրավունքի ազդեցությամբ՝ հաստատվում է կնիքի իրավական կարգավիճակը՝ որպես փաստաթղթի վավերականության ցուցիչ, որն աստիճանաբար փոխարինելու էր վկաների ցուցմունքին և ինքնագիր ստորագրությանը, որոնք իբրև հաստատման միջոցներ գոյություն ունեին դեռևս անտիկ ժամանակներից:

Վաղեմի սովորության համաձայն, կնիքը դրոշմում էին ստորագրությունից հետո, թղթի դատարկ երեսի վրա, թեպետ փաստաթղթի բնույթով պայմանավորված՝ այս սկզբունքը փոփոխվում էր: Այսպես, հայ եկեղեցական իրավագիտության տեսակետից հայրապետական կոնդակները, որոնք իրավական ուժ ունեցող փաստաթղթեր էին, սովորաբար վավերացվում էին ոչ թե ստորագրությամբ, այլ ճակատային մասում հաստատվող բոլորակ, ճաճանչավոր կնիքով:

Այս առումով ուշագրավ է 1243 թ. Մսում հրավիրված եկեղեցական կանոնադիր ժողովում ընդունված քսանհինգ կանոններից մեկը, որով սահմանվում էր ժողովների կանոնները համարվելու են օրինական, եթե դրանք հրապարակվեն կաթողիկոսի կանոնական կոնդակով<sup>8</sup>: Հետևապես, կոնդակի մաս կազմող և նրա վավերականությունը փաստող կնիքը դիտվում է իբրև վավերագրի իսկականությունը հաստատող իրավական գործիք:

<sup>6</sup> Գիրք Թղթոց, Երուսաղեմ, 1994, ԾԲ, էջ 242:

<sup>7</sup> 1054 թ. Մեծ Մխիզմայից հետո Հռոմի պապը քրիստոնյա Արևմուտքում ձեռք է բերում լիիրավ օրենսդրի և միապետի կարգավիճակ ինչպես կրոնաեկեղեցական, այնպես էլ աշխարհիկ գործերում՝ պապական բազմաբնույթ հրամանագրերի հաշվին ընդլայնելով արևմտյան եկեղեցու կանոնական օրենսգիրքը (տե՛ս В. А. Цыпин. Церковное право. Киев, 2012, с. 93): Հռոմեական կաթողիկե եկեղեցու իրավունքի մեկնաբանները փաստաթղթերի կազմման գործում առաջնորդվում էին պապական սկզբունքներով, որոնց համաձայն միայն նոտարի կողմից կազմված և վավերական կնիքով հաստատված փաստաթուղթը պետք էր համարել օրինական (տե՛ս Н. А. Соболева. Русские печати. М., 1991, с. 28):

<sup>8</sup> Ն. Մեղիք - Թանգեան. Հայոց եկեղեցական իրավունքը, Ա գիրք, Շուշի, 1903, էջ 450:

Անցնելով վկայությունների հաջորդ խմբին՝ նշենք, որ Միմեոն Ա Երևանցի կաթողիկոսի (1763–1780) «Ջամբո» մեծարժեք աշխատության տարբեր էջերում ամենայն մանրամասնությամբ ներկայացված են հայոց հայրապետների թղթագրության առանձնահատկություններն ու դրանցում կնիքի առկայությամբ և հատուկ տեղով պայմանավորված՝ այլոց պատվի արժանացնելու դրսևորումները: Հիշյալ աշխատությունից, մասնավորապես, պարզ է դառնում, որ պարսից, օսմանցի տիրակալներին և նրանց ներկայացուցիչներին թուղթ գրելիս հայոց հայրապետը հետևում էր նրանց կանոններին, գրում օսմաներեն (տաճկերեն)՝ թղթի հետևում իր խոսքից հետո դրոշմելով կարմիր կնիք<sup>9</sup>:

Այլ էր կարգը Ֆրանսիայի և Ռուսաստանի ինքնակալներին դիմելու դեպքում: Սովորաբար նրանց անունը գրվում էր բնագրի վերին մասում իբրև մեծարգության դրսևորում, որին հաջորդում էր «Ծառայ Յիսուս Քրիստոսի» արտահայտությունը, իսկ խոսքի վերջում՝ դրվում փոքրիկ կնիքը<sup>10</sup>:

Այս կարգն իր արտահայտությունն է գտել Հովսեփ Բ Արղության Երկայնաբազուկ կաթողիկոսի (ընտրված, բայց չօծված) 1800 թ. հունիսի 15-ին Ռուսաց կայսրին ուղղված գրության մեջ, որտեղ ոսկետառերով սկսվող «Ա(ստուա)ծապսակ Օգոստ(ոս)ափառ Կայսր և Ինքնակալ Ամենաողորմած Տէր» տողերից հետո կաթողիկոսը ներկայանում է «... Յ(իսուս)ի Ք(րիստոս)ի ծառայ Յովսէփ կաթողիկոս...», հայտնում իր հավատարմությունը Ռուսաց տերությանը, իսկ Գրիգոր Եպիսկոպոսին, որպես իր փոխանորդի (ռուսահայերի առաջնորդ), հանձնում է կայսեր խնամքին<sup>11</sup>: Գրության վերջում նշված է. «Ամենահպատակ աղօթարար Յովսէփ կաթողիկոս և պատրիարք ամենայն Հայոց՝ իշխան Երկայնաբազուկ Արղութեանց ...» և կնքված ութանկյուն, եռատող, կարմիր կնիքով. «Է/ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ/ՌՄԽԹ (1800)» (տե՛ս նկ. 1):

Հունաց պատրիարքին և Հռոմի պապին գրելիս հայոց կաթողիկոսը նրանց դիմում էր «մեծապատիվ եղբայր» ձևով՝ պահպանելով կնքադրման նույն կարգը:

Վրաց և ասորի կաթողիկոսների դեպքում թուղթը բաժանվում էր երկու էջի. մեկում «Յիսուսի Քրիստոսի ծառայ» արտահայտությունից հետո գրվում էր հայոց հայրապետի անունը և դրվում կնիքը, մյուսում՝ նրա անվան դիմաց գրվում էր «Քեզ տեր ... (վրաց կաթողիկոսի անունը)»՝ այս կերպ ընդգծելով երկու կողմերի իրավահավասար իշխանությունը<sup>12</sup>:

<sup>9</sup> Միմեոն կաթողիկոս Երևանցի. Ջամբո (այսուհետև՝ Միմեոն կաթողիկոս Երևանցի), Երևան, 2003, գլուխ Թ, էջ 85:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 87:

<sup>11</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 10, վ. 68:

<sup>12</sup> Միմեոն կաթողիկոս Երևանցի, էջ 88:



Նկ. 1:

Մյուս՝ Աղվանից (Գանձասարի), Աղթամարի և Սսի (Կիլիկիո) կաթողիկոսներին գրելիս Էջմիածնի կաթողիկոսը կնիքը դնում էր թղթի ճակատային մասում, ապա խոսքը սկսում «Յիսուսի Քրիստոսի ծառայ» արտահայտությամբ, որին հաջորդում էր իր անունը, իսկ նրանց անվան միայն առաջին տառը կարմիրով գրելով՝ դրվում ներքևում<sup>13</sup>:

Հայոց առաջին եպիսկոպոսապետ Գրիգոր Լուսավորչից սկսած, ով իր հոգևոր գործունեությունը հաստատում էր խաչանիշ կնքամատանիով, հաջորդող հայրապետները հետևելով նրան, իբրև օրինակելի և ճշմարիտ հայրապետության մարմնավորողի, իրենց խոսքը ևս վավերացնում էին մատանու կնիքով<sup>14</sup>: Հետևապես, կաթողիկոսական մատանին նույնն էր թե կաթողիկոսի կնիքը<sup>15</sup>: Միջնադարյան հեղինակ Գրիգոր Տաթևացին նույնպես անդրադառնում է կնքամատանիների գործածությանը՝ հիշատակելով մեծ և փոքր «մատանեհար» եզրույթը<sup>16</sup>: «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» բառարանում «մատանեհար, մատանահար» տարբերակներով ներկայացված այս բառիմաստը ստուգաբանվում է իբրև «մատանի, որ հարկանե, դրոշմե՛ զկնիք, կնիք մատանույ՝»<sup>17</sup>:

Տաթևացու մեկնությամբ՝ կնքողի գիրն ու պատկերն արտահայտող փոքր մատանեհարը մարդու ստեղծածն էր, իսկ մեծը, որ աներևույթ Հայր Աստծո պատկերն ու էությունն ուներ, ստեղծողն էր՝ նույն ինքը Հիսուս Քրիստոսը, ով մարմնով մատանեհար և կնիք դարձավ մարդկության համար: Եթե մոմը կամ այլ նյութ կարող էր կորցնել տպավորած

<sup>13</sup> Նույն տեղում:

<sup>14</sup> Ըստ Ազաթանգեղոսի՝ Գրիգոր Լուսավորիչը Սբ. Հովհաննիսյանց կույսերի աճյունները երկաթազամ տապաններում ամփոփելուց հետո դրանք կնքում է քրիստոսանշան կնիքով՝ հաղորդելով անձեռնմխելիության գործառույթ. տե՛ս Ա. զ ա թ ա ն գ ե ղ ո ս. Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և ծանոթ. Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 427:

<sup>15</sup> Ստ. Մալխասյանց. Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ Ստ. Մալխասյանց), հ. II, Երևան, 1944, էջ 450:

<sup>16</sup> Գրիգոր Տաթևացի. Գիրք Քարոզութեան որ կոչի Ձմեռան հատոր (այսուհետև՝ Գրիգոր Տաթևացի), Երուսաղեմ, 1998, գլուխ ԺԱ, էջ 67:

<sup>17</sup> Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հ. II, Վենետիկ, 1837, էջ 213:

պատկերը, մատնեհարն առմիշտ էր հաստատում այն: Այսպես, անփոփոխելի մարդացավ Տեր մեր Հիսուս Քրիստոս, որ եթե նույնիսկ մարդիկ ուրանան իրեն, ինքը հաստատուն կմնա: Ինչպես մեկն է մատնեհարը, իսկ մոմը կամ այլ նյութ, որ տպավորում է՝ բազում, այնպես մեկն է Քրիստոս Աստված մարդացյալ, իսկ քրիստոնյաները, ովքեր կնքված են նրա զորությամբ՝ բազում: Այլ են ոմանք, ասես քար, որ ամեննին չեն տպավորում կնիքն այս, այսինքն՝ խստասիրտ, որ չի ազդում խոսքը Քրիստոսի: Այլ են ոմանք, որպես մոմ տաքացած, որ կնքվում են մատնեհարով Մեծ ու հավերժաբար պահում այն իրենց սրտում՝ անսալով աստվածաշնչյան միտքը. «Դիր զիս իբրեւ զկնիք ի սրտի քում, եւ իբրեւ զմատանի ի վերայ բազկի քո ...»<sup>18</sup>:

Մատանին, հայ հոգևորականի համար զարդ լինելուց բացի, հոգևոր բարձր իշխանության և հեղինակության խորհրդանիշ էր: Ուստի պատահական չէ, որ հայ եկեղեցական կանոնագրքերում, մասնավորապես, կաթողիկոսի ընտրության և օծման արարողակարգում, այն հիշատակվում է իբրև կարևոր բաղկացուցիչ. «Ժողովին հրամանաւ արքայի արքեպիսկոպոսունք, եպիսկոպոսունք ..., իւրաքանչիւր ոք ի նոցանէ տայ զանուն միոյ ուրուք յեպիսկոպոսաց կամ՝ վարդապետաց ... և զանուանս գրով տան թագաւորին ընդ կնքով իւրեանց, և եթէ բազումք իցեն վիճակեալքն, հրամայէ թագաւորն, զի միաբանեսցին ի վերայ երկուց կամ երից և ապա թագաւորն, հանդերձ ժողովով իւրով, ընտրէ յերից ի նոցանէ զմին, զոր կամի և յաւուր օծութեան ինքնին թագաւորն ծունր կրկնեալ դնէ զմատանին ի ձեռս նորա՝ համբուրելով զաջ նորին: Միսիթ. կայթ.»<sup>19</sup>:


Կնքամատանու մասին մի ուշագրավ վկայություն էլ պահպանվել է Միմեոն Ա Երևանցի կաթողիկոսի ընդհանրական կոնդակի գրության օրինակում<sup>20</sup>, որտեղ 1774 թ. հոկտեմբերի 19-ին Թոխասեցի Հարություն վարդապետին եպիսկոպոս օծելիս ի թիվս ծիսական հանդերձանքի հիշատակվում է «մաքուր» մատանին. «... շնորհելով զեմփորոնն խաչանման ի յուսն եւ եղի զականակուր թագ ի գլուխն եւ ետու զհրաման Հայրապետական իշխանութեամբս իմով ի ձեռնադրել զքահանայս եւ զայլ աստիճանաւորս ըստ պահանջման հարկին եւ ետու զմաքուր մատանին ի մատն, եւ զգաւազան իշխանական ի ձեռն եւ զսուրբ Աւետարանն փրկչական ի գիրկն առ ի միսիթարել զժողովուրդսն Քրիստոսի իրատել զթիրեալսն, եւ յանդամս Քրիստոսի յօդել զզոջացեալսն եւ որոշել զանգեղսն եւ զհերձուածօղսն ի հօտէն Քրիստոսի ...» (ընդգծումը մերն է – Ս. Ֆ.): Մեր ուշադրությանն արժանացած «մաքուր» բառը հուշում և վկայում է այն մասին, որ հոգևորականի աստիճանաշնորհման ժամանակ տրվում էր նոր, անվանակիր մատանի:

<sup>18</sup> Տե՛ս Գրիգոր Տաթևացի, էջ 68, Երգ Երգոց, Ը 6:

<sup>19</sup> Տ. Յակոբ աւագ քահանայ Սուրէնեաց. Կաթողիկոսի ընտրութիւնը, Մոսկվա, 1883, էջ 42, ծնթ. 1:

<sup>20</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 3, վ. 16:

Փաստաթղթերը կնքամատանիով վավերացնելու ավանդույթի կենսունակությունը տեսնում ենք Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի 1739–1759 թթ. հարկերի և ծախսերի վերաբերյալ վարդապետների կողմից գրված հաշվեմատյանում, որի տարբեր էջերում առկա են իրարահաջորդ Ղազար Ա Ջահկեցի (1737–1751), Մինաս Ա Ակնեցի (1751–1753) և Աղեքսանդր Բ Բյուզանդացի (1753–1755) կաթողիկոսների կնիք-վավերացումները. “Է / ՂԱ-ԶԱԸ ԿԱԹՈՂԻԿՈՍ / ՌՃՁԶ (1737)”, “Է / ՄԻՆԱՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ / ԹՎ(ԻՆ) ՌՄ (1751)”, “Ք(ԸԻՍ-ՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) / ԱՂԵՔՍԱՆԴՐ ԿԱԹՈՂԻԿՈՍ / ՌՄԲ (1753)”<sup>21</sup>: Ներկայացված թվակիր կնիքները մեծապես նպաստում են հնարավորինս ճշգրտել փաստաթղթի ժամանակը վավերագրում թվականի բացակայության դեպքում, երբեմն էլ օգնում են պատմական վերակազմության հարցերում:




Նկ. 2:

Այսպես, Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի (1633–1655) նամակը, որով հայրապետը պահանջում է տեր Կարապետից շտապ իրեն հասցնել “Քարոզգիրքը”, վավերացված է 1.7 սմ տրամագծով կարմիր կնիքով, որի եզրային արձանագրությունը հիշատակում է՝ “Է: ՇՆՈՐՀԻԻ ԱՄԵՆԱՅԶՕՐ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ Տ(ԵԱՌ)Ն Փ(Ի)Լ(Ի)Ղ(Ո)Ս Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)ԿՈՍ”, միջնամասում՝ “[Հ]ԱՅ(Ո)Յ ԹՎԻՆ ՌՁԳ (1634)”<sup>22</sup>: Վավերաթուղթն անթվակիր է, սակայն կնիքի առկայությամբ հնարավոր է այն մոտավոր թվագրել 1633–1635 թթ. (տե՛ս նկ. 2): Բացի այս, առանձնացրել ենք հիշյալ կաթողիկոսի՝ Վրաստանի Գորի քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցու քահանաներին ու ունեորներին հասցեագրված կոնդակի գրության օրինակը, որով հայրապետը հանդիմանում է նրանց ինքնակամ որոշումներ կայացնելու, եկեղեցում խաչօրհների սեղանը տեղաշարժելու և այլ գործերի համար: Գրության ճակատային մասում առկա է կաթողիկոսի՝ 2 սմ տրամագծով կարմիր դրոշմը, որի եզրային արձանագրությունը հիշատակում է՝ “Տ(Է)Ր ՓԻԼ(Ի)Ղ(Ո)Ս Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(Ո)Ս ԱՄ(ԵՆԱՅՆ) ՀԱՅ(Ո)Յ Թ(ՎԻՆ) ՌՁԲ (1633), միջնամասում՝ “Է / Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(-

<sup>21</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վ. 13:

<sup>22</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վ. 38:

ՐԲՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ)<sup>23</sup> (տե՛ս նկ. 3): Թեև ներկայացված երկու կնքադրոշմները բովանդակային ակնհայտ տարբերությամբ չեն առանձնանում, սակայն ինքնին ուշագրավ է այն հանգամանքը, որ տարբեր բնույթի փաստաթղթեր վավերացնելու համար հիշյալ կաթողիկոսը տարատեսակ կնիքներ է օգտագործել:



Նկ. 3:

Հաջորդող օրինակները ցույց են տալիս, թե այս կանոններն ինչպիսի երանգներ են ստանում տարբեր կաթողիկոսների կնիքներում:


Արտատպությունների մեջ կան այնպիսիք, որոնցում հայրապետը միննույն կնիքում ներկայանում է ինչպես վարդապետական, այնպես էլ կաթողիկոսական տիտղոսներով: Հիշատակելի է 1660 թ. Հակոբ Դ Չուղայեցի կաթողիկոսի (1655–1680) գրած նամակը Գորի քաղաքի տանուտեր Գողերձուն և համայն ժողովրդին (տե՛ս նկ. 4): Փաստաթղթի դիմերեսը զարդարող 2.3 սմ տրամագծով կարմիր կնքադրոշմի եզրային շրջագծում կարդում ենք՝ «Է: Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԲՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) Յ(Ա)Կ(Ո)Բ Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(Ո)Ս ԱԱ(ԵՆԱՅՆ) Հ(Ա)Յ(Ո)Ց ՌՃԴ (1655)», միջնամասում՝ «Յ(Ա)ԿՈԲ/ Կ(ԱՐ)ՄԻԿ(Ա)Ղ(Ե)Տ»<sup>24</sup>:

Կնիքը կարևոր էր իբրև նույնականացման գործիք, հետևապես և՛ անհատները, և՛ հոգևորականներն այն փոխում էին միայն անհրաժեշտության դեպքում. հոգևորականների պարագայում, եթե հիերարխիկ աստիճանակարգում կարգավիճակի փոփոխություն էր տեղի ունենում: Այս դեպքում կնիքի տեքստը և պատկերը կարող էին փոփոխվել: Փոփոխության երկրորդ պատճառը մեխանիկական վնասվածքն էր կամ կորուստը: Այս պարագայում բախվում ենք իրարամերժ իրողության, երբ կաթողիկոսը շարունակում է կնիքում պահպանել վարդապետական աստիճանը: Քննության առնելով հայերեն տարբեր բառարաններում արտահայտված «վարդապետ» բառի իմաստը՝ հասկանալի է դառնում, որ հոգևորականին առանձին օրհնությամբ և վարդապետական գավազանով շնորհվող գիտական աստիճան լինելուց բացի, այն նախևառաջ հին իմաս-

<sup>23</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վ. 50:

<sup>24</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վ. 29:

տով նշանակել է ուսուցիչ, վարժապետ, ուսուցչապետ: Հետևապես, կարելի է նշել, որ որոշ հայրապետներ հոգևոր աստիճանակարգում ձեռք բերելով եկեղեցական բարձրագույն կոչում՝ նոր պատրաստվող կնիքներում ցանկանում էին ընդգծել իրենց՝ իբրև քառոզի, ուսուցչի կարևոր գործառույթը:



Նկ. 4:

Ինչպես երևում է նշված օրինակներից, հայրապետական կնիքներում պահպանվում են «Է» (Աստուած, Աստուծով, յանուն Աստծու)<sup>25</sup> և «Յիսուսի Քրիստոսի ծառայ» բանաձևումները, ամբողջությամբ կամ հապավված տարբերակով ներկայացվում կնքողի անունը, գործածվում կանոնական դարձած թվագրման համակարգերն ու ներկայացնում XVIII դ. ընդհանրացած «Կաթողիկոս Ամենայն Հայոց» տիտղոսը, որը փոխարինում էր մինչ այդ գործածվող «Կաթողիկոս Հայոց» կամ «Հայոց Մեծաց» տիտղոսներին<sup>26</sup>:

Որքան էլ կարևորենք կնիքի՝ իբրև սկզբնաղբյուրի դերը, այդուհանդերձ պատահում է, երբ դրանում տեղ գտած արձանագրության բովանդակությունը պետք է վիճարկել: Այս առումով ուշագրավ է վավերագրում իբրև կաթողիկոս հիշատակված Ստեփաննոսի՝ 1696 թ. գրած կոնդակը, որը ժամանակին դիտվել է իբրև բնօրինակ: Իրականում այն գրության օրինակ է՝ կոնդակին հատուկ կանոնական կառուցվածք և համապատասխան նկարագարողում չունենալու հիմնավորմամբ<sup>27</sup>: Վավերագրի՝ «Յիսուսի Քրիստոսի ծառայ Ստեփաննոս կաթողիկոս Ամենայն Հայոց եւ պատրիարք Վաղարշա-

<sup>25</sup> Տե՛ս Մտ. Մալխասյանց, էջ 44:

<sup>26</sup> Տե՛ս Ա. Բոգոյան. «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո. – «Էջմիածին», 1997, Ժ, էջ 72:

<sup>27</sup> Հիշյալ փաստաթղթով Ստեփաննոս կաթողիկոսը դիմում է Տաթևի թեմի և վիճակի, «Եղեգեաց Չորու» առաջնորդներին, հոգևորականներին, իշխանավորներին և, առհասարակ, ժողովրդին՝ նախ՝ հիշեցնելով, որ Սբ. Գևորգը մյուս վանքերի նման թեմ ու վիճակ չունի ու հիվանդանոց է, որտեղ «գործիկներ ու ուրուկներ» են ապրում, և ըստ այդմ՝ վանքի ծախսերը շատ են, ապա հորդորում է սիրով ընդունել ու առատ նվիրաբերություններ անել Սբ. Գևորգի ժողովարարներին (տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վ. 41):

պատու գերագահ և գերապատիւ քրովբէախումբ և սրովբէապար ք(րիստո)սաւէջ սրբոյ և մեծի Աթոռոյս Էջմիածնի ...” տողերին նախորդում է 1.8 սմ տրամագծով, փոքր-ինչ դժվար ընթեռնելի կնքադրոշմը, որի քառասող արձանագրությունն ունի հետևյալ բովանդակությունը. “Յ(ԻՍՈՒՄ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի /Մ(Ա)Ռ(ԱՅ) ՍՏԵՓ/ԱՆՈՍ Վ(ԱՐ)Դ(Ա)Պ(Ե)Տ /ԹՎ(ԻՆ) ՌՃԹ (1660)” (տե՛ս նկ. 5):



Նկ. 5:

Այստեղ մեր ուշադրությունը գրավել է ինչպես կնքողի ինքնությունն ու արտահայտված տիտղոսը, այնպես էլ գրության թվականը: Ինչպես հայտնի է, 1691–1705 թթ. Ամենայն հայոց կաթողիկոսը Նահապետ Ա Եղեւսացին (Ուռուխայեցի) էր: Մինչդեռ վավերագրում հստակ գրված է “Ստեփաննոս կաթողիկոս”, իսկ թվականը և գրության վայրը նշված է՝ “Գրեցաւ ի թուին ՌՃԽԵ (1696) դեկտեմբեր ամսոյ Ժ (10) ի դրան Սբ. Անանիայի առաքելոյ յանապատիս”: Ենթադրվում է, որ հիշյալ Ստեփաննոսը Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի առաջնորդ և Պարսկաստանի հայոց արքեպիսկոպոս Ստեփաննոս Ջուղայեցին է, ով գահընկեց անելով Նահապետ Ա Եղեւսացուն՝ 1695 թ. ժամանում է Էջմիածին և կաթողիկոս կարգվում: Սակայն տաս ամիս անց Նահապետ Ա Եղեւսացին, Իրանի շահ Սուլթան Հուսեյնի օժանդակությամբ, գահընկեց է անում նրան և վերականգնում կաթողիկոսական գահը: Նույնիսկ բացահայտելով կնքատիրոջ ինքնությունը՝ մեզ համար անորոշ է մնում գրության թվականը: Չէ որ հիշատակվող Ստեփաննոսն ընտրվել և կառավարել է 1695 թ. ապրիլից 1696 թ. փետրվարը<sup>28</sup>: Մինչդեռ գրությունը “1696 թվականի դեկտեմբեր” թվագրությամբ է: Ստացվում է, որ նույնիսկ գահընկեց լինելուց հետո Ստեփաննոսի կամ գուցե նրա համախոհների կողմից կնիքն օգտագործվել է: Եվ վերջապես, կան օրինակներ, երբ կաթողիկոսը միննույն կնիքում ներկայանում է վարդապետական-կաթողիկոսական տիտղոսներով, սակայն, ինչպես տեսնում ենք, Ստեփաննոսը կնիքում ներկայանում է միայն իբրև վարդապետ, ինչը, հավանաբար, պայ-

<sup>28</sup> Մ. Օրմա նե ա ն. Ազգապատում (այսուհետև՝ Մ. Օրմա նե ա ն), հ. Բ, Կ. Պոլիս, 1914, էջ 1833–1836:



մանավորված էր կաթողիկոսական աթոռում չհաստատվելով և համապատասխան նոր կնիք չունենալով:


Կաթողիկոսները կնիքներն օգտագործում էին, ինչպես հայտնի է, կանոնագրեր, արտոնագրեր, նամակներ, նվիրատվական և այլ բնույթի գործարքներ, իրավական համաձայնագրեր, կոնդակներ հաստատելու համար: Վավերագրերի այսպիսի տարատեսակությամբ էլ պայմանավորված էր միննույն կաթողիկոսի կողմից տարբեր կնիքների գործածումը: Նյութի քննությունը հնարավորություն է տալիս նաև այն միտքն արտահայտել, որ նվազ պաշտոնականություն ենթադրող փաստաթղթերը կնքում էին մատանու կնիքով: Այսպես, Դանիել Ա Սուրմառեցի կաթողիկոսի (1807–1808)՝ Կ. Պոլսի Մանվել վարդապետին 1802 թ. հուլիսի 3-ին ուղղված գրությունը հաստատված է “Է /ԷԱ-ՆԻԷԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ /ՌՄԾ (1801)” արձանագրությամբ կնքամատանիով<sup>29</sup>: Ենթադրում ենք՝ հիշյալ կաթողիկոսի աթոռակալության պաշտոնական տարեթվերի, փաստաթղթի թվագրության և կնիքի թվականի միջև տարբերությունները պայմանավորված են “Դավիթ-Դանիել”-յան՝ Էջմիածնի գահի համար երկու կաթողիկոսների մղած պայքարով<sup>30</sup>: Եվ, ինչպես նկատում ենք, 1802 թ. մայիս 25-ին Բագրևանդի Երեք Խորան եկեղեցում օծվելուց հետո, Դանիելը, թեև այդպես էլ որպես հայոց կաթողիկոս Էջմիածին չի հասնում, այդուհանդերձ, արդեն այդ ժամանակ կիրառում էր կաթողիկոսական պատվատիտղոսով մատանի կնիք:

Այլ էր կարգը կոնդակների պարագայում: Առանձնահատուկ կառուցվածքով, հարուստ պատկերազարդումներով և զարդագիր տառերով այսպիսի վավերագրերը հաստատելիս՝ կաթողիկոսները կիրառում էին ավանդական կնքամատանու մակերեսը գերազանցող, ինչպես նաև տեխնիկական ճշգրիտ պատրաստվածությամբ կնիք: Այսպես է կնքված հիշյալ Դանիել կաթողիկոսի՝ Եփրեմ արքեպիսկոպոսին, Ղրիմի ու այլ տեղերի հայերին ուղղված օրհնության անդրանիկ կոնդակը<sup>31</sup>: Կաթողիկոսի 4 սմ տրամագծով կարմիր կնքադրոշմի բոլորագիծ արձանագրությունը հիշատակում է՝ “Է: Ք(ԸԲՍ-ՏՈՍ)Ի Յ(ԲՍՈՒԲ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) ԴԱՆԻԷԼ ԿԱԹ(Ո)Ղ(Ի)ԿՈՍ ԱԱ(ԵՆԱՅՆ) Հ(Ա)ՅՈՑ ՌՄԾ (1801)”, իսկ արտատպության կենտրոնական դաշտն առանձնանում է Սբ. Երրորդության պատկերազրությամբ (տե՛ս նկ. 6):

<sup>29</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 13, վ. 281:

<sup>30</sup> Տե՛ս Ս. Օրմա ն ե ա ն, էջ 2290–2291:

<sup>31</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 12, վ. 115:



Նկ. 6:

Եթե կնիքներում արտահայտված արձանագրությունների ընթերցմամբ հնարավոր է պարզել հայրապետների անունները, կարգավիճակն ու իրավական հնարավորությունները, ապա դրանցում արտահայտված քրիստոնեական խորհրդապատկերները թույլ են տալիս ուսումնասիրել փոքր մակերեսում կատարված պատկերագրական արվեստի առանձնահատկությունները, բացահայտել քրիստոնեության մեջ կնիքի խորհրդարանության արմատներն ու հայրապետների ինքնարտահայտման ողջ ներկայակերպ: Այս ընկալումով մեր ուսումնասիրած կնիքներում միանձնյա կամ իբրև կոմպոզիցիայի մաս առավել հաճախ հանդիպում է Քրիստոսի պատկերը, որով իշխանություն էր արտոնվում հայրապետին՝ իբրև գերագույն հոգևոր առաջնորդի:

Ինքնատիպ պատկերագրությամբ առանձնանում է Եղիազար կաթողիկոսի (1681–1691)՝ 4 սմ տրամագծով կնքադրոշմը, որով հայրապետը վավերացրել է 1682 թ. հոկտեմբերի 13-ին գրած կոնդակի գրության օրինակը<sup>32</sup>: Կնիքի շրջագծով ընթերցում ենք “Է: Յ(ԻՍՈՒՍ)Ի Ք(ՐԻՍՏՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) Տ(Է)Ր ԵՂԻ(Ա)Զ(Ա)Ր Կ(Ա)Թ(Ո)Ղ(Ի)Կ(Ո)Ս ԱՄ(ԵՆԱՅՆ) Հ(Ա)Յ(Ո)Ց ԵՐ ԱԹ(Ո)Ռ(Ա)ԿԱԼ ՍՈՒՐԲ ԱՌԱՔԷԼՈՅՍ” արձանագրությունը, որին հաջորդող պատկերագրությունը ներկայացնում է լուսապսակով, արտահայտված մորուքով Քրիստոսին՝ ձախ կողմում՝ “Տ(ԵԱՌ)Ն”, աջում՝ “ԵԸ(ՈՒՍԱ)ՂԷՍ” մակագրությամբ: Հիսուսից ներքև երկու հրեշտակներ են պատկերված, որոնցից մեկը բռնել է կաթողիկոսական գավազանը, մյուսի ձեռքը պարզած է առ Քրիստոս (տե՛ս նկ. 7):

Պատկերագրական այլ տիպ է ներկայացնում Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսի՝ 1724 թ. հունիսի 1-ին գրած բնագիր կոնդակի 4,5 սմ տրամագծով կնիքը<sup>33</sup>: Շրջանաձև արձանագրությունում Պարսկաստանի Համադան քաղաքից սերող հոգևոր

<sup>32</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 5, վ. 48:

<sup>33</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վ. 42:

րականի վարդապետական, ապա կաթողիկոսական տիտղոսների հիշատակությանը հաջորդում է Քրիստոսի իջման և Վաղարշապատ հայոց



Նկ. 7:


թագավորական քաղաքում Մբ. Էջմիածնի հիմնումը վկայակոչող արձանագրություն. միջնամասում՝ “Յ(ԲՍՈՒՍ)Ի Ք(ԲՄՍՈՍ)Ի Ծ(Ա)Ռ(ԱՅ) Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՍ(Ո)ԻՐ Վ(ԱՐ)Դ(Ա)Պ(Ե)Տ ՀԱՄԱՍ(Ա)ՆՅՈՒ”, շրջանաձև՝ “Տ(Է)Ր Ա(ՍՏՈՒԱ)ԾԱՍ(Ո)ԻՐ Կ(Ա)Թ(Ո)Ղ(Բ)Կ(Ո)Ս ԱԱ(ԵՆԱՅՆ) Հ(Ա)Յ(Ո)Ց և Պ(Ա)ՏՐ(ԲԱՐ)Գ Վ(Ա)Ղ(Ա)ՐՇ(Ա)Պ(Ա)Տ(Ո)Ի Ս(ՈՒՐ)Բ ԱԹ(Ո)Ռ(ՈՅ)Ն ԷՋՍ(ԲԱ)ԾՆ(ԱՅ) ՌՃԿԴ (1715)”: Արձանագրային մասն ամբողջանում է պատկերագրությամբ: Կնիքի եզրային սահմանը բոլորում են տասներկու առաքյալների գլուխները: Դեմքերից ոչ բոլորն են դիմահայաց, այդուհանդերձ, դրանք տարբերվում են դիմագծերի բազմազանությամբ և դեպի Քրիստոսն ուղղված հայացքի ընդգծված արտահայտչականությամբ: Առաքյալների շրջագծի վերին կենտրոնական հատվածում աղավանակերպ Մբ. Հոգին է, ստորին կենտրոնական մասում վարդյակ է պատկերված: Քրիստոսի՝ մինչև գոտկատեղը ներկայացված պատկերն արտահայտվել է կենտրոնում: Մեր առջև ներկայանում է Քրիստոս Ամենակալը՝ լուսապսակով, աջ ձեռքը օրհնող դիրքով, ձախում՝ կրծքին պահելով Ավետարանը (տե՛ս նկ. 8):

Պատկերագրական նույն տիպը, փոքր-ինչ տարբեր լուծումով, արտահայտվել է Գառնու գավառի Աղջոցվանք գյուղից սերող Մելքիսեթ կաթողիկոսի (1593–1624 թթ.)<sup>34</sup> կոնդակի օրինակ գրությունը<sup>35</sup> հաստատած 3.8 սմ տրամագծով կնքադրոշմում, որի վերին հատվածը բացակայում է, ուստի պատկերն ամբողջական չէ: Դրոշմվածքի բոլոր-

<sup>34</sup> Տե՛ս Առաքել Դավրիժեցի. Պատմություն, Երևան, 1988, էջ 18, 343:

<sup>35</sup> “Տեր Մելքիսեթ կաթողիկոս ամենայն հայոց և պատրեարք Վաղարշապատոյ սրբոյ Աթոռէս Էջմիածնայ” տողերով սկսվող փաստաթուղթը ներկայացնում է Մելքիսեթ կաթողիկոսի օրհնության ու պահպանության կոնդակի օրինակ գրությունը՝ հասցեագրված Գրիգոր և Կարապետ քահանաներին, ինչպես նաև պարոն՝ Թաղիին: Հայտնում է, որ Ղազար քահանայի ծուխը տվել են Կարապետ քահանային (տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վ. 49):

րաձև արձանագրությունը հիշատակում է՝ “/// [Մ]ԷԼՔԻՍԷԹ ԿԱԹՈՂԻԿՈՍ Է ԱԱ(Ե-ՆԱՅՆ) ՀԱՅՈՑ ///”: Կնիքի շրջագիծը բոլորող աշակերտները, ովքեր միավորվում են դիմագծերի միօրինակությամբ, ինն են, ինչը պայմանավորված է կնիքի ոչ ամբողջական պահպանվածությամբ:



Նկ. 8:

Հորինվածքի կենտրոնում Աստծո պատկերն է՝ ձեռքերը խաչած, աջ կողմում՝ “Տ(Է)Ը”, ձախ կողմում՝ “Ա(ՍՏՈՒԱ)Ծ” մակագրությամբ (տե՛ս նկ. 9):



Նկ. 9:

Քրիստոս Ամենակալի կերպարը, իբրև ամենագոր տիրակալի, բացարձակ իշխանության խորհրդանիշի, իր արտացոլումն է գտել 1737–1751 թթ. աթոռակալած Ղազար Ա Չահկեցի հայրապետի՝ 1750 թ. Չորագյուղի ժողովրդին գրած բնագիր կոնդակի ճակատային կնիքում<sup>36</sup>: Շրջանաձև արձանագրությունը հիշատակում է՝ “Է: ՇՆՈՐՀԻԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ Տ(Է)Ը ՂԱԶԱՐ Հ(Ա)ՅԸԱՊ(Ե)Տ ԱԱ(ԵՆԱՅՆ) ՀԱ(Յ)ՈՑ ՌՃՁԶ (1737)”: Ապա հորինվածքի կենտրոնում ներկայացված է Հիսուս Քրիստոսի դիմահայաց կիսանդրին՝ լուսապսակով, կարճ մորուքով, հստակ արտահայտված դիմագծերով. պատկերից

<sup>36</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 1, վ. 20:

ձախ՝ «Յ(ԲՍՈՒ)Մ», աջ՝ «Ք(ԸԲՍՏՈ)Մ», միջնամասում՝ «///» մակագրությամբ: Քրիստոսի աջ ձեռքը պատկերված է օրհնելու կարգով՝ մատների որոշակի դասավորությամբ, որտեղ բաց մատները խորհրդանշում են Մբ. Երրորդությունը, իսկ մյուս երկուսը՝ Քրիստոսի՝ կատարյալ Աստված և կատարյալ մարդ լինելը (տե՛ս նկ. 10):



Նկ. 10:

Մինչև ուները թափվող մազերով, արտահայտված մորուքով Քրիստոսի պատկերը, զրեթե նույն մեկնաբանությամբ, ներկայացվել է Աղվանից Բարայել կաթողիկոսի շրջաբերական կոնդակը<sup>37</sup> հաստատած կնիքում: Արձանագրությունը բոլորաձև է՝ «Է: Յ(ԲՍՈՒ)Ի Ք(ԸԲՍՏՈ)Ի Ծ(ԱՌ(ԱՅ) ԻՍԸՍՅԷԼ Կ(Ա)Թ(Ո)ՂՈՒ Կ(Ո)Ս ԱՂՈՒԱՆԷՑ ՌՄԺ (1761)»: Պատկերագրությունը նույնն է, ինչ նախորդ կնիքադրոշմում, միայն այն տարբերությամբ, որ Քրիստոսն օրհնում է կրծքի դիմաց, հորիզոնական դիրքով պարզած ձախ ձեռքով՝ Ավետարանը պահելով աջում: Այս մոտեցումը, իհարկե, օրինաչափ չէ, այլ՝ կնիքը պատրաստողի սխալ արտաստության արդյունք:

<sup>37</sup> Աղվանից ժողովրդին ուղղված հիշյալ շրջաբերական կոնդակով 1728–1763 թթ. աթոռակալած Բարայել կաթողիկոսը [տե՛ս Ա. Մանուշարյան. Աղվանից կաթողիկոսների գավազանագրքի վիճագրագիտական լրացումներ ու ճշգրտումներ. – «Հայագիտության հարցեր», 2 (8), Երևան, 2016, էջ 93, նաև Ա. Մաղալյան. Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների գավազանագիրքը. – «ՊԲՀ», 2008, № 3, էջ 271] հայտնում է, որ Ստեփանոս Նախավկայի վանքն ավերվել է աղա Մահմադ խանի արշավանքից: Ուղարկում է Ղուկաս վարդապետին՝ վանքի վերանորոգման համար գումար հավաքելու: Վերջում, փաստաթղթի ձախ անկյունում, առկա է կոնդակի թվականը հստակ արտահայտող երկտող. «Գրեցաւ օրհնութեան եւ շրջաբեր[ը]ական կօնտակս ի ՌՄԽԷ (1798) թուին. առ դռան սրբոյ Աթոռոյս Գրիգորիսի» (տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 8, վ. 85): Ստացվում է, որ կաթողիկոսի աթոռակալության տարեթվերի, կնիքի՝ 1761 թ. և կոնդակի՝ 1798 թ. միջև կա ժամանակագրական անհամապատասխանություն: Դժվարանում ենք բացատրել, թե ինչպե՞ս աթոռակալությունից տասներկու տարի անց Բարայելը կարող էր հանդես գալ որպես կաթողիկոս:

Այլ է Քրիստոսի պատկերը Հովսեփ Բ Արդույթյան Երկայնաբազուկ կաթողիկոսի կնքադրոշմում, որով հայրապետը հաստատել է 1800 թ. դեկտեմբերի 8-ին գրած հորդորական կոնդակի օրինակը՝ ուղղված դրինաբնակ հայերին, հայկական հատուկ իրավաբան հաստատելու և նրանով կառավարվելու մասին<sup>38</sup>: 4.8 սմ տրամագծով կնիքի եզրային արձանագրությունը հիշատակում է կնքատիրոջ անունն ու կարգավիճակը՝ «Է: ՇՆՈՐՀԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ Տ(Է)Ր ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՍ(ԵՆԱՅՆ) ՀԱՅՈՑ ՌՄԽԹ (1800)», ապա հորինվածքի կենտրոնում պատկերված է Քրիստոսը՝ ճաճանչավոր լուսապսակով, մեջտեղից բացված մազերով, արտահայտված մորուքով. պատկերից ձախ՝ «Յ(ԻՍՈՒ)Ս», աջ՝ «Ք(ՐԻՍՏՈ)Ս» մակագրությամբ, աջը օրհնելու կարգով՝ ձախում պահելով աշխարհի խորհրդանիշ խաչակիր գունդը (տե՛ս նկ. 11):



Նկ. 11:

Դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում աշխարհը գնդի տեսքով պատկերելու ընդունված հիմնաձևը քրիստոնեության հաստատումից հետո, մասնավորապես՝ Մ դ., պատկերվում էր խաչին խարսխված՝ ընդգծելով Աստծո գերադասությունն ամբողջ աշխարհում: Երկրագունդը ձեռքում պահող Քրիստոսն արևմտյան արվեստի պատկերագրության մեջ հայտնի էր «Աշխարհի Փրկիչ» («Salvator Mundi») անվամբ<sup>39</sup>: Գնդի կամ գլոբուսի՝ իբրև աշխարհի խորհրդանիշի ու խաչի՝ հաղթական և փրկագործական գաղափարաբանությունը պատկերագրությամբ ներկայացնող կոմպոզիցիան արտահայտվում էր և՛ արվեստի ստեղծագործություններում, և՛ թագավորական ռեզալիաներում<sup>40</sup>, և՛ մետաղադրամների վրա: Բացի այդ, միջնադարյան պատկերագրության մեջ օբյեկտի չափսը հարակից օբյեկտի չափսի համեմատությամբ ընդգծում էր մեկի կարևորությունը մյուսի նկատմամբ: Այդ էր պատճառը, որ երկրագունդը սովորաբար փոքր էր պատ-

<sup>38</sup> ՄՄ, ԿԴ, թղթ. 10, վ. 70:

<sup>39</sup> [http://www.wikiwand.com/en/Globus\\_cruciger](http://www.wikiwand.com/en/Globus_cruciger)

<sup>40</sup> Արքայական իշխանության նշան հանդիսացող իր՝ թագ, գայիսոն և այլն (տե՛ս Ա. Ղառիբյան. Ռուս-հայերեն բառարան, Երևան, 1977, էջ 1064):

կերվում, իսկ այն պահող Փրկիչը չափսերով մեծ՝ ընդգծելով նրանց հարաբերությունների բնույթը:

Երբեմն կնքման գործողությունն ընթանում է նաև Սբ. Երրորդության վկայակոչմամբ:

Մեկ Աստծո եռանձնյա մարմնավորումն արդեն պատկերագրորեն արտահայտվել է 1780–1799 թթ. աթոռակալած Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսի<sup>41</sup> 1782 թ. հոկտեմբերի 31-ին գրած բնագիր կոնդակի<sup>42</sup> կնիքում: Կնքադրոշմի եզրային շրջանը բոլորող արձանագրությունը հիշատակում է՝ “Է: ՇՆ(Ո)ԸՀ(Բ)ԻՆ Ա(ՍՏՈՒԾՈ)Յ ՂՈՒԿԱՍ Կ(Ա)Թ(Ո)Ղ(Բ)Կ(Ո)Ս ԱԱ(ԵՆԱՅՆ) Հ(Ա)Յ(Ո)Յ ՌՄԻԹ (1780)”: Ապա հորինվածքն ամբողջացնող պատկերագրությունը ներկայացնում է թևերի լայն տարածմամբ աղավնակերպ Սբ. Հոգուն, խաչափայտը բռնած Հիսուս Քրիստոսին և տիեզերական խաչակիր գունդը ձեռքում պահած Հայր Աստծուն (տե՛ս նկ. 12):

Կնիքներում հաճախակի հանդիպող Սբ. Երրորդության պատկերման այս տիպը բնորոշվում է Հայր Աստծու և Հիսուս Քրիստոսի տարիքային տարբերությամբ, որտեղ Հայրը սովորաբար պատկերվում է որպես սպիտակամորուս տարեց մարդ, գլխին եռանկյունաձև լուսապսակով, իսկ Քրիստոսը՝ կլոր լուսապսակով, նստած հոր աջ կողմում: Աղավնակերպ Սբ. Հոգին, որպես կանոն, պատկերվում է Հոր և Որդու միջև կամ վերին կենտրոնում, եթե նրանք նստած են միմյանց մոտ՝ նույն հարթության վրա:

Այսպիսով, քրիստոնեական մեկնություններում արտահայտված կնիքի մասին ուղղակի կամ այլաբանական հիշատակությունները շարունակություն են ստանում հայրապետների կնքադրոշմներում՝ շղթայվելով ամենահեռավոր և անհասանելի Աստծո արարչությանը: Ինչպես աշխարհի վախճանն ավանդող գրքի յոթը կնիքները՝ վկայված Հովհանու Յայտնությունում<sup>43</sup>, այնպես և հայրապետական փաստաթուղթը վավերացրած կնիքն ի սկզբանե տաբու են սահմանում կնքյալ գրի վրա՝ նախատեսելով այն գերադասություն ստացած հասցեատիրոջ համար:

Փաստաթղթում դրոշմված կնիքը դառնում է այն նշանը, որը հաստատում է վավերագրի իսկությունը, ցուցում իրավական լինելը և ներկայացնում պատվատիտղոսով սահմանված կնքատիրոջ կարգավիճակը:

<sup>41</sup> Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսի՝ 1780 թ. օգոստոսի 2-ին հապճեպ և առանց Կ. Պոլսի հայերի համաձայնության կատարված օծությունից հետո հայության մեջ խռովություններն ու պառակտումը չհորացնելու նպատակով նա առժամանակ հրաժարվում է կաթողիկոսական լիազորություններից և պարտավորություններից, ի թիվս որոնց հիշատակվում է նամակները կարմիրով չկնքելու որոշումը (տե՛ս Դիվան Հայոց պատմության, հ. Ա, 1984, Երևան, էջ 24):

<sup>42</sup> Ղուկաս Ա կաթողիկոսը մահտեսի Վարդանին հասցեագրած սույն կոնդակով հանձնարարում է նրան օժանդակել Հակոբ վարդապետին Մայր Աթոռի հասանելիք գումարները հավաքելու գործում (տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 5, վ. 47):

<sup>43</sup> Յայտնություն Յովհաննու, Ե 1:



Նկ. 12:

*Եվ վերջապես, XVII–XIX դդ. ներկայացված հայրապետների կնիքներում արտահայտված պատկերազրույթունը, թեև գերազանցապես ներկայացնում է Քրիստոսին, այդուհանդերձ, տարբեր օրինակների միջոցով հնարավորություն է ընձեռվում հետևել նրա կերպարի զարգացման ընթացքին և փոփոխություններին<sup>44</sup>:*

## ПЕЧАТИ КАТОЛИКОСОВ В АРХИВНЫХ ДОКУМЕНТАХ

СИРАНУШ ФАГРАДЯН

Резюме

*Ключевые слова: документальное наследие, католикос, Христос Вседержитель, Св. Троица, крестное знамение, сурик, перстень с печатью.*

Значительная часть документального наследия католикосов Армянской Апостольской Церкви, которая обобщена в архивном фонде «Диван Католикосов» Матенадарана им. Месропа Маштоца, имеет подтверждающие печати, которые не рассматривались как материал отдельного исследования.

Изучение печати как первоисточника позволяет выявить правовой статус печати как индикатора подлинности документа, исследовать печать как символ власти, ссылаясь на

<sup>44</sup> Քրիստոսի պատկերազրույթյան վերաբերյալ տե՛ս И. А. Припачкин. Иконография Господа Иисуса Христа. М., 2001.



особенности армянских католикосских бумаг, печать в них как проявление чести других, и наконец, печать как художественное произведение своего времени.

Если в надписях на печатях возможно найти имена католикосов, их статус и правовые полномочия, то выраженные в них христианские символические сцены позволяют изучать особенности графического искусства на малой платформе, раскрывать корни символики печатей в христианстве и всю палитру самовыражения католикосов.

## CATHOLICOS SEALS IN THE ARCHIVAL DOCUMENTS

SIRANUSH FAHRADYAN

### Summary

*Key words: documentary heritage, catholicos, Christ Almighty, the Holy Trinity, Sign of the Cross, saturnine red.*

A significant part of the documentary heritage of the catholicoi of Armenian Apostolic Church, assembled in the archival fund “Divan of Catholicoi” of the Matenadaran named after Mesrop Mashtots, has confirming seals, which were not considered as material of a separate study.

Studying the seal as a primary source reveals the legal status of the seal as an indicator of the document’s authenticity, to explore the seal as a symbol of power, referring to the peculiarities of the Armenian catholicos papers and the seal in them as a manifestation of the honor of others and finally, the seal as an artwork of its time.

If the names of the catholicoi, their status and legal authority can be found in the reading of seal’s inscriptions, then the Christian symbolic scenes expressed in them allow to study the peculiarities of art on a small platform, to reveal the roots of the symbolism of seals in Christianity and the whole palette of catholicoi self-expression.

---

---

ՎԵՐԱԾՄԱՆ ԲԱՅԵՐԸ ՄԻՋԻՆ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ\*

ԳՈՒՐԳԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ, ՏԱԹԵՎԻԿ ԱԶԻԶԲԵԿՅԱՆ

Բանալի բառեր՝ միջին գրական հայերեն, իմաստային խմբեր, վերածման բայեր, չեզոք, միարժույթ:

*Յուրաքանչյուր լեզվի բառապաշար տարբեր հիմունքներով դասակարգվում է տարբեր խմբերի, որոնցից ամենահայտնին, թերևս, դասակարգումն է՝ ըստ խոսքի մասերի: Իրենց հերթին բառակազմական, քերականական և այլ կարգի դասակարգումների են ենթարկվում նաև խոսքի մասերը՝ փաստական նյութ դառնալով լեզվաբանական մի շարք գիտահետազոտական աշխատանքների համար: Վերջիններից են նաև բայերի իմաստային խմբերի և ենթախմբերի դասակարգմանը վերաբերող ուսումնասիրությունները, որոնք հավաստում են, որ բայերի իմաստային ու շարահյուսական հատկանիշների միջև գոյություն ունի կանոնավոր համապատասխանություն: Այդ կապը երկկողմանի է. բառի իմաստը պայմանավորում է նրա շարահյուսական հատկանիշները, և, ընդհակառակը, շարահյուսական հատկանիշներն իրենց ազդեցությունն են թողնում բառիմաստի վրա՝ ձևափոխելով այն<sup>1</sup>: Բայերի իմաստային խմբերի առանձնացումով հստակեցվում են նաև դրանց կապակցելիության հնարավորությունները, այն է՝ արժույթի դրսևորումները (թեև, ինչ խոսք, բայի բառիմաստից բացի, այստեղ կարևոր դեր ունի նաև նրա քերականական իմաստը):*

*Բայերի իմաստային խմբավորման որոշ փորձեր կատարվել են նաև հայ լեզվաբանների կողմից: Առանձնապես նախորդ դարում առանձնացվել են բայերի մի շարք խմբեր՝ պայմանական անվանումներով (իմացական, զգացական, մտածական, վիճակային, հարկադրական, ակտիվ գործողության, օժտվածության, վերածման կամ փոխարկման և այլն<sup>2</sup>), որոնք, սակայն, ա-*

---

<sup>1</sup> Ю. Апресян. Экспериментальное исследование семантики русского глагола. М., 1967, с. 25–29.

<sup>2</sup> Վ. Առաքելյան. Հայերենի շարահյուսություն, հ. Ա, Երևան, 1958, Ա. Աբրահամյան. Բայը ժամանակակից հայերենում, գիրք 1, Երևան, 1962, Է. Ադայան. Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, Գ.

առանձնակի ուսումնասիրության չեն ենթարկվել: Այս կապակցությամբ Հ. Օհանյանը, մասնավորապես, նշում է, որ Մ. Աբեղյանը, Վ. Առաքելյանը, Ա. Աբրահամյանը, Գ. Ջահուկյանը, Վ. Քոսյանը և այլք ոչ հատուկ նպատակադրմամբ, այլ լոկ այս կամ այն հարցի լուսաբանման կապակցությամբ ու պատեհ առիթով կատարել են բայերի դասակարգումներ՝ նկատի առնելով դրանց դրսևորած իմաստները, երբեմն էլ ներկայացնելով դրանց խնդրառությունը<sup>3</sup>:

Այս հոդվածի համար քննության նյութ են ծառայում վերածման կամ փոխարկման բայերը<sup>4</sup>, որոնց վերաբերյալ նույնպես որևէ համալիր հետազոտություն առ այսօր չի կատարվել<sup>5</sup>: Բանն այն է՝ հայ լեզվաբաններից ոչ մեկի առաջադիր նպատակը չի եղել հայերենի հիշյալ իմաստային խմբի բայերի ըստ ենթախմբերի առանձնացումը և իմաստագործառական առանձնահատկությունների վերհանումը: Կատարվել են միայն վերածման բայերի բնորոշման և տերմինավորման փորձեր, այն էլ՝ այդ բայերի խնդրառության ու կառավարման ուսումնասիրության հետ կապված<sup>6</sup>:

---

Ջ ա հ ու կ յ ա ն. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, Վ. Քոսյան. Ժամանակակից հայերենի բառակապակցությունները, Երևան, 1975:

<sup>3</sup> Հ. Օհանյան. Մտածական և հոգեվիճակային բայերի խնդրառությունը ժամանակակից հայերենում. – “Լեզվի և ոճի հարցեր”, հ. 10, Երևան, 1987, էջ 14:

<sup>4</sup> Վերածման կամ փոխարկման բայեր տերմինը գիտական շրջանառության մեջ է դրել Վ. Առաքելյանը (Վ. Առաքելյան. Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 100): Հետագա ուսումնասիրողները նույնպես գործածել են հիշյալ տերմինը, միայն Գ. Ջահուկյանն է իմաստային այս խումբն անվանել փոխարկային (Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 466): Նպատակահարմար ենք գտնում խնդրո առարկա բայերի համար հետագա շարադրանքում գործածել միայն “վերածման բայեր” տերմինը:

<sup>5</sup> Բայերի իմաստային դասակարգման ուղղությամբ ուշագրավ աշխատանքներ են կատարվել, օրինակ, ռուս լեզվաբանության մեջ. այստեղ քիչ չեն այն ուսումնասիրությունները, որոնցում պատշաճ տեղ է հատկացված բայերի իմաստային խմբավորմանը և արժույթային դրսևորումներին, կան հարցի լուսաբանմանը նվիրված առանձին աշխատություններ ևս (Ю. Апресян. Եզվ. աշխ., Н. Авилова. Вид глагола и семантика глагольного слова. М., 1976; Л. Васильев. Семантика русского глагола. М., 1981):

<sup>6</sup> Վ. Քոսյան. Միջին հայերենի բառակապակցությունները, Երևան, 1984, էջ 180, Հ. Հարությունյան. Կառավարումը ժամանակակից հայերենում, Երևան, 1983, էջ 147, Վ. Առաքելյան. Ժամանակակից հայերենի հոլովների և հոլովական

Հողվածում նպատակ է հետապնդվում հստակեցնելու վերածնունդի քայերի ձևախմբատային սահմանները և կապակցելիությունը միջին գրական հայերենում՝ հիմքում ունենալով դասակարգման իմաստային չափանիշը (տվյալ դեպքում՝ հիշյալ քայերի իմաստների բառարանային ձևակերպումները) ու բնագրերի ընձեռած լեզվական նյութը: Ուսումնասիրվող քայերի բառացանկը կազմվել է համատարած ընտրանքի եղանակով՝ Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի հայտնի բառարանի<sup>7</sup> հիման վրա, որտեղից քաղվել են միայն անհրաժեշտ համադրական քայերը: Վերածնունդի քայերի խմբավորումը կատարվել է նկատի առնելով դրանց վերագրված հետևյալ բնութագրական գիծը. «Այս տիպի քայերով փաստորեն սեղմ կերպով նշվում է ինչպես մի առարկայի վերածվելու, այնպես էլ նրան մոտավորապես նմանվելու պրոցեսն իբրև եղելություն»<sup>8</sup>:

Միջին գրական հայերենի բառապաշարում առկա վերածնունդի քայերը մեծաթիվ չեն: Դրանք գերազանցապես կազմվում են անվանական հիմքերից և ունեն՝ ա) մի բան դառնալու, մի բանի նմանվելու կամ բ) մի բանի բնորոշ հատկանիշ ստանալու իմաստներից կա՛մ մեկնումեկը, կա՛մ երկուսը միասին: Օրինակ՝ քացիսի<sup>9</sup> նշանակում է «քացախի վերածվել, քացախել, թթվել», կուտկտիլ՝ «գնդիկի նմանվել, կոշտիկ դառնալ», արծուանալ՝ 1. «արծվի նման դառնալ», 2. «քաջանալ, խիզախել», նօսրանալ՝ 1. «հյուծվել, մաշվել, ուժասպառ լինել», 2. «բարակ դառնալ, բարականալ» և այլն:

Առանձնանում են վերածնունդի քայերի հետևյալ հիմնական ենթախմբերը.

ա) քայեր, որոնք արտահայտում են մի բան դառնալու, մի առարկայի վերածվելու նշանակություն, ինչպես՝ ախոյանանալ, աղավնանալ, ամիրանալ, բաղարջնալ, բրդանալ, խոցնալ, տաճկանալ, քացիսիլ,

բ) քայեր, որոնք ունեն առարկայի հատկանիշի և հատկանիշի հատկանիշի վերածնունդի նշանակություն: Հմնտ. գերնալ, դժարել, թերենալ, ժլատայնալ, խոշորիլ, խոշորնալ, մեկմեկանալ, շլրիլ, սարիլ և աւելանալ, քչնալ, քչկնալ և այլն:

---

կապակցությունների իմաստային առումները, Երևան, 1957, էջ 100, Ա. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 15:

<sup>7</sup> Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան. Միջին հայերենի բառարան (այսուհետև՝ ՄՀԲ), Երևան, 2009:

<sup>8</sup> Ա. Աբրահամյան. նշվ. աշխ., էջ 62:

<sup>9</sup> Առանց հղումների օրինակները քաղվել են ՄՀԲ-ի՝ ընդգծված քայերին վերաբերող բառահոդվածներից, փակագծերում էջանշումով օրինակները՝ Ա. Մնացականյանի «Հայրեններ» մենագրությունից (Երևան, 1985):

Միջին գրական հայերենում վերածման բայերը գերազանցապես կազմվում են «գոյական կամ ածական + [-ան- (-ն-// -այն-) կամ -են +] -իլ, -ալ կամ -ել» կաղապարով, որտեղ առավելապես ակտիվ են -ան- բաղադրական-քերականական ձևայինը և ա լծորդ ձայնավորով բաղադրված -ալ բայակերտ ձևայինը, ինչպես՝ թագուորանալ, սուլտանանալ, տառապելանալ, նիհարանալ և այլն:

Միայն -իլ կամ -ել ձևայիններով բաղադրված վերածման բայերը մյուսներից տարբերվում են նրանով, որ կազմվում են՝ ա) առանց բայածանցների մասնակցության, բ) գերազանցապես ածականական հիմքերից, ինչպես՝ վարդագունիլ՝ «վարդագույն դառնալ», սևգունիլ՝ «սևագույն դառնալ», սարիլ՝ «սառը դառնալ», սակվել՝ «սակավանալ, սակավել, նվազել», ուժվորել՝ «ուժեղանալ, զորանալ, բռնանալ», թերեհամել՝ «սկսել անհամանալ, համից ընկնել, համը կորցնել» և այլն: Հատկանշական է նաև, որ այս կարգի որոշ բայեր ունեն նաև վերը նշված -նալ//անալ//այնալ կամ -ենալ ձևայիններով կազմություններ, ինչպես՝ բոլորել//բոլորնալ, դժարել//դժարանալ, ժլատնալ // ժլատայնալ, կարմրիլ // կարմրանալ, հեշտել // հեշտենալ, տափկիլ//տափկնալ և այլն: Ըստ որում, դրանցից համանիշ են ոչ բոլորը. որոշ գույգեր ունեն տարբեր իմաստներ: Այսպես՝ եթե անխելիլ և անխելանալ բայերը համանիշներ են, ապա կարմրիլ նշանակում է «կարմիր գույն ստանալ», մինչդեռ կարմրանալ՝ «կարմիր դառնալ»: Այսպես նաև՝ բարկիլ, վարդագունիլ, պիսկոտիլ, մբգոյնիլ և այլն, նշանակում են որևէ հատկանիշ ձեռք բերել, ստանալ, մինչդեռ տիմարանալ, ունենանալ, նիհարանալ, անտիրանալ և այլն՝ որևէ հատկանիշի վերածվել, փոխարկվել: Քննելով արդի հայերենի բայերի իմաստային խմբերը՝ Է. Աղայանը բերված շարքերից առաջիններն անվանում է վերածման ստացողական, իսկ երկրորդները՝ վերածման-դառնալիության բայեր<sup>10</sup>:

Ա ձայնավորի անկումը կամ սդումը (այդ թվում նաև՝ -ան սուկածանցում) միջին գրական հայերենում տարածված երևույթ է<sup>11</sup>՝ բերնիկդ (342), բերնին (648), բերնեն (364), բերնովն (350), քաղքիկ (801), քաղքին (718), քաղքեն (912), քաղքցի (657), անուշնալ, աղեկնալ և այլն, իսկ յ-ի հավելումը (ա>այ)՝ հազվադեպ՝ մարդայսպան (172), բարձրայգընաց (289), կիսայբաց (129), գրայբաց (939), կու տայնուն (141), ժլատայնալ և այլն: Են+ալ կազմությունների մի մասը պայմանավորված է ի+ա> և հնչյունափոխությամբ: Օրինակ՝ թերի+ան+ալ > թերենալ, գոթի//գոթի+ան+ալ > գոթենալ՝ Մեծ դալ ու երդումն

<sup>10</sup> Է. Աղայան. նշվ. աշխ., էջ 331:

<sup>11</sup> Հ. Մուրադյան, Մ. Մուրադյան, Ս. Անթոնյան. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, 1972, էջ 74-75:

արաք՝ Գօթենայ՝ ով սերն ուրանայ (139), Աշխարհիս սահմանն է հանց. Հետ լցւի ու հետ թերենայ (922): Մնացած դեպքերում մասնակցել է հենց -էն սուկածանցը՝ լրբենալ, հեշտենալ և այլն:

Միջին գրական հայերենում վերածնանք բայերի մեջ դեռ զգալի են հատկանիշ և առարկա ցույց տվող այն իմաստները, որոնք վերագրվում են դրանց կազմության հիմքում ընկած բուն բաղադրիչներին: Տարբերությունն այն է, որ այստեղ դրանք ներկայացվում են վերածնանք, փոխարկելիության, այսինքն՝ բայական յուրահատուկ գաղափարով, ինչպես՝ բոլորնալ՝ «կլոր դառնալ», լրբենալ՝ «լիրբ, անամոթ դառնալ», ծուլնալ՝ «ծուլ դառնալ», ամիրանալ՝ «ամիրա դառնալ» և այլն:

Վերածնանք բայերը գրաբարում և ժամանակակից հայերենում հիմնականում բազմիմաստ են, դրանց մի մասն ունի նաև փոխաբերական իմաստ(ներ), մինչդեռ միջին գրական հայերենում հիշյալ բայերի մեջ գերիշխում է առավելապես բուն իմաստը, տվյալ դեպքում՝ վերածնանք գաղափարը: Հմտ., օրինակ, գրաբարյան յուլանալ (1. «հույլ լինել, դանդաղել, թուլանալ, ծուլանալ», 2. «պարապ-սարապ այս ու այնտեղ նայելով ման գալ», 3. «անհոգ՝ անփույթ լինել») և միջինհայերենյան յուլնալ («թուլանալ, դանդաղել»), գրաբարյան խստանալ (1. «կարծրանալ, պնդանալ, կոշտանալ, ամրանալ», 2. փխբ. «համառել, սիրտը քար դառնալ, բնավորությամբ կոպտանալ, խիստ դառնալ, համառել», 3. «անսաստ՝ անհնազանդ լինել, ուշադրություն չդարձնել», 4. «խստությամբ վարվել, խստություն ցույց տալ, չներել», 5. «սաստկանալ, հորդել») և միջինհայերենյան խստել («սաստկանալ, ուժգնանալ, խստանալ»), գրաբարյան թուլանալ (1. «թուլ դառնալ, լինել», 2. «մեղկանալ, մեղկ՝ թուլամորթ դառնալ», 3. «մեղմանալ՝ զիջող դառնալ», 4. «իջնել, նվազել, պակասել», 5. «լքվել») ու միջինհայերենյան թիլանալ/թուլնալ («թուլանալ») և այլ բայեր:

Ասվածին հակառակ՝ նկատելիորեն սակավաթիվ են այն բայերը, որոնք գործածվել են փոխաբերաբար՝ թագուորանալ՝ «թագավոր դառնալ», փխբ. «ճոխանալ, շքեղանալ, հարստանալ», անձերանալ՝ «չձերանալ», փխբ. «անփոփոխ՝ մշտնջենական մնալ», կլորել՝ «բոլորել», փխբ. «մեծանալ, խոշորանալ» և այլն:

Լեզվական փաստերը վկայում են, որ միջին գրական հայերենում վերածնանք բայերը գերազանցապես պահպանել են գրաբարյան բայերի առաջնային, ուղղակի իմաստները, տեղի է ունեցել իմաստների սահմանափակում՝ հիմնական իմաստների պահպանմամբ և երկրորդական ու փոխաբերական իմաստների կորստյամբ: Այսպես՝ ՄՀԲ-ում փայտնալ և փատնալ բայերի համար նշվում են միայն «փայտանալ, ցրտից սառչել, փայտ կտրել, ընդարմա-

նալ” իմաստները, մինչդեռ Է. Աղայանի վերոնշյալ բառարանում նույն բայի (փայտանալ) համար նշվում են թվով 6 փոխաբերական իմաստներ՝ 1. “ցրտից սառչել, սաստիկ մրսելուց անդամներն ընդարմանալ”, 2. “հիվանդության հետևանքով շարժունությունը կորցնել”, 3. “անզգայանալ, քարանալ, քար կտրել” ու ևս երեք իմաստ:

Միջին գրական հայերենում վերածման բայերի օրինաչափությամբ կազմված մի շարք բայերի իմաստային պլանում կա մի սկզբանե չի եղել, կա մի էլ հետագայում աստիճանաբար մթազնել է վերածման նշանակությունը: Խոսքը վերաբերում է գրաբարից ժառանգված այն բայերին, որոնք դեռ գրաբարում են բնորոշվում վերոնշյալ առանձնահատկությամբ: Դրանցից են՝ գողանալ, գոյանալ, զարգանալ, զարմանալ, հեռանալ, հիանալ, իմանալ, խոյանալ, կայանալ և այլն, որոնցում -ան բայածանցը սուկ բաղադրական գործառույթունի:

Վերածման բայախմբի բոլոր միավորները բացառապես չեզոք սեռի են և արտահայտում են իրենց հիմքում ընկած հատկանիշով օժտվելու կամ առարկայի վերածվելու, փոխարկվելու նշանակություն<sup>12</sup>:

Կապակցելիության տեսանկյունից այս բայերը պարտադիր ենթակաառու են: Կախված բառիմաստից՝ դրանք կարող են հարաբերվել անձնանիշ (թագուորանալ), կենդանանիշ (կատողենալ) կամ առարկայանիշ (թերեհամել) ենթականերից որևէ մեկի կամ դրանցից երկուսի (կամ բոլորի) հետ (բազմադասություն), ինչպիսին է, օրինակ, կարմրիլ բայը: Հմնտ. Մէկ ճոթն ալ ի ծովն իջաւ, Թուխ ամպը կարմրեցաւ (758) և Իմ եարն այլ ի դուրս ելեր, Կարմրեր գէտ վարդի տերն (110): Հիշյալ բայերը “... ցույց են տալիս ենթակայի վիճակը (այս բառի լայն իմաստով) իրենց մեջ արտահայտված՝ տիպարի փոխարկային կամ ոչ փոխարկային և, փոխարկայինի դեպքում կերպային տարբերություններով”<sup>13</sup>: Նկատենք, որ անձնանիշ ենթակաների հետ կապակցվող վերածման բայերին, որպես կանոն, հատուկ է նաև կոչականառությունը:

Ենթակաառությունից և կոչականառությունից բացի՝ վերածման բայերին հատուկ է, այսպես կոչված, ներքին ստորոգառությունը, որտեղ հատկանիշ արտահայտող ստորոգելին գտնվում է այդ բայերի կազմում: Օրինակ՝ նեղնալ, լայն(ը)նալ, տաճկանալ և այլն:

Թեև իմաստային նույն դաշտին պատկանող բայերին հիմնականում բնորոշ է միատեսակ կապակցելիություն, սակայն, որոշ բայեր, պայմանավոր-

<sup>12</sup> Ս. Գալստյան. Ածանցումը և ածանցները ժամանակակից հայերենում, Երևան, 1978, էջ 246–248:

<sup>13</sup> Գ. Ջահուկյան. Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, էջ 470:

ված իրենց բովանդակության պլանով, հանդես են բերում կապակցելիության տարբեր հնարավորություններ: Այսպես է նաև վերածման բայերի առումով, որոնցից մի քանիսը միջին գրական հայերենում, ենթակաատությունից բացի, բնութագրվում են նաև խնդրատությամբ կամ պարագաատությամբ: Բնական է, որ այս դեպքում կարող են տարբեր լինել նաև պահանջվող խնդիրների ու պարագաների արտահայտության և բովանդակության պլանները: Այսպես՝ սուլտանանալ բայի տեղի պարագան արտահայտվել է “ի-հայցական” կապակցությամբ, մինչդեռ փատնալ բայի տեղի պարագան՝ տրական հոլովով: Հմմտ. Նորին օգնութեամբն սուլտանացաւ ի Կօնն և Այնչափ ձիւն և ֆոթնայ եղավ և ցուրտ, մինչ որ Եայլաճուխին լեռան Դ մարդ և ԺԹ էշ փաւցավ:

Ամփոփենք: Միջին գրական հայերենի վերածման բայերի քննությունը ցույց է տալիս, որ դրանցով արտահայտվում է մի բան դառնալու, մի բանի նմանվելու կա՛մ մի բանի բնորոշ հատկանիշ ձեռք բերելու իմաստներից մեկնումեկը կա՛մ երկուսը միասին: Վերածման բայերը գերազանցապես արտահայտվում են “գոյական կամ ածական + (-ան- կամ -են- +) -իլ, -ալ կամ -ել” կադապարով: Ի տարբերություն գրական հայերենի զարգացման մյուս երկու շրջանների՝ միջին գրական հայերենում վերածման բայերը հիմնականում գուրկ են երկրորդական և փոխաբերական իմաստներից. այստեղ գերիշխում է առավելապես բուն իմաստը, տվյալ դեպքում՝ վերածման գաղափարը: Լինելով բացառապես չեզոք սեռի բայեր՝ սրանց հիմնական մասին բնորոշ է ենթակաատությունը և ներքին ստորոգաատությունը, սակայն կան սակավաթիվ վերածման բայեր, որոնք, պայմանավորված իրենց նրբիմաստներով, աչքի են ընկնում խնդրատությամբ կամ պարագաատությամբ նույնպես: Անձնանիշ ենթակաների հետ կապակցելիության արժույթով օժտված բայերը բնութագրվում են նաև կոչականաբանությամբ:

## КОНВЕРСИОННЫЕ ГЛАГОЛЫ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЛИТЕРАТУРНОМ ЯЗЫКЕ

ГУРГЕН ХАЧАТРЯН, ТАТЕВИК АЗИЗБЕКЯН

### Резюме

*Ключевые слова:* среднеармянский литературный язык, смысловые группы, конверсионные глаголы, нейтральный, моно-смысловой.

В среднеармянском литературном языке конверсионными глаголами выражаются значения перехода во что-то, отождествления с чем-нибудь или приобретения



признаков, характерных для чего-либо: причем могут проявляться как одно из этих значений, так и оба вместе. Конверсионные глаголы образуются по модели «*существительное* или *прилагательное* + (-*ան* [-*uń-*] или -*են* [-*tń-*] +) -*իլ* [-*hɫ*], -*ալ* [-*ʃɫ*] или -*ել* [-*tɫ*]» и при этом они употребляются в нейтральном залоге. В отличие от двух других периодов развития литературного армянского языка, конверсионные глаголы в среднеармянском литературном языке, в основном, были лишены второстепенного и переносного значений: у глаголов этой семантической группы преобладали преимущественно искомые значения, в данном случае – идея конверсии. Для основной части конверсионных глаголов характерны только субъектность и внутренняя предикация, однако, есть группа немногочисленных глаголов, которые, вследствие своих смысловых оттенков, выделяются свойствами грамматического управления и адвербиальностью.

Глаголы, наделенные валентной сочетаемостью с подлежащими, указывающими на лицо, характеризуются также сочетаемостью с вокативами.

## INCHOATIVE VERBS IN MIDDLE LITERARY ARMENIAN

GURGEN KHACHATRYAN, TATEVIK AZIZBEKYAN

### Summary

*Key words: Middle Literary Armenian, semantic groups, inchoative verbs, neutral, monosemantic.*

In Middle Literary Armenian inchoative verbs express the meanings of turning into something, identifying with something or acquiring signs characteristic for something, whereby one of these meanings or both may be manifested. Inchoative verbs are formed according to the model “noun or adjective + (-*ան*[-*uń-*] or -*են* [-*tń-*] +) -*իլ* [-*hɫ*], -*ալ* [-*ʃɫ*] or -*ել* [-*tɫ*]” and are used in the middle voice. Unlike the other two stages of the development of the Armenian language, in Middle Literary Armenian inchoative verbs are void of peripheral and metaphoric meanings; the verbs of this semantic group have predominantly sought meanings, in the given case – the idea of conversion. Most inchoative verbs are only characterized by subjectivization and predicativization, however, there is a group of few inchoative verbs, which due to their nuances stand out for their properties of grammatical transitivity and adverbiality.

Verbs, endowed with valence combinability with subjects pointing the person are also characterized by appellativization.

---

---

ԽԱՂՈՂԻ ԳՏԱԾՈՆԵՐ ԳԵՏԱՀՈՎԻՏ–2 ՔԱՐԱՅՐԻ (ԻՋԵՎԱՆ)  
ՊՂՆՁԻՔԱՐԻԴԱՐՅԱՆ ՇԵՐՏԵՐԻՑ  
(մ. թ. ա. V հազարամյակի կես)\*

ՌՈՄԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ, ԻՐԵՆԱ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ խաղող, հնաբուսաբանություն, բուսահավաքչություն, էնեոլիթ, քարայր:


*Հայաստանի Հանրապետության տարածքում խաղողի գտածոներ հայտնի են վաղ երկրագործական դարաշրջաններից սկսած: Դրանցից ամենավաղ թվագրություն ունեցողներն Արարատյան դաշտում գտնվող Առատաշենի նորքարի դարաշրջանի՝ մ. թ. ա. VI հազարամյակի բնակատեղիից հայտնաբերված խաղողի երկու ածխացած կորիզներն են<sup>1</sup>: Խաղողի օգտագործումը շարունակվել է նաև պղնձիքարիդարում. Արենի–1 քարայրից հայտնաբերված մշակովի խաղողի մեծաքանակ գտածոները և զինեգործական կառույցները, որոնք թվագրվում են մ. թ. ա. XLIII–XXXVIII դարերով, վկայում են այդ մշակույթի կրողների համար խաղողի կարևորության մասին<sup>2</sup>:*

---

<sup>1</sup> R. Hovsepyan, G. Willcox. The earliest finds of cultivated plants in Armenia: evidence from charred remains and crop processing residues in pisé from the Neolithic settlements of Aratashen and Aknashen. – “Vegetation History and Archaeobotany”, vol. 17, is. 1, 2008, pp. 63–71.

<sup>2</sup> G. E. Areshian, B. Gasparian, P. S. Avetisyan, R. Pinhasi, K. Wilkinson, A. Smith, R. Hovsepyan, D. Zardaryan. The Chalcolithic of the Near East and south-eastern Europe: discoveries and new perspectives from the cave complex Areni-1, Armenia. – “Antiquity”, vol. 86 (331), 2012, pp. 115–130; K. N. Wilkinson, B. Gasparian, R. Pinhasi, P. Avetisyan, R. Hovsepyan, D. Zardaryan, G. F. Areshian, G. Bar-Oz, A. Smith. Areni-1 Cave, Armenia: A Chalcolithic–Early Bronze Age settlement and ritual site in the southern Caucasus. – “Journal of Field Archaeology”, vol. 37(1), 2012, pp. 20–33; H. Barnard, A. N. Dooley, G. Areshian, B. Gasparian, K. F. Faull. Chemical evidence for wine production around 4000 BCE in the Late Chalcolithic Near Eastern highlands. – “Journal of Archaeological Science”, vol. 38, 2011, pp. 977–984; A. Smith, T. Bagoyan, I. Gabrielyan, R. Pinhasi, B. Gasparian. Late Chalcolithic and Medieval Archaeobotanical Remains from Areni-1

Գետահովիտ-2 քարայր-կացարանի պղնձիքարի դարաշրջանի համար արձանագրված խաղողի գտածոները ժամանակագրորեն հաջորդում են Առատաշենի նորքարիդարյան և նախորդում են Արենի-1-ի պղնձիքարիդարյան գտածոներին:



Նկ. 1. a – Գետահովիտ-2 քարայրը (2018 թ. պեղումների ընթացքում), b – քարայրի հատակագիծը՝ խաղողի գտածոների հայտնաբերման կետերով՝ 1 – str. 148, 2 – US53, c – Structure 148 կրակատեղին:

Գետահովիտ-2 քարայր-հնավայրը գտնվում է Աղստև գետի վտակ Խաչաղբյուր գետի կիրճում (N 40° 54' 38.5", E 045° 05' 59.7"), ծովի մակերևույթից 968 մ բարձրության վրա: Հնավայրը Տավուշի մարզում է՝ Իջևանի Ենոքավան ու Գետահովիտ գյուղերի միջև: Այն տեղակայված է քարայրում և դրա բացվածքի հարակից հատվածում: Քարայրն ունի երկու սրահ, իսկ բացվածքն ուղղված է դեպի հարավ (նկ. 1.a): Պեղումներ կատարվել են միայն մեծ շուրջ 64 մ<sup>2</sup> մակերեսով սրահում և դրան հարող բացվածքի դիմացի տարածքում (Մ. 2): Դեպի փոքր սրահ է տանում նեղ սողանցքը: Քարայրում գրանցվել են երեք հիմնական մշակութային շերտեր. միջնադար, պղնձիքարիդար և վերին հին քարիդար, որոնք, ըստ ռադիոմետրիկ անալիզների, թվագրվում են հա-

(Birds' Cave), Armenia. – “Stone Age of Armenia. A Guide-book to the Stone Age Archaeology in the Republic of Armenia”, Kanazawa: Kanazawa University, 2014, pp. 233–260.

մապատասխանաբար մ. թ. IX–XII դարերով, մ. թ. ա. V հազարամյակի կեսերով և մ. թ. ա. մոտ XXII հազարամյակով: Հնավայրը պեղվել է հիմնականում հայ-ֆրանսիական արշավախմբի (“Mission Caucasus”) կողմից՝ 2011–2017 թթ., իսկ 2018 թ.՝ միայն հայկական արշավախմբի ուժերով<sup>4</sup>:

Քարայրն օգտագործած մարդկանց բուսական սննդի և, ընդհանրապես, բույսերի օգտագործման, ինչպես նաև քարայրի միջավայրի ֆլորայի ու բուսականության մասին տվյալներ ստանալու նպատակով հնավայրում կատարվել են հնաբուսաբանական հետազոտություններ: Որպես հնաբուսաբանական հետազոտությունների դաշտային աշխատանքների փուլ՝ կատարվել են քարայրի մշակութային շերտերից բուսական մնացորդների անջատման աշխատանքներ՝ ֆլոտացիայի և լվացման մեթոդներով: Խաղողի կորիզի առաջին գտածոն (նկ. 2–1) հայտնաբերվել է այս ճանապարհով, իսկ երկրորդը (նկ. 2–2)՝ պեղումների ընթացքում:

Քարայրում կատարված հնաբուսաբանական հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել են վայրի ծառափային բույսերի սերմերի և պտուղների մնացորդներ<sup>5</sup>: Դրանց կազմում գերակշռում են փռշնու (*Celtis* sp.) կորիզները, սակայն ուշագրավ են խաղողի երկու կորիզների գտածոները՝ հաշվի առնելով խաղողի օգտագործման (օրինակ՝ գինեգործությունը) կարևորությունը՝ որպես մշակութային երևույթ: Կորիզները հայտնաբերվել են հնավայրի պղնձիքարիդարյան մշակութային պատկանող երկու տարբեր շերտերից՝ US36 Structure 148 (2016, նկ. 1b-1, 1c) և US 53 (2018, նկ. 1b-2): Առաջին գտածոյի շերտին (US36) նախորդած և հաջորդող շերտերից վերցրած փայտածխի


<sup>3</sup> Խորին շնորհակալություն ենք հայտնում Քրիստին Շատենյեին, Նիկոլա Տադդիին, Բերանժե Պերելլոյին և արշավախմբի մյուս անդամներին, որոնց հետ համատեղ աշխատանքների, նաև նրանց սատարման շնորհիվ հնարավոր դարձավ կատարել սույն հետազոտությունը:

<sup>4</sup> Ի. Քալանթարյան. Հաշվետվություն Գետահովիտ–2 քարայրի (Տավուշի մարզ) 2018 թվականի պեղումների.– ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ (հաշվետվություն), 2018: 2018 թ. պեղումներն իրականացվել են “Իջևանի գինու և կոնյակի գործարան ՓԲԸ”-ի ֆինանսական աջակցության շնորհիվ, ինչի համար խորին շնորհակալություն ենք հայտնում գործարանի տնօրինությանը:

<sup>5</sup> Ուսումնասիրվել են միջնադարյան և պղնձիքարիդարյան շերտերը: Միջնադարյան շերտերից հայտնաբերված բուսական մնացորդների ուսումնասիրության նախնական արդյունքների մի մասը հրատարակվել է [I. Kalantarian, M. Arimura,

R. Hovsepyan, Ch. Chataigner. The archaeological investigations of Getahovit–2 cave (Armenia) in 2011–2012: the preliminary results. – “Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies”, vol. 7 (1), 2012, pp. 7–23]:

նադիումետրիկ թվագրման տվյալները հետևյալն են. 4346–4179 cal BC (US 32, E3, 2015, 5420<sup>±</sup>35, Lyon–13482) և 4519–4343 cal BC (US 42/45, 2016, 5590<sup>±</sup>50, Poz. 97044 (13022/17)): Բսկ երկրորդ գտածոյի շերտից (US 53) առաջ և հետո բացված շերտերից վերցրած փայտածխի նադիումետրիկ թվագրման տվյալները համապատասխանաբար հետևյալն են. 4542–4371 (US 52, st. 187, 2018, 5640<sup>±</sup>30, BETA–510630) և 4703–4545 cal BC (US 57, 2018, 5770<sup>±</sup>30, BETA–510631): Ըստ այդ տվյալների հայտնաբերված խաղողի կորիզներից առաջինը կարելի է թվագրել մ. թ. ա. XLVI–XLII, իսկ երկրորդը՝ XLVII–XLIV դարերով:



Նկ. 2. Գետահովիտ – 2 քարայր կացարանում հայտնաբերված խաղողի գտածոները. 1 – Structure 148, US36, G5/G4, F6/H3, FG3–4, 18.09.2016, 2 – US 53, EF–3,4,5, 01.10.2018: v – որովայնային կողմ, r – աջ կողմ, d – թիկնային կողմ:

Խաղողի կորիզի առաջին գտածոն (նկ. 2–1) 2016 թ. պեղված US36 շերտից է: Մշակութային այն շերտը ներկայացնում է պղնձիքարիդարյան բնակության շերտի հստակ պատկեր, երբ ի հայտ են գալիս կենցաղի պարզունակ կազմակերպման մանրամասներ: US36 շերտում է բացվել St. 148 կրակատեղին (նկ. 1c, 1b–1), որի կեսից ավելին, ցավոք, կտրվել էր միջնադարում փորված՝ խոշոր հորով (St. 146): St. 148-ը գտնվում էր G–4,5 քառակուսիներում՝ 1.37–1.52 մ խորության վրա: Այս պղնձիքարիդարյան կրակատեղին մոտ 0.83 մ տրամագծով կլորացած եզրերով ուղղանկյուն (կլորավուն) տեսք ունի և օղակված է մանր քարերով: Կրակատեղիից գտնվել են կենդանիների այրված ոսկորների ու ածխի բեկորներ: Պեղումների ընթացքում պարզվել է, որ կրակատեղին առնվազն երկու շերտ ունի (ստորինը՝ 1.52–1.45 մ, վերինը՝ 1.45–1.41 մ) և վերակառուցվել էր, այսինքն՝

այն օգտագործվել էր առնվազն երկու փուլով: Առաջինը՝ ներքևի կրակատեղը ոչ շատ խորը փոսի մեջ էր՝ առանց քարերի ու չափերով մի փոքր ավելի ընդարձակ էր, քան դրան հաջորդածը: Վերակառուցման և վերաօգտագործման ժամանակ կրակատեղին թեթևակի փոքրացրել են՝ այն բոլորելով մանր քարերի շարով (ավելի վաղ կառույցի այրված սպիտակ մնացորդների հետքերը շարունակվում էին հաջորդող՝ վերին շերտի քարերի տակ): Խաղողի այրված կորիզը գտնվել է կրակատեղիի վերին շերտից:

Խաղողի երկրորդ գտածոն (նկ. 2–2) ավելի խորը շերտերից է՝ US53 (E4 քառակուսի, խորությունը 2.20 մ) (նկ. 1b–2): Շերտագրորեն նույն մակարդակի վրա գտնվող US53 (west) և US54/55 (east) շերտերի պեղումների արդյունքում բացվել են մի քանի այրված հատվածներ և, ենթադրաբար, ձողերի հիմքեր (post hole): Այստեղ շատ են վանակատից ու ոսկրից պատրաստված գործիքների գտածոները և ընդհանրապես ոսկրի մնացորդները: Այս շերտը ծածկված էր մանր քարերի և ցեխի նսվածքներով (US49), որը քարայր է լցվել, հավանաբար, հեղեղի հետևանքով:

Ըստ կենսաչափական, ձևաբանական ու կազմաբանական հատկանիշների՝ երկու կորիզներն էլ պատկանում են խաղող ցեղի վայրի խաղող տեսակին (*Vitis sylvestris* C.C.Gmel. կամ, ըստ վերջին դասակարգման, մշակովի խաղող տեսակի վայրի ենթատեսակին [= *Vitis vinifera* L. subsp. *sylvestris* (Gmel.) Hegl], նկ. 2): Ինչպես հնավայրի մշակութային շերտերից հայտնաբերված մյուս վայրած ծառաթփային բույսերը, վայրի խաղողը ևս աճում է շրջակայքում՝ մասնավորապես, Խաչաղբյուր գետի հովտում՝ գետի երկայնքով տարածվող ափամերձ բուսականության կազմում:

Խաղողի հայտնաբերված կորիզները, ամենայն հավանականությամբ, մարդու օգտագործած պտուղների մնացորդներն են, քանի որ հայտնաբերվել են նրա գործունեության արդյունքում ստեղծված մշակութային շերտերում: Ավելին՝ խաղողի գտածոներից առաջինը հայտնաբերվել է մարդու պատրաստած կրակատեղիից (Str. 148) և ածխացած է, որը լրացուցիչ փաստարկ է մարդու կողմից օգտագործված լինելու մասին:

Թեև խաղողի հայտնաբերված կորիզները պատկանում են վայրի տեսակին, սակայն դրանց առկայությունը վաղ երկրագործական շրջանի շերտերում կարևոր է այն առումով, որ տվյալ վայրի տեսակը, որը մշակովիի նախնին է, կարող էր սկզբնապես դառնալ տվյալ տարածաշրջանում խաղողի մշակության սկզբնավորման համար: Ենթադրաբար, այն կարող էր նաև քարայրի շրջակայքից տեղափոխվել քարայրն օգտագործած անասնապահների և որսորդների բնակատեղիներ ու մշակվել այնտեղ:

НАХОДКИ ВИНОГРАДА ИЗ ЭНЕОЛИТИЧЕСКИХ СЛОЕВ  
ПЕЩЕРЫ ГЕТАОВИТ-2 (ИДЖЕВАН)  
(Середина V тысячелетия до н. э.)

РОМАН ОВСЕПЯН, ИРЕНА КАЛАНТАРЯН

Резюме

*Ключевые слова: виноград, археоботаника, собирательство, энеолит, пещера.*

Находки винограда на территории Республика Армения известны с раннеземледельческих периодов, но в целом они крайне редки. В результате раскопок и археоботанических исследований, проведенных в пещере Гетаовит-2, были найдены две виноградные косточки из двух разных энеолитических слоев, относящихся к XLVI–XLII и XLVII–XLIV вв. до н. э. – US36 (структура 148) и US53. Находки косточек винограда энеолитического периода из памятника Гетаовит-2 по возрасту следуют за находками из неолитического поселения Араташен и предшествуют энеолитическим находкам из пещеры Арени-1, восполняя тем самым пробел в изучении истории винограда на территории Армении.

FINDINGS OF GRAPE FROM THE ENEOLITHIC LAYERS OF THE GETAHOVIT-2  
CAVE (IJEVAN)  
(Mid 5th millennium BC)

ROMAN HOVSEPYAN, IRENA KALANTARYAN

Summary

*Key words: grape, archaeobotany, gathering, Eneolithic, cave.*

The finds of grape in the territory of the Republic of Armenia are known from the early agricultural periods, but, in general, these finds are very rare. As a result of the excavations and archaeobotanical studies conducted in the Getahovit-2 cave, two grape pips were found from two different Eneolithic layers dated by the 46th–42nd and 47th–44th centuries BC - US36 (Structure 148) and US 53. The findings of the Eneolithic period grape from the Getahovit-2 site chronologically follow the Neolithic finds of Aratashen and precede the Eneolithic finds of Areni-1, thus filling the gap in the history of the grapes in the territory of Armenia.

ՂԱՐԱԲԱՂԻ (ԱՐՑԱԽԻ) ԲԱՐԲԱՌԻ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ  
ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԼԱՎՐԵՆՏԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ղարաբաղի բարբառ, հնդեվրոպական արմատ, գրաբար, ստուգաբանություն, բառիմաստ, բառաձև, ածանց, հնչյունափոխություն, համակարգ:

*Հայերենի բարբառներում առկա են տարաբնույթ հնաբանություններ: Ակադեմիկոս Գ. Ջահուկյանը հնաբանությունները քննել է որպես համակարգ՝ հնարավորինս նյութի ամբողջական ներկայացմամբ և տարբեր բնույթի դասակարգումներով: Նշենք այդ դասակարգումներից մի քանիսը.*

- գրաբարից տարբեր հնչյունական կերպարանք,
  - գրաբարից տարբեր կազմություն,
  - գրաբարի բառիմաստից տարբեր՝ դրան զուգահեռ կամ դրանից հին բառիմաստ,
  - գրաբարում չվկայված հնդեվրոպական արմատներ կամ արմատական ձևեր<sup>1</sup>:
- Հնաբանություններում ներառված են Ղարաբաղի (Արցախի) բարբառում վկայված մի քանի տասնյակ բառեր, որոնք հնդեվրոպական ծագումով՝ բնիկ հայերեն բառեր են: Հոդվածում քննվող բառերը չկան Գ. Ջահուկյանի աշխատության մեջ:*

## 1. Դօն

*Բառը գործածվում է մրթկեն դօնը ըղնել, մրթկեն դօնը քրցիլ կապակցությունների մեջ: Այսինքն՝ «մտքերի մեջ խորասուզվել, մտքերի խորքն ընկնել»:*

*Դօն բառի առաջին և միակ ստուգաբանությունն Ալ. Մարգարյանինն է: Ըստ լեզվաբանի՝ դօն-ը տուն բառն է, և «մտքն տօնը ընկնել դարձվածում... տ-ն հաջորդելովն ձայնորդին տվել է դ և առաջ բերել մրտքեն դօնը/մրթքեն դօնը»<sup>2</sup>:*

\* Ընդունվել է տպագրության 14. XII. 2018 թ.:

<sup>1</sup> Գ. Ջահուկյան. Հայ բարբառագիտության ներածություն, Երևան, 1972, էջ 278–330:

<sup>2</sup> Ալ. Մարգարյան. Ստուգաբանություններ, Երևան, 2015, էջ 94:



Այս բացատրությունն առարկելի է, որովհետև՝ ա) կապակցության հնչաշղթայում կա դադար, որը խոչընդոտում է նշված հնչյունափոխությանը, բ) Ղարաբաղի բարբառում ոչ մի դեպքում տուն-ը դօն չի դառնում:

Համոզիչ չեն նաև տուն և դօն բառերի մեջ իմաստային-իմաստաբանական կապ տեսնելու հեղինակի փաստարկները, որոնց չենք անդրադառնում:

Դօն-ը իմաստային, ինչպես կտեսնենք, նաև բառաձևային առնչություն ունի հայերեն անդունդ «խորք, հատակ» բառի հետ: Ան-ը նախածանց է, արմատն է՝ դունդ, որն առանձին ավանդված չէ:

Ըստ Հր. Աճառյանի՝ դունդ ծագում է հ.-ե. \*bhandhos-ից «խորք, հատակ»: Նկատելով, որ հ.-ե. \*bhandhos հայերենում պետք է լիներ \*անբունդ՝ նա ենթադրում է նախալեզվի \*bhandhos-ի \*dhubnos հոմանիշը՝ չբացատրելով նաև դրափոխության գործոնը<sup>3</sup>:

Գ. Ջահուկյանը ենթադրում է \*bhudho «գետին, հատակ» (\*bh>\*dh առնմանությամբ) համեմատելով ռուս. без-дна «ան-դունդ»-ի հետ<sup>4</sup>:

Մլավոնական լեզուներում բառի տարբեր ձևերը ծագում են նախապլավոնական dъno/dъно, \*bъdno-ից<sup>5</sup>: Այսինքն՝ նույն հ.-ե. արմատից, ինչպես հայերենի անդունդ և բարբառային դօն-ը:

Բարբառային դօն-ը բառաձևի առումով ակնհայտ նմանություն ունի սլավոնական լեզուների հետ: Չպետք է կարծել, սակայն, որ այն փոխառվել է սլավոնական լեզուներից:

Ինչ վերաբերում է բառամիջի ձայնավորների անհամապատասխանությանը (գրաբարում ու, բարբառում օ), ապա այդ հնչյունափոխությունը հին և օրինաչափ երևույթ է. հմմտ. թուր-թօր, ծունկն-ծոյնը, շուն-շօն, իսկ որոշ դեպքերում էլ օ-ն, թերևս, հ.-ե. օ-ն է, ինչպես \*dom-տուն-տօն:

## 2. Ըորշկետան/որշկետան «զգեստի վրայից կապելու շոր, գոգնոց»

Բառի առաջին բաղադրիչը՝ ըորշ(կ) գրաբարյան առաջը բառն է (ՀԱԲ-ում առաջը-ն առանձին գլխաբառ է):

Բառաբարդման և ածանցման դեպքում բարբառում շեշտափոխության պատճառով բառասկզբի ա-ն արտասանվում է ը. արյունոտ-ընօտ, արեւ-ըրեվավ «արև

<sup>3</sup> Հր. Աճառյան. Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հ. I, Երևան, 1971, էջ 190:

<sup>4</sup> Գ. Ջահուկյան. Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետև՝ ՋՀՄԲ), Երևան, 2010, էջ 55:

<sup>5</sup> М. Ф а с м е р. Этимологический словарь русского языка, т. I. М., 1986, с. 59.

եղած ժամանակ», արածել-ըրածել, արկայթ-ըրկայթ «երկայթա», արջավորս-ըրջավերս ... և այլն:

Ընդշկեւտան-ի հոմանիշն Ագուլիսի բարբառում ընդշկապէ է<sup>6</sup>: Բարբառային այս գուգահեռը, և, հատկապէս, գրաբարյան սամետի բառի՝ Հր. Աճառյանի ստուգաբանությունն օգնում է ընդշկեւտան-ի տ բաղադրիչի էության պարզաբանմանը:

Գրաբարյան սամետի-ն «սամու կապը», ըստ Աճառյանի, կազմված է սամի-ա-տի բաղադրիչներից: - Տի-ն առանձին անգործածական է և մի քանի բաղադրություններում ունի «կապ» իմաստը. հմմտ. բարբառային ռոտեն «համետին կապված կաշե փոկ», վգտա «տավարը մսուրին կապելու փոկ»: Այդ ձևությոն է նաև Ղարաբաղի բարբառի տըրխաստան բառում<sup>7</sup> (ՀԱԲ, հ. IV, 1979, էջ 403): Այսինքն՝ բառի «կապել» իմաստը արտահայտում է -տի-ն, \*ընդշկետիան> ընդշկետան:

Հավելենք, որ - տի «կապ» բնիկ հայերեն է՝ հ.-ե. ճԵ «կապել» արմատից (ՀԱԲ, հ. IV, էջ 403): Առաջ բառի առ և աջ բաղադրիչները նույնպէս հ.-ե. ծագում ունեն:

### 3. Թօքի «աներես, պնդերես»

Բառի աղերսը գրաբարյան տոկալ-ի տոկ արմատի հետ թէև հնչյունափոխական առումով հնարավոր է, սակայն բառիմաստի տեսանկյունից մերժելի է: «Նոր բառգիրք հայկազյան լեզվի» տոկալ-ը մեկնում է «յերկարել, ժուժել, համբերել, բաւել...»<sup>8</sup>: Արդի հայերենում նույնպէս տոկալ-ը «աներես, պնդերես» իմաստը չունի, այլ՝ 1. «Որևէ բանի դիմանալ», 2. «Որևէ դժվարություն, դժբախտություն դիմացկունությամբ կրել՝ տանել», 3. «Չընկրկել, չնահանջել»:

Թօքի բառի արմատը գրաբարյան թօքն է «շնչառական օրգան», իսկ ի-ն՝ անականակերտ ածանց է. հմմտ. բրբռ. դօնգի «ապուշ, բթամիտ», փընթի «թափթփված»:

Հայերենում, այդ թվում և գրաբարում ու բարբառումներում, մարմնի մաս ցույց տվող մի շարք բառեր (արմատներ) վերջածանցավոր կազմություններում ունեն անականական, մակբայական, այսինքն՝ հատկանշանիշ իմաստներ. գրբ. ձեռական «արհեստական», մատն-մատնիչ, սիրտ-սրտագին, սրտեայ «քաջ, արի», գլուխ-գլխավոր: Ղարաբաղի բարբառում կօխկ/կօխք «կող»-ից՝ կօխկինա/ կօխքինա «համառ»:

<sup>6</sup> Տե՛ս Մ. Զաքարյան. Ագուլիսի բարբառը, Երևան, 2008, էջ 106:

<sup>7</sup> Բառիմաստը տե՛ս Ա. Մարգարյան. Ղարաբաղի բարբառի բառարան (այսուհետև՝ ՂԲԲ), Երևան, 2013, էջ 733:

<sup>8</sup> Նոր բառգիրք հայկազյան լեզվի (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, հ. I, 1836, հ. II, 1837:

Գ. Ջահուկյանը ենթադրում է թոք-ի բնիկ հ.-ե. ծագումը \**touok-* կամ \**teu-* “ուռ-չել” արմատից (ՋՀՄԲ, էջ 276):

#### 4. Լալուշ

Երեխաների կոնիվ՝ աղմուկ-աղաղակ, լալուշ անել “վիճել, աղմուկ-աղաղակ բարձրացնել” (ՂԲԲ, էջ 235):

Բառի կապը լալ “համր”-ի հետ մերժելի է: Վերջինս փոխառություն է պարսկերենից, որը բարբառում գործառում է լալեզ ձևով: Լալ “համր”-ը գրաբարի բառաբաններում վկայված չէ, իսկ միջին հայերենի բառարանը վկայում է մեկ օրինակ՝ Բառգիրք հայոցից<sup>9</sup>:

Լալուշ “աղմուկ-աղաղակ, վեճ”-ի կապը լալ “համր”-ի հետ առնչելը հնարավոր է միայն այն դեպքում, եթե -ուշ ձևույթը ժխտական իմաստ ունենար: Ուրեմն՝ լալուշ բառի ծագման հարցում պետք է փնտրել այլ զուգահեռ:

Այդպիսի զուգահեռ է հունարեն *λάλεω*-ն, որն ունի “իզուր խոսել, պատմել”, “շատախոսել”, նաև՝ “անհողաբաշխ ձայներ արձակել, բառաչել” իմաստները: Հունարենում *λαλ* արմատով կան մի շարք կազմություններ՝ “խոսել, վիճել” իմաստային նրբերանգներով<sup>10</sup>:

Բարբառում լալ արմատի հին հունարենից անմիջական փոխառություն համարելը քիչ հավանական է, ուրեմն՝ մնում է ենթադրել, որ հնդեվրոպական ծագումով նույն արմատը պահել են հունարենը և հայերենը՝ Արցախի տարածքային տարբերակում: -Ուշ ածանցով բարբառում կան այլ կազմություններ *ևս*. մունթ(ը)ռուշ “քիթ ու մուրթը կախել”, փըրթուշ “բրդուճ”, նանուշ “անճարակ”, լամփուշ “հաստ ու կոպիտ”:

Եթե -ուշ ածանցը կապ ունի գրաբարյան -ուշ-ի հետ, ապա վերջինս էլ հնդեվրոպական ծագում ունի<sup>11</sup>:

#### 5. Ծւմմս “ծնոտ”

Բարբառում կա և **ծւմմսը** կախ/կօտրած “չուռումունջ նստող, դանդաղ՝ ծանր-ծանր խոսող” (ՂԲԲ, էջ 297): Բարբառային բառի գրաբարյան հունանիշն է ծամե-

<sup>9</sup> Ռ. Ղ ա գ ա ղ յ ա ն, Հ. Ա վ ե տ ի ս յ ա ն. Միջին հայերեն բառարան, Երևան, 2009, էջ 281:

<sup>10</sup> *Sté u* Մ. X. Д в о р е ц к и й. Древнегреческо-русский словарь, т. I. М., 1958, с. 1009.

<sup>11</sup> *Sté u* Գ. Ջ ա հ ու կ յ ա ն. Հին հայերենի վերջածանցների ծագումը. – Հայոց լեզվի համեմատական քերականության հարցեր, պր. 2, Երևան, 1998, էջ 27:

լի(ք)-ը՝ վկայված *V* դարից: Վերջինս ՆՀԲ-ն մեկնում է “... քունք և ծնօտ ... որ է միջոց կամ գործի ծամելոյ կենդանւոյն զկերակուրս” (ՆՀԲ, հ. I, էջ 1004):

Ծամ արմատը գրաբարում առանձին անգործածական է և հանդիպում է միայն ծամելի կամ ծամելիք, անծամ, մեղմածամ բառերում (ՀԱԲ, հ. II, 1973, էջ 441):

Ստուգաբանական բառարաններում բառը համարվում է բնիկ հայերեն՝ հնդեվրոպական \*gmbh-gembh (ՀԱԲ, հ. II, էջ 441, ՋՀՄԲ, էջ 358): Բարբառային ձևն ավելի հին և հարազատ է հ.-ե. համապատասխանակին, քան գրաբարյան ծամելի, ծամելիք-ը:

Հնարավոր է բարբառում (գուցե և գրաբարում) նախնական \*ծամք ձևը, որը, սակայն, ավանդված չէ:

## 6. Կըլտի/կիլտի “թոթովախոս, թլվատ”

Բառը վկայված է միայն Ղարաբաղի բարբառում<sup>12</sup>:

ՀԱԲ-ում գել “ոլորած, պիրկ, ծուռ” բառահոդվածում մի շարք բառերի հետ նշվում է և գելակի “գալարվելով, կծկվելով, շեղակի” բառը: Իսկ գել արմատը համարվում բնիկ հնդեվրոպական *velu-ից*՝ տարբեր լեզուներից նշելով այդ արմատով բառեր, որոնց շարքում, սակայն, լեզվական արատ ցույց տվող բառ չկա:

ՆՀԲ-ում գելակի-ն վկայված չէ: ՀԱԲ-ում Աճառյանը հղում է Ջախջախյանի բառարանը: Վերջինս բնագրային օրինակներ չունի, բնականաբար, հնարավոր չէ պարզել, թե ինչ համատեքստում է այն գործածվել:

Մեզ հաջողվել է գտնել գելակի մի վկայություն, որտեղ այն ունի “թլվատ” իմաստը: X դ. հեղինակ Անանիա Մոկացին “Պատճառ յաղագս զԽոսրով նգովելոյն զԱնձեւացոց եպիսկոպոսն” աշխատության մեջ գրում է. “... յարեաւ ոմն յեպիսկոպոսաց մերոց Խոսրով անուն ... այր համեստ և գիտնաւոր ... սկսաւ նախ զբարբառն գելակի արձակել՝ ըստ յունարէն լեզուոյն, զկիրակէն կիւռիակէ կոչել և զԵրուսաղէմ՝ Եռուսաղէմ և որ սոցին նման է”<sup>13</sup> (ընդգծումը մերն է. – Լ. Ն.):

Գրաբարյան գելակի բառի արմատն է գել-ը, իսկ -ակի-ն ածականակերտ-մակ-բայակերտ ածանց է: Բառակազմական նույն կաղապարն է բարբառի կըլտի բառում:

<sup>12</sup> Տե՛ս Հր. Աճառեան. Հայերէն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 569, Հայոց լեզվի բարբառային բառարան, հ. 9, Երևան, 2004, էջ 92:

<sup>13</sup> Գ. Տեր-Մկրտչյան. Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, Ս. Էջմիածին, 1998, էջ 126, նաև՝ Մատենագիրք հայոց, հ. Ժ, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2009, էջ 276:

Հ.-ե. ծագում ունեցող բառերում գրաբարյան բառերի ձայնեղները բարբառում, հատկապես բառասկզբի դիրքում, իլանում են. հմմտ. բան-պէն, բեռն-պէռնը, գայլ-կուլ, դուռնը-տոռնը, ձուկն-ծուկուն և այլն:

Մի խոսքով, հ.-ե. \*vel-(\*uel-), գրաբար՝ գել, բարբառային՝ կըլ/կիլ նույնիմաստ արմատներ են: Ինչ վերաբերում է բարբառում արմատի ձայնավորի փոփոխությանը, այն, թերևս, կարելի է դիտել որպես ձայնդարձի կամ ե>ի, նաև ե>ը գործուն հնչյունափոխության արտահայտություն. հմմտ. բերել-պիրիլ, բարեկամ-պարիկամ, երեք-իրեք, ձեւել-ծիվիլ, մեծանալ-մըծանալ, դեղնուց-տըղնուց...

Ինչպես նշել ենք, գելակի բառում -ակի-ն հատկանշանիչ ածանց է, իսկ բարբառային ձևում հատկանշանիչ է-տի ձևությամբ. հմմտ. պօպօզ-պուպուզտի:

Գրաբարյան գելակի-ի և բարբառային կըլտի/կիլտի բառիմաստային և բառակազմական ընդհանրությունն ակնհայտ է:

Ստուգաբանական բառարանների հ.-ե. \*uel- հայերեն գել կապն անժխտելի է, բայց չի բացահայտվում գելակի-ի ճշգրիտ բառիմաստը, այսինքն՝ որոշ բառերում ր-ի սխալ արտասանությունը:

Հավելենք, որ մի շարք օտար լեզուներում կան ր-ի և ռ-ի ոչ ճիշտ արտասանությանը վերաբերող բառեր (տերմիններ). ինչպես՝ ռուս. картавый, картавить “ր-ի սխալ արտասանություն”<sup>14</sup>, ֆրանսերեն՝ grasseyer “r-ի քնալեզվային, ոչ թրթռուն արտասանություն”<sup>15</sup>:

## ЭТИМОЛОГИЯ НЕКОТОРЫХ СЛОВ КАРАБАХСКОГО (АРЦАХСКОГО) ДИАЛЕКТА

ЛАВРЕНТИЙ ОГАНЕСЯН

### Резюме

*Ключевые слова:* карабахский диалект, индоевропейский корень, древнеармянский язык, этимология, значение слова, словоформа, аффикс, словарь, чередование звуков, система

Рассматриваемые слова карабахского (арцахского) диалекта имеют индоевропейское происхождение.

*Дон* «дно, глубь» – и.-е. \*bhudh-no/ bhundho, др. арм. «ан-дунд», праслав. «\*дъбно», русск. укр. «дно». Диалектный *дон* не следует считать заимствованием из славянских языков, потому что и.-е. корень присутствует в древнеармянском языке.

<sup>14</sup> В. Д а л ь. Толковый словарь живого великорусского языка, т. 2. М., с. 94.

<sup>15</sup> Словарь лингвистических терминов. М., 1966, с. 116.

*Երիշկետան* «передник»: все компоненты – *араджк*, суффикс -ан, т<ти и.-е. \*d’ «завязать», и.-е. происхождения.

*Токи* «нахальный»: арм. «ток», «легкие» + суффикс -и. В армянском соматические корни с суффиксами имеют атрибутивное значение.

*Лалуш* «спор, шум и гам» – ср. др. греч. λ©λ±ω «болтать».

*Цамс* «челюсть» – и.-е. \*gmbh-gembh.

*Кьлти* «картавый» – и.-е. \*uelu- \*uel «кривой», др. арм. «гелаки»: др. арм. словоформа имеет суффикс -акі, диалектная форма -ти.

## THE ETYMOLOGY OF SOME WORDS OF KARABAKH (ARTSAKH) DIALECT

LAVRENTI HOVHANNISYAN

### Summary

*Key words: Karabakh dialect, Indo-European root, Old Armenian, etymology, word meaning, word-forms, affix, dictionary, sound-change, system*

The considered words of Karabakh dialect have Indo-European origin.

*Don* “bottom, depth” comes from IE \*bhudh-no/bhundho, in Old Armenian – *an-dued* “abyss”. The same IE root exists also in Slavonic languages: preslav.\*dǫbno, russ. *dno*, yucr. *dno*. Dialectal *don* is not a Slavic borrowing, because the same root exists in Old Armenian. *arəsketan* “apron”. The all components of this word (*araj(k)*,-*an* are of IE origin. т<ти comes from IE \* dē “bind”.

*toki* “shameless” comes from Arm. *tok* “lung” + suffix *i*. In Armenian the words denoting the part of body with any suffix, have a meaning of attribute.

*Lalush* means “quarrel”. compare greek λ©λ±ω with the same meaning.

*Tsams* “jaw, chin” comes from the IE root \*gmbh-gembh.

*Kilti/kilti* “stammering”. Comes from IE \*uelu- \*uel “crooked, twisted”. The Old Armenian *gelaki* derives from the same IE root. Old Armenian has the suffix –aki, in Karabakh dialect the suffix is –ti.

---

---

ԽԵԹԱԿԱՆ ՄԻՋԻՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՁ\*

ՌՈՒՄԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ

Բանալի բառեր՝ Խեթական պետություն, Հայկական լեռնաշխարհ, Միջին իսթական թագավորություն, Թուրխալիյա I/II, Մուվաթալի I, Առնուվանդա I, Ասսուվա, Պախխուվա, Մադդուվատտա, Իսուվա, Խաթթուսիլի II, Փոքր Ասիա:

*Խեթական պետության (Խաթթի), որը հիմնականում ընդգրկում էր Հայկական լեռնաշխարհի արևմտյան, Փոքր Ասիայի՝ կենտրոնական և արևելյան շրջանները, մ. թ. ա. XV դ. երկրորդ կեսի – XIV դ. առաջին կեսի պատմությունը մասնագիտական գրականության մեջ հայտնի է “Միջին թագավորություն” անվամբ<sup>1</sup>: Մակայն իսթագիտության մեջ այն առաջացրել է տարամետ կարծիքներ. երբեմն նաև Խաթթիի պատմության այս փուլի առանձնացումը մերժվել է:*

*Ըստ Ա. Գյոթցեի՝ իսթական Նոր թագավորությունը սկսվել է Թուրխալիյա II-ի կառավարման տարիներով՝ մ. թ. ա. մոտ 1450 թ.<sup>2</sup>: Փաստորեն, Նոր թագավորությունը, սկսելով Թուրխալիյայի ժամանակաշրջանից, Ա. Գյոթցեն մերժում է է. Ֆոռերի առաջարկած Խեթական պետության եռամաս բաժանման տեսությունը (Հին թագավորություն՝ մինչև Տելեպինուի ժամանակաշրջանը, Միջին թագավորություն՝ Ալլուվամնայից մինչև Առնուվանդա II, Նոր թագավորություն՝ Մուրսիլի II-ից մինչև Սուպպիլուլիումա II-ը)<sup>3</sup>: Որոշ իսթագետներ<sup>4</sup> նշում են՝ Տելեպինու ար-*

---

\*Ընդունվել է տպագրության 18. III. 2019 թ.:

<sup>1</sup> “Ստորին” ժամանակագրության համաձայն՝ մ. թ. ա. XV–XIV դդ. Խեթական պետության արքայացանկը ներկայանում է այսպես՝ Յիդանտա I, Ամմունա I, Խուցցիյա I, Տելեպինու, Տախտուրվաիլի, Ալլուվամնա, Խանթիլի II, Յիդանտա II, Խուցցիյա II, Մուվաթալի I, Թուրխալիյա I, Խաթթուսիլի II (գոյությունը կասկածի տակ է), Թուրխալիյա II (գոյությունը կասկածի տակ է, նույնացվում է Թուրխալիյա I-ի հետ. մասնագիտական գրականության մեջ այս արքային ընդունված է ներկայացնել որպես Թուրխալիյա I/II), Առնուվանդա I, Թուրխալիյա III, Սուպպիլուլիումա I, Առնուվանդա II, Մուրսիլի II (տե՛ս Ա. Քոսյան. Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XV դարում.– ՊԲՀ, 2000, № 3, էջ 162–163):

<sup>2</sup> A. Götze. Das Hethiter-Reich. Seine Stellung zwischen Ost und West.– “Der Alte Orient”, 1928, N 27/2, S. 8–46.

<sup>3</sup> E. Forrer. Die Boghazkoi-Texte in Umschrift. Zweiter Band, Leipzig, 1926, S. VI.

քային հաջորդած մոտ 60–80 տարին կարելի է համարել Հին թագավորության վերջնական փուլ և Խեթական Նոր թագավորության սկիզբ, որը սկսվում է Թուդ-խալիյա I/II-ի ժամանակաշրջանով. փաստորեն, համաձայնելով Ա. Գյոթցեի հետ:

Մասնագիտական գրականության մեջ տրվում է նաև խեթական ժամանակագրության եռամաս բաժանումը՝ ըստ խեթական աղբյուրների լեզվական զարգացման և առանձնահատկությունների (հնագրության հիման վրա): Խեթական գրի զարգացումը նույնպես տարբերակվում է հին, միջին և նոր փուլերի: Նոր շրջանի մի շարք տեքստեր, որոնք հին տեքստերի արտագրություններն են, պահպանել են հին գրության շատ ձևեր ու սեպանշաններ: Գրության նոր ձևերը հայտնվում են արդեն Մուպպիլուլիումա I-ի ժամանակաշրջանի (մ. թ. ա. 1344–1322 թթ.) տեքստերում: Այսպիսով, խեթական տեքստերի պատմության եռամաս բաժանումը հիմնականում համապատասխանում է նաև խեթերենի հնագրական բաժանմանը<sup>5</sup>:

### Թուդխալիյա I/II

Խեթական Միջին թագավորության առաջին արքա կարելի է համարել Թուդխալիյա I/II-ին (մ. թ. ա. XV դ. երկրորդ կես)<sup>6</sup>: Խաթթիում նրա գահակալմանը նախորդել էին բավական բուռն իրադարձություններ: Խաթթիի արքա Յիդանտա II-ի (մ. թ. ա. XV դ. առաջին կես) հաջորդի՝ Խուցցիյա II-ի (մ. թ. ա. XV դ. առաջին կես) կառավարումն ընդհատվեց վերջինիս սպանությամբ, որի կազմակերպիչն արքայի թիկնազորի հրամանատար Մուվաթալլին էր, ով բռնազավթեց գահը և

<sup>4</sup> K. Bittel. Die Hethiter. München, 1976, S. 306; E. L a r o c h e. Chronologie Hittite: état des questions. Anadolu, 1955, 2, pp. 1–22; F. C o r n e l i u s. Geschichte der Hethiter. Mit besonderer Berücksichtigung der geographischen Verhältnisse und der Rechtsgeschichte. Darmstadt, 1979. Ա. Գյոթցեն օգտագործում է նաև “Կայսրության շրջան” (մ. թ. ա. XIV–XIII դդ.) եզրույթը, որը նույնպես տարածում է գտել մասնագիտական շրջանակներում (տե՛ս A. Goetze. Cambridge Ancient History, vol. 2, part 2. Cambridge, 1975, p. 266; O. R. G u r n e y. The Hittites. London, 1990; T. B r y c e. The Kingdom of the Hittites. Oxford, 2005, p. 121 և այլն):

<sup>5</sup> S t é u A. A r c h i. Middle Hittite - “Middle Kingdom”.– “Hittite Studies in Honor of Harry A. Hoffner Jr. on the Occasion of His 65th Birthday”, 2003, Winona Lake, pp. 1–12.

<sup>6</sup> Խեթական Միջին թագավորության արքայական ցուցակի բացակայությունը և որոշակի անհամապատասխանությունները դժվարությունների առջև են կանգնեցնում մասնագետներին: Խնդիր է առաջանում նաև տարբեր իրադարձությունները կապել մեկ Թուդխալիյայի, թե երկու Թուդխալիյաների գործունեության հետ (տե՛ս R. B e a l. The History of Kizzuwatna and the Date of the Sunaššura Treaty. – “Orientalia”, 1986, № 55, p. 442, n. 87: Թուդխալիյա I/II արքայի վերաբերյալ տե՛ս O. C a r r u b a. Hethitische Dynasten zwischen altem und neuem Reich.– “Acts of the III International Congress of Hittitology”, Çorum, 1996. Ankara, 1998, S. 87–107; J. F r e u. Histoire du Mitanni. Paris, 2003, pp. 55–79):



խեթական արքայացանկում հայտնի է որպես Մուվաթալլի I (մ. թ. ա. XV դ. կես): Սակայն որոշ ժամանակ անց Մուվաթալլին ևս զոհ գնաց պալատական դավադրության, որը գլխավորում էին երկու բարձրաստիճան անձինք՝ Կանտուցցիլին և Խիմուիլին՝ Խուցցիյա II-ի որդիները<sup>7</sup>: Դեռևս պարզ չէ, թե նրանք ինչպես էին ողջ մնացել իրենց հոր սպանությունից հետո և թե ինչպես հաջողվեց կազմակերպել պետական հերթական հեղաշրջումը: Հավանաբար, Մուվաթալլին ամուր դիրքեր չունեք արքունիքում և բանակում, որն էլ հնարավորություն տվեց Խուցցիյայի կողմնակիցներին տապալել նրան: Դավադիրների վերջնական նպատակն էր Կանտուցցիլիի որդի Թուդիսալիյային նստեցնել Խաթթիի գահին:

Մուվաթալլիի հավատարիմ ուժերը համախմբվեցին նրա թիկնազորի հրամանատարի՝ Մուվայի<sup>8</sup> շուրջ, ով, հավանաբար, նրա որդին էր: Մուվան իր բանակով, որին միացել էին նաև խուռիական ուժեր (հավանաբար՝ Կիցցուվատնայից), կռիվ սկսեց իր հակառակորդների (Թուդիսալիյայի, Կանտուցցիլիի) դեմ: Հերթական անգամ խեթական տերությունը պատակտվեց: Ի վերջո, Մուվան ու նրա դաշնակից խուռիները պարտություն կրեցին և Թուդիսալիյան հաստատվեց խեթական գահին<sup>9</sup>:

Մենք տեղեկություններ չունենք նոր արքայի վերաբերյալ մինչ նրա գահ բարձրանալը: Թ. Բրայսը կարծիք է հայտնել, որ նա Մուվաթալլիին սպանողներից մեկի՝ Խիմուիլիի որդին էր<sup>10</sup>: Սակայն Հ. Օտտենի կողմից հրատարակված խեթա-

<sup>7</sup> T. Bryce. The Kingdom of the Hittites. Oxford, 2005, p. 121.

<sup>8</sup> Մուվան հողահատկացման փաստաթղթում ներկայացված վկաների ցուցակում Խիմուիլիի հետ նշված է որպես գլխավոր պաշտոնյաներից մեկը [Keilschrifttexte aus Boghazköy (այսուհետև՝ KBo) XXXII 185]: Փաստաթուղթը կնքված է Մուվաթալլի I-ի կնիքով (տե՛ս H. Otten. Excurs zu den Landschenkungsurkunden.– “Archäologischer Anzeiger”, Heft 3, Berlin, 1991, S. 346):

<sup>9</sup> Այս իրադարձությունների նկարագրությունը տե՛ս Keilschrifturkunden aus Boghazköy (այսուհետև՝ KUB) XXIII 16 III [E. Laroche. Catalogue des Textes Hittites. Paris, 1971 (այսուհետև՝ CTH) 211.6] տեքստում, որի ամբողջական հրատարակությունը տե՛ս O. Carruba. Beiträge zur mittelhethitischen Geschichte: I-Die Tuthalijas und die Arnuandas.– “Studi Micenei ed Egeo-Anatolici” (այսուհետև՝ SMEA), Rome, 1977, № 18, S. 162–163.

<sup>10</sup> T. Bryce. The Kingdom of the Hittites. Oxford, 1998, p. 132. Սակայն Թ. Բրայսն իր աշխատության երկրորդ, խմբագրված հրատարակության մեջ համամիտ է եղել այն կարծիքին, որ Թուդիսալիյան Կանտուցցիլիի որդին էր (նույնի՝ The Kingdom of the Hittites. 2005, p. 122).

կան կնիքներից մեկի վրա գրված է, որ Խաթթիի մեծն արքա Թուդիսալիյան Կանտուցցիլիի<sup>11</sup> որդին է<sup>12</sup>:

Ամեն դեպքում, Թուդիսալիյայի՝ Խուցցիյա II-ի թոռան գահ բարձրանալը կարելի է բնորոշել որպես նախկին արքայատոհմի շարունակություն խեթական գահին: Մակայն պարզ չէ, թե ինչու ինքը՝ Կանտուցցիլին, Մուվաթալլիին՝ գահընկեց անելուց հետո, չթագավորեց<sup>13</sup>: Եթե ընդունենք այն փաստը, որ Խիմուլիին նույնպես այդ գործողությունների ակտիվ մասնակիցներից էր, ապա հնարավոր է՝ եղբայրների միջև կայացել է համաձայնություն՝ գահը թողնել Թուդիսալիյային՝ դրանով խուսափելով եղբայրների միջև հետագա պայքարից:

Մասնագիտական հրատարակություններում կարծիք կա նաև, որ Թուդիսալիյա I/II-ը կարող էր լինել նոր՝ ծագումով խուռիական արքայատոհմի հիմնադիրը<sup>14</sup>: Խեթական մի շարք արքաներ և արքայական տոհմի անդամներ տվյալ ժամանակաշրջանի արձանագրություններում կրում են երկակի՝ խեթական ու խուռիական անուններ (օրինակ՝ այս շրջանի երկու թագուհիներ կրում են միայն խուռիական անուններ՝ Նիկկալմատի և Ասմունիկալ)<sup>15</sup>: Սապինուվա քաղաքում<sup>16</sup> գտնվող Առնուվանդա I-ի «գրադարանը» պարունակում է խուռիական ձեսեր նկարագրող բազմաթիվ տեքստեր: Այս ժամանակաշրջանում մեծաքանակ խուռիերեն աշխա-

<sup>11</sup> Հավանաբար, այս Կանտուցցիլիին է պատկանում նաև խեթական աղոթքի տեքստերից մեկը [տե՛ս I. Singer. Prayer of Kantuzzili (CTH 373). Hittite Prayers. Leiden-Boston-Köln, 2002, pp. 31–33]:

<sup>12</sup> Կնիքի (Bo 69/99) մասին տե՛ս H. Otten. Ein Siegelabdruck Duthalijas I. (?). – “Archäologischer Anzeiger”, 2000, Heft 3; Ö. Soysal. Kantuzzili in Siegelinschriften. – “Bibliotheca Orientalis”, Leiden, 2003, № 60, S. 48–50, 53; H. Otten. Das hethitische Königshaus im 15. Jahrhundert v. Chr.: Zum Neufund einiger Landschenkungsurkunden in Boğazköy. – “Anzeiger der phil.-hist. Klasse der Österreichischen Akademie der Wissenschaften”, № 123. Vienna, 1987, S. 21–34, Abb. 1–8.

<sup>13</sup> Չնայած Գ. Վիլիելմն իր աշխատություններից մեկում Կանտուցցիլիին ընդգրկել է խեթական արքայացանկում՝ Մուվաթալլի I-ից հետո, մինչև Թուդիսալիյա I/II-ը, սակայն խեթական աղբյուրները նման եզրահանգման հնարավորություն չեն տալիս [տե՛ս G. Wilhelm. Generation Count in Hittite Chronology, Mesopotamian Dark Age Revisited. Proceedings of an International Conference of SCIEM 2000, Wien 8th-9th November 2002 (Österreichischen Akademie der Wissenschaften)”, Wien, 2004, p. 76]:

<sup>14</sup> O. R. Gurney. The Hittites, 1990, p. 26.

<sup>15</sup> Տե՛ս Ա. Քոսյան. Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XV դարում, էջ 167:

<sup>16</sup> Սապինուվան Խաթթիի կարևորագույն վարչական, կրոնական և ռազմական կենտրոններից մեկն էր, գտնվել է ներկայիս Օրթաքոյ բնակավայրի մոտ (ներկայիս Թուրքիայի Չորումի նահանգում):

տույթուններ էին բերվում Խաթթի, որտեղ դրանք այնուհետև թարգմանվում էին խեթերեն<sup>17</sup>:

Մակայն, եթե ընդունենք՝ Թուդիսալիյան պատկանում էր խեթական արքայատոհմին, ապա դժվար է ընդունել այն ենթադրությունը, որ արքայատոհմը, սկսած Միջին խեթական փուլից, խուռիական ծագում ուներ: Ավելի հավանական է կարծել, որ արքունիքում խուռիական ծագում ունեցող թագուհիների ու պալատականների, ինչպես նաև Փոքր Ասիայի տարածքում խուռիախոս բնակչության թվի ավելացման հետևանքով խուռիական մշակութային և քաղաքական ազդեցության ուժեղացում էր տեղի ունեցել: Խուռիների ներթափանցումը շարունակվել է նաև հետագայում, որի վկայությունը խեթական պաշտոնական դիցարանում նաև մեծաքանակ խուռիական աստվածների առկայությունն էր<sup>18</sup>:

Գահին հաստատվելուց հետո Թուդիսալիյայի առաջին գործերից մեկը եղավ խեթական գերիշխանությունը Փոքր Ասիայի արևմտյան հաստվածում ամրապնդելը: Նա իր կառավարման առաջին տարիներին արշավանքներ ձեռնարկեց այդ ուղղությամբ, որոնք ավելի շատ կանխարգելիչ բնույթ ունեին: Խաթթիի արքայի հերթական արշավանքի ժամանակ հիշատակվել են քսաներկու աստվածային երկրներ (Jugga, Kispuwa, Unaliya, [ ], Dura, Halluwa, Huwallusiya, Karakisa, Dunda, Adadura, Parista, [ ], [ ]waa, Warsiya, Kuruppiya, [ ]luissa (կամ Lusa), Alatra(?), Pahurina լեռան երկիր, Pasuhalta, [ ], Wilusiya, Taruisa), որոնք պատերազմել են Խաթթիի դեմ: Թուդիսալիյային հաջողվում է հնազանդեցնել այդ երկրները, բազմահազար գերիներ և ավար տանել Խաթթուսա: Գերիներին զուգահեռ Խաթթուսա է տարվում նաև նվաճված երկրների տրամադրած զինական ուժը: Որպես

<sup>17</sup> A. Archi. Remarks on the Early Empire Documents.– “Altorientalische Forschungen”, Berlin, 2005, № 32, 2, pp. 225–229.

<sup>18</sup> Մ. թ. ա. XV դ. փոխվում են Խաթթիի պաշտոնական դիցարանի կազմը և բնույթը: Դիցարան են ներառվում խուռիական հիմնական աստվածությունները (օրինակ՝ Թեշուր, Խեբատ, Շառումա աստվածային եղյակը): Բացի այդ, դրա հետ կապված՝ խուռիական առասպելների մի ողջ շարք է ներթափանցում Փոքր Ասիա: Նոր դիցարանի վառ դրսևորումն էր Խաթթուսայից ոչ հեռու գտնվող ժայռափոր խոշոր սրբավայրը: Այնուամենայնիվ, խուռիական աստվածների մուտքը չվերացրեց տեղական աստվածությունների պաշտամունքը: Նախկինի պես խեթական դիցարանի գերագույն աստվածն էր Թարխունտան, որը նույնացվում էր խուռիական Թեշուրի հետ (տե՛ս Ա. Քոսյան. Միջին թագավորություն. Խեթական տերության կազմավորումը.– Հայաստանի հարակից երկրների պատմություն, Հին շրջան, հ. I, Երևան, 2013, էջ 178–180, Ա. Բոբոխյան. Խեթական Փոքր Ասիայի մշակույթը.– Նույն տեղում, էջ 193):

հետևանք՝ նվազեցվում է վտանգը Փոքր Ասիայի արևմուտքից: Այս իրադարձությունները տեղ են գտել Թուդիսալիայի «տարեգրություններում»<sup>19</sup>:

Թուդիսալիայի կողմից Խաթթուսա բերված գերիների մեջ էր նաև Պիյամա-Կուրունտան, ով, հավանաբար, ասսուվյան երկրների դաշինքի առաջնորդն էր: Թուդիսալիյան գերել էր նաև նրա որդուն՝ Կուկկուլլիին, որին շուտով Խաթթիի արքան ազատ է արձակում և որպես ենթակա կառավարիչ նշանակում նույն տարածաշրջանի (Փոքր Ասիայի արևմուտքում) երկրներից մեկում: Սակայն Կուկկուլլին խռովություն է բարձրացնում խեթերի դեմ, պարտություն կրում և սպանվում<sup>20</sup>: Ամեն դեպքում, խեթական արքունիքը հետագայում ևս կիրառել է այս գործելաոճը՝ օգտագործելով տեղական ազնվականներին նորանված կամ ենթակա երկրներում իրենց ազդեցությունը պահելու ու ամրապնդելու համար:

Ասսուվյան երկրների անվան տակ խեթերը, հավանաբար, հասկանում էին Փոքր Ասիայի ամբողջ արևմուտքը<sup>21</sup>: Մի շարք մասնագետներ նշում են, որ այդ անունը հիմք է հանդիսացել Ասիա անվան համար՝ ուշադրություն հրավիրելով այն փաստի վրա, որ հռոմեական Ասիա նահանգը գտնվել է Փոքր Ասիայի այդ շրջանում<sup>22</sup> (հետագայի հիմնականում Կարիայի, Լյուդիայի, Փոյուզիայի և Հոնիայի տարածքները<sup>23</sup>):

<sup>19</sup> KUB XXIII 27; XXIII 11; XXIII 12; KBo XII 35; KUB XXIII 18 (CTH 142.2). S. K. J. Garstang and O. R. Gurney. The Geography of the Hittite Empire. London, 1959, pp. 121–123; O. Carruba. Beiträge zur mittelhethitischen Geschichte: I - Die Tuthalijas und die Arnuandas, S. 158–163.

<sup>20</sup> J. Garstang and O. R. Gurney. Նշվ. աշխ., էջ 122:

<sup>21</sup> Ասսուվա երկիրը հիշատակվել է խեթական մի քանի տեքստերում՝ KUB XXIII 11 + 12 (CTH 142), KUB XXIII 14 (CTH 211.5), KUB XXVI 91 (CTH 183), KUB XXXIV 43 (CTH 824), KUB XL 62 + KUB XIII 9 (CTH 258) և մի թրի վրա: S. K. J. Garstang and E. H. Cline. Assuwa and the Achaeans: the “Mycenaean” Sword at Hattusas and its Possible Implications.– “Annual of the British School at Athens”, 1996, № 91, pp. 140–141, n. 27; F. Starke. Troia im Kontext des historischen-politischen und sprachlichen Umfeldes Kleinasien in 2 Jahrtausend.– “Studia Troica”, Tübingen, 1997, № 7, S. 455; W. D. Niemeier. Mycenaeans and Hittites in War in Western Asia Minor.– “Aegaeum”, 1999, № 19, p. 145.

<sup>22</sup> E. R. Jewell. The Archaeology and History of Western Anatolia during the Second Millennium B. C. Thesis: University of Pennsylvania, 1974, p. 288 n. 3. A. Ünal, A. Ertekin and I. Ediz. The Hittite Sword from Boghazköy-Hattusa, found in 1991 and its Akkadian Inscription, Museum 4, Istanbul, 1991, p. 52; E. H. Cline. Նշվ. աշխ., էջ 141–142, F. Starke. Նշվ. աշխ., էջ 456:

<sup>23</sup> S. K. J. Garstang and E. H. Cline. Փոքր Ասիայի սատրապական բաժանումը մ. թ. ա. VI–IV դարերում, Երևան, 2017, էջ 7–72:

Ասսուվյան երկրների ցուցակի առաջին տեղանունը կարելի է վերականգնել որպես *Լուկկա երկիր* [ ]ugga, [L]ugga (= Lukka)<sup>24</sup>, այսինքն՝ այդ երկրների կազմի մեջ էր մտնում նաև հետագայի Լիկիայի տարածքը: Ուշադրության են արժանի նաև վերջին երկու անունները՝ Վիլուսիյա և Տարուխսա, որոնք, անկասկած, հունական Իլիոն ու Տրոյա տեղանունների խեթական տարբերակներն էին: Այս անվան մեկ այլ վկայություն կա արծաթե գավաթի վրա, որի վրա հիերոգլիֆ լուվիերենով գրված արձանագրությունում նշված է՝ «Թուդիսալիյան նվաճեց Tara/i-wa/i-za-wa/i-ն»<sup>25</sup>: Թուդիսալիյայի ասսուվյան գործերի մասին է վկայում նաև Խաթթուսայի «Առյուծի դարպասի» մոտ գտնված բրոնզե թուրը<sup>26</sup>: Այն Թուդիսալիյայի անունից նվիրվում էր Խաթթուսի Ամպրոպի աստծուն՝ Ասսուվայի դեմ հաղթանակ տանելու կապակցությամբ: Ասսուվայի հիշատակությունը թրի վրա, ինչպես նաև հավանականությունը, որ այն պատրաստվել էր Փոքր Ասիայի արևմուտքում, փաստում է այն մասին՝ այդ իրն ասսուվյան արշավանքից հետո որպես ավար բերվել էր Խաթթուսա:

Թուդիսալիյայի և հետագա խեթական արքաների նվաճողական քաղաքականությունն արևմտյան Փոքր Ասիայում ուներ նաև տնտեսական նշանակություն: Տարածաշրջանը հարուստ է մետաղահանքերով և կապող օղակ էր Փոքր Ասիայի ու Բալկանների միջև տեղի ունեցող առևտրական հարաբերությունների ոլորտում: Բացի այդ, այն նաև խեթերի համար յուրահատուկ պաշտպանական գոտի էր արևմուտքից՝ Ախիսիյավայի կողմից սպասվող վտանգներին ընդառաջ:

Այնուամենայնիվ, նույնիսկ այդպիսի հաջողություններից հետո Խաթթուսի դիրքերը Փոքր Ասիայի արևմուտքում կայուն չէին: Նման եզրահանգման կարելի է գալ, այսպես կոչված, «Մադդուվատտայի մեղանշանքը» պայմանական անունը կրող տեքստի<sup>27</sup> ուսումնասիրությունից հետո: Այն ունի նամակի տեսք՝ գրված Թուդիսալիյայի հետ համակառավարող Առնուվանդայի կողմից:

<sup>24</sup> *Լուկկա երկրի տեղադրության վերաբերյալ տե՛ս* T. Bryce. The Lukka problem - and a possible solution.— “Journal of Near Eastern Studies” (այսուհետև՝ JNES), University of Chicago, 1974, vol. 33, № 4, pp. 395–404; Ն ու յ ի՝ Lukka revisited.— JNES, 1992, vol. 51, № 2, pp. 121–130.

<sup>25</sup> J. D. Hawkins. A Hieroglyphic Luwian Inscription on a Silver Bowl in the Museum of Anatolian Civilizations. Ankara, Anadolu Medeniyetleri Musezi, 1996 Yilligi, Ankara, 1997, pp. 7–24. Տե՛ս նաև՝ Ա. Ք ո ս յ ա ն. Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XV դարում, էջ 167:

<sup>26</sup> Հնավայրի և հնագիտական նյութի մասին տե՛ս P. J. Neve. Die Ausgrabungen in Boğazköy-Hattusa 1992.— “Archäologischer Anzeiger”, 1993, Heft 4, S. 648–652. Արձանագրության վերաբերյալ տե՛ս A. Ünal, A. Ertekin and I. Ediz. Նշվ. աշխ., էջ 51:

<sup>27</sup> A. Goetze. Madduwattas (Mitteilungen der vorderasiatisch-ägyptischen Gesellschaft 32.1). Leipzig, 1927. Տե՛ս նաև՝ G. Beckman. Hittite Diplomatic Texts. Atlanta, 1999, pp. 153–160.

Մադդուվատտան՝ նամակի հասցեատերը, ընտանիքի հետ փախել էր իր երկրից (Փոքր Ասիայի արևմուտքում գտնվող լուվիական երկրներից մեկը)՝ հավանաբար, «Ախիսիյա երկրի մարդ»<sup>28</sup> Ատտարսիյայի հետ խնդիրներ ունենալու պատճառով: Թուդիսալիյան նրան նշանակում է լեռնային Յիպպասլա երկրի կառավարիչ: Մակայն շուտով պարզ է դառնում՝ Մադդուվատտան ուներ իր անձնական նկրտումները, որոնք հակադրվում էին այն պայմաններին, որ իր վրա դրվել էր նրա սյուզերենի կողմից: Հավանաբար, Մադդուվատտան ցանկանում էր ստեղծել իր սեփական անկախ թագավորությունը: Վերջինս նույնիսկ ներխուժել էր Արծավա երկիր (Փոքր Ասիայի արևմուտք): Մակայն իր ձեռնարկումներն ընդդեմ Արծավայի ավարտվեցին անհաջողությամբ: Նրա բանակը ջախջախվեց, իսկ երկիրը ենթարկվեց հարձակման Կուպանտա-Կուրունտայի կողմից, և Մադդուվատտան ստիպված փախուստի դիմեց: Թվում էր, թե սա Մադդուվատտայի գործունեության ավարտը կարող է լինել, սակայն խեթական զորքերը օգնության են գալիս և վտարում Կուպանտա-Կուրունտային այդ հողերից: Թուդիսալիյան վերականգնում է Մադդուվատտային իր գահին և ներում նրան ինքնագործունեության համար: Այս իրադարձություններին հաջորդում է Ախիսիյավայից Ատտարսիյայի հարձակումը Մադդուվատտային ենթակա տարածքների վրա: Հերթական անգամ խեթական զորքերը օգնության են գալիս Կիսնապիլի զորավարի գլխավորությամբ և կարգ ու կանոն հաստատում: Խեթական զորքը մնում է տարածաշրջանում՝ հավանաբար, և՛ հերթական գրոհները ետ մղելու, և՛ խեթական վասալին վերահսկելու համար: Մա առաջացնում է Մադդուվատտայի դժգոհությունը, և նա որոշում է ամեն գնով ազատվել խեթական ներկայությունից: Մադդուվատտային հաջողվում է հանկարծակի հարձակումով պարտության մատնել խեթական զորքերին, այնուհետև պայմանագիր կնքել իր նախկին թշնամու՝ Կուպանտա-Կուրունտայի հետ, ով ամուսնանում է Մադդուվատտայի դստեր հետ: Մադդուվատտան հետագայում ընդարձակում է իր պետության տարածքները Խապալլա և Լուկկա երկրների հաշվին: Խաթթիի արքա Առնուվանդան անմիջապես պատվիրակներ է ուղարկում Մադդուվատտայի մոտ՝ պահանջելով վերադարձնել գրավյալ տարածքները: Վերջինս համաձայնում է տալ Խապալլա երկիրը, սակայն հրաժարվում է հեռանալ իր գրավյալ մյուս տարածքներից և ետ ուղարկել խեթահպատակ փախստականներին: Ավելին, նա արշավանք է ձեռնարկում նաև դեպի Ալասիյա (Կիպրոս) կղզի, որի գրավումը դժգոհություն է առաջացնում Խաթթու-

<sup>28</sup> Մա, փաստորեն, խեթական աղբյուրներում առաջին հիշատակությունն է Ախիսիյա(վա) երկրի մասին: Տեղանվան Ախիսիյա կարճ գրելաձևը հայտնվում է միայն այդ տեքստում և գուշակային KBo XVI 97 (CTH 571.2) տեքստում (տե՛ս H. G. Güterbock. The Hittites and the Aegean World: Part 1. The Ahhiyawa Problem Reconsidered.— “American Journal of Archaeology”, Boston, 1983, № 87, p. 134; O. R. Gurney. The Hittites, p. 38):

սայում, քանի որ խեթերն այդ տարածքը համարում էին իրենցը: Մադդուվատտան արդարանում է, որ տեղյակ չի եղել՝ այդ երկիրը խեթերինն է և համաձայնում է վերադարձնել խեթահպատակ գերիներին<sup>29</sup>:

*Խեթերի՝ Մադդուվատտայի հանդեպ նման հանդուրժողական մոտեցման պատճառներից մեկը հարկ է համարել տերության արևելքում և հյուսիսում տիրող անհանգիստ վիճակը, որը նրանց թույլ չէր տալիս մեծաքանակ ուժեր կենտրոնացնել արևմտյան թևում: Խաթթիի արքաները փորձում էին եղած խնդիրները լուծել դիվանագիտական ճանապարհով: Բացի այդ, հարկ է չմոռանալ, որ «Մադդուվատտայի մեղանշանքը» գրվել է խեթերի կողմից, և ներկայացնում է միայն խեթական տեսակետը:*

*Արևմուտքում խնդիրները ժամանակավորապես կարգավորելուց հետո Թուդիսալիյան ուշադրությունը սևեռում է դեպի հյուսիս: Օգտվելով խեթական ուժերի արևմուտքում կենտրոնացումից՝ Արևելապոնտական լեռների կասկական ցեղերն ավարառուական արշավանք են ձեռնարկում դեպի Խաթթիի կենտրոնական շրջաններ<sup>30</sup>: Թուդիսալիյան ստիպված էր ուժերը կենտրոնացնել հյուսիսային ուղղությամբ և ռազմական գործողություններ իրականացնել Կասկա երկրում: Սակայն սա ժամանակավոր հաջողություն էր, քանի որ հետագա իրադարձությունները ցույց տվեցին՝ կասկական փտանգն այդպես էլ չվերացավ Խեթական տերության ամբողջ պատմության ընթացքում<sup>31</sup>:*

*Խաթթիի արքան կասկերի դեմ պատերազմելուց հետո ուշադրությունը սևեռում է տերության հարավարևելյան ուղղությամբ: Թուդիսալիյա I/II-ի ժամանա-*

<sup>29</sup> G. Beckman. Indictment of Madduwatta by Arnuwanda I of Hatti, Hittite Diplomatic Texts. Atlanta, 1996, pp. 144–151. *Տե՛ս նաև Ա. Քոսյան, Ռ. Ղազարյան, Մ. Խանգադյան, Մ. Մարտիրոսյան. Մ. թ. ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին. – Խեթական սեպագրական աղբյուրները Հայկական լեռնաշխարհի մասին, հ. II, Երևան, 2018, էջ 90–94:*

<sup>30</sup> *Տե՛ս J. Garstang and O. R. Gurney. Նշվ. աշխ., էջ 122–123: Այստեղ, սակայն, վերոհիշյալ իրադարձությունները վերագրվել են Թուդիսալիյա IV-ի ժամանակաշրջանին:*

<sup>31</sup> KUB XXIII 36 + XXXI 35. *Տե՛ս J. Klinger. Die hethitisch-kaškäische Geschichte bis zum Beginn der Großreichszeit. – “Anatolia Antica: Studi in memoria di Fiorella Imparati”. Tomo I, Firenze, 2002, pp. 437–451; R. Matthews, C. Glatz. The historical geography of north-central Anatolia in the Hittite period: texts and archaeology in concert. – “Anatolian Studies”, British Institute at Ankara, 2009, 59, p. 56. Չնայած խեթական տեքստերից մեկում (KUB XXI 29) հիշատակվում է, որ դեռևս Խաթթի արքա Խանթիլի II-ի օրոք (մ. թ. ա. XV դ. սկիզբ) կասկերը հարձակվել էին խեթական տարածքների վրա ու նվաճել Ներիկ և Տիլիուրա քաղաքները, սակայն այդտեղ ժամանակագրական առումով ավելի ուշ է գրվել մ. թ. ա. XIII դ.՝ Խաթթուսիլի III-ի օրոք (մ. թ. ա. 1267–1237 թթ.): Սա, փաստորեն, կասկերի վերաբերյալ խեթական տեքստերում ամենավաղ հիշատակումն է:*

կակիցն էր միտաննական արքա Պարսադատտարի որդի Սաուսադատտարը (տեքստերում նաև՝ Սաուսատար և Սաուսատար): Վերջինիս օրոք Միտաննիի ազդեցությունը տարածվել էր նաև Աշշուրի վրա<sup>32</sup>: Իսուվայի աշխարհագրական դիրքը շատ կարևոր էր Խաթթիի համար: Մինչ այդ Իսուվան արդեն հանդես էր եկել Խաթթիի դեմ, սակայն խեթերին հաջողվել էր ետ մղել իսուվական ուժերին և վերահսկողություն սահմանել այդ տարածաշրջանում: Իսուվայի հակախեթական ուժերի մի մասը ապաստան էր գտել Միտաննիում (Խուռի երկրում): Դա առիթ էր դարձել, որ Խաթթիի արքան Միտաննիից պահանջի այդ մարդկանց իրեն հանձնել: Պահանջը մերժվել էր. ավելին, Միտաննիի ուժերը գրոհում են Իսուվայի ուղղությամբ և ավարի մատնում այն՝ առաջնահերթ թիրախ դարձնելով խեթամետ իսուվական կենտրոնները<sup>33</sup>: Այդ ժամանակ Թուդիսալիսյային չէր հաջողվել զորք ուղարկել այնտեղ, քանի որ նա, հավանաբար, զբաղված էր Խեթական պետության արևմուտքում և հյուսիսում առաջացած խնդիրների լուծմամբ: Այնուամենայնիվ, ավելի ուշ Թուդիսալիսյային հաջողվում է վերականգնել խեթական գերիշխանությունը Իսուվայում<sup>34</sup>: Սակայն այդ հաջողությունը նույնպես ժամանակավոր բնույթ էր կրում<sup>35</sup>:

<sup>32</sup> Г. Аветисян. Государство Митанни. Ереван, 1984, с. 39 сл.

<sup>33</sup> Այդ իրադարձությունների մասին տեղեկություններ կան Թուդիսալիսյա I/II-ի և Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի միջև կնքված պայմանագրի պատմական – ներածական հատվածում [տե՛ս KBo I 5+ 10-20 (CTH 41); A. Goetze. Kizzuwatna and the problem of Hittite Geography, New Haven, 1940, p. 37; G. Beckman. Treaty between Tudhaliya II of Hatti and Sunashshura of Kizzuwatna, Hittite Diplomatic Texts, № 2, Atlanta, 1996, pp. 13–15]: Պայմանագիրը պահպանվել է երկու լեզուներով՝ խեթերեն և արքադերեն (յուրաքանչյուրը մի քանի տարբերակներով): KBo I 5+-ը պայմանագրի արքադերեն տարբերակն է: Նախկինում այս պայմանագիրը վերագրվում էր Սուպպիլուիլիումա I-ին, սակայն հետագայում վերաթվագրվել է ավելի վաղ շրջանով: Տեքստի վերաբերյալ տե՛ս Ա. Քոսյան. Հայկական լեռնաշխարհը մ. թ. ա. XV դարի խեթական սեպագրական աղբյուրներում (աղբյուրների տեսություն).– Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (այսուհետև՝ ՄՄԱԵԺ), հ. XXXI, Երևան, 2018, էջ 15:

<sup>34</sup> Ա. Քոսյան. Խեթական տերությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները, էջ 194–195:

<sup>35</sup> Հետագայում Իսուվան նորից ապաստան է տալիս հակախեթական ուժերին ու հարձակում գործում խեթական Թեգարամա երկրի վրա [տե՛ս A. Kosyan. Arnuwandas I in the East.– “Aramazd. Armenian Journal of Near Eastern Studies” (այսուհետև՝ AJNES), Yerevan, 2006, № 1, pp. 72–97; նույնի՝ Մ. թ. ա. XIV դարի խեթա-հայաստական միջպետական պայմանագրերը, Երևան, 2016, էջ 71, Ռ. Ղազարյան. Խեթական պետության հարավարևելյան սահմանը.– ՄՄԱԵԺ, հ. XXX, 2016, էջ 21, Ռ. Ցալկանյան.



Ասորեստանում հաստատելով իր գերիշխանությունը՝ Սաուսադատտարն այնուհետև արշավում է դեպի Սիրիա: Միտաննիի գերիշխանության ներքո են հայտնվում նաև Ալալախը<sup>36</sup> և Հալեպը: Այնուհետև Միտաննին դաշինք է կնքում Քադեշի հետ՝ ստեղծելով մի միություն, որը, փաստորեն, վերահսկում էր ամբողջ Սիրիայի տարածքը: Միտաննիի հզորացումը վտանգ էր ներկայացնում խեթական հարավարևելյան տարածքների համար՝ հաշվի առնելով նաև, որ Խաթթիի արտաքին քաղաքական կարևոր ուղղություններից մեկը սիրիական տարածաշրջանն էր: Սակայն Միտաննիին հակադրելու համար հարկավոր էր ամրապնդել դիրքերը նախևառաջ Կիցցուվատնայում, որը միջանկյալ տարածք էր զբաղեցնում Սիրիայի ու Փոքր Ասիայի միջև: Խեթերի համար շատ կարևոր էր Կիցցուվատնայի դիրքորոշումը նաև այն առումով, որ դեպի Սիրիա խեթական զորքերի առաջխաղացման դեպքում Կիցցուվատնան կհայտնվեր խեթերի թիկունքում. այդ պատճառով անհրաժեշտ էր ապահովել կա՛մ Կիցցուվատնայի չեզոքությունը, կա՛մ՝ աջակցությունը: Այս նպատակին հասնելու համար Թուդխալիյան պայմանագիր է կնքում Կիցցուվատնայի արքա Սունասսուրայի հետ<sup>37</sup>, որի աքքադերեն տարբերակի նախաբանում տրված է՝ Խաթթի արքայի պապի (Խուլցցիյա II) օրոք Կիցցուվատնան եղել է Խաթթի դաշնակիցը, այնուհետև այն դաշնակցել է Միտաննիի հետ: Պայմանագրի կնքման պահին, չնայած միտաննական կողմի դժգոհությանը, Կիցցուվատնան նորից վերադարձել էր իր նախկին՝ խեթական կողմ-

“Տուն Թորգոմա”-ն սկզբնաղբյուրներում.– Արևելագիտությունը Հայաստանում: Հին և միջնադարյան Հայաստանը և իր հարևանները, Երևան, հ. III, 2017, էջ 165]:

<sup>36</sup> Ալալախը Մուկիշի թագավորության կենտրոնն էր Օրոնտես գետի ստորին ավազանում: Երկար ժամանակ այն գտնվել է Յամհադի թագավորության (կենտրոնը՝ Հալեպ) կազմում, այնուհետև՝ մ. թ. ա. XVI դ., հայտնվել է խեթամիտաննական հակամարտության գոտում՝ մե՛րթ խեթական, մե՛րթ միտաննական գերիշխանության ներքո (տե՛ս M. Novák. Mittani Empire and the Question of Absolute Chronology: Some Archaeological Considerations.– “The Synchronisation of Civilisations in the eastern Mediterranean in the Second Millennium B.C. III. Proceedings of the SCIEEM 2000 - 2nd Euro Conference”, Wien, 2007, pp. 395–397):

<sup>37</sup> G. Beckman. Treaty between Tudkaliya II of Hatti and Sunashshura of Kirruwatna, № 2, pp. 13–22. Թուդխալիյան ասում է, որ Սունասսուրային խուտիներն ընդունում էին որպես հպատակի, իսկ Խաթթիի արքան՝ որպես արքայի: Միևնույն ժամանակ Թուդխալիյան պահանջում է, որ Արծավա կամ Խուտի երկրների դեմ պատերազմի դեպքում Սունասսուրան իրեն տրամադրի 100 մարտակառք և 1000 հետիոտն զորք: Սրանով Խաթթիի արքան, փաստորեն, մատնանշում է, թե այդ պահին որ երկրներն էին առավել վտանգ ներկայացնում խեթերի համար:

նորոշմանը, իսկ Թուդիսալիյան այս ամենը ներկայացնում է այնպես, ասես խեթերի օգնությամբ կիցցուվատնացիներն ազատություն էին ձեռքբերում<sup>38</sup>:

Պայմանագրի կնքումն ուժեղացրեց խեթական դիրքը Փոքր Ասիայի հարավարևելքում և ճանապարհ բացեց դեպի Միդիա: Հավանաբար, Թուդիսալիյայի առաջին նպատակակետերից մեկն է եղել Հալեպը, որը շատ կարևոր դիրք ուներ տարածաշրջանում: Այդ ամենի մասին է կարծես վկայում նաև մեկ դար անց Մուվաթալի II-ի (մ. թ. ա. 1295–1272 թթ.) և Հալեպի ենթակա արքա Թալմի-Շառումմայի միջև կնքված պայմանագիրը<sup>39</sup>:

Պայմանագրում նշվում է, որ Խաթթիի մեծ արքա Թուդիսալիյան պայմանագիր էր կնքել Հալեպի արքայի հետ: Մակայն վերջինս շուտով համագործակցում է Խանիգալբատի (Միտաննիի) արքայի հետ, ինչի պատճառով Խաթթիի արքան պատժում է Հալեպի արքային: Հավանաբար, օգտվելով Խաթթիի արքայի առջև ծառայած դժվարություններից՝ Հալեպի արքան դաշնակցել էր Միտաննիի արքայի հետ: Մակայն որոշ ժամանակ անց ինչ-ինչ պատճառներով նա դուրս է գալիս այդ դաշինքից: Որպես պատիժ՝ Միտաննիի արքան Հալեպի թագավորության որոշ տարածքներ տալիս է Հալեպի հարևան Նուխաշշի և Աշտատա երկրներին: Այդ ամենն առիթ են դառնում դեպի Հալեպ խեթական արշավանքի համար<sup>40</sup>: Խեթերն հիշյալ տեքստում, հավանաբար, չափազանցրել էին իրենց ձեռքբերումներն այդ արշավանքի ընթացքում՝ նշելով՝ գրավել էին նաև Միտաննի (Խանիգալբատը), քանի որ հետագա իրադարձությունները ցույց են տալիս՝ այդ պետությունը դեռ պահպանում էր իր հզորությունը և դիրքը տարածաշրջանում: Ամենայն հավանականությամբ, խեթերին հաջողվել էր պարտության մատնել միտաննացիներին և գրավել նրանց տարածքների մի մասը Հյուսիսային Միդիայում:

Խեթերի գերիշխանությունն այդ փուլում տարածվում էր նույնիսկ Կիպրոս կղզու վրա: Փաստորեն, Թուդիսալիյայի<sup>41</sup> պետությունը տարածական առումով կրկնում էր դեռևս մ. թ. ա. XVII դ. երկրորդ կեսի Խաթթուսիլի I-ի տերությանը, սակայն էլ ավելի մեծ ներուժի պայմաններում: Խեթերի հաջողությանը Միդիայում, անկասկած, նպաստել էր նաև մինչ այդ Միտաննիի թուլացումը՝ Եգիպտոսի

<sup>38</sup> KBo I 5 I 30-37; A. Goetze. Kizzuwatna and the problem of Hittite Geography, p. 39.

<sup>39</sup> KBo I 6, obv. 11-16 (CTH 75); G. Beckman. Treaty between Muwattalli of Hatti and Talmi-Sharrumma of Aleppo, № 14, pp. 88–90.

<sup>40</sup> KBo I 6, obv. 16–18; N. Na'aman. The Historical Introduction of the Aleppo Treaty Reconsidered.– “Journal of Cuneiform Studies” (այսուհետև՝ JCS), Boston, 1980, № 32, p. 36.

<sup>41</sup> Թուդիսալիյա I/II-ի ժամանակաշրջանին են վերագրվում նաև մի շարք հրահանգների և ցուցումների տեքստեր (տե՛ս J. Miller. Sources from the reigns of Tudhaliya I and Arnuwanda I, Royal Hittite Instructions and Related Administrative Texts, N 31, Atlanta, 2013, pp. 156–163):

փարավոն Թուրմոս III-ի (մ. թ. ա. 1479–1425 թթ.) արշավանքների հետևանքով<sup>42</sup>: Միննույն ժամանակ այդ փուլում Խաթթին ձգտել է նաև դիվանագիտական կապեր հաստատել եգիպտական արքունիքի հետ<sup>43</sup>:

## Խաթթուսիլի II

Խեթական Միջին թագավորության պատմության ամենավիճարկելի հարցերից մեկը Խաթթուսիլի II-ի գոյությունն է: Խնդրի առաջացման համար հիմք է ծառայել Խաթթիի արքա Մուվաթալի II-ի և Հալեպի արքա Թալմի-Շառունմայի միջև կնքված վերոհիշյալ պայմանագրում Խաթթուսիլի անվան հիշատակությունը<sup>44</sup>:

Պայմանագրում նշված է, որ արքայի (Մուվաթալի II-ի) հայրը՝ Մուրսիլին, պայմանագիր էր կնքել Թալմի-Շառունմայի հետ, սակայն դրա աղյուսակը գողացել էին, և Մուվաթալիի հրամանով կազմվել էր նորը, որը կնքվել ու տրվել էր Հալեպի արքային: Այն տրված է Մուրսիլի II-ի անունից (փաստորեն, սա նախորդ կորսված պայմանագրի կրկնօրինակն էր): Այնտեղ նշված է, որ նախկինում (Մուրսիլի II-ի ժամանակաշրջանից առաջ) Հալեպի թագավորությունը եղել է մեծ և հզոր: Սակայն Խաթթիի մեծ արքա Խաթթուսիլին Հալեպի թագավորությունը «ծաղկեցնում» է: Խաթթուսիլիից հետո նրա թոռը (հետնորդը)՝ Խաթթիի մեծ արքա Մուրսիլին, կործանում է Հալեպի երկիրը: Այնուհետև նշվում է, որ Հալեպի արքան Խանիգալբատի արքայի դեմ էր գործել այնպես, ինչպես ժամանակին գործել էր Խաթթիի արքա Խաթթուսիլիի դեմ: Նկարագրվում է նաև, որ Միտաննիի ճնշման ներքո կամ անմիջական ռազմական սպառնալիքի առկայությամբ Հալեպի թագավորությունից որոշ տարածքներ են հանձնվել Աշտատա և Նուխաշշիի երկրներին: Պայմանագրում նշվում է, որ Հալեպի ժողովրդի նման արարքը խեթերը դիտարկել են՝ որպես Խաթթուսիլիի դեմ ուղղված թշնամական քայլ: Իսկ տեքստի պահպանված վերջնամասում նորից նշվում է Խաթթիի մեծն արքա

<sup>42</sup> Միտաննիի պատմության տվյալ փուլի ժամանակագրության վերաբերյալ տե՛ս S. de Martino. A Tentative Chronology of the Kingdom of Mittani From its Rise to the Reign of Tušratta.– “Contributions to the Chronology of the Eastern Mediterranean/Mesopotamian Dark Age Revisited”, 2007, pp. 35–42.

<sup>43</sup> KBo XXXI 40 տեքստը հատված է եգիպտական և խեթական արքունիքների միջև մի նամակի: Նամակ ուղարկողը Խաթթիի արքան է, իսկ հասցեատերը՝ Եգիպտոսի փարավոնը: Տեքստը հատվածական է: Այն թվագրվում է Թուդիսալիյա I/II-ի ժամանակաշրջանով (տե՛ս S. de Martino. Hittite Letters from the Time of Tuthaliya I/II, Arnuwanda I and Tuthaliya III.– “Altorientalische Forschungen”, Berlin, 2005, vol. 32(2), p. 292):

<sup>44</sup> G. Beckman. Treaty between Muwattalli of Hatti and Talmi–Sharrumma of Aleppo, № 14, pp. 88–90.

*Խաթթուսիլիի կողմից Հալեպի որոշ տարածքների նվիրաբերման փաստը Նուխաշի և Աշտատա երկրներին:*

Մասնագիտական շրջանակներում մինչ օրս տարակարծություն կա՝ արդյոք վերոնշյալ տեքստում նշված արքան ով է<sup>45</sup>: Խեթական Միջին թագավորության ժամանակաշրջանի արքայական ցուցակներում և այլ աղբյուրներում Խաթթուսիլիի մասին տեղեկություններ չկան: Այդ ժամանակաշրջանում խեթական արքունիքում հիշատակվել է Խաթթուսիլի անունով մի անձ<sup>46</sup>, ով եղել է արքունիքի “մեծ մատովակապետը” և կասկերի դեմ գործող խեթական բանակի հրամանատարը<sup>47</sup>: Այնուամենայնիվ, մենք պատկերացում չունենք՝ արդյոք այս անձը առնչություն ունեցել է վերոնշյալ պայմանագրում հիշատակված Խաթթուսիլիի հետ<sup>48</sup>:

Ըստ մեկ այլ կարծիքի՝ Թուդիսալիյա I/II-ը և Խաթթուսիլի II-ը պատկանել են արքայական ընտանիքի երկու տարբեր ճյուղերի<sup>49</sup>: Հ. Գյուտերբոկը կարծում է՝ Խաթթուսիլի II-ը եղել է նաև Սուպպիլուլիումա I-ի հայրն ու Հալեպի վերոնշյալ պայմանագրի հեղինակը<sup>50</sup>: Սակայն խեթական որևէ աղբյուրում նշված չէ, որ Սուպպիլուլիուման Խաթթուսիլիի որդին է եղել: Մեզ հայտնի խեթական աղբյուր-

<sup>45</sup> Ըստ Հ. Օտտենի՝ Խաթթուսիլի II-ին վերագրվող ձեռնարկումներն իրականում պատկանել են Խաթթուսիլի I-ին (տե՛ս H. Otten. Die hethitischen historischen Quellen und die altorientalische Chronologie. Wiesbaden, 1968, № 3, S. 110–111. Խաթթուսիլիի թագավորման մասին քննարկումները տե՛ս նաև՝ M. C. Astour. Hittite History and Absolute Chronology of the Bronze Age. Partille, 1989, pp. 39–41):

<sup>46</sup> KBo XXXII 145, KBo XXXII 224. Խնդրի վերաբերյալ քննարկումները տե՛ս J. Klinger. Das Corpus der Maşat-Briefe und seine Beziehungen zu den Texten aus Hattusa.– “Zeitschrift für Assyriologie und vorderasiatische Archäologie”, Berlin, 1995, № 85, S. 89–90.

<sup>47</sup> Տե՛ս R. Beal. The Organisation of the Hittite Military. Heidelberg, 1992, p. 347.

<sup>48</sup> Ըստ Թ. Բրայսի՝ հնարավոր է, որ Թուդիսալիյա I/II-ի մահվանից հետո Խաթթուսիլին Առնուվանդայի հետ դարձել է համակառավարող և այդպես հայտնվել Հալեպի վերոնշյալ պայմանագրում (տե՛ս T. Bryce. The Kingdom of the Hittites, 2005, p. 131; G. Beckman. Hittite Chronology.– “Akkadica”, Brussels, 2000, № 119–120, pp. 19–32):

<sup>49</sup> H. G. Güterbock. The predecessors of Šuppiluliuma again. - JNES, 1970, vol. 29, № 2, pp. 73–77; O. R. Gurney. The Hittite line of kings and chronology, Anatolian Studies Presented to Hans Gustav Güterbock on the Occasion of his 65th Birthday. Leiden, 1974, Nederlands Historisch-Archaeologisch Instituut te Istanbul, pp. 105–111; O. Carruba. Beiträge zur mittelhethitischen Geschichte I. Die Tuthalijas und die Arnuwandas’, S. 137–174; Նուլյնի՝ Beiträge zur mittelhethitischen Geschichte I. Die sogenannten “Protocoles de succession dynastique”, S. 175–195: Խաթթուսիլի II-ի վերաբերյալ տե՛ս նաև M. Forlanini. Hattušili II. Geschöpf der Forscher oder vergessener König? .– “Altorientalische Forschungen”, Berlin, 2005, 32, S. 230–245; J. D. Hawkins. The seals and the dynasty.– “Die Siegel der Grosskönige und Grossköniginnen auf Tonbullen aus dem Nişantepe-Archiv in Hattusa”, Mainz, 2011, S. 86–89.

<sup>50</sup> H. G. Güterbock. Hattušili II once more.– JCS, 1973, № 25, pp. 100–104.

ները նշում են՝ Սուպպիլուլիուման որդին էր Թուդիսալիյայի, ով Առնուվանդայի որդին էր, որն իր հերթին որդեգրված էր Թուդիսալիյա I/II-ի կողմից:

Ամենայն հավանականությամբ, վերոնշյալ պայմանագրում հիշատակված Խաթթուսիլին մ. թ. ա. XVII դ. երկրորդ կեսին իշխած Խաթթուսիլի I-ն է, ով իրեն էր ենթարկել Յամհադ թագավորության կենտրոն Հալեպը, որի բնակիչներին իր կողմը գրավելու նպատակով Հալեպին մի շարք արտոնություններ էր տվել (միգուցե՝ առևտրական): Խաթթուսիլին մեղմ քաղաքականություն էր վարել իր գերիշխանությունն ընդունած Յամհադի թագավորության հպատակների հետ՝ ի տարբերություն իր թոռան՝ Սուրսիլի I-ի (մ. թ. ա. XVII դ. վերջ – XVI դ. սկիզբ): Այստեղից էլ, հավանաբար, գալիս է վերոնշյալ պայմանագրում հետևյալ արտահայտությունը՝ «Մակայն Խաթթուսիլին, մեծն արքան, Խաթթիի արքան նրանց թագավորությունը ծաղկեցրեց»<sup>51</sup>:

Առ այսօր մասնագիտական գրականության մեջ մ. թ. ա. 1267–1237 թթ. իշխած Խաթթիի արքան նշվում է որպես Խաթթուսիլի III: Հաշվի առնելով, որ Խաթթուսիլի II, որպես այդպիսին, գոյություն չի ունեցել՝ վերոհիշյալ արքային հարկավոր է հիշատակել որպես խեթական գահի վրա երկրորդ Խաթթուսիլի:

## Առնուվանդա I

Թուդիսալիյա I/II-ի կառավարման տարիներին արքունիքում մեծ հեղինակություն ուներ նրա որդեգիր ու փեսա Առնուվանդան (նա Ասամունիկալիի՝ Թուդիսալիյայի և Նիկկալմատիի դստեր ամուսինն էր): Առնուվանդան դեռևս - Թուդիսալիյայի կառավարման տարիներին հիշատակվել է որպես Խաթթիի մեծ արքա: Դա նշանակում էր, որ Թուդիսալիյան նրան համակառավարող էր նշանակել և հիշատակում էր որպես իր որդի<sup>52</sup>՝ միգուցե ցանկանալով դրանով նախապես ամրապնդել նրա դիրքերը խեթական արքունիքում:

Գահ բարձրանալով՝ Առնուվանդա I-ը (մ. թ. ա. XV դ. վերջ – XIV դ. սկիզբ) հիմնականում ուշադրությունը սևեռում է նախորդի (Թուդիսալիյա I/II) նվաճումների պահպանման վրա: Իր գահակալման սկզբնական տարիներից նեթ նա ստիպված էր խեթական նախորդ արքաների նման պայքար մղել մի քանի ուղղություններով: Փոքր Ասիայի հարավարևմուտքում առաջացել էր Մադդուվատտայի կիսանկախ պետությունը: Հարավարևելքում խեթերը լուրջ խնդրի

<sup>51</sup> G. B e c h m a n. Treaty between Muwattalli of Hatti and Talmi-Sharrumma of Aleppo, Hittite Diplomatic Texts, № 14, p 89.

<sup>52</sup> Ph. H. J. H o u w i n k t e n C a t e. The records of the Early Hittite Empire (C. 1450 – 1380 B. C.). Istanbul, 1970, p. 58; O. C a r r u b a. Beiträge zur mittelhethitischen Geschichte I. Die Tuthalijas und die Arnuwandas', S. 177, n. 7.

առջև էին կանգնել՝ կապված Միտաննիի գործողությունների հետ: Հյուսիսում պահպանվում էր կասկական սպառնալիքը:

Առնուվանդայի միանձնյա կառավարման սկզբնական փուլին է վերաբերում նաև Իսմերիկկա քաղաքի մարդկանց բնակեցումը Կիցցուվատնայի և հարակից տարածքների քաղաքներում ու նրանց հետ պայմանագրի կնքումը<sup>53</sup>: Այդ քայլով Առնուվանդան փորձում էր ամրապնդել խեթական գերիշխանությունը միտաննական ազդեցության տակ գտնվող կամ անմիջականորեն Միտաննիի տարածք համարվող տարածաշրջանում<sup>54</sup>: Պայմանագրում խոսվում է այն մասին, որ իսմերիկկացիները իրավասու էին Կիցցուվատնայի քաղաքներում խեթական արքայի անունից պատժել բոլոր կարգազանցներին, այդ թվում՝ Կիցցուվատնայի խեթական կառավարչին: Վերջինիս առկայությունն արդեն իսկ խեթերի ակտիվության լուրջ վկայություն է Թուդիսալիյա I/II – Առնուվանդա I-ի օրոք<sup>55</sup>:

Հարավում Առնուվանդան պայմանագիր է կնքում նաև Ուրա քաղաքի հետ (գտնվում էր Կիլիկիայի միջերկրածովյան առափնյա հատվածում): Այն նշվել է երկու միջինխեթական տեքստերում՝ KBo XVI 47 և KUB XXVI 29+, որտեղ նկարագրվում է քաղաքը դուրս էր եկել Արծավայի գերիշխանությունից և հայտնվել խեթական ազդեցության ներքո<sup>56</sup>:

Առնուվանդան փորձում է նաև չեզոքացնել կասկական վտանգը՝ կնքելով պայմանագրեր<sup>57</sup> և համաձայնություն ձեռք բերելով կասկերի ռազմական առաջնորդների հետ՝ պահպանելու խաղաղություն խեթական հյուսիսային մի քանի տարածքներում (Կիննարա, Կալասամա, Կիսսիյա, Սապպա)<sup>58</sup>: Հայտնի է, որ մինչ այդ կասկերն ավարառության էին ենթարկել Խաթթիի հյուսիսային շրջանները, ավելել խեթական հոգևոր կենտրոնները (Ներիկը, Խուրսաման, Կաստաման, Սերիսան, Խիմուվան, Տազգաստան, Կամմաման, Ցալպուվան և այլ բնակավայրեր<sup>59</sup>):

<sup>53</sup> KUB XXVI 41; KUB XXIII 68 + ABoT 58, *Հրատարակումները*՝ Kempinski A. und S. Košak. Der Išmeriga-Vertrag.– “Die Welt des Orients”, Göttingen, 1968, Bd. 2, S. 191ff.

<sup>54</sup> Իսմերիկկան, հավանաբար, գտնվել է Փոքր Ասիայի հարավ-արևելքում (տե՛ս A. Goetze. Kizzuwatna and the Problem of Hittite Geography, pp. 44–45; J. Garstang and O. R. Gurney. Նշվ. աշխ., էջ 53–54: Ph. H. J. Houwink ten Cate. Նշվ. աշխ., էջ 61):

<sup>55</sup> Տե՛ս Ա. Քոստան. Խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ. թ. ա. XV դարում, էջ 168:

<sup>56</sup> S. de Martino. Hittite Letters from the Time of Tuthaliya I/II, Arnuwanda I and Tuthaliya III, p. 297.

<sup>57</sup> CTH 137–40; E. Von Schuler. Die Kaškäer. Ein Beitrag zur Ethnographie des alten Kleinasien, Berlin, 1965, S. 152–167.

<sup>58</sup> CTH 260; E. Von Schuler. Նշվ. աշխ., էջ 223–233:

<sup>59</sup> Վերոհիշյալ բնակավայրերի մեծ մասը գտնվել է Հալիսի ստորին հոսանքի մոտ գտնվող շրջաններում՝ Արևելապոնտական լեռների մերձակա տարածքներում: Սերիսան

Այդ իրադարձությունների վերաբերյալ պահպանվել են Առնուվանդա I-ի և թագուհի Ասմունիկկալի աղոթքի տեքստերը<sup>60</sup>: Ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին՝ կասկական խնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու փորձերը միայն ժամանակավոր հետևանքներ ունեցան. մնաց չլուծված:

Իրավիճակն անհանգիստ էր նաև Հայկական լեռնաշխարհի արևմտյան խեթական գերիշխանության ներքո գտնվող տարածքներում: Առնուվանդա I-ի կառավարման սկզբում կամ ավելի վաղ Պախիտուվայում (հավանաբար, ներկայիս Դերսիմի տարածաշրջանը<sup>61</sup>) նախ Ուսապայի, այնուհետև Միտայի գլխավորությամբ սկսվեց ապստամբություն: Խաթթիի արքայի վասալ Պախիտուվայի առաջնորդ Միտան ամուսնացել էր Խաթթիի արքայի թշնամի Ուսապայի դստեր հետ: Ապստամբության ընթացքում Պախիտուվային դաշնակցում էին Հայկական լեռնաշխարհի որոշ այլ երկրներ (օրինակ՝ Արիսիտան): Խաթթիի արքան ստիպված էր ժողով գումարել Խաթթուսայում, որին հրավիրված էին Պախիտուվա, Մուխմա, Մալտիյա, Պիտտիյարիկ և Խուռի (հավանաբար, խեթերին ենթակա խուռիական մի երկիր) երկրների ներկայացուցիչները: Նա ներկայացրել էր պատվիրակներին Միտայի արարքները և պահանջել պախիտուվացիներից, որ իրեն հանձնեին Միտային ու նրա ընտանիքի անդամներին, հակառակ դեպքում Խաթթիի արքան սպառնում էր խստորեն պատժել վերոնշյալ երկրների բնակիչներին:

Խեթերին, ի վերջո, հաջողվում է ճնշել ապստամբությունը և վերինեփրատյան երկրների հետ պայմանագիր կնքել: Դրա կետերից պարզվում են այն պարտավորությունները, որ վերինեփրատյան երկրները պետք է ստանձնեին Խեթական պետության հանդեպ՝ ա) հավատարմություն խեթական արքային, բ) պատերազմի դեպքում ռազմական ջոկատների տրամադրում, գ) առանց խեթական արքայի գիտության որևէ պետության հետ հարաբերություններ ունենալ<sup>62</sup>:

(Մարիսսան) գտնվել է Վերին երկրում՝ ներկայիս Քուշաքլը հնավայրի տեղում [տե՛ս Ռ. Ղազարյան. Մարիսսան՝ որպես Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի կարևորագույն կենտրոններից մեկը (մ. թ. ա. XVI–XII դդ.)– ՀՀ ԳԱԱ “Լրաբեր հասարակական գիտությունների”, 2017, № 1, էջ 113–118]:

<sup>60</sup> I. Singer. Prayer of Arnuwanda and Asmunikal to the Sun-goddess of Arinna about Ravages of Kaska (CTH 375).– “Hittite Prayers”, Leiden-Boston-Köln, 2002, pp. 40–43.

<sup>61</sup> Պախիտուվայի տեղադրության վերաբերյալ տե՛ս R. Ghazaryan. Some issues on the history and location of land of Pahhuwa.– “The American Historical Review”, Oxford University Press, 2017, Issue 5, vol. 122, pp. 1962–1967:

<sup>62</sup> KUB XXIII 72+: Պայմանագրի վերաբերյալ տե՛ս H. Hoffner. A Join to the Hittite Mita Text.– JCS, 1976, vol. 28, № 1, pp. 60–62; A. Kosyan. Arnuwandas I in the East, pp. 72–97: Տեքստին անմիջականորեն առնչվում է նաև KUB XXXI 103 տեքստը (CTH 212.1; G. Torri. Militärische Feldzüge nach Ostanatolien in der mittelhethitischen Zeit.– “Altorientalische

Ընդհանուր առմամբ, խեթերին հաջողվում է թեև ժամանակավոր, սակայն որոշակի հաջողությունների հասնել: Դրա վկայություններից մեկն է նաև KUB XXVI 62<sup>63</sup> տեքստը: Այն իրենից ներկայացնում է Խեթական տերության ազդեցության ուղորտում ընկած Փոքր Ասիայի հյուսիսարևելյան շրջանների (կասկական ցեղերի տարածքը) և Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասի որոշ բնակավայրերից զինծառայության վերցված զինվորների ցուցակ: Տեքստն Թուդիսալիյա I/II-ի կամ նրա հաջորդ Առնուվանդա I-ի օրոք Խեթական տերության քաղաքական ազդեցության հյուսիսարևելյան գոտում գտնվող շրջանների բնակիչների հետ զինծառայության մասին կնքված մի փաստաթուղթ է: Ծառայության վերցվող զինվորները թվարկվում են անվանապես և ըստ բնակավայրերի: Հիշատակվող տեղանուններն են Սալան, Էրիսիտան (Արիսիտա), Լիստան, Տեմիյան (Տիմիյա), որոնցից երեքը հայտնի են նաև այլ աղբյուրներից: Մասնավորապես, Արիսիտա քաղաքը հիշատակվում է KUB XXIII 72+-ում՝ որպես հակախեթական դիրքորոշում ունեցող Պախիտուվայի դաշնակից: Բացի այդ, խեթահայասական մի պայմանագրում (KUB XXVI 39) վկայվում է Արիսիտայի Ամպրոպի աստվածը: Իսկ Տեմիյան նույնն է, ինչ միննույն տեքստում պախիտուվացիների հարձակումներից տուժած Տիմիյան<sup>64</sup>: Ինչ վերաբերում է Սալային, ապա այն վկայված է մեկ այլ տեքստում՝ որպես Խեթական տերության ազդեցության գոտու արևելյան մասում ընկած բնակավայր<sup>65</sup>:

Առնուվանդա I-ի կառավարման տարիներով է թվագրվում նաև IBoT I 36 տեքստը: Այն Խաթթուսայի արքայական պալատի պահակային ծառայության վերաբերյալ հրահանգ է, որտեղ հանգամանորեն ներկայացվում է դրա առօրյան: Ի թիվս այլ հարցերի, այստեղ հիշատակվում են ծառայության կազմում ընդգրկված

Forschungen”, 2005, 32, 2, S. 391ff.): Այստեղ հիշատակվում են KUB XXIII 72+-ում վկայված Պախիտուվա, Խուռի երկրները, Մալդիա քաղաքը, նաև Իսուվայում ու հարակից շրջաններում գործող հակախեթական ուժերից մեկի առաջնորդը (ոմն Խասսանաս): Դատելով այդ զգալիորեն տուժած տեքստի պահպանված հատվածներից՝ խեթական արքան վերինեփրատյան երկրներից ակնկալում էր հավատարմություն ու որոշակի պարտավորություններ (աջակցություն արքային պատերազմի ժամանակ, այլ պետության բանագնացի ձերբակալություն և այլն). (տե՛ս Ա. Քոսյան. Խեթական տերությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները, էջ 194–195; Ա. Քոսյան, Ռ. Ղազարյան, Մ. Խանգադյան, Մ. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 10–44):

<sup>63</sup> Տե՛ս E. Von Schuler. Նշվ. աշխ., էջ 145: Նաև՝ Ա. Քոսյան. Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին Եփրատի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները.– ՄՄԱԵԺ, 2004, թիվ XXIII, էջ 472–484, Ա. Քոսյան, Ռ. Ղազարյան, Մ. Խանգադյան, Մ. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 69–72:

<sup>64</sup> Տեմիյա–Տիմիյայի առնչությամբ կարծիքների համար տե՛ս Ա. Քոսյան. Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական աղբյուրների), Երևան, 2004, էջ 97–98:

<sup>65</sup> Նույն տեղում, էջ 84–85:



կումսախացի զինվորները (Կումսախա՝ հետագայի Կամախը Եփրատ գետի ափին), ինչը կարող է վկայել արևելյան շրջաններից (վերջիններիս նվաճումից հետո) զինվորների հավաքագրման մասին<sup>66</sup>:

Առնուվանդա I-ի կառավարման ժամանակաշրջանին է վերագրվում նաև KUB XXXI 79 “Գետային նավարկություն” կոչվող տեքստը<sup>67</sup>: Դա նամակ է, որտեղ նկարագրվում է Պիտտիյարիգա<sup>68</sup> քաղաքից նավակներով կամ լաստերով մինչև Սամուխա<sup>69</sup> հացի առաքումը: Ճանապարհին հիշատակվում է Արծիյա քաղաքը, որտեղից ևս մթերք է բեռնվել<sup>70</sup>:

Առնուվանդա I-ի կառավարման շրջանում նախկին հակառակորդներ Միտաննիի և Եգիպտոսի հարաբերությունները սկսեցին բարելավվել: Միտաննիի արքա Արտադանա I-ի (մ. թ. ա. 1400-ական թթ.) և Թուրմոս IV-ի (մ. թ. ա. մոտ 1400–1390 թթ.) միջև հաստատվեցին բարիդրացիական հարաբերություններ, որոնք ամրապնդվեցին դինաստիական ամուսնությամբ: Եգիպտոսը գերիշխանություն ստացավ Քադեշի, Ամուռուի (Փյունիկիայի) և Ուգարիթի նկատմամբ, այսինքն՝ Միրիայի հյուսիսում Խաթթին այսուհետև ստիպված էր հաշվի նստել, Միտաննիից բացի, նաև Եգիպտոսի շահերի հետ: Խնամիական կապերն օգնեցին հարթել նաև տարածքային խնդիրներն Արևելամիջերկրածովյան տարածաշրջանում: Քադեշը, Ամուռուն և Ուգարիթը եգիպտական ենթակայության ներքո էին, իսկ այդ տարածքներից հյուսիս ընկած երկրները՝ Միտաննիի: Այս ամենը լուրջ խնդիրների առջև կանգնեցրեց Առնուվանդայի և թագուհի Ասմունիկայի որդի Թուդիսալիյա III-ին (մ. թ. ա. մոտ 1360–1344 թթ.), ով, բացի արտաքին խնդիրներից, էլ ավելի մեծ խնդիրների առջև էր կանգնած պետության ներսում:

<sup>66</sup> Ա. Քոսյան. Անի-Կամախը խեթական դարաշրջանում. – ՊԲՀ, 2002, № 3, էջ 228–229, Ա. Քոսյան, Ռ. Ղազարյան, Մ. Խանգաղյան, Ս. Մարտիրոսյան. նշվ. աշխ., էջ 73–74:

<sup>67</sup> KUB XXXI 79 (CTH, 214.17). *Sté u šu* J. Garstang, O. R. Gurney. նշվ. աշխ., էջ 33–36; F. Cornelius. Geographie des Hethiterreiches.– “Orientalia”, Roma, 1958, 27, S. 373–374; R. Lebrun. Samuha foyer religieux de l’empire Hittite, Louvain-la-Neuve, 1976, pp. 217–218; Ա. Քոսյան. Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 118–119 և այլն:

<sup>68</sup> Պիտտիյարիգայի մասին տե՛ս Ա. Քոսյան. Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 80–81:

<sup>69</sup> Սամուխա քաղաքի պատմության և տեղադրության հարցերի վերաբերյալ տե՛ս Ռ. Ղազարյան. Սամուխա քաղաքի պատմության որոշ հարցերի շուրջ.– ՊԲՀ, 2017, № 1, էջ 116–124:

<sup>70</sup> S. de Martino. Hittite Letters from the Time of Tuthaliya I/II, Arnuwanda I and Tuthaliya III, p. 302.

*Նշենք՝ Առնուվանդա I-ի օրոք տերության գերիշխանության տակ գտնվող ծայրամասային երկրների անջատողական միտումները Թուդխալիյա III-ի կառավարման սկզբնական փուլում վերաճեցին խոշոր աղետի: Տարեցտարի աճող սպառնալիքը հանգեցրեց Խաթթիի տարածքի էական կրճատման: Խեթական տերության թուլացումը պայմանավորված էր ոչ այնքան նվաճված երկրների հարձակումներով, որքան՝ ներքին հանգամանքներով:*

*Այսպիսով, Առնուվանդա I-ից հետո Խեթական տերությունը փաստացի տրոհվեց՝ ինչպես նվաճված երկրների ապստամբությունների ու խեթական տարածքների ասպատակությունների, այնպես էլ ներքաղաքական անկայունության հետևանքով, և նրա կառավարման ավարտն ու Թուդխալիյա III-ի կառավարման սկիզբը կարելի է համարել խեթական Միջին թագավորության ավարտը:*

## О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ ИСТОРИИ ХЕТТСКОГО СРЕДНЕГО ЦАРСТВА

РОБЕРТ КАЗАРЯН

Резюме

*Ключевые слова: Хеттское государство, Армянское нагорье, Среднее хеттское царство, Тудхалия I/II, Муваталли I, Арнуванда I, Ассува, Паххува, Маддуватта, Исува, Хаттусили II, Малая Азия.*

История Хеттского государства второй половины XV века – первой половины XIV века до н. э. известна в хеттологии под названием «Среднее царство». Такое хронологическое разделение отвергается некоторыми хеттологами. Но на сегодняшний день в специализированной литературе в основном дается трехчастное разделение хеттской хронологии. Это основывается также на лингвистическом развитии хеттского языка. Развитие хеттского письменного языка также делится на три этапа – старый, средний и новый. Таким образом, разделение истории хеттов на три исторических этапа соответствует также археолингвистическому разделению истории Хеттской державы.

Отсутствие хеттских царских списков Среднего царства и некоторые расхождения по хронологии их правления для хеттологов являются трудной задачей. Существует также проблема с привязкой различных событий к одному из Тудхалий того времени. Одним из спорных вопросов хеттского Среднего царства является также существование некоторых царей (Тудхалия II и Хаттусили II).

ON SOME ISSUES OF THE HISTORY OF THE HITTITE  
MIDDLE KINGDOM

ROBERT GHAZARYAN

## S u m m a r y

*Key words: Hittite State, Armenian Highland, Middle Hittite Kingdom, Tudhaliya I/II, Muwatalli I, Arnuwanda I, Assuwa, Pahhuwa, Madduwatta, Isuwa, Hattusili II, Asia Minor.*

The history of the Hittite State in the second half of the 15th century - the first half of the 14th century BC is known in Hittitology as the “Middle Kingdom”. This chronological division is rejected by some Hittologists. However, at real time in specialized literature the Hittite chronology is mainly divided into three periods. It is also based on the linguistic development of the Hittite language. The development of the Hittite writing is also divided into three stages – old, middle and new. Thus, the division of the history of the Hittites into three historical phases also corresponds to the archaeolinguistic division of the history of the Hittite state.

The absence of Hittite royal lists of the Middle Kingdom and some of the differences in chronology of their rule are a difficult task for Hittologists. There is also a problem with linking various events to one of the Tudhaliyas of that time. Another disputable issue of the Hittite Middle Kingdom is the existence of some kings (Tudhaliya II and Hattusili II).

О ПРАЗДНОВАНИИ 50-ЛЕТИЯ  
ОВАНЕСА ТУМАНЯНА В ТИФЛИСЕ\*

*Ключевые слова: празднование, 50-летие, Туманян, Тифлис, 1919 г., Агаронян, Тигранян, Городецкий, Кипиани.*

В феврале-мае 1919 г., более месяца в общественно-политической, культурной жизни Тифлиса происходит достопамятное событие: с большим блеском отмечается 50-летие Поэта всех армян Ованеса Туманяна. Вся общественность города – армяне, грузины, русские – широко, с воодушевлением и любовью празднуют юбилей великого гражданина. Ов. Туманян был признан и по достоинству оценен во всем своем национальном и общечеловеческом звучании. Не подготовленные заранее юбилейные торжества переросли в демонстрацию братства народов Закавказья и России, дружбы и мира между ними. Русский поэт С. Городецкий, который весьма активно содействует проведению юбилея<sup>1</sup>, пишет: «... этот день (день рождения Ов. Туманяна. – А. З.) – праздник многих миллионов, и не только армян, но и всех закавказцев, а когда Запад просветится, то и западных людей, ибо Ованес Туманян всей своей песней, всей своей работой проповедовал верховенство всечеловеческих идеалов над национальным.

Понять Ованеса Туманяна – значит понять Армению в ее искренних идеалах мирного земного бытия, в ее стремлениях к идиллической жизни в содружестве с природой и людьми, – наперекор трагическому ходу истории»<sup>2</sup>.

Грузинской поэт И. Гришашвили имел в виду именно эту деятельность Туманяна, направленную также на пресечение армяно-грузинской войны в декабре 1918 г.<sup>3</sup>,

---

<sup>1</sup> В эти годы С. Городецкий жил и работал в Тифлисе. См.: А. Закарян. Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван, 2016.

<sup>2</sup> «Закавказское Слово» (Тифлис), 20. II. 1919.

<sup>3</sup> Об этой войне см.: Армяно-грузинский вооруженный конфликт на основании фактических данных и подлинных документов. Баку, 1919; К. Сардарян. Армяно-грузинские отношения в 1918–1921 гг. Ереван, 2002 (на арм. яз.); А. Джамалян. Армяно-грузинская проблема. Ереван, 2011 (на арм. яз.); В. Арутюнян. Армяно-грузинская война (1918 г.). Материалы и документы. Ереван, 2014 (на арм. яз.); В. Вирабян. Армяно-грузинские военно-политические отношения 1918–1921 гг. Ереван, 2016 (на арм. яз.); М. Арутюнян. Армяно-грузинские отношения 1918–1919 гг. (письма, документы), сост. А. К. Сукиасян. Ереван, 2017 (на арм. яз.).

когда заявил: «Князь армянской поэзии! ... И впредь поддерживай огонь своего костра и в нем сожги тех шовинистов, которые забыли песни Саят-Новы. Пусть все знают, что несчастье одного соседа не может принести счастья другому»<sup>4</sup>.

Сегодня, когда празднуется 150-летие Ов. Туманяна, интересно будет обратиться к событиям столетней давности – к торжествам по поводу 50-летия поэта в 1919 г.

Нижепубликуемые материалы проливают свет на эти события. Первый – под авторством общественного деятеля, писателя Вардгеса Агароняна (перевод с армянского) – повествует о том, как в редакции тифлисской газеты «Закавказское Слово» зародилась идея отметить юбилей поэта. В последующих материалах представлены напечатанные в этой же газете стихотворение поэтессы Арменуи Тигранян (перевод с армянского С. Городецкого) и статьи С. Городецкого, грузинского писателя Левана Кипиани, В. Агароняна, посвященные жизни и деятельности Ов. Туманяна. Завершает публикацию своеобразный отчет «Закавказского Слова» о праздновании первого дня – 20 февраля 1919 г. – юбилея великого поэта<sup>5</sup>.

АНУШАВАН ЗАКАРЯН

– 1 –

#### ЕГО ЮБИЛЕЙ

До войны и до советизации Грузии в Тифлисе издавалась русская газета «Кавказское Слово»<sup>6</sup>, которая была самой распространенной и самой влиятельной среди русских газет Кавказа.

Хоть и русскоязычная, но она была основана и руководилась армянами. Кроме армян с газетой сотрудничали также русские, грузины и татары. Редакторами газеты были армяне, один из которых – М. Геворкян<sup>7</sup>, юрист, родом из Гохтана, талантливый литератор, восхищался Ов. Туманяном и был одним из его близких друзей.

Зимой 1918–19 гг. армянский раздел газеты вел я.

---

<sup>4</sup> «Закавказское Слово», 7. III. 1919.

<sup>5</sup> О праздновании юбилея Ов. Туманяна подробно см.: С. Оганесян. Юбилей Ованеса Туманяна в 1919 г. – В кн.: Туманян. Исследования и публикации. 5. Ереван, 1998, с. 125–143 (на арм. яз.).

<sup>6</sup> Газета «Кавказское Слово» с 1. I. 1919 г. по 15. III. 1919 г. издавалась под названием «Закавказское Слово».

<sup>7</sup> О М. Геворкяне см.: Р. Казарян. Мамикон Геворкян. – ИФЖ, 2008, № 3, с. 295–302 (на арм. яз.).

М. Геворкян помнил, что 20 февраля 1919 г. Ов. Туманяну исполняется пятьдесят лет.

И вот однажды в редакции *«Кавказского Слова»* М. Геворкян поставил вопрос о том, чтобы номер газеты от 20 февраля был полностью посвящен Ов. Туманяну. Так и решили сделать, и редактирование этого особенного номера поручили нам троим – М. Геворкяну, русскому поэту Сергею Городецкому и мне.

С удовольствием и воодушевлением мы приступили к делу.

Решили ни ему – Ов. Туманяну, ни кому-либо кроме сотрудников газеты не говорить о нашем плане и сделать любимому поэту красивый сюрприз.

В Тифлисе газеты печатались предыдущей ночью. 19 февраля я до полуночи ждал в типографии *«Кавказского Слова»*, пока не вышли в свет первые экземпляры газеты следующего дня. Я положил один экземпляр в карман и поспешил к дому Ов. Туманяна.

Добрался в полночь. В окнах кабинета Туманяна был виден свет. Значит, он еще не спал. Я позвонил и вошел.

Эта ночь была одной из тех редких ночей, когда у Туманяна не было гостей. Поэт, собрав вокруг себя свою семью, читал для них, когда я вошел и положил на стол газету.

– Что это? – спросил Туманян.

– Номер, посвященный Вашему юбилею.

– Я не помню о своем юбилее, а вы как вспомнили? Ладно, читай, посмотрю, что ты написал.

Я прочитал свою статью<sup>8</sup>, в которой не забыл упомянуть о некоторых привычках нашего поэта, таких, как – облачаться дома в необычные костюмы, красить домашнюю утварь, покупать книги на незнакомых языках и т. д.

– Значит, ты приходишь сюда, все вокруг подмечаешь, запоминаешь увиденное и потом обо всем этом пишешь, чтоб опозорить меня, да? Больше не переступай порог этого дома! – шутливо пригрозил Туманян, затем добавил: – Ну ладно, на этот раз прощаю, но больше так не делай. Ну, давай поцелую тебя в лоб ... Читай, посмотрим, что еще там есть.

Больше всего Ов. Туманяну понравился русский перевод стихотворения Арменуи Тигранян, посвященного ему в связи с юбилеем<sup>9</sup>.

... Я прочитал ему весь номер, от начала до конца<sup>10</sup>.

Ов. Туманян явно был тронут теплыми словами восхищения, любви, высказанными без исключения всеми, кто писал материалы для этого особенного номера.

---

<sup>8</sup> Под названием «Певец родных гор» (смотри ниже).

<sup>9</sup> Перевод стихотворения смотри ниже.

<sup>10</sup> В газете об Ов. Туманяне говорится на страницах 2 и 3.

Вместе с армянами в создании этого особенного номера *«Кавказского Слова»* приняли участие также русские, грузинские и татарские писатели.

Никто из нас не предполагал, не мог предвидеть того, что произошло в течение последующих недель.

Особенный номер *«Кавказского Слова»* был искрой, которая зажгла огонь воодушевления армянского общества.

На следующий день армянские газеты Тифлиса откликнулись на впечатляющее выступление *«Кавказского Слова»*. Не прошло и нескольких дней, как армянские культурные организации и учреждения Тифлиса засуетились. «Общество армянских писателей», «Армянское издательское общество», «Армянское драматическое общество», «Армянский учительский союз», школа Нерсеян, школа Овнанян, школа Гаянян и др. – все-все, один за другим начали организовывать юбилейные мероприятия в честь Ов. Туманяна.

Ни одна организация не хотела отстать от других. Каждое учреждение, каждая организация устраивали отдельное мероприятие. Каждая организация желала видеть любимого поэта в тесном кругу своих членов.

В этом, пожалуй, была причина того, что вместо одного общего торжества было организовано множество отдельных мероприятий.

Это и было юбилеем, и не было.

Не было юбилеем, потому что никто не планировал праздновать литературный юбилей Ов. Туманяна. Не была составлена юбилейная комиссия, не была проделана в этом смысле работа или какая-либо подготовка.

Это было юбилеем, потому что праздновался день рождения не обычного человека, а народного, любимого поэта, и было естественно, что с этим торжеством была связана оценка литературной деятельности Ов. Туманяна.

Ни один тщательно подготовленный юбилей ни одного армянского поэта Кавказа не был таким воодушевленным, таким искренним проявлением уважения и любви, как не подготовленное празднование пятидесятилетия Ов. Туманяна.

Начиная с 20 февраля, целых 5–6 недель армянская общественность Тифлиса жила Туманяном.

Не было ни одного дня без какого-нибудь большого или маленького мероприятия. Ов. Туманяна буквально носили на руках.

За армянами последовали также грузины, которые чествовали нашего поэта красивым представлением.

Закончились эти мероприятия большим торжественным банкетом в роскошном Артистическом зале Тифлисского театра, где собрались армянские, грузинские, русские и татарские писатели и представители интеллигенции.

Так же, как армяне, были воодушевлены, в частности, грузины: группа молодых писателей – Т. Табидзе, И. Гришашвили, С. Оганезашвили, Г. Леонидзе и другие, были очарованы Ов. Туманяном и становились его окружением.

В эти дни никому не могло прийти в голову, что меньше чем через четыре года лира Ов. Туманяна умолкнет навечно.

И поскольку судьба распорядилась таким образом, хорошо, что день рождения любимого поэта произвольно превратился в роскошный, восторженный литературный юбилей.

Вардгес Агаронян

---

В. Агаронян. Ованес Туманян. Человек и поэт. Бостон, 1936, с. 159–165 (на арм. яз.).

– 2 –

ОВАНЕСУ ТУМАНЯНУ

Стихотворение Арменуи Тигранян

Что пожелать тебе могу я?  
Тоску, иль грезу голубую?  
Святое сердце? Поцелуй?  
Вино, иль чары вешних струй?

Боль одиночества? Иль пенье?  
Стальную мысль? Иль слов миленье?  
Иль чувств нерукотворный храм?  
Иль славу, слышную векам?

Быть может, мир души покорной,  
Ко всем любовной непритворно,  
Высокой, гордой и живой,  
И, – если бы без печали злой!

Хочу, чтоб дали серафимы  
Забвенья два крыла незримых,  
Чтоб в скорби ласковая тишь  
Тебя пьянила, как гашиш.

Пер. С. Городецкого



---

«Закавказское Слово», 20. II. 1919.

– 3 –

О МУДРОМ И НЕЖНОМ<sup>11</sup>

Февраль предшествует марту. Март – месяц дионисийского безумия, весеннего наступления. Но безумству вещей пифий предшествует мудрость нежных сердцем, знающих тайну земли, с землей не разлученных, ею вскормленных богатырей, рожденных до трагедии раздора между небом и землей, и потому необычайно цельных, ясных, от юности седых и в седине сохраняющих взор ребенка. Их месяц февраль, и Ованес Туманян родился в феврале.

Должно быть, этот день – 7–20 – февраля был праздником; если не для всех еще людей, то для природы: ведь она знала, *кто* родился, и какие песни таились в первом крике новорожденного. Быть может, предчувствовали это и в тихой сельской семье, которую осчастливила природа таким ребенком.

Теперь этот день – праздник многих миллионов, и не только армян, но и всех закавказцев, а когда Запад просветится, то и западных людей, ибо Ованес Туманян всей своей песней, всей своей работой, проповедовал верховенство всечеловеческих идеалов над национальными.

Понять Ованеса Туманяна значит понять Армению в ее исконных идеалах мирного земного быта, в ее стремлениях к идиллической жизни в содружестве с природой и людьми, – наперекор трагическому ходу истории.

Его язык – язык его народа, и надо быть иностранцем, чтобы оценить музыку его стихов, все эти переливы женственных, налитых синим воздухом гласных и мужественно звучных красных согласных.

Его образы – это те же цветы, произвольно вырастающие на лоне щедрой земли.

Его поэзия – ни в коем случае не литература – в дурном смысле этого слова. Не от ухищрений эстетизма, не из литературных теорий вырастают его стихи, а из бессмертных недр живого языка, никогда неиссякающих.

Его творения – это памятник исторических страданий Армении и обет ее богатого будущего.

На грани двух эпох судьба поставила его, мудрого и кроткого.

---

<sup>11</sup> Эта статья С. Городецкого ранее несколько раз была опубликована (см.: Дружба. Статьи, очерки, исследования, воспоминания, письма об армяно-русских связях. Сост. и автор вступит. очерка А. Арзуманян. Кн. 2. Ереван, 1960, с. 335–339; С. Г о р о д е ц к и й. Об Армении и армянской культуре. Под ред. и с предисл. академика АН АрмССР Г. Б. Гарибджаняна. Сост. и коммент. И. Сафразбекян. Ереван, 1974, с. 92–95; С. М. Г о р о д е ц к и й. Последний крик. Предисл., сост. и коммент. И. Сафразбекян. Ереван, 2010, с. 259–266). Но так как в них имеются неточности и разночтения, мы сочли необходимым опубликовать статью в ее первоначальном виде.

В легендах своего народа черпал он силы для того, чтобы изображать его тяжелое настоящее так, чтобы сквозь повесть мучений звучала музыка надежды.

Его оптимизм – не поверхностное прекраснотушие, а истинное тайноведение.

Он рожден исполнить таинственное и все больше забываемое в современных культурах призвание поэта – быть вещим, быть пророком, быть ясновидцем.

И оттого – так много помня, так много зная – он такой нежной пламенеет к людям любовью.

Придя к нему издали, впервые, и только прикоснувшись к его душе, – сразу чувствуешь его родным, извечно близким.

И отсюда же, из той же мудрости происходит его очаровательная ирония, всепрощающая ласковая улыбка его стихов, которой он смягчает горькие выводы своего ума из наблюдений над человеческой жизнью.

Рано-рано, в школьном возрасте он уже знал о противоречиях между мечтой и действительностью и уже был убежден в непобедимости мечты.

Тогда, в ту пору, будучи школьником, в Джалал-Оглах, он влюбился в сверстницу.

Донесли директору, директор велел следить: любовь мешает ученью. И маленького Туманяна поймали за стихами. Конфисковали стихи – оттого они и уцелели, эти милые строки:

Души моей половинка,  
Сердца моего серединка!  
Не бойся, не беспокойся!  
Уроки скучные готовь,  
Но знай, что есть у нас любовь.  
И разве будет кто дивиться,  
Моя голубка-голубица,  
Если юноша учится,  
А сердце его любовью мучится?

Когда наш поэт рассказывал мне об этом эпизоде и вспоминал эти строки, светлой радостью светилось его лицо, и говорил он о том, что юность кажется ему недавним днем, и сам был, в своей прекрасной седине, редко юным.

Эту тайну юности знают только люди, не оторванные от народа, органически с ним связанные.

Таков Ованес Туманян.

И глубоко народными были его стихи с ранней юности.

Одновременно с приведенным выше стихотворением он писал и другие, на народные темы, но все они пропали.

Таким же было и первое его печатное стихотворение (1889 г.) «Кот и Собака», теперь всем известное, но тогда не сразу понятное.

Принес его Туманян к редактору журнала «Мурч» Арасханяну. Прочел редактор и говорит:

– Ва! Что это такое? Это вы писали? Какая же связь между кошкой и собакой – и поэзией? Идите, идите!

Смутился поэт.

Не включил стихотворения в первый том своих стихов: оно вошло только во второй.

Но вскоре все его знали наизусть, и редактор удивился, как он не понял сразу.

А стихотворение вошло в народ.

Ехал Туманян с доктором Будугьяном в Боржом. Будугьян стал утверждать, что нет ни одного мальчика, который бы не знал «Кота и Собаки». Автор отрицает такую популярность своего стихотворения. Стали держать пари, остановили фаэтон, подзывают первого попавшегося мальчика.

– Скажи «Шун - у - Кату»!

Мальчик смеется, не говорит. Туманян утверждает, что выиграл пари: его стихов не знают. Но Будугьян настаивает на своем, уговаривает мальчика, дает ему серебро.

И мальчик начинает говорить стихи: поэт проиграл пари.

Этот эпизод показывает, как глубоко народны корни поэзии Туманяна.

И как природа не щадит своих сокровищ, так и наш поэт относится к своим творениям.

Список неизданных, погибших его произведений очень велик.

В девяностых годах Туманян написал свою поэму «К вечному», которую многие считают главным его произведением.

Но издана только первая часть ее.

Вторая часть погибла, и как показывают обстоятельства ее гибели – к великому сожалению ценителей искусства.

Дело было так.

Написав вторую часть, Туманян прочел ее друзьям. В первой части описана смерть Хасмик и похоронные обряды.

Для второй части поэт собрал много материала из деревенских легенд на тему погребения мнимоумерших. В каждой деревне существуют рассказы о том, как кого-нибудь похоронили живым.

И вот, во второй части описывалось, как покойница, Хасмик, зарытая живой, начинает приходить по ночам к мужу, и в третий раз приходит с окровавленной грудью. Муж ее идет на кладбище, но уже издали видит, что на могиле что-то белеется: в нее вбили осиновый кол.

Эта вторая часть поэмы произвела на слушателей слишком сильное впечатление. И вот, чтобы не тревожить воображение читателей, автор, по совету Леона Шанта, уничтожает эту часть поэмы. Таким образом армянская литература лишилась нескольких заведомо сильных страниц.

И не одну эту поэму постигла такая участь. В молодости Туманян написал около 13 поэм, а осталось из них только три или четыре. Многие погибли во время обысков 1905–1907 гг.<sup>12</sup>

Еще более безжалостно поэт отнесся к своей драматургии. Им написано несколько драм: «Артавазд» – на историческую тему, «Хамлик» – на сюжет из современной жизни, драма из деревенской жизни (отрывки уцелели в Лори), «Одинокая девушка» – из современной жизни, с индивидуалистическим сюжетом, как показывает заглавие.

И все это уничтожено.

Так может поступать только поэт с неиссякаемым запасом творческих сил.

И этот переизбыток творчества присущ Туманяну.

Он не зависит от каприза муз, его лира всегда звучит в его сердце, и это делает его, отличного писателя, обаятельным человеком. Ему чужда всякая скудость. Он в простой беседе рассыпает жемчуга, как волшебник, не знающий своих сокровищ. И его поэзия – органическая часть его жизни. У него, в последние годы, есть несколько красиво переплетенных записных книжечек, стоящих в общей коробочке, как на полке. Каждая посвящена одной из дочерей. (А раньше драмы свои он называл именами сыновей). И на этих маленьких страничках он записывает четверостишия – истинные перлы поэтической мудрости, подлинный мед своих мыслей. Для нас эти лаконические строки – квинтэссенция поэзии. Для него – один из летящих миггов, один из многих. А сколько таких миггов скрыто в нем, таятся ни для кого незримо и неслышимо? О, если б он был к себе заботливей и бережливей к своим сокровищам! Теперь уже пришла для него та пора, когда каждое его слово – национальное достояние. Ведь никто не возвратит нам сожженных драм и поэт, так пусть же он не отнимает у своих читателей того, что теперь может подарить. Золотая плодотворная осень пришла для него. Не осень упадка, а осень огненных плодов и сверкающих листьев. Полвека – чудесный рубеж, откуда видно больше, чем со всех других граней человеческой жизни. К тому же, несмотря на все несчастья, и для Айастана подходит плодотворная пора, что не может не отразиться в сердце национального поэта. И новых откровений, новых вещей песен радостно ожидает от Ованеса Туманяна каждый знающий его, посылая ему сегодня благословляющий привет.

Сергей Городецкий

---

<sup>12</sup> Речь идет об армяно-татарских (азербайджанских) столкновениях, в прекращении которых весьма активное участие принимал Ов. Туманян, за что царское правительство (которое само провоцировало эти события) преследовало поэта.

---

«Закавказское Слово», 20. II. 1919.

– 4 –

#### НЕРАЗРЫВАЕМЫЕ ЗВЕНЬЯ

Сегодня армянское общество и печать Кавказа празднуют 50-летие со дня рождения поэта Ов. Туманяна.

Этого рыцаря благородной идеи единения народов Кавказа. Этого пылкого юноши, убеленного так ему идущую сединой, сединой, которая его нисколько не старит.

Ованес Туманян.

Порою кажется, что это – гибкий тростник, выросший в горах и временно лишь покрывшийся налетевшими снежинками, тростник, подаривший родине своей столько звучных и благоуханных песен. И что достаточно ему встряхнуться – и снежинки слетят с него и обнажат юную поросль его.

Но порою – прислушаешься, вспомнишь – и звучат перед тобою мудрые речи провидца переживаемых Кавказом и целым миром событий – речи, дышащие мощью седой, многовековой мудрости. И тогда кажется, что эта седина, покрывающая голову поэта с почти юным лицом, – вполне уместна и своевременна.

Сегодня и мне хочется сказать поэту Ов. Туманяну свое слово теплого привета.

И я думаю, что лучшее, что мог бы я ему сказать – это будет моя «Арабеска», посвященная *неразрываемым звеньям единения* двух народностей Кавказа – армян и грузин – их артистическим силам, *их двум театрам – грузинскому и армянскому*.

Процесс разъединения двух народов идет исподволь и давно, расширяясь и углубляясь, благодаря усилиям *темных* сил, увы, очень часто таящихся среди самых *светлых* слоев населения, среди его интеллигенции.

Процесс этот нанес уже громадный ущерб культурной целостности двух соседей, он разорвал когда-то крепкие и прочные узы дружбы и любви, соединявшие эти два народа, он развеял по ветру множество благоухающих цветков культурного сотрудничества их.

Но одного не удалось еще сделать ему:

Разъединить тех людей, которые в течение полувека стоят во главе двух дворцов Мельпомены – двух театров – грузинского и армянского. Не удалось князю Тьмы бросить еще и в эту семью своих семян вражды и разъединения.

И с самого основания этих двух театров и до наших дней – две эти артистические семьи свято хранили и до сих пор продолжают хранить чистые заветы старой

кавказской дружбы, старого кавказского куначества, еще не подвергшегося разъедающему влиянию партийно-националистической ржавчины.

И с первых дней основания туземных сцен, и доныне – между артистами армянской и грузинской сцены существуют ничем неразрываемые звенья чистых и добрых отношений. Должен, однако, оговориться: хранителями этих звеньев являются исключительно почти старики-ветераны этих двух сцен. Молодежь наша ныне иная, держится подалеже от искусства, поближе к политическим лозунгам, и даже чаще к дешевому политиканству. Рогатки и перегородки узкого национализма старается она переставить ближе к рампе, нисколько не стесняясь внушительных и недовольных окриков богинь и муз чистого искусства. Не стесняясь этих окриков, быть может, главным образом, вследствие неумения и неспособности понимать уже язык этих муз и богинь ...

Рано угасшая звезда Адамяна одинаково ярко светила в артистической семье двух народов. И если сам Адамян стоял несколько дальше от современных ему грузин, то это объясняется исключительными свойствами натуры самого артиста. Но зато Перосяц<sup>13</sup>, Чимишкян, Абеян и в особенности Тер-Давтян и Араксян – всегда были ближайшими друзьями Василия Абашидзе, Марии Сапаровой, Габунии-Цагарели, Черкезовой, Алексеева-Месхиева, Гунии и других столпов грузинской сцены.

Интересная страничка вписана в историю грузинского театра.

В 1878 году молоденькая Мария Сапарова, кахетинская армянка, засияла яркой звездочкой на фоне нарождавшегося тогда грузинского драматического искусства. Соседи армяне не могли не заметить этого яркого таланта. И, конечно, радовались, ибо в те дни редкий тифлисский армянин не посещал грузинских спектаклей. Но, радуясь таланту артистки, армянам хотелось видеть Марию Сапарову и на своей родной сцене. Это так понятно. Но Мария Сапарова не знала по-армянски ни слова. И любители армянского драматического искусства предложили молодой артистке учителя армянского языка в лице артиста Сукиасяна. Артистка согласилась, и уроки начались; но ученица оказалась, увы, неспособной к восприятию армянского языка.

Это обстоятельство, понятно, не охладило нисколько отношений армян к грузинам. Сапарова (впоследствии жена Васо Абашидзе) сделалась яркой звездой грузинской сцены, передав свой талант дочери своей Тасо Абашидзе.

Между прочим, упомянутый выше артист Сукиасян нередко выступал на грузинской сцене в характерных ролях\*)<sup>14</sup>.

---

<sup>13</sup> Должно быть – Петросян.

<sup>14</sup> В газете «Закавказское Слово» от 23 февраля 1919 г. под заглавием «Арабески» в статье «Вильсон о правителях» Лев. Кипиани пишет: «P. S. В фельетоне моем «Неразрываемые звенья» вкралась досадная ошибка, касающаяся арм. артиста Сукиасяна. Вопреки моей заметке – в статье Г. М. Туманова об этом артисте было упомянуто в первой части статьи почтенного

Одним из видных живых звеньев единения двух сцен был покойный Сундукянц и его интеллигентная супруга, к тому же прекрасно владевшая грузинским и разговорным и литературным языком.

При переводах пьес Сундукянца на грузинский язык ему много помогал Василий Абашидзе своим знанием сцены, языка и быта. Что касается постановки этих пьес на грузинской сцене, то сам Сундукянц руководил делом каждой постановки, зная прекрасно каждого артиста и размеры его художественных возможностей.

И из армян драматургов Сундукянц стоял к грузинской артистической семье ближе других. И он был последний из стоящих к ней так близко. Впрочем, у драматурга Ширван-Заде много дружественных уз, тесно связывающих его с артистами-грузинами.

Этот человек стоит в той же цепи неразрываемых звеньев нашего единения, о которых я решил сегодня заговорить, посвящая одну из первых моих возобновляющихся «Арабесок» дорогому поэту, рыцарю благородной и чистой идеи единения народов Кавказа – Ованесу Туманяну.

Этому пылкому юноше, убеленному так идущей ему мудрою сединой.

Лев. Кипиани

---

«Закавказское Слово», 20. II. 1919.

– 5 –

#### ПЕВЕЦ РОДНЫХ ГОР

Там, где стремительный Дебет-чай день и ночь без устали бьется в теснинах, и громоздящиеся друг на друга скалы подходят к краям обрывов и глядят в бездну, в самом сердце древнего Гугарка, на одном из поднебесных плато гнездится одна армянская деревня.

Воздух там чист и нежен, солнце туда посылает свои первые лучи, ночью там звезды ярче горят.

Крестьянские хаты, словно гнезда горных орлов, прилипли к скалам, а над ними еще выше в лазурь вздымаются горные вершины гор Гугарка.

Кругом все дышит армянской стариной.

Из-за каждой скалы, из каждого ущелья выглядывают то обломки дворца или замка, то свалившийся купол храма, то заросшая мохом старинная мостовая дорога.

---

автора, мною, к сожалению, недостаточно внимательно просмотренной» [речь идет о статье Г. Туманова «Армяне на грузинской сцене (посвящается памяти Г. Мирагиана), см.: «Закавказское Слово», 13. II. 1919].



Деревня эта, отныне дорогая сердцу каждого грамотного армянина – Дсех, где в семье священника Тер-Тадеоса 7–20 февраля 1869 года родился поэт родных гор и родной армянской старины Ованес Туманян.

Детство будущего поэта земли армянской до 10-летнего возраста прошло среди природы, полной волшебных звуков, гор и лесов и чарующей прелести прошлого армянского народа.

Под родным кровом маленького Ованеса окружала беднеющая дворянская семья. Род Туманян по преданию восходит к знаменитому в истории Армении нахарарскому дому Мамиконян. И переходившие из поколения в поколение традиции владетельного аристократического дома передались семье отца Тадеоса.

И отец Тадеос, отпрыск впадающего постепенно в бедность дворянского дома, сохранил лучшие традиции дворянского дома. Так, каждый раз при порче какой-нибудь дороги или моста около деревни, отец Тадеос первый заявлял крестьянам, что он берет на себя исправление попорченной дороги или разрушенного моста.

*Noblesse oblige*, это его обязанность и право дворянина, и пусть сельский сход не беспокоится об этом!

Конечно, отцу Тадеосу, такому же небогатому сельскому обывателю, не под силу сопряженные с такими заботами расходы, и в конце концов сельскому обществу самому приходится брать на себя заботу о ремонте дорог и мостов, но, однако, это не мешает ему при следующем же случае опять заявлять о своем преимущественном праве и желании исполнить общинную повинность. До сих пор еще существуют около Дсеха остатки начатых им, но недостроенных мостов. Дом отца Тадеоса известен во всей округе своим гостеприимством. Это один из тех домов, мимо которых не может пройти ни один странник или путник, не изведав его хлеба и соли. Доброта отца Тадеоса вошла в поговорку. Нередко по ночам домашние обнаруживали на добром священнике отсутствие белья. Из расспросов, на которые отец Тадеос неохотно отвечал, выяснялось, что его рубашка понадобилась деревенскому нищему Аракелу или Саркису.

Строгая попадья Соня этого не любила, и отцу Тадеосу приходилось пользоваться для своих щедрых деяний отсутствием жены из дому. При этом деятельное участие в работе отца принимал сын – Ованес. Мальчик простаивал у дверей дома снаружи на часах в то время, как отец Тадеос поспешно опорожнял мешки и чували с мукой и пшеницей, которые раздавал беднякам.

В свободные от работ вечера отец Тадеос любил играть на чонгуре, к звукам которого прислушивался его старший сын – Ованес.

Дома поэт рос в этой моральной среде, положившей неизгладимую печать на душу впечатлительного ребенка.

Вне дома могучая горная природа рождала в нем образы, один прекрасней и пленительней другого. Остальное дополняли рассказы дяди Исяя, от которого

Туманян слышал лучшие легенды, предания и сказки, послужившие сюжетами будущих его творений.

Грамоте маленького Ованеса учил вначале дядя Григорий. Он и теперь жив, седой старик.

Позднее Ованеса отдали в открывшуюся в Дсехе сельскую школу. Пробыл он в ней до 10–11-летнего возраста.

Первые поэтические упражнения Туманяна относятся к этому периоду его жизни.

В 1878 году, после русско-турецкой войны по армянским деревням ашуги пели сложенную в честь Лорис-Меликова песню. Будущему поэту песня эта понравилась, и он от себя присочинил к ней еще ряд куплетов.

Будущего народного поэта оценил первоисточник его будущей поэзии и первый его критик – простой армянский народ, который стал распевать присочиненные к песне 9-летним Туманяном куплеты.

В 11–12 лет Туманян уже исписывает стихами целые тетради.

В 1883 году отец Тадеос привез сына в Тифлис и отдал его в армянскую духовную Нерсесян семинарию. Однако Ованес семинарию не любил и, пробыв в ней три года, в 1886 году оставил ее, не окончив курса. Из всех предметов, преподававшихся в семинарии, поэт любил только историю и главным образом армянскую словесность. И теперь оставив школу, он предался чтению. Однако, в те годы любознательному читателю-армянину очень трудно было утолить свой духовный голод на родном языке. Первым изданием, попавшим в руки Туманяна, были номера выходящего тогда в Москве знаменитого журнала «Юсисапайл» («Северное Сияние»). В них Туманян зачитывался творениями Ст. Назаряна и Мик. Налбандяна. Позже в его руки попали Пушкин и Лермонтов, которых, в особенности первого, Туманян очень любил. За Пушкиным и Лермонтовым последовал Шекспир, которым наш поэт зачитывался и которого так обстоятельно изучал, что несколько позднее посвятил разбору и критике Шекспира, и в частности Гамлета, довольно обширный труд на столбцах журнала «Тараз»<sup>15</sup>.

В 1887 году Туманян поступил на службу в армянскую консисторию в Тифлисе, в качестве писаря, на жалованье в 16 руб. 66 к. в месяц.

В этот период Туманяном написаны две его лучшие вещи – «Кот и Собака» и поэма «Ануш».

Однако, поэт недолго оставался на этой службе. На второй год его исключили со службы за написанное им на епархиального начальника епископа Мамбрэ

---

<sup>15</sup> Имеется в виду напечатанная в еженедельнике «Тараз» за 1896 г. (№ 40, 41, 43, 44, 45) в разделе «Библиография» рецензия на книгу «Гамлет». Трагедия Шекспира». Перевод с англ. Ованес хан Масейян. Изд. Тифлисского армянского издательского общества, 1894 г., Тифлис.

сатирическое стихотворение. На этом и закончилась вся служебная карьера поэта. После этого Ов. Туманян всецело отдался литературе.

В декабре 1888 года Туманян женился на тифлисской армянке Ольге Мачкалян и окончательно обосновался в Тифлисе.

В 1890 году в Москве был издан первый томик его стихотворений, а в 1892 году вышел второй томик.

В этих двух небольших томах Туманян дал большую часть тех своих произведений, которые в позднейшем создали его литературную славу, как то «Ануш», «Сако в Лори», «Кот и Собака», «Ахтамар» и др. Лишь некоторые из этих произведений до конца остались в первоначальной редакции, большая же часть их была переработана поэтом подчас до неузнаваемости. Сравнение первого издания произведений Туманяна 1890 г. с позднейшим изданием 1900 г. показывает, как вырос и углубился за эти 10 лет талант Туманяна.

В 1895 году Туманян задумал основать литературный кружок молодых писателей-армян в Тифлисе. Нужда в таком кружке, где молодые силы армянской литературы могли бы прийти в общение, как нельзя сильнее чувствовалась в этот период.

Представители новой армянской литературы и публицистики Арцруни, Р. Патканян, Раффи, Церенц и др. уже сошли или постепенно сходили в могилу. Вместе с ними сходила со сцены та национальная тенденция, которая так ярко проявлялась в их произведениях, Родина, Армения, многострадальный армянский народ – этими словами пестрело каждое из их произведений, но в этих произведениях не было видно подлинного лика армянского народа. Нарождалась новая поэзия, черпающая свои мотивы из народной жизни и выявляющая подлинный лик народа в произведениях новых поэтов – Ов. Туманяна, Ав. Исаакяна, Л. Шанта и др., которые уже появились на литературном горизонте, но не успели еще завоевать подобающего места.

Создание такого кружка Ов. Туманяном в девяностых годах не удалось и лишь спустя пять лет, в начале девяностых годов<sup>16</sup>, вокруг Туманяна собралась большая часть лучших новейших армянских поэтов.

Кружок этот собрался на квартире Туманяна, причем высокая квартира поэта в четвертом этаже дала повод назвать комнату собраний поэтов «Вернатуном» («Горница»). Здесь собирались Ов. Туманян, Л. Шант, Ав. Исаакян, Дереник Демирчян и Н. Агбальян. В литературных беседах, затягивавшихся иногда до рассвета, принимал участие покойный Г. Агаян, которого связывала с кружком его личная дружба с Ов. Туманяном.

Старика Агаяна на этих литературных собраниях называли патриархом за его годы и могучий рост, Ов. Туманян за его увлечение Шекспиром и многочисленную семью (у него десять душ детей) был прозван Шекспиром, увлекающегося творениями Ницше

---

<sup>16</sup> Точнее – в 1899 г.

А. Исаакяна окрестили Ницше, Л. Шанта за его заостренную бородку называли Гейне, страстного поклонника Байрона Д. Демирчяна прозвали Байроном, а литературного критика Н. Агбальяна Брандесом.

Кружок этот сыграл огромную, еще недостаточно выясненную и недостаточно оцененную роль в развитии новейшей армянской поэзии.

Все принципы новейшей армянской поэзии подвергались здесь обсуждению и потом воплощались в образы в произведениях участников этого кружка «Вернатуна». И душой и вдохновителем кружка являлся Ов. Туманян.

Кружок просуществовал два-три года<sup>17</sup>. К тому времени Ов. Туманян прочно занял подобающее ему место в новейшей армянской поэзии. Несмотря на холодный прием, оказанный сборнику его произведений, общество само непосредственно, так сказать, в обход официальной критики, оценило и полюбило поэзию Ов. Туманяна.

И с тех пор ничто уже больше не мешает росту славы и влиянию пера поэта земли армянской.

Ов. Туманян один из тех редких талантов, которые творят не только в своих произведениях, в стихах, но и всей своей жизнью.

Туманян вкладывает свою душу во все, что он делает. Он в состоянии увлечься и произведениями искусства и красивыми безделушками. В этом маститый поэт напоминает большого ребенка. У него постоянно какая-нибудь страсть – сегодня он страстно увлекается фотографией, завтра резьбой по дереву, а послезавтра рисованием. Пишущий эти строки года два тому назад, придя на квартиру Туманяна, застал его в рабочем костюме, в белом халате, окрашивающим книжные шкапы и спинки стульев.

Домашние объяснили мне, что поэт нашел случайно какой-то порошок, который дает возможность очень легко окрашивать предметы в бронзовый цвет. Эта работа так увлекла Туманяна, что он недели две отдавался ей со всей страстью и успокоился лишь тогда, когда в его квартире все лампы, дверцы шкафов, спинки стульев и пр. были выкрашены в бронзовый цвет.

Туманян – великолепный рассказчик, и слушать его, когда он рассказывает из жизни армянской деревни и из армянской старины, это – такое же эстетическое наслаждение, как и читать его прекрасные стихи.

А кто не слушал его, кто не бывал в его гостеприимном доме? Он принес с собой из деревни в город гостеприимство отцовского дома и не садится за стол без гостя.

В его простой, образной речи звучит вся его любовь к простому армянскому народу, вся боль за переносимые этим народом страдания и вся вера в будущее родного народа.

---

<sup>17</sup> Прекратил существование в 1904 г. О «Вернатуне» подробно см.: С. Оганесян. «Вернатуна». Ереван, 2018.

И поэзия Ов. Туманяна, и личность его – это книга о прошлом, настоящем и будущем армянского народа. Воспев в легендах и сказках величие прошлого, в поэмах и стихах жизнь армянского крестьянина в настоящем с его горестями и печалью, он устремил свой ясный взор вглубь грядущего, когда в освобожденной от ига тиранов родине народятся новые поэты, «не осквернившие своих уст проклятием» и «воспоют новыми словами, новыми песнями новую родину, могучую родину».

И теперь, в день пятидесятилетия поэта, на заре возрождения армянского народа мы можем пожелать нашему поэту только одного – это долгой жизни, чтобы он своими глазами видел новое поколение поэтов, исполняющих его завет и воспевающих его «новую и счастливую родину».

Вард. Агаронян

---

«Закавказское Слово», 20. II. 1919

– 6 –

#### О КАПЛЕ МЕДА

Праздник в честь Ованеса Туманяна совпал с весенним возрождением природы, с первыми вешними ласками солнца, с первыми вешними тонами просветлевшего неба.

И весь этот праздник, с вереницами чистых сердцами детей, с их приветствиями, в которых сочеталась ясная вера с ясною и искренней любовью к прекрасному, все или большинство приветствий взрослых, – которые на этот, по крайней мере, день совершенно отрешились от песен и плясок дней нашей жизни, и тоже, в искренности порыва к поэту, уподобились чистым и ясным детям, – весь этот праздник по своему духу, колориту и деталям, – иначе, как *весенним праздником духа*, не может и быть назван.

Праздником любви, праздником культа чистых и благородных идей *поэта единения*, праздником властных, быть может, и бессознательных, но властных порывов к иной, лучшей, менее звериной и более *человечной* жизни. Праздником, когда так ярко сказалась потребность выхода из <1 слово неразборчиво> совершенно расшатанной в своих устоях человечности кавказской жизни к высотам духовного единения людей-братьев, из постоянно насыщенной недоверием и ненавистью атмосферы – к чистому озону любви и веры в человека.

Я хочу остановиться на тех из массы приветствий, принесенных дорогому поэту, которые *сейчас* для нас, кавказцев, имеют громадное моральное значение.

В этих приветствиях хочется видеть не случайное проявление чувства, не вспышку любви, не красивый фейерверк признательности, – а нечто глубокое и вечное, нечто

такое, что должно принести двум соседним народам, одинаково настрадавшимся и изголодавшимся, одинаково истосковавшимся по лучшим формам человеческих взаимоотношений, – если не самое счастье, то начало его.

От главы грузинского правительства Ноя Жордания была получена поэтом О. Туманяном следующая телеграмма:

«Поздравляю с пятидесятилетием дня рождения благородного певца единения народов Кавказа и пожелаю в дальнейшем шествия по этой раз избранной дороге».

Правда – телеграмма несколько, если можно так выразиться, *голая*, и все в рамках официального холодка, но это объясняется, как мне кажется, тем position, которое, во всех случаях жизни, *oblige*. А отчасти и свойствами натуры Ноя Жордания, не всегда обнаруживающего скрытых под внешним холодком теплых чувств.

Иного характера приветствие министра иностранных дел Е. П. Гегечкори.

«Позвольте и мне, одному из почитателей Вашего таланта, принести свои искренние поздравления. Пусть думают многие, одни с сокрушением, другие с затаенной радостью, что семена вражды и ненависти, в изобилии семена на родной нам почве, дают в данный момент богатую жатву. Пройдет ненастье, расчистится атмосфера, и «одна капля меда» превратится в живительный источник братства и единства наших народов».

Тут чувствуется горячий порыв человека, временно поставленного в тиски создавшихся националистических условий, но в глубине души остающегося все тем же борцом за интернациональные идеалы.

Да, семена вражды и ненависти, семена в изобилии на родной нам почве, – дают сейчас, несомненно, богатую жатву. Этого отрицать нельзя. Это даже не ненастье, это горе и несчастье двух народов. Е. П. Гегечкори, констатируя это, высказывает уверенность в том, что *атмосфера расчистится*, и одна капля меда превратится в живительный источник братства и единства наших народов.

Надо только тщательно беречь и охранять эту одну драгоценную каплю меда от людей, любящих лакомиться *таким медом*, не с кулинарно-гастрономическими целями, а с несколько иными.

Еще энергичнее, хотя и несколько суше – высказался м-р вн. дел груз. республики Ной Рамишвили:

«Горячо приветствую в вашем лице печальника и певца двух братских народов. Временное омрачение умов не остановит триумфального шествия царства любви и солидарности народов».

Тут характерно определение печального явления.

– *Временное омрачение умов* – называет Н. Рамишвили болезнь националистического ослепления своей родины.

Но, как и Е. Гегечкори, глава мин-ва внутр. дел видит, что это омрачение умов не остановит триумфального шествия царства любви и солидарности народов.

Слова в устах человека, делающего внутреннюю политику, не только просто знаменательные, но и многозначительные.

Теплом веет от приветствия газеты «Сакартвело», которая, устами поэта Табидзе – тоже говорит об укреплении идеи солидарности народов.

И в этот весенний день, в этот день весеннего праздника поэта – с радостью забываешь обо всех шагах, которые делались за все эти тяжелые годы людьми с омраченными умами, обо всем, что делалось, говорилось и писалось не во славу идеи единения, а в угоду духу тьмы.

Будем драгоценную каплю меда беречь, ибо в ней залог грядущего счастья двух соседей народов.

Лев. Кипиани

Р. С. Я кончал эту статью, когда в редакцию принесли текст приветствия Ованесу Туманяну, подписанного молодым поэтом Гришашвили. Как все, что пишет этот поэт, и это приветствие носит на себе печать истинной красоты.

Но есть, помимо присущих этому поэту перлов стиля, в приветствии нечто удивительно верное и вещее.

Это мысль:

– Несчастье одного соседа не может принести счастья другому.

Л. К.

---

«Закавказское Слово», 26. II. 1919.

– 7 –

#### ПЯТИДЕСЯТИЛЕТИЕ ОВ. ТУМАНЯНА

20 февраля торжественно отпраздновано 50-летие со дня рождения армянского поэта Ов. Туманяна.

С раннего утра поэту на его квартире в Вознесенской ул. стали приносить свои поздравления представители литературы, искусства, друзья и поклонники его таланта. Первыми принесли свои поздравления армянские писатели Ширванзаде, Папазян, Лео, Нар-Дос и Дереник Демирчян.

В 12 час. к дому Туманяна подошла Тифлисская III армянская мужская гимназия в полном составе. В процессии участвовали все ученики и педагогический персонал гимназии, во главе с ученическим оркестром музыки. Педагогический совет в полном составе поднялся на квартиру, где от имени учащихся архимандрит Беник приветствовал поэта прочувствованной речью. После этого Туманян спустился на

улицу к учащимся. Оркестр заиграл армянский национальный гимн. Ученики встретили любимого поэта восторженными криками «ура». Один из учеников от имени всех своих товарищей приветствовал Туманяна речью. Другой ученик великолепно продекламировал прелестное стихотворение юбиляра «Старое благословение». Расчувствованный поэт в трогательных выражениях благодарил учащихся. Снова раздались восторженные крики «ура», поэта подняли на руки и под звуки музыки понесли по рядам.

В таком же порядке чествовали поэта также армянская гимназия Лисициан и армянки учащиеся III женской гимназии.

Лично посетили поэта и принесли свои поздравления председатель парламента Армении А. Саакян, члены армянской европейской делегации<sup>18</sup> М. И. Пападжанов и ген. Корганов, а также армянская делегация армяно-грузинской конференции в полном составе, артисты армянской сцены и художники армяне, причем художники Татевосян и Шарбабчян преподнесли ему картины своей работы.

Редакции изданий «Арач», «Мшак», «Жоговурди Дзайн», «Гехарвест» и «Агбюр Тараз» принесли свои поздравления через представителей. От газеты «Северный Кавказ» принес поздравления Г. Диасамидзе. Редакция газеты «Закавказское Слово» посетила поэта в полном составе.

Поэта посетили и принесли свои поздравления А. А. и С. М. Городецкие, мусульманский литератор, член парламента Грузии Абдурахман-бей Ахундов и армянские поэтессы Арменуи Тигранян, Лейли, а также главноуполномоченный американского комитета помощи капитан Джемс Арроль. Прислали своих представителей или приветственные адреса «Общество писателей армян»<sup>19</sup>, «Союз женщин армянок», «Армянское драматическое о-во», «Союз армянских землячеств», «Бюро по исчислению потерь армян. народа за время всемирной войны»<sup>20</sup> и «Союз кооперативов Армении».

Делегация от тифлисского цеха поэтов<sup>21</sup> в составе А. Кулебякина<sup>22</sup>, Ю. Данцигера и Н. Бел-Конь Любомирской поднесла Туманяну адрес следующего содержания:

---

<sup>18</sup> Имеется в виду делегация на Парижской мирной конференции 1919 г., составленная правительством Республики Армения под председательством А. Агароняна.

<sup>19</sup> О деятельности общества см.: С. О г а н е с я н. Туманян и Кавказское общество армянских писателей. Ереван, 2007 (на арм. яз.).

<sup>20</sup> О деятельности Бюро см.: Потери армянского народа в годы Первой мировой войны (сборник документов и материалов «Бюро по установлению потерь армян от Всемирной войны»). Сост., автор предисл. и примеч. Анушаван Закарян. Ереван, 2005 (на арм. и русск. яз.).

<sup>21</sup> О цехе поэтов см.: А. Закарян. Тифлисский «Цех поэтов» Сергея Городецково и сборник «Акмэ». Ереван, 2011.



«Тифлисский цех поэтов сегодня, в день вашего пятидесятилетия, обращает к вам свои восторженные голоса. Ваш праздник является не только народным праздником вашей многострадальной родины, но и днем великой радости для всех поэтов, чествующих в лице вас высокого жреца вселенского слова. Не в призрачной красоте звуков, не в сладостном бряцанье лирных струн видели вы призвание поэта. Нет! Вам всегда дорог был завет любимого вами Пушкина: «Глаголом жги сердца людей». И сколько раз в эти тревожные годы ваш голос звучал, как совесть человечества! Великого гуманиста, мощного сердцем пророка приветствуем мы в вас сегодня и славим».

От представителей правительств республики Грузии и Армении были получены следующие телеграммы ...<sup>23</sup>

От м-ра юстиции Армении С. Арутюняна:

«Шлю сердечное поздравление горячему проповеднику мира и любви, и братства народов с пожеланием здоровья и долголетия».

В течение дня у поэта перебивал почти весь артистический и литературный Тифлис и многочисленные друзья и поклонники. Вся квартира его была заставлена подношениями и цветами. Праздник затянулся до позднего вечера, и только обязательное постановление генерал-губернатора заставило гостей оставить к 12 часам ночи чарующее общество дорогого юбиляра.

---

«Закавказское Слово», 22. II. 1919.

---

<sup>22</sup> О генерале-поэте А. Кулебякине см.: А. Закарян. Александр Кулебякин и Армения. Ереван, 2003.

<sup>23</sup> Так как в предыдущем материале – статье Л. Кипиани «О капле меда», подробно представлены телеграммы представителей правительства Грузии Н. Жордания, Е. Гегечкори, Н. Рамишвили, здесь тексты этих телеграмм не приводим.

---

---

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ \*

Բանալի բառեր՝ Հովհաննես Թումանյան, Թիֆլիս, հոբելյան, բանաստեղծ, հայրենակցական միություններ, տոնակատարություն, նիստ, ժողով, շնորհավորանք, երեկույթ:

*Մեկ դար առաջ՝ 1919 թ., Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի (1869–1923) ծննդյան 50-ամյակի օրերին հայ հասարակության տարբեր շերտեր (զանազան կազմակերպություններ, ուսումնական հաստատություններ, մշակութային անհատ գործիչներ) ինքնաբուխ նրան նվիրված բազմաբնույթ միջոցառումներ են կազմակերպել:*

*Ստորև ներկայացվող արխիվային անտիպ փաստաթղթերը վերաբերվում են բանաստեղծի հիմնադրած ու ղեկավարած Հայ հայրենակցական միությունների միության կողմից իր հիմնադրի 50-ամյակին նվիրված տոնակատարություններին:*

*Առաջին փաստաթուղթը Միությունների միության կենտրոնական խորհրդի՝ 1919 թ. փետրվարի 27-ի հրապարակային նիստի արձանագրությունն է: Նիստն ամբողջությամբ նվիրված էր Հովհ. Թումանյանի մեծարմանը: Փաստաթղթերի մյուս խումբը (թիվ 2, 4, 6) Միությունների միության կենտրոնական խորհրդի նիստերն են, որոնք նվիրված են բանաստեղծի ծննդյան 50-ամյակի առթիվ միության կողմից կազմակերպվելիք բանկետին առնչվող կազմակերպչական խնդիրներին և արդյունքների ամփոփմանը: Թիվ 3 փաստաթուղթը նրա հոբելյանին նվիրված երեկույթի հրավիրատոմսի օրինակն է, իսկ թիվ 5-ը՝ 1919 թ. մայիսի 11-ին բանաստեղծին նվիրված բանկետի ժամանակ Միությունների միության կողմից նրան մատուցված թղթապանակում առկա 3 էջից բաղկացած շնորհավորական-դրվատական գրությունը՝ կազմված միության կենտրոնական խորհրդի քարտուղար Համազասպ Համբարձումյանի կողմից, որի տակ գրված են բոլոր հայրենակցական միությունների անունները:*

*Հրապարակվող փաստաթղթերից ակնհայտ է դառնում, որ Հայ հայրենակցական միությունների միությունը, չնայած ոչ նպաստավոր ֆինանսական դրությանը, հավուր պատշաճի նշել է իր հիմնադրի հոբելյանը: Այդ միջոցառումները կազմակերպության անդամների համեստ պարտքն էր հայրենանվեր գործչին, ազգի ճակատագրի մասին*

---

\* Ընդունվել է տպագրության 01. III. 2019 թ.:

մտահոգ, սեփական ժողովրդի հոգսերով ու ուրախություններով ապրող բանաստեղծին:

Փաստաթղթերը պահվում են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) թիվ 245 ֆոնդում: Հրապարակման ընթացքում պահպանել ենք տեքստերի լեզվաոճական առանձնահատկությունները, ուղղագրությունը՝ խիստ անհրաժեշտության դեպքում միայն կատարելով ուղղագրական և կետադրական շտկումներ: Փաստաթղթերը վերնագրվել են մեր կողմից: Տեքստերի կրճատ բառերը լրացված, իսկ պակասող բառերն ու արտահայտություններն ավելացված են ուղղանկյուն փակագծերում ([ ]), իսկ հրապարակումից բաց թողնված հատվածները ցույց են տրվում ուղղանկյուն փակագծերում կախման կետեր դնելով ([...]):

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

№ 1

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿՅԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԻՍՏԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 50-ԱՍՅԱԿԻՆ

27 փետրվարի 1919 թ.  
[Թիֆլիս]

1919 թ. փետրվարի 27-ին Կովկասի] Հայոց բարեգ[ործական] ընկերության ընթերցարանում Մարգար Աւետիսեանի նախագահությամբ, Ախալքալաքի, Լոռու, Ախալցխայի, Գանձակի, Փամբակի, Նոր Բայազետի, Շուլաւերի, Ղարսի, Ղազախի, Գողթնի, Ղարաբաղի, Նախիջևանի հայրենակցությունների ներկայացուցիչների մասնակցությամբ կայացաւ Միությունների միութեան կենտրոնական խորհրդի հրապարակական նիստը՝ նուիրուած միութեան նախագահ Յովհաննէս Թումանեանի յիսնամեակին:

Նիստին ներկայ էին բազմաթիւ հանդիսատեսներ:

Բանալով նիստը՝ Մ. Աւետիսեանը առաջարկում է պատգամաւորութիւն ուղարկել խորհրդի կողմից Յովհաննէս Թումանեանին հրաւիրելու՝ ներկայ լինելու նոյն նիստին: Խորհուրդը որոշում է ընտրել պատգամաւորներ Մադաթ Պետրոսեանին և [Բագրատ] Շահպարտնեանին՝ յանձնարարելով նրանց անմիջապէս գնալ Յովհաննէս Թումանեանին հրաւիրելու:

Համաձայն այս որոշման՝ Մ. Պետրոսեանը և [Բ.] Շահպարտնեանը թողնում են դահլիճը՝ յանձնարարութիւնը կատարելու նպատակով:

Յայտնելով ժողովին, որ առաջարկ կայ Յովհաննէս Թումանեանի՝ որպէս Միութեան նախագահի, յրելեանին նուիրուի մի բանկետ՝ կազմակերպուած Հայրենակցությունների

միութեան անունից, նախագահը առաջարկում է արտայայտուել այս խնդրի մասին: Խորհուրդը, մտքերի կարճ փոխանակությունից յետոյ, որոշում է սկզբունքով ընդունել բանկետ կազմակերպելու առաջարկը, իսկ նրա կազմակերպութեան, ձևի և բովանդակութեան հարցերը քննութեան առնել հետևեալ նիստին:

Այնուհետև յայտնվում է, որ արդէն գալիս է Յովհաննէս Թումանեանը: Նրան ընդառաջ իջնում է փ[ոխ]նախագահ Մարգար Աւետիսեանը: Յոբելեարին, երբ նա Մարգար Աւետիսեանի, Մ. Պետրոսեանի և [Բ.] Շահպարտնեանի ուղեկցութեամբ ներս է մտնում դահլիճ, ժողովն ընդունում է ոտքի կանգնելով, ոգևորուած և երկար ու բուռն ծափահարութիւններով:

Դիմելով Յովհաննէս Թումանեանին՝ Մարգար Աւետիսեանը ողջունում է նրան Հայրենակցութիւնների միութեան խորհրդի կողմից, բնորոշում է նրա գրական-հասարակական գործունէութիւնը՝ որպէս ժողովրդական մեծ ու բարձր գործ և առանձնապէս շեշտում նրա կատարած անգնահատելի ծառայութիւնը հայ ժողովրդի քաղաքակրթական, հոգևոր կեանքում:

Պատասխանելով Մարգար Աւետիսեանին՝ Յովհաննէս Թումանեանը յայտնում է, որ ինքը անչափ յուզուած է այն իսկապէս էական և հայ ժողովրդի համար շատ բնորոշ հանգամանքով, որ նա՝ բազմաշարքար հայ ժողովուրդը, այս արհավիրքի ու ընդհանուր ձախողութեան օրերին, երբ ասին ու մահն են տիրում նրա հայրենիքում, կարողանում է, այնուամենայնիւ, այք բաց անել ցաւ ու տառապանքից և ոգևորուել իր կուլտուրական գործերով, որին լաւ ապացոյց են այսպիսի լաւ հանդէսները: “Այս բանը, – շարունակում է Յով. Թումանեանը, – լցնում է մեր հոգին կենդանի և անմեռ յոյսերով դեպի մեր ազգի ապագան”:

Ստ. Մալխասեանը կանգ է առնում Յով. Թումանեանի բանաստեղծութեան լեզուային արժանիքների վրայ՝ յայտնելով, որ ինքը իրան հպարտ է զգում՝ տեսնելով, թէ որքան հարուստ, ճկուն և բանաստեղծական արժանիքներով օժտուած է հայոց լեզուն, որի ամենափայլուն արտայայտիչն է Յովհ. Թումանեանը:

Պատասխանելով Ս. Մալխասեանին՝ Յովհ. Թումանեանը աշխատում է ապացուցանել, որ իր արածը՝ որպէս գրական գործ, առանձին մի բան չէ և որ դեռևս յայտնի չէ, թէ այս ամենից, ինչ որ ինքը գրել է, որ մասը կկարողանայ դիմանալ ժամանակի ազդեցութեանը: “Իմ բազմաթիւ գրածքներից, – ասում է բանաստեղծը, – թերևս շատ և շատ քչերը պէտքական լինեն գալիք սերունդներին: Դեռ ասելին ևս կարելի է ասել. իմ բոլոր գրածքներից դժուար թէ մի կամ երկու բան մնան ապագայի համար և արևի հզոր ազդեցութեան տակ չխունանան”:

Այնուհետև ողջոյնի խօսք ասում են Համ. Համբարձումեանը, որ ընդգծում է Յովհ. Թումանեանի ստեղծագործութեան և հոգեկան աշխարհի համամարդկային էլէմէնտը, Պ. Արելեանը, որ առանձնապէս կանգ է առնում Յով. Թումանեանի անձնաւորութեան ու գործունէութեան վրայ՝ որպէս հասարակապէս բարձրարժէք քաղաքացու տիպարի վրայ, Ս.

Աբովեանը, որ յոբելեարի բնատրոթեան հասարակական կողմերը և առանձանպէս նրա ստեղծագործութեան թռիչքը աշխատում է ապացուցանել իր մանկութեան յիշողութիւններով, որոնք կապուած են Յով. Թումանեանի հետ և այլն:

Պատասխանելով [Հ.] Համբարձումեանին, [Պ.] Աբելեանին և [Ս.] Աբովեանին՝ Յով. Թումանեանը կրկին անգամ շեշտում է, որ ինքը առանձնապէս ոչինչ չի արել ու իրանից ոչինչ չի ներկայացնում: “Ախպէ՛ր, էն, ինչ որ դուք բոլորդ ասում էք ու իմ մէջ տեսնում, էդ ամենը հասարակ մի բան է և յատուկ է բոլորիդ”, – ւաւելացնում է բանաստեղծը:

Մարգար Աւետիսեանը, կրկին անգամ ողջունելով, յայտնում է բանաստեղծին, որ բոլոր խօսողները խօսում են անկեղծօրէն և իբրև ընկերներ և որ բոլորի ասածը ճշմարտութիւն է:

– Հենց էդ պատճառով, որ մենք խօսում ենք որպէս ընկերներ, ես հնարաւոր եմ համարում վիճել Ձեզ հետ ձեր ոգևորութեան առարկայի վերաբերմամբ, հէնց էդ պատճառով էլ ձեր բոլորիդ ասածների դէմ ես բերում եմ յարգելի “от воды”-ներ:

Նախագահ Մ. Աւետիսեանը վերջին խօսքն է ուղղում բանաստեղծին և կրկին անգամ շնորհաւորում նրա յիսնամեակը, նա ողջունում է իր և յոբելեարի ջանքերով ստեղծուած Հայրենակցութիւնների միութեան խորհրդի անունից:

Ղարսի հայրենակցութեան ներկայացուցիչը շնորհաւորում է Ղարսի հայրենակցութեան անունից և ցանկութիւն է յայտնում, որպէսզի հայրենակցութիւնների ու խորհրդի պատմութիւնը գրուի ու առանձին հրատարակութեամբ նուիրուի Յովհ. Թումանեանին:

Բանաստեղծը իր բուռն շնորհակալութիւնն է յայտնում ժողովին:

Ոտքի կանգնելով՝ ժողովականները երկար ու բուռն ծափահարութիւններով ողջունում են Յովհաննէս Թումանեանին:

Նախագահը յայտարարում է նիստը փակուած:

Նախագահ՝ Մ. Աւետիսեան  
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

## № 2

ՔԱՂՎԱԾՔ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՆԿԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ

4 մարտի 1919 թ.

[Թիֆլիս]

1919 թ. մարտի 4-ին, Մարգար Աւետիսեանի նախագահութեամբ, Ախալքալաքի, Գանձակի, Նոր Բայազէտի, Նախիջնանի և Ղազախի հայրենակցությունների ներկայացուցիչների [մասնակցութեամբ] կայացաւ Միությունների միութեան կենտրոնական խորհրդի նիստը:

[...] Մարգար Աւետիսեանը առաջարկում է շարունակել Յով. Թումանեանին նուիրուելիք բանկետի խնդիրը: Մտքերի փոխանակությունից յետոյ որոշում է ընտրել մի մասնաժողով, որին և յանձնել բանկետի կազմակերպութեան իրազորումը: Մասնաժողովին իրաւունք տալ կազմել տեղեակ անձանցից մի մարմին, որի հետ և գործակցութեան մէջ մտնել: Յանձնաժողովի անդամներ ընտրուեցին՝ Ար. Տէր-Գրիգորեանը, Ջալալ Տէր-Գրիգորեանը և Հ. Համբարձումեանը՝ խորհրդի կողմից, Աշոտ Աթանասեանը՝ որպէս բանկետի առաջարկ անող: [...]

Նախագահ՝ Մ. Աւետիսեան  
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 15, թ. 4-5: Բնագիր: Ձեռագիր:

## № 3

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ 50-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԵՐԵՎՈՒՅԹԻ ՀՐԱՎԻՐԱՏՈՍՍԸ

[1919 թ. ապրիլ<sup>1</sup>,  
Թիֆլիս]

Հայոց Հայրենակցական Միությունների Կենտրոնական Խորհուրդը խնդրում է Ձեզ, մեծարգոյ պարոն, յարգել Ձեր ներկայութեամբ հայրենակցությունների միութեան հիմնադիր Յովհաննէս Թումանեանի 50-ամեակի<sup>1</sup> նւիրուած երեկոյթը, որ տեղի կունենայ սոյն

<sup>1</sup> Թվագրվում է համաձայն բովանդակության:

թի ապրիլի “ ”-ին<sup>2</sup>, երեկոյեան ժամը “ ”-ին, Քաղաքային վարկի ընկ[երություն] շէնքում, Պուշկինեան փ. № 3 (Городское кредитное о[бщест]во, Пушкинская - 3):

*Հայրենակ[ցական] Միությունների Կենտրոնական Խորհուրդ*

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 7, թ. 46: Տպագիր օրինակ<sup>3</sup>:

№ 4

ՔԱՂՎԱԾՔ ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ՝ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈԲԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԲԱՆԿԵՏ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԽՆԴԻ ՄԱՍԻՆ

*8 մայիսի 1919 թ.  
[Թիֆլիս]*

*8 մայիսի 1919 թ. Մարգար Աւետիսեանի նախագահութեամբ, Ախալքալաքի, Նոր Բա-  
յազէտի, Նուխու, Շամախի-Գեօկչայի, Լոռու, Ղազախի, Ղարսի և Գանձակի հայրենակ-  
ցութիւնների ներկայացուցիչների մասնակցութեամբ կայացաւ միութեան կենտրոնական  
խորհրդի նիստը, որը որոշեց. 1. Յովհաննէս Թումանեանին ներկայացուելիք թղթապա-  
նակի վրայ արած ծախքի գումարը հայրենակցութիւններից հաւաքելու գործը յանձնել  
Մադաթ Պետրոսեանին: 2. Ընտրել մի մասնաժողով, որին յանձնել Յովհ. Թումանեանին  
ուիրած երեկոյթի կազմակերպումը: Ընտրուում են՝ Բ. Օհանջանեանը, Ս. Լազարեանը,  
Բագր. Շահպարտնեանը և Մադաթ Պետրոսեանը: 3. Երեկոյթը կազմակերպել առաջիկայ  
կիրակի օրը: [...]*

*Բ. տ. նախագահի՝ Ս. Աւետիսեան  
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան*

ՀԱԱ, ֆ. 245, ց. 3, գ. 15, թ. 24: Բնագիր: Ձեռագիր:

№ 5

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ՝  
ՀԱՅՐԵՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

<sup>2</sup> Հովհ. Թումանյանին նվիրված այս երեկոյթը տեղի է ունեցել ավելի ուշ՝ մայիսի 11-ին:  
<sup>3</sup> Տոմսակի վրա դրված է “Հայրենակցական միութ[յունների] կենտրոն[ական] խորհուրդ”-ի  
կնիքը:

11 մայիսի 1919 թ.<sup>4</sup>

Թիֆլիս

Յարգելի բանաստեղծ!

Հազար–հազար տարիներ՝ անվերջ տառապանքների ճանապարհը բռնած, իր տանջանքի գնով, արեան ու արցունքի հեղեղներով հայ ազգը կարողացել է ստեղծել հոգեկան արժեքներ՝ քաղաքակրթության ու լոյսի կարօտ, կատարելագործության հզոր եռանդ և քաղաքացիական բարձր կեանքով ապրելու անմահ ձգտումներ:

Անժխտելի է, որ մեր ազգային գեղարուեստը՝ մասնաւորապէս բանաստեղծութիւնը, իր ծագման և զարգացման պարագաներով պատկանում է այդ կարգի արժեքներին:

Արդ՝ ինչպէս երկնահաս լեռների կատարներից դիտող հայեացքը դիրին և հեշտ կարող է թափանցել ու տեսնել շատ հեռաւոր հորիզոններ, այնպիսի հորիզոններ, որոնք այլ պայմաններում, անշուշտ, կը մնային անտես ու անըմբռնելի, այդպէս էլ բանաստեղծի սուր ու կախարդական հայեացքը՝ ուղղւելով հոգու վեհ ու լուսաւոր բարձունքներից դէպի կեանքը, դէպի նրա բազմազան երեկոյթները, այնտեղ, նոցա բիր էլնէջներում, կարողանում է տեսնել, դիտել և ըմբռնել ճշմարտութիւնը, վեր հանել մարդկային ցեղի կատարելագործութեան յաւիտենական գաղափարը, նրա հոգու զարգացման ազնիւ լոյսը և գեղեցկութիւնը:

Իսկ դու ...

Հարագատ որդիդ հայրենի խորոյտ բնութեան. չէ՞ որ մեզ մօտ դու եկած ես բարձր երկնահաս մեր լեռների կատարներից. չէ՞ որ դու տեսել և դիտել ես հայրենի երկրի կենսորախ ու փարթամ հովիտները, անդնդախոր ձորերը, ամեհի ու ազգիդ վշտից կնճռոտած ժայռերը, կանաչազգեստ բլուրները, յաւիտենական, չնաշխարհիկ կեանքի լեզուով կարկաչող գետակն ու աղբիւրը, խորհրդաւոր անտառը – երբեմն տխուր ու տերևաթափ, երբեմն էլ ուրախ, ժիր և լեզւանի, աղմկող՝ շաչն ու շառաչը բերնին և մշտապէս կուարար ջրվեժները և այն ամէնը, ինչ հրաշագործ է, վեհ ու վսեմ:

Տեսած, լսած և հոգեպէս խորը թափանցած՝ չէ՞ որ դու, չքնաղ քնարիդ լարերին զարկելով, մեզ և մեր ազգին բերել ես այդ հպարտ ու ճոխ բնութեան դիրթիչ երգերը, նրա անմահ բարբառը, անըմբռնելի սերն ու կարօտը ...

Բանաստեղծ, գալով հայրենի լեռների կատարներից, շնորհիւ թափանցող հայեացքիդ, լայն, բիրեղ, ընտիր և էապէս ժողովրդական սպրումներիդ, դու կարողացար կանգնել մեր ազգային հոգու ձիւնապատ բարձունքների վրայ և այնտեղից շրջահայեաց ու ազատ նայել և տեսնել ազգի գոյութեան հեռունները, քննել ու կախարդիչ հնչիւններով երգել մեր կեանքի բոլոր կողմերը՝ անցեալը և ներկան:

Տանջւած, վերքերով լեցուն, բայց և առմիշտ անվիաստ հայ ժողովուրդը երկար տարիներ հմայքով ու զմայիլ լսել է և դեռ այսօր շարունակում է կախարդւած լսել քեզ:

<sup>4</sup> Թվագրվում է համաձայն բովանդակության և նախորդ փաստաթղթի:



Քո սիրուն երգերը լսելով՝ նա ըմբռնել է իր վիշտն ու ցար, իր յոյսն ու լոյսը, իր ժպիտն ու թախիծը:

Ստեղծագործության գոհարները չեն միայն, որ հրամայական առիթ են տալիս մեզ յայտնելու մեր ամենաբուռն զգացմունքները:

Հասարակական գործի ծանր ճանապարհը բռնած, դու՝ որպես ճշմարիտ քաղաքացի, միշտ հնչեցրել ես քո խրախուսող ձայնը և ամեն անգամ՝ ձախորդության թե՛ փորձանքի ժամին, հանդես ես եկել մեզ համար իբրև սուրբ զգացմունքներով և ճշմարտության գաղափարով համակուած իսկական առաջնորդ:

Եւ կարող ձեռքիդ բռնած, վեհ վեր բարձրացրած ճանապարհները լուսաւորող և թանձր խաւարի կուրծքը ճեղքող լուսաւոր դրօշակը՝ մեր ազգային հոգու կրակը, դու՝ որպէս մեր կեանքի մարգարէն, միշտ կանչել ես մեզ դէպի արևն ու ազատութիւնը, դէպի եղբայրության գաղափարի աշխարհը, դէպի յաւիտենական երջանկութիւնը ...

Եւ ահա, Հայոց հայրենակցութիւնների միութիւնը դառնում է դէպի Քեզ՝ որպէս իր հիմնադրին, և իւր ամենաջերմ զգացմունքներով ի յայտ աշխարհի գոչում է. “Կեցցէ՛ բանաստեղծը, կեցցէ՛ ճշմարիտ քաղաքացին”:

Ալեքսանդրապոլի, Ախալցխայի, Ախալքալաքի, Արդահան-Օլթու, Արդանուշ-Շաւշէթի, Բուլանլուղի, Գանձակի, Գողթնի, Լոռու, Ղազախ-Շամշադնի, Ղարաբաղի, Ղարսի, Նախիջևանի, Նոր Բայազէտի, Նուխու, Շամախի-Գեօկչայի, Շուլավերի և Փամբակի հայրենակցութիւններ

Ի. տ. Հայրենակցական միութիւնների միութեան կենտրոնական խորհրդի նախագահ՝ Մ. Աւետիսեան  
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան  
Անդամներ

Կազմել է Համագ. Համբարձումեան, ընդունուեց խորհրդի մայիսի 8-ի նիստում, կիրակի՝ մայիսի 11-ին, Յ. Թումանեանին տրուելի թէրմպումին թղթապանակի մէջ ներկայացնելու համար: Քարտ. Պ. Աբելեան: Ախալքալաքի հայրենակցութեան կողմից՝ Բ. Օհանջանեան և Պ. Աբելեան, Ջ. Տէր-Գրիգորեան, Հին նախիջևանցիների կողմից՝ Յ. Արիստակէսեան, ստորագր[ել] են նոյնպէս՝ Մ. Աւետիսեան և այլք: Առաջինը ստորագրեցին, որպէս Թումանեանին մօտ մարդիկ, Ջ. Տէր-Գրիգորեան և Մ. Պետրոսեան:

## № 6

ՀԱՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՀՈՐԵԼՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ  
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15 մայիսի 1919 թ.

[Թիֆլիս]

*Մարգար Աւետիսեանի նախագահութեամբ կայացաւ Հայրենակցութիւնների միութեան կենտրոնական խորհրդի նիստը:*

*Ներկայ էին Ախալքալաքի, Գանձակի, Ղազախի, Լոռու, Շամախի-Գեօկչայի, Նուխու, Ղարսի, Արդահանի և Նոր Բայազետի հայրենակցութիւնների ներկայացուցիչները:*

*Նիստի քարտուղարութեան պաշտօնը կատարում էր միութեան քարտուղար Հ. Համբարձումեանը:*

*Բանկէտի կարգադրիչ յանձնաժողովը ներկայացրեց մանրամասն հաշիւ Յովհ. Թումանեանի 50-ամեակին նւիրած երեկոյթի մասին: Հաշուից երևաց, որ մասնադրութեամբ երեկոյթի համար հաւաքուած է եղել մէկ հազար չորս հարիւր թուրլի և որ այս գումարը ամբողջովին ծախսվել է երեկոյթի վրայ:*

*Խորհուրդը որոշեց՝ հաշիւը հաստատել:*

*Նոյն կարգադրիչ յանձնաժողովը ներկայացրեց Յովհ. Թումանեանին ներկայացուած թղթապանակի հաշիւը. թղթապանակի համար հայրենակցութիւնների վարչութիւններից հաւաքուած է եղել ընդամենը իննը հարիւր ութսուն և հինգ (985 թ.) թուրլի, ըստ որում՝ վարչութիւններից ոմանք վճարել են 100 թ., ոմանք էլ՝ 50–80 թուրլի: Այս գումարի հանդէպ ծախսուած է՝ 1. թղթապանակի կաշուէ աշխատանքը՝ 600 թ., 2. նրա կազմը՝ 100 թ., 3. աստառը՝ 180 թ. և 4. ուղերձի տպագրութիւնը՝ 125 թուրլի: Բացի այդ՝ տոմսակների տպագրութեան վրայ, ի հաշիւ նոյն փողի, ծախսուած է 200 թուրլի: Այսպիսով՝ թղթապանակի նպատակով հաւաքուած է եղել միայն 985 թ., ուստի կարգադրիչ յանձնաժողովի անդամ Ս. Լազարեանը երկու հարիւր քսան թուրլին ծախսել է իր անձնական միջոցներից:*


*Խորհուրդը որոշում է. ա. Յանձնաժողովի հաշիւը հաստատել, բ. Հայրենակցութիւնների վարչութիւններից պ. Մադաթ Պետրոսեանի ձեռքով հաւաքել պակաս գումարը՝ երկու հարիւր քսան (220 թ.) թուրլի և այդպիսին վճարել պ. Ս. Լազարեանին և գ. Կարգադրիչ յանձնաժողովին յայտնել շնորհակալութիւն:*

*Նախագահ՝ Մ. Աւետիսեան  
Քարտուղար՝ Հ. Համբարձումեան*

ԼԻԼԻԹ ՄԱԿԱՐՅԱՆ. Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը (1921–1937 թթ.): *Գլխ. խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր Ամատունի Վիրաբյան, Հայաստանի ազգային արխիվ, Երևան, 2018, 383 էջ:*\*

Բանալի բառեր՝ Հայաստանի օգնության կոմիտե, ներգաղթ, Սփյուռք, գաղթակա- նություն, Հովհաննես Թումանյան, Պողոս Նուբար, խորհրդային իշխանություն, վե- րաշինություն:

*Հայաստանի ազգային արխիվի գիտական խորհրդի երաշխավորությամբ լույս է տեսել պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Լիլիթ Մակարյանի «Հայաս- տանի օգնության կոմիտեի գործունեությունը (1921–1937 թթ.)» աշխատությունը:*



*Անշուշտ, Հայրենիք–Սփյուռք կապերի վերաբերյալ յու- րաքանչյուր աշխատություն իրենից ինքնին մեծ հետաքրք- րություն է ներկայացնում և դառնում գնահատման արժա- նի: Ինչքան էլ տարօրինակ թվա, հայ պատմագիտության մեջ այս թեմայի վերաբերյալ մինչ այժմ կար ընդամենը մեկ գրքույկ, այն էլ՝ տպագրված 1966 թ.<sup>1</sup>, սակայն՝ ընդհանուր առմամբ, հպանցիկ: Արդեն վաղուց հասունացել էր նորի պահանջը՝ նոր փաստաթղթերի ներառմամբ, նոր մոտե- ցումներով և մեթոդաբանությամբ, հարցերի ամենալայն ընդգրկմամբ և սպառիչ պատասխանների հնարավորինս*

*ներկայացմամբ: Եվ ահա, վերջապես, գիտական հանրության սեղանին դրվեց այդ նոր աշխատությունը:*

*Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) անունը՝ 1920–1930-ական թվականներին պարբերաբար հնչում էր տարաբնույթ հավաքներում, կուսակցական-հանրային ու մշակութային գործիչների շուրթերից, և դարձել էր Հայրենիք–Սփյուռք կապերի ամ- րապնդման, հայրենաշինության նվիրումի, հայրենադարձության կազմակերպման, Հայրենիքին սփյուռքահայ եղբայր-քույրերի անմնացորդ աջակցության խորհրդանիշ: ՀՕԿ-ի դրոշի ներքո էին համախմբվում անկախ կուսակցական պատկանելությունից*

\*Ընդունվել է տպագրության 26. II. 2019 թ.:

<sup>1</sup> Տե՛ս Ա. Վ ա ր դ ա պ ե տ յ ա ն. Հայաստանի օգնության կոմիտե (ՀՕԿ), Երևան, 1966, 124 էջ:

բոլոր այն հայորդիները, ովքեր մեկ միասնական նպատակ էին հետապնդում՝ հանուն Հայրենիքի:

ՀՕԿ-ի ստեղծումը և գործունեությունը միանշանակ չէր ընդունվում, դրա նկատմամբ վերաբերմունքը, հետապնդած նպատակներն երբեմն տարբեր կերպ էին ընկալվում ինչպես բուն Խորհրդային Հայաստանում, այնպես էլ՝ Մփյուռքում (հատկապես՝ հակախորհրդային տրամադրված կառույցների կողմից): ՀՕԿ-ի ճակատագիրն այնքան էլ հարթ ու սահուն ընթացք չունեցավ, ինչը հետագայում արտահայտվեց նաև նրա պատմության ուսումնասիրության վրա:

Հենց հայրենաշինությունը, Ցեղասպանությունից և տարատեսակ պատերազմներից հետո կիսաավեր դարձած ու պահպանված Հայրենիքի մի մասնիկի՝ Խորհրդային Հայաստանի վերականգնմանն էր միտված արդեն 1921 թ. սեպտեմբերին ՀՕԿ-ի ստեղծումը, որը մինչև 1937 թ. գործելով որպես կառավարությանն առընթեր մարմին՝ ունեցավ բեղմնավոր և արդյունավետ գործունեություն հասարակական, սոցիալ-տնտեսական ու մշակութային ոլորտներում:

ՀՕԿ-ի կայացմանը ներգրավվեցին ժամանակի հայտնի ազգային-քաղաքական և մտավորական գործիչներ, աշխարհասփյուռ գրեթե բոլոր գաղթօջախներում ստեղծվեցին այդ կառույցի մասնաճյուղեր: Եվ այս առումով իրավացի է Լ. Մակարյանը, երբ շեշտում է. «Առանց սփյուռքահայության նյութական աջակցության անհնարին կլինեք Հայաստանում իրականացված շինարարական և այլ բնույթի բազմաթիվ ծրագրերի իրագործումը» (էջ 5):

Արդեն զերծ խորհրդային տարիներին բնորոշ մեթոդական կաղապարներից՝ հեղինակին հաջողվել է հիմնախնդիրն ուսումնասիրել համակողմանի և առարկայաբար: Ուսուցանելի է նրա՝ այն իրավացի արդիական հնչեղության դիտարկումը, որ «ՀՕԿ-ի գործունեությունը, լավ և վատ առումներով, ուղեցույց կարող է հանդիսանալ այսօր Մփյուռքի հանդեպ Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության, արտերկրի հայության հնարավորությունները հայրենիքի զարգացմանն ուղղելու համահայկական, զանազան այլ ծրագրերի իրականացման, միջոցառումների անցկացման մեթոդները մշակելիս: ՀՕԿ-ի գործունեության լուսաբանումը արդիական է նաև սփյուռքահայ, այդ թվում՝ կուսակցական շրջանակների համար, իրենց գործելաձևը, դիրքորոշումները ճշգրտելու և դրանք հայ ժողովրդի ու Հայաստանի Հանրապետության գորեղացմանը ծառայեցնելու տեսանկյունից» (նույն տեղում):

Աշխատությունը մեծապես շահել է արխիվային բավական հարուստ աղբյուրագիտական բազայի լայն օգտագործման շնորհիվ, և պետք է շեշտել, որ փաստաթղթերի գերակշիռ մասն առաջին անգամ է գիտական շրջանառության մեջ դրվում (ի դեպ, հեղինակը տարիներ շարունակ աշխատել է Հայաստանի ազգային արխիվում):

Հայաստանի ազգային արխիվի ֆոնդերից (18 միավոր), մասնավորապես, շրջանառվել են ՀՕԿ-ի գլխավոր վարչության, Խորհրդային Հայաստանի գործադիր և օ-

րենսդիր բարձրագույն մարմինների, Ամենայն հայոց կաթողիկոսի դիվանի, Հայ ազգային պատվիրակության, Արտակ Դարբինյանի ֆոնդերի վավերաթղթերը: Նույնը վերաբերում է Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող Հովհ. Թումանյանի, Ա. Չոպանյանի, Ա. Երզնկյանի ու Կ. Միքայելյանի ֆոնդերին: Աղբյուրագիտական հենքի ամբողջացման տեսանկյունից կարևոր է ժամանակի պարբերական մամուլի (37 միավոր, այդ թվում՝ սիյուռքահայ), տպագիր փաստաթղթերի և նյութերի օգտագործումը:

Լ. Մակարյանը գնահատանքի խոսքով ներկայացրել է նաև թե-մային առնչվող առկա սակավաթիվ պատմագիտական աշխատությունները: Կարևորվել է Է. Մելքոնյանի (“Հայկական բարեգործական ընդհանուր միությունը Խորհրդային Հայաստանում 1923–1937 թթ.”), “Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն”), Հ. Ռ. Գևորգյանի և Վ. Թաշճյանի (“Դար մը պատմութեան Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան”) աշխատությունները: Հեղինակն իրավացիորեն առանձնացրել և բարձր է գնահատել հատկապես Կ. Դալլաքյանի աշխատությունները (“Հայ սիյուռքի պատմություն”, “Ռամկավար-Ազատական կուսակցության պատմություն”, “Ակնարկներ սիյուռքահայ հասարակական մտքի պատմության”):

Աշխատությունը բաղկացած է չորս գլխից: “Հայաստանի օգնության կոմիտեի ստեղծումը և մասնակցությունը Հայաստանի վերաշինությանը” վերնագրով 1-ին գլխում վերլուծված է ՀՕԿ-ի ստեղծումը, պայքարը սովի ու համաճարակի դեմ, հայրենաշինության գործընթացը, հայրենադարձության կազմակերպումը, համագործակցությունը հայրենակցական միությունների հետ և Հայաստանում նոր ավանների կառուցումը: Մանրամասն ներկայացվում է ՀՕԿ-ի ստեղծման նախադրյալները, դրդապատճառները, հիմնավորվում անհրաժեշտությունը, դրանում Խորհրդային Հայաստանի ղեկավարության շահագրգռվածությունը (հողագործության ժողովրդական կոմիսար Արամայիս Երզնկյանի) և մտավորականության (հատկապես Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի) անմնացորդ նվիրվածությունը, կազմակերպչական անդուլ աշխատանքները, որում վճռորոշ դերակատարում ունեցավ Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանը:

Լ. Մակարյանի ուշադրությունից չի վրիպել ՀՕԿ-ի ստեղծման գործընթացում իշխանությունների կողմից Ամենայն հայոց կաթողիկոսի մեկուսացումը: Այս առումով տեղին է նրա քննադատությունը. “Անկասկած, Վեհափառ հայրապետն ավելի բարձր հեղինակություն ու վստահություն էր վայելում ժողովրդի շրջանում, քան հայրենի կառավարությունը: Գաղտնիք չէր, որ արտասահմանի համայնքներից Ամենայն հայոց կաթողիկոսի հասցեով էին Հայաստան ուղարկում սնունդ, հագուստեղեն, դեղորայք և անհրաժեշտ այլ պարագաներ, իսկ հոգևորականությունն ու հայոց եկեղեցին իրենց հոգացությունն էին ցուցաբերում սովյալ բնակչության, այդ թվում՝ հայ գաղթա-

կանության, որք ու անապաստան երեխաների նկատմամբ” (էջ 25): Հենց վերջին պարագան նկատի ունենալով՝ իշխանությունները թույլատրեցին եկեղեցու ներգրավումը, ինչը սահմանափակվեց Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե ներկայացուցիչ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի՝ ՀՕԿ-ի նիստերին ներկա գտնվելով:

Ներկայացնելով համատարած սովի արդյունքում ստեղծված աղետալի վիճակը՝ Լ. Մակարյանը իրավացիորեն շեշտում է. “Խորհրդային Հայաստանի կառավարությունը միայնակ չէր կարողանում բոլոր խնդիրներին լուծում գտնել: Անհրաժեշտություն էր դարձել երկրից դուրս ապրող հայության մտավոր և նյութական կարողությունների գործադրումը հայրենիքում” (էջ 34):

Սովյալներով լեցուն, համաճարակի և գրեթե անհուսալի սոցիալ-տնտեսական վիճակում գտնվող երկրում շատ շատերի (եթե ոչ բոլորի) հայացքն ուղղված էր ՀՕԿ-ին (օրինակ՝ անգամ այդ ծանր պայմաններում ազգագրագետ Երվանդ Լալայանն իր հավաքած 50 հատոր ազգագրական նյութերի հրատարակումն ակնկալում էր միայն ՀՕԿ-ից): Սոցիալականից գատ՝ ՀՕԿ-ն իրականացնում էր նաև կրթամշակութային հովանավորության, գյուղատնտեսական ու շինարարական գործառնություններ (ջրանցքների, հանրային շենքերի կառուցում, ճահիճների չորացում և այլն):

Մենագրության հեղինակը ՀՕԿ-ի յուրաքանչյուր ձեռնարկ ներկայացնում է փաստարկված և հստակ՝ նշելով նաև ֆինանսավորման աղբյուրն ու չափը: Հանգամանակից ներկայացված է ՀՕԿ-ի արտադրական-տնտեսական գործունեությունը, որը միտված էր տարբեր հարցերի, զբաղվածության խնդրի լուծմանը (օրինակ՝ Երևանում ատաղձագործարանի կառուցում) և ֆինանսական միջոցների ավելացմանը: Այդ կառույցներում մշտական աշխատանքով ապահովված էին հարյուրավոր մարդիկ, ինչն այն ժամանակ զգալի թիվ էր: Կարևորվել է 1926 թ. Լենինականի և 1931 թ. Զանգեզուրի երկրաշարժերի հետևանքների վերացման գործընթացում ՀՕԿ-ի էական մասնակցությունը:

ՀՕԿ-ի գործունեության բաղկացուցիչ դրվագներից ներկայացվում է սփյուռքահայ գաղթօջախներ պատվիրակությունների (Արամայիս Երզնկյանի, Գրիգոր Վարդանյանի) ուղարկումը, որը գնահատվում է ինչպես լրացուցիչ հանգանակությունների կազմակերպման, այնպես էլ՝ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման տեսանկյունից: Պարբերաբար ներկայացված է ՀՕԿ-ի ղեկավար ու պատասխանատու վարչական կազմի անվանացանկը, ինչը կարևորվում է ժամանակի այդ նվիրյալ հայորդիների մոռացության մատնվելուց վերհիշմանը:

Սփյուռքահայության հայրենասիրական մեծ ներդրման ցայտուն վկայություն է հեղինակի նշած հետևյալ թվերը. 1923–1928 թթ. ՀՕԿ-ը ստացել էր 430.338 ռուբլի, որից ընդամենը 48.871 ռուբլին էր ԽՍՀՄ մասնաձյուղերից հավաքվել (ԱՄՆ-ից՝ 144.669, Ֆրանսիայից՝ 142.384, Իրանից՝ 22.805, Եգիպտոսից՝ 20.177): Արդեն 1934 թ. ՀՕԿ-ն ուներ արտասահմանյան մասնաձյուղերով 10 հազար անդամ:

Ամփոփելով գլուխը՝ Լ. Մակարյանը նկատում է. «ՀՕԿ-ի ստեղծումը հայ ժողովրդի համար այդպիսի ծանր ժամանակահատվածում միանշանակ անհրաժեշտություն էր: ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը Խորհրդային Հայաստանում արդյունավետ աշխատանք կատարեց արտասահմանի հայերից ստացված օգնությունը տնօրինելու, ճիշտ բաշխելու ուղղությամբ՝ պայքար մղելով սովի, համաճարակի դեմ, ինչպես նաև աջակցեց քայքայված տնտեսության վերականգնմանը՝ այդպիսով մասնակից դառնալով Հայաստանի չքավոր ազգաբնակչության կյանքի հետագա բարելավմանը» (էջ 70):

Անհրաժեշտ ծավալով ներկայացված են Խորհրդային Հայաստանի կառավարության քայլերը ներգաղթի կազմակերպման ուղղությամբ, 1920-ական թվականների սկզբին սփյուռքահայ որոշ գաղթօջախներում ստեղծված ծանր, երբեմն անելանելի քաղաքական, սոցիալ-տնտեսական վիճակը, հայրենադարձության հարցում Հայաստանի կոմկուսի և ՀՅԴ միջև առկա սրված տարաձայնությունները (եթե ոչ՝ հակամարտությունը): Ակնհայտ է, որ հայրենադարձության պարագան առաջնահերթ էր համարվում, իսկ դրա կազմակերպումն ու իրագործումը՝ հրատապ, համազգային հնչեղության: Հենց այդ հանգամանքը կարևորելով՝ Լ. Մակարյանը ճշմարտացի դիտարկում է կատարում. «ՀՕԿ-ի կենտրոնական վարչության գործունեության ընթացքում թերևս ամենակարևոր աշխատանքը հայրենադարձության գործին աջակից դառնալն էր: ՀՕԿ-ն ամեն ջանք գործադրեց՝ մասնակից դառնալու հայրենադարձության կազմակերպչական աշխատանքներին և օժանդակելու այն անհատներին ու խմբերին, ովքեր ցանկություն էին հայտնել գալու ու բնակվելու Հայաստանում» (էջ 71): Հեղինակի համոզմամբ խորհրդային իշխանությունները ներգաղթի հարցում նաև դասակարգային մոտեցում էին ցուցաբերում, այսինքն՝ այլ կուսակցական պատկանելություն կամ հայացքներ ունեցողների համար ներգաղթը գրեթե բացառվում էր: Մյուս կողմից, նա փաստում է, որ ելնելով տնտեսական վիճակից՝ խորհրդային իշխանությունները ընդունում էին հիմնականում աշխատունակ հայրենադարձների:

Լ. Մակարյանը գաղթականների վիճակի և հայրենադարձության հարցը դիտարկում է նաև միջազգային իրավիճակի փոփոխությունների համապատկերում (օրինակ՝ քեմալականների իշխանության գալը, Լոզանի խորհրդածրոջը): Նշյալի առումով, հատկապես, ադետալի վիճակ էր ստեղծվել հենց Լոզանից և Ազգերի Լիգայի հանցավոր անգործությունից հետո: Այս շրջանում, ըստ հեղինակի, ներգաղթի հարցը լուծվեց Խորհրդային Հայաստանի կառավարության անմիջական վերահսկողության, ՀՕԿ-ի կենտրոնական վարչության քրտնաջան աշխատանքի և սփյուռքահայության նյութական աջակցության շնորհիվ: Ընդհանուր առմամբ, 1922–1928 թթ. Սփյուռքից հայրենադարձվել էր 17.121, ԽՍՀՄ հանրապետություններից՝ 2.200 հոգի: Հեղինակն անդրադարձել է նաև 1933 թ. ՀԲԸՄ նախագահ Ջարեհ Նուբարի գլխավորությամբ

Սփյուռքում ստեղծված Ներգաղթի ֆոնդի (փոխնախագահ՝ Ավետիք Իսահակյան, անդամներից էր Արշակ Չոպանյանը) գործունեությանը:

1936 թ. խորհրդային Ներգաղթի կոմիտեն լուծարվեց, և ներգաղթողների ընդունելության ու տեղավորման գործն ամբողջությամբ հանձնվեց ՀՕԿ-ի գլխավոր վարչությանը, որին առընթեր ստեղծվեց «Ներգաղթչին» շինարարական-մատակարարման կազմակերպություն: Հեղինակի օգտագործած աղբյուրների համաձայն՝ 1921–1936 թթ. ներգաղթել է 33.072, իսկ բացի մեծ խմբերով հայրենադարձներից 1926–1936 թթ. անհատական վիզաներով ներգաղթել է 6.926 հոգի: Լ. Մակարյանի գնահատմամբ ՀՕԿ-ը կատարեց հայրենադարձության գործընթացում իր առջև դրված խնդիրները և անուրանալի ավանդ ունեցավ. «Թեև հայրենադարձները, Խորհրդային Հայաստանի ծանր պայմանները տեսնելով, խիստ հիասթափվել էին, այնուամենայնիվ հայրենադարձության շնորհիվ հայրենիքում հաստատվեցին տասնյակ հազարավոր բանիմաց և կարող ուժեր, որոնք հետագայում իրենց մասնակցությունը բերեցին Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացին» (էջ 92):

Ակնհայտ էր, որ հայրենադարձության գործընթացում առաջնայինը բնակարանի և աշխատանքի խնդրի լուծումն է: Այս նպատակով ՀՕԿ-ը սերտորեն համագործակցում էր Սփյուռքում գործող հայրենակցական միությունների հետ: Հեղինակի կարծիքով՝ նրանց հետ կապերի խորացումը խրախուսվում էր նաև խորհրդային իշխանությունների կողմից, քանի որ այդ միությունների միջոցով շինարարական աշխատանքներ կազմակերպելու համար մեծ ներդրումներ էին կատարվում, բացի այդ՝ միությունները քաղաքական ուղղվածություն չունեին: Հիմնական համագործակցությունը տարվում էր 12 հայրենակցական միության հետ, որոնք պատրաստակամություն էին հայտնել աջակցել համանուն ավանների կառուցմանը, օրինակ՝ Նոր Արարկիր, Նոր Եղեսիա, Նոր Խարբերդ, Նուբարաշեն, Նոր Մեքաստիա, Նոր Մալաթիա, Նոր Բութանիա: Իրենց համակերպացիների համար կենցաղային և բնակարանային պայմաններ ստեղծելու ուղղությամբ հայրենակցական միությունների գործունեությունը Լ. Մակարյանն իրավացիորեն համարում է ազգանվեր: Ինչպես հայրենադարձության, այնպես էլ նոր ավանների կառուցման շինարարական ղեկավարումը և հսկողությունը 1934 թ. կառավարության որոշմամբ դրվեց ՀՕԿ-ի վրա: Երևանում ՀՕԿ-ի կողմից գումարվում էին հայրենակցական միությունների ներկայացուցիչների ժողովներ: Հեղինակը մանրամասն անդրադարձել է նաև Սփյուռքից կտակների Խորհրդային Հայաստանին փոխանցման և կրկին ՀՕԿ-ի միջոցով դրանք երկրի վերաշինությանը ծառայեցնելուն:

«Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղերի ստեղծումը և գործունեությունը խորհրդային հանրապետություններում» վերնագրով 2-րդ գլխում վերլուծվել է Վրաստանում, Բաքվում, Ռուսաստանում (հատկապես՝ Մոսկվայում, շնորհիվ հրապարակախոս Կարեն Միքայելյանի), Միջին Ասիայում, Ուկրաինայում (ակտիվ գոր-



ծիչներից էր Ակսել Բակունցը) մասնաճյուղերի ծավալած գործունեությունը՝ այդ ամենը հիմնավորելով վիճակագրական հարուստ տվյալներով:

“Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունն արտասահմանում և փոխհարաբերությունները սփյուռքահայ կազմակերպությունների և կուսակցությունների հետ” վերնագրով 3-րդ գլուխը ծավալով ամենամեծն է: Քաղաքական տեսանկյունից դիտարկելով հարցը՝ Լ. Մակարյանը կարծում է, որ ՀՕԿ-ը ոչ միայն Սփյուռքում նյութական հանգանակություն կազմակերպող, հայրենիքի հետ արտասահմանի հայությունը կապող կարևորագույն օղակ էր, այլև խորհրդային իշխանություններն այդ կազմակերպության հետ էին կապում հեռահար նպատակներ, և ՀՕԿ-ի առջև հատուկ առաջադրանքներ էին դրել, այն է՝ փոխել արտասահմանի հայության վերաբերմունքը Խորհրդային Հայաստանի նկատմամբ, ֆոնդերն ու կտակներն հնարավորինս տեղափոխել Երևան: Այս նպատակներին հասնելու համար արտասահմանում անհրաժեշտ էր համարվում ունենալ կազմակերպչական մարմիններ, և սկզբնական շրջանում ՀՕԿ-ը ստիպված էր հաշվի առնել անգամ արտասահմանում գործող ավանդական կուսակցությունների տրամադրությունները, որպեսզի շահեր նրանց վստահությունը:

Պարսկաստանում գործած 10 մասնաճյուղերից համեմատաբար ակտիվ էին Թեհրանի և Թավրիզի մասնաճյուղերը: Միրիայում և Լիբանանում ՀՕԿ-ի մասնաճյուղերն էական գործունեություն չծավալեցին: Եզիպտոսում ՀՕԿ-ի մասնաճյուղերի կայացմանը նպաստել են հնչակյանները և ռամկավարները: Հեղինակը տեղին է արժևորել նվիրյալ ՀՕԿ-ական Գառնիկ Սվազյանի հայրենանվեր գործունեությունը: Հրապարակվել են ուշագրավ լուսանկարներ նրա դուստր՝ անվանի ցեղասպանագետ Վերժինե Սվազյանի անձնական արխիվից:

Եվրոպական երկրներից հեղինակն անդրադարձել է Գերմանիայում, Մեծ Բրիտանիայում, Հունաստանում, Բուլղարիայում և Ռումինիայում գործող մասնաճյուղերին: Մակայն, շատ հանգամանալից վերլուծել է Ֆրանսիայում ՀՕԿ-ականների գործունեությունը, որտեղ առանձնակի ակտիվ էին ռամկավարները: Բավական մանրամասն ներկայացված է ՀՕԿ-ի մասնաճյուղերի աշխատանքը Հյուսիսային ու Հարավային Ամերիկաներում, հատկապես՝ ԱՄՆ-ում:

Հարցն առարկայաբար դիտարկելով, զերծ մնալով կուսակցական կադապարներից՝ Լ. Մակարյանը քննադատում է նաև ՀՕԿ-ի գործելակերպում առկա բացթողումները: Փաստորեն, ՀՕԿ-ը Խորհրդային Հայաստանի ու Սփյուռքի միջև կապող օղակ էր և, բնականաբար, պետք է որոշակի հարաբերակցություն ունենար ավանդական կուսակցությունների հետ (բացի՝ ՀՅԴ-ից): Այդ հարաբերակցության արդյունավետությունն ակնհայտ էր, և, հեղինակի կարծիքով, բազմաթիվ խոշորածավալ ձեռնարկներ կյանքի կոչվեցին Խորհրդային Հայաստանում, ինչն անհնարին կլի-

ներ առանց սփյուռքահայ կազմակերպությունների, բազմաթիվ կուսակցական գործիչների աջակցության:

“Հայաստանի օգնության կոմիտեի լուծարումը” վերնագրով 4-րդ գլխում Լ. Մակարյանը հարցը դիտարկում է Խորհրդային Միության ընդհանուր քաղաքական իրավիճակի համապատկերում, երբ համատարած բռնաճնշումները պետք է բացասական ազդեցություն ունենային նաև այս հաստատության ճակատագրի վրա: ՀՕԿ-ն արդեն համարվում էր ավելորդ, կոմկուսի դավաճանների սպասարկու, ինչի արդյունքում նրա բոլոր ղեկավարները ձերբակալվեցին ու գնդակահարվեցին: ՀՕԿ-ի վախճանը հեղինակը փաստարկված վերլուծելով՝ ներկայացնում է նաև հետևյալ ուշագրավ տվյալները. 1923–1937 թթ. ՀՕԿ-ն արտասահմանից ստացել է դրամական միջոցներ՝ 17.603 ֆունտ ստեռլինգ, 192.254 դոլար, 172.581 ֆրանկ, ինչը հավասար էր 586.428 ռուբլի ոսկով: Իսկ արդեն Մփյուռքից ստացված ոչ դրամական հսկայածավալ օգնությունը (նյութական միջոցներ, հագուստ, սնունդ, տեխնիկա և այլն) ուղղակի անհնար էր հաշվարկել:

Լ. Մակարյանի համոզմամբ՝ խորհրդային իշխանությունները դադարեցնում էին արտասահմանի հետ որևէ շփում հենց հասարակական կազմակերպությունների միջոցով՝ պետական անվտանգության ինչ-ինչ նկատառումներից ելնելով, ուստի և նվազել էր ՀՕԿ-ը պահելու պահանջարկը, ինչն արտաքին քարոզչական միջոց լինելով՝ համարվում էր իր առջև դրված խնդիրները կատարած: Ըստ այդմ, ՀՕԿ-ի արտասահմանյան գործունեությունն այլևս խորհրդային իշխանությունների համար հետաքրքրություն չէր ներկայացնում: Ցավոք, այդ ամենի արդյունքում խզվում էր կապը նաև Մփյուռքի հետ:

Վերջաբանում հանրագումարի է բերված թեման, ամփոփված ու վերջնական գնահատականներ են տրված քննարկված հարցերին: Հեղինակն ընդունելով հանդերձ, որ ՀՕԿ-ի գործելակերպում որոշակի քաղաքական միտվածություն կար՝ այնուամենայնիվ, համարում է՝ դա ամենին չի նսեմացնում նրա գործունեության իրական արդյունքը: Իսկ պատճառը պարզ է և ակնհայտ. ՀՕԿ-ը կարճ ժամանակահատվածում հսկայական աշխատանք է կատարել Խորհրդային Հայաստանի բնակչությանը սովի ու համաճարակի ճիրաններից փրկելու, 1926 թ. Լենինականի և 1931 թ. Զանգեզուրի երկրաշարժերից տուժածներին օգնություն հասցնելու, աղետի հետևանքները վերացնելու, գաղթականների ընդունման, աշխատանքով ապահովման ու Հայաստանի վերաշինությանը մասնակցելու գործընթացներում: Պետք է համաձայնվել այն եզրակացության հետ, ըստ որի՝ “Անկախ ՀՕԿ-ի արտասահմանյան ճյուղերի իրենց գործունեության ընթացքում կատարած կուսակցական հանձնարարականներից՝

ՀՕԿ-ը սփյուռքահայության կյանքին մեծ ակտիվություն հաղորդեց՝ թեկուզ հենց ձեռնարկած հանգանակությունների, միջոցառումների շնորհիվ: Մփյուռքում շատ-

շատերը ՀՕԿ-ի միջոցով էին տեղեկություններ ստանում և նույնիսկ գաղափար կազմում Խորհրդային Հայաստանի մասին” (էջ 366):

Հավելվածների տեսքով ընթերցողին հնարավորություն է ընձեռնված ծանոթանալ ՀՕԿ-ի հիմնադիր անդամների անվանացանկին և կանոնադրությանը: Ողջունելի է գրքում առկա բազմաթիվ լուսանկարների առկայությունը (ՀՕԿ-ի ղեկավար կազմ և ակտիվ գործիչներ, ձեռնարկություններ, ներգաղթողների անկետաներ, Սփյուռքի միջոցներով ՀՕԿ-ի կառուցած շենքեր, ավաններ), ինչն ավելի է ամբողջացնում թեմայի մասին պատկերացումը: Հետաքրքիր փաստ է ՀՕԿ-ի սեփական հիմն ունենալը, որի հեղինակներն են Ռոմանոս Մելիքյանը և Դերենիկ Դեմիրճյանը: Հեղինակը գրքում տեղադրել է այդ հիմնի նոտագրված լուսապատճեն:

Աշխատությունում, ցավոք, սակավաթիվ են օգտագործված սփյուռքահայ գործիչների հուշագրությունները, առանձին գաղթօջախների վերաբերյալ աշխատությունները, հայրենակցական միությունների հուշամատյանները, որոնք շատ դեպքերում սկզբնաղբյուրային նշանակություն ունեն: Ցանկալի կլիներ ՀՕԿ-ի գործունեությունն ավելի շաղկապվեր Խորհրդային Հայաստանի 1920–1930-ականների պատմությանը, անցկացվեր համեմատական ընդհանուր պետական սոցիալ-տնտեսական և մշակութային ներդրումների համապատկերում բուն ՀՕԿ-ի կատարածի հետ:

Ծավալի և կառուցվածքային առումով նկատելի է գլուխների և ենթագլուխների անհամաչափություն: Մեր կածիքով, կարելի էր 1-ին գլխի 3-րդ և 4-րդ ենթագլուխները միացնել, իսկ 4-րդ գլուխը (ընդամենը՝ 11 էջ) ընդգրկել “Հանրագումարներ”-ի մեջ:

Ինչևէ, հարկ էր ռուսերեն ու անգլերեն ամփոփումները տալ բովանդակալից և փոքր-ինչ ընդարձակ, որպեսզի օտարալեզու ընթերցողն ամբողջական պատկերացում ունենար կազմակերպության ծավալած բուռն գործունեության մասին: Պետք է արժանին մատուցել Լ. Մակարյանին, ով ՀՕԿ-ի հիմնադրման 100-ամյա հոբելյանի նախաշեմին, արխիվային հարուստ վավերաթղթերի հիման վրա, համակողմանիորեն ու առարկայական վերլուծությամբ ընթերցողի դատին է հանձնել արժեքավոր աշխատություն: Դրա միջոցով մոռացությունից վեր են հանում 1920–1930-ական թվականների Խորհրդային Հայաստանի պատմության կարևորագույն դրվագները, արժևորվում ու գնահատվում մեր սփյուռքահայ եղբայրների անմնացորդ և անշահախնդիր աջակցությունը: Իսկ որ այս աշխատությունը պատմագիտականից գատ ունի նաև արդի գործնական–քաղաքական նշանակություն՝ ակնհայտ է:

ԱՎԱԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ


---

---

ՎԱՆԻԿ ՎԻՐԱԲՅԱՆ. Տիգրան Դևոյանցի հետախուզական գործունեությունը, *Երևան, ԵՊՀ հրատ., 2018, 152 էջ + 2 ներդիր*.\*

Բանալի բառեր՝ Առաջին համաշխարհային պատերազմ, ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատ, Տ. Դևոյանց, Վ. Վիրաբյան, Հ. Հատիկյան, Ալ. Սարգսյան, հետախուզություն և հակահետախուզություն, Կովկասյան 4-րդ բանակային կորպուս, Ա. Դենիկին, Սուն Ցըզի, Ա. Աթանասյան, Ս. Տեր-Պողոսյան (Խենթ):

*Հետախուզությունն այն ծառայություններից է, որ մշտապես գրավել է մարդկանց ուշադրությունը, քանի որ նրա գործունեությունը մշտապես ծածկված է եղել գաղտնիության և անհայտության շղարշով: Առ այսօր էլ հետախուզական ծառայությունների գործունեությունը գտնվում է, այսպես ասված, 7 փականքների տակ և ժամանակ առ ժամանակ լսում ենք այս կամ այն հետախույզի գործունեության հետ կապված որոշ տեղեկություններ: Հատկապես լուսաբանվել են խորհրդային տարիներին ազգությամբ հայ հետախույզների ծավալած գործունեությունը<sup>1</sup>: Ցավոք, բաց են թողնված հայ ազգային կուսակցությունների կողմից իրականացված հետախուզական գործողությունները, որի բացը որոշ չափով լրացնում է Հ. Հատիկյանի ուսումնասիրությունը<sup>2</sup>: Նշենք՝ հետազոտողը նոր էջ է բացել հայ պատմագրության մեջ, որը մեր օրերում գրեթե ուսումնասիրության առարկա չի եղել: Հաշվի առնելով ներկայիս հայ-ադրբեջանական հակամարտությունը՝ մարտական գործողությունների մասնակից՝ Մատաղիսի ջոկատի հրամանատար, ռուսիկանության գնդապետ Ալ. Սարգսյանը (Մատաղիսի Ալիկ) հրատարակում է նաև ռազմական հետախուզության առանձնահատկությունները լուսաբանող ուսումնական ձեռնարկ<sup>3</sup>:*



---

\* Ընդունվել է տպագրության 23. 01. 2019 թ.:

<sup>1</sup> Ալ. Սարգսյան. Հետախուզություն և հակահետախուզություն (կենսագրական ակնարկներ հետախույզների և հակահետախույզների մասին), Երևան, 2005:

<sup>2</sup> Հ. Հատիկյան. Արևմտահայությունն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախում 1878–1923 թթ., Երևան, 2016: Այս գրքի մասին մեր գրախոսությունը տե՛ս ՊԲՀ, 2017, № 1, էջ 232–237:

<sup>3</sup> Ալ. Սարգսյան. Ռազմական հետախուզության հոգեբանական խնդիրները (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2013: Այս գրքի մասին մեր գրախոսությունը տե՛ս “Հայ զինվոր” (Երևան), 20–26. II. 2014:

Հարկ ենք համարում ընդգծել, որ իրենցից անկախ պատճառներով հետազոտողների ու շաղրությունից դուրս են մնացել Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին (1918–1920 թթ.) հետախույզ Տիգրան Դեոյանցի ծավալած գործունեությունը, և այս բացը լրացնելու է գալիս պ. գ. դ., պրոֆ. Վանիկ Վիրաբյանի գրախոսվող ուսումնասիրությունը<sup>4</sup>:

Հեղինակը կենսագրական մի շարք տեղեկություններ է հաղորդում Տ. Դեոյանցի մասին, որից հետևում է, որ ապագա հետախույզը գործուն մասնակցություն է ունեցել 1903 թ. Հայ առաքելական եկեղեցու գույքի բռնագրավման դեմ հայության ծավալած պայքարին, իսկ 1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, ՀՅԴ ղեկավարությամբ, կազմակերպել է մարտական խումբ:

Հետագայում Տ. Դեոյանցը սովորել է Տոմսկի տեխնոլոգիական ինստիտուտում, իսկ 1908 թ. ձեռքակալվել է “Դաշնակցության գործի” կապակցությամբ: 1910 թ. կարողացել է փախչել Երևանի բանտից և թաքնվել Բայազետում: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում անդամագրվել է հայ կամավորական շարժմանը, ապա եղել է Իգդիրում գտնվող Հայկական շտաբի աշխատակից, որը կազմակերպում էր Արևմտյան Հայաստանից Ռուսական կայսրություն անցնող արևմտահայերի ընդունման և տեղավորման գործը, ինչպես նաև հարաբերվում է Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի շտաբի հետ: Որոշ ժամանակ անց Տ. Դեոյանցը դառնում է նույն կորպուսի հետախույզական բաժանմունքի աշխատակից և փախստականների հետ զրուցելով՝ հայթայթում է հետախույզական բնույթի տեղեկություններ: Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին եղել է ռազմական գլխավոր շտաբի հետախույզական և հակահետախույզական ծառայության բաժանմունքներից մեկի պետը:

Ռուսաստանը Օսմանյան կայսրության դեմ պատերազմը սկսեց առանց գործակալական լայնածավալ ցանցի<sup>5</sup>, որն իր բացասական հետևանքն ունեցավ մարտական գործողությունների առաջին փուլում<sup>6</sup>, սակայն միայն 1915 թ. կեսերից ռուսական հրամանատարությունը

<sup>4</sup> Հայկական հետախույզական ծառայությունների վերաբերյալ Վ. Վիրաբյանը հեղինակել է հետևյալ աշխատությունները՝ “Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները 1918–1920 թթ. (Հայոց քաղաքական պատմության նորագույն էջերից)”, Երևան, 1999, “Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը (1918–1920 թթ.)”, Երևան, 2006, “Հայաստանի Հանրապետության հետախույզությունը և բանակը”, Երևան, 2009, “Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918–1920 թթ. (հետախույզություն, բանակ, ՆԳՆ)”, Երևան, 2015:

<sup>5</sup> Պատերազմի նախօրեին Կովկասյան ռազմական օկրուգի հետախույզական ծառայության պետ, փոխգնդապետ, հետագայում գեներալ Գեորգի Կլերժեն (1883–1938) ամբողջությամբ լուծարեց տարիներ շարունակ ստեղծված հետախույզական ցանցը՝ քրիստոնյաներին փոխարինելով մահմեդականներով, որի հետևանքով ռուսների համար անակնկալ եղավ Օսմանյան կայսրության 1914 թ. աշնանը պատերազմի մեջ մտնելը (տե՛ս Е. В. Масловский. Мировая война на Кавказском фронте 1914–1917 г. Стратегический очерк. Париж, 1933, с. 47–48):

<sup>6</sup> Կովկասյան բանակի հրամանատարությունն անուշադրության մատնեց ՀՅԴ ղեկավարության, հատկապես Յակով Զավրիևի (Հակոբ Զավրիյան) զգուշացումը, որ թուրքերը նախապատրաստվում

սկսեց ավելի մեծ ուշադրություն դարձնել հետախուզական ու հակահետախուզական աշխատանքներին, և այդ գործում իր համեստ լուսան ունի Տ. Դևոյանցը: Նրա անմիջական դեկավարը Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հետախուզական բաժնի պետ, կապիտան Վլադիմիր Օզոլն էր: Վ. Վիրաբյանը, լուսաբանելով Տ. Դևոյանցի հետախուզական գործունեությունը, հիմնականում կենտրոնանում է Վանի 1915 թ. հուլիսյան նահանջի հետ կապված հիմնահարցը պարզաբանելու վրա, որին էլ նվիրված է աշխատության մեծ մասը (էջ 29–97):

Հայտնի է, որ նահանջի հետ կապված պատճառները բավական երկար ժամանակ փոթորկել են հայությանը, քանի որ նրանց համար անհասկանալի էր, թե ինչպես կարողացավ օսմանյան հրամանատարությունը կարճ ժամանակամիջոցում նման քանակությամբ զորք տեղափոխել ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատ, երբ թուրքերը ծանր, օրհասական մարտեր էին մղում անզո-ֆրանսիական ուժերի դեմ Դարդանելի շրջանում: Վ. Վիրաբյանը, հետևողականորեն վերլուծելով տարբեր հեղինակների փաստերը, կտրականապես հերքում է այն սին տեղեկությունը, թե, իբր թուրքական 70 հազարանոց զորքի վերաբերյալ տեղեկությունը հայտնել է Տ. Դևոյանցը: Ինչպես իր հետազոտությունում նշում է ռազմական պատմաբան Ա. Հարությունյանը, ԽՍՀՄ Պատմառազմական կենտրոնական արխիվում ուսումնասիրություններ կատարելիս գտել է Տ. Դևոյանցի՝ 1915 թ. հունիսի 15-ի, 17-ի և 24-ի զեկուցագրերը, որտեղ որևէ հիշատակություն չկա հակառակորդի գերազանց ուժերի մասին<sup>7</sup>: Ամբաստանության հեղինակը Կովկասյան 4-րդ բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Օգանովսկին էր, որի ապատեղեկատվությունը տարածեցին Ռուբենը<sup>8</sup> և Դ. Փափազյանը: Հավանաբար, դա էր պատճառներից մեկը, որ 1919 թ. հոկտեմբերի 18-ին կայացած ՀՅԴ Ընդհանուր ժողովի դատական հարցաքննիչ ատյանում Տ. Դևոյանցին մեղադրանք ներկայացվեց հակառակորդի վերաբերյալ սխալ տեղեկություններ տալու<sup>9</sup> և Ա. Դենիկինի կամավորական բանակին հետախուզական բնույթի տեղեկություններ հայտնելու մեջ<sup>10</sup>:

Աշխատության հաջորդ գլխում Վ. Վիրաբյանը համառոտ ներկայացնում է Տ. Դևոյանցի հետախուզական գործունեությունը Հայաստանի առաջին Հանրապետության տարիներին:

Աշխատության վերաբերյալ ունենք մի քանի դիտարկումներ.

1. նախ, հարկ է ճշտել Տ. Դևոյանցի ծննդյան թվականը, քանի որ ծանոթագրությունում նշված է 1890 թ.,

---

են հարձակվել Ռուսաստանի վրա. տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 45, ց. 1, գ. 1, թ. 40:

<sup>7</sup> А. О. Арутюнян. Кавказский фронт 1914–1917 гг. Ереван, 1971, с. 197.

<sup>8</sup> Հետագայում Մուշի հայության ինքնապաշտպանության ձախողման մեջ Դ. Փափազյանը մեղադրեց Ռուբենին. տե՛ս Վլ. Ղազարյան, Հ. Գևորգյան. Դրոյի նամակը Միմոն Վրացյանին. – «Բանբեր Հայաստանի արխիվների», 2006, № 1, էջ 134:

<sup>9</sup> ՀԱԱ, ֆ. 1457, ց. 1, գ. 148, թ. 4 շրջ.:

<sup>10</sup> Նույն տեղում, ց. 2, գ. 22, թ. 1:

2. Սուն Յրզիի երկից մեջբերում կատարելիս (էջ 7) անհրաժեշտ էր նշել նաև թարգմանչին,
3. Սամսոն Տեր-Պողոսյանը (Խենթ) գնդապետի աստիճան չի ունեցել (թիվ 2 ծանոթագրություն, էջ 23–24): Ժամանակակիցը՝ գյուղատնտես և հասարակական-քաղաքական գործիչ Աշոտ Աթանասյանը (Սալ-Սան), հետևյալն է հուշագրում. “Նա (Սամսոն Տեր-Պողոսյանը. – Ռ. Ս.) միլիցիայի (աշխարհագործի. – Ռ. Ս.) պրապորշչիկի աստիճան ուներ ...” (տե՛ս ՀԱԱ, ֆ. 314, ց. 1, գ. 1, թ. 24 շրջ.),
4. 1915 թ. մայիսի կեսերին Հովհաննես Թումանյանը չի եղել Մանագկերտում (էջ 39), նամակի՝ 26 մայիսի 1915 թ. հեղինակը բանաստեղծի որդին՝ Մուշեղն է [տե՛ս Ռ. Օ. Սահակյան. Մուշեղ Թումանյանի 1915 թ. մայիսի 26-ի նամակ-գեկուցագիրը Ալաշկերտի հայության վիճակի մասին. – “Վեմ” (Երևան), 2009, թիվ 3, էջ 186–190],
5. անհաջող ձևակերպում է՝ Պ. Դրացենկոն “1920 թ. դարձել է գեներալ-լեյտենանտ” (թիվ 2 ծանոթագրություն, էջ 34),
6. անհրաժեշտ էր տողատակում նշել, որ իր կողմից հիշատակվող Դ. Գ. Մարտիրոսյանը (էջ 45) ռուսաստանյան պատմաբան է:
- Ցանկալի է, որպեսզի Վ. Վիրաբյանը շարունակի իր ուսումնասիրությունը և ավելի մանրամասն լուսարանի կապիտան Տ. Դևոյանցի հետախուզական գործունեությունը հատկապես 1918–1920 թթ. օգտագործելով ԱՄՆ-ի Կոլումբիայի համալսարանի Բ. Բախմետևի անվան արխիվում գտնվող գեներալ Ե. Մասլովսկու ֆոնդում պահվող Տ. Դևոյանցի անտիպ հուշերը (տե՛ս <http://www.columbia.edu/cu/lweb/archival/collections/ldpd/4077451/>):
- Ինչևէ, հարկ ենք համարում նշել, որ սույն աշխատությունը հեղինակի երկար տարիների պրպտումների արդյունք է, և որ նա իր տքնաջան ու հետևողական աշխատանքի շնորհիվ կարողացել է մոռացությունից դուրս բերել մի անձնավորության, ով կարևոր դեր է ունեցել Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների կայացման գործում: Կատարվել է կարևոր և անհրաժեշտ ուսումնասիրություն, որի համար Վ. Վիրաբյանն արժանի է դրվատանքի:

ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ


---

---

Հայոց ցեղասպանության արտացոլումը 1915 թ. մամուլի էջերում (հայալեզու և օտարալեզու թերթերի նյութերի ժողովածու), հատոր առաջին, *Երևան, “Դարույթ” երիտասարդական հասարակական կազմակերպություն, 2018, 618 էջ:*\*

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, հայալեզու մամուլ, օտարալեզու մամուլ, 1915 թ., Արևմտյան Հայաստան, Օսմանյան կայսրություն:

*2015 թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համա-*



*կարգող պետական հանձնաժողովի կողմից ստեղծվեց հատուկ կայք՝ [www.armeniangenocide100.org](http://www.armeniangenocide100.org), որի կարևորագույն նպատակներից մեկը միջազգային հանրությանը XIX դարավերջին և XX դարասկզբին հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ցեղասպանության վերաբերյալ օբյեկտիվ փաստեր ու տեղեկատվություն ներկայացնելն էր: Դրանից էլնելով՝ ՀՀ նախագահի աշխատակազմի կողմից հասարակական կազմակերպություններին տրամադրվող դրամաշնորհային ծրագրի և “Հայաստանի երիտասարդական հիմնադրամի” հայտարարած մրցույթի շրջանակներում “Հայրենյաց հավատամք” հասարակական կազմակերպությանը վստահվեց Հայոց ցեղասպանության ականատեսների ու վերապրողների հուշագրություններով,*

*ինչպես նաև 1915 թ. հայալեզու և օտարալեզու մամուլի նյութերով նշված կայքը 2015 թ. ընթացքում ապահովելու պատասխանատու գործը: Ծրագիրն իրականացնող հետազոտական խմբում ընդգրկվեցին ինչպես հանրապետության ակադեմիական հաստատությունների, մասնավորապես՝ ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության և ազգագրության ինստիտուտների գիտաշխատողներ, այնպես էլ այդ հարցերով տարիներ շարունակ զբաղվող մասնագետներ:*

*Հետազոտական խմբի անդամները ծրագրի իրականացման ժամանակ արդեն իսկ գիտակցում էին, որ կայքի գործադրումը տեղեկատվական-քարոզա-*

---

\* Ընդունվել է տպագրության 08. II. 2019 թ.:



կան նպատակ է հետապնդում, ուստի դրա ավարտից անմիջապես հետո ձեռնամուխ եղան տարբեր աղբյուրներից հավաքված՝ 1915 թ. մամուլի նյութերը ընթերցող հանրությանը մեկ ժողովածուով ներկայացնելու գործին: Հարկ է նշել, որ նախկինում նման աշխատանքներ արդեն կատարվել էին: Մի շարք հետազոտողներ առանձին ժողովածուներում ամփոփել են որոշ պարբերականների կամ կոնկրետ երկրների պարբերականների տարբեր տարիների նյութեր. օրինակ՝ 1985 թ. Կանադայի Հայ ազգային հանձնախմբի կողմից հրատարակվեց 1915–1916 թթ. կանադական մամուլի նյութերի ժողովածու, որը նվիրված էր Հայոց ցեղասպանությանը<sup>1</sup>: Հիշատակման է արժանի Վ. Մխիթարյանի և Վ. Օհանյանի կազմած ստվարածավալ՝ մամուլի ժողովածուի առաջին հատորը, որն ամփոփում է “The New York Times”-ի 1890–1914 թթ. նյութերը<sup>2</sup>: Արժեքավոր են Ռ. Քլոյանի աշխատասիրությամբ կազմված երկու ժողովածուները, որոնցից առաջինում ամփոփված են “The New York Times”-ի և որոշ այլ պարբերականների՝ մինչև 1922 թ.<sup>3</sup>, իսկ երկրորդում՝ 1915–1922 թթ. ամերիկյան մամուլի նյութերը<sup>4</sup>: Այս ուղղությամբ լուրջ աշխատանք է կատարել նաև Կ. Պետլիկյանը, որի կազմած ժողովածուներից առաջինը ներառում է “Halifax Herald” պարբերականի 1894–1922 թթ.<sup>5</sup>, իսկ հետագայում հրատարակված երկհատոր ժողովածուի մեջ ամփոփված են 1914–1923 թթ. բրիտանական մամուլի նյութերը<sup>6</sup>: Ա. Կիրակոսյանի կազմած ժողովածուն էլ ներառում է համիդյան կոտորածների շրջանի՝ 1894–1896 թթ. ամերիկյան մամուլի նյութերը<sup>7</sup>: Ներկայաց-

<sup>1</sup> Տե՛ս The Armenian Genocide in the Canadian Press, vol. I: 1915–1916. Montreal, Armenian National Committee of Canada, 1985.

<sup>2</sup> Տե՛ս Armenians at the Twilight of the Ottoman Era. News Reports from the International press, vol. I, “The New York Times”, 1890–1914. Comp. and ed. by Vosgan Mekhitarrian, rev. Van Ohanian. Published by Genocide Documentation and Research Center, 2011.

<sup>3</sup> Տե՛ս The Armenian Genocide – First 20th century Holocaust: the 1915 events in Turkish Armenia, 1914–1916 as reported in “The New York Times”, and various periodicals of the time... with selected entries to 1922, comp. by R. D. Kloian, Fresno, 1981.

<sup>4</sup> Տե՛ս The Armenian Genocide: News accounts from the American press, 1915–1922, comp. by R. D. Kloian, Berkeley, California, 1985.

<sup>5</sup> Տե՛ս Heralding of the Armenian Genocide: Reports in the “Halifax Herald” 1894–1922, comp. by K. M. Petlekian, Halifax, 2000.

<sup>6</sup> Տե՛ս The Times of the Armenian Genocide: Reports in the British Press 1914–1923, vol. I, II, edited by K. M. Petlekian, Beirut, 2013.

<sup>7</sup> Տե՛ս The Armenian massacres, 1894–1896. U.S. media testimony, ed. and with an introd. by A. Kirakosian, Detroit, 2004.

վել են նաև մամուլի՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող առաջին էջերի բնագրերի լուսապատճենները<sup>8</sup>:

Ինչևէ, առաջին անգամ է, որ փորձ է կատարվել մեկ ժողովածուի մեջ ամփոփել Հայոց ցեղասպանության խորհրդանշական տարեթվի՝ 1915-ի՝ ոչ միայն հայալեզու, այլև օտարալեզու մամուլի նյութերը: Ինքնին հասկանալի է, որ այդ տարվա ամբողջական, հատկապես՝ օտարալեզու մամուլի նյութերի հավաքագրումը մեկ ժողովածուի մեջ չափազանց դժվար, եթե չասենք անիրագործելի խնդիր է՝ ոչ միայն այդ նյութերի դժվար հասանելի լինելու, այլև դրանց առկայության մասին երբեմն պատկերացում չունենալու պատճառով:

Ժողովածուում զետեղված 1915 թ. հայալեզու մամուլի նյութերը տեղեկատվական հսկայական շտեմարան են, որոնք արխիվային վավերագրերի կողքին, հիրավի, սկզբնաղբյուրի նշանակություն ունեն: Այլ աղբյուրների և ուսումնասիրությունների հետ հայալեզու մամուլի նյութերը համադրելու պարագայում հեշտությամբ կարելի է վերականգնել 1915 թ. ընթացքում հայ ժողովրդի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրականացված հանցավոր քաղաքականության ամբողջական պատկերը՝ ծավալն ու ժամանակագրությունը (անշուշտ, հաշվի առնելով մամուլի նյութերի ամսաթվերի, հին տոմարով լինելու հանգամանքը):

Ժողովածուում ընթերցողը կարող է ծանոթանալ հայալեզու 23 անուն թերթերի՝ Թիֆլիսում լույս տեսած «Մշակ»-ի, «Հորիզոն»-ի, «Հովիտ»-ի, «Համբավաբեր»-ի, «Հայրենիք»-ի, «Վան-Տոսպ»-ի, Ալեքսանդրապոլի «Գավառի ձայն»-ի, Բաքվի «Արև» – «Արեգ»-ի և դրա հավելվածի, Վանի «Աջխատանք»-ի ու «Վան-Տոսպ»-ի, Կ. Պոլսի «Ավետաբեր»-ի, Երևանի «Նոր մամուլ»-ի, Շուշիի «Փայլակ»-ի, Կահիրեի «Հուսաբեր»-ի և Ալեքսանդրիայի «Արև»-ի, Աստրախանի «Բանբեր»-ի, Սոֆիայի «Հայաստան»-ի, Մարսելի «Արմենիա»-ի, Բոստոնի «Ազգ»-ի ու «Հայրենիք»-ի, Ֆրեզնոյի «Ասպարեգ»-ի և վերջապես, Թիֆլիսի «Տարազ» ու Էջմիածնի «Արարատ» ամսագրերում օր առ օր ներկայացված նյութերին: Դրանցում պահպանվել է բնօրինակների ուղղագրությունը, այդ իսկ պատճառով աշխատանքում տարբեր թերթերի ուղղագրությունների և գրելաոճի միջև տարբերություններ են նկատվում:

Հայալեզու մամուլի օրգանների դասակարգման հարցում կազմողներն առաջնահերթությունը տվել են այն թերթերին, որոնք 1915 թ. ընթացքում անխափան լույս են տեսել և աչքի ընկել հետաքրքրող հարցերի վերաբերյալ նյութերի առատությամբ: Այս տեսակետից, մասնավորապես, առանձնանում են «Մշակ»

<sup>8</sup> Տե՛ս Հ. Դեմոյան. Հայոց ցեղասպանության լուսաբանումը համաշխարհային մամուլի առաջին էջերին, Երևան, 2015:

և «Հորիզոն» թերթերը, որոնք ավելի շուտ էին ստանում համապատասխան տեղեկությունները և, հետևաբար, ավելի արագ արձագանքում տեղի ունեցող իրադարձություններին: Հասկանալի է, որ հարյուր տարի առաջ հաղորդակցության միջոցների զարգացած չլինելու պատճառով տեղեկություններն ուշ էին հասնում աշխարհագրորեն ավելի հեռու գտնվող վայրեր, ուստի, այնտեղ հրատարակվող թերթերն էլ համեմատաբար ուշ էին արձագանքում ավելի վաղ տեղի ունեցած դեպքերին: Այս առումով թերթերի դասակարգման հարցում կազմողների կողմից որպես երկրորդ չափանիշ է ընդունվել իրադարձությունների էպիկենտրոնից՝ Արևմտյան Հայաստանից, դրանց հրատարակման վայրերի աշխարհագրական հեռավորությունը:

Բնական է, որ հայերի զանգվածային բնաջնջման վերաբերյալ հատկապես հայալեզու մամուլի առատ տեղեկատվությունն ողջ ծավալով հնարավոր չէր ներկայացնել, ուստի կազմողները նշված թերթերից նյութերը բերել են քաղվածաբար: Մակայն այդ պարագայում էլ ժողովածուն բավական մեծ ծավալ է ստացել՝ ինչից ելնելով այն ժամանակագրորեն բաժանվել է երկու հատորի, որոնցից առաջինն ընդգրկում է 1915 թ. հունվար-օգոստոս ամիսների հայ և օտարալեզու մամուլի նյութերը:

Նյութերի ընտրության հարցում կազմողներն առաջնորդվել են կոնկրետ հիմնահարցերով ու թեմատիկայով: Ուշադրության կենտրոնում են եղել ոչ միայն թուրքական իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ ծրագրված հանցավոր քաղաքականության գործադրմանը, նրա զանգվածային ունեզրկմանն ու թալանին վերաբերող հողվածները, այլև գաղթականության սուկայի վիճակը նկարագրող, դեպի Արևելյան Հայաստան գաղթի ու այնտեղ նրանց խնամելու և ապաքինելու հարցում առաջացած խնդիրներին վերաբերող նյութերը: Առանձնահատուկ կարևորություն է տրվել նաև դժոխային պայմաններում հայտնված հայ ժողովրդի մաքառմանն ու իր ապրելու իրավունքի համար պայքարին նվիրված հողվածներին: Մասնավորապես՝ մամուլից ընտրողաբար քաղվել են այն նյութերը, որոնք նվիրված են արևելահայության, հայ հասարակական կազմակերպությունների ու տարբեր կառույցների կողմից գաղթականության վիճակը բարելավելուն ուղղված ջանքերին: Բացի այդ, առանձնացվել են հայության ինքնապաշտպանական մարտերին, գաղթականությանը փրկելուն ուղղված՝ հայ կամավորական ջոկատների գործունեությանը նվիրված նյութերը:

Հայալեզու թերթերի հրապարակումներում կարելի է հանդիպել ազգային, կուսակցական գործիչների՝ Արշակ Վռամյանի (Օ. Դերձակյան), Միքայել Վարանդյանի, Արամ Մանուկյանի, գորավար Անդրանիկի, Ռուբեն Տեր-Մինասյանի, Զաբել Եսայանի, Միմոն Վրացյանի, Լիպարիտ Նազարյանցի, Շավարշ Մի-

աաբյանի, Վահագն Քրմոյանի, Ռուբեն Զարդարյանի և այլ երախտավորների հողավածներն ու կոչերը, դիտարկումները, որոնք ոչ միայն ներկայացնում են օրվա իրավիճակը, այլև փաստերի հիման վրա արդեն տեղի ունեցած դեպքերի պթափ վերլուծություններ են:

Աշխարհագրական սկզբունքը կիրառվել է նաև օտարալեզու մամուլի նյութերը դասակարգելիս. հայալեզու թերթերի նյութերից հետո ներկայացվել են ռուսալեզու, այնուհետև՝ վրացերեն, պարսկերեն և հունարեն թերթերի, ապա՝ անգլալեզու, ֆրանսալեզու, իսպանալեզու և գերմանալեզու մամուլի նյութերը:

Ռուսալեզու մամուլից ներկայացվել են 7 անուն թերթ՝ «Кавказ», «Кавказское слово», «Кавказская мысль», «Русские ведомости», «Заря», «День», «Эриванскія объявленія» ու «Вестник Европы» հանդեսի նյութերը: Վրացական մամուլից առանձնացվել են «Մախալխո փուրցելի» և «Մաքարթվելո» թերթերի որոշ համարներ: Պարսկական մամուլը ներկայացված են «Ռադ» և «Ասրբե Ջադիդ» թերթերի որոշ համարների, հունական մամուլից առանձնացվել են «Agoropolis» (Աթենք) և «Atlantis» (Նյու Յորք) թերթերի նյութերը:

Ժողովածուում ներկայացված անգլալեզու մամուլը կարելի է բաժանել երեք խմբի՝ ամերիկյան, բրիտանական և ավստրալական: Ամերիկյան թերթերի նյութերից ընդգրկվել են «The Independent» ու «The New York Times», բրիտանականից՝ «The Times», «London Free Press» և «The Manchester Guardian» թերթերի նյութերը: Անգլալեզու մամուլից քանակական առումով գերակշռում են ավստրալական թերթերը: Ժողովածուում տեղ են գտել 11 թերթի՝ Մելբուրնի «The Age»-ի, «The Argus»-ի, Սիդնեյի «The Sydney Morning Herald»-ի, «The Daily Telegraph»-ի, «Sunday Times»-ի, Լանքեսթոնի «The Examiner»-ի, Պերթի «The West Australian»-ի, «Sunday Times»-ի, Բրիսբենի «Brisbane»-ի, «The Brisbane Courier»-ի և «Telegraph»-ի նյութերը:

Ֆրանսալեզու մամուլից ժողովածուում զետեղվել են կանադական 16 թերթի՝ Մոնրեալի «Montreal Daily Star», «L'annonement», «Le Canada», «La Patrie», «La Presse», «Le Devoir», Օտտավայի «Le Droit», «Ottawa Evening Journal», Տորոնտոյի «Toronto Daily Star», «The Toronto World», Քվեբեկի «L'Action Catholique», «Berlin Daily Telegraph», Վանքուվերի «Vancouver Daily Province», «The Free Press», նաև «Manitoba Free Press», «St. Catharine's Standart» թերթերի նյութերը: Իսկ Ֆրանսիայում լույս տեսնող մամուլից ժողովածուում ընդգրկվել են «La Guerre Sociale», «Le Gaulois», «La Tribune Rnpublicaine» և «L'clair Comtois» թերթերի նյութերը:

Իսպանալեզու մամուլը ներկայացված է Բուենոս Այրեսի «La Razon», «La Nacion», «La Prensa», «Tribuna», «La Protesta», Սելիսկոյի «El Dairo» թերթերի և Ռիո դե ժանեյրոյի «La revue» ֆրանս-բրազիլական ամսագրի նյութերով:

Ինչ վերաբերում է գերմանալեզու մամուլին, ապա հարկ է նշել, որ կայգերական Գերմանիայի կառավարությունը խիստ գրաքննություն էր իրականացնում և, էլնելով Օսմանյան կայսրության հետ իր դաշնակցային հարաբերություններին, արգելում էր հայերի զանգվածային սպանությունների մասին տեղեկությունների հրապարակումը: Բացառություններից կարելի է նշել Լայպցիգի “Die Christliche Welt” թերթի՝ 1915 թ. հուլիսի 29-ի համարում տպագրված Էվալտ Շթիրի “Հայաստանը Համաշխարհային պատերազմի մեջ” հոդվածը: Դա է նաև պատճառը, որ Հայոց ցեղասպանության մասին գերմանալեզու մամուլում գերակշռում են շվեյցարական թերթերի՝ “Neue Züricher Zeitung”-ի, “Berner Tagwacht”-ի և “Volksrecht”-ի հոդվածները: Նկատենք, որ շվեյցարական մամուլի գերմաներեն, նաև ֆրանսերեն “La Sentinelle” թերթերի նյութերը քաղված են Աբել Մանուկյանի գրքից<sup>9</sup>:

Ժողովածուի նյութերի ուսումնասիրությունն ավելի դյուրին դարձնելու նպատակով հատորի վերջում թերթերի, անձնանունների և տեղանունների ցանկեր են զետեղված: Քանի որ հայալեզու թերթերի բնօրինակներում հատուկ անունները հաճախ հանդիպում են տարբեր ուղղագրություններով, ուստի շփոթմունք չառաջացնելու նպատակով անվանացանկերում դրանք միավորվել են համապատասխան անվան տակ:

Մեկ-երկու դիտարկում-նկատառում. 1915 թ. վերաբերող նյութերը բաժանվել են երկու մասի՝ առաջին հատորում՝ հունվար-օգոստոսի, երկրորդում՝ սեպտեմբեր-դեկտեմբերի: Ըստ այդմ՝ հարկ էր սույն ժողովածուի առաջին հատորի վերնագրում դա նշվեր: Ցավոք, պետք է արձանագրենք, որ ժողովածուում ներառված չեն թուրքական և արաբական մամուլի նյութերը, որոնք, անկասկած, ավելի ամբողջական կդարձնեին այս աշխատությունը: Չի կարելի բացառել նաև այն, որ օտարալեզու թերթերի՝ ժողովածուում տեղ չգտած համարներում նույնպես կարող են նյութեր լինել խնդրո առարկա հարցերի վերաբերյալ:

Ամփոփենք. ժողովածուն կազմողների՝ Գ. Մանուկյանի, Ժ. Պեօճեքեանի, Ա. Ոսկանյանի, Մ. Հովսեփյանի և թարգմանիչներ՝ Տ. Միքայելյանի ու Ա. Պեպանյանի կողմից հսկայական ու շնորհակալ աշխատանք է կատարվել, ինչի արդյունքում առաջին անգամ ընթերցողի սեղանին է դրվել Հայոց ցեղասպանության վերաբերյալ 1915 թ. ոչ միայն հայալեզու, այլև օտարալեզու թերթերի նյութերի այս արժեքավոր ժողովածուի առաջին հատորը, որի երկրորդ հատորի հրատարակումը գտնվում է տպագրության փուլում:

ԱՐՄԵՆ ՄԱՐՈՒՔՅԱՆ

<sup>9</sup> Տե՛ս Դոկտ. Աբել քհնյ. Մանուկեան. Հայրենիքի ազատագրութեան բանակին համոզուած զինուորները, Ժընև, 2014:

---

---

ՌՌԻՍԼԱՆ ՑԱԿԱՆՅԱՆ. Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VII–VI դդ., “Էդիթ Պրինտ” հրատ., Երևան, 2018, 290 էջ:\*

Բանալի բառեր՝ Առաջավոր Ասիա, Մերձավոր Արևելք, Հայկական լեռնաշխարհ, էթնիկական խմբեր, Ասորեստան, Ուրարտու, տեղահանություն, վերաբնակեցում, քաղաքականություն, տեղադրություն:

Մ. թ. ա. VII–VI դդ. Առաջավոր Ասիայում տեղի են ունենում էթնոքաղաքական



փոփոխություններ, որոնք ստանալու էին համաշխարհային պատմական նշանակություն և երկար ժամանակով փոխելու էին Առաջավոր Ասիայի քաղաքական քարտեզը: Ահա հենց այդ ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհի էթնոքաղաքական հարցերի ու աշխարհաքաղաքական իրավիճակի ուսումնասիրությանն է նվիրված ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի գիտաշխատող, պ. գ. թ. Ռուսլան Ցականյանի “Էթնոքաղաքական տեղաշարժերը Մերձավոր Արևելքում և Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VII–VI դդ.” մենագրությունը:

Գիրքը կազմված է նախաբանից, չորս գլխից՝ համապատասխան ենթաբաժիններով, անգլերեն ամփոփումից (կարելի էր տալ նաև ռուսերեն), աղբյուրների ու գրականության հարուստ ցանկից, համառոտագրություններից, անվանացանկից և արքայացանկերից ու նյութին առնչվող հավելվածներից:

Նախաբանում հիմնավորվում է ուսումնասիրության արդիականությունը և համառոտ ներկայացվում էթնոքաղաքականությունը՝ որպես էթնիկական խմբերի միջև փոխհարաբերությունների կարգավորմանը նպատակաուղղված քաղաքականություն, որն իրականացվում է պետության կողմից մշակված հատուկ ծրագրով, իսկ ներպետական առումով էթնոքաղաքականությունը պետության մեջ ոչ իրավահավասար պայմաններում գտնվող էթնիկական տարբեր խմբերի

---

\* Ընդունվել է տպագրության 01. III. 2019 թ.:

միջև տեղի ունեցող փոխհարաբերություններն են, որոնցում հիմնականն իշխանության հարցն է:

Մենագրության առաջին գլուխը՝ «Չանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների քաղաքականությունը Ասորեստանում և Բիայնիլի-Ուրարտուում», ունի ութ ենթաբաժին, որտեղ ներկայացվում է էթնոքաղաքական իրավիճակի ընդհանուր նկարագիրը Մերձավոր Արևելքում մ. թ. ա. VIII դարի վերջերին և մ. թ. ա. VII դարի առաջին կեսին: Հեղինակը մեկնաբանում է տարածաշրջանում էթնոքաղաքական գործընթացները պայմանավորող գործոնները, այդ թվում՝ միգրացիոն գործընթացների ազդեցությունը բնակչիմայական, տնտեսական, քաղաքական և այլ պատճառներով: Հեղինակն ամենայն մանրամասնությամբ քննում է Չանգվածային տեղահանությունների ու վերաբնակեցումների (այսուհետև՝ ՉՏՎ) քաղաքականության կիրառումն Ասորեստանում՝ ներկայացնելով նաև այդ քաղաքականության տերմինաբանությունը: Նմանատիպ քաղաքականության ընդհանրական բնութագրման համար որպես տերմին, ըստ հեղինակի, կարելի է օգտագործել աքքադերեն *nasāhu* [našāhu, iss(š)uḥ] բայը (արմատախիլ անել, վռնդել, ոչնչացնել): Մրա էությունն այն էր, որ նվաճելով նոր տարածքներ՝ բնակչությանը տեղահանում և վերաբնակեցնում էին հսկայածավալ տերության ծայրամասերում: Իսկ արդեն տեղահանված վայրերում էլ վերաբնակեցնում էին այլ տարածքների բնակիչներին, որի հետևանքով կտրուկ փոփոխվում էր այդ շրջանների էթնիկական պատկերը:

ՉՏՎ-ի քաղաքականության բիայնական մոդելը պարզաբանելիս Ռ. Ցականյանը վերլուծում է մի շարք բայեր ու բառակապակցություններ [ag(u), par(u), suḫ(u), šat(u), tamḫ(u)?, tašm(u)?, naḫ(u)?-տանել, քշել, քշել տանել իմաստներով], որոնք թույլ են տալիս կատարելու առավել հիմնավորված եզրակացություններ: Ընդհանուր առմամբ, հեղինակն այս գլխում եզրակացնում է, որ ՉՏՎ-ի քաղաքականությունը միանշանակ հետևանքներ չի ունեցել ո՛չ Ասորեստանի, ո՛չ Ուրարտուի, ոչ էլ անգամ Նորբաբելոնական թագավորության պատմական ճակատագրերի վրա: Անշուշտ, այդ քաղաքականությունն իրական նախադրյալներ ստեղծեց վերոնշյալ տերությունների ժամանակավոր ռազմաքաղաքական վերելքի համար՝ նվազեցնելով նորանվաճ երկրամասերի և վերաբնակեցված խմբերի ըմբոստության հավանականությունը: Մակայն ակնհայտ են նաև այդ քաղաքականության բացասական կողմերը. վերաբնակեցումների ընթացքում վերաբնակեցված էթնիկական հանրությունները (օրինակ՝ արամեացիներ, քադդեացիներ) միշտ չէ, որ հաջողությամբ ասիմիլացվում էին, և կատարելապես հարմարվում իրենց բնակության նոր պայմաններին: Արդյունքում հիշյալ երեք տերություններում ստեղծված էթնոքաղաքական նոր իրադրությունը որոշակի չափով նպաստել է դրանց թուլացման և անկման գործընթացին:

Մենագրության երկրորդ գլուխը՝ «Էթնոքաղաքական իրավիճակը Մերձավոր Արևելքում (մ. թ. ա. VIII–VII դդ.)», ունի վեց ենթաբաժին, որոնցից յուրաքանչյուրում Ռ. Յականյանը կրկին մանրակրկիտ քննությամբ բացահայտում է իր փաստարկումների ու եզրակացությունների գիտական խոհանոցը: Այս գլխում քննվում են Ասորեստանի թագավոր Սինախիսերիբի (մ. թ. ա. 705–681 թթ.)՝ ներքին և արտաքին քաղաքականության տարբեր կողմերը: Վերջինիս հաջողվեց հաղթահարել քաղաքական դժվարությունները և պարտության մատնել հակասորեստանյան խմբավորումներին թե՛ հարավում, թե՛ արևմուտքում: Սինախիսերիբի հաղթական պատերազմները, որոնք ուղեկցվում էին զանգվածային վերաբնակեցումներով, ուղղակի շարունակությունն էին Առաջավոր Ասիայի էթնոքաղաքական իրավիճակի փոփոխության այն մեծ շարժընթացի, որի սկիզբը դրել էր դեռևս Թիգլաթպալասար III-ը (մ. թ. ա. 745–727 թթ.): Սինախիսերիբի կառավարման ժամանակաշրջանում ասսուրական ռազմական մեքենան գործում էր առավել ակտիվ, իսկ նրա ներքին քաղաքականությունն ուղղված էր հակասորեստանյան խմբավորումների ոչնչացմանը, կայսերական իշխանության ամրապնդմանը և միաժամանակ քրմության ու ազնվականության իշխանության թուլացմանը: Նրա այս քաղաքականության հետևանքները երկար սպասեցնել չտվեցին. գոհ գնաց պալատական հեղաշրջմանը: Հեղինակը մանրամասն քննարկում է նաև Ասորեստանի փոխհարաբերություններն Ուրարտուի և արևելափոքրասիական երկրների հետ մ. թ. ա. VII դարի առաջին քառորդում:

Մենագրության երրորդ գլուխը վերնագրված է «Մերձավոր Արևելքը Ասորեստանի գերիշխանության ժամանակաշրջանում (մ. թ. ա. 681–627 թթ.)» և կազմված է յոթ ենթաբաժիններից: Ռ. Յականյանը ցույց է տալիս, որ Ասարխատրոնի օրոք (մ. թ. ա. 681–669 թթ.) տերությունը կանգնած էր ներքին ու արտաքին բազմաթիվ մարտահրավերների առջև, և Ասորեստանի նոր արքան ներքաղաքական կյանքում փորձեց հաշվի նստել «բաբելոնամետ» ու «ասսուրասեր» խմբավորումների հետ: Հեղինակը սկզբնաղբյուրների մանրակրկիտ քննությամբ վեր է հանում ասսուրամարական և ասսուրամանայական փոխհարաբերությունների պատմությունը՝ կատարելով ուշագրավ եզրակացություններ: Ինչ վերաբերում է ասսուրաուրարտական հարաբերություններին, ցույց է տրվում, որ այս ոլորտում շարունակվում էր պահպանվել status quo-ն: Նա եզրակացնում է, որ մ. թ. ա. 670-ական թվականների երկրորդ կեսին ինչպես ուրարտական արշավանքը դեպի անդրեփրատյան տարածաշրջաններ, այնպես էլ ասորեստանյան արշավանքը դեպի Շուբրիա իրականում ուներ մեկ միտում՝ կանխել «Տուն Թորգոմայ» պետության հավանական ներխուժումը արևմուտքից դեպի տերության խորքերը: Առանձին ենթադրում ներկայացվում է Եգիպտոսի գրավումը մ. թ. ա. 671 թ. և վերածումն ասորեստանյան մարզի: Ռ. Յականյանը համակողմանի քննությամբ



ներկայացնում է իրավիճակը Մերձավոր Արևելքում Աշշուրբանասպալի օրոք (մ. թ. ա. 669–627 թթ.): Վերջինիս կառավարման առաջին շրջանում Ասորեստանը հասել էր իր ռազմաքաղաքական հզորության և տարածքային ընդարձակման առավելագույն աստիճանին, իսկ կառավարման երկրորդ շրջանում Աշշուրբանասպալն ականատես եղավ հզորագույն տերության քայքայմանը. ծայրամասերն անկախություն ձեռքբերեցին, իսկ ավելի ուշ Ասորեստանը կործանվեց և բաժին հասավ Բաբելոնիային:

Հեղինակը երրորդ գլխում անդրադարձ է կատարել նաև Աշշուրբանասպալի կառավարման ժամանակահատվածում ասսուրաուրարտական հարաբերությունների կարգավիճակին և եզրակացրել, որ տվյալ ժամանակաշրջանում Ուրարտուն, ակնհայտորեն հայտնվելով քաղաքական գերմանր պայմաններում, փրկության ելքը տեսել է Ասորեստանի հովանավորության ու աջակցության մեջ և դրա ակնկալությամբ (մ. թ. ա. 653/652 թթ. և մ. թ. ա. 643/642 թթ.) Ասորեստանին հավաստել է իր հպատակությունն ու հավատարմությունը: Պատմաբանը նոր լույսով է քննում նաև Առաջավոր Ասիայում հայտնված կիմմերների և սկյութների քաղաքական պատմության որոշ կարևոր հարցեր:

Մենագրության չորրորդ գլուխը վերնագրված է “Էթնոքաղաքական քարտեզի վերաձևումը Մերձավոր Արևելքում մ. թ. ա. VII դարի վերջին քառորդում և մ. թ. ա. VI դարի առաջին կեսին” և կազմված յոթ ենթաբաժիններից: Ռ. Ցականյանը ցույց է տալիս, որ Աշշուրբանասպալի մահից հետո Ասորեստանը հայտնվում է քաղաքական քառսի մեջ, երկրում մոլեգնում է քաղաքացիական պատերազմը: Այս խառնակ վիճակից օգտվում է Բիթ-Ցակինի կառավարիչ Նաբոպալասարը, որը կարճ ժամանակ անց հռչակվում է Բաբելոնի թագավոր (մ. թ. ա. 625–605 թթ.) և տիրանում Ասորեստանի ժառանգության մեծ մասին՝ հիմք դնելով Նորբաբելոնական կամ Քաղդեական հարստությանը (մ. թ. ա. 625–539 թթ.):

Մերձավոր Արևելքում տեղի ունեցող իրադարձությունների համատեքստում Ռ. Ցականյանն անդրադառնում է նաև բաբելոնական գորքերի արշավանքներին դեպի Հայկական լեռնաշխարհի հարավային տարածքներ՝ կատարելով պատմաաշխարհագրական տեղադրություններ և նույնացումներ: Նա իրավացիորեն կարծում է, որ Հայկական լեռնաշխարհում Ուրարտուին փոխարինած նոր Հայկական թագավորության (“Հայկագունի-Երվանդյան”) տարածքի սեպագիր աղբյուրներում “Ուրարտու” կոչելն ունի ավանդական և աշխարհագրական հենք: Հեղինակն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ պետք է ընդունել Ուրարտուի “տրոհման” տեսությունը՝ Բ. ա. VII դ. երրորդ քառորդում: Ընդ որում՝ այն գրավեց և իրեն ենթարկեց ոչ թե Մարաստանը, այլ՝ հայկական “Տուն Թորգոմայ” պետությունը: Պատմաբանը բազմակողմանիորեն քննարկում է քաղաքական իրադրությունը Հայկական լեռնաշխարհում մ. թ. ա. VIII–VI դարի

երկրորդ կեսին՝ նորովի մոտեցում ցուցաբերելով խնդրո առարկա ժամանակաշրջանի հայոց հնագույն պատմության վիճահարույց հարցերի, հատկապես, այսպես կոչված, “Տուն Թորգոմայ”-ի վերաբերյալ: Ի վերջո, Դարեհ Ա-ի վարչական վերափոխումներից հետո Հայկազունիների Հայոց թագավորությունը ներառվեց Աքեմենյան տերության XIII սատրապության մեջ:

Այսպիսով, խնդրո առարկա մենագրության վերաբերյալ այս խիստ հակիրճ բովանդակային-ընդհանրական անդրադարձը թույլ է տալիս աշխատությունը համարել հաջողված ոչ միայն աղբյուրագիտական նյութի աննախադեպ օգտագործման ծավալի ու խորության, այլև մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեցող բազմաթիվ բացերը լրացնելու տեսանկյուններից: Անկասկած, անչափ կարևոր է ներկա ժամանակներում հնագույն և հին պատմության ուսումնասիրությունը, հատկապես, էթե նկատի ենք ունենում երիտասարդ հետազոտողների առավել մեծ ձգտումը նոր ու նորագույն պատմության հանդեպ:

Որպես մասնակի դիտարկում՝ նկատենք՝ Ռ. Յականյանը պատմաաշխարհագրական բնույթի վիճահարույց խնդիրներն էլ առավել խորությամբ քննի, քանի որ այս կամ այն աշխարհագրական տեղադրությունը կամ նույնացումը շատ հաճախ փոխում է մեր ավանդական պատկերացումները սովյալ տարածաշրջանի պատմության վերաբերյալ: Բերեմ մեկ օրինակ. նա ընդունում է Հ. Մանանդյանի և Ա. Իվանչիկի տեսակետը ներկայիս Ջավախքի տարածքում Գուրիանիա երկրի տեղադրության մասին (էջ 138)՝ չքննելով այլ կարծիքներ, այն դեպքում, երբ Գուրիանիա-Գուրիա երկրի տեղադրությունը մասնագիտական գրականության մեջ ունի նաև ավելի փաստարկված հիմնավորումներ. այն տեղադրվել է ներկայիս Արթիկ քաղաքի շրջանում, Սևանա լճի հարավային վերջավորությունից դեպի արևելք կամ Սյունիքի արևելյան մասում: Նշենք նաև, որ Ստրաբոնի հիշատակած գուրանացիներ անունով ժողովուրդը գտնվել է Հայաստանի սահմաններից դուրս և կապված չէ Գուրիանիա երկրի հետ<sup>1</sup>:

Ամփոփենք. հայրենի գիտական հանրության սեղանին դրվել է մի ուշագրավ աշխատություն, որն իր նշանակությամբ ունի արևելագիտական լայն ընդգրկում և բազմաբնույթ հարցերի արծարծման ծավալով կարող է ուղենիշ լինել նմանատիպ ուսումնասիրությունների համար: Հետևաբար, շահեկան և հասու կլինեք, էթե Ռ. Յականյանի ուսումնասիրությունը թարգմանվեր անգլերեն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՐԻԿՅԱՆ

<sup>1</sup> Հ. Խորիկյան. Աքեմենյան Պարսկաստանի մարական սատրապության տարածքը և սահմանները. – Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXX, Երևան, 2016, էջ 83–84, 87:

ՊՈՂՈՍ ՄԿՐՏՉԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ – 90\*

Լրացավ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ գրողների միության անդամ Պողոս Մկրտչի Խաչատրյանի ծննդյան 90-ամյակը:



Հայագետը ծնվել է 1929 թ. հունվարի 21-ին Ախալցխայի շրջանի Ծղալթբիլա գյուղում: Նրանց ընտանիքը ինչպես ծննդավայրում, այնպես էլ շրջակա գյուղերում հատուկ համարում է ունեցել և անկեղծ հարգանք վայելել իբրև քահանայական ընտանիք. քահանա է եղել պապի հայրը՝ Տեր Պողոսը: Ինքնակենսագրականի մեջ ծննդավայրի մասին Պ. Խաչատրյանը գրել է. «Ես ընկալեցի երկնքի կապույտի խորությունն ու խորհրդավորությունը: Գիշերը աստղերի ճաճանչը բերկրանքով էր լցնում իմ հոգին: Ամենամեծ տպավորություններս մեծ գյուղաշխարհի բնությունից են: Հիմա էլ, տասնամյակներ անց, երբ մտորումներիս եմ հանձնվում, հեռվից հեռու հոգիս շոյվում-մխիթարվում է մեր այգիների, անտառների, մեր մով երկնքի պատկերներով ու թռչունների դայլայլով: Ես կիսատ մարդ կլինեի, եթե գյուղում չծնվեի»:

Պ. Խաչատրյանն ունեցել է իր սերնդին հատուկ դառը մանկություն. Մեծ հայրենականի ժամանակ զոհվել է հայրը: 1947–1951 թթ. սովորել է Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետում: 1951–1960 թթ. հայրենի գյուղում աշխատել է հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Այդ տարիների մասին գրել է. «Մեր ընտանիքի վիճակն այնպիսին էր, որ ես ստիպված այդ տարիներին պետք է աշխատեի, քանի որ մյուս եղբայրներիս բարձրագույն կրթություն ստանալու հարցը կար: Նաև մեր տունը փուլ էր գալիս վրաներս: Անհրաժեշտ էր քանդել և նորը շինել: Այդպես տարիներ անցան, ամբողջ ինը տարուց ավելի: Գիտության ուղին ընտրելու իմ ներքին մղումը շարունակ ինձ դրդում էր նորից բռնելու Երևանի ճանապարհը»:

1960 թ. ընդունվել է ՀԽՍՀ գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան՝ հայ հին գրակա-

\* Ընդունվել է տպագրության 19. II. 2019 թ.:

նություն մասնագիտությամբ: Թեկնածուական ատենախոսության թեման եղել է “Հայ միջնադարյան պատմական ողբերը”, որն առանձին գրքով լույս է տեսել 1969 թ.: Գիտական ղեկավարն է եղել մեծանուն պատմաբան-բանասեր, ակադեմիկոս Լևոն Խաչիկյանը:

Պ. Խաչատրյանը հայ միջնադարագիտության մեջ բերում է տեսական նորույթ՝ ցույց տալով, որ միջնադարյան ժանրերի որոշման հարցում գրական հատկանիշների հետ միաժամանակ կարևոր են նաև արտագրական հատկանիշները. “Բանն այն է, որ միջնադարի հայ (և ոչ միայն հայ) գրողի համար, գրական հատկանիշների կողքին և, թերևս, դրանից ավելի, կարևոր են եղել երկի ոչ գրական կողմերը: Այս կամ այն ստեղծագործությունը ժանրային անվանում է ստացել համաձայն իր կիրառության, ըստ այն նպատակի, որի համար նախատեսվել է, և այն ժողովածուի, ուր մուտք է գործել, ըստ այն պահանջի, թե որտե՞ղ, ե՞րբ, ու՞մ կողմից, ինչպե՞ս է կատարվելու (որոշակի եղանակով երգվելո՞ւ, “ի ձայն” ասվելո՞ւ, թե՞ “ի թիւ” արտասանվելու, ցածրաձայն, թե՞ բարձրաձայն ընթերցումով և այլն), և, որ ամենակարևորն է, երկի թեմայով կամ առարկայով: Երբ հայ հին գրականության այս կամ այն երկը ներկայացվում է ժամանակակից ժանրային որևէ անվան տակ, որ իբրև այդպիսին անցյալում չի գիտակցվել, դրանով իսկ միջնադարի հայ հեղինակը հանիրավի դրվում է ոչ պատշաճ վիճակի մեջ. ստացվում է, որ, ասենք, նա գրել է պոեմ՝ առանց իմանալու, թե ինչ ժանրի գործ է հորինել”<sup>1</sup>:

Պ. Խաչատրյանի կարծիքով, ողբի ժանրի ենթատեսակներն են՝ պատմական, դամբանական և տարերային աղետներին նվիրված, իսկ մյուս տեսակները՝ անձնական-քնարականն ու վկայաբանականը, այլ ժանրի գործեր են, սակայն ունեն ողբական տրամադրություն: Ինչպես կաֆան կարող է միահյուսվել արձակին, այնպես էլ ողբը կարող է ներթափանցել պատմական արձակի մեջ: Ի տարբերություն հայրենի, կաֆայի, գանձի և այլ գրական տեսակների, որոնց համար գրական հատկանիշները կարևոր են, ողբի համար չկան գրական հստակ հատկանիշներ, դրա ժանրի հիմնական տարբերակիչը ողբական տրամադրությունն է, որն արտագրական հատկանիշ է:

Կյանքի մեկուկես տասնամյակը Պ. Խաչատրյանն Արշալույս Ղազինյանի հետ նվիրել է Գրիգոր Նարեկացու “Մատենան ողբերգութեան” երկի գիտաքննական բնագիրը պատրաստելու գործին: Այդ գիրքն անցյալ դարի

<sup>1</sup> Պ. Խաչատրյան. Հայ միջնադարյան պատմական ողբեր, Երևան, 1969, էջ 19:

հայագիտության ամենանշանավոր աշխատանքներից մեկն է (ավելի քան 1100 էջ), որ լույս է տեսել 1985 թ., ինչի համար աշխատասիրողներն արժանացել են Հայկական ակադեմիայի Մաշտոցի անվան մրցանակին:

Հիշյալ քննական բնագիրն այսօր էլ չի կորցրել իր արդիականությունը, և «Մատենագիրք Հայոց»-ի ԺԲ հատորում՝ Նարեկացու ստեղծագործությունների գիտաքննական բնագրերը հրապարակելիս, զետեղվել է հենց դա<sup>2</sup>:

Այդուհետև Պ. Խաչատրյանի անունը կապվում է նարեկացիագիտության հետ: Նա տպագրել է Նարեկացուն նվիրված բազմաթիվ հոդվածներ, ինչպես՝ «Գրիգոր Նարեկացու կյանքի հետքերով» («Բանբեր Երևանի համալսարանի», 1985, թիվ 3, էջ 102–115), «Մատյանի» գիտական հրատարակությունը («Գրքերի աշխարհ», 21. VII. 1985), «Գրիգոր Նարեկացին հայ միջնադարի գնահատմամբ. Հայ միջնադարյան գրականության միջազգային գիտաժողով, Երևան, 15–19 սեպտեմբերի, 1986» (Զեկուցումների դրույթներ, Երևան, 1986, էջ 58–59), «Գրիգոր Նարեկացու միջնադարյան վարքի խմբագրությունները» [«Հանդես ամսօրեայ», 1987, ՃԱ (1–12), էջ 505–512], «Գրիգոր Նարեկացուն վերագրուած մի երկի հեղինակային պատկանելութեան մասին» («Բազմավէպ», 1994, ԾԾԲ, էջ 437–449), «Մատենանոցերգութեան» երկի նորահայտ համարաբարը» («Էջմիածին», 1996, թիվ Ա, էջ 50–77), «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» («Գրքերի աշխարհ», 1996, թիվ 2, էջ 2), «Նարեկացու կյանքի հետքերով. Գրիգոր Նարեկացու «Մատենանոցերգութեան» պոեմի 1000-ամյակը» («Նոր Դար», 2003, թիվ 1, էջ 54–79), «Գրիգոր Նարեկացի. Թոռուցիկ ակնարկ» («Գրական թերթ», 7. II. 2003, էջ 10–11), «Նարեկացին ծածկագրությունների և գաղտնասացությունների կապանքներում» («Գրական թերթ», 6. VI. 2003, էջ 6–7, 13. VI. 2003, էջ 6–7):

Միջնադարագետ-նարեկացիագետը հրատարակել է ևս երկու գիրք՝ նվիրված Գրիգոր Նարեկացուն. «Նարեկի միջնադարյան լուծմունքը» (1990 թ.) և «Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը» (1996 թ.):

Պ. Խաչատրյանը կատարել է նաև գրաբարից աշխարհաբար փոխադրություններ՝ արևելահայերենի վերածելով հնդկահայ հայրենասեր Շահամիրյանների «Նոր տեսրակ» և «Որոգայթ փառաց» գրքերը (առաջինը տպագրվել է 1991 թ., իսկ երկրորդը, որը թարգմանել է ՀՀ Սահմանադրական դատարանի պատվերով, լույս է տեսել 2002 թ.):

Վազգեն Ա. Վեհափառի ցանկությամբ գրաբարից արևելահայերեն է փոխադրել Աստվածաշնչի «Երեմիայի մարգարեությունը», «Եսայու մարգա-

<sup>2</sup> Տե՛ս Մատենագիրք Հայոց, հ. ԺԲ, Ժ դար, Երևան, 2011, էջ 49–608:

րեությունը”, “Երեմիայի ողբը” և “Բարուքի թուղթը”, որոնք տեղ են գտել Սուրբ Գրքի արևելահայերեն թարգմանության մեջ:

Պ. Խաչատրյանը 1992 թ. լույս է ընծայել “Մովսես Խորենացի, ասույթներ, խոհեր, բնութագրումներ” գրքույկը: Նույն թվականին Վենետիկում տպագրված Կյուրեղ վարդապետ Քիպարյանի “Պատմութիւն հայ հին գրականութեան” գրքի բանասիրական հարուստ մատենագիտությունը կազմել է Պ. Խաչատրյանը:

2000 թ. հրատարակվել է “Գանձարան հայ հին բանաստեղծության” հատորը (992 էջ)՝ բնագրերի հարուստ ընտրությամբ, առաջաբանով, կենսագրականներով, ծանոթագրություններով և բառարանով:

Պ. Խաչատրյանն ավելի վաղ կազմել և պատրաստել է նաև դպրոցի 6-րդ դասարանի “Գրականություն” դասագիրքը (հեղինակակիցներ՝ Ա. Շարոյան և Ռ. Դալլաքյան. ունեցել է ավելի քան 15 հրատարակություն) և “9-րդ դասարանի քրեստոմատիա” ձեռնարկը (տպագրվել է 2 անգամ): Պ. Խաչատրյանը 1964–1982 թթ. աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, նախ՝ կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող, 1983–1995 թթ. դասախոսել է Երևանի պետական համալսարանում, նախ՝ դոցենտի և ապա (1992 թ.) պրոֆեսորի պաշտոնով: 1995 թ. աշխատել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրանոցում և Մ. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում՝ դասախոսելով երկու առարկա՝ “Հայ հին գրականության պատմություն” և “Հայ եկեղեցական մատենագրություն”: 2003 թ. Հակոբ Քյոսեյանի համահեղինակությամբ Էջմիածնում տպագրել է “Ընտրանի հայ եկեղեցական մատենագրության” սովորածավալ գիրքը, որն ուսումնական ձեռնարկ է Գևորգյան հոգևոր ճեմարանի և Վազգենյան հոգևոր դպրանոցի ուսանողների համար: 2000 թ. Պ. Խաչատրյանը համատեղությամբ աշխատել է Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ միջնադարյան գրականության պատմության և բնագրերի պատրաստման խմբում՝ որպես առաջատար գիտաշխատող:

Այդպես լուռ, առանց ինքն իրեն արժևորելու էլ ամբողջ կյանքում ջանասիրաբար աշխատել է, չի ձգտել երկրային սին փառքի, այլ ողջ էությամբ նվիրվել է հայագիտությանը, ամբարել հարուստ գիտելիքներ, ստեղծել գիտական պատկանելի ժառանգություն: Նրա գիտական ժառանգությունն արժանի է դառնալու առանձին ուսումնասիրության առարկա:

Թեև 2003 թ. դադարել է նրա երկրային կյանքը, սակայն այսօր էլ ազնիվ հոգու տեր այդ մարդն իր բարի ներկայությամբ մշտապես մեր կողքին է ոչ միայն իր մարդկային բարձր կերպարով, այլև՝ հայագիտական հարուստ ժառանգությամբ:

Ավելին՝ մահից հետո նրա ժառանգները ձեռնարկեցին «Հայ հին գրականության մատենագիտություն» սովորաժամալ աշխատության տպագրության գործը («Տիգրան Մեծ» հրատարակչություն, Երևան, 2016), որը լրացրել և խմբագրել է ձեռագրագետ Արշակ Բանույանը: Գրքի առաջաբանում Լևոն Տեր-Պետրոսյանը գրել է. «Չեմ կարող նաեւ գոհունակութիւնս թաքցնել ինձ ընձեռուած բարեբախտութեան առթիւ, որ հանգամանքների բերմամբ թեկուզ կողմնակի մասնակցութիւն եմ ունեցել իմ յարգարժան ուսուցիչներից մեկի՝ Պողոս Խաչատրեանի այս հրաշալի աշխատութեան մտահղացման եւ հրատարակութեան գործին: Մանուկ Աբեղեանի անուան գրականության ինստիտուտում եւ Մաշտոցեան Մատենադարանի ընթերցասրահներում Խաչատրեանի հետ կողք կողքի աշխատելու երկար տարիների ընթացքում յաճախ եմ օգտուել նրա խորհուրդներից ու շատ բան սովորել նրանից»<sup>3</sup>:

Պ. Խաչատրյանի «Հայ հին գրականության մատենագիտություն»-ն ունի աղբյուրագիտական, բնագրագիտական, բանասիրական չափազանց մեծ արժեք և հայ հին գրականության մատենագիտության ամբողջական հանրագիտարան է՝ այսուհետ մշտապես բացված հայագետների աշխատասեղանին, որը մեծապես կնպաստի հայագիտության զարգացմանը: Այս գրքի մասին գրախոսության մեջ ակադեմիկոս Սերգեյ Մարինյանն իրավացիորեն գրում է. «Պողոս Խաչատրյանը միանգամայն պատվավոր տեղ ունի հայ բանագիտության դասականների շարքում»<sup>4</sup>:

Գրիգոր Նարեկացու կյանքն ու գործն ուսումնասիրող գիտության անխոնջ մշակը՝ Պ. Խաչատրյանը, ով իրապես աստվածային մարդ էր և նվիրյալ հայագետ, արժանիորեն կներկայանա գալիք դարերին. նրա անունը կմնա մեծ նարեկացիագետների՝ Հակոբ Նայանի և Գաբրիել Ավետիքյանի անունների կողքին:

ՎԱՆՈ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

<sup>3</sup> Պ. Խաչատրեան. Հայ հին գրականության մատենագիտություն, Երևան, 2016, էջ VIII:

<sup>4</sup> «Պատմաբանասիրական հանդես», 2016, № 3, էջ 219:

ԿԱՐԵՆ ՀԱՄԼԵՏԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ  
(Օննդյան 50-ամյակի առթիվ)\*

*Լրացավ ճանաչված պատմաբան, գիտության ու կրթության փորձառու կազմակերպիչ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Կարեն Համլետի Խաչատրյանի ծննդյան 50-ամյա և գիտական գործունեության 25-ամյա հոբելյանները:*



*Կ. Խաչատրյանը ծնվել է 1969 թ. մայիսի 25-ին, Երևանում: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո՝ 1986 թ., միութենական նպատակային մրցույթով ընդունվել է Բելառուսական պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:*

*1987–1989 թթ. Կ. Խաչատրյանը ծառայել է Խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո՝ 1989 թ., ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն ավարտել է 1993 թ.:*

*1994 թ. Կ. Խաչատրյանի գործունեությունը սերտորեն կապված է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հետ, որտեղ նա ձևակերպվել է հայցորդ, իսկ 1995 թ. փետրվարի 1-ից հրամանագրվել աշխատանքի որպես ավագ լաբորանտ: 1998 թ. Կ. Խաչատրյանը պաշտպանել է թեկնածուական («ՀՄԽՀ և ՌՍՖՍՀ փոխհարաբերությունները 1920–1922 թթ.», գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրանտ Ավետիսյան), 2015 թ.՝ դոկտորական ատենախոսություն [«Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.)»], 2006 թ. ստացել է դոցենտի, 2017 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: 1999–2008 թթ. նա զբաղեցրել է ինստիտուտի գիտական քարտուղարի պաշտոնը, 2008 թ. ինստիտուտի գիտական հարցերի գծով փոխտնօրենն է, առաջատար գիտաշխատող: 2016 թ. համատեղությամբ վարում է նաև ինստիտուտի նորաստեղծ Ընդհանուր պատմության բաժնի վարիչի պաշտոնը: Կ. Խաչատրյանը երկար տարիներ Պատմության ինստիտուտի գիտական, ինչպես նաև ինստիտուտում գործող ՀՀ ԲՈԿ-ի 004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհուրդների անդամ է (2003–2005 և 2009–2011 թթ. եղել է խորհրդի գիտական քարտուղար):*

\* Ընդունվել է տպագրության 13. III. 2019 թ.:



Կ. Խաչատրյանը գիտակազմակերպչական գործունեությունն արդյունավետ զուգակցում է գիտամանկավարժական աշխատանքի հետ. 2003–2009 թթ. վարել է Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի Միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկանի պաշտոնը, իսկ 2009 թ. մինչև օրս ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայի Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչն է: 2014 թ. Կ. Խաչատրյանը դասավանդում է նաև Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Նրա գիտական դեկավարությամբ կատարվել են բազմաթիվ ավարտական և մագիստրոսական աշխատանքներ, երկու ասպիրանտ (Համո Սուքիասյան, Գագիկ Ժամհարյան) հաջողությամբ պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Կ. Խաչատրյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հայաստանի նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները՝ Հայկական հարց և Հայոց ցեղասպանություն, հայ-ռուսական հարաբերություններ, Հայաստանի առաջին, երկրորդ (խորհրդային) հանրապետությունների, ԼՂԻՄ-ի պատմություն և այլն: Նա հեղինակ է չորս մենագրության, 50-ից ավելի գիտական հոդվածների, որոնք հրատարակվել են ինչպես Հայաստանի Հանրապետության առաջատար հայագիտական ամսագրերում («Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր հասարակական գիտությունների», «ՎԷՄ», «Բանբեր Հայաստանի արխիվների» և այլն), այնպես էլ արտասահմանյան հեղինակավոր պարբերականներում («Новая и новейшая история», «Историческое пространство. Проблемы истории стран СНГ» և այլն):

Ճանաչված պատմաբանի անդրանիկ մենագրությունը նվիրված է 1985–1991 թթ. ԽՍՀՄ մինիստրների խորհրդի նախագահ, Հայաստանի ազգային հերոս Նիկոլայ Ռիժկովի գործունեությանը («Великий друг армянского народа – Н. И. Рыжков». Ереван, 2004): Աշխատությունում վեր է հանված Ն. Ռիժկովի ունեցած ծանրակշիռ ներդրումը 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքների վերացման գործում:

Կ. Խաչատրյանի «Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ.» մենագրությունը (Երևան, 2007) թեկնածուական ատենախոսության վերամշակված և լրացված տարբերակն է: Այստեղ արխիվային բազմաբնույթ փաստաթղթերի, մամուլի հրապարակումների, թեմային առնչվող պատմագիտական գրականության լայն հենքի վրա խորությամբ ուսումնասիրվել ու նորովի լուսաբանվել են Հայաստանի խորհրդայնացման, Խորհրդային Հայաստանի ու Ռուսաստանի ռազմաքաղաքական, սոցիալ-տնտեսական հարաբերությունների պատմության բազմաթիվ հիմնախնդիրներ: Դրանք ներկայացվում են տարածաշրջանի, Հայաստանի և Ռուսաստանի 1920–1922 թթ. պատմության համապատկերի վրա:

Նա հեղինակ է նաև «Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920–1930-ական թվականներին» (Երևան, 2015) ուսումնասիրության (համահեղինակներ՝ Համո Սուքիասյան, Գեղամ Բադալյան), որտեղ փաստական հարուստ հիմքի վրա ամբողջական լուսաբանված է 1920–1930-ական թվականներին Խորհրդային Հայաստանի և

ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները: Աշխատանքը պատկերացում է տալիս Հայաստանի ներկա սահմանների ձևավորման ընթացքի մասին: Նշյալ հետազոտությունը կատարվել է ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ:

Կ. Խաչատրյանի երկարատև գիտական աշխատանքի արդյունք է «Հայաստանը ԽՍՀՄ-նազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.)» (Երևան, 2015) արժեքավոր մենագրությունը: Նրանում հեղինակը հայ պատմագիտության մեջ առաջին անգամ ԽՍՀՄ նազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) ստեղծման ու փուլային զարգացման պատմության ընդհանուր համատեքստում բացահայտում է Խորհրդային Հայաստանի արդյունաբերության և գիտության բացառիկ ներդրումը ԽՍՀՄ ՌԱՀ-ում խորհրդային գրեթե ամբողջ ժամանակաշրջանում:

Գիտնականը կազմել և հրատարակել է փաստաթղթերի ու նյութերի երեք ժողովածու: «Из истории армяно-украинских, венгерских и молдавских отношений» հոդվածների և փաստաթղթերի ժողովածուում (համակազմող՝ Հովհաննես Ալեքսանյան) (Երևան, 2012) հրատարակված նյութերը լույս են սփռում այդ կապերի ձևավորման ու զարգացման պատմության վրա: Նրա առաջաբանով հրատարակված փաստաթղթերի հաջորդ ժողովածուները նվիրված են արցախյան հիմնախնդրին (համակազմող՝ Հրանտ Աբրահամյան): «Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1923–1988)» (Երևան, 2011) և «Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար (1988–1989)» (Երևան, 2014) փաստաթղթերի և նյութերի ժողովածուներում տպագրված վավերագրերում հիմնավորում է, որ խորհրդային ժամանակաշրջանում համայն հայությունը՝ թե՛ Խորհրդային Հայաստանում և ԼՂԻՄ-ում, և թե՛ Միյոնոքում, պայքարել է Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Հայաստանին միավորելու համար:

2018 թ. Պատմության ինստիտուտի 75-ամյա հորեյանի առթիվ Կ. Խաչատրյանի խմբագրությամբ լույս տեսավ «Պատմության ինստիտուտ – 75» արժեքավոր գիրքը (կազմողներ՝ Կ. Խաչատրյան, Հակոբ Մուրադյան, Հ. Սուքիասյան), որտեղ ի մի է բերված ինստիտուտի գիտական, գիտակազմակերպչական և գիտակրթական գործունեությունը: Ներկայացված է ինստիտուտի անցած ուղին, բաժինների կատարած աշխատանքները և այլն:

Պատմաբանը գործուն մասնակցություն է ունեցել ինստիտուտի կողմից հրատարակվող «Հայոց պատմության» ակադեմիական նոր բազմահատորյակի չորրորդ հատորի (1918–1991 թթ.) երկու գրքերի պատրաստմանը, հատորի պատասխանատու խմբագրի տեղակալն է, մասնակցել է «Հայոց պատմության» դպրոցական դասագրքերի ստեղծմանը: Նրա ուշադրության կենտրոնում է եղել նաև ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» տարեգիրքը, որի խմբագրական խորհրդի նախագահի տեղակալն է:

Կ. Խաչատրյանը կարևոր ներդրում ունի Հայաստանի Հանրապետությունում առօրեականության պատմության թեմայով հետազոտությունների սկզբնավորման հարցում:

Այս թեմատիկայով նրա դեկավարած դրամաշնորհային թեմաների (կատարողներ՝ Գ. Ժամհարյան, Հ. Սուքիասյան, Գայանե Ղազարյան) կատարման ընթացքում պատմագիտական ավանդական և ժամանակակից մոտեցումների ու մեթոդների զուգորդմամբ կատարված հետազոտությունների արդյունքում միանգամայն այլ՝ հասարակ անհատի տեսանկյունից ուսումնասիրվել և ուսումնասիրվում են Խորհրդային Հայաստանի 1920–1930-ական ու 1940–1960-ական թվականների պատմության ներկայումս վերջնական արժևորում չստացած, երբեմն էլ միայն զգացական, միակողմանի գնահատականների արժանացող բազմաթիվ իրողություններ:

Կ. Խաչատրյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական ու միջազգային (Ռուսաստան, Բելառուս, Վրաստան, Ուկրաինա, Մոլդովա, Ղրղզստան, Իրան, Եգիպտոս, Լիբանան և այլն) տասնյակ գիտաժողովներում և գիտագործնական սեմինարներում, Սփյուռքի հայկական համայնքներում:

Պրոֆ. Խաչատրյանը հետխորհրդային տարածքում ճանաչված և հեղինակություն վայելող պատմաբան է: Նա դեկավարել է Պատմության ինստիտուտի պատվիրակությունը և տարիներ շարունակ հանդես եկել դասախոսություններով ԱՊՀ պատմության ինստիտուտների միջազգային ասոցիացիայի ներքո կազմակերպվող երիտասարդ պատմաբանների ամառային դպրոցներում:

Գիտամանկավարժականից գատն՝ Կ. Խաչատրյանն իրականացրել և իրականացնում է նաև հանրային-հասարակական գործունեություն: Իբրև պատմաբան-խմբագիր մասնակցել է Հայաստանի հանրային հեռուստարձևերության “Ինչու է աղմկում անցյալը” խորագրով շուրջ 40 պատմավավերագրական արժեքավոր ֆիլմերի ստեղծմանը (հեղինակ՝ Մանուկ Մուրադյան): Հայաստանի գիտության ու մշակույթի ճանաչված ներկայացուցիչների հետ “Պատմության և մշակույթի էջեր” ծրագրի շրջանակներում դասախոսություններով հանդես է եկել ՀՀ պաշտպանության նախարարության (ՊՆ) և Արցախի Հանրապետության (ԱՀ) պաշտպանության բանակի տարբեր զորամասերում, որի համար արժանացել է ՀՀ ՊՆ պատվոգրի, իսկ 2018 թ. ԱՀ նախագահ Բ. Սահակյանի հրամանագրով պարգևատրվել է “Երախտագիտության” մեդալով: Կ. Խաչատրյանը պարգևատրվել է նաև ՀՀ ԳԱԱ գովեստագրով, Պատմության ինստիտուտի վաստակագրով, Սփյուռքի նախարարության պատվոգրով և այլն:

Շնորհավորելով մեր գործընկերոջը՝ մաղթում ենք նրան նորանոր ձեռքբերումներ գիտական և գիտակրթական ասպարեզներում, նոր ուսումնասիրություններ, որոնք, վստահաբար, կհամալրեն հայկական պատմագիտության արժեքավոր հրատարակությունների շարքը:

ԱՇՈՏ ՄԵԼՔՈՆՅԱՆ,  
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՈՐԵԼՅԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ  
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 75-ԱՄՅԱԿԻՆ\*

Անցյալի պատմությունը մի լուսատու լապտեր է,  
որ ամեն մի ժողովուրդ ձեռքին պետք է ունենա  
իր ճամփեն անմոլոր գնալու համար:  
Հովհ. Թումանյան

Բանալի բառեր՝ Գիտությունների ակադեմիա, Պատմության ինստիտուտ, հայագիտություն, գործունեություն, հորեյան, գիտնական, շնորհավորանք, գիրք, շնորհանդես:

*Հայրենական մեծ պատերազմի բախտորոշ ժամանակաշրջանում՝ 1943 թ. նոյեմբերի 10-ին, ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի (Արմֆան) հիման վրա ստեղծվեց ՀԽՍՀ գիտությունների ակադեմիան, իսկ նրա կազմում սակավաթիվ ինստիտուտների շարքում հիմնվեց նաև Պատմության ինստիտուտը:*

*Ինստիտուտի տնօրեններ են եղել միջազգային ճանաչում, ծանրակշիռ վաստակ, ինչպես նաև գիտակազմակերպչական կարողություններ ունեցող անվանի մտավորականներ, որոնց հմուտ ղեկավարության շնորհիվ Պատմության ինստիտուտը ոչ միայն կայացել է որպես հիմնարար հայագիտական հիմնարկ՝ համալրվելով կարող ու գիտակ մասնագետներով, այլև ծնունդ է տվել ակադեմիական նոր հիմնարկների, որոնք մինչ այդ նույն ինստիտուտի կազմում սեկտորի կարգավիճակում էին (Փիլիսոփայության և արվեստի պատմության՝ 1947 թ., Արևելագիտության՝ 1957 թ., Հնագիտության և ազգագրության՝ 1959 թ.): Պատմության ինստիտուտը նաև եղել ու մնում է հանրապետության ԲՈՒՀ-երի և գիտահետազոտական հիմնարկների համար պատմաբան-մասնագետ պատրաստող յուրօրինակ դարբնոց:*

*Պատմության ինստիտուտի տնօրեններ են եղել՝ Հովսեփ Օրբելին (1943–1947 թթ.), Աբգար Հովհաննիսյանը (1947–1953 թթ.), Սուրեն Երեմյանը (1953–1959 թթ.), Արամայիս Հարությունյանը (Արմո Հարենց) (1959–1963 թթ.), Գալուստ Գալոյանը (1963–1979 թթ.), Հրանտ Ավետիսյանը (1979–2002 թթ.): 2002 թ. ինստիտուտի տնօրենն է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ. գ. դ., պրոֆեսոր Աշոտ Մելքոնյանը:*

*2018 թ. դեկտեմբերի 26–27-ին տեղի ունեցան ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 75-ամյակին նվիրված հորեյանական միջոցառումներ:*

*Դեկտեմբերի 27-ին Պատմության ինստիտուտի դահլիճում տեղի ունեցած հանդիսավոր նիստին մասնակցում էին Հայաստանի գիտակրթական, պատմամշակու-*

թային, պետական և այլ հիմնարկների ղեկավարներ, գիտնականների տարբեր սերունդների ներկայացուցիչներ:

Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանը: Նա պատմական ուրվագծով ներկայացրեց հայ պատմագիտական մտքի զարգացման անցած ուղին սկսած XIX դ. մինչև մեր օրերը: Ա. Մելքոնյանը մասնավորապես նշեց պատմաբանի պատասխանատու առաքելության՝ անաչառ և օբյեկտիվ լինելու անհրաժեշտության մասին, որը հայ պատմագիտական դպրոցի շարունակականության պահպանման գրավականն է: Պատմագիտությունը նաև գիտաճանաչողական նշանակություն ունի հայրենասեր քաղաքացի ձևավորելու առումով:

Իր ողջունի խոսքում ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը գովեստի խոսքով արտահայտվեց Պատմության ինստիտուտի անուրանալի ձեռքբերումների մասին պատմագիտության, ընդհանրապես, հայագիտության զարգացման ասպարեզում, միջազգային գիտական ոլորտում դրանք ներկայացնելու, պատմաբանների նորանոր սերունդներ աճեցնելու կարողության, նաև շեշտեց ՀՀ պաշտպանության նախարարության հետ ինստիտուտի սերտ գործակցությունը պատմաճանաչողական ու հայրենասիրական դասախոսություններ իրականացնելու կարևորության և այլնի մասին: Յու. Սուվարյանը փոխանցեց նաև ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի շնորհավորանքները՝ նշելով, որ ԳԱԱ նախագահությունը ինստիտուտին է նվիրել համակարգչային համապատասխան տեխնիկա և սարքավորումներ:

Պատմության ինստիտուտի 75-ամյակի առթիվ շնորհավորական խոսքով հանդես եկավ Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ) ռեկտոր, ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանը և ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանին շնորհեց ԵՊՀ “Ոսկե մեդալ”՝ գիտակազմակերպչական ոլորտում ունեցած վաստակի համար: Ելույթ ունեցան նաև Երևանի Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի տնօրեն, պ. գ. դ. Վահան Տեր-Ղևոնդյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի ղեկան, պ. գ. դ., պրոֆեսոր Էդիկ Մինասյանը, ակադեմիկոս Վիլեն Հակոբյանը, Արևելագիտության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. թ., դոցենտ Ռոբերտ Ղազարյանը, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դևրիկյանը, Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Գևորգ Պողոսյանը, Երևանի պատմության թանգարանի տնօրեն, պ. գ. թ. Արմինե Սարգսյանը:

ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Դավիթ Սարգսյանը փոխանցեց նախարարի պաշտոնակատար Մխիթար Հայրապետյանի ողջունի ուղերձը: Պատմության ինստիտուտը պարզևստրվեց նախարարության “Ոսկե հուշամեդալով”, իսկ ինստի-

տուտի տնօրեն Ա. Մելքոնյանը՝ նախարարության «Ոսկե մեդալով»: Հայաստան–Սփյուռք գործակցության զարգացման բնագավառում ունեցած ներդրման համար նախարարության պատվոգրերով պարգևատրվեցին ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ., պրոֆեսոր Կարեն Խաչատրյանը, Հայ պարբերական մամուլի և հասարակական մտքի պատմության բաժնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ Ալբերտ Խառատյանը, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ. Արմեն Մարուքյանը, Սփյուռքի և հայկական գաղթօջախների պատմության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆեսոր Գևորգ Ստեփանյանը, ինչպես նաև նույն բաժնի աշխատակիցներ պ. գ. թ. Քնարիկ Ավագյանը, պ. գ. թ. Սեդա Օհանյանը, պ. գ. թ. Անի Ֆիշենկճյանը, բ. գ. թ. Արծվի Բախչինյանն ու գիտաշխատող Էլիզաբեթ Թաջիրյանը:

Հանդիսավոր նիստին ընթերցվեցին Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի (ՌԴ ԳԱ) ընդհանուր պատմության ինստիտուտի գիտական ղեկավար, ԱՊՀ երկրների պատմության ինստիտուտների ընկերակցության նախագահ, ՌԴ ԳԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ պատվավոր անդամ, պ. գ. դ., պրոֆեսոր Ալեքսանդր Չուբարյանի, ինչպես նաև ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի տնօրեն, ֆ-մ. գ. դ., պրոֆեսոր Ալբերտ Սարգսյանի, «Հայկական Հանրագիտարանի» խմբագիր-տնօրեն, քիմ. գ. դ. Հովհաննես Այվազյանի շնորհավորական ուղերձները:

Շնորհավորանքի ու գնահատանքի խոսք նաև ասաց Պատմության ինստիտուտի գիտահանրամատչելի տարբեր ձեռնարկների մշտական աջակից, «Թերմոոս-Ար» ընկերության տնօրեն, ֆ-մ. գ. թ. Խոբեն Քոթանջյանը, ով նաև դրամական պարգևներ հանձնեց Երիտասարդ գիտաշխատողների 39-րդ նստաշրջանի մասնակիցներին:

Պատմության ինստիտուտի պատկառելի հոբելյանը նշանավորվեց «Պատմության ինստիտուտ – 75» գրքի լույս ընծայմամբ, որի շնորհանդեսը նույնպես տեղի ունեցավ հանդիսավոր նիստի ընթացքում: Ներկայացնելով կատարված կոլեկտիվ աշխատանքը՝ գրքի խմբագիր, ինստիտուտի փոխտնօրեն Կարեն Խաչատրյանը մասնավորապես ասաց, որ աշխատության մեջ արխիվային վավերագրերի, ինստիտուտի տարեկան հաշվետվությունների, փաստագրական այլ նյութերի և պատմագիտական գրականության հիման վրա ի մի է բերվել ինստիտուտի գիտական, գիտակազմակերպչական ու գիտակրթական գործունեությունը: Ներկայացված են ինստիտուտի անցած ուղին, բաժինների (Հին դարերի, Միջին դարերի, Նոր, Նորագույն, Հայ պարբերական մամուլի և հասարակական-քաղաքական մտքի, Հայկական գաղթօջախների և սփյուռքի, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության, Ընդհանուր պատմության) կատարած աշխատանքները, ինստիտուտում գործող Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի, Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի, «Մեսրոպ արք. Աշճյան» գիտահրատարակչական կենտրոնի գործունեությունը, «Հայոց պատ-

մության հարցեր” տարեգիրքը, ինչպես նաև ինստիտուտում գործող ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի Պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի գործունեությունը: Գրքում տեղ են գտել 1943–2018 թթ. ինստիտուտի աշխատակիցների հեղինակած մենագրությունների, կոլեկտիվ ուսումնասիրությունների, ինստիտուտի հրատարակած աշխատությունների, փաստաթղթերի ու նյութերի ժողովածուների ստվար մատենագիտությունը, նաև՝ հիշարժան լուսանկարներ:

Հոբելյանական նիստի ընթացքում ցուցադրվեց 2003 թ. հեռուստայրագրող Արփեն Մովսիսյանի նկարահանած “Պատմության ինստիտուտ – 60” դիտարժան ֆիլմը:

\* \* \*

Դեկտեմբերի 26–27-ին Պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում անցկացվեց Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի հերթական՝ 39-րդ նստաշրջանը, որը նվիրված էր ինստիտուտի հիմնադրման 75-ամյակին: Գիտաժողովին մասնակցում էին երիտասարդ գիտաշխատողներ ու ասպիրանտներ Պատմության ինստիտուտից և հանրապետության գիտակրթական այլ հաստատություններից:

Նստաշրջանի բացումը տեղի ունեցավ դեկտեմբերի 26-ին: Բացման խոսքով հանդես եկավ ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ա. Մելքոնյանը: Այնուհետև գիտաժողովի մասնակիցներին ողջունեցին ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յու. Սուվարյանը, ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պ. գ. դ. Է. Մինասյանը, Պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պ. գ. դ. Կ. Խաչատրյանը:

Գիտաժողովի երեք նիստերի (նիստավարներ՝ Ալիսա Դումիկյան, Վահե Սարգսյան, Համո Սուքիասյան) ընթացքում հնչեցին շուրջ երկու տասնյակ զեկուցումներ, որոնցում անդրադարձ եղավ պատմագիտական խնդիրներին, Հայաստանի հին, միջնադարյան, նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության ամենատարբեր հիմնահարցերին. “Պատմագիտության խնդիրները Հայկումկուսի քաղաքականության ոլորտում (1930-ական թվականներ)” (Համո Սուքիասյան), “Վանի թագավորության արքաների հյուսիսարևելյան արշավանքները. Էրեբունի ամրոցի հիմնադրումը” (Վահե Սարգսյան), “Նորահայտ հնագիտական վկայություններ պատմական Սյունիքի Աղահեճք գավառի հնագույն պատմության վերաբերյալ” (Հարություն Խուդանյան), “Բագրատունիների վրացական ճյուղի իշխանության հաստատման թվականը” (Լիանա Նազարյան), “Ազնվական կանանց գործունեությունը Անիում X–XIII դդ.” (Մարիամ Գրիգորյան), “Դիարբեքի քաղաքի հայ բնակչությունը XV–XVI դարերում. քաղաքը Տիգրանակերտ կոչելու հայկական ավանդույթի (վերա) հաստատումը” (Գոռ Երանյան), “Հայ վաճառականների դերը Վրաս-

տանի տնտեսական կյանքում (XVIII դ. – XIX դ. առաջին կես)” (Վարդան Եսայան), “Շուշիում բողոքականների հրատարակած գրքերը (1828–1834 թթ.)” (Ստյոպա Պետոյան), *Էմին Տեր-Գրիգորյանի գրահրատարակչական գործունեության պատմությունից* (Հայկուհի Առաքելյան), “Վրացախմերեթական թեմի կառավարումը Արիստակես եպիսկ. Սեդրակյանցի ղեկավարման շրջանում” (Վարդիթեր Գրիգորյան), “Կարապետ Տեր-Սկրտյանը որպես հայ եկեղեցու բարենորոգիչ” (Անահիտ Ասատրյան), “Հայոց ցեղասպանության ընթացքում օսմանյան պետական կառույցների, բանակի և զինված կազմավորումների փոխգործակցությունը” (Աշխեն Բասենցյան), “Անդրկովկասի վարչատարածքային բաժանման խնդիրները պետրոգրադյան խորհրդակցությունների քննարկումներում (1917 թ. հունիս)” (Հայկ Մահտեսյան), “Պետական վերահսկողության ժողովրդական կոմիսարիատի ձևավորումը Խորհրդային Հայաստանում” (Գևորգ Կեստյան), “Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Եվրոպայի թեմի վարչաժողովրդագրական նկարագիրը 1924–1930 թթ.” (Մարիամ Հակոբյան), “ՀԽՍՀ ներքին գործերի մինիստրության աշխատակիցների առօրյան հետպատերազմյան առաջին տարիներին” (Գայանե Ղազարյան), “Կամավորականների առօրյան Արցախյան պատերազմի սկզբնական փուլում (Տոդի և Սարինշենի ինքնապաշտպանությունների օրինակով)” (Անուշ Ամիրբեկյան), “Հայաստանի Հանրապետության օրոք Հայ առաքելական եկեղեցու և պետության փոխհարաբերությունների պատմությունից” (Նարինե Հարությունյան):

Ձեկուցումներից հետո տեղի ունեցան հարց ու պատասխան, գիտական արդյունավետ բանավեճ, իսկ գիտական նստաշրջանի ավարտին կազմակերպվեց քննարկում և արդյունքների ամփոփում: Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի նախագահ, պ. գ. թ., դոցենտ Հ. Սուքիասյանը հույս հայտնեց, որ գիտաժողովը կարևոր փորձառություն կլինի հետագայում երիտասարդների գիտական մտքի զարգացման ու կատարելագործման համար և հորդորեց ակտիվորեն պատրաստվել 2019 թ. կայանալիք հոբելյանական՝ 40-րդ երիտասարդական գիտական նստաշրջանին, որը նվիրված է լինելու Երիտասարդ գիտաշխատողների խորհրդի 40-ամյակին:

Երկօրյա գիտաժողովի աշխատանքներն ամփոփեց ինստիտուտի փոխտնօրեն Կ. Խաչատրյանը՝ կարևորելով ինստիտուտի հիմնադրմանը նվիրված երիտասարդական գիտաժողով անցկացնելու հանգամանքը: Նա ներկայացրեց իր առաջարկնկատառումները և բարեմաղթանքի խոսքեր ուղղեց զեկուցողներին:

ՔՆԱՐԻԿ ԱՎԱԳՅԱՆ,  
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՅԱՆ



---

---

ՀԱՄԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ  
150-ԱՄՅԱ ՀՈՒՐԵՅԱՆԻՆ

Փետրվարի 18-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Թումանյանագիտության արդի հիմնախնդիրները» թեմայով համաժողովը՝ նվիրված մեծանուն գրող, Ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանին:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Իր ելույթում նա, մասնավորապես, մեջբերեց Հովհաննես Թումանյանի խոսքերը. «Պետք է համախմբել հայ գիտնականներին, ստեղծել գիտություն հայերենով և հայ գիտնականների կաճառ՝ գիտության օջախ, հայկական ակադեմիա»: Նա երազում էր ունենալ համալսարան մեր կրթության համակարգում: Առաջին Հանրապետության ղեկավարները կարողացան նրա ցանկությունն իրականացնել. 1919 թ. հիմնադրվեց Երևանի պետական համալսարանը, որի 100-ամյակը պետք է այս տարի նշենք, բայց, Գիտությունների ակադեմիան այդ ժամանակ չհաջողվեց կազմակերպել, այն ստեղծվեց ավելի ուշ», – ասաց ԳԱԱ նախագահը:

Ներկաներին ողջունեց ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը: «Պատահական չէ, որ շատ գիտնականներ, հասարակական գործիչներ Թումանյանին համարում են ամենահզորներից մեկը, ով ազգի ձևավորման մեջ շատ մեծ դերակատարում է ունեցել: Երբ կարդում ես նրա հրապարակախոսական նյութերը, կարծես մի քանի օր առաջ է դրանք գրել: Բացի այն, որ գրել է, խնդիրը վերհանել, նաև լուծումներ է առաջարկել», – ասաց նախարարը: Ա. Հարությունյանը, լինելով Հովհաննես Թումանյանի 150-ամյա հոբելյանի առիթով ստեղծված կառավարական հանձնաժողովի նախագահ, հայտարարեց, որ պետությունը նպատակ ունի Թումանյանի հոբելյանին նվիրված միջոցառումները վերածել համազգային տոնախմբության:

Հովհաննես Թումանյանի կյանքի և ստեղծագործության, գրական-հասարակական գործունեության վերաբերյալ ելույթներով հանդես եկան Հայաստանի – գիտաուսումնական տարբեր հաստատությունների ներկայացուցիչներ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին Մանուկ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի կողմից վերջին մեկ տարում հրատարակված Հովհաննես Թումանյանի կյանքին ու գործունեությանը նվիրված գիտական աշխատություններ:

ՀՀ ԳԱԱ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ

Մարտի 26-ին կայացավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը: Ժողովը մեկնարկեց նախօրեին՝ ակադեմիայի գիտական բաժանմունքներում, ուր ամփոփվեցին բաժանմունքների տարեկան գործունեության արդյունքները, տեղի ունեցան լուրջ և շահագրգիռ քննարկումներ: Բաժանմունքներում լսվեցին բազմաթիվ գիտական զեկուցումներ:

ԳԱԱ տարեկան հաշվետու ընդհանուր ժողովը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը և ողջունեց ընդհանուր ժողովի մասնակիցներին՝ Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանին, նախարարներին, բուհերի ռեկտորներին, ԳԱԱ արտասահմանյան անդամներին, գիտնականներին և հյուրերին:

Ժողովի մասնակիցները մեկ րոպե լռությամբ հարգեցին հաշվետու տարում կյանքից հեռացած ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Սերգեյ Հաբարձումյանի, Էդուարդ Խաչիկյանի, Միսակ Դավթյանի և ԳԱԱ թղթակից անդամ Սարգիս Հարությունյանի հիշատակը:

Ակադեմիայի 2018 թ. գիտական գործունեության արդյունքները ներկայացրեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: 2018 թ. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի կյանքում կհիշատակվի որպես գիտակազմակերպական կարևոր և մասշտաբային միջոցառումների տարի, ասաց նա: Դեռևս 2016 թ. ԱՊՀ ղեկավարների խորհուրդը որոշեց ԱՊՀ երկրների գիտնականների երկրորդ ֆորումն անցկացնել Երևանում: Միջոցառման կազմակերպման պատասխանատվությունը դրվեց գիտությունների ակադեմիայի վրա: Համաժողովի քննարկումները կապված էին ԱՊՀ երկրներում գիտության զարգացման խնդիրների հետ, որոնք պետք է նպաստեին սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծմանը: Պլենար նիստում բոլոր պատվիրակությունների ղեկավարները ներկայացրեցին գիտության բնագավառում ձեռք բերված նվաճումների համառոտ արդյունքները: Կլոր սեղանների քննարկումները նվիրված էին ԱՊՀ երկրներում հիմնարար գիտական մշակումների ուղղությամբ կատարվող ինստիտուցիոնալ պրոցեսների ակտիվացմանը: Քննարկումներում զեկուցումներով հանդես եկան ՀՀ գիտության պետական կոմիտեի և գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչները: Գիտնականների ֆորումի օրերին ԳԱԱ-ում տեղի ունեցավ նախկին Խորհրդային Միության Արևելյան Եվրոպայի և ասիական մի շարք երկրների գիտությունների ակադեմիաների ընկերակցության նիստը: Միության նախորդ նիստում ՀՀ ԳԱԱ նա-

խագահ Ռ. Մարտիրոսյանն ընտրվել էր միության փոխնախագահ: Ընկերակցության անդամ ընտրվեց Չինաստանի գիտությունների հզոր ակադեմիան: Քննարկվեցին համագործակցության և կադրերի պատրաստման խնդիրներ:

2018 թ. հանրապետության գիտական հանրությունը նշեց Հայաստանի Հանրապետության գիտությունների ակադեմիայի հիմնադրման 75-ամյակը: Ամբողջ տարվա ընթացքում համակարգի կազմակերպություններն անց են կացրել գիտական բնույթի բազմաթիվ միջոցառումներ:

Ակադեմիայի հոբելյանական միջոցառումները մեծ արձագանք ստացան միջազգային գիտական հանրության կողմից, ինչով էլ բացատրվում է մեծ թվով ակադեմիական պատվիրակությունների ժամանումը Հայաստան: Պատվիրակություններ էին ժամանել 15 տարբեր կազմակերպություններից, որոնց ներկայացուցիչներն իրենց ելույթներում և հանդիպումների ընթացքում բարձր էին գնահատում Հայաստանի գիտությունների ակադեմիայի ներդրումը համաշխարհային գիտական գանձարանում:

Պատվիրակությունների անդամները նշում էին, որ անցած 75 տարիների ընթացքում Հայաստանի գիտնականները հասել են տպավորիչ արդյունքների. աստղաֆիզիկայի բնագավառում ձեռք բերված նվաճումները համաշխարհային փառք են բերել Հայաստանի գիտությանը, ֆունկցիաների տեսության և մոտավորությունների տեսության գծով հայ մաթեմատիկոսների, իսկ դեֆորմացվող պինդ մարմինների մեխանիկայի բնագավառում հայ մեխանիկների հիմնարար հետազոտությունները լայնորեն հայտնի են համաշխարհային գիտությանը: Հայաստանի ֆիզիկոսների և ռադիոֆիզիկոսների հետազոտություններն ընդգրկում են տիեզերական ճառագայթներից մինչև քվանտային էլեկտրոնիկա, նոր նյութերի ստեղծումից մինչև մեծ ճշգրտություն ունեցող սարքերի ուսումնասիրություններ, դրանք արժանացել են բարձր պարգևների ու մրցանակների: Հումանիտար և հասարակական գիտությունների տարբեր բնագավառներում հիմնարար ուսումնասիրությունների շնորհիվ Հայաստանը դարձել է հայագիտական հանրաճանաչ կենտրոն ամբողջ աշխարհում:

Ակադեմիայի 75-ամյակին նվիրված հոբելյանական հանդիսավոր նիստին ALLEA-ի (Եվրոպական 58 ակադեմիաների ընկերակցության) փոխնախագահ, պրոֆեսոր Քեյ Գրահամն իր ելույթում նշեց. «Մենք համարում ենք, որ Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան արժանի է կոչվել ALLEA-ում ճանաչված և բարձրարժեք ակադեմիաներից մեկը: Այս ակադեմիան կայունության և տոկունության օրինակ է, և մենք բոլորս էլ պատրաստ ենք սովորել նրա պատմությունից և գիտական ձեռքբերումներից»:

Հաշվետու տարում տեղի են ունեցել համակարգի մի շարք ինստիտուտների տնօրենների ընտրություններ: Ընդհանուր առմամբ ինստիտուտների տնօրեններ են դարձել հմուտ, բանիմաց, հանրահայտ գիտնականներ, որոնցից երկուսը կանայք

են: Մակայն պետք է արձանագրել՝ տնօրենների պաշտոնում բարձր որակավորում և կազմակերպական ձիրք ունեցող գիտության նվիրյալների ընտրությունը հեշտ չի ընթացել: Պատճառը, թերևս, վերջին տասնամյակներում միջին սերնդի գիտնականների թվաքանակի շեշտակի նվազումն է: Ուստի, անհրաժեշտ է մշակել կադրային քաղաքականության հատուկ ծրագիր:

2018 թ. գիտական ստորաբաժանումներում պահպանվել է հիմնարար հետազոտությունների գիտական բարձր մակարդակը: Այդ են վկայում արտասահմանյան հեղինակավոր գիտական ամսագրերում հրատարակված աշխատանքները՝ 953 գիտական հոդված և 22 մենագրություն, ինչպես նաև՝ միջազգային ծրագրերով կատարված աշխատանքները:

Այնուհետև Ռ. Մարտիրոսյանը հանգամանորեն անդրադարձավ ֆիզիկամաթեմատիկական գիտությունների բնագավառի, բնական գիտությունների, քիմիայի և երկրի մասին գիտությունների բնագավառներին, դրանց կիրառական աշխատանքների, ուսումնասիրությունների կարևորագույն արդյունքներին:

#### ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

– “Թուրքիայի, Իրանի, Կովկասի և Մաշրիքի արաբական երկրների քաղաքական, սոցիալական, մշակութային և էթնիկական պատմության հիմնախնդիրները և Հայաստանը” ծրագրի շրջանակներում առաջ է քաշվել և մենագրական հետազոտության միջոցով հիմնավորվել է հայեցակարգային մի նոր մոտեցում, համաձայն որի 2011 թ. արաբական երկրներում տեղի ունեցող “Արաբական գարուն” անվանվող զանգվածային ընդվզումների շարժումը ժամանակակից աշխարհում քաղաքական և տնտեսական կյանքի արդիականացման փորձի օրինակ է:

– Լեռնագոգ - 1 նորահայտ հնավայրի պեղումներով և նյութերի ուսումնասիրությամբ բացահայտվել ու ուսումնասիրվել է մ. թ. ա. VIII–VII հազ. ժամանակագրվող, վաղ հոլոցենի՝ նոր քարի դարի նախակերամիկական փուլի մշակույթը ներկայացնող հնագույն բնակատեղի:

– “Հայ գրականության պատմություն” թեմայի շրջանակներում մշակվել են “V–XVII դդ. հայկական աղբյուրները եվրոպական երկրների մասին” մատենաշարի կազմման սկզբունքները, հրատարակության է պատրաստվել Բսպանիային և Պորտուգալիային նվիրված առաջին հատորը:

– “Հայ արվեստի համալիր ուսումնասիրություն” ծրագրի շրջանակներում հայրենական արվեստագիտության մեջ առաջին անգամ իրականացվել է Օսմանյան կայսրության տարածքում համիդյան ջարդերից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածում հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստների համակողմանի ուսումնասիրություն: Լույս է ընծայվել “Հայ կերպարվեստի և կիրառական արվեստի կորուստներն Օսմանյան կայսրության տարածքում” մենագրությունը:

– Արևելագիտության ինստիտուտը պարբերաբար պատկան մարմիններին է ներկայացրել ՀՀ արտաքին քաղաքականության մի շարք հիմնական ուղղությունների մշակմանը և իրականացմանը նպաստող գիտական ու գիտավերլուծական նյութեր:

– Զգալի աշխատանք է կատարվել պատմամշակութային ժառանգության պահպանման, վերականգնման, թանգարանացման ծրագրերով հուշարձանների պեղումների և դաշտային հետազոտությունների ոլորտում: Պեղվել են Դաշտադեմի ամրոցը, Մաստարայի նորահայտ անտիկ բնակատեղին, 6 եկեղեցական համալիր, 1 ձիթհան:

#### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում ԳԱԱ-ն առավել աչքի է ընկել միջազգային կառույցներում միջոցառումներին իր ակտիվ մասնակցությամբ, կնքվել և վերակնքվել են մի շարք պայմանագրեր, հուշագրեր ու համաձայնագրեր:

Նոյեմբերին Պեկինում (Չինաստան) տեղի է ունեցել Միջազգային գիտական կազմակերպությունների դաշինքի (ՄԳԿԴ–ANSO) ստեղծմանը նվիրված առաջին գլխավոր ասամբլեան, որի ընթացքում դաշինքի համահիմնադիրները ստորագրել են ՄԳԿԴ-ի ստեղծման համաձայնագիր, անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը: Համահիմնադիր է դարձել նաև ԳԱԱ-ն:

Մայիսին ԳԱԱ նախագահ ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը և ՌԴԳԱ նախագահ ակադեմիկոս Ա. Սերգենը գիտատեխնիկական համագործակցության զարգացման նոր համաձայնագիր են ստորագրել Մոսկվայում, որը միտված է նպաստել երկու երկրների գիտական հետազոտությունների հետագա զարգացմանը, ակադեմիական համայնքների ավանդական փոխշահավետ հարաբերությունների ամրապնդմանը:

Համագործակցությունն ամրապնդելու և շարունակականությունն ապահովելու համար այս տարի ՀՀ-ում կայացած Ֆրանկոֆոնիայի գագաթաժողովի ընթացքում ԳԱԱ-ն և Ֆրանսիայի Թուլուզի դաշնային, Պոլ Սաբատիեի անվ. Թուլուզ III համալսարաններն ու Թուլուզի ազգային պոլիտեխնիկական ինստիտուտը համաձայնության արձանագրություն են ստորագրել ֆրանսիական ԲՈՒՀ-երի կողմից ԳԱԱ-ին նվիրաբերվող գերհամակարգչի վերաբերյալ: Նախատեսվում է Հայաստանում ստեղծել բարձր արտադրողականությամբ հաշվարկների կենտրոն, հնարավորություն ստեղծել հայ օգտագործողների համար օգտվելու Թուլուզի համալսարանների զանազան հաստատությունների՝ բարձր արտադրողականությամբ հաշվարկների փորձից:

Հունիսին ԳԱԱ և ՉԺՀ ճարտարագիտության ակադեմիայի միջև ստորագրվել է հուշագիր ճարտարագիտության ու տեխնիկական գիտությունների ոլորտներում

համագործակցության մասին, նախատեսվում են համատեղ հետազոտական աշխատանքներ, ուսումնական ծրագրեր:

ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանն ու Սյուվենիայի գիտությունների և արվեստի ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Տ. Բայդը հոկտեմբերին ստորագրել են համագործակցության համաձայնագիր, որով նախատեսվում է հաստատել ու խորացնել գիտական համագործակցությունն ընդհանուր հետաքրքրություն ունեցող գործունեության ոլորտներում:

Միջպետական և միջգերատեսչական համագործակցություններից են տնտեսական միջկառավարական հանձնաժողովի կողմից իրականացվող հայ-լիտվական, հայ-լատվիական, հայ-թուրքմենական, հայ-հնդկական, հայ-չեխական, հայ-չինական, հայ-եգիպտական, հայ-տաջիկական համագործակցությունները: Հայ-ռուսական տնտեսական միջկառավարական համագործակցության շրջանակներում շարունակվել է Բյուրականի աստղաֆիզիկական աստղադիտարանի ու ՌԴ “Ռոսկոսմոսի” հետ տիեզերական տարածության հետազոտման և խաղաղ նպատակներով օգտագործման ասպարեզում համագործակցությունը: Ըստ այդ ծրագրի՝ Բյուրականում տեղակայված ԶՕՈՒ-1 ռուսական դիտողական կայանի օգնությամբ իրականացվում է մերձերկրյա տարածության մշտադիտում:

Հաշվետու տարում ԳԱԱ-ում իրականացվել են տարբեր միջազգային միջոցառումներ:

Հոկտեմբերին ԳԱԱ 75-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին ներկա էին Եվրոպական երկրների ակադեմիաների ընկերակցության (ALLEA) փոխնախագահ Գ. Քեյը, ԱՊՀ երկրների ակադեմիաների պատվիրակությունները, Սյուվենիայի, Չեխիայի, Չինաստանի, Մեծ Բրիտանիայի, Լատվիայի, Լիտվայի, Էստոնիայի, պատվիրակությունների ղեկավարները: Միջոցառումների շրջանակներում ԳԱԱ նախագահությունում տեղի է ունեցել Գիտությունների ակադեմիաների միջազգային ասոցիացիայի (MAAH) նիստ:

Ելնելով իր ռազմավարությունից՝ ԳԱԱ-ն ապահովում է երիտասարդ գիտնականների մասնակցությունը գիտության տարբեր ոլորտներում իրականացվող միջազգային հանդիպումներին և միջոցառումներին: ԳԱԱ-ն շարունակում է մասնակցել ու իրականացնել տարբեր միջազգային գիտական ծրագրեր, այդ թվում՝ Միջազգային գիտատեխնիկական կենտրոնի (ISTC), Եվրոպական VII շրջանակային (FP7), Հորիզոն 2020, համալսարանական կրթության ՏԵՄՊՈՒՍ, Սնծովյան տնտեսական համագործակցության (BSEC) և այլն: ԳԱԱ կազմակերպություններն ակտիվորեն մասնակցում են նաև ԱՄՆ ծրագրերին՝ Քաղաքացիական հետազոտությունների ու մշակումների (CRDF Global), ՆԱՏՕ-ի (NATO), և այլ եվրոպական ծրագրերին: Ընդհանուր առմամբ հաշվետու տարում համակարգի կառույցների՝ 42 միջազգային

տարբեր ծրագրերով կատարված աշխատանքների ընդհանուր գումարը կազմել է 665 միլիոն դրամ:

#### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Միջազգային գիտատեխնոլոգիական ծրագրեր բաժնի գործունեության հիմնական նպատակը շարունակել է մնալ ԳԱԱ ինստիտուտների և անհատ գիտնականների ավելի ակտիվ մասնակցությանը միջազգային գիտահետազոտական դրամաշնորհային ծրագրերին ու միջազգային միջոցառումներին նպաստելը՝ հիմնական շեշտը դնելով Եվրոպական Միության հետազոտությունների և զարգացման Հորիզոն 2020 ծրագրին:

Հարկ է նշել, որ ընդհանուր առմամբ ԳԱԱ ինստիտուտների գիտնականների հետաքրքրվածությունը միջազգային ու եվրոպական ծրագրերով, մասնավորապես Հ2020-ով, աճել է, ինչի մասին է վկայում պարբերաբար համալրվող շահառուների բազան, տրամադրված խորհրդատվությունների աճը և Հ2020-ին ներկայացված հայտերի քանակը:

#### ԳԱԱ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Արտասահմանյան անդամների համագործակցությունը ԳԱԱ համակարգի և ՀՀ այլ գիտակրթական կազմակերպությունների հետ իրականացվում է մի շարք ուղղություններով՝

– համատեղ հետազոտությունների իրականացում և հետազոտական նոր ծրագրերի մշակում,

– մասնագետների պատրաստում և վերապատրաստում,

– համատեղ գիտական աշխատությունների հրատարակում,

– մասնակցություն Հայաստանում կազմակերպվող միջոցառումներին,

– մասնակցություն գիտական փորձաքննություններին:

Կիրառական բնույթի հետազոտություններում օգտագործվում են նաև արտասահմանյան անդամների լաբորատորիաների ժամանակակից սարքավորումները: Համատեղ հետազոտությունները նպաստում են Հայաստանում միջազգային չափանիշներին համապատասխանող արդի ուղղությունների զարգացմանը:

Արտասահմանյան անդամներն աջակցում են երիտասարդ մասնագետների պատրաստմանը, նրանցից ոմանք ասպիրանտների գիտական ղեկավարներ և համադեկավարներ են: Այդ ուղղությամբ հնարավորություններն ավելի շատ են, քան իրականացված ծրագրերի թիվը:

ՀՀ գիտական կազմակերպությունների գիտնականների հետ հրատարակում են գրքեր, տպագրվում են հոդվածներ միջազգային հեղինակավոր բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում կամ զեկուցվում են միջազգային գիտաժողովներում:

Հայաստանի գիտության միջազգային բարձր վարկանիշը մասամբ պայմանավորված է նշված համագործակցություններով: Արտասահմանյան անդամները զեկուցումներով և դասախոսություններով հանդես են գալիս ինչպես ԳԱԱ համակարգի ինստիտուտներում, ՀՀ բուհերում, այնպես էլ Արցախի պետական համալսարանում:

#### ԿԱՂԻՆԸ

Առ 01.01.2019 թ. ԳԱԱ կազմում ընդգրկված են 46 ակադեմիկոս, 56 թղթակից և 123 արտասահմանյան անդամներ: 22 ակադեմիկոս և 26 թղթակից անդամ աշխատում են ԳԱԱ համակարգից դուրս:

Վերջին անգամ ԳԱԱ ակադեմիկոսների և թղթակից անդամների ընտրություններ տեղի են ունեցել 2014 թ. դեկտեմբերին:

Առ 01.01.2019 թ. ԳԱԱ համակարգում աշխատում է 3585 մարդ, որոնցից 2206-ը գիտական աշխատողներ են՝ 326-ը գիտության դոկտորներ, 1029-ը գիտության թեկնածուներ, 851-ը գիտական աշխատողներ առանց գիտական աստիճանի: Հաշվետու տարում ԳԱԱ համակարգում աշխատանքի է ընդունվել 101 երիտասարդ մասնագետ:

2018 թ. ԳԱԱ-ում պաշտպանվել է 48 թեկնածուական ատենախոսություն (32 ասպիրանտ, 14 հայցորդ և 2 արտերկրացի ասպիրանտ):

#### ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Գիտական աշխատանքների տարեկան ֆինանսավորումը պետական բյուջեից 2018 թ. կազմել է 6 միլիարդ դրամ: Հատկացված ֆինանսավորման 70 տոկոսն աշխատավարձի բաժինն է: Համակարգի աշխատողների ամսական միջին աշխատավարձը մեկ մարդու հաշվով, առանց արտաբյուջետային միջոցների, նախորդ տարվա համեմատ գրեթե չի փոփոխվել: Արտաբյուջետային ֆինանսավորումը հաշվետու տարում կազմել է 2,2 միլիարդ դրամ, որը 200 միլիոն դրամով ավել է նախորդ տարվա ցուցանիշից: Արտաբյուջետային միջոցների 655 միլիոն դրամը համակարգի աշխատողները ստացել են մոտ 43 մեծ ու փոքր դրամաշնորհային ծրագրերից: Ծրագրերից բացի, կատարվել են նաև պայմանագրային աշխատանքներով մատուցված մեծ ծավալի տարաբնույթ ծառայություններ: Այս ուղղությամբ ակտիվ աշխատանքներ են տանում «Հայկենսատեխնոլոգիա» գիտաարտադրական կենտրոնը, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, Հնագիտության և ազգագրության ինստիտուտները, Օրգանական և դեղագործական քիմիայի կենտրոնը, Փորձաքննությունների



ազգային բյուրոն, Գիտակրթական միջազգային կենտրոնը: Բյուրականի աստղադիտարանի կիրառական հետազոտությունների կենտրոնում իրականացվել են տիեզերական հետազոտությունների հետ կապված պայմանագրային աշխատանքներ, որոնց ծավալն առաջիկայում կավելանա և աստղադիտարանը կհամալրվի նոր գիտական սարքավորումներով:

Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտը տարեցտարի մեծացնում է պայմանագրային աշխատանքների ծավալը երկրի ռազմասարդյունաբերական համալիրի պատվերներով: Ինստիտուտում ստեղծված համակարգերը պաշտպանության նախարարությունը ներկայացրել է միջազգային մի քանի ցուցահանդեսներում, որտեղ դրանք արժանացել են մեծ ուշադրության: Այժմ ինստիտուտը պատվերներ է ստացել արտասահմանյան երկրների պաշտպանական գերատեսչություններից:

Արտաբյուջետային միջոցների աղբյուր կարող է հանդիսանալ ինստիտուտներում փոքրածավալ արտադրությունների կազմակերպումը, ինչը պահանջում է որոշ ծավալի ներդրումներ: Արտադրական փոքր ծավալի միավորներ են ստեղծվել “Հայկենսատեխնոլոգիա” գիտաարտադրական, Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոններում, Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի, Քիմիական ֆիզիկայի ինստիտուտներում:

#### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Հաշվետու տարում համակարգի աշխատողների սոցիալական բնույթի հարցերը եղել են ԳԱԱ նախագահության ուշադրության կենտրոնում: Ցավոք, 2018 թ. այս բնագավառում շոշափելի դրական արդյունքներ չեն արձանագրվել: Ուշադրության կենտրոնում է եղել սոցիալական փաթեթի ցուցակներում աշխատողների ժամանակին ներգրավվածությունը: Արդեն երրորդ տարին է՝ համակարգի աշխատողներն օգտվում են երկարացված արձակուրդից: Հուսով ենք, որ այս տարի կսկսվի բնակելի նոր շենքի շինարարությունը, որի սկիզբն անընդհատ երկարաձգվել է տարբեր պատճառներով:

Համակարգի աշխատողների միջին ամսական աշխատավարձը բյուջետային մուտքերից, որի մեջ հաշվի են առնված բոլոր տիպի մուտքերը, կազմել է 100 հազար դրամ:

Սոցիալական բնույթի բազմակողմանի գործունեություն է ցուցաբերել ակադեմիայի “Գիտության զարգացման հիմնադրամը”:

Սոցիալական բնույթի խնդիրներից է աշխատանքային պայմանների բարելավման հարցը: Կարևոր է համակարգի անշարժ գույքի շահագործման և պահպանման հարցը: Նորից ուզում եմ հիշեցնել, որ ամբողջ անշարժ գույքը գտնվում է Պետական գույքի վարչության հաշվեկշռում, սակայն նշված ծախսերի համար ոչ մի դրամ չի

հատկացվում: Ոչ մի աջակցություն ինստիտուտները չեն ստացել նույնիսկ բնական աղետների հետևանքով ստեղծված արտակարգ վիճակների դեպքում:

ԳԱԱ համակարգի գիտական հենքը կապված է ժամանակակից սարքավորումների և տեխնոլոգիաների հետ, որոնք գտնվում են վատթար վիճակում, իսկ դրանց արդիականացումը կապված է լրացուցիչ, մեծածավալ ֆինանսական ներդրումների հետ: Շուտով քիմիայի և ֆիզիկայի բնագավառներում կատարվող հետազոտությունների հենքը կհամալրվի ժամանակակից մագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրով, որը հնարավոր եղավ ձեռք բերել մի տասնամյակի ընթացքում կուտակված միջոցներով:

Ընդհանուր ժողովի հարգելի մասնակիցներ նախորդ տարվա հաշվետու ժողովի հաշվետվության եզրափակիչ մասում Ձեր ուշադրությանն էի ներկայացրել 2012–2016 թվականների համակարգի կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման համար արդյունքները: Ստացված գնահատումների վերաբերյալ կատարվել են քննարկումներ բաժանմունքներում և ինստիտուտների գիտական խորհուրդներում: Քննարկումների արդյունքներով կազմվել են միջոցառումների պլան:

2018 թ. ընթացքում իրականացվել են ՀՀ ԳԱԱ համակարգի գիտական կազմակերպությունների 2012–2016 թթ. գործունեության արդյունավետության գնահատման արդյունքների հիման վրա իրականացված միջոցառումներ տարբեր ուղղություններով:

- Գիտական ուղղությունների ճշգրտում և կառուցվածքի օպտիմալացում

ՀՀ ԳԱԱ համակարգում (նաև ի հաշիվ գնահատման միջոցառումների) տեղի է ունեցել 2016 թ. համեմատությամբ ընդհանուր համակարգի աշխատակիցների թվի նվազեցում մինչև 456-ի, իսկ գիտական աշխատակիցների թվի նվազեցում՝ մինչև 340-ի: Կատարվել են ինստիտուտների կառուցվածքների բարելավումներ: Նպատակ ունենալով հստակեցնել առանցքային գիտական ուղղությունները՝ որոշ ինստիտուտներում կատարվել են լաբորատորիաների կրճատումներ, իսկ մյուսներում ստեղծվել են նոր աշխատանքային խմբեր:

Գիտական կազմակերպության կադրային ներուժը

Որոշ ինստիտուտներում երիտասարդ հեռանկարային գիտաշխատողների աշխատանքի խթանման և արդյունավետության բարձրացման համար ստեղծվել են աջակցության ֆոնդեր արտաբյուջետային միջոցների հաշվին:

[Երկրաբանական գիտությունների ինստիտուտ (ԵԳԻ), Երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտ (ԵՖԻՄԻ)]

- Հետազոտությունների և մշակումների արդյունքների առևտրայնացում

Պայմանագրեր են կնքվում Շվեյցարական «Ֆիլիպ Մորիս» ֆիրմայի հետ (ՕԴՔԿ, ՖՀԻ): Կատարվում են ինովացիոն ծրագրեր արտաբյուջետային միջոցառումների

հաշվին (“Նարինե” կաթնաթթվային մթերքների և մի շարք բուսական յուղերի արտադրություններ “Հայկենսատեխնոլոգիա” ԳԱԿ-ում): ԻԱՊԻ-ի կողմից տեղեկատվական ոլորտում համագործակցություն է հաստատվել տեղական ձեռնարկությունների հետ՝ “Միմենս” (“Մենտոր Գրաֆիկս”), “Պիքսարտ” և “Բժշկական գենետիկայի կենտրոն” միջազգային ու տեղական գիտատեխնիկական մրցույթներին մասնակցության ակտիվացման նպատակով: 2018 թ. Մաթեմատիկայի ինստիտուտը կազմակերպել է միջազգային գիտաժողով, ձեռք է բերվել նախնական համաձայնություն Եվրոպական մաթեմատիկական ընկերության խորհրդի նիստը Երևանում կազմակերպելու նպատակով:

- Գիտական կազմակերպությունների ենթակառուցվածքների և գիտական ուղղությունների ռեսուրսային ապահովվածություն

ՀՀ ԳԱԱ ֆինանսավորմամբ ՀՀ բոլոր գիտական հաստատությունների քիմիկոսների, կենսաքիմիկոսների և այլ բնագավառների հետազոտողների համար ձեռք է բերվել “Բրուկներ” ֆիրմայի 400 Մհգ հզորությամբ ժամանակակից միջուկային մագնիսական ռեզոնանսի (ՄՄՌ) սպեկտրումներ:

ՀՀ ԳԿ կողմից ֆինանսավորմամբ ձեռք է բերվել ֆլոերեցենտային կենսաբանական տրինոկուլյար մանրադիտակ:

ՀՀ ԳԱԱ համաֆինանսավորմամբ նախապատրաստվել է Թուլուզի երեք համալսարանների կողմից ՀՀ ԳԱԱ նվիրատվությունը EOS սուպերկոմպյուտերի հիման վրա հայկական սուպերկոմպյուտերային կենտրոնի ստեղծման համատեղ նախագիծ:

- Միջգիտակարգային ծրագրերի առաջարկություններ

Գնահատման արդյունքում ՀՀ ԳԱԱ ինստիտուտները նախատեսել են քննարկել գիտական կառուցվածքի օպտիմալացման սկզբունքները՝ ելնելով աշխատանքի արդյունավետության բարձրացման և առկա գիտական ներուժի առավել նպատակահարմար օգտագործման նկատառումներից, ինչպես նաև՝ թեմաների ղեկավարների տարիքային սահմանափակման պահանջներից:

Ելնելով ինստիտուտների կառուցվածքային օպտիմալացման անհրաժեշտությունից՝ ինստիտուտները նախաձեռնել են միջգիտակարգային 26 ծրագրերի վերաբերյալ առաջարկություններ՝ հիմնվելով ինստիտուտների ռեսուրսների և գիտական ինֆրակառուցվածքի միավորման վրա:

2018 թ. ՀՀ ԳԱԱ գիտակազմակերպական գործունեության մասին գեկուցեց ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Հրանտ Մաթևոսյանը: Զեկուցման ավարտին, Հրանտ Մաթևոսյանը ժողովին ներկայացրեց հետևյալ առաջարկությունը.

– “Հանրապետության գիտության զարգացման գերակա ուղղությունների շրջանակում ստեղծել հետազոտական ժամանակավոր խմբեր՝ մեկ ընդհանուր գիտա-

կան հստակ խնդրի, գաղափարի շուրջ՝ ընդգրկելով տարբեր գիտական կազմակերպություններից առանձին լաբորատորիաներ, խմբեր կամ առանձին գիտնականներ (մինչև 10 գիտնական): Սկզբնական մեկնարկը տալու համար բավական է հայտարարել նման տիպի 10 թեմա: Եթե այդ թեմաները կամ դրանց մի մասը կազմվեն պետական պատվերի շրջանակներում, ապա դա կլինի ավելի նպատակասլաց և ավելի շահավետ: Ծրագրի կատարման ժամանակահատվածը կարող է տատանվել 1-ից մինչև 3 տարի: Կատարողները պետք է վարձատրվեն բազային ֆինանսավորման չափաբաժիններից գոնե երկու կամ երեք անգամ ավել: Մրանք մեծ գումարներ չեն և կարող են հատկացվել թեմատիկ ֆինանսավորման շրջանակներում: Այս գործընթացում կա հույժ կարևոր հարց, դա փորձաքննությունն է. և՛ թեմաների ընտրությունը, առավել ևս կատարված աշխատանքների հաշվետվությունների ընդունումը, և՛ 2-րդ փուլի, այսինքն՝ թեմաների շարունակելու հարցի լուծումը պետք է իրականացվի հնարավորինս ամենաանաչառ փորձաքննության արդյունքում: Ցանկության դեպքում իրականացնելը շատ դյուրին է, եթե ճիշտ ու հստակ լինի խնդրի դրվածքը, ճիշտ որոշվեն ոլորտը, նպատակները և չափորոշիչները: Այս ճանապարհով կորոշվեն գիտության հետագա զարգացման ուղղությունները, միտումները, գիտական համակարգերի իրական օպտիմալացման խնդիրները: Առաջին հայացքից թվում է, թե սա երկար ճանապարհ է, սակայն այս գործընթացի արագությունը հետագա տարիներին, սկսած երկրորդ փուլից, շատ արագ է մեծանալու: Արդյունքում մոտավորապես հինգ տարիների ընթացքում կձևավորվի ավելի իրական գիտական համակարգ, որը մի կողմից՝ կարտահայտի տնտեսության զարգացման ուղղությունները, մյուս կողմից՝ կլուծի գոյություն ունեցող գիտական ներուժի պահպանման, կոնցենտրացման և նպատակային օգտագործման հարցը:

Ջեկուցումներից հետո տեղի ունեցավ 2018 թ. գիտակազմակերպական գործունեության արդյունքների շահագրգիռ և բովանդակալից քննարկում:

Ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Պավել Ավետիսյանը, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Արմեն Սերգենը, Հայաստանի Հանրապետության վարչապետ Նիկոլ Փաշինյանը, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոսներ Գևորգ Պողոսյանը, Յուրի Ալեքսանյանը, ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Հրայր Ասցատրյանը, Վ. Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի տնօրեն Արեգ Միքայելյանը:

Տարեկան ընդհանուր ժողովին մասնակցում էր ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը: Ելույթ ունենալով՝ նա մասնավորապես նշեց. “Առաջինը, որի վրա պետք է միասին աշխատենք, “Բարձրագույն կրթության և գիտահետազոտական գործունեության մասին” օրենքի նախագիծն է: Արձանագրել ենք, որ հիմնականում գիտահետազոտությունը դուրս է բուհական համակարգից կամ բավարար մակարդակի չէ, և դրա համար ունենք լուծումներ: Մեզ շատ հաճախ ա-

տում են, որ առայժմ կրթության և գիտության զարգացման ռազմավարությունը չէք ներկայացնում: Մենք մեզ համար խնդիր ենք դրել դաշտի բոլոր խաղացողներին ճանաչել, որպեսզի ռազմավարությունն իրական կյանքի հետ առնչություն ունենա: Մենք շատ ենք ուզում, որ այն բոլոր փաստաթղթերը, որ մենք կներկայացնենք, լինեն կենսունակ:

Գիտությունը նաև պետք է սպասարկի մեր տնտեսությունը, և այդ ուղղությամբ էլ պետք է աշխատանք տանենք”:

Ժողովի ավարտին ներկաները մեծ ուշադրությամբ ունկնդրեցին ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանի անչափ ուշագրավ “Հայ ժողովրդի գենետիկան” գիտական զեկուցումը:

### ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ

Իր ելույթում վարչապետ Փաշինյանը ողջունեց ներկաներին և նշեց, որ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիան հարուստ պատմություն ունի, որի շենքում հայկական ու համաշխարհային գիտության փառապանծ էջեր են գրվել: “Իմ միջազգային հանդիպումներին, հատկապես նրանց, որ որոշակի առնչություն ունեն գիտության և գիտական գործունեության հետ, ես պարտադիր շեշտում եմ, որ Հայաստանը, կարող ենք ասել վստահաբար, եղել է Խորհրդային Միության Սիլիկոնային հովիտը: Եվ սա ասում եմ ոչ թե ուղղակի պատմական հիշողությունը վերականգնելու, այլ ընդգծելու համար այն մեծ ներուժը, որ, իմ համոզմամբ, ունի Հայաստանը՝ որպես գիտական պոտենցիալ երկիր: Ինչո՞ւ էր Խորհրդային Միությունում գիտությունն այդքան ուժեղ և հզոր: Կարծում եմ՝ այն պատճառով, որ պետությունը և հանրությունը գիտեին, թե ինչ են ուզում գիտությունից, գիտությունն էլ շատ հստակ գիտեր, թե ինչ է ուզում պետությունից և հանրությունից”, – ասել է վարչապետը: Կառավարության ղեկավարի խոսքով՝ երրորդ հանրապետության ստեղծման առաջին օրից տեղի է ունենում այն բանավեճը, թե ինչ է ուզում պետությունը գիտությունից, ինչ է ուզում գիտությունը պետությունից, և ինչ կարող են դրանք ընդհանրապես տալ իրար: Այս հարցերի պատասխանը գտնելը, վարչապետի կարծիքով, կլինի այն առաջին կարևոր կետը, որի վրա պետք է հիմնվի մեր գիտության հետագա զարգացումը:

“Ես կարող եմ ասել, թե ինչ է ուզում պետությունը կամ կառավարությունը գիտությունից: Մենք հայտարարել ենք, որ Հայաստանի Հանրապետությունը տեսնում ենք որպես տեխնոլոգիական երկիր և հույս ունենք, որ Հայաստանում գիտությունը, գիտական պոտենցիալը, այդ թվում՝ Գիտությունների ազգային ակադեմիան ողջ թափով կսպասարկեն քաղաքական այս տեսլականը:

Շատ է խոսվում գիտության ֆինանսավորման և դրա մեխանիզմների մասին, և կանխավարկածն այնպիսին է, որ ֆինանսների բացակայության կամ սղության

պատճառով ինչ-որ բան չի ֆինանսավորվում, ինչ-որ բան պակաս է ֆինանսավորվում, ինչ-որ բան այնպես չէ ֆինանսավորվում, ինչպես պետք է ֆինանսավորվի: Բայց ցանկանում եմ ասել, որ կառավարությունում մեր աշխատանքի ընթացքում ես առաջարկել եմ ընդհանրապես հրաժարվել փողի մասին խոսակցությունից, որովհետև եթե որևէ խոսակցություն սկսում ենք փողից, շատ արագ մտնում ենք փակուղի: Պետք է խոսել ոչ թե այն մասին, թե ինչքան փող կա, և մենք ինչքան ենք պատրաստ հատկացնել, այլ այն մասին, թե մենք ինչ խնդիր ենք լուծում, ինչպես ենք պատկերացնում դրա լուծումը և արդյոք կարող ենք լուծել այն: Եթե չենք կարող, ինչ քայլեր պետք է ձեռնարկենք այդ խնդրի լուծման համար: Հետևաբար, ես առաջարկում եմ, որ ընդհանրապես այդ տրամաբանությունից դուրս գանք, որովհետև հարցն այն չէ՝ փող կա՞, թե՞ չկա, այլ այն, թե ինչ ենք ուզում: Երբ հստակ ձևակերպենք մեր ցանկությունները և անելիքը, կարծում եմ՝ փող միշտ էլ կգտնվի, որովհետև նպատակները շատ ավելի կարևոր են, քան նստել հաշվելը, թե այս պահին ինչքան փող ունենք”, – նշել է Նիկոլ Փաշինյանը:

Երկրի վարչապետն անդրադարձել է ՀՀ-ում գիտության ոլորտի զարգացման հետ կապված մի շարք հարցերի, որոնց վրա պետք է ուշադրություն դարձնել: “Առաջին հարցը՝ ինչքանո՞վ է գիտությունն ինտեգրված կրթությանը և մասնավորապես, բարձրագույն կրթությանը: Վերջին շրջանի բոլոր այցերին այնպես ենք դասավորում, որ պարտադիր փորձում ենք այցելել եվրոպական կամ աշխարհի առաջատար կրթական հաստատություններ: Այդ այցերի, շփումների արդյունքում իմ եզրակացությունն այն է, որ ժամանակակից աշխարհում միտումները գնում են միանշանակորեն այն ուղղությամբ, որ կրթությունն անհնար է պատկերացնել առանց շատ ուժեղ հետազոտական, այսինքն՝ գիտական բաղադրիչի: Ցավոք, մեր այսօրվա գիտական համակարգը որոշակիորեն, ոչ ամբողջությամբ կտրված է բուհական համակարգից, այսինքն՝ մեր կրթական համակարգում հետազոտական բաղադրիչի էական պակաս ունենք:

Մեր ռազմավարությունը լինելու է այդպիսին՝ մենք փորձելու ենք հնարավորինս շատ և հնարավորինս արդյունավետ հետազոտական, այսինքն՝ գիտական ուղղությունն ինտեգրել բարձրագույն կրթական ուղղությանը: Այս առումով ցանկանում եմ ընդգծել նաև, որ մեր պատկերացումը հետևյալն է. որոշակի գործառույթներ, որոնք ավանդաբար ընկալված են որպես կառավարական գործառույթներ, պետք է պատվիրակենք բուհական, գիտակրթական համակարգին, որը հնարավորություն կտա նախ գիտնականներին ավելի ինտեգրված լինել տնտեսության և հանրային կյանքի կառավարման մեջ և նույն հնարավորությունը կստեղծի նաև ուսանողների համար՝ ստանալու ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև փորձելու այդ տեսական գիտելիքները կիրառել գործնականում:

Հաջորդ կարևոր հարցը, որ մեր կառավարությունն առաջ է քաշում, հետևյալն է. ինչքանո՞վ է Հայաստանի գիտական կամ գիտակրթական համակարգն ինտեգրված Հայաստանում ռազմավարական հեռանկարի ձևակերպման և ձևավորման գործընթացում:

Մեր մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ կառավարությունը գործում է առանձին, իսկ գիտակրթական համակարգը և ներուժը՝ առանձին: Մենք խնդիր ենք դրել, որ Հայաստանում էականորեն պետք է ուժեղացվի փորձագիտական ներուժը, և դա պետք է արվի հետևյալ կերպ. գիտակրթական համակարգը պետք է ներգրավված լինի ռազմավարությունների և քաղաքականությունների ձևավորման գործընթացում, ինչն իր հերթին նաև ենթադրում է, որ որոշակի ֆինանսական հոսքեր կուղղվեն նաև գիտակրթական համակարգ:

Հաջորդ հարցը՝ ինչքանո՞վ է մեր գիտակրթական համակարգն ինտեգրված տնտեսությանը: Ես շատ ուրախ եմ, որ այդ հարցի պատասխանը կամ մտածողության այդ վեկտորը շատ հստակ տեսա հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Պավել Ավետիսյանի խոսքում, երբ նա խոսում էր հնագիտության և ազգագրության ասպարեզում գիտական գործունեության մասին, բայց հաջորդ նախադասությամբ ասաց, որ սա կարող է նպաստել և դառնալ զբոսաշրջության զարգացման կարևոր գործիք: Շատ կարևոր է, որ մենք գիտությունը և գիտական գործունեությունն ընկալենք հենց այս տեսակետից: Դա մի արդյունք չէ, որը պետք է ունենանք, բարձր գնահատենք, դրանով հպարտանանք և պահենք դարակներում: Դա պետք է հասանելի լինի մարդկանց: Մանավանդ 21-րդ դարի մարդը և՛ գիտության, և՛ բազմաթիվ այլ ոլորտներում ունի առօրեական հետաքրքրություններ: Այսօր մարդը ձգտում է իմանալ ավելին, ավելիի մասին է ձգտում տեղեկանալ, և կարծում էմ, որ մեր գիտակրթական համակարգի հաջորդ խնդիրը պետք է լինի տնտեսությանն ինտեգրվելը: Երբ ասում ենք տնտեսությանն ինտեգրվել, շատ դեպքերում հասկանում են միայն տեխնիկական գիտությունները, բայց նշված օրինակը կարծում եմ՝ ցույց տվեց, որ ոչ միայն տեխնիկական գիտություններն են, որ կարող են ինտեգրվել տնտեսությանը և սպասարկել կամ առաջ մղել տնտեսության կոնկրետ ճյուղեր:

Հաջորդ կարևորագույն խնդիրն այն է, թե ինչքանով է մեր գիտակրթական համակարգն ինտեգրված մեր զինված ուժերին և մեր բանակին և ինչքանով է նպաստում մեր անվտանգության կարիքների սպասարկմանը: Եվ ևս մի կարևոր հարց, որը ցանկանում եմ ընդգծել, հետևյալն է. իսկ ինչքանո՞վ է մեր գիտակրթական համակարգն ինտեգրված կամ ինչքանո՞վ է աշխատում ինքնաձևափոխման կարևոր հրամայականի վրա: Մեր ռազմավարական ապագան կառուցելու համար շատ կարևոր է, որ մենք այսօր առավել ճիշտ և առավել ընդգրկուն ճանաչենք ինքներս մեզ՝ որպես ինքնություն, ազգություն, հանրություն, ժողովուրդ, քաղաքացի, որովհետև ինք-

նաճանաչողությունն ապագայի ռազմավարությունը կառուցելու կարևորագույն նախապայման է”, – ընդգծել է Նիկոլ Փաշինյանը:

Վարչապետը նշել է, որ այս թեմաները քննարկվել են ԳԱԱ ներկայացուցիչների, կրթության և գիտության նախարարի և նախարարության հետ. դրանք լինելու են կառավարության առաջիկա գործունեության հիմնական ուղղությունները, և գործադիրն այս շրջանակում է պատկերացնում համագործակցությունը ԳԱԱ և ընդհանրապես գիտակրթական համակարգի հետ:

Կառավարության ղեկավարը ևս մեկ անգամ անդրադարձել է գիտության ֆինանսավորման հարցին և ընդգծել, որ ֆինանսավորման փիլիսոփայության մեջ կարևոր ու սկզբունքային փոփոխություններ պետք է տեղի ունենան, որովհետև հարցն այն չէ, թե ինչքան գումար կա և ինչպես այն բաժանել արդարացի: “Այսօր արդեն կառավարությունը հենց գիտության ոլորտում ունի կոնկրետ ծրագրային առաջարկներ, և երբ այդ ծրագրային առաջարկները քննարկվում էին, դրանց ֆինանսավորման համար առկա գումարի թիվը զրո էր, այսինքն՝ այդ ծրագրի ֆինանսավորման համար ընդհանրապես ոչ մի կոպեկ, ոչ մի լումա գումար չկա: Եվ ինչքան համոզիչ են ծրագրի հեղինակները ներկայացնում իրենց ծրագրի կարևորությունը, այն, որ դա ռազմավարական նշանակության և օգտավետ ծրագիր է, փողն ինքն իրեն հայտնվում է: Համոզված կարող եմ ասել, որ չեմ պատկերացնում մի այնպիսի գիտական համոզիչ ծրագիր, որն ինքն իրենով կապացուցի, որ և՛ ծրագրի հաջողության, և՛ նույնիսկ անհաջողության դեպքում Հայաստանի գիտությունը և Հայաստանի Հանրապետությունը շահելու են, չեմ պատկերացնում այդպիսի մի իրավիճակ, որ ՀՀ կառավարությունը գումար չգտնի այդպիսի ծրագրի համար: Ես չեմ պատկերացնում այդպիսի իրավիճակ, որ նոր Հայաստանում, այսօրվա Հայաստանում իմ նշած չափանիշներին համապատասխանող որևէ ծրագիր չիրականացվի միայն այն պատճառով, որ փող չկա: Ի վերջո, փողն ստեղծվում է նաև մարդկանց գործունեության, մտքի, գաղափարի, եռանդի, աշխատանքի արդյունքում, և ուրեմն, փող կա՞, թե՞ չկա հարցին ի պատասխան՝ մենք պետք է ասենք՝ ինչքան եռանդ մենք ունենք, ինչքան ուժեղ է մեր միտքը, ինչքան ուժեղ է մեր կամքը, և ինչքանով մենք համոզված ենք, որ այն, ինչ անում ենք, արժե շատ ավելին, քան փողը:

Համոզված եմ, որ Հայաստանի Հանրապետությունում կա անհրաժեշտ գիտական, մարդկային ներուժ, անհրաժեշտ մտավոր և բարոյական ներուժ, որպեսզի մենք ամեն օր ստեղծենք այնպիսի արդյունքներ, որոնք շատ ավելին են, քան փողը: Այդ արդյունքներն իրենց հետևից կրերեն անսահմանափակ քանակությամբ փող, որովհետև փողն ամեննին էլ առաջնային չէ: Առաջնայինը գաղափարն է, և գաղափարը հաղթել է, հաղթում է և պիտի հաղթի”, – ելույթը եզրափակեց Նիկոլ Փաշինյանը:

“Գիտություն”, մարտ, - 3, 2019:




---

---

ՍԱՐԳԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հունվարի 28-ին 90-ամյա տարիքում վախճանվել է ականավոր բանագետ, հայագետ-արևելագետ Սարգիս Բարդուղիմեոսի Հարությունյանը: Ծնվել է 1928 թ. ժամանակակից Աշոցքի տարածաշրջանի (նախկին՝ Ղուկասյանի շրջան) Ղազանչի գյուղում՝ ծագումով ալաշկերտցի և մշեցի ծնողների ընտանիքում:



1947 թ. Թբիլիսիում ավարտելով միջնակարգ դպրոցը՝ Ս. Հարությունյանն ընդունվում է ԵՊՀ Բանասիրական ֆակուլտետի արևելյան բաժինը, որտեղ ուսումնասիրում է պարսից լեզու և գրականություն: 1952 թ. ավարտական թեզ է գրում «Պարսկերենի տարբերը Սայաթ-Նովայի հայերեն խաղերում» թեմայով, որի հավելվածը միայն կազմում էր 500 էջ: 1956 թվականից՝ ասպիրանտական ուսումնառության շրջանից սկսած, Ս. Հարությունյանի

գիտական գործունեությունն ընթացել է ՀԽՍՀ ԳԱ Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում, իսկ 1960 թ. նա փոխադրվել է նորաստեղծ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ուր աշխատում էր մինչև իր մահը:

1959 թ. Ս. Հարությունյանը պաշտպանում է թեկնածուականատենախոսություն՝ «Հայ ժողովրդական հանելուկներ» թեմայով, 1971 թ.՝ դոկտորականատենախոսություն՝ «Մանուկ Աբեղյան. կյանքն ու գործը» թեմայով: 1992–2007 թթ. Ս. Հարությունյանը ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի՝ գիտական գծով փոխտնօրեն էր, 2000 թվականից՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ: Մինչև իր մահը ղեկավարել է նույն ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժինը:

Ս. Հարությունյանի բազմամյա հետազոտական աշխատանքը նշանավորվել է մի շարք կոթողային մենագրություններով, ո-

րոնք դեռ երկար տարիներ կլինեն յուրաքանչյուր բանագետի, լեզվաբանի, մշակութաբանի և լայն առումով հայագետի սեղանի գրքերը (ինչպես, օրինակ՝ «Հայ ժողովրդական հանելուկներ»՝ 1960 և 1965, «Անեծքի և օրհնանքի ժանրը հայ բանահյուսության մեջ»՝ 1975, «Հայ հին վիպաշխարհը»՝ 1987, «Հայ առասպելաբանություն», Բեյրութ՝ 2000, «Հայ հմայական և ժողովրդական աղոթքներ»՝ 2006 և այլն):

1971–1973 թթ. Ս. Հարությունյանի գլխավորած գիտական արշավախումբը ՀԽՍՀ 205 բնակավայրերից գրառել է «Մասնա ծոեր» հերոսավեպի 81 նոր պատում, որոնց մի մասը հրատարակվեց «Մասնա ծոեր» Գ (1979 թ.) և Դ (1999 թ.) հատորներով: Ս. Հարությունյանի գործուն մասնակցությամբ են կյանքի կոչվել «Հայկական էպոսը և համաշխարհային էպիկական ժառանգությունը» վերատառությամբ միջազգային շարունակական գիտաժողովները (2003–2017):

Գիտական և գիտակազմակերպչական աշխատանքին զուգահեռ՝ Ս. Հարությունյանը երկար տարիներ գլխավորել է «Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրական խորհուրդը (2006–2018), դասավանդել է ԵՊՀ-ում և Հայաստանի այլ բուհերում, բազմիցս եղել է պետական քննական հանձնաժողովի նախագահ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում: Նրա ղեկավարությամբ են պաշտպանել իրենց թեզերը մոտ 20 գիտության թեկնածուներ և դոկտորներ:

ՀՀ ԳԱԱ նախագահություն,  
Հայագիտության և հասարակական գիտությունների  
բաժանմունք,  
Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,  
«Պատմաբանասիրական հանդեսի» խմբագրություն

ՀԱՆՂԵՍԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՄԼՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵՔ ՀԱՄԱՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ  
ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆԸ ԱՐՏԵՐԿՐՈՒՄ՝ 100 ԱՄՆ ԴՈԼԱՐ  
(ՆԵՐԱՌՅԱԼ ԵՐԵՔ ՀԱՄԱՐԻ ՓՈՍՏԱՑԻՆ ԱՌԱՔՄԱՆ ԾԱԽՍԸ)

---

«Պատմաբանասիրական հանդեսը» վաճառվում է  
Երևանի գրախանութներում

*Համակարգչային շարվածքը և էջադրումը՝ Շուշան Բասենցյանի*

Խմբագրության հասցեն՝ 375019, Երևան-19, Մարշալ Բաղրամյան պող. 24-գ, հեռ. 581872  
Адрес редакции: 375019, Ереван-19, пр. Маршала Баграмяна, 24 г, тел. 581872  
Address: 24G Marshal Baghramian av., 375019, Yerevan, Armenia, tel. 581872

E-MAIL: [patmhandes@rambler.ru](mailto:patmhandes@rambler.ru), [patmhandes@yahoo.com](mailto:patmhandes@yahoo.com)

---

*Հրատ. պատվեր - 944*

*Ստորագրված է տպագրության 29.04.2019 թ.:*

*Տպագրական 18.75 մամուլ: Թուղթ -1, 70x100:*

---

*ՀՀ ԳԱԱ տպարան, 375019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24:*

---

Изд. заказ <sup>1</sup> 944

Подписано к печати 29.04.2019 г.

Печ. 18.75 л. Бумага <sup>1</sup> 1, 70x100.

---

Типография НАН РА, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24.